

ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՑԱԳԻՐ՝

ԿԱՐԾԵՑԵԱԼ

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

17.923)  
h. - 75

ԱՆԱՆՈՒՆ ՋՐՈՒՅԱԳԻՐ

(ԿԱՐԾԵՑԵԱԼ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ)

# Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԹԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱՌԱՋԱԲԱՆԸ ԵՒ  
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝  
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

Խմբագիր՝ Ալ. Յակոբյան



ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԳ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Ա 575

Գիրքը հրատարակութեան է երաշխատրել  
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհուրդը

Հրատարակութիւնը կատարուել է  
Եղնուկեան ընտանիքի մեկենասութեամբ

Անանուն Զրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի)  
Ա 575 Պատմութիւն /Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրու-  
քիւնները՝ Վարազ Առաքելեանի, Խմբ.՝ Ալ. Յակոբեան /-  
Եր., «Վիամիր» հրատ., 2011.-248 էջ

Անանուն Զրուցագրի (կամ Կարծեցեալ Շապուհ Բագրատունու)  
պատմական երկի թարգմանութիւնը 20-րդ դ. Հայ անուանի լեզուա-  
բան, բանասէր, պրոֆեսոր Վարազ Առաքելեանի (1910-2001)՝ կեան-  
քի վերջին տարիներին ամփոփուած աշխատանք է: Գրքի ցանկերը  
կազմուած են խմբագրի կողմից: Նախատեսուած է հումանիտար  
ուրրտի հետազոտող-գիտնականների, ուսանողների եւ ընթերցողների  
լայն շրջանակի համար:

Շապիկի վրայ օգտագործուած է ԺԳ դ. պատմիչ Մխիթար  
Այրիվանեցու ինքնագիր ձեռագրի պատկերներից մէկը (ՄՄ, ձեռ.  
թիւ 1500):

ՀՏԳ 941 (479.25)

ԳՄԴ 36.3 (2Հ)

ISBN 978-99941-860-5-1

© Առաքելեան Վ. Գ., 2011  
© «Վիամիր» հրատարակչութիւն, 2011

### ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՅԱԳԻՐ

Շապուհ Բագրատունին թ-ժ դարի պատմիչ է: Նրա շարադրած  
պատմական աշխատութեան մասին տեղեկութիւններ են հաղորդում  
հետագայ Հայ պատմիչները՝ Յովհաննէս Դրասխանակերտցին, Ստե-  
փանոս Ասողիկը եւ այլք: Շապուհի պատմութիւնը կորել է, սակայն  
1921 թ. նրա անունով հրատարակուեց մի շատ հետաքրքրական  
գրքոյկ<sup>1</sup> (հետագայում, սկսած Մ. Աբեղեանից, վերագրուած մի «ան-  
անուն զրուցագրի»<sup>2</sup>), որը ոչ այնքան իր պատմական նիւթով, որքան  
լեզուով ու գրական արժէքով Հայ միջնադարեան մատենագրութեան  
կարեւորագոյն երկերից է: Գիրքը հետաքրքրական պատումների հա-  
ւաքածոյ է, անյայտ հեղինակի կամ հեղինակների գործ: Մենք  
թարգմանում ենք այնպէս, ինչպէս այն հրատարակուած է 1921 թ.  
տալով նաեւ Շապուհ Բագրատունու բուն գրուածքից հատակտոր  
հատուածներ, որ քաղուած են հետագայ պատմիչների կողմից:

Շապուհ Բագրատունի մատենագրի մասին առաջին տեղեկութիւն  
տուողը Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսն է (899-929): Իր  
«Պատմութիւն Հայոց» երկի հէնց սկզբում նա ցանկանում է խօսել  
Աշոտ Բագրատունու ձեռքով Հայոց թագաւորութեան վերականգն-  
ման մասին, սակայն իբրեւ վերապահութիւն ասում է. «Թէպէտ եւ  
մեզնից առաջ մեր ժամանակի պատմագիր Շապուհ Բագրատունին  
գրով գրոջմել է նրա [Աշոտ Բագրատունու] գործերի ընթացքի, վար-  
քի, իմաստութեան, ճակատամարտերի, կռուցումների եւ խաղաղու-  
թեան պատմութիւնը», այնուամենայնիւ որպէսզի պատմութիւնը  
չընդհատուի նրա որդի Սմբատի գործերի մասին խօսելիս, ինքն էլ  
համառօտ պէտք է խօսի Աշոտի մասին<sup>3</sup>:

<sup>1</sup> Պատմութիւն Շապուհի Բագրատունու, Ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մես-  
րոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Ա (սկզբից  
մինչեւ X դար), Եր., 1944, էջ 463 (նաեւ՝ Երկեր, հտ. Գ, Եր., 1968, էջ 498):

<sup>3</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս,  
1912, էջ 7 (մեր թարգմանած հատուածները կարելի է համեմատել նաեւ այս  
բնագրի՝ նորերս լոյս տեսած զուգագիր վերահրատարակութեան մէջ՝ Յով-

Երկրորդ անգամ Դրասխանակերտցին Շապուհի մասին յիշում է Հայ իշխանների՝ Բուղայի աքսորանքից վերադարձի առիթով. «Քանի որ հաճելի համարեցի [նոյն] խօսքերը վերստին չկրկնել՝ մեր ժամանակի պատմագիր Շապուհ Բագրատունու գրոյցներին հետեւելով, որ արդէն քաջայայտնի է դարձրել գրուցապատումները Սմբատ սպարապետի որդի Աշոտի պայազատութեան, իշխանական [չըջանի] պատմութեան, թագաւորական կարգի [հասնելու] հանգամանքների մասին, եւ կամ Բուխայի կողմից գերուած Հայաստանցի իշխանների ու նախարարների վերադարձի [եւ] իւրաքանչիւրի՝ իր սեփական իշխանութիւնը տարուել հասցուելու [ու] հաստատուելու մասին...»<sup>4</sup>:

Քիչ ներքեւ Դրասխանակերտցին նորից է յիշում Շապուհին, կարծես թէ՛ մի փոքր էլ քննադատելու նպատակով. «Քանզի թէպէտ խօսքի սահմանուած ստոյգ աւանդումը եւ բոլոր փաստարկների առանձնացումը [Շապուհը] չի կարողացել ըստ քերթողական հրահանգների հակիրճ ներկայացնել, սակայն իր գրոյցներով, [որ] իր ժամանակի համար ամենքին հարազատ [ոճով] էին, գեղջկական խօսքով քեզ բաւականաչափ պատեհութիւններ է տալիս՝ տեղեակ լինելու»: Ապա յաւելում է. «այսպէս՝ ամբողջականն այստեղ նրան [Շապուհին] թողնելով, ինչը որ այժմ պարտադիր պէտք է իմ պատմական շարադրանքի համար, ես միայն ա՛յն կը փորձեմ ասես կարճ ներածութեան եղանակով քեզ համառօտ ներկայացնել»: Յետոյ շարունակութեան մէջ գրում է. «մանկութիւնից մինչեւ երիտասարդութեան երեւալը՝ Սմբատ սպարապետի որդի Աշոտի ուժի, քաջագործութիւնների, [վարած] պատերազմների, այլեւայլ [հակառակորդների] վրայ յարձակումների եւ նրա վրայ ուրիշների [յարձակումների] մասին թող քեզ բաւական լինեն Շապուհի կողմից պատմուածները»<sup>5</sup>:

Մի այլ տեղ պատմիչը դարձեալ նոյն միտքն էր արտայայտել. «Ապա սրանից [Սողոմոն Գառնեցուց] յետոյ կաթողիկոս կարգեցին Գէորգին՝ Արագածոտն գաւառից: Եւ որովհետեւ Հագարացիք ամբողջապէս տիրեցին [ու] նուաճեցին մեզ՝ Հայաստանցիներին, նաեւ

հաճելու կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թոմսոնեանի, Եր., 1996):

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 131:

<sup>5</sup> Նոյն տեղում, էջ 131-132:

մեր երկրի մեծամեծերը նուազեցին, իսկ միւսները թաքնուել մնացել էին նրանց ստրկական լծի տակ. հէնց այս պատճառով այդ պահին մեր իշխանների [մասին] գրոյցները պակասեցին այս Պատմութիւնից, իսկ եթէ ինչ-որ բան էլ հնարաւոր է գտնել, [ապա] թող քեզ բաւական լինի մեզնից առաջ Շապուհի պատմագրի կողմից պատմուածը»<sup>6</sup>:

Չորրորդ անգամ Շապուհից մի ընդարձակ քաղուածք բերելով՝ Դրասխանակերտցին աւելացնում է. «Իսկ այս պատմուածներից [բացի] մնացեալն էլ՝ [Գրիգոր Դերենիկի] գորութեան, քաջագործութիւնների, մենամարտերի, պատերազմների եւ բազմաթիւ բարի ձեռնարկումների մասին՝ ահաւասիկ գրուած [են] Շապուհ Բագրատունու պատմութիւնների գրքում [եւ] բաւական [են]՝ այդ մարդու յաջողութեանը քեզ քաջատեղեակ դարձնելու համար»<sup>7</sup>:

Բայց այսքան խօսելով Շապուհի պատմագրքի մասին եւ նրանից ընդարձակ մէջբերում անելով (որ կը տեսնենք նրա անձի մասին խօսելիս), Դրասխանակերտցին ընդ սմին չի յայտնում, թէ ի՞նչ կոնկրետ ծագում ունէր նա, ովքե՞ր էին ծնողները, բացի յիշեալ գրքից էլ ի՞նչ է գրել: Պիտի բաւարարուենք նրա՝ Բագրատունի եւ աշխարհիկ լինելը կաթողիկոս-պատմիչի շնորհիւ ճշտելու հնարաւորութեամբ:

Երկրորդ հեղինակը Ուխտանէսն է, որ մի ամբողջ գլուխ է մէջբերում Շապուհից՝ Կոստանդիանոսի թագի մասին, եւ ասում է, որ Շապուհը՝ ապուհիւպատ պատրիկ Աշոտի որդին է («Շափոյ [իմա՝ Շապուհի] որ[դ]իոյ Աշոտոյ ապահի պատրիկի ասացեալ ի Պատմութեան իւրում»)<sup>8</sup>: Ուխտանէսի երկի՝ Վաղարշապատի 1871 թ. հրատարակութիւնից <sup>10</sup> տարի առաջ նրա այս Ա. հե գլուխը Մոսկուայում առանձին հրատարակել է, վերցնելով էջմիածնական հնագոյն (Ժէ դարի) ձեռագրից, Մ. Մսերեանցը<sup>9</sup>:

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 111:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 141: Մեր կողմից ընդգծուած անուանումը («...գրեալ ի Գիրս պատմութեանց Շապուհ Բագրատունոյ») կարո՞ղ է արդեօք յաւակնել՝ համարուելու Շապուհ Բագրատունու երկի հեղինակային անուանումը: Դրասխանակերտցու միւս գրուածքներում եւ մնացեալ մատենագիրների մօտ Շապուհի երկն անուանուած է պարզապէս «Պատմութիւն»:

<sup>8</sup> Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 109:

<sup>9</sup> Մ. Մսերեանց, Շապուհ Պատմագիր, - «Ճոռաքաղ», թիւ Գ, 1861-1862, էջ 129-130: Հմմտ. Հ. Ն. Ալիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը.

Երրորդ մատենագիրը, որ յիշատակում է Շապուհ Բագրատունու անունը, Տարոնացի Ստեփանոս Ասողիկն է, որը նրան թուարկում է Հայոց պատմագիրների շարքում: Այդ շարքը հեղինակն սկսում է Ագաթանգեղոսով, որին յաջորդում են Մովսէս Խորենացին, Եղիշէն, Ղազար Փարպեցին, Փաւստոս Բուզանդը, Սեբիոսը (Սեբէոս), Ղեւոնդ Երէցը: Դրանից յետոյ Ասողիկը գրում է. «Ապա միայն յետոյ վերջին օրերս Շապուհ Բագրատունու եւ Հայոց կաթողիկոս Տէր Յովհաննէսի պատմութիւնները, որոնք Բագրատունի առաջին թագաւորներ Աշոտի եւ Սմբատի ժամանակներում են»<sup>10</sup>:

Երկրորդ անգամ Ասողիկը Շապուհ Բագրատունուն յիշում է Իսրայէլի թագաւոր Դաւթի թագի պատմութեան առնչութեամբ: Բիւզանդիայի կայսր Կոստանդինոսը Պարսից Շապուհ արքայից խնդրում է Դաւթի թագը, որը նաբուզոզոնոսը արքան վերցրել էր Յեթոնիայի գլխից՝ «Ինչպէս քեզ սովորեցնում է Աշոտ անթիպատրիկի որդի Շապուհ Բագրատունու պատմութիւնը»<sup>11</sup>:

Չորրորդ հեղինակը Սամուէլ Անեցին է, որը եւս Հայոց պատմագիրների շարքն սկսում է Ագաթանգեղոսով, որին հետեւում են Մովսէս Խորենացին, Եղիշէն, Ղազարիկը (Փարպեցին), Փաւստոսը, Սեբէոսը (Անեցու եւ այլոց մօտ՝ Սեբիոս), Ղեւոնդ Երէցը, Շապուհը, Տէր Յովհաննէսը (Դրասխանակերտցին) եւ «վերջին ժամանակներս՝ Ստեփանոս վարդապետ՝ մականուն Ասղնիկ»<sup>12</sup>: Անեցի ժամանակագիրը մէկ անգամ էլ յիշատակում է այսպէս. «Ո՛վ Երեւանու կռիւն, յորում զզիարդն գտցես առ պատմագրութիւնս, առաջնոցն՝ Շապուհ եւ Ասո-

ղիկ յիշեն»<sup>13</sup>: Մեսրոպ եպ. Տէր-Մովսիսեանի կարծիքով՝ հաւանական է, որ «Սամուէլից է ծագում առնում այն տեղեկութիւնը, որ գտնում ենք Անուանք պատմագրացն Հայոց եւ համառօտ պատմութիւն գործոց Անցա ձեռագրական յօդուածի մէջ եւ որ ունի պատմագիրների նոյն շարքը. «եւ ի Ղեւոնդէ երիցուէ, ի Շապուհ եւ Տէր Յովհաննէս»<sup>14</sup>:

Ուրիշ մատենագիրներ եւս յիշատակում են Շապուհ Բագրատունու անունը պատմագիրների շարքում: Օրինակ՝ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ թովմայ վարդապետն տանն Արծրունեաց: Եւ Շապուհ Բագրատունի: Եւ Տէր Յովհաննէս կաթողիկոս Հայոց»<sup>15</sup>: Մի այլ տեղում խօսելով արաբ Զափրի շահատակութիւնների մասին՝ պատմիչն աւելացնում է. «Եւ այլ շատ չարիքներ արեց մեր երկրում, որոնք դու կը գտնես թովմայի, Շապուհի եւ այլ պատմագիրների գրքերում»<sup>16</sup>: Մխիթար Անեցին պատմիչների շարքում ունի. «եւ Եղիշէ, Շապուհ եւ Սեբիոս [ձեռ.՝ Իսիրիոս], որ Հերակլին է, եւ Պատմութիւն Աղուանից, եւ Ղեւոնդ երիցոյն...»<sup>17</sup>: Նրա նման՝ Մխիթար Այրիվանեցու մօտ կայ. «Եղիշէ վարդապետ. Շապուհ Բագրատունի. Եւսեբի, որ ի Հերակլն. Մովսէս Աղուանից. Ղեւոնդ երէց...»<sup>18</sup>: Քիչ յետոյ նոյն պատմիչն ունի (901 թուականի տակ). «Շապուհ Բագրատունի պատմագիր: Տէր Յովհաննէս կաթողիկոս պատմագիր»<sup>19</sup>:

Հայկական գրչագրերում պահպանուել են Շապուհ Բագրատունուն վերագրուած մի քանի ձեռագրական հատուածներ, որոնց բնա-

Մատենագրական հետազոտութիւններ, Քննութիւն եւ բնագիր, հտ. Ա, Վիեննա, 1922, էջ 190:

<sup>10</sup> Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 7:

<sup>11</sup> Նոյն տեղում, էջ 138: Ասողիկից կամ, գուցէ, Ուխտանէսից քաղելով՝ Կոստանդինոսի թագի մասին գրոյցը համառօտ տալիս է նաեւ Վարդան Պատմիչը (տե՛ս Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 60): Հմմտ. Հ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 191:

<sup>12</sup> Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ս. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 3:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 79: Անեցու՝ շփոթութեան վրայ հիմնուած այս պնդման սխալը ցոյց է տուել Մեսրոպ եպ. Տէր-Մովսիսեանը. տե՛ս Պատմութիւն Շապուհ Բագրատունոյ, էջ V-VI:

<sup>14</sup> Նոյն տեղում, էջ VI (ընդգծումները ուսումնասիրողին են - Վ. Ա.): Տե՛ս Հ. Յ. Վ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենագրանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 483 (այստեղ՝ Շապուհու է):

<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 7:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 79 (ընդգծումը մերն է - Վ. Ա.): Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Եր., 1982, էջ 67:

<sup>17</sup> Մխիթար Անեցի, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, Աշխատասիրութեամբ Հ. Գ. Մարգարեանի, Եր., 1983, էջ 73:

<sup>18</sup> Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 23:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 55:

գրերը եւ թարգմանութիւնները մենք տալիս ենք այս գրքի առաջին յաւելուածներում: Դրանցից մէկը, որն Ա. Տէր-Միքէլեանն իբրեւ յաւելուած ամբողջապէս հրատարակել է Սամուէլ Անեցու «Ժամանակագրութեան» 1893 թ. հրատարակութեան «Մանթութիւններ»-ում (վերցնելով Ա. Էջմիածնի մատենադարանի թիւ 264 եւ 267 գրչագրերից)<sup>20</sup>, ունի «Ի Շապհոյ պատմութենէ» վերնագիրը եւ բարոյա-խրատական բովանդակութիւն (սկիզբը. «Այլ քանզի ստուենկանեաց եւ նախահայրն՝ յերկիր դարձաւ, ուստի առաւն...»): Նրա վերջում կայ կարեւոր տեղեկութիւններ պարունակող յիշատակարան, որում ասուում է. «Այս ի պատմութենէ Ծապհոյ Բագրատունոյ է՝ որդոյ Աշոտի ապուհիպատ պատրիկի, յանուն Դաւթի Բագրատունոյ՝ որդոյ Աշոտի իշխանաց իշխանի, զոր ի ձեռն առեալ եւ ընկալեալ յօժարութեամբ հաւր Դաւթի՝ առաջնորդի վանաց Սրբոյն Ստեփաննոսի ի Բագրեւանդ գաւառի, եւ յոյժ բերկրեալ յաղագս հեռի գալոյ ի ստութեան եւ լի ճշտութեամբ՝ յաւել յինքենէ զճառս բանից աստուածայնոց»<sup>21</sup>: Մերոպ եպիսկոպոսը, հետեւելով Գ. Զարպհանալեանին, վերապահութեամբ է մօտենում այս «հոգեշահ յորդորի» բնագիրը Շապհոյ պատմիչին վերագրելու խնդրին<sup>22</sup>: Սակայն Ն. Ակինեանը (որն, ի դէպ, այս կտորը պայմանականօրէն կոչում է «Բան վասն Պահոց») բացարձակապէս համաձայն չէ այդպիսի կասկածամտութեան հետ<sup>23</sup>: Ի դէպ, այս կտորը լոյս է տեսել նաեւ «Բագմավէպ»-ում 1906 թ. (էջ 446-447)՝ «Պատառիկ մը Շապհոյ Բագրատունոյ պատմութենէն» խորագրով (ստորագրուած է՝ Խ.): Դրա առիթով Ն. Ակինեանը մանրամասնում է. «Հրատարակիչն անծանօթ նախորդ հրատարակու-

<sup>20</sup> Սամուէլի քախաւայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 247-248, ծնթ. 1: Հմմտ. ՄՄ ձեռ. թիւ 3076 (Ժէ դար, թ. 124բ-127ա եւ ձեռ. թիւ 3078 (1589-1608 թթ., Կարկառ), թ. 15բ-17ա:

<sup>21</sup> Ընդգծումները մերն են: Այս յիշատակարանն առանձին հրատարակուած տե՛ս նաեւ Հ. Գ. Զարպհանալեան, Հայկական հին դպրութիւն (Դ-ԺԳ դար), Վենետիկ - Ս. Ղազար, 1897, էջ 505-506՝ վերցուած Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի մատենադարանի թիւ 999 ձեռագրից (Հմմտ. Ն. Եպ. Պողարեան, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 617):

<sup>22</sup> Տե՛ս Պատմութիւն Ծապհոյ Բագրատունոյ, էջ VIII:

<sup>23</sup> Հ. Ն. Ակինեան, Շապհոյ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 192-194, 200:

թեան, իրեն հիմ առած է հաւանօրէն Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի Խմբագիրը ԽԱ (= Թ. 1562) ձեռագիրն, ուր ըստ ցուցակին (Հմմտ. Տէր-Մովսէսեան, էջ IX) կը յիշուի «Շապհոյ պատմիչի պատառիկ»: Այս պատառիկն է անշուշտ եւ այն «Հատած ի Պատմութենէ Շապհոյ Բագրատունոյ», զոր կը յիշատակէ Նոր Հայկապետն բառագիրը (Ա, էջ 17), որուն մասին ակնարկութիւն կ'ընէ նաեւ Somal, *Quadro della storia letteraria di Armenia, Venezia 1829*, էջ 56 (...ենթագրելով վասն Պահոց առանձին գրուածք մը յանուն Շապհոյ)<sup>24</sup>:

Ձեռագրական աւանդոյթում Շապհոյին վերագրուած մի քանի այլ հատուած՝ արդէն պատմական բովանդակութեամբ, «Պատմական հատուածք՝ հանեալ ի ձեռագրաց Կարապետ վարդապետի Շահնազարեանց, որք կարծին գոյ Ծապհոյ» վերնագրով 1922 թ. «Բագմավէպ»-ում հրատարակել է Վենետիկի մխիթարեան հայր Ղ. Տայեանը<sup>25</sup>: Գուցէ, այս ձեռագրական հատուածներն են ծանօթ եղել Մկրտիչ Աւգերեանին, որը Ս. Ղազարի մատենադարանի ձեռագրացուցակը կազմելիս նշանակել է մի բնագրական միաւոր՝ «Ծապհոյ պատմիչի պատառիկ» անունով<sup>26</sup>: Վենետիկի ձեռագրի երկրորդ կտորը («Բագմավէպ»-ում չհրատարակուած) Ուխտանէսի՝ Շապհոյ Բագրատունու հեղինակութեան մասին ուղիղ նշում պարունակող Ա.հե գլուխն է, իսկ երրորդը՝ դրան յաջորդող Ա.հզ գլուխը, որը նման նշում չունի եւ Ն. Ակինեանի համոզմամբ՝ իրականում չի կարող վերագրուել Շապհոյին պատմութեանը<sup>27</sup>: Առաջին կտորը («Բագմավէպ»-ի բնագիրը) Կ. Շահնազարեանցի կողմից արտագրուել է, ինչպէս յայտնի էր ակադ. Մ. Բրոսէին՝ Ս. Պետերբուրգի Ասիական թանգարանի մի ձեռագրից<sup>28</sup> եւ

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 193:

<sup>25</sup> Հ. Ղ. Տայեան, Պատմութիւն Շապհոյ Բագրատունոյ եւ Ս. Ղազարու գրչագիրները, - «Բագմավէպ», 1922, էջ 69-73: Հմմտ. Հ. Ն. Ակինեան, Շապհոյ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 197: Տե՛ս ստորեւ, Յաւելուած I:

<sup>26</sup> Ըստ՝ Պատմութիւն Ծապհոյ Բագրատունոյ, էջ IX:

<sup>27</sup> Հ. Ն. Ակինեան, Շապհոյ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 193:

<sup>28</sup> Նոյն տեղում, էջ 198, ծնթ. 1: [Հմմտ. Կարէն Իւզրաշեանի կազմած ձեռագրացուցակում. К. Н. Юзбашян, Армянские рукописи в петербургских собраниях. Каталог, - "Православный Палестинский сборник". Вып. 104 (41), С. Петербург, 2005, էջ 176 («372. Сборник исторических сочинений. Պատմական հատուածք հանեալ ի ձեռագրաց Կարապետ վարդապետի Շահնազարեանց,

ունի «Յաւուրս թագաւորին Սմբատայ եկն Յուսուփ ոստիկան...» սկիզբը: Այն Աշոտ Ա-ի եւ Սմբատ Ա-ի տարիների պատմական դէպքերի որոշ չափով խառնակ շարադրանք է, որը նման է Դրասխանակերտցու պատմածին, բայց չի նոյնանում նրա հետ: Դա արձանագրելով հանդերձ՝ Ն. Ակիմեանն այնուամենայնիւ փորձում է փաստարկել, որ հատուածը քաղաքուած է Դրասխանակերտցուց՝ հաւանաբար, Մխիթար Անեցու կողմից<sup>29</sup>: Մենք բերում եւ թարգմանում ենք այս հատուածը որպէս Շապուհի գրչին վերագրուելի (տե՛ս ստորեւ, Յաւելուած I-II)՝ հետեւելով Ղ. Տայանին ու Ղ. Ալիշանին<sup>30</sup>, որոնք վերջնական լուծումը թողնում են հետագայ բանասէրների վճռին:

Շապուհի մասին յիշատակութիւն կայ նաեւ Նոր Զուղայի մի ձեռագրում, որտեղ նշուած էր (ըստ աւագ. Մ. Բրոսէի խնդրանքով 1853 թ. Գ. Շերմազանեանցի կազմած՝ Զուղայի 214 գրչագրերի համառօտ ցուցակի). «Շապուհ պատմագիր, որ է Որմըլգաքբաղայ ստրատելատին եւ այլ սրբոց նահատակաց, որ ի թուին ԳՃԲ [=853 թ.]»<sup>31</sup>: Ընդգծուած բառի մասին (իր մօտ՝ «Որմըլգաքբաղայ») Ղ. Ալիշանը գրում է. «Յայտ է, թէ սխալ գրուած է այդ անհեղեղ անունը, զոր ուղղորէն գրէ ուրիշ ցանկ մի՝ «Որ է Գիրք Սրբոյն Սմբատայ ստրատելատին»<sup>32</sup>: Ն. Ակիմեանը նշում է, որ այժմ հնարաւոր չէ գտնել Զուղայի ձեռագիրն ու ճշտել Գ. Շերմազանեանցի տեսածի կապը Շապուհի Պատմութեան հետ, եւ յաւելում. «Այսպիսի բովանդակութեամբ գրութիւն մը կը յիշատակուի առանց Շապուհի անուան՝ Սարգիս արքեպ. Զաւալեանցի ձեռագիրներուն ցուցակին մէջ (Մեղու Հայաստանի, 1858, թ. 15). «Պատմութիւն մահուան Սմբատայ եւ աւերանաց աշխարհին Հայոց յանօրէն Յուսուփայ», որուն կից ցուցակագիրն կ'աւելցնէ փակագծի մէջ «գուցէ Շապուհ Բագրատունի»: Հ. Գալէմբեարեան

որք կարծին գործ Շապուհ... Содержит выдержки из сочинений Шапуха Багратуни и Ухтанэса, извлеченные из рукописей, принадлежавших Карапету Шагназаряну. Переписана в XIX в. Колл. М. Броссе. 23.5 x 18; 6 л.; текст в один столбец; строк 27; бумага; скоропись; в бумажной обложке) — [սմբ.]

<sup>29</sup> Հ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 193:

<sup>30</sup> Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ - Ս. Ղազար, 1893, էջ 33:

<sup>31</sup> Տե՛ս Պատմութիւն Շապուհ Բագրատունու, էջ VI:

<sup>32</sup> Հ. Ղ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հտ. Ա, Վենետիկ - Ս. Ղազար, 1901, էջ 80 (ընդգծումները մերն են - Վ. Ա.):

(Հանդ. Ամս. 1896, էջ 59), որ ուշադիր եղած է այս կէտին, ամենեւին տարակուսելի չի գտնէր «որ այս Շապուհ Բագրատունու կորուսեալ պատմութիւնն է»<sup>33</sup>: Այս ձեռագրի տեղը եւս, ցաւօք, յայտնի չէ:

Նոր ժամանակներում Շապուհի մասին առաջինը յիշատակում է «Ազգարար» պարբերականը՝ «Նախապէս պատմութիւնք» վերնագրով հայ պատմիչների ցանկում<sup>34</sup>: Գ. Զարպէանալեանը «Հայկական հին դպրութեան» էջ 504-ում ծանօթագրում է. «Յետին դարուց նորագոյն յիշատակագիր մը պատմըաց դասակարգութեան մէջ կը թուէ նաեւ «Շապուհ Պատմութիւն, որ է գիրք սրբոյն Սմբատայ ստրատելատին եւ այլ սուրբ նահատակացն, թուին Հայոց ՅԲ [=853 թ.]»: Ըստ Ն. Ակիմեանի՝ պատմիչների շարքը կազմել է Յակոբ Այուբեանը, որը յիշեալ վերնագիրը հանել է «Ազգարար»-ից, ուր շարքի 13-րդ համարով առկայ է «Որմըլգաքբաղայ ստրատելատ»-ով վերնագիրը<sup>35</sup> (ճշտուած Ղ. Ալիշանի կողմից, ինչպէս տեսանք քիչ վերեւում):

Որոշ վերապահութեամբ նշենք նաեւ Ն. Ակիմեանի հետեւեալ հետաքրքիր դիտարկումը. «Յովհ. Կաթողիկոս կը յիշէր, թէ Շապուհ ի մէջ այլոց գրած է իւր Պատմութեան մէջ «ըթագաւորացն հանգամանացն զկարգս», այս ինքն, ինչպէս կ'ենթադրեմ, տուած է Բիւզանդիոնի Կայսերաց եւ Դամասկոսի ամիրապետներու յաջորդութեանց ցանկը՝ թերեւս համառօտ պատմութեամբ կամ յիշատակութեամբ կարեւոր դիպաց: ... Ինձի կ'երեւայ, որ թէ՛ Ասողիկ եւ թէ՛ Անեցի օգտուած են Շապուհի Պատմութեանէն... այս մտածութիւնն կ'առթէ ինձ յատկապէս այն պարագան, որ երկուքն ալ իրենց ցանկերը կը բերեն կը հասցնեն 890 մերձաւորապէս: Հաւանօրէն վրացի Բագրատունեաց ծագման եւ յաջորդութեան պատմութիւնն ալ, զոր Վարդան ընդարձակօրէն յառաջ կը բերէ, քաղուածք մըն է Շապուհէն»<sup>36</sup>:

Ոմանք շտապողաբար համարել են որ, Շապուհ պատմիչի անունից է Գեղարքունիք գաւառի Վանեվանի Ս. Գրիգոր եկեղեցու գմբեթի վրայ գրուել. «Յանուն Աստուծոյ, ես՝ Շապուհ Բագրատունի, Հա-

<sup>33</sup> Հ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 188:

<sup>34</sup> 1795 թ., էջ 188 (լրիւ ցանկը՝ 188-192 էջերում): Տե՛ս նաեւ Հ. Գ. Վ. Գալէմբեարեան, Պատմութիւն Հայ լրագրութեան, հտ. Ա, Վիեննա, 1893, էջ 206:

<sup>35</sup> Հ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 187:

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 194-195:

յոց սպարապետ, տէրանց տէր, որդի Աշոտի՝ Հայոց թագաւորի, ի ժամանակս Հայոց թագաւորի մեծի Սընպատայ՝ հարազատ եղբաւր իմոյ, եւ վերադիտողի Հայոց հայրապետի Տեառն Յնւանիսի, իմացայ եւ ծանեայ, թէ ամենայն փառք եւ մեծութիւն ըսպառելոց են եւ վաղիւ կորնչելոց, եւ մեծափափազ տենչանովք վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ՝ Սիւնեաց տիկին, յիւրում իշխանութեան ի Վանեփանի վանս տուն Աստուծոյ կանգնե[ա]լ՝ վիմատաշս կոփածովք, շատածախ գանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարե[ա]լ, թերեւս լիցի ինձ ողորմութիւն յայսմ աւուրն, յորժամ բանքն սպառին եւ գործք թագաւորեն... Ի թուիս Հա[յ]ոց : ՅՄԲ : [=903 թ.]»<sup>37</sup> : Սակայն սա պարզապէս Սմբատ Ա-ի եղբայր Շապուհն է (որի որդի Աշոտ Բռնաւորը 914 թ. Սմբատին խաչ հանած Յուսուփ ոստիկանի կողմից Դուինում ճանաչուել էր Հայոց «թագաւոր» ու այդ տիտղոսը պահպանել նաեւ Աշոտ Բ Երկաթ եւ Աբաս արքաների օրերում՝ առանձնացած իր Բագարան կալուածքում, մինչեւ իր մահը 930-ական թթ.) :

Այսքան հարուստ տեղեկութիւններ կան Շապուհի Պատմութեան մասին, սակայն նրա գրուածքը մինչեւ 1921 թ. անյայտ էր մնացել նոր գիտութեանը : Եւ ահա 1921 թ. Վաղարշապատի (Էջմիածնի) տպարանից լոյս աշխարհ է ելնում մի փոքրիկ գրքոյկ, մօտաւորապէս երեք տպագրական թերթ ծաւալով եւ «Պատմութիւն Շապուհի Բագրատունւոյ» վերնագրով : Հրատարակչութեան ազգում գրուած է. «Էջմիածնի գիտական ինստիտուտը հրատարակում է այս արժէքաւոր երկը Շապուհ Բագրատունու անունով՝ համաձայն աշխատասիրողների առաջարկութեան՝ բանասիրութեանը թողնելով հեղինակի անձի վերջնական պարզաբանութիւնը» : Ինչպէս տեսնում ենք, հրատարակչութիւնը կասկած է ունեցել այդ երկը Շապուհ Բագրատունուն վերագրելու հարցում, ուստի ազատ իրաւունք է տալիս բանասիրական լայն քննութեանը հեղինակի անձի պարզաբանման խնդրում :

Սակայն հրատարակիչ Մեսրոպ Եպիսկոպոսը (Տէր-Մովսիսեան), հանգամանալից քննութիւնից յետոյ ու նաեւ յենուելով յայտնի բանասէր, իր հեղինակակից եւ արդէն լուսահոգի Գալուստ Տէր-Մկրտ-

<sup>37</sup> Դիւան հայ վիմագրութեան, պրակ IV, Գեղարքունիք, Կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Եր., 1973, էջ 121-122 : Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Հայաստանում, հա. Ա, էջ 80 :

չեանի բանաւոր ցուցումի վրայ, պնդում է, թէ դա հէնց Շապուհ Բագրատունու «Պատմութիւն»-ն է : Այդ կարծիքը նա ներկայացրել էր դեռեւս 1919 թ. «Արարատ»-ում հրատարակուած ոչ մեծ յօդուածում<sup>38</sup> : Ըստ գիտնական-եպիսկոպոսի՝ «ձեռագիրը հեղինակի անձի մասին որեւէ տեղեկութիւն չի պարունակում, որովհետեւ նա չունի ընդհանուր վերնագիր, ոչ վերջ եւ ոչ էլ սկիզբ, ուստի անյայտ է մնում մեզ համար նաեւ գրքի սկզբնական անունն ու ծաւալը»<sup>39</sup> :

Այսուհանդերձ ո՞վ էր պատմիչ Շապուհ Բագրատունին : Յովհաննէս Դրասխանակերտցին, որի կաթողիկոսութեան ժամանակը ստոյգ յայտնի է (899-929), ասում է, որ Շապուհն իրենից տարեց, բայց իր ժամանակի պատմիչ է : Դրասխանակերտցին մանրամասն գրում է նրա գրքի բովանդակութեան մասին, սակայն Շապուհի ով լինելու առթիւ, ըստ էութեան, ոչ մի խօսք չի ասում : Ժ. Գ. վերջերին Ուխտանէսն իր գրքի առաջին հատուածի ՀԵ գլուխն ամբողջովին վերցրել է Շապուհ Բագրատունու պատմութիւնից : Վերնագրում տեղեկացնում է. «Թէ... ինչպէս յաջողուեց նրան [Կոստանդիանոս Մեծին] Տիրոջից [ստանալ Դաւթի թագը]՝ ասուած [է] ապահի [ապուհիւպատ] պատրիկ Աշոտի որդի Շապուհի կողմից իր Պատմութեան մէջ»<sup>40</sup> :

Ասողիկը Շապուհ Բագրատունու մասին նշում է, որ նա Աշոտ եւ Սմբատ առաջին թագաւորների ժամանակ էր ապրում, եւ շատ յետոյ նրան համարում է Աշոտ «անթիպատրիկի» որդի<sup>41</sup> : Ոմանք այս Աշոտին համարում են Բագրատունի Աշոտ Ա արքան, որն սկզբում իշխանաց իշխան է եղել, բայց դեռ Հ. Միքայէլ Չամչեանը ցոյց է տուել, որ վերջինս եւ Շապուհ Բագրատունին 775 թ. մահացած (ըստ Յ. Մարկուարտի՝ 772 թ.)<sup>42</sup> Սմբատ պատրիկ սպարապետի երկու որդիների՝ Աշոտ Մսակերի եւ Շապուհի թուներն են. Աշոտ արքայի հայրը

<sup>38</sup> Տե՛ս «Արարատ», 1919, էջ 40-53 :  
<sup>39</sup> Պատմութիւն Շապուհի Բագրատունու, էջ IX :  
<sup>40</sup> Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, գլ. Ա. հե, էջ 109 [Հմմտ. Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, խմբագիր՝ Ա. Յակոբեան, Եր., 2006, էջ 104] :  
<sup>41</sup> Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 7, 138 :  
<sup>42</sup> Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը ծանօթութիւններով, Գերմաներէնէ թարգմ. Հ. Մ. Հապոգեան, Վիեննա, 1913, էջ 2 (ներդիր) :



նրանցից առաջինի որդի Սմբատ Խոստովանողն է, իսկ Շապուհի Հայրը՝ երկրորդի որդի Աշոտ ապուհիւպատ պատրիկը: Մեսրոպ եպիսկոպոսը վերջինիս համար մանրամասնում է հետեւեալը. «Արաբացւոց Խուզիմայ ոստիկանի օրով 818 թուին նշանաւոր էին Սմբատ Բագրատունու երկու որդիները՝ Աշոտ Մսակեր մականուամբ (Տե՛ս Ասողիկ, էջ 105, ծն. 83), որ իշխում էր Շիրակում, եւ Շապուհ Սպերի տէրը: Այս Շապուհի որդին կոչուեց Աշոտ: Ասողիկը պատմում է, որ Հայոց ՄՀԸ (829) թուին վախճանուում է Յունաց Միքայէլ կայսրը եւ նրան յաջորդում է նորա որդի Թէոփիլոսը: Սա յարձակում է Հայաստանի վրայ եւ երբ հասնում է Սպեր գաւառը, Շապուհի որդի Աշոտին ընծայում է ապուհիւպատ պատրիկութեան տիտղոս եւ հաստատում իւր նախկին իշխանութեան մէջ, անշուշտ կայսեր ցոյց տուած ծառայութիւններին իբրեւ պարգեւ (Տե՛ս Ասողիկ, էջ 144, Չամչեան, Բ, 428, 435): Եթէ ընդունենք, որ Շապուհը իւր պատմութիւնը հասցրել էր մինչեւ Սմբատի մահը, կը ստանանք, որ նա գրել է մինչեւ 914 թ., որ է Սմբատի մահուան տարին, հայ պատմագիրների թւականով (Տե՛ս Չամչեան Բ, էջ 758): Թէոփիլոսը Փոքր Ասիա, հաւանական է նաեւ Հայաստան արշաւել է 833-842 թ. (Տե՛ս Կրումբախեր, Բիւզ. Կայսր. Պատմ. Թրգմ. էջմիածին, 1901, էջ 176): Ընդունելով, որ ապուհիւպատի տիտղոսի արժանացող Աշոտի որդի Շապուհը կայսեր գալստեան ժամանակ արդէն ծնւած էր, նրան 70-80 տարի կեանք պիտի վերագրենք, որ կարելի է իրական համարել: Բայց եթէ ընդունենք, որ Շապուհը գուցէ աւելի ուշ է ծնւել, կայսեր Հայաստան գալուց յետոյ, Շապուհի երկարակեցութիւնը զգալի կերպով կը կրճատուի: Ուստի մենք համակիր ենք, ինչ որ Չամչեանի կարծիքն է, Շապուհին այս Աշոտ Բագրատունու որդի համարել, որի կեանքի ժամանակամիջոցն ընկնում է 838-ից մինչեւ 920 թւականը»<sup>43</sup>:

Աշոտ արքան եւ պատմիչ Շապուհ Բագրատունին համարեա հասակակից են: Մեսրոպ եպիսկոպոսի հետեւողութեամբ մանրամասն քննելով Ստեփանոս Ասողիկի՝ վերը նշուած տեղեկութիւնները եւ ուշադրութեան առնելով Յ. Մարկուարտի դիտարկումները (ըստ վերջինիս՝ Ասողիկը Շապուհից է քաղել Աշոտ ապուհիւպատի մասին պատ-

մութիւնը)՝ Ն. Ակիմեանը Շապուհ Բագրատունու ծնունդը դնում է Թ. դ. 30-ական թուականներին, իսկ նրա կեանքի տեւողութիւնը հասցնում մօտաւորապէս մինչեւ 885 թ. («վախճանը՝ 885էն ոչ շատ վերջը, հաւանօրէն 900էն յառաջ, մեռած իբր 60-70 ամեայ»)՝<sup>44</sup>: Վերջին թուականը պատճառաբանում է նրանով, որ Յովհաննէս Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին եւ Ասողիկն այդ թուից յետոյ կատարուող պատմա-քաղաքական անցքերը պատմելիս նրան բնաւ չեն յիշատակում: Նկատում է նաեւ, որ «Պատմութիւնը չ՛աւանդէր, թէ ամուսնացած էր, ունեցած զաւակներ»<sup>45</sup>: Յենուելով Դրասխանակերտցու մի խօսքի վրայ՝ «ըստ իւրում ժամանակի ընտանի գոլով զրուցացն ամենայնի», այսինքն, ինչպէս ինքն է հասկանում «բոլոր քաղաքական անցուղարձերուն քաջ ծանօթ», ինչպէս նաեւ ուշադրութեան առնելով Ուխտանէսի քաղաքած հատուածի վերջում Կոստանդնուպոլիս քաղաքի մասին ականատեսին յարիր մանրամասնութիւնների հաղորդման հանդամանքը՝ Ն. Ակիմեանը պատմիչին դիւանագէտի մեծ դեր է յատկացնում. նա գնացել է Բիւզանդիա, սերտ կապերի մէջ է եղել նախարարական տների հետ»<sup>46</sup>:

Բայց Շապուհ Բագրատունու պատմութիւնն սկսում է 790 թուից եւ հասնում մինչեւ 910-ական թթ. շրջանը, այսինքն՝ ներկայացնում է մէկ դարից քիչ աւելի ժամանակ ընդգրկող մի պատմութիւն: Ղեկոնդ Վարդապետի Պատմաբանութեան մեկենաս է յիշուած Շապուհ Բագրատունին (Հմմտ. «Կատարեցաւ վարդապետութիւն Ղեկոնդի՝ վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապուհ Բագրատունու»)՝<sup>47</sup>, որ կարող էր լինել Ը. դ. երկրորդ կէսում ապրած Սմբատ սպարապետ պատրիկի որդին (թէեւ, Մեսրոպ եպիսկոպոսի վարկածով՝ մեզ հասած աւարտական յիշատակարանում նշուած Շապուհը լոկ նախագաղափար ձեռագրի պատուիրատուն էր<sup>48</sup>) եւ

<sup>44</sup> Լ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի..., էջ 169-172, 187, ծնթ. 1: Հմմտ. Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղազրուութիւնը, էջ 133-134:

<sup>45</sup> Լ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 171:

<sup>46</sup> Նոյն տեղում, էջ 172-173, 192, 196:

<sup>47</sup> Պատմութիւն Ղեկոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 170:

<sup>48</sup> Տե՛ս Պատմութիւն Շապուհի Բագրատունու, էջ XXX («Ղեկոնդի պատմութեան յիշատակարանը եւ հասկանում եմ այսպէս. «Կատարեցաւ վարդապետու-

<sup>43</sup> Պատմութիւն Շապուհի Բագրատունու, էջ XI:  
14

այդ դէպքում՝ պապը մեր պատմիչ Շապուհ Բագրատունու: Իսկ մեր պատմիչի մեկեանսը, ըստ վերը նշուած ձեռագրական պատառիկի յիշատակարանի վկայութեան՝ եղել է Աշոտ իշխանաց իշխանի որդի Դաւիթը («յանուն Դաւիթ Բագրատունոյ՝ որդոյ Աշոտի իշխանաց իշխանի»<sup>49</sup>): Շապուհի բուն պատմութիւնն սկսում է 853 թ. շրջանից, երբ ինքը կենդանի վկան է պատմական անցուղարձերի եւ իր ազգակից Աշոտ իշխանաց իշխանի վերելքի ընթացքին: Սա այն Աշոտն է, որ Բուղայի ձեռքով գերեզմարուել էր Սամառա եւ վերադարձել Հայրենիք՝ ձեռնարկելով ազգային միասնութեան ու արտաքին նուաճողների դէմ կազմակերպուած պայքարի սրբազան գործին, որը եւ յաջողութեամբ պսակուեց: Աշոտը յետ բերեց Հայաստանից խլուած հոգերը, 862 թ. հռչակուեց իշխանաց իշխան, իսկ 885-ին՝ Հայոց թագաւոր՝ հիմնադրելով Բագրատունեաց փառահեղ պետութիւնը: Ահա՛ Շապուհ Բագրատունու պատմութեան հիմնական նիւթը: Բայց դրանից առաջ նա դեռ գրել է արաբների տիրապետութեան (790-885), նախարարական տներին ու իշխաններին, Բուղայի գերեզմարած նախարարների վերադարձի, իրենց իշխանական կալուածքներում հաստատուելու, իրենց հակառակորդներին յաղթելու կամ ենթարկուելու եւ նրանցից ոմանց վախճանի մասին: Շապուհը գրել է նաեւ Վասպուրականի իշխան Գրիգոր Դերէնիկի քաջագործութիւնների եւ յաղթանակների, Սմբատ Ա արքայի իշխանական գործունէութեան մասին:

Այս «իշխանական» բառից կառչելով՝ Ն. Ակիմեանը ենթադրում է, թէ Շապուհ Բագրատունին ապրել է մինչեւ 884 թիւը՝ չտեսնելով ոչ միայն Սմբատի, այլեւ Աշոտի թագաւորութիւնը (885-890): Բայց այստեղ հետազոտողը սխալուում է. նախ՝ եթէ Շապուհ Բագրատունին վախճանուած լինէր, Յովհաննէս Դրասխանակերտցին ինչ-որ ձեռով կը զգացնէր դա, սակայն նման որեւէ ակնարկ կաթողիկոս-պատմիչի գրքում չկայ: Ընդհակառակը, վերջինս նրան «մերում ժամանակի պատմագիր» է անուանում: Երկրորդ՝ Դրասխանակերտցին ասում է,

թիւն Ղեւոնդի... ի հրամանէ Շապուհ Բագրատունու», որ մեր ձեռքն է հասել Շապուհի արտագրել տւած Ղեւոնդի պատմութեան բնագրի ընդօրինակութիւնը»):

<sup>49</sup> Հմմտ. վերելում, ծնթ. 21: Բնագիրը եւ թարգմանութիւնը տե՛ս ստորեւ, Յաւելուած 3-4:

որ Շապուհ Բագրատունին «գրով դրոշմել է նրա [Աշոտ արքայի] գործերի ընթացքի, վարքի, իմաստութեան, ճակատամարտերի, կառուցումների եւ խաղաղութեան պատմութիւնը»<sup>50</sup>: Այս տողերով նա հաստատ ցոյց է տալիս, որ Շապուհն Աշոտ Ա-ի պատմութիւնը լրիւ սպառել է, այլապէս ինքը՝ Դրասխանակերտցին կը գրէր, թէ Շապուհ Բագրատունին գրել է Աշոտի՝ միայն իշխանաց իշխան եղած շրջանի պատմութիւնը, իսկ ինքը ներկայացնելու է Աշոտի՝ թագաւոր դառնալու պատմութիւնը, մի բան, որ չկայ այնպէս: Կայ լոկ այն, որ Սմբատի պատմութեանն անցնելով՝ Դրասխանակերտցին ասում է, թէ ես Աշոտի մասին այնքան կ'ասեմ, որ կապ ստեղծուի երկու շրջանների միջեւ, որովհետեւ Աշոտի մասին Շապուհն է մանրամասն պատմել:

Կայ մի այլ կարեւոր ազբերազիտական փաստ, որ ամբողջովին ժխտում է Ն. Ակիմեանի դիտարկումները Շապուհ Բագրատունու կեանքի վերջին շրջանի մասին: Թուարկելով Հայոց պատմիչներին եւ հասնելով Շապուհ Բագրատունուն՝ Ստեփանոս Ասողիկն աւելացնում է. «Ապա միայն յետոյ վերջին՝ օրերս [իմա՝ վերջին ժամանակներս] Շապուհ Բագրատունու եւ Տէր Յովհաննէսի՝ Հայոց կաթողիկոսի պատմութիւնները, որոնք Բագրատունի առաջին թագաւորներ Աշոտի եւ Սմբատի ժամանակներում են»<sup>51</sup>: Ասողիկի՝ «վերջին օրերս» կապակցութիւնը եւ այն, որ նա իրարից չի անջատում Շապուհի ու Դրասխանակերտցու երկերը, ցոյց են տալիս, որ վերջիններս ժամանակով շատ մօտ են եղել եւ հաւասարապէս ապրել են Աշոտ եւ Սմբատ արքաների օրօք, այլապէս Ասողիկը՝ կ'ասէր՝ մէկն Աշոտի, իսկ միւսը՝ Սմբատի ժամանակ: Ուրեմն Շապուհ Բագրատունին ապրել է մինչեւ իսկ Սմբատի թագաւորութեան օրերում (890-914), թէպէտ հնարաւոր է, որ այդ ժամանակ էլ իր պատմութիւնն աւարտած լինի:

Դրասխանակերտցու եւ Ասողիկի տուած վերոյիշեալ տեղեկութիւնները խարխիս դարձնելով՝ 1921 թ. գրքի աշխատասիրող Մեսրոպ Կալիսկոպոսը փորձում էր ապացուցել, որ յիշեալ գիրքը հէնց Շապուհ Բագրատունու կորած պատմութիւնն է: Ըստ հրատարակչի՝ նորագիւտ ձեռագիրն ընդհանուր գծերով ունի հետեւեալ նիւթերը՝ Մու-

<sup>50</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցուց Պատմութիւն Հայոց, էջ 7:

<sup>51</sup> Տե՛ս այս առաջաբանի 10-րդ ծանօթագրութիւնը:



Համմէղի Հանդէս գալը, նրա եւ նրան յաջորդող խալիփաների նուաճումները, Հայ իշխանների գործերը մինչեւ Սմբատ Ա Բագրատունու թագաւորութեան առաջին կէսը, որոնք բոլորը Համեմուած են առասպելական զրոյցներով. միայն թէ նորագիւտ ձեռագիրը չունի թուականներ («մի երկու բացառութիւնով»<sup>52</sup>), չկան որեւէ աղբիւրի յիշատակութիւն, Աստուածաշնչից վկայութիւններ եւ ոչ էլ հեղինակի մօտ դպրոցական լուրջ կրթութեան հետքեր:

Այն մասին, որ Յովհաննէս Դրասխանակերտցին վկայում է, թէ Շապուհ Բագրատունին պատմել է Աշոտ իշխանաց իշխանի կեանքի, գործերի, շինարարական ձեռնարկների, Հաստատած կարգերի, պայտաւորութեան, թագաւոր դառնալու մանրամասները, ըստ հրատարակչի, բաւարար չափով չկան ներկայ պատմութեան մէջ, եղածը շատ քիչ է Դրասխանակերտցու Հաղորդածի Համեմատութեամբ<sup>53</sup>: Բայց այս Հանգամանքը Մեսրոպ եպիսկոպոսը պատճառաբանում է նրանով, որ ներկայ բնագրի ձեռագիրը կազմալոյծ է եղել (թերթերի յետեւառաջութիւնը նկատել եւ ուղղել է արդէն Գ. Տէր-Մկրտչեանը) եւ հնարաւոր է, որ էջեր ու հատուածներ դուրս բնկած, նոյնիսկ դիտաւորեալ հանուած լինեն<sup>54</sup>: Նա գտնում է, որ Բուղայի կողմից իշխաններին գերեզմարուելը եւ գերիների վերադարձը լիւրի կան այստեղ, բացի Սմբատ սպարապետի, Ատոմ Աղբակեցու, Ստեփանոսի եւ այլ նահատակների անուններից, որոնց մասին ոչ մի խօսք չկայ:

Հրատարակիչը երկընարանքով ասում է. «Կամ այն է, որ ձեռագիրը Շապուհի պատմութիւնը չէ, կամ... ձեռագրում կան թերի մասեր»: Այստեղ էլ նա կառչում է ձեռագրի պակաս մասերից. «Եթէ Զ-ի հեղինակը գիտէ, որ Աշոտ Բագրատունու խորհրդով է սպանել Անձեւացեաց Տաճատ իշխանը, եւ պատմում է, որ Բուղան Հայաստան գալով խիստ կերպով աւերում է Վասպուրականը եւ ընտանիքով գերի վարում Տաճատի սպանութեան մասնակցող Աշոտ Արծրունուն, ինչպէ՞ս կարող էր Զ-ի հեղինակը միանգամայն լուրթեամբ անցնել, թէ Բուղան ինչպիսի պատիժներ սուեց Աշոտ Բագրատունուն, Սմ-

բատ սպարապետին եւ առհասարակ Բագրատունի իշխաններին»<sup>55</sup>: Յովհաննէս Դրասխանակերտցին գրում է, որ արաբների կոտորածների պատճառով Հայաստանում պակասել էին Հայ մեծամեծերը եւ դրանց աների վերաբերեալ եղած զրոյցները, որոնց մասին Շապուհ Բագրատունին գրել է: Ըստ հրատարակչի՝ Դրասխանակերտցու այդ վկայութիւնը լրիւ Համապատասխանում է մեր ներկայ պատմութեան առաջ բերած փաստերին: Նա գտնում է, որ ճիշտ կաթողիկոս պատմիչի վկայութեանը համահունչ, թէ՛ Շապուհ Բագրատունու կողմից նկարագրուել են Արծրունի Գրիգոր Դերէնիկի գործերը, դրանք դարձեալ լրիւ կերպով պահպանուած են ներկայ պատմութեան մէջ:

«Պատմութիւն Շապուհի Բագրատունու» գրքոյկը լոյս տեսնելուց յետոյ անմիջապէս հետեւեցին բանասիրական քննադատութիւնները, որոնց բոլոր հեղինակները համակարծիք գտնուեցին, թէ այդ գրքոյկի նիւթը Շապուհ Բագրատունու կորած երկը չէ: Ամենից առաջ ընդարձակ ժխտողական յօդուածով Հանդէս եկաւ տաղանդաւոր բանասէր-տնտեսագէտ Թադևոս Ավդալբեգեանը, ընդ որում նրա յօդուածը վերնագրուած էր՝ «Կարծեցեալ Շապուհը»<sup>56</sup>:

Ըստ քննադատի՝ Շապուհ Բագրատունու գրքում առաջնակարգ տեղը պատկանել է Աշոտ Առաջինի պատմութեանը, մինչդեռ հրատարակուած գրքի մէջ ոչ միայն էջ, այլեւ անգամ տողեր չկան նրա մասին. կարելի է ասել, որ Աշոտ արքայի մասին համարեա չի խօսուում: Յայտնի է, որ Հայոց իշխաններից Բուղան գերի էր տարել Սմբատ Խոստովանողին, Քուրդիկի որդի Մամիկոնեան տէր Գրիգորին, Աղուանից իշխան Ատրներսեհին, Սիւնիքի տէր Գրիգորին, Սմբատի որդի Սահլին՝ ապստամբ Բաբեկին բռնողին, Վայոց ձորի տէր Վասակ իշխանիկին, Սիւնեաց իշխան Փիլիպպէին, Գարդմանի տէր Ներսեհին, ապա Գորոզուի իշխան Եսայի Աբուսուսէին: Ահա սրանց մասին պիտի գրած լինէր Շապուհ Բագրատունին, մինչդեռ հրատարակուած գիրքը խօսում է միայն Արծրունեաց իշխանների գերութեան մասին՝

<sup>52</sup> Թուականների օգտագործման այդ երկու դէպքերի ուշագրաւ քննութիւնը տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ XII եւ XVIII:

<sup>53</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ XII:

<sup>54</sup> Նոյն տեղում, էջ XIII-XIV:

<sup>55</sup> Նոյն տեղում, էջ XIV:

<sup>56</sup> Թ. Ավդալբեգեան, Կարծեցեալ Շապուհը (մի քանի խօսք «Պատմութիւն Շապուհի Բագրատունու» գրքոյկի հեղինակն որոշելու խնդրի շուրջը), - «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 244:

յիշելով աւագ Աշոտին, սրա քեռորդի Իշխանակին եւ Աշոտի երկու որդիներին՝ Համազասպին ու Դերէնին: Բուզայի արշաւանքի եւ յաջորդող դէպքերի մասին Շապուհը ընդարձակ է պատմել, Յովհաննէս Դրասխանակերտցին համառօտում է, իսկ ներկայ գրքոյիում աւելի համառօտ է, քան վերջինիս պատմածը: Դերէնի իշխան դառնալը, Աշոտ Ա արքային փեսայանալը եւ լսող լինելը, ուժն ու քաջութիւնները, մղած պատերազմները եւ բազմաթիւ բարի օժանդակութիւնները նոյնպէս պատմուած են եղել Շապուհի երկում, իսկ այստեղ Դերէնի միայն սիրահարութիւնն է նկարագրուած՝ առանց միւս յատկանիշների ու գործերի: Դրասխանակերտցին չի ասում, թէ Շապուհը գրել է նաեւ Սմբատ Ա-ի մասին, իսկ նորագիւտ պատմութիւնը, որ այդքան համառօտ է Աշոտ Ա-ին վերաբերող մասում, այս կամ այն չափով աւելի է խօսում Սմբատ արքայի մասին (էջ 65-85): Գրքոյի մի մեծ հատուածը (էջ 37-85) վերաբերում է միայն Վասպուրականի Արծրունիների պատմութեանը, իսկ Բագրատունի Սմբատ Ա-ի մասին խօսւում է լոկ Արծրունիների առնչութեամբ, մինչդեռ Շապուհ Բագրատունու գիրքը Բագրատունիների պատմութիւն է եղել, եւ ո՛չ թէ Ռշտունիների ու Արծրունիների<sup>57</sup>, որոնց մեր պատմիչը շատ անգամ չի էլ զանազանում միմեանցից:

Ուրեմն, ըստ յօդուածագրի՝ ներկայ գրքոյիը Հայաստանի հարաւային մասի պատմութիւնն է, եւ ո՛չ թէ հիւսիսի, որտեղ իշխում էին Բագրատունիները: Թ-Ժ դարերում, տոհմային նախանձախնդրութեան այդ շրջանում մի Բագրատունի պատմիչ չէր կարող իր տոհմի պատմութիւնը թողնել եւ գրել Արծրունիների պատմութիւնը, երբ յիշեալ տոհմերն ամբողջ ժամանակ մրցակցութեան մէջ էին: Այնուհետեւ ընդդիմախօսը պատմական բազմաթիւ փաստեր է բերում հրատարակուած գրքից, որտեղ պատմական դէպքերն ու անձերը, ժա-

<sup>57</sup> Վերջին հանգամանքը նոյն ժողովածոյում տպագրած իր յօդուածում յատուկ շեշտում է Ստ. Կանայեանը (Ս. Կանայեան, Պատմութիւն Աստուածընկալ Ս. Նշանին Ս. Աղբերկու եւ Շապուհ Բագրատունի, - «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա եւ Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 137-140, յատկապէս էջ 140): Նա այդ հիմամբ անգամ ենթադրում է, թէ մեր գրուածքի հեղինակը կարող էր լինել ԺԵ դ. վասպուրականցի կաթողիկոս-մատենագիր Գրիգորիս Աղթամարցին, սակայն հմտ. Ն. Ս. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 224-225:

մանակներն ու եղելութիւնները խառնաշփոթուած են: Այսպէս՝ Յովհաննէս Դրասխանակերտցին, Թովմա Արծրունու գրքի զոյգ հեղինակները հաստատում են, որ Գրիգոր Դերէնիկն սպանուել է Աշոտ Առաջինի օրերում, իսկ նորահրատարակ գրքի հեղինակը պնդում է, թէ Գրիգոր Դերէնը սպանուել է Սմբատ Առաջինի ձեռքով: Բագրատունի պատմիչը չէր կարող այդպիսի կարեւոր իրադարձութիւնը շփոթել, մանաւանդ՝ այն կարծիքը կայ, թէ պատմիչ Շապուհ Բագրատունին Աշոտ Առաջինի որդին է: Բոլոր ժամանակակից պատմիչները վկայում են, որ Գագիկ Ապուճրվան Արծրունին սպանուել է Աշոտ իշխանի մահուանից առաջ, իսկ այս պատմութիւնը պնդում է, որ նա սպանուել է Աշոտ իշխանի մահից յետոյ, ընդ որում Աշոտ իշխանի՝ երկրորդ անգամ գահ նստելու մասին ոչ մի խօսք չկայ: Իր յօդուածի շարունակութեան մէջ եւս Թ. Ավդալբեգեանը բազմաթիւ պատմական ու բանասիրական փաստերով ապացուցում է, որ էջմիածնում հրատարակուած գրքոյիը Յովհաննէս Դրասխանակերտցու աւագ ժամանակակից Շապուհ Բագրատունու երկը չէ:

1921 թ. հրատարակուած գրքոյի երկրորդ ընդդիմախօսը Հր. Աճառեանն էր<sup>58</sup>: Նա իր փաստարկումներն ամփոփում է հետեւեալ ձեւով. Շապուհ Բագրատունին գրել է Բագրատունեաց թագաւորութեան պատմութիւնը՝ Աշոտ Ա-ի պատմութիւնը եւ Սմբատի գործերը, սակայն ներկայ գրքոյի նիւթերում «Հացունեաց խաչի պատմութիւնն» է, Վասպուրականի մի քանի իշխանների՝ Դերէնի, Տաճատի, միւս Դերէնի, Գուրգէն (բնագրում՝ Գորգեւ) Արծրունու գործերն են: Աշոտ եւ Սմբատ թագաւորների մասին գրքոյիում խօսուել է հարեւանցի եւ միայն այն դէպքերում, երբ դրանք կապուած են Արծրունիների հետ: Երբ Բաղդադի Մահմէտ խալիփան արշաւում է Այրարատ, գրաւում է Դուինը, այս մասին ընդամենը երկու տողով է ասուում, իսկ երբ արշաւանքը հասնում է Վասպուրական, խօսուում է մի ամբողջ էջ: Հեղինակը Սմբատի մասին խօսում է, որպէսզի պատմի նրա քրոջ՝ Հրանոյշի ամուսին Արծրունի Դերէնի սիրային արկածների մասին: Մանրամասն է խօսում Մոսուլի իշխան Հապիպի՝ Սմբատի դէմ մղած կռուի

<sup>58</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր Շապուհ Բագրատունու պատմութեան մէջ, - «Բազմապէս», 1922, էջ 179-182, 232-234, 267-271:

մասին, որովհետեւ կռուի պատճառը Ապոււմրօվան Արծրունին է: Ատրպատականի Յուսուփ ոստիկանի գործերը Սմբատ Ա-ի կեանքի դժբախտ դէպքերն են, որոնց կէս էջ է նուիրուած, իսկ Ափխազաց Դատոս թագաւորի կռիւները պատմուած են մանրամասն, եւ այնտեղ մեծ դերը պատկանում է Գուրգէն Արծրունուն: Այս ամենից պարզ է, որ սա Արծրունիների պատմութիւն է եւ գրողն Արծրունի է:

Այն պատճառաբանութեանը, թէ գրքից մասեր են պակասում եւ կորած էջեր կան, Հր. Աճառեանը հակադրում է հետեւեալ փաստարկումով: Երբ պատմիչը Սմբատի աշխարհակալութիւնն ընդամենը կէս էջով է նկարագրում եւ նիւթը սպառում է, այլեւս զուր է կարծել, թէ նա պիտի նորից ընդարձակօրէն պատմած լինէր կորած էջերում կամ մասերում: Սմբատի եւ Յուսուփի կռիւը կէս էջով վերջացնում է, էլ ի՞նչ կարիք ունէր նորից դրան անդրադառնալու: Ինչ վերաբերում է լեզուին, ապա սա ոչ միայն գեղջուկ բարբառ է, այլեւ աւելի գրաբար է, քան Վարդան պատմիչի լեզուն: Մի քանի տառասխալները գեղջուկեան նշաններ չեն, այլ գրչի ապաշնորհութեան:

Միւս ընդգիծախօսը յայտնի բանասէր, Վիեննայի Մխիթարեան միաբան ներսէս վրդ. Ակիւնեանն էր, ով ամենից առաջ Շապուհին վերագրուող պատմութեան մէջ նկատում է ժամանակագրական վրիպումներ: Ըստ այս պատմութեան Բաղդադը հիմնադրուած է 587 թ. Մահմէդի կողմից եւ այնուհետեւ դարձել է մայրաքաղաք: Բաղդադն առաջին անգամ մայրաքաղաք է դարձած 750 թ. եւ մնաց մինչեւ 1258 թ., երբ մոնղոլ-թաթարները գրաւեցին ու կործանեցին այն<sup>59</sup>: Զ դ. կայսր Մօրիկի հայրենիքը նշուած է Անին, որը մեր պատմութեան մէջ յիշատակուած է իբրեւ թէ միայն 961 թուից<sup>60</sup>: Տաճատն ամիրապետի որդուն առած փախչում է Փոկաս կայսեր մօտ: Դէպքն ըստ Ղեւոնդ պատմիչի՝ տեղի է ունեցել 780 թ., երբ Բիւզանդիայի կայսրը Կոստանդինն էր: Գուցէ հեղինակը Փոկաս կայսրին է ակնարկում, բայց սա էլ տիրակալել է 602-610 թթ.: Չի յարմարում նաեւ Նիկեփորոս Փոկաս Բ-ին (963-969): Հեղինակը գրում է, թէ Ռոմանոս կայսրը Սմբատին թագ է ուղարկել, իսկ Ռոմանոսն իշխել է 920-944 թթ.,

<sup>59</sup> Հ. Ն. Ակիւնեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 216:

<sup>60</sup> Նոյն տեղում:

մինչդեռ Սմբատը սպանուել է 914 թ.<sup>61</sup>: Սրանք ապացուցում են, որ պատմութիւնը չի կարող գրուած լինել Ժ գ. առաջին տասնամեակում, ինչպէս որ ընդունում է հրատարակիչ Մ. Տէր-Մովսիսեանը: Եթէ այս ամենը ճիշտ է, ուրեմն գրքի հեղինակը չի կարող Շապուհ Բագրատունին լինել, քանի որ նա Բագրատունեաց պատմութիւնը գրել է 885 թ. առաջ, իսկ ապրել է, գուցէ, մինչեւ 910-ական թթ.<sup>62</sup>:

Ն. Ակիւնեանը բերում է նաեւ Յ. Մարկուարտի նամակից մի քաղուածք, ուր ասուած է, թէ երբ ինքը՝ Մարկուարտը մանրամասն վերլուծել է, նկատել է, որ այդ գիրքը չի կարող ԺԱ դարից վաղ գրուած լինել: Այն Վասպուրականի պատմութիւնն է եւ գրուած է Արծրունիների տեսակէտով, լեզուն միջնադարեան է, աւելի ուամիկ է, քան Ուռհայեցու պատմութեան լեզուն է: Այս կարծիքը բերելուց յետոյ Ն. Ակիւնեանը գտնում է, որ Յ. Մարկուարտի տեսակէտը գրութեան ժամանակի մասին պէտք է ճիշտ համարել, որովհետեւ պատմիչներից (Թովմա Արծրունի, Դրասխանակերտցի, Ասողիկ) ոչ մէկը չի օգտուել այդ գրքից, ուստի մինչ 1004 թ. (Ասողիկն իր պատմութիւնը հասցրել է մինչեւ այդ տարին) գիրքը գոյութիւն չի ունեցել<sup>63</sup>:

Այժմ ուսումնասիրողը հարց է առաջ բերում. ո՞վ է Շապուհին վերագրուող այս երկի հեղինակը: Դեռեւս 1896 թ. Ն. Քարամեանցը յայտնել էր այն կարծիքը, թէ «Հացունեաց խաչի պատմութեան» հեղինակը կարող էր լինել Յովհաննէս Կոզեռն վարդապետը: Սակայն նա Կոզեռնի անունը գտել էր միայն նիւթերի ցանկի մէջ, բայց երբ բացել էր համապատասխան ձեռագրական նիւթը, այնտեղ այդ անունը չէր եղել: Նիւթի վերնագիրն էր. «Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին, որ Հացունեաց կոչի, եւ թէ որպէս դարձաւ ի Պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ, եւ յայն ժամ մասն ընկալեալ տիկնոջն Սիւնեաց»<sup>64</sup>: Դժբախտաբար, Ն. Քարամեանն իր օգտագործած ձե-

<sup>61</sup> Նոյն տեղում, էջ 216-217:

<sup>62</sup> Նոյն տեղում, էջ 217:

<sup>63</sup> Նոյն տեղում, էջ 217-218: Նոյնը՝ ամփոփման մէջ, էջ 222 («Պատմութեանս գրութեան ժամանակն է ԺԱ դարու առաջին քառորդը»): Ժամանակի մասին այդ կարծիքը կիսում են նաեւ Մ. Արեղեանը (Հայոց Հին գրականութեան պատմութիւն, գիրք Ա, էջ 397) եւ հետագայ բանասէրները:

<sup>64</sup> Տե՛ս «Արարատ», 1896, էջ 76 (Նիկ. Մառի գրքի՝ Ն. Քարամեանի գրախօսութիւնն է): Հմմտ. Հ. Ն. Ակիւնեան, Շապուհ Բագրատունի, էջ 219:

ուսման համարը չի նշում, որպեսզի ստուգելինք նրա դիտարկած նիւթերը:

Ն. Ակինեանը շարունակում է. «Մեզի համար սակայն աւելի հետաքրքրական է իր ուրիշ մէկ պատմական աշխատութիւնը. խոսքը Յովհ. վարդապետ Տարօնեցու մասին է, որ մականուանուած է Կոզեռն, որուն ծանօթ եղած կ'երեւայ Մխիթար Այրիվանեցի, երբ կը գրէ յամն 1051. «Յովհաննէս վարդապետ Տարօնեցի արար պատմութիւն Բագրատունեացն հրամանաւ տէր Պետրոսի»: Այուբեան զանազանելով Տարօնեցին եւ Կոզեռնը՝ կը գրէ. «Յոհան Տարօնեցին, որ է պատմութիւն Բագրատունեաց»: Տարօնեցի վարդապետի այս գրութիւնը կ'երեւայ այն, զոր կը նշանակէ Կարինեան էջմիածնի թ. 1675-ի մէջ «Յովհաննու վարդապետի Տարօնեցոյ պատմութիւն տանն Բագրատունեան՝ քառածալ, նօտրագիր, գրեալ ի թղթի»<sup>65</sup>: Ապա 223-րդ էջում Ն. Ակինեանն ուղղակի ասում է, թէ Շապուհին վերագրուող այս աշխատութիւնը, թերեւս, պէտք է լինի Պետրոս կաթողիկոսի հրամանով գրուած Յովհաննէս Տարօնեցու «Բագրատունեաց պատմութիւնը»՝ աւելացնելով. «վերջին կէտիս վերջնական լուծումը պիտի տայ էջմիածնի թ. 1675 ձեռագրին քննութիւնը»:

Ն. Ակինեանի նշած ձեռագրում Յովհաննէս Տարօնեցու մասին ոչինչ չկայ: Բայց այդ մասին գտնում ենք էջմիածնի վանքի թիւ 1717, իսկ Մաշտոցեան մատենադարանում 1775 համարի տակ պահուող գրչագրում (Ժէ դ.) հետեւեալ վերնագիրը. «Յոհաննու Տարօնեցոյ ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի՝ աշակերտի երանելոյ վարդապետին [Անուան տեղը բաց է թողնուած] շարունակելոյ շարագրութիւն պատմութեան տանն Բագրատունեաց իւր Հայաստանեաց զոր արարի հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի՝ արժանաւոր աթոռակալի սրբոյն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչի, իմաստուն եւ հանճարեղ գիտնաւորի Գրոց Սրբոց եւ ուղիղ դիտապետի եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տանս Թորգոմայ»: Սրան քիչ յետոյ յաջորդում է. «Ի սկսանել զշարագրութիւն յաղագս թագաւորութեան տոհմին Բագրատունեաց ի վերայ Հայաստան ազգիս»<sup>66</sup>:

<sup>65</sup> Նոյն տեղում, էջ 220-221:

<sup>66</sup> Տե՛ս ՄՄ ձեռ. թիւ 1775, թ. 8բ եւ 9ա:

Բուն բնագիրն սկսում է պակասով. «...ակաց դեւել ի սկզբանց անտի մինչեւ ԼԶ ամն թուականութեանս Հայոց, յորում ամի առաջին թագաւորեաց բարեպաշտն Աշոտ, զոր յիւրում տեղոջն զորպէսն գրեսցուք: Եւ անտի յառաջի կարգի զայլն ամենայն մինչեւ յաւուրս մեր՝ զթագաւորութիւն տոհմին Բագրատունեաց մի ըստ միոջէ կարգաւ: Եւ արդ՝ ասացուք այսպէս»:

Դրանից յետոյ ձեռագիրը լքում է Հայոց պատմութիւնը եւ անցնում Ադամի ու Եւայի պատմութեանը, այսինքն՝ այն խարսխին, որի վրայ պէտք է կառուցուէր Հայոց պատմութիւնը: Սակայն ձեռագրի թ. 16ա-ում աւարտում է Ադամ-Եւայի, ջրհեղեղի պատմութիւնը, բայց Բագրատունեաց պատմութիւնը չկայ: Այդ էջում բացում է մի նոր գլուխ՝ «Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին, որ Հացունեան կոչի, թէ որպէ՛ս դարձաւ ի Պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ, եւ յայն ժամ մասն ընկալեալ տիկնոջն Եւեղ [իմա՛ Բիւրեղ] եւ յետ թագաւորելոյն Մաւրկայ արքային Հոռոմոց»:

Խաչի այս պատմութիւնը ձեռագրում բոլորովին այլ խմբագրութիւն է, լրիւ է եւ համապատասխանում է Ոսկեփորիկի բնագրին, որից Շապուհ Բագրատունու հրատարակութեան մէջ տողատակում քաղուածքներ է բերում Մեսրոպ եպիսկոպոսը:

Եթէ ձեռագրի այն մասը, որ մենք բերեցինք վերեւում, Յովհաննէս Տարօնեցու անունով է, ապա չենք կարող պնդել, թէ Հացունեաց խաչի պատմութիւնը եւ շարունակութիւնը նոյնպէս պատկանում են այդ հեղինակին. հնարաւոր է, որ «Հացունեաց խաչի պատմութիւնն» այստեղ արտագրուել է բոլորովին կողմնակի մի աղբիւրից: Սակայն ե՛ւ սա, ե՛ւ սրա շարունակութիւնը համապատասխանում են Շապուհ Բագրատունու պատմութեանը (հասնելով մինչեւ 1921 թ. հրատարակութեան 36-րդ էջի վերջը)՝ միայն թէ ժամանակավրէպ բառերի (ծուկ, ֆրանկ-ֆոսանկ, պարոն եւն), տառասխալների, աղաւաղումների ու բացթողումների լիակատար բացակայութեամբ:

Արդ՝ հնարաւոր է, որ Յովհաննէս Տարօնեցին սկսէր Բագրատունեաց պատմութիւնը եւ մի քանի տողից յետոյ անցնէր Ադամ-Եւային ու դա աւարտելուց անմիջապէս յետոյ էլ անցնէր Հացունեաց խաչի պատմութեանը. ե՛ւ հնարաւոր է, ե՛ւ՛ ոչ:

1775 ձեռագիրը ժողովածոյ է, սկսում է քարոզներով, ապա յաջորդում է Յովհաննէս Տարօնեցու պատմութիւնը, յետոյ՝ Հացունեաց խաչի պատմութիւնը, ապա՝ դրա շարունակութիւնը Հանդիսացող Երուսաղէմի գրաւումն արարների կողմից, խաղարների դէմ արշաւանքը, Բիւզանդիան կողպտելը, Կոստանդնուպոլսի մօտ ծովամարտում պարտուելը, Հայաստանի վրայ կատարուած արշաւանքը, Սահակ Զորափորեցի կաթողիկոսի առաքելութիւնն արաբ զօրապետի մօտ, Վարդ Պատրիկին վերաբերող զրոյցը, մինչեւ 64բ էջը, ուր վերջանում է Պետրոս Գետադարձի առասպելով: Այնուհետեւ յաջորդում են այլ նիւթեր մինչեւ 210-րդ թերթը:

Բոլոր դէպքերում մի անգամ եւս Հաստատուում է, որ Յովհաննէս Տարօնեցին գրել է Բագրատունեաց Պատմութիւնը. ձեռագիրը մեր իմացածի վրայ այլ բան չի աւելացնում եւ չի կարող Հաստատել, որ «Հացունեաց խաչի պատմութիւնը» եւ սրա շարունակութիւնը, որոնք միասին կազմում են Շապուհի ներկայ պատմութեան նոյն նիւթի մէկ երրորդից աւելին, վճռականօրէն չեն կարող վերագրուել Յովհաննէս Տարօնեցի Կոզեռնին: Այլ բան կը լինէր, եթէ այդ նիւթը մի ձեռագրում ամփոփուած լինէր եւ կամ տարբեր նիւթերն անուանումներ ունենային: Սակայն այս վերջին Հանգամանքը կարող է նաեւ ապացոյց ծառայել՝ Հաստատելու, որ յիշեալ նիւթերը Յովհաննէս Տարօնեցու գրչին են պատկանում եւ շարունակութիւնն են Ադամ-Եւայի պատմութեանը: Ի դէպ, պէտք է նշել, որ Հացունեաց խաչի պատմութեանը յաջորդող նիւթն ընդհատուած է 21բ էջի վերջում, որից յետոյ սկսւում է Ուռհայեցու պատմութեան մի ընդարձակ Հատուած. այն հասնում է մինչեւ 57բ էջը, որից յետոյ գալիս է ընդհատուած նիւթի շարունակութիւնը:

Ինչ որ է, յիշեալ ձեռագիրը միայն թէականօրէն է Հաստատում, որ մեր խնդրոյ առարկայ երկասիրութիւնը պատկանում է Յովհաննէս Տարօնեցուն, մանաւանդ՝ եթէ նկատի առնենք, որ Տարօնեցին էլ, ըստ ձեռագրի սկզբում առկայ վերնագրի՝ գրել է Բագրատունեաց պատմութիւն, իսկ մեր այս գրքոյին առաւելապէս Արծրունի իշխանների պատմութիւն է:

Մեր գրչագիրը եւս թղթի մաշուածութեան հետեւանքով սկզբում որոշ պակաս ունի: Զեռագրի մանրամասն նկարագրութիւնը (էջմիա-

ծնի ձեռագրատանն այն ստացել էր 1371 համարը, իսկ մեր մատենագրանում թիւ 5974-ն է) կատարել են արդէն Գ. Տէր-Մկրտչեանը եւ Մեսրոպ եպիսկոպոսը<sup>67</sup>: Վերջինիս խոսքերով՝ «Արտագրութիւնը կատարուած է վերին աստիճանի անխնամ եւ անհասկացած ձեւով. ակնյայտնի տառասխալներ, նոյն բառի մի քանի ուղղագրութեամբ արտագրութիւններ, նոյն յատուկ անունը, նոյն երեսում շատ անգամ ամենատարբեր ձեւով ուղղագրուած, չհասկացւած բառեր, անթիւ բացեր եւ թերութիւններ՝ բառերի ու անշուշտ նաեւ հատուածների: Բոլորն աշխատել ենք անփոփոխ վերարատարել՝ շղագրով ցոյց տալով սխալը, փակագծի մէջ առնելով մեր զգուշաւոր սրբագրութիւնը եւ ծանօթութիւնների մէջ առնելով կատարուած որեւէ փոփոխութիւն: Զեռագիր Ոսկեփորիկ մի օրինակի եւ «Արարատ»-ի տպագրութեան բաղդատութիւնները շատ անգամ օգնում են բնագիրը պարզաբանելու եւ հասկանալու: Արտագրողի այդքան կոպիտ սխալները բացատրւում են անշուշտ ամենից առաջ իր տգիտութեամբ, ապա հին ձեռագրի աղաւաղուած եւ եղծւած վիճակով»<sup>68</sup>: Հմմտ. Ն. Ակինեանի մօտ. «ռամկախօս ձեւերու մեծ մասը կը համարիմ գրչին խակութեանց արդիւնք. ասոնց մէջ են՝ բոլոր ուղղագրական սխալները, այն գաւառական հոլովման եւ խոնարհման ձեւերը, որոնք նորագոյն շրջանի նկարագիր կը կրեն, ֆրանք, պարոն եւ այլն»<sup>69</sup>:

Զեռագրի շարադրանքն սկսւում է Մուհամմէդի յայտնուելու առասպելախառն պատմութեամբ եւ Խոսրով Պարսից թագաւորի Հալածանքից խոսասփելով: Այստեղ այդ պատումն ընդհատուած է, եւ սկսւում են Բիւզանդական կայսեր մասին յայտնի զրոյցը, նրա սպանութեան ու Հերակլի՝ կայսր դառնալու պատմութիւնը: Ընթացքում յիշուում են Խոսրովի եւ Հերակլի կռիւները, Բիւզանդիայի պարտութիւնը եւ երկրի աւերումը: Դրանից յետոյ գալիս է Հացունեաց խաչի պատմութիւնը, ապա կրկին անցում է կատարուած Մուհամմէդի ու նրա յաջորդների գործերին, արաբ-բիւզանդական պատերազմներին, Հայաստանի նուաճումներին՝ մինչեւ Թէոդորոս Ռշտունու մահը (բնագրում անուանածեւը՝ Թէոդոս): Այստեղից պատմութիւնն անցնում է

<sup>67</sup> Տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ XXX-XXXIV:

<sup>68</sup> Տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ XXXII:

<sup>69</sup> Լ. Ն. Ակինեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 207-208:

հայկական ներքին կեանքին: Պատմում է Թէոդորոսի որդի Վարդ Պատրիկի՝ պարսիկների կողմն անցնելը եւ բիւզանդական զօրքի կոտորածը, Վարդի զղջումը, խղճի խայթից ազատուելու համար եկեղեցիներ կառուցելը եւ մահը:

37-րդ էջից սկսում է Արծրունիների պատմութիւնը: Այստեղ ասում է, որ հայերը պառակտուեցին, որովհետեւ չէին կամենում Թէոդորոս Ռշտունու տոհմի տիրապետութիւնը, ուստի Հայաստանը բաժանուեց երկու մասի. հիւսիսային կողմում տիրեցին Բագրատունիները, իսկ Վասպուրականի կողմին (հարաւային) տիրեցին Արծրունիները: Դրանից յետոյ թողնելով Բագրատունիների ու Արծրունիների թագաւորութիւնների պատմութիւնը, որ այստեղ հէնց շարադրելու տեղն էր, գրուածքի հեղինակը մի քանի սերունդ առաջ է գնում եւ սկսում պատմել Գրիգոր Դերէնի արկածալից կեանքի մասին:

Գրիգոր Դերէնը (բնագրում՝ Դերէն) առաջին Գագիկ Արծրունու հինգերորդ սերունդն էր: Իր արկածալից կեանքն այնքան պատմութեանը չի վերաբերում, որքան նիւթ է արձակ գրական երկի: Իշխանն իր ողջ հարստութիւնը ծախսում է խնջոյքների վրայ: Նրա եղբայրներն իրենից գնում են մինչեւ իսկ իր մայրաքաղաք Վանը: Բողոքը լքում են նրան, եւ հաւատարիմ են մնում միայն Ջափրան անունով ծառան Գնունի տոհմից, մի նուիրակ ու մի մատուակ: Նրանք վերջին անգամ վաճառում են Ջափրանի (բնագրում աւելի շատ՝ Ջաֆրան) ձին, որ խնջոյքը չընդհատուի, եւ ահա այս վերջին խնջոյքի ժամին նրանց մօտ է գալիս մի օտարական: Պարզում է, որ սա արարների լքուած, հալածուած, վիրաւորուած արքան է եւ կամենում է տեսնել Դերէնին, որի մասին շատ էր լսել, ընդ որում յոյս ունի, թէ լոկ նա իրեն կ'օգնի: Դերէնը բուժում է նրան, մեծարում եւ իր ողջ կարողութիւնից մնացած միակ ձին տալիս է նրան ու ճանապարհ դնում Խորասան, որի թագաւորը օտարականի քրոջ ամուսինն էր:

Ձին օտարականին տալուց յետոյ իրենք այլեւս ծախսելու ոչինչ չեն ունենում, եւ Դերէնը վերցնում է միակ ծառային ու հեռանում հայրենի Վանից: Առաջին կայանը լինում է Մօսուլ քաղաքը. պարզում է, որ այստեղ բոլոր մարդիկ լսել են Դերէնի համբաւը եւ օտարականների հանդէպ նրա ունեցած բարեացակամ վերաբերմունքի մասին: Նրան ճանաչում են եւ մեծամեծ նուէրներ մատուցում:

Մօսուլից Դերէնն ու ծառան գնում են Բաղդադ (բնագրում այն առաւելապէս հանդէս է գալիս Բաղսադ անուանաձեւով): Բաղաքի հրապարակ են մտնում, եւ պարզում է, որ այդ օրը Բաղդադի արքան, որ արդէն վերատիրացել էր իր իշխանութեանը, շրջում է հրապարակում: Սրանց տեսնելով՝ ճանաչում է: Մեծ պատիւներով ընդունում է Դերէնին, ապա հսկայական հարստութեամբ, զօրքով ճանապարհ է գնում Վան, որ գնայ, տիրանայ իր կորցրած իշխանութեանը: Դերէնը գալիս է եւ հաստատում իր իշխանութիւնը, եղբայրներից խլում է քաղաքներն ու ամրոցները եւ զրկում նրանց մինչեւ իսկ հօրից բաժին ստացած իրենց ժառանգութիւնից՝ թողնելով լոկ չնչին կալուածքներ: Նրա ընդարձակ իշխանութեան մէջ են ներառում նաեւ Հեր եւ Ջարեւանդ գաւառները՝ մինչեւ Ուրմիոյ լիճը:

Բաղդադի Ալի թագաւորի մահից յետոյ նրա տեղը նստում է Մահմէդ անունով մէկը: Սա արշաւում է Հայաստան, գրաւում Դուինը եւ այդտեղից ուղղում Վասպուրականի վրայ: Դերէնի նուէրներն ու խնդրանքները զուր են անցնում: Այդժամ նա Մահմէդի դէմ է հանում 4 հազար ձիաւոր ու 2 հազար հետեւակ եւ գլխովին ջարդում արաբական զօրքերին: Դերէնի պատմութիւնն այս ոչ մեծ գրքի քսան էջն է զբաղեցնում: Դերէնից յետոյ իշխանութիւնն անցնում է նրա որդի Աշոտին, որի համար ասում է. «եւ եղեւ Աւուրսն Աշաւտոյ շինութիւն եւ խաղաղութիւն ի աշխարհին Վասպուրականին»:

Սրանից յետոյ սկսում է Տաճատ Անձեւացու պատմութիւնը: Սրա մարդիկ պատահաբար սպանում են Բաղդադի Մահմատ թագաւորի որդուն: Այս պատահական սպանութեան հետեւանքներից վախենալով՝ Տաճատը փախչում է Բիւզանդիայի կայսր Փոկասի մօտ: Արաբա-բիւզանդական պատերազմի ընթացքում նա, որ արդէն հրամանատար էր բիւզանդական բանակում, գերի է վերցնում Մահմատի միւս որդուն, իսկ արաբական զօրքը ջախջախում է: Տաճատը վերցնում է գերի ընկած արքայորդուն եւ տանում Բաղդադ, որտեղ լուր էր տարածուել, թէ արքայորդին սպանուած է: Տաճատն արքայորդուն ներկայացնում է հօրը, իսկ սա ողջ Հայաստանի հարկը յանձնում է Տաճատին եւ իր բանակը գնում նրա տրամադրութեան տակ, որպէսզի հալածի թշնամիներին:



Տաճատն իշխում է վեց տարի եւ ողջ Հայաստանի իշխաններից Հարկ առնում: Եթեբորդ տարում Բաղդադից Սէթ անունով մի վաճառական է գալիս Խուլթ եւ այդտեղ սպանւում: Մահամտը յանձնարարում է Տաճատին Հայոց ու Միջագետքի զօրքով գնալ Խուլթ եւ Սէթի վրէժը լուծել: Աշոտ Արծրունին եւ Սմբատ Տարօնեցին, որ նոյնպէս յիշեալ զօրքում էին, նկատելով, որ օտարներն աւերում են Հայաստանը, գիշերը գաղտնի սպանում են Տաճատ Անձեւացուն: Զօրքի արշաւանքը ձախողւում է, ամենքը վերադառնում են իրենց տեղերը:

Այստեղ վերջանում է Տաճատի մասին եղած զրոյցը, սկսւում է արաբ Բուղայի (մեր երկում՝ Բուկայ)՝ Հայաստան արշաւելու պատմութիւնը: Սա երեք տարի աւերում ու կողոպտում է Հայաստանը: Գրաւում է ամուր ու անառիկ նկան բերդը եւ այնտեղ ապաստանած Աշոտ Արծրունուն կալանում, սրան իր քեռորդիների եւ քառասուն ազնուականների հետ գերի է տանում Բաղդադ, որտեղ նրանք տասնվեց տարի կալանքի տակ են պահւում:

Այստեղից էլ սկսւում է Աշոտ Արծրունու հերոսական պատմութիւնը: Աշոտը խալիփայի համար մի ծանր պահի հանում է բանտից, իր ազատների հետ միասին կռւում արշաւող մաղրիպիկների դէմ, եւ յաղթում նրանց՝ շահում իրենց բոլորի ազատութիւնը: Սակայն ութ տարի նրանք դեռ մնում են Բաղդադում, ապա մի անգամ եւս յաղթում են արշաւող մաղրիպիկներին, որից յետոյ չսպասելով խալիփայի յատուկ թոյլտուութեանը՝ վերադառնում են հայրենիք:

Այստեղից սկսւում է Աշոտ Արծրունու որդի Դերէնի (Թովմա Արծրունու՝ Գրիգոր Դերէնիկի) արկածալից կեանքի պատմութիւնը: Եթէ Տաճատ Անձեւացու եւ Աշոտ Արծրունու դուռագները յարմարւում են պատմութեանը, ապա Դերէնի սիրոյ պատմութիւնը լրիւ վիպական է, ոչ թէ այն իմաստով, որ ճիշտ է, այլ որ իսկական վէպի նիւթ է: Այս Դերէնը զոհ է դառնում իր բուռն սիրոյ: Նա Սմբատ Բագրատունու քրոջ ամուսինն է, բայց չի սիրում կնոջը եւ կապուած է Հերում իշխող Ապուստրի դուստր Գուլինարի հետ (անունը երկրորդ անգամ՝ Կուլինար): Կինը գանգատուում է իր եղբորը Դերէնի ընթացքի մասին, իսկ Սմբատ արքան կարգադրում է Ապուստր եղբայրների՝ թոյլ չտալ Դերէնին մուտք գործելու Հեր, իսկ եթէ չենթարկուի՝ ազատ են նրան սպանելու: Հակառակ բոլոր զգուշացումներին՝

Դերէնը մեկնում է այցելելու Գուլինարին եւ նրա եղբայրների ձեռքով սպանւում: Պատումի այս մասը նոյնպէս վիպական է:

Սրանից յետոյ պատմւում է Սմբատ արքայի ու Մօսուլի տէր Հապիպի կռուի, Վասպուրականի իշխան Ապուստրիան Արծրունու դաւաճանութեան եւ դրա համար Սմբատի հրամանով նրան սպանելու, Սմբատի եւ Ափխազաց թագաւորի կռուի, Վասպուրականի իշխան Գուրգէն Արծրունու եւ Սմբատ թագաւորի գժտութեան մասին:

Ի՞նչ նոր բան է աւելացնում այս երկը Հայոց պատմութեանը, որ մենք չգիտէինք: Լէօն գրում է. «Որդին [Աշոտ Բագրատունու որդի Սմբատը], ուրեմն ամենայն յաջողութեամբ հետեւում էր հօր տուած օրինակին: Այսպիսով ընդարձակուած պետական սահմանները Յովհաննէս կաթողիկոսը գծագրում է այս կերպով. - արեւմուտքում Կարին քաղաքից Կղարջք գաւառի վրայով Սեւ ծովի ափը մինչեւ Մինգրէլիայի (եգերների) սահմանը եւ այնտեղից հասնելով Կովկասի գլխաւոր շղթային՝ իր մէջ է առնում Ծանարքը (Կախէթ), Գուգարք (Քարթալինա) մինչեւ այժմեան Դարիալի կիրճը (Ալանաց դուռ), որի մէջ գտնուող բերդն էլ պատկանում էր Սմբատին: Սահմանագիծն անցնելով Կուրի հարաւային ափերով՝ գնում էր մինչեւ Թիֆլիս եւ այդտեղից իր մէջ էր առնում Ուտի նահանգը մինչեւ Տուս (այժմ Թուրք) եւ Շամքոր: Ինչպէս գիտենք, Աշոտ Ա-ն էլ մօտաւորապէս այս տարածութիւններն էր իր ձեռքի տակ առել: Սակայն Աորերս (1918 թ.) գտնուած մի ձեռագիր, որ համարում է Շապուհ Բագրատունու պատմագրութիւնը, մեզ տալիս է մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ Սմբատը չբաւականացաւ իր հօր թողած ժառանգութեամբ, այլ աւելի եւս ընդարձակեց իր Հայաստանի սահմանները՝ գրաւելով նաեւ Պարտաւը, Սիւնիքը, Նախիջեւանը, Երնջակը, Վաղարշաւանը, Բասենը, Ապահունիք եւ Հարք գաւառները, Տարօնը եւ մտածում էր նուաճել նոյնիսկ Ասորոց Միջագետքը»<sup>70</sup>:

<sup>70</sup> Լէօ, Հայոց պատմութիւն, հտ. Բ, Եր., 1967, էջ 514-515: Ծջգրտենք, որ Լիւս անապատում ժԸ դարում արտագրուած ձեռագիրը Վասպուրականից Ս. էջ-միածին է հասցուել 1917 թ. մեծ գաղթի ժամանակ (տե՛ս Պատմութիւն Շապուհի Բագրատունու, էջ I, XXX-XXXI; История Анонимного повествователя. Псевдо-Шапух Багратуни. Пер. с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ер., 1971, էջ 5):

Այս առիթով Թ. Ավդալբեգեանը համեմատաբար աւելի չափաւոր է արտայայտուում. «Թողել է նշանաւոր մի ժառանգութիւն, որ միայն ընծայում է Հայոց լեզուի շատ ուսանելի մի գնուշ ու ընդլայնում մեր պատմական ծանօթութիւնները, այլեւ արժանաւոր տեղ է բռնում մեր գրականութեան մէջ իբրեւ պատմական գրոյցներ պարունակող մի երկ: Հայ կենցաղական միջավայրի ուսումնասիրութեան տեսակէտից Կարծեցեալ Ծապուհը նոյնքան կարեւոր մի երկ է, որպէս էին մինչեւ այժմ Փաւստոս Բուզանդն ու Յովհան Մամիկոնեանը»<sup>71</sup>:

Շապուհին վերագրուող այս փոքրիկ երկը բարձր է գնահատուում նաեւ Մխիթարեան միաբան Ն. Ակիւնեանը, որը գրում է. «Ինչ ենթադրութիւն ալ ընենք պատմութեան հեղինակի եւ ժամանակի մասին, այն ստոյգ կը մնայ, թէ հոն պահուած է մեզի գրական յարզի գործ մը, յարզի մանաւանդ իւր երկրորդ մասին մէջ, ուր գողտրիկ ոճով աւանդուած են պատմական շրջանէն ժողովրդական գրոյցներ, ասպետական տիպեր, որոնք խօսուեն պատկերներ են հայ ժողովրդեան անդորրութեան եւ պատերազմի շրջաններէն: Յայտնի կը տեսնուի, թէ հեղինակը կը գծէ հոն հեռաւոր շրջանի պատկերը գրուցախառն ոճով, եւ որչափ կը մերձենայ նոր եւ նորագոյն շրջաններու, այնչափ աւելի անաղօտ եւ յստակ կը ներկայացնէ դէպքերը, աստիճանաբար աւելի համապատասխան իրականութեան»<sup>72</sup>:

Մ. Աբեղեանը բողոքովին ուրիշ տեսանկիւնից է նայում այս գրուածքին՝ ասելով. «Գրքի 37-րդ էջից սկսած պատմուած է Հայաստանի երկու թագաւորութիւնների վերածուելու մասին՝ Բագրատունիների եւ Արծրունիների: Արծրունիները երկու եղբայրներ են՝ Գագիկ եւ Սմբատ: Հաղթակ գաւառը շինում է Գագիկը: Սա ունենում է երեք որդի՝ Աշոտ, Գրիգոր եւ Համազասպ: Եւ լինում է մի որդի եւս (յայտնի չի սրանց եղբայրն է, թէ սրանցից մէկի գաւազը), որին անուանում են Աշոտ: Այս Աշոտը ունենում է երկու որդի՝ Գագիկ եւ Սահակ: Սահակը գաւազ չի ունենում. սրա կիներ՝ Սմբատուհին խնդ-

<sup>71</sup> Տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա.-Բ, էջմիածին, 1921-1922, էջ 254 (բոլոր ընդգծումները հեղինակինն են - Վ. Ա.):

<sup>72</sup> Լ. Ն. Ակիւնեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 223: Թէպէտ համտ. նաեւ. «Իբրեւ աղբիւր պատմութեան համար որ եւ իցէ արժէք չունի անիկա, բայց ընտիր աղբիւր է աշխարհագրութեան եւ ազգագրութեան համար» (էջ 209):

րում է ամուսնուն՝ ուխտի գնան Աշոյ վանքը, մատաղ անեն, որ իրենց որդի լինի: Այդպէս էլ անում են եւ երբ որդի են ունենում, նուիրում են վանքին՝ անուանելով Դերէն»: Մ. Աբեղեանն այս պատուը համարում է առաջին գրոյց եւ շարունակում. «Իհարկէ գրոյցը սրանով չի վերջանում: Դերէնը վանքում բռնաբարում է միակ կոյսին եւ վանքից հեռացւում է:

Երկրորդ գրոյցը վերաբերում է Գրիգոր Դերէնի եւ իր եղբայրների ժառանգութեան բաժանմանը: Այս Դերէնին հասնում է Վանը: Այստեղ պատմուած է Դերէնի մոլեգին խնջոյքների եւ հիւրասիրութիւնների մասին, մինչեւ այն աստիճան, որ մայրաքաղաքն իսկ վաճառուում է, եւ Դերէնը թափառական է ընկնում իր միակ ծառայի հետ եւ հասնում է Բաղդադ: Երրորդ գրոյցով Բաղդադից զօրք է բերում եւ իր մայրաքաղաքը՝ Վանը գրաւում, եղբայրներին գրկում ամեն ինչից, դառնում Վասպուրականի լիիրաւ տէրը»:

Մ. Աբեղեանը մանրամասն շարադրում է յիշեալ պատումները՝ առանց պատմական որեւէ արժեւորման, եւ անցնում այդ գրոյցների յատկանիշների բնութագրմանը: Ըստ նրա՝ դրանք իսկական բանահիւսական երկեր են, գեղեցիկ, թեթեւ պատումներ, որ հաճելի են ե՛ւ բովանդակութեամբ, ե՛ւ ձևով: Պատմուած են պարզամտութեամբ, ռամկական լեզուով, մի առանձին համով ու հոտով, որ միայն Բուզանդի պատումներն ունեն: Չկայ քերթողական սովորովի արվեստականութիւնը, ամեն ինչ գեղջկական է, լի անսեթեւեթ բնականութեամբ. այդպէս են ե՛ւ պատմուածքը, ե՛ւ տրամախօսութիւնները: Չգտում չկայ զարգարելու, գեղեցկացնելու: Չի ցանկանում գուարճացնել, խրատել, սովորեցնել, այլ միամտութեամբ պատմում է, ունկնդիրն էլ հաւատում է, քանի որ գրոյցների հիմքը պատմական է: Ամեն գրոյց ունի իր թեման, որ բխում է գործողութիւնից: Հենց գեղեցկութիւնն այստեղ է: Դա ժողովրդական պատմուածքի բնականութեան ու կենդանութեան աղբիւրն է: Զրոյցների մէջ ծաղրուած է կուսակրօնութիւնը, այդտեղ վերածննդի շունչ կայ: Փառաբանում է անզուսպ կերուխումը՝ գուսաններով, երգիչներով, պարուհիներով: Գրողը համակրում է Դերէնի կերուխումը, հիւրասիրութիւնը<sup>73</sup> (տե-

<sup>73</sup> Մ. Աբեղեան, Երկեր, հտ. Գ. եր., 1968, էջ 523-524:

դին է՝ յաւելել Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկումը. «մեր առաջն է Հեթանոսական մի պատմութիւն»<sup>74</sup>:

Այս զրոյցներէ մէջ գծագրուած են շատ հետաքրքրական տիպեր, որպիսիք մեր Հին գրականութեան մէջ հազուադէպ երեւոյթներ են: Ամենակատարեալ անձերն են այստեղ Գրիգոր Դերէնը եւ նրա պապը՝ վանքին նուիրաբերուած այն Դերէնը, որը լաւ ձայն ունէր, բայց մեղսակցել էր Գրիգոր վարդապետի քրոջ դստեր հետ ու զրկուել վանքում մնալու իրաւունքից: Դերէնի կերպարի համար բնութագրական են զուարճասիրութիւնը, անխտրական այլասիրութիւնը, արտակարգ հիւրասիրութիւնը, առատաձեռնութիւնը, մարդկանց լաւութիւն անելու պատրաստակամութիւնը, լաւատեսութիւնը, կնասիրութիւնը: Նա նաեւ քնար է նուագում, ուրեմն երաժիշտ է: Այս ամենը նրան կապում են վերածննդի հերոսների հետ: Օտարական հիւրը նրան ասում է. «Մ՛վ բարի մարդ, դու այնքան բարեմիտ ես, որ քեզ նման մարդ մարդկանց մէջ չեմ տեսել. որովհետեւ չհարցրիր, թէ որտեղի՞ց ես գալիս, կամ ո՞ւր ես գնում»: Եթէ յիշենք, որ Վասպուրականում Ժ-ԺԱ դարերում հարիւրաւոր վանքեր են շինուել եւ այդ վանքերում հազարաւոր վանականներ կային, իսկ երկրում քարոզւում էին խստակեցութիւնը, սակաւապետութիւնը, ժուժկալութիւնը եւ դարաշրջանին միանգամայն համապատասխան նման կենցաղավարութիւնը, ապա Դերէնն իր անհաւատալիօրէն հաւատարիմ ծառայի հետ յիշեցնում է Սերւանտէսի Դոն-Բիշոտին: Այս վերջինի նման Դերէնն էլ ծառայում է մարդկանց՝ ծանօթի ու անծանօթի, քրիստոնեայի ու մահմէդականի, հաւատաւորի ու անհաւատի՝ առանց ցեղի ու կրօնի խտրութեան: Միայն թէ սա իսպանական հերոսից զանազանում է նրանով, որ ուր գնում է, զիմաւորում է բարութեան փոխհատուցումով: Երկուսի պայքարն էլ տիրող իրականութեան դէմ է, միայն թէ մէկը պայքարում է անցած-գնացած ժամանակի դէնքերով, իսկ միւսն աւելի իրական գեանի վրայ է պայքար մղում, մէկը ձախողում է, իսկ միւսը վերագտնում իր կորցրածը եւ խլում նաեւ նրանցը, ովքեր իրեն էին ունեզրկել, նաեւ ապրում է աւելի քան ութսուն տարի: Եթէ մի քիչ աւելի խորանանք հեղինակի մտայնութիւնը

<sup>74</sup> Տե՛ս Պատմութիւն Ծապոյոյ Բագրատունոյ, էջ XIX:

բացայայտելու իմաստով, ապա կարող ենք ասել, որ պատմիչը փառաբանում է երիտասարդ մարդու վայելքները՝ թէկուզ իր ողջ ինչքը կորցնելու ծանր գնով, իսկ յետոյ լուռ խրախուսում է տարեց մարդու խոհեմութիւնը, իմաստութիւնը:

Հեղինակը նորավէպի եղանակ է բանեցնում իր համակրած այս կամ այն երեւոյթը փառաբանելու, մեծարելու գործում: Դերէնի հաւատարիմ ծառայի՝ Զափրանի մասին ոչ մի յատուկ դրական խօսք չի ասուում, բայց երբ նրանք յաջողութեամբ վերադառնում են հայրենիք եւ ուզում են ձեռք գցել կորցրած երկիրը, Դերէնը չի վստահում ոչ մի հարազատի, ազգականի, բարեկամի, նրա վստահելի միակ անձը Զափրանն է, որը հաւատարմութիւնը հասցնում է կատարելութեան գագաթներին՝ առանց դոյզն ինչ շեղումի իր բռնած գծից: Զափրանը մեր գրականութեան անթերի ուսմանտիկ տիպերի նախատիպն է: Հաւատարիմ է անթերի, անաղմուկ, ճշտակատար, դժգոհութեան ոչ մի արտայայտութիւն, մինչեւ վերջին թելը նուիրուածութիւն, իր տիրոջ ցանկութիւնները կեանքի գնով կատարելու եւ նրան մշտապէս գոհ թողնելու պատրաստակամութիւն. ահա՛ ինչպիսին է Զափրանը:

Պատումները բնականօրէն օժտուած են հանգոյցներով եւ հանգուցալուծումներով: Տաճատ Անձեւացու զինուորներից մէկի ձեռքով պատահաբար սպանում է Բաղդադի թագաւոր Մահմատի որդին: Տաճատը Մահմատի վրէժից խուսափելու համար թողնում է երկիրը եւ փախչում Բիւզանդիա: Կռիւ է ծագում Բիւզանդիայի եւ Խալիփայութեան միջեւ: Տաճատը բիւզանդական զօրքերի հրամանատարն է: Մահմատի զօրքերը պարտում են, իսկ միւս տղան գերի է ընկնում Տաճատի ձեռքը: Տաճատը Մահմատի որդուն բերում է եւ յանձնում հօրը, երբ այս վերջինը սեւ հագած սգում է իր երկրորդ որդու սպանութիւնը: Մահմատը բարեկամանում է Տաճատի հետ:

Պատումների տիպերից մէկ ուրիշն Աշոտ Արծրունին է: Ամենից առաջ սա աչքի է ընկնում իր քաջութեամբ, խելքով եւ հայրենասիրութեամբ: Միանալով Աշոտ Բագրատունու եւ Սմբատ Տարօնեցու հետ՝ նա գիշերը թաքուն սպանում է Տաճատ Անձեւացուն, որովհետեւ սա արաբական զօրքն առաջը գցած աւերի ու կողոպուտի է ենթարկում Հայաստանը: Գերութեան մէջ սխրանքներ է գործում, ուստի եւ ազատում է գերութիւնից: Եւ երբ հասնում է իր երկիրը, որդին

իր զօրամասով գալիս է դիմաւորելու, Աշտար զինավառուում է, կռուի պատրաստուում. հարցնում են զինավառուելու պատճառը, ասում է՝ իմաստութիւն է այդքան տառապանքից յետոյ նոր տառապանքների չենթարկուելու համար:

Աւելի հետաքրքրական է այս երրորդ Աշտար որդի Դերէնը: Սա շինարար է եւ հօգօր. պատմիչն ասում է, թէ սա շինեց իր աշխարհը՝ Զարեհբերդը, Ճահուկը, Բունոյ ձորը, Առնոսի Ելքը, յաղթեց թշնամուն, գրաւեց Սալամասը: Բայց սա չափազանց կնասէր էր. սրամասին Սմբատ արքան, որ նրա աներձագն է, ասում է՝ «լսել եմ, որ քո բոլոր ազատների կանանց ապականել ես»: Սակայն սրա էութիւնը բնորոշողը սիրահարութիւնն է մի մահմէդական աղջկայ, որի մասին, զժբախտաբար, քիչ բան է ասուում: Դերէնի սէրը նուիրական է. տարուայ կէսը Հերում սիրած աղջկայ հետ է անցկացնում: Այնքան բուռն է սէրը, որ հակառակ զգուշացումներին, որ այլեւս Հեր չգնայ, դարձեալ գնում է՝ հակառակ իր կեանքին սպառնացող վտանգին: Բուռն է սէրը, քան մահը: Գնում է եւ սպանում աղջկայ եղբայրների կողմից: Եւ այստեղ երեւում է, որ սէրը փոխադարձ է եղել. աղջիկն իր սիրեցեալի դիակը գնում է եւ ուղարկում Հայաստան, որպէսզի հանդիսաւորապէս թաղուի հայրենիքում:

Պատումի մէջ Դերէնի մասին ոչ մի հանդիմանական խօսք, ոչ մի դատապարտութիւն չկայ, եւ չի արտայայտուած գրողի վերաբերմունքը: Կարծես թէ, ըստ հեղինակի՝ սէրը սրբագործում է ամեն մի յանցանք: Դերէնին մեղադրում են կինը եւ կնոջ եղբայր Սմբատը:

Այստեղ պէտք է ասել, որ հեղինակի վերաբերմունքն իր կերտած անձերի նկատմամբ շատ քիչ է երեւում: Սմբատ Բագրատունու մասին ասում է. «նա գոռոզ, պատերազմասէր եւ խելոք մարդ էր»: Մնացած խօսքերը Սմբատի հասցէին ասում են նրա թշնամիները. «Դու յանդգնեցիր եւ ինքնազուլի քեզ թագադրեցիր. [ի՞նչ է,] աշխարհն անաղամա՞րդ գտար»:

Միւս շատ հետաքրքրական կերպարը Սիւնեաց Բիւրեղ տիկինն է, որը մեծ նեղութիւն ու ծախս է անում, գալիս է Հերակլին դիմաւորելու եւ օգնութիւն ցոյց տալու: Հերակլը յաղթական վերադառնում է, Բիւրեղ տիկինը դարձեալ գալիս է՝ դիմաւորելու: Բիւրեղ տիկնոջ ամենաբնորոշ գիծը գաղափարապաշտութիւնն է, մահմէդական ճնշու-

մից ազատուելու երազանքը, ապա խաչապաշտութեան ջերմ գգացումը: Տիկինը ոչ մի շահախնդրութիւն չունի, ամեն ինչ անում է յանուն գաղափարի, յանուն Սիւնիքի ազատութեան եւ հայթայթուող սրբութիւնների շնորհիւ երկրամասի հեղինակութեան բարձրացման:

Բոլոր ուսումնասիրողները պնդում են, որ այս պատումները չեն կարող ժԱ դարի սկզբից վաղ լինել: Յ. Մարկուարտը գրել է. «Երբ լրջօրէն ձեռք առի «Շապհոյ պատմութիւնը», նկատեցի անմիջապէս, որ խօսք չի կրնար ըլլալ, թէ այն «Շապհոյ պատմութիւնն» ըլլայ: Մանր տարալուծելով բովանդակութիւնը, երեւան եկաւ, որ գիրքը ժԱ դարէն յառաջ գրուած էր կրնար ըլլալ: Անիկայ Վասպուրականի պատմութիւն մըն է, ո՛չ Բագրատունեան, այլ Արծրունեան տեսակէտով գրուած. լեզուն միջնադարեան է, աւելի ուսմիտ է, քան Մատթեոս Ուռհայեցին, բայց առանց այնպիսի բացատրութիւններու, ինչպէս է այն հատակոտորի առ Ստ. Ասողկան (Բ.գ, էջ 144), որուն մասին խօսած եմ այլուր»<sup>75</sup>: Այս քաղուածքը բերող Ն. Ակիւնեանը հաստատում է առեւալ քաղուածքի հաւաստիութիւնը հետեւեալ ձեւով. «Մարկուարտի տեսութիւնը գրութեան ժամանակի մասին շատ հաւանական կ'երեւայ ինձի եւ կու գայ հաստատել այն ամենը, ինչ որ կ'աղաղակէին ժամանակագրական վրիպակները»<sup>76</sup>:

Իր եւ Յ. Մարկուարտի կարծիքն աւելի ամրապնդելու համար Ն. Ակիւնեանը գրում է, թէ հայ պատմագիրներից ոչ ոք ծանօթ չի եղել այդ ձեռագրին եւ բնականաբար ոչ մէկը՝ Յովհաննէս Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Ասողիկը, չի օգտուել այդ ձեռագրից: Նոյնիսկ Ասողիկը, որ իր պատմութիւնը հասցրել է մինչեւ 1004 թուականը, տեղեակ չէ այս ձեռագրի մասին:

Մ. Աբեղեանն ասում է, որ միակ թուականը 913 թիւն է, որ յիշուած է այստեղ (Իհարկէ, մէկ թուական չէ, այլ երկու), բայց դա չի կարող ժ դարի վերջերից շուտ գրուած լինել, որովհետեւ ժամանակակիցների գրած պատմութիւնից բաւական հեռացած է, եւ չի կարող ժԱ դ. առաջին տասնամեակներից ուշ գրուած լինել, քանի որ դրանց

<sup>75</sup> Ն. Ակիւնեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 218: Լեզուի հարցում ուսումնասիրողը յղում է անում Ղ. Յովհաննեանի գրքին. Ն. Ղ. Յովհաննեան, Հետազոտութիւն նախնեաց ուսմիտէնի վրայ, Վիեննա, 1887:

<sup>76</sup> Նոյն տեղում:

պատմական հիմքը վերաբերում է Թ. դ. վերջին եւ Ժ. դ. սկզբին, ընդ որում դեռեւս բոլորովին մթնած չէ:

Պատմութեան գրութեան ժամանակը, ինչպէս տեսնում ենք, ենթադրաբար ասուածից այն կողմ չի անցնում: Այժմ փորձենք քննարկել լեզուական նիւթի հիման վրայ պատմութեան գրութեան ժամանակային սահմանները որոշելու հնարաւորութիւնը:

Նախ եւ առաջ ընդհանուր ձեւով ասենք, որ այնպիսի մի մարդ, ինչպիսին այս պատումների հեղինակն է, մէկ կամ մէկ ու կէս տասնամեակ յետոյ կարող էր ստոյգ թուականները շփոթել: Մեզ դէպքեր են պատահել, երբ գրիչ շարժող այդպիսի մարդկանց հարցումներ ենք արել վերջին շրջանների դէպքերի մասին եւ մեծ մասամբ պատմական դիպուածների թուականները ճիշտ չեն ասել: Այն ժամանակուայ պայմաններում թուականների եւ նոյնիսկ անձերի շփոթութիւնը միանգամայն բնական ու օրինաչափ էր, այստեղ արդէն աւելորդ է խօսել օտար կայսրների ժամանակների ու նրանց իսկ մէկը միւսի հետ չշփոթելու մասին: Պատմաբանի քննական հայեացքով այդպիսի մարդկանցից ճիշտ տարեգրութիւն պահանջելը սխալ ու անիրական կը լինի: Եւ Ն. Ակինեանի այն պահանջները, թէ պատմիչը պէտք է գիտենար Բաղդադի հիմնադրման ճիշտ տարեթիւը, չպէտք է սխալուէր. նրա՝ մայրաքաղաք դառնալու թուականի նշման մէջ, անտեղի են: Պատմիչը պէտք է գիտենար, որ Անին 961 թուականից է յիշատակուում իբրեւ քաղաք. կարծես թէ Անի քաղաքը հէնց այդ թուականին գետնից իբրեւ քաղաք յառնեց ու այդ պահին էլ յիշատակուեց: Անին իբրեւ թէ չէր կարող մի հարիւրամեակ առաջ բնակավայր կամ հէնց քաղաք լինել եւ միայն 961-ին յիշատակուել՝ մայրաքաղաք հռչակուելու կապակցութեամբ:

Տաճարն ամիրապետի որդուն առած փախչում է Բիւզանդիա Փոկասի մօտ: Դէպքն ըստ Ղեւոնդի՝ պատահել է 780 թ., երբ Բիւզանդիայի կայսրն էր Կոստանդինը. ըստ Ն. Ակինեանի՝ պատմիչը կա՛մ Փոկասին է ակնարկում, որ թագաւորեց 602-610 թթ., կա՛մ Նիկեփորոս Փոկասին, որ թագաւորել է 963-969-ին: Բայց երկու դէպքերն էլ անճիշտ են. այստեղ շփոթուած են բիւզանդական կայսրերը եւ նրանց ժամանակները: Ըստ պատմիչի՝ Սմբատ արքան թագ է ստացել Ռոմանոս Ա-ից, որ տիրակալել է 920-944 թթ., մինչդեռ Սմբատը 914-

ին արդէն մեռած էր: Իրականութեան մէջ Սմբատը թագ է ստացել արաբ Մուհամմեդ Բիլլահ խալիփայից 892 թ., որ կարող էր պատմիչի կողմից շփոթուած կամ փոխուած լինել քրիստոնեայ թագաւորով: Այդ էլ կուտան չէ պատմութեան գրութեան ժամանակի հարցը վճռելու համար:

Գրութեան ժամանակի հարցը, թերեւս, կարող է մօտաւորապէս որոշուել լեզուական մանրակրկիտ վերլուծութեամբ:

Բայց նորից, մինչեւ ժամանակի հարցին անցնելը տեսնենք, թէ ինչ աղբիւրներից են քաղուած հեղինակի տեղեկութիւնները: Անցնելով աղբիւրների քննութեանը՝ պէտք է առաջին հերթին նշել «Հացունեաց խաչի պատմութիւն»-ը, որը պահպանուել է բաղմամբիւ ձեռագրերում, որոնցից հնագոյնը ԺԲ դարից է<sup>77</sup>, եւ առնուազն երկու ամբողջական խմբագրութիւններով, որոնցից մասեր են հրատարակուել 1901 թ. Ղ. Ալիշանի «Հայապատում»-ում եւ 1888 թ. «Արարատ» հանդէսում<sup>78</sup>: Ն. Ակինեանը ճշգրտում է, որ այդ խմբագրութիւններից հնագոյնն առաջինն է եւ որ «Հացունեաց խաչի Պատմութեան հետ որ եւ իցէ աղբրս չունի այն ընտիր հատուածը, որ այսպէս կը սկսի. «Յաղազս Ա. Խաչին ի Հերակլայ պատմութեանց...»: Հրտ. Н. Марр, Антиохъ Стратигъ, Пленение Иерусалима Персами во 614 г. С. Петербурга, 1909, էջ 52-59՝ հանած էջմ. 940 (= Կար. 920) ձեռագրէն (Հրաշափառ տօնամակ, գրուած 1456ին)»<sup>79</sup>:

Միւս ակնյայտ աղբիւրը Ղեւոնդն է: Այն դրուագը, որտեղ մեր պատմութեան մէջ խօսուում է Ամր արքայի զօրքի հրամանատար, Մահմէտի որդի Ահմատի՝ ձենաց երկիր (Չինաստան, բնագրում՝ Ճէ-նաց) արշաւելու մասին, Ղեւոնդ պատմիչը բերում է հետեւեալ ձեւով. «Այն ժամանակ զօրավար Մահմետը բուռն ցանկութիւն ունէր

<sup>77</sup> Մի քանի տասնեակ ձեռագրերի թուարկումը տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ XXII-XXIII; Լ. Ն. Ակինեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 210-211; История Анонимного повествователя, էջ 10-13:

<sup>78</sup> Լ. Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Ա, էջ 498-501; «Արարատ», 1888, էջ 399-404 (սկիզբը. «Ի ժամանակս Մօրկայ թագաւորին Յունաց էր խաղաղութիւն...»):

<sup>79</sup> Լ. Ն. Ակինեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 211-213 եւ 212, ծնթ. 1:

արշաւելու ձէնաց աշխարհի վրայ: Իսմայէլի իշխանից մեծ զօրք է խնդրում եւ նրան խոստանում ձէնաց թագաւորին հնազանդեցնելով հարկատու դարձնել, իսկ նա գումարելով մեծ քանակութեամբ զօրք՝ մօտ երկու հարիւր հազար, տալիս է նրա ձեռքը: Մահմեան իր մեծաթիւ զօրքերով Դամասկոսի կողմերից շարժուելով դէպի արեւելքի կողմերը՝ անցնում է Ասորիքով, Պարսկաստանով, Խորասանով եւ գնում հասնում է ձէնաստան եւ բանակ դնում մի հզօր գետի ափին, որ կոչւում է Բօտիս: Հրովարտակ է գրում ձէնաց արքային. «Ինչո՞ւ, ասում է, դո՛ւ միայն ընդվզելով՝ չես հնազանդուում մեր իշխանին, քանզի բոլոր ազգերը սարսափեցին մեզից: Արդ՝ դու ո՞ւմ ես ապաստանած՝ չես հնազանդուում մեզ: Մի՞թէ մեզ իբրեւ քո աղջիկներն ես համարում, որոնց մէջ շրջելով իշխանաբար ես պահում քեզ: Արդ՝ եթէ հարկատու չդառնաս մեզ, իմացի՛ր, որ քո երկիրը բնակիչներից թափուր կը դարձնեմ եւ քո թագաւորութեանը վերջ կը տամ: Իսկ այժմ անհոգ լինելով չուշացնես այս գրութեան պատասխանը, այլ արագ կ'ուղարկես այստեղ»:

Երբ ձէնաց արքան, որ ձէնբակուր էր կոչւում, կարգաց գրութիւնը, կանչեց իր մօտ բոլոր համհարզներին [թիկնապահներին] եւ խորհրդակցում էր, թէ ինչ պատասխան տայ առաջարկութեանը: Եւ իրար հետ խորհրդակցելով՝ այդ առաջարկութեանը տալիս են հետեւեալ պատասխանը. «Մի՞թէ դու աւելի հզօր ես, քան այն բոլոր թագաւորները, որ ի սկզբանէ մինչեւ այժմ տիրապետութիւն հաստատեցին աշխարհի վրայ: Բաբելոնացիների թագաւորը, որ ողջ աշխարհին տիրեց, եւ մակեդոնացիք եւ պարսիկները. ինչո՞ւ նրանք չկարողացան մեր երկրի վրայ տիրապետութիւն հաստատել: Բայց իմացի՛ր, որ դու աւելի լիբբ ես, քան բոլոր շները, եւ մատնուած ես պազշտութեան կապանքներին. այդ է պատճառը, որ քո չար ցանկութիւնը իմ գեղեցիկ կոյսերի համբաւին խճճելով ստիպեց քեզ քո անձը եւ քեզ հետ եկած զօրքի անձերին գետին դնել, որպէս թէ Դամասկոսում գերեզմանատներ չկային ձեր անձերի համար: Արդ՝ իմացի՛ր, մեր երկիրը որեւէ մէկի հարկի տակ չի մտել, ընծայ խնդրի՛ր ըստ թագաւորական կարգի, կը տամ քեզ, վեր կենալով խաղաղութեամբ կը գնաս քո տեղը»:

Իսկ Մահմետը դարձեալ պատգամ ուղարկեց ձէնբակուրին, թէ ինձ տո՛ւր, ասում է, երեսուն հազար աղջիկներ, եւ քեզանից խաղա-

ղութեամբ կը հեռանամ, իսկ եթէ չտաս, քո դէմ դուրս կը գամ պատերազմով: ձէնաց թագաւորն ըստ այդ պատգամի յանձն առաւ ուղարկել եւ պատգամ յղեց Մահմեան՝ ասելով. «Մնա՛ հէնց այդտեղ քո բանակում, մինչեւ կատարեմ քո խնդրածը: Նոյն ժամին հրաման տուեց իր զօրքերին՝ կազմել դիպակեայ հովանոց ունեցող սայլեր եւ իր ընտիր հեծելակներին կուռ սպառազինութեամբ բեռնել սայլերին՝ փոխանակ այն աղջիկների, որոնց պահանջում է [Մահմետը], որպէսզի կարողանայ նրանց որսալ իր որոգայթի մէջ: Եւ գետեզր գալով՝ բանակեցին նրանց դիմաց: Սայլերի վրայ էին աւելի քան քառասուն հազար հեծեալ: Իսկ ինքը ձէնբակուրը քիչ մարդկանցով նրանցից քիչ տարածութեամբ հեռու էր բանակել, [պատգամ] է ուղարկում Մահմետ զօրավարին. «Վեր կա՛ց, ասում է, ինչ որ ինձնից հայեցիր, այս երեսուն հազար աղջիկները իմ ամբողջ իշխանութեան մէջ ընտրեցի քո պատուաւորների համար: Արդ՝ ա՛ն քո զօրքի պատուաւորներին ըստ իմ աղջիկների թուի, անցի՛ր գետի այս կողմը, եւ ես վիճակահանութեամբ կը տամ իմ աղջիկներին, ում ով կը հասնի: Գուցէ, կուր ընկնի քո զօրքերի մէջ»: Եւ տանել տուեց նաւերը գետի այն կողմը, որպէսզի միանգամից անցնեն նրա մօտ: Իսկ նրանք յիմարաբար ընտրելով զօրքերի մեծամեծերին՝ անցան գետի այն կողմը մօտ երեսուն հազար մարդ: Եւ երբ անցումն աւարտեցին, ձէնաց թագաւորը հրաման տուեց յարձակուել Իսմայէլի զօրքի վրայ:

Եւ երբ կուռով միմեանց բախուեցին, շտապով դուրս ելան հովանիների տակ թաքնուածները եւ շրջապատելով սրի մասնեցին, նրանցից ոչ ոք չմնաց կենդանի կամ փախստական: Եւ կտրեցին նաւերի լարերը, որպէսզի ոչ ոք չազատուի: Ոչ ոք չազատուեց, միայն Մահմետը սակաւ մարդկանցով երիվարներ հեծած ընկան գետը՝ ապաստանած երիվարների ուժին: Եւ այսպէս՝ կորագլուխ, ամօթով ձէնաց թագաւորից հեռանալով՝ գնացին իրենց բնիկ երկիրը: Այլեւս չկրկնեցին ձէնաց աշխարհի դէմ պատերազմի ելնելը»<sup>80</sup>:

Ղեւոնդի երկում կայ նաեւ հրէաների պատգամաւորութեան մասին. սրանք գալիս եւ Մահմեան առաջարկում են տէր դառնալ Ե-

<sup>80</sup> Տե՛ս Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 37-40: Թարգմանութիւնը մերն է: Հմմտ. Ղեւոնդ, Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը... Ա. Տէր-Ղեւոնդեանի, Եր., 1982, էջ 41-43:

րուսադէմին՝ ցոյց տալով Մովսէսի գիրքը, որտեղ գրուած է, որ հրէաները եւ արաբները Աբրահամի ժառանգներն են<sup>81</sup>: Պատմիչի մօտ գտնում ենք նաեւ հոների դէմ արաբների արշաւանքի նկարագրութիւնը, որ կայ ներկայ գրքում<sup>82</sup>: Նա ունի նաեւ արաբների՝ Կոստանդնուպոլսի վրայ կատարած արշաւանքի, նրանց կրած ջարդի եւ նաւերի խորտակման պատմութիւնը (այն ունի նաեւ Սեբէոսը)<sup>83</sup>: Ղեւոնդը գրում է նաեւ Սահակ կաթողիկոսի առաքելութեան մասին, որը ձեռնարկուել էր, որպէսզի կանխուի արաբական արշաւանքը Հայաստանի վրայ. այստեղ կայ նաեւ Սահակի նամակը<sup>84</sup>: Նոյն պատմութիւնն ունի նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցին մի փոքր այլ կերպ<sup>85</sup>:

Թէոդորոս Ռշտունին դառնում է իշխող: Պարսկաստանից ոմն Հուրմիզդ-Պաքար թագաւոր յարձակուում է Վասպուրականի վրայ, Թէոդորոսը վրայ է հասնում, Երասխի ափին կոտորում նուաճողի զօրքերը եւ ազատում գերիներին: Ղեւոնդը նոյնը պատմում է, բայց յարձակուողները Օթմանն ու Օգբան են. Թէոդորոս Ռշտունին վեց հարիւր զինուորով յարձակուում է, կոտորում թշնամուն, ազատում գերեւալներին<sup>86</sup>: Սրան հետեւում է Ասողիկը (Սեբէոսը մի փոքր այլ ձեւով է պատմում)<sup>87</sup>:

Ղեւոնդը աալիս է նաեւ Թէոդորոս Ռշտունու որդի Վարդի պատմութիւնը, թէ ինչպէս է նա դաւաճանում յոյներին եւ կոտորել տալիս նրանց արաբների ձեռքով, սակայն Վարդի զղջման ու բազմաթիւ եկեղեցիների կառուցման մասին ոչ մի խօսք չկայ<sup>88</sup>: Այդ մասին այլ ձեւով խօսում է Յովհան Մամիկոնեանը. սա ինչպէս երեւում է ժողովրդական աւանդութիւն է աւելի, քան իրականութիւն: Ղեւոնդը պատմում է (որոշ զանազանութիւններով) նաեւ Տաճատ Անձեւացու

<sup>81</sup> Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 4:

<sup>82</sup> Նոյն տեղում, էջ 40-41: Հմմտ. Ղեւոնդ, Պատմութիւն, էջ 44:

<sup>83</sup> Նոյն տեղում, էջ 105-112: Հմմտ. Ղեւոնդ, Պատմութիւն, էջ 90-95:

<sup>84</sup> Նոյն տեղում, էջ 28-31:

<sup>85</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, էջ 95-97, Հմմտ. Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, էջ 98-100:

<sup>86</sup> Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 11-12:

<sup>87</sup> Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 122:

<sup>88</sup> Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 13-14:

եւ Բաղդադի Մահմետ թագաւորի որդիների հետ կապուած արկածները<sup>89</sup>, որ այնպէս մանրամասն է այս գրքում:

Ի՞նչ յարաբերութիւն ունի Ղեւոնդ Վարդապետի «Պատմաբանութիւնն» այս գրքոյի հետ: Մեզ հաւանական է թուում, որ վերջինիս հեղինակը ծանօթ է եղել Հէնց Ղեւոնդի երկին<sup>90</sup>: Բայց իբրեւ լրացում նրանից քաղուած տեղեկութիւնների՝ հեղինակը լայնօրէն օգտուել է նաեւ ժողովրդական բերանացի պատմումներից ու աւանդութիւններից, որոնք այն ժամանակ մեծ շրջանառութիւն ունէին մարդկանց բանաւոր զրոյցներում: Այնպէս որ պատմական դէպքերի նկարագրութիւնների անճշտութիւններն ու ժամանակավրիպութիւնները պիտի սրան վերագրուեն: Մեսրոպ եպիսկոպոսի կարծիքով՝ երկու պատմիչներն օգտագործել են միեւնոյն սկզբնաղբիւրը, որը, գուցէ եւ, բանաւոր է եղել («բերանացի պատմաւածքներ»)<sup>91</sup>: Նկատուած է նաեւ, որ մեր գրքոյի հեղինակը եւ Թովմա Արծրունին օգտուել են ինչ-որ մի ընդհանուր աղբիւրից<sup>92</sup>: Ճիշտ է, Ն. Ակիմեանի կարծիքով՝ Թովմայի մի բնորոշ ակնարկը վերաբերում է Հէնց Շապուհ Բագրատունուն («մանաւանդ զի յառաջագոյն քան զմեզ այլոց ոմանց շարակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար (էջ 198)»), հետեւաբար վերջինիս երկը ծանօթ է եղել եւ ինչ-որ չափով օգտագործուել է վասպուրականցի պատմիչի կողմից<sup>93</sup>: Ուսումնասիրողը համարում է, որ Շապուհը ծանօթ է եղել նաեւ ոչ միայն Նիկիոյ ժողովի պատմութեանը, այլեւ Գրիգոր Աստուածաբանի ճառերին<sup>94</sup>:

<sup>89</sup> Նոյն տեղում, էջ 158-161: Հմմտ. Ղեւոնդ, Պատմութիւն, էջ 124-127:

<sup>90</sup> Ն. Ակիմեանի համոզմամբ՝ «Շապուհն անշուշտ ժառանգած էր իւր հօրմէն [Ղեւոնդի] Պատմութեանս պապենական անդրանիկ օրինակը եւ յաճախ ընթերցած զայն: Ղեւոնդ երիցու պատմական երկասիրութիւնը յորդորած է զինքը հետաքրքրուելու պատմութեամբ եւ ձեռնարկելու շարունակել Ղեւոնդի գործը 788էն սկսեալ մինչեւ իւր օրերը» (Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 174):

<sup>91</sup> Տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ, էջ VIII-IX, XXIV-XXX:

<sup>92</sup> Տե՛ս История Анонимного повествователя, էջ 32-34: Հմմտ. Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ, էջ XXIX-XXX:

<sup>93</sup> Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 186, 195, ծնթ. 1, նաեւ էջ 215: Հմմտ. M. Brosset, Collection d'historiens arméniens, t. 1, St. Pétersbourg, 1874, էջ 159:

<sup>94</sup> Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 192:

Անցնելով մեր գրքոյկի գրութեան ժամանակի հարցին՝ նշենք, որ այն ոչ ոք, ըստ էութեան, լուրջ քննարկման չի ենթարկել: Նկատելով մի քանի բառերի առկայութեան փաստը՝ բանասէրները եկել են այն ընդհանուր եզրակացութեան, որ գիրքը, թերեւս, ԺԱ դ. սկզբից վաղ գրուած չպէտք է լինի (բայց եւ ոչ էլ՝ ԺԱ դարից ուշ<sup>95</sup>):

Մեր կարծիքով՝ «Հացունեաց խաչի պատմութիւնը» լեզուական առումով ոչ մի կապ չունի բուն պատմական մասի հետ: Ըստ Մեսրոպ եպիսկոպոսի՝ Մովսէս Երզնկացու Ոսկեփորիկի (ԺԳ դար), որոշ ճանրնաիրների եւ այլ ժողովածոյ-աղբիւրների «Հացունեաց խաչի պատմութեան» փոփոխակները (նաեւ՝ Մօրիկ կայսեր եւ Սահակ Զորափորեցի կաթողիկոսի պատմութիւնները) վերցուած են այս ձեռագրի նախօրինակից<sup>96</sup>: Աւելի ճշգրիտ կը լինի ասել, որ այս ձեռագիրը, ինչպէս եւ միւս աղբիւրները, օգտուել են մի հին ձեռագրական տարբերակից: Ղ. Ալիշանի բերած «Հացունեաց խաչի» հատուածը<sup>97</sup> շարագրուած է անթերի գրաբարով, իսկ մեր ձեռագրում այդ հատուածը խմբագրուած է, եւ խմբագրութիւնը գնացել է յօգուտ լեզուի ուսուցման: Ղ. Ալիշանի բերած բնագիրն ունի «Մախիւք աշխատ եղեր», Շապուհի բնագիրը՝ «Ահագին աշխատեցար»: Ղ. Ալիշանի բերածն ունի «առն», Շապուհը տալիս է «մարդոյ» («նման ես դու, արքա՛յ, առն ճանապարհորդի» - «նման ես դու մարդոյ ճանապարհորդի»): Ղ. Ալիշանի բերածը տալիս է «ունայն», Շապուհը փոխում է՝ «դատարկ» («դարձեալ գնաց տրտում եւ ունայն» - «դարձաւ գնաց տրտում եւ դատարկ»): Ղ. Ալիշանի հատուածն ունի՝ «Եւ ամենայն զօրութենէ իւրմէ կերակրէ զուղեորսն»: Շապուհը տալիս է՝ «Եւ ամենայն ուժոյ իւրոյ կերակրէ զայրն ճանապարհորդ»: Ղ. Ալիշանի հատուածում ասուած է. «Եւ արդ, տէր իմ արքա՛յ, եթէ գտի շնորհս առաջի քո, ի պարգեւացդ քոց, զոր ունիս, տո՛ւր ինձ»: Շապուհը գրում է. «ոչինչ պիտոյ է ինձ ի ձեռաց քոց, արքա՛յ, այլ եթէ կամիս տալ ինձ պարգեւս...»: Ղ. Ալիշանը բերում է՝ «հայցուած», Շապուհը՝ «խնդիր», առաջինը՝ «կենսակիր», երկրորդը՝ «կենսաբեր»: Ի դէպ, նկատուած է նաեւ, որ գրողի լեզուին բնորոշ են վանի բարբառին յա-

<sup>95</sup> Տե՛ս Պատմութիւն Շապուհի Բագրատունցոյ, էջ XXI:

<sup>96</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ XX:

<sup>97</sup> Լ. Ղ. Ալիշան, Հայագատում, հտ. Ա, էջ 221-222:

տուկ հնչիւնափոխութիւններ՝ ռ փխն. ո, գ փխն. ք, տ փխն. թ, դ փխն. տ, ձ փխն. ց, չ փխն. ջ, այդպէս նաեւ՝ հակառակը. օրինակ՝ քամ փխն. ցամ, ձեռոյ փխն. ձեռոյ, ձեռոյ փխն. ձեռոյ, փոքրաքոյն փխն. փոքրաքոյն, կենսափեր փխն. կենսաբեր, զչորիս փխն. զչորիս, մերժեցուցանել փխն. մերժեցուցանել եւն<sup>98</sup>:

Եւ այսպէս, Շապուհ Բագրատունու բնագիրը մեղմացուած է յօգուտ «ուսմանը»: Եթէ խօսուում է գրութիւնների ստեղծման ժամանակի մասին, այս հանգամանքը պէտք է նկատի առնուի: Վճռակա՛նապէս չի կարելի պնդել, թէ այդ գիրքը ԺԱ դարի սկզբից վաղ եւ ուշ չի կարող լինել: Շատ հնարաւոր է, որ Ոսկեփորիկների, Ղ. Ալիշանի աղբիւրի, Յայսմաուրքների եւ այլ ձեռագրական տարբերակների հատուածները միաժամանակ մշակուած ու խմբագրուած լինեն: Եթէ Շապուհի գրքում կան լեզուական փաստեր, որ կասկածելի են դարձնում դրա գրութեան ժամանակը Թ-Ժ դդ. տանելու հնարաւորութիւնը, ապա կան նաեւ աւելի հաստատուն կոուսաններ՝ ապացուցող, որ բուն գրական հիմքի շարադրման ժամանակը հէնց Թ-Ժ դարերն են: Լեզուական այն փաստերը, որոնց հիման վրայ գրութեան ժամանակը յետ է բերուած (ճիշտ է՝ ոչ նոյն քանակութեամբ ու հետեւողականութեամբ), կան նաեւ Ե դարում: Ժամանակը յետ է տարուած, որովհետեւ յոգնակի եր եւ աճի մասնիկներն այստեղ շատ տարածուած են, ամենուրեք պատահում ենք՝ բերդեր, հողեր, խոցեր, ամրոցաճի եւ այլն: Այսպիսի յոգնակիները գալիս են դեռեւս Ե դարից եւ Թ-Ժ դարերում, բնականաբար, աւելանում են: Հմմտ. «Իսկ Յունաց ժողովուրդքն եւ տղայքն անգամ ի վերայ ուսոց ծնողացն շարժեալ զձեռնէրն ի գովութիւն այլոցն՝ ձայնս անյօդակապս յարձակեալ յայթուեն»<sup>99</sup>: «Ես ընդ Վահանայ եւ ընդ այլ հայերդ ոչ եթէ նստիւ կուուիմ, այլ գղզղկով պուղեալ զբոլորս ցնդեմ»<sup>100</sup>:

Ձեռագրի ժամանակը յետ է տարուած, որովհետեւ այստեղ յարակատար դերբայը շատ է գործածական. օր.՝ «տեղեկացի՛ր, զի որդի ես Իսմայէլի՛՝ ծնած [յ]Աբրահամէ» (էջ 20): Յարակատար դերբայի այս

<sup>98</sup> Տե՛ս История Анонимного повествователя, էջ 31:

<sup>99</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904, էջ 200:

<sup>100</sup> Նոյն տեղում, էջ 152: Հմմտ. նաեւ «աւագորեար» (էջ 156):



ձեւը կայ նաեւ Ե դարում. «Աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ»<sup>101</sup>, «Արարած գիրք»<sup>102</sup>: Եթէ սրանք կասկածելի են, ապա է դարում ունենք՝ «Լուսաւորքդ արարած են յաւուրն չորրորդի», «Ի նոյն վանս էր գրած» (Յովհան Մամիկոնեան)<sup>103</sup>:

Շապուհ Բագրատունուն վերագրուած գրքում կան բազմաթիւ բառեր, որոնք իբրեւ թէ չէին կարող լինել Թ-Ժ դարերում: Այդպիսի բառեր են, օր.՝ «դեհ», «աղէկ», «մոյտան», (մէյդան), «Ֆրանկ», «ժուկ»: Բայց նշուած բառերից շատերն անսովոր չեն է-Ը դարերում: Յովհան Մամիկոնեանը գործածել է՝ «հալաւ», «պապ», «սապոն», «դեհ», «շարժ»: Իսկ «Ֆրանկ» բառը երբ ստուգում ենք, տեսնում ենք, որ այն կարող է պարզ յաւելում լինել. այդ բառը չկայ «Հացունեաց խաչի պատմութեան» ոսկեփորիկեան բնագրում, օրինակ՝ Մաշտոցեան Մատենադարանի հնագոյն ձեռագրում (թիւ 3777, ԺԲ դար)<sup>104</sup>: Ի՞նչ գիտենք միւս բառերից (օր.՝ «մոյտան»), արդեօ՞ք նոյնպէս յետին գրիչներին յաւելում կամ փոփոխութիւն չեն: Բոլոր դէպքերում՝ վերջիններս «չեն վստահացել աւ հին ուղղագրութիւնը փոփոխել, այլ թողել են մեծ մասամբ հինը»<sup>105</sup>:

Կան նաեւ բայական մի շարք ձեւեր, որոնք գրաբարից շատ են չեղուած. օր.՝ «կու սիրէ լսել» (փխն. «լուեալ»), «կոչել» (փխն. «կոչեալ»), «եղի՛ր» (փխն. «ե՛ղ»), «հագել» (փխն. «ագեալ»), «ճանաչեց» (փխն. «ճանեալ»), «լսեցէ՛ք» (փխն. «լուարո՛ւք»), «գրէ՛» (փխն. «գրեա՛»), «հասան» (փխն. «հասին»), «նստէ՛ք» (փխն. «նստա՛յք», «նստարո՛ւք»), «ելաւ» (փխն. «ել»), «վախեաց» (փխն. «վախեցաւ»), «երես» (փխն. «ես»), «լսէ՛» (փխն. «լո՛ւր»), «էրեկ» (փխն. «եկն»), «հրամայէ՛» (փխն. «հրամայեա՛»), եւ այլն: Ե դարում այդպէս ունենք՝ «բեկեցաւ» (փխն. «բեկաւ»), «յենիցին» (փխն. «յենուցուն»), «արգելէր» (փխն. «արգելոյր»), «հասիր» (փխն. «հաս»), «կալէ՛ք» (փխն. «կա-

<sup>101</sup> Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 2:

<sup>102</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 181:

<sup>103</sup> Տե՛ս Ա. Այտընեան, Բնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վենետիկ, 1866, էջ 126:

<sup>104</sup> Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ XXII, XXX; История Анонимного повествователя, էջ 28: Հմմտ. նաեւ Հ. Ն. Ակիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 207-208, ծնթ. 1:

<sup>105</sup> Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ XXII:

լա՛յք», «կալարո՛ւք»), «տարէ՛ք» (փխն. «տարա՛յք»), «խափանէ՛» (փխն. «խափանեա՛»), «ընկէ՛» (փխն. «ընկեա՛»), «գրէ՛» (փխն. «գրեա՛»), «թքեսցուք» (փխն. «թքուք»), «անիծեցից» (փխն. «անիծից»), «լնելոց» (փխն. «լնոց»), «լսեցեն» (փխն. «լուիցեն»), «ճանաչեցին» (փխն. «ճանեան»), «մեղանչեցին» (փխն. «մեղան»), «մեղանչեաց» (փխն. «մեղաւ»), «հասիր» (փխն. «հաս») եւ այլն<sup>106</sup>:

է դարում ունենք՝ «լսեցիր» (փխն. «լուար»), «հասաւ» (փխն. «եհաս»), «ուռաւ» (փխն. «ուռեաւ»), «դարձէ՛ք» (փխն. «դարձարո՛ւք»), «իմացէ՛ք» (փխն. «իմացարո՛ւք»), «թագիք» (փխն. «թագերուք»), «փախիք» (փխն. «փախերուք»)<sup>107</sup>:

Ըստ Ա. Այտընեանի՝ «Միջին դարուց վերջերը եւ մասնաւորապէս Բագրատունեաց ժամանակները, երբ արդէն մեր գրաբարը իրենց ալ իրօք գրաբար էր, ձեւացած էր կերպաւորեալ աշխարհաբար լեզու մը. կամ մանաւանդ դարերով ձեւացած աշխարհաբարն սկսած էր իբրեւ աշխարհաբար ի գիր առնուիլ. լեզու մը, որ ժամանակին մատենագրութենէն բոլորովին տարբեր բնութիւն ու կազմութիւն ունի»<sup>108</sup>:

Ահա Շապուհ Բագրատունուն վերագրուած այս գրքի լեզուն Ա. Այտընեանի ասած «կերպաւորեալ աշխարհաբար լեզուն» է՝ ձեւաւորուած է դարից յետոյ, որտեղ սովորական են «ջաղաց», «էգի», «կամուրջ», «մին» («մի»), «բեկար», «մատակ», «հարամ», «դերդ», «կոնակ», «խենթ», «վախել», «ուզել», «մօտենալ» եւ այլն: Սրանց կողքին «ժուկ», «ճամբայ», «լապարկանք», «յիրիկունն», «մոյտան» («մէյտան»), «աղեկ» բառերը մեզ բնաւ չպէտք է զարմացնեն, եւ դրանց պատճառով չէ, որ Թ-Ժ դարերի սահմանագծում «կերպաւորեալ աշխարհաբարով» գրուած գործը պէտք է անպայման բերենք հասցնենք ԺԱ դ. սկզբները:

Մի ուրիշ լեզուական փաստ եւս կայ, որ ապացուցում է այս գործի հնութիւնը: Ըստ Հր. Աճառեանի՝ հայերէնի լ-ն ղ է դարձել Ժ-ԺԱ դարերում: Մեծ լեզուաբանի եզրակացութիւնը հետեւեալն է. «Իմ ենթադրութեամբ ղ ձայնը նախ երեւան եկաւ հիւսիսում՝ Աղուանքին

<sup>106</sup> Տե՛ս, օր.՝ Ա. Այտընեան, Բնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 93:

<sup>107</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 126:

<sup>108</sup> Նոյն տեղում, էջ 143:

սահմանակից Հայոց մէջ թ դարի սկզբից (Կաղանկայտուացի), ապա իջաւ հարաւ. Ժ դարի կէսին դեռ տատանեալ դրութեան մէջ է (Դրասխանակերտցի), իսկ ԺԱ դարում արդէն ամբողջ երկրում տարածուած է (Ասողիկ)<sup>109</sup>: Նա այս եզրակացութեանը յանգում է՝ բերելով մի շարք օրինակներ: Մենք կանգ կ'առնենք միայն մի օրինակի վրայ, որովհետեւ այն մեր ձեռագրում կայ եւ անժխտելիօրէն ապացուցում է, որ Շապուհ Բագրատունուն վերագրուած այս պատմութիւնը հին է եւ գրուած է դէպքերից ու եղելութիւններից շատ քիչ անց՝ Ժ դարի ընթացքում: Հր. Աճառեանն այդ օրինակի մասին գրում է, թէ դա իր գտած ամենահին վկայութիւնն է. այդ ծանրակշիռ վկայութիւնը Բուղայ արար ոստիկանի անուան տառադարձումն է: Բուղան Հայաստան արշաւեց 853 թուականին եւ նրա անունն այլուր գրուած է Բուղայ՝ գոնէ Ասողիկից սկսած: Շապուհին վերագրուած պատմութիւնն այդ ձեւը չգիտէ, նրանում անունը տառադարձուած է՝ Բուկայ (ուրիշ վաղ հեղինակների մօտ Բուխայ է): Անկարելի է, որ ԺԱ դարում գրողը չիմանար Բուղա անունը ճիշտ տառադարձել:

Մեզ այստեղ մնում է մի կարեւոր հարց եւս՝ արդեօ՞ք գրքի բոլոր հատուածներն են միեւնոյն հեղինակի գործ: Կարծում ենք՝ այդպէս չէ: Այս գիրքը նոյնպէս ժողովածոյ է, եւ Հացունեաց խաչի պատմութիւնը, Մօրիկի պատմութիւնը, Մահմէդի պատմումն այդ ժողովածոյի մասերն են: Այն հեղինակը, որ գրել է գրքի վերջին՝ հիմնական մասը, յիշեալ հատուածների հետ, ամենայն հաւանականութեամբ, կապ չունի: Նրա ստեղծագործութիւնն այդ վերջին կարեւոր հատուածն է, որ ոչ մի այլ ձեռագրում չկայ, եւ արժէքաւոր է պատմական ու մանաւանդ՝ լեզուական տեսակէտից:

Շապուհին վերագրուած գրքով հաստատուում են աշխարհաբարին ու բարբառներին յատուկ եւ գրաբարին խորթ մի շարք հնչիւնափոխութիւններ. «ճանապարհ»-«ճամբայ», «նապաստակ»-«լապաստրկանք», «ագանել»-«հագնել», «կամուրջ»-«կարմունջ», «երեկոյ»-«իրիկուն», «միայնակեաց»-«միայնակեց», «տղայն»-«տղան», «ուրախացուցանել»-«ուրախացնել», «ուղղորդ»-«ղորդ», «լուեալ»-«լուել»,

«աշխատեալ»-«աշխատել», «այլ»-«ալ», «իւրեանց»-«իրենց», «պահէզ»-«բանջարանոց», «իւրեանք»-«իրենք», «միայն»-«մեն», «աւերել»-«աւիրել», «տեարք»-«տէրք», «զիարդ»-«զերթ, յորման»:

Հաստատուում են մի շարք համանիշ բառեր, որոնց փոխարէն դասական գրաբարում այլ համանիշներ էին կիրառուում. օր.՝ «առաքել»-«յղարկել», «աստ»-«հոս», «ժամանակ»-«ժուկ», «ողջ»-«աղեկ», «ագանել»-«հագնել», «կողմն»-«դեհ», «ունել»-«բունել», «եմ»-«ունել» («այսօր շուճիճք ինչ» - «ոչ է ինչ մեզ յայսմ աւուր»), «լեառն»-«սար», «հարկանել»-«կոտորել», «երկնչել»-«վախել», «կուսակալ»-«կատապան», «տէր»-«պարոն» (կիրիկեան շրջանում մտած):

Փոփոխուած են շատ բայաձեւեր. «տուեալ»-«տուել», «նստեալ»-«նստել», «ե՛ղ»-«եղի՛ր», «մուծին»-«մտուցին», «նստարո՛ւք»-«նստէ՛ք», «ժանուցեալ»-«ճանաչել», «տարեալ»-«տանել», «եգիտ»-«գտաւ», «լուր»-«լսէ», «կազմեա՛»-«կազմէ՛», «լուաւ»-«լսեց», «ելին»-«ելան», «հրամայեաց»-«հրամայեց» եւ այլն:

Այս փոքրիկ գրքոյկը մեր լեզուի բառապաշարը հարստացնում է մի շարք նոր բառերով, որոնց մի մասը դեռեւս բացատրուած չէ. այսպէս՝ ունենք «անգնայ» (Հր. Աճառեանը բացատրում է՝ «անդ նայ»<sup>110</sup>): Բառի իմաստն է՝ «ժանր», «դժուարին» («Եւ զԱշոտ՝ անդրանիկ եղբայրն քո կապեց չարաչար կապանաւք, մինչեւ անգնայ մահ եղեւ ի ամրոցին». էջ 84): «Անգնայ» մասնաւորապէս նշանակում է «անգնալի»: «Ապիկարել» նշանակում է «արհամարհել», «հաշուի չառնել»: «Ապակաց» (բառը չի բացատրուած). մեր կարծիքով «հպատակ» բառի աղաւաղ ձեւն է («եւ ապտկաց ամպոխանք» - «հպատակների խռովութիւն»): «Արեւանք»՝ «արեւանկ» բառն է, որ «արեւմուտք» է նշանակում (Հր. Աճառեանն է ճիշտ բացատրել): «Աւանդ»՝ «մեծ քաղաք», «մայր-ա-քաղաք»:

«Բանդար»՝ պէտք է նշանակի «գորպպետ». Հր. Աճառեանն անստոյգ է համարում, սակայն այդ բառից յետոյ եկող «Ձտեսուչ զաւրացն Պարսից»-ը բացայայտիչն է այդ նոյն «բանդար» բառի (էջ 76): «Բասա»՝ Հր. Աճառեանը բացատրում է՝ «ապաստանի տեղ», պարսկե-

<sup>109</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Հտ. Դ, Եր., 1979, էջ 650-651:

<sup>110</sup> Այստեղ եւ ստորեւ տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր Շապուհ Բագրատունու պատմութեան մէջ, - «Բազմավէպ», 1922, էջ 181-182, 232-234, 267-271:

րէն: Ինձ թուում է, որ նշանակում է «յարմար է», «վայել է»: Գրաբարի համար իբրեւ նոր բառ է համարուած նաեւ «գազազել» բայը, որ սովորական է բարբառներում եւ նոր գրականում: «Գոռոչել»՝ Հր. Աճառեանը բացատրում է «գոռալ», «գոչել», պէտք է նշանակի «հառաչել», «հառաչանք արձակել»: Այդտեղ «գոռալու» առիթ չկայ: «Դարպասցի»՝ «պալատական»: «Զաւնաճառ»՝ «գինամթերք», «ուզամագոյք». կարծում եմ «աւն» («անձնական իրը»՝ «սեփականը») բառից զ սաստականով եւ «ճար» («միջոց»), այլ ոչ թէ «ճար» բառով բարդուած:

«Զիրել» բայը պարզապէս «տիրել» («տիրեմ») բայի աղաւաղումն է, «ժամակ»-ը՝ «ժամանակ»-ի: Նոր եւ գեղեցիկ ժողովրդական բառ է «խաղարարիք» («պարող»): Աղաւաղուած բառ է՝ «խուսաւ», որ այլ ձեւագրեր տալիս են՝ «խրատտու»: «Համակար» նշանակում է «կարող», «ի վիճակի»: «Հարհրել»՝ պէտք է լինի «հարհարել», որ նշանակում է «գարկղարկել», «խփխփել» («իրար վարկել»): «Ճօշ» բառը կայ բառարաններում միայն բայական ձեւով՝ «ճօշալ». այստեղ գործածուած է արմատը, որ նշանակում է «բամբասանք»: Նոր բառ է նաեւ՝ «մեծահար», որ նշանակում է «մեծ ձգտումներ ունեցող» կամ «մեծամոլ», «մեծամիտ», «գոռոզ»: «Յայգեհանն» նշանակում է «առուօտեան», բայց թէ ինչպէս է կազմուած՝ պարզ չէ (թերեւս՝ յ-ալ-գ[ու]ց-եան): «Յետին» նշանակում է «կտակ», այսինքն՝ «վերջին գիրը»: Ղեւնդ վարդապետը գործածում է նաեւ «վերջին» բառը իբրեւ «կտակ»: «Շատորաց»՝ հաւանօրէն «շատօրաց», «շատ օրերից», «վաղուց»: «Սարիաթ առնել»՝ արաբերէնից է. ճիշտն է՝ «սուրիաթ առնել», ըստ Հր. Աճառեանի՝ «շտապել», «արագանալ»: «Սկեւռին» նշանակում է «արկղ»: «Տակցի» նշանակում է «արմատաքի», «քամոսկ» (որ Հր. Աճառեանը կարծում է «քամոս»-ից)՝ «քսու», «մատնիչ», իսկ «քիմ»՝ «դարան»:

Շապուհ Բագրատունուն վերագրուած գրքոյկը մէկ անգամ եւս ապացուցում է, որ գրաբարի անուանական ու դերանուանական հոլովումները Թ-Ժ դարերում գնում էին դէպի միասնականացում, ջնջւում էին դրանց խստադիր սահմանադատումները, այսինքն՝ քանդւում էր գրաբարի հոլովման համակարգը: Սրա հետ միասին ի հոլովումը դառնում էր իշխող ձեւը. «մի ալին» («այլին» - «այլոց»), «այ-

տիւ» («այդու»), «ասնէն» («յայսմ», «յայսմանէ»), «ոտէ» («յոտնէ»), «այտով» («այդու»):

Վերանում է ուղղականի եւ հայցականի տարբերութիւնը. «ի վանքն Աշոտայ», «կազմէ զարքը», «զամենայն մարդոյ իրք առ ինքն եղի՛ր» (էջ 44): «Առաջնորդեսցէ ինձ [փխն. գիտ] յարեւելք» (էջ 42): «Առից ի նմանէ զարք» (էջ 42): «Տուին զամենայն ամրոցք» (էջ 48): «Յղարկեաց զարք բազումք եւ աւիրեաց զաշխարհն» (էջ 52): «Օրհնէի զեկեղեցիքն» (էջ 34):

Արդեն կազմւում է անձի տրականաձեւ հայցականը. «Եւ նայ հեծեալ եւ զնաց սակաւ մարդով երեւան հեծելիս տեսանել» (էջ 51), «Եւ ի շատորաց ցանկաց[եալ] էր Դերէն աղջկանն» (էջ 39):

Նախդիրները կա՛մ ընկնում են, կա՛մ փոխարինւում նախադրութիւններով. «Եւ տարան առաջի արքային» (էջ 53), «Դեղ դիք խոցերուս», «յանցուցանեմ զամենայն արս պատերազմողս այս [փխն. յայս] կոյս» (էջ 31), «այտ [փխն. յայդ] դեհ», «այն [փխն. յայն] դեհ», «ի մէջ արեան ծովու [փխն. յարեան ծովու]» (էջ 32), «որոյ անուն [փխն. յանուն որոյ] շինեցից», «զարթուցեալ ի մէջ գիշերին» (էջ 36), «բաժանեցին զաշխարհ Հայոց ի մէջ Բագրատունեաց եւ ի մէջ Արծրունեաց [փխն. ընդ Բագրատունիս եւ ընդ Արծրունիս]» (էջ 37), «զնաց ազատութիւն իւրովք» (էջ 61):

Մի շարք բառեր նոր իմաստներ են ձեռք բերել, որ չկային գրաբարում. օր.՝ «լուսին» («պայտ»), «գատ» («հեռու»), «բարով» («յաջողութեամբ»), «վարել» («վարուել»), «ծախս» («ծախս»), «փոխ» («փոխարինաբար», հմմտ. «տացէ մեզ Աստուած զաւակ, եւ մենք տամք զնայ փոխ Տեառն», էջ 37):

Արսէն Այսրնեանը կու մասնիկը համարում է ծագած (կամ՝ տարածուած) ԺԲ դարից. եթէ ընդունենք բանասէրների այն համատարած պնդումը, թէ Շապուհ Բագրատունուն վերագրուող այս գիրքը գրուած է ԺԱ դ. սկզբներում, ուրեմն՝ յամենայն դէպս մէկ դարով կու-ի ծագումն այս գրքով առաջ է տարւում (հմմտ. «Այրս այդ, որ կու տառապէ, առ՛ւր դմա մասն ի նշխարաց իմոց», էջ 35; «իմ այրս Դերէնն թողել է զիս եւ զայլազգի կին մի կու սիրէ», էջ 66): Բայց մենք հակուած ենք կարծելու, որ այս գրքոյկի հեղինակը ստեղծագործել է պատմական իրողութիւններից ոչ աւելի, քան 40-50 տարի

յետոյ. եթէ ճիշտ ենք, ուրեմն՝ կու մասնիկի ժամանակը եւս մէկ դարով առաջ է տարւում:

Այսպիսով, մեր փոքրիկ երկի լեզուա-պատմական նշանակութիւնը շատ մեծ է: Իզուր է, որ աշխարհի բոլոր ծայրերից ամեն ազգի հայագէտներ զանազան առիթներով արտայայտուեցին եւ միաձայն գտան, որ էջմիածնում հրատարակուած մատենագրական երկը, անկախ այն բանից, թէ ով է նրա հեղինակը, կարելոր սկզբնաղբիւր է եւ որոշակիօրէն լրացնում է հայ հին գրականութեան հարուստ գանձարանի ճանաչողութեան թերիները:

Թարգմանելով այն՝ փորձել ենք հնարաւորին չափ հարազատ մնալ բնագրին, որը հրատարակիչները պատրաստել են բաւական մեծ խնամքով: Աշխատել ենք առաւելագոյնս ընդգրկել նաեւ նրանց ծանօթագրութիւնները (ընդհանրապէս, ծանօթագրութիւններում ձգտել ենք էպպէս արտացոլել գրական այս կարեւոր յուշարձանի բոլոր հետազոտողների եւ յատկապէս՝ ուսուցիչների ու անգլերէնի թարգմանիչների՝ Մարգարիտ Դարբինեան-Մելիքեանի եւ Ռոբերտ Թոմսոնի կատարած աշխատանքը<sup>111</sup>): Երբ վստահ ենք եղել, որ մեր միակ ձեռագրում նկատուող կորուստներն առաջ են եկել գրչի անուշագրութեան ու շփոթի պատճառով, թարգմանութիւնը կատարել ենք՝ լրացում-վերականգնումներ անելով (կրկնակի փակագծերում) «Ոսկեփորիկ»-ում եւ Ճառընտիրներում պահպանուած ու հրատարակչի կողմից սողատակում նշուած բնագրերից: Վերջում 10 Յաւելուածներում դրել ենք մեծ կամ փոքր հաւանականութեամբ Շապուհ Բագրատունուն վերագրուած ձեռագրական եւ մատենագրական հատուածներն ու դրանց թարգմանութիւնները: Բնագրերում եւ սողատակերում օգտագործել ենք հետեւեալ փակագծերը. (...) - խօսքի միջանկեալ հատուածներ հեղինակային շարադրանքում; [...] - գրաբար բնագրում գրչի վրիպած տառերի վերականգնում; ]...[ - գրաբար բնագրի աւելորդ տառեր; [[...]] - վերականգնում ըստ «Ոսկեփորիկ»-ում եւ ճառ-

<sup>111</sup> История Анонимного повествователя. Псевдо-Шапух Багратуни. Пер. с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ер., 1971; R. W. Thomson, *The Anonymous Story-teller (Also Known as "Pseudo-Šapuh")*, - *REArm.*, t. XXI, Paris, 1988-1989, էջ 171-232:

ընտիրներում պահպանուած հատուածներ; {...} - ձեռագրերի վնասուածութեան պատճառով կորսուած հատուածներ; [...] - գրաբար բնագրում բացակայող բացատրող բառերի կամ բառահատուածների լրացում թարգմանութիւններում, ինչպէս նաեւ բնագրային իւրայատուկ բառանմուշներ՝ բարբառային, խօսուածքային, հոմանիշ (վերջինները լոկ թոյլ են տալիս պահպանել հեղինակային բառանկիւթի մասին պատկերացումը մեր թարգմանութեան մէջ, ուստի կարող են անգամ չընթերցուել):

Հրատարակիչ Մեսրոպ եպ. Տէր-Մովսիսեանն իրաւացիօրէն նշել է, որ ձեռագրական հիմքի հետ որեւէ կապ չունի իր հեղինակակից Գ. Տէր-Մկրտչեանի կողմից բնագրի՝ պայմանականօրէն երկրորդ մասի համար արուած հատուածաբաժանումը 132 համարակալուած փոքր կտորների (իրականում՝ 135, պարագրաֆ 124-ից յետոյ տեղ գտած շփոթի հետեւանքով), որն ինքն այնուամենայնիւ պահպանել է («ցանկանալով հարազատութեամբ վերարտադրել ականաւոր գիտնական Գալուստ Տէր-Մկրտչեանի վերջին գրաւոր աշխատութիւնը»)՝ դեռ նոյնպիսի բաժանում էլ կատարելով առաջին մասում (ձաւալով աւելի մեծ 28 պարագրաֆներ)<sup>112</sup>: Չնայած դրան, ելնելով բնագիրն ու աշխարհաբար թարգմանութիւնը համեմատելու կամ գուգադրելու նպատակայարմարութիւնից, մենք եւս պահպանում ենք արուած հատուածաբաժանումը (ի տարբերութիւն նախորդ թարգմանիչների)՝ իհարկէ, հատուածահամարներն առնելով քառակուսի փակագծերի մէջ (որ այս դէպքում ամենեւին չեն նշանակում հեղինակային բնագրի վերականգնման փորձ) եւ ուղղելով վերը նշուած շփոթը: Գ. Տէր-Մկրտչեանի բնագրի մի քանի պարագրաֆներից առաջ դրուած են նաեւ աստղանիշեր, որ բաց ենք թողնում:

## Վարպ Առաքելեան

<sup>112</sup> Պատմութիւն Շապուհ Բագրատունոյ, էջ XXXIII-XXXIV:

**[Ա.]\* [[ՆԵՌԻ ՍՊԱՍԱՌՈՐ ՍԱՀՍԷՏԻ\*\* ՇՆՆԴԵԱՆ  
ՈՒ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝  
ԵՒ ԻՇԽԵԼԸ**

[1.] Այժմ՝ դարձեալ կամենում եմ երկրորդելով սկսել ժամանակագիր-ներրի պատմութիւնները գրքերից ըստ կարգի ծանօթացնել թէ ինչպէս կամ ինչեր կատարուեցին Հայոց երկրում, Բաբելոնացոց եւ Յունաց [երկրներում]<sup>2</sup> եւ առհասարակ ամբողջ աշխարհում [տիեզերքում]: Եւ այսպէս՝ բազմաթիւ էին Թորոսի տան<sup>3</sup> զօրաւորները, եւ անհամար՝ նրանց նախարար [ախան] գնդերը, նրանցով էր Տրդատ Մեծը<sup>4</sup> էլնում եւ յղծում շատ երկրների ու թագաւորների: Իսկ նրանց վախճանից յետոյ թագաւորութեան գաճն ուղիղ չվարեց [ին]՝<sup>\*\*\*</sup> նրա որդի Խոսրովը<sup>5</sup> եւ սրա որդի Տիրանը<sup>6</sup>, եւ նրա որդի Արշակը<sup>7</sup> եւ սրա որդի Պապը<sup>8</sup>, որը թոյնով սպանեց սուրբ Հայրապետ Մեծն Ներսէսին<sup>9</sup> եւ ընդունեց միեւնոյն արագաճաս պատիժը, Հայոց երկրի [տան] կործանումը եւ թագաւորների վերացումը, որովհետեւ զազրագործ, պիղծ ու գարշելի վարք ունէին Հեթանոսների նման եւ շեղուեցին Աստուծոյ ճանապարհից: Այս պատճառով Աստուծոյ բարկութիւնը թափուեց Հայոց աշխարհի վրայ, եւ մեր թագաւորութիւնը բնաջնջուեց, վերացաւ երկար ժամանակով<sup>10</sup>:

Դրանից յետոյ յայտնուեց Նեոի<sup>11</sup> պատգամաբերը [կարապետը], որ Մաշտոցն<sup>\*\*\*\*</sup> էր՝ Տաճկաց [արարների]<sup>12</sup> առաջնորդը<sup>13</sup>:

\* Շապուհի կամ Անանունի ամբողջական բնագիրը պարունակող ձեռագիրը (ՄՄ, թիւ 5974) թերթերի կորստի պատճառով (գուցէ՛ դեռ նախազաղափար օրինակում) չունի սկզբի մի քանի էջը (մինչեւ ստորեւ, էջ 57-ի 4-րդ պարբերութեան սկզբները): Հետեւելով Մ. Դարբինեան-Մելիքեանին (История Анонимного повествователя, էջ 36-39)՝ պակասը լրացնում ենք (կրկնափակագծի մէջ) ՄՄ թիւ 6961 ձեռագրից (Ժէ դար, թ. 91բ-96բ), որտեղ այս առաջին գլուխը պահպանուել է (Հացունեաց խաչի բուն պատմութիւնից առանձին՝ «Պատմութիւն ծննդեան եւ սննդեան արբանեկին Նեոան Մաշտատին եւ թագաւորելն» վերնագրով:

\*\* ՄՄ թիւ 6961 ձեռագրում այստեղ եւ եւս մէկ-երկու անգամ՝ Մահամատ է, սակայն ստորեւ գերազանցապէս՝ Մահմէտ: Թողնում ենք վերջինը, սակայն բուն հեղինակային կարող է համարուել նաեւ առաջին ձեւը:

\*\*\* Ձեռագրում՝ ուղեաց փխ ուղղեաց (իմա՝ «ուղիղ չվարեց»):

\*\*\*\* Ձեռագրում՝ Մէհմէտն. նոյնը՝ նաեւ միայն յաջորդը:

Պարսից աշխարհից Արդուաշման՝ անունով մի մարդ [կար], որ Բելմիկի որդի Աբգալի որդին էր՝ Ռուերան քաղաքից<sup>14</sup>, որ մօտ է Ռէհ քաղաքին, Ասպաշան բերդի գիմաց, նա ունեցաւ մի որդի եւ անունը դրեց Մաշտատ, բայց այդ ունեցաւ մի դուստր եւ նրա անունը դրեց Տատմայ<sup>15</sup>, [որ մի] չափազանց գեղեցիկ կին [էր]: Իսկ Աբգուաշմանի որդի Մաշտատը<sup>\*\*</sup> դուստար դարձաւ եւ օրըստօրէ գեւի կողմից կատաղութեան մէջ էր պցում: Դեւի միջոցով անսանձ դառնալով խզում էր շղթաներն ու երկաթէ կապանքները եւ գեւի կողմից քշում անապատները, լեռներն ու քարանձաւները:

Նրա Հայրը Հսկայական ծախս արեց [որդուն] բուժելու Համար, բայց [ոչ մի] օգուտ չունեցաւ եւ օր ու գիշեր տարակուսանքի մէջ էր: Սակայն նրա մօտ մի մարդ եկաւ եւ պատմեց նրան ու ասաց. «Եթէ որդուդ տանէիր Ասորոց [Ասորեստանեաց]<sup>16</sup> երկիրը, Սարգիս անունով մի մարդու մօտ<sup>17</sup>, որ ըստ իր կրօնի պարեգօտ է Հագած եւ սեւազգեստ է, նա քո որդուն կը բուժէր»:

Եւ Աբգուաշմանը վեր կացաւ, առաւ իր որդի Մաշտատին եւ գնաց Ասորոց երկիրն ու Հանգիպեց ասորի մենակեաց վանականին [մուրզոնին]: Եւ երբ նրանք Հասան վանքի լեռանը, դեւը վրայ Հասաւ ու նրան [Մաշտատին] գետին տապալեց, եւ նա սաստիկ մոլեգնում էր ու փրփրում: Բայց Սարգիսը վրայ Հասնելով բունեց Մաշտատին ու սուքի կանգնեցրեց: Իսկ Աբգուաշմանն ասաց. «Եթէ Հնար կայ եւ կը կարողանաս իմ որդուն բուժել քեզ մեծամեծ գանձեր, պատուական Հագուստներ եւ ազնուացեղ երիվարներ կը տամ»: Եւ նա [Սարգիսը] յանձն առաւ, թէ՛ «Կը բուժեմ»:

Եւ Աբգուաշմանն իր որդի Մաշտատին թողեց նրա մօտ ու ինքը յետ գնաց: Իսկ այդ մարդը [Սարգիսը] Նեստորի Հաւատքի<sup>18</sup> [Հեաեւորդ] էր, դիւային ու կախարդ [ութիւն] սիրող: Եւ խիստ Հմուտ էր դեւերի՝ արհեստի, դիւթելու<sup>\*\*\*</sup> եւ կախարդելու մէջ: Իսկ Մաշտատը Հաւատքով Հեթանոս էր եւ մնգապաշտ: Եւ Սարգիսը Մաշտատին ասաց. «Եթէ Աստուծոն Հաւատաս եւ թողնես կուպաշտութիւնդ, կը բուժեմ քեզ»: Եւ նա Համաձայնելով մկրտուեց սրա կողմից: Բայց սա մկրտեց նրան ըստ Նեստորի Հաւատքի:

\* Ձեռագրում (միայն այստեղ)՝ Ապրոտահման:  
\*\* Ձեռագրում այստեղ էլ՝ Մահամատ է, սակայն ստորեւ գերազանցապէս՝ Մահմէտ:  
\*\*\* Ձեռագրում՝ թիւթել (գրչի համար սովորական՝ Դ-Թ սխալագրութեամբ):

Եւ Մաւառաբար նրա մօտ ապրեց 23 տարի: Եւ սառանան ձուլուեց նրա մարմնին ու Հոգուն, եւ [նա] սովորեց կախարդութեան արհեստն ու խրատութեան Նեստորի ամբողջ կախարդային արհեստն ու Հերձուածը:

Դրանից յետոյ Մաւառաբար ըստ Հասաւ, թէ՛ «Քո Արդուաւան չայրը մեռել է», եւ Մաւառաբար ըսելով լաց եղաւ: Սարգիսն ասաց. «Մի՛ լար, որ քո չայրը մեռել է, քանզի ես քեզ աւելի մեծ կը դարձնեմ, քան քո չայրն ու քո ողջ ազգաստեղծը: Արդ՝ վեր կաց գնա՛ քո Հօր տունը, տե՛ս ու վերադարձի՛ր ինձ մօտ»: Եւ Մաւառաբար վեր կացաւ, իր Հետ վանքից վերցրեց երկու վանականի [մնուորդնի] ու գնաց իր երկիրը:

Հասաւ Սումարայ՝ եւ իմացաւ, որ իր Հօր մեռնելուց [յետոյ] քոյրն էլ [դարձել է] իր [Հօր] եղբորորդի<sup>19</sup> Ալէի [Ալիի] կինը: Եւ Հարցրեց. «Ալէ՛, այդ ինչպէ՛ս իմ Հօր ասունը յափշտակեցիր եւ խլեցիր ամբողջ Հարստութիւնը եւ իմ Հօր Հանդերձանքը եւ բոլոր միջերը [կարուածքները]»: Եւ Մաւառաբար մեծ աղմուկ բարձրացրեց ու Ալէից մի մասը յետ առաւ:

Եւ դարձեալ Հեռացաւ ու եկաւ Ասորական<sup>\*\*\*</sup> երկիրը՝ Դեմեսրի վանքը, Սարգիս վանականի [մնուորդնի] մօտ, եւ եղելութիւնը պատմեց նրան: Սարգիսը [նրան] ասաց. «Մի՛ վախեցիր, Մաւառաբար, թէ ես Հնարագիտութիւն չունեմ՝ քեզ մեծ դարձնելու: Արդ, վեր կա՛ց, դարձեալ գնա՛ քո Հօր տունը եւ այնտեղ Համոզի՛ր մի քանի վաճառականի՝ գնալու Եփրատացոց երկիրը: Իսկ երբ գաս Հասնես իմ վանքի դիմաց, իջեանի՛ր, բայց մի՛ ասա, թէ դու ծանօթ ես այս վանքին, տեղերին կամ սաւմաններին: Բայց իմաց տո՛ւր քո իջեանի տեղը, եւ ես ասունը իմ սարկաւազներին՝ ջաշերով ու մամերով կը Հասնեմ՝ քեզ մօտ, եւ մեր ձայները երկինք բարձրացնելով կը վախեցնեմ պարսիկներին, որոնք քո Հետեւից եկած կը լինեն: Նրանց կ'ասեմ, թէ այս պատանու վերաբերեալ երկնային երազ եմ տեսել, որ սա մի մարգարէ է եւ պէտք է Հաւատալ սրան, այն, ինչ որ սա ասի, կատարուելով կը կատարուի»: Եւ ինչ որ կախարդ Սարգիսը սովորեցրեց, Մաւառաբարն ամեն ինչ կատարեց:

\* Բնագրում՝ արի՛, բայց Հաւանորէն եղել է ու վերականգնելի է՝ «արի [ե՛րթ]», այսինքն՝ «վեր կաց գնա՛»:  
\*\* Բնագրում՝ Սումարայ իսի Սումարայ (Հմմտ. 2 պարբերութիւն անց): Իսկ երկի վերջում (պար. 59, 73, 75) քաղաքանուան գրեւաձեւն արդէն՝ Սամարայ է:  
\*\*\* Բնագրում՝ երկիրն Ասորեստանեան:

Եւ գնաց Մաւառաբար Պարսից աշխարհի Սումարայ՝ քաղաքը եւ Համոզեց վաճառական մարդկանց՝ գնալու Եփրատացոց երկրի Սկանտարիայ [Աղեքսանդրիա]<sup>20</sup> քաղաքը: Եւ Հաւաքուեցին Հարուսա [մեծատուն] եւ պատուաւոր մարդիկ ու եկան Հասան Ասորոց աշխարհը:

Իսկ ճանապարհին Մաւառաբար նրանց ասում էր. «Ո՛վ Պարսից մեծամեծեր, մենք Հաւաք եւ աստուածապաշտութիւն չունենք, որովհետեւ սնտախեն մեր կուռքերը, քանզի ես ոմանցից լսել եմ, թէ երկնքում մեզ երեւացող արեգակից վեր Աստուած կայ»: Նրանք ասում են. «Ի՛նչ եղար, Մաւառաբար, լսի՛ր<sup>\*\*</sup> եւ մի՛ դատարկաբանի՛ր<sup>\*\*\*</sup>: Իսկ նա սկսեց նրանց պատմել Հինաւուրց օրերից, Աբրահամից<sup>21</sup>, Նոյից<sup>22</sup>, նաեւ Ադամից<sup>23</sup>: Եւ նրանք զարմացած էին նրա իմաստութեան վրայ ու ասում էին. «Ո՛վ Մաւառաբար, որտեղից՞ ես սովորել այդ խօսքերն ու բազում գիտելիքները»: Եւ նա ասում էր. «Իմաստութիւն, գիտութիւն եւ մարգարէութիւն ինձ ի վերուստ են տրուած»:

Եւ երբ մօտեցան վանքին, իջեանեցին մենակեացի [մնուորդնի] կացարանի [վանքի] առջեւ, ըստ նրա [տուած] խրատի:

Եւ գիշերը Սարգիս մենակեացը [մնուորդնի] առն[ելով] մոմերը [եւ] ջաշերը, սարկաւազներին ու միաբաններին՝ եկաւ այնտեղ, ուր [Մաւառաբարն] էր, եւ նրան շրջապատած բարձրաձայն խօսում էին: Եւ յանկարծակի [եկած]՝ զարթնեցին վաճառականները, զարմացան ու վեր կացան գնացին նրա մօտ: Եւ Հարցրին մնուորդնին. «Այս ի՛նչ ենք լսում այս մարդու մասին, նեստոր[ական] Սարգի՛ս»: Եւ [նա] ասաց. «Երկնային երազ տեսայ սրա վրայ եւ մեծ լոյս ու Հրեշտակներ, որ ասում էին, թէ սա մեծ մարգարէ է, ինչ որ նա ասում է՝ ճշմարիտ են նրա խօսքերը»:

Եւ դրանից յետոյ վաճառականների մտքով անցաւ. «Ճշմարիտ էին դրա խօսքերը, որ մեզ ասում էր, երբ ճանապարհ էինք գալիս»: Եւ վեր կացան, բռնեցին իրենց ճանապարհը: Իսկ երբ վերադարձան իրենց երկիրը, եւ

\* Վերելում՝ Սումարայ: Հմմտ. նաեւ ստորեւ՝ [7], 58, 59, 73 եւ 75 պարագրաֆներում, ուր քաղաքանուան ձեւը՝ Սամուր, Սամաուայ եւ Սամաուոյ է:  
\*\* Այստեղ՝ ինչպէս եւ պահպանուած ձեւագրում լուր լէր (փխն. լուռ):  
\*\*\* Ձեռագրում՝ մի խօսիր ընդան (վերջին բառն ուղղելի ենք Համարում ընդ[ու-ն]այն՝ «դատարկաբան»):  
\*\*\*\* Կրկնափակագծի Համար տե՛ս վերելում, էջ 54, տողատակ 1:

իրաքանչիւրն իր տունը գնաց, [նա] եւ [[լուր տարածեցին Մաւնէտի մասին, թէ մի մարգարէ է նա]]<sup>\*</sup> :

[2] Այս մասին լսեց Պարսից ճապասպ Քասրէ<sup>24</sup> արքան եւ Հնար էր փնտրում՝ Մաւնէտին սպանելու: Եւ ասում էր, թէ՛ «Նա սովորել է Ասորոց ազանդները եւ ցանկանում է վերացնել<sup>\*\*</sup> մեր կուռքերի պաշտամունքը»:

Եւ Մաւնէտն ու Ալին Ֆատմային<sup>\*\*\*</sup> աւնելով վեր կացան, դուրս եկան իրենց Պարսից աշխարհից ու եկան բնակուեցին Բարեւաշոյ<sup>\*\*\*\*</sup> երկրում: Եւ [դա] Հայոց 36 թուականի սկիզբն էր<sup>25</sup> :

[3] Եւ Մաւնէտը Եփրատ<sup>\*\*\*\*\*</sup> գետի ափին սկիզբ դրեց Բաղդադ<sup>\*\*\*\*\*</sup> մեծ քաղաքի շինարարութեանը<sup>26</sup> :

Հակառակութիւն ընկաւ Մաւնէտի եւ Ալիի<sup>\*\*\*\*\*</sup> միջեւ. գետի մի կողմը Ալին գրաւեց, միւս կողմը՝ Մաւնէտը: Պատերազմ [սկսուեց] Ալիի եւ Մաւնէտի միջեւ, քանզի Ալին չէր չրաժարուում մարգարէութեան գործից<sup>27</sup>, որ ունէր: Եւ մտածում էր Մաւնէտին սպանելու մասին, բայց չէր կարողանում, որովհետեւ Մաւնէտի քոյր Ֆատման Ալիի կինն էր, եւ նա թոյլ չէր տալիս սպանել Մաւնէտին<sup>28</sup> :

\* Կրկնակի փակագծում դրուած հատուածը լրացուած է Մ. Դարբինեան-Մելիքեանի կողմից (История Анонимного повествователя, էջ 47)՝ ՄՄ թիւ 6961 ձեռագրից. «Համբաւէին զՄաւնէտ, թէ մարգարէ ոմն է»: Բնագրում դրա փոխարէն՝ «այս // ը(ն)դ առաջք երթալոյ Հետ ճանապարհին Մաւնէտայ» անհասկանալի եւ 6961 ձեռագրում բացակայող տողն է (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 1-2): Գուցէ, մի նախորդ գրիչ այս տողը վրիպել է վերելում եւ նկատելուց յետոյ լրացրել սխալ տեղում (բայց ինչու՞ հէնց կորսուած կտորի?): Բոլոր դէպքերում, մեզ եւս խիստ թէչական է թւում այդ տողն ընկալել եւ թարգմանել իր տեղում:

\*\* Բնագրում՝ խաբանել՝ Փ-Բ սխալագրութեամբ, որ սովորական է հեղինակի կամ գրչի համար:

\*\*\* Բնագրում այսպէս է (այլ ո՛չ Ֆաթմայ) նաեւ ստորեւ:

\*\*\*\* Բնագրում այստեղ (եւ յետոյ՝ աւելի յաճախ)՝ Բարեւաշոց:

\*\*\*\*\* Բնագրում՝ Եփրատ՝ Փ-Բ սովորական սխալագրութեամբ:

\*\*\*\*\* Բնագրում այստեղ՝ Պաղտաղ, բայց հետագայում գերազանցապէս՝ Բաղտաղ, որը եւ միօրինակութեան համար պահում ենք թարգմանութեան մէջ (այսօր աւելի սովորական Բաղդադ ձեւը հանդիպում է երկու-երեք պատահական դէպքերում):

\*\*\*\*\* Վերելում երկիցս՝ Ալէ, բայց այսուհետեւ՝ այսպէս:

[Բ.] ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՈՌՈՍՄՈՅ<sup>29</sup> ԹԱԳԱՒՈՐ ՍՈՒՐԻԿԻ<sup>30</sup> ՄԱՍԻՆ<sup>\*</sup>

[4] Դրանից յետոյ մեռաւ Հոռոմոյ<sup>\*\*</sup> Մուրիկ արքան: Սա [կին] էր աւել Պարսից արքայ Քասրէի<sup>\*\*\*</sup> [Խոսրովի] քոյր Չաքրանին<sup>31</sup>: Իսկ Մուրիկի սպանութիւնն այսպէս եղաւ:

Երբ Մուրիկը թագաւոր դարձաւ Կոստանդինուպոլսում<sup>\*\*\*\*</sup>, մի մարդ ուզարկեց իր երկիրը՝ Հայաստան, Անի քաղաքը, [[իր չօր մօտ]]<sup>\*\*\*\*\*</sup>. Իսկ նա պարտիզպան էր: Այդ Հոռոմէացի մարդը եկաւ եւ գտաւ Մուրիկի չօրը՝ Դաւթին<sup>\*\*\*\*\*</sup>, եւ կանչելով նրան իր մօտ՝ ասաց նրան. «Քո որդի Մուրիկը քեզ կանչում է [իր մօտ], որովհետեւ դարձել է Հոռոմոյ թագաւոր»: Երբ [դա] լսեց Դաւթինը՝ Մուրիկի Հայրը, ծիծաղեց ու ասաց. «Չեմ կարող գալ [աւելի] լաւ եմ Համարում իմ փոքրիկ բանջարանոցը [պահէզը], քան Հոռոմոյ թագաւորութիւնը, քանզի օտարական մարդուն ո՞վ թոյլ կը տայ թագաւորել»:

Եւ բերեց Հայ դրեց նրա առջեւ, իսկ ինքը մտաւ իր պարտէզը եւ սկսեց ամենամեծ բանջարներն արմատախիլ անել, իսկ մանրիկ տունկերը անկել մեծերի տեղը: Այս բանը տեսնելով Հոռոմէացի մարդն ասաց. «Այդ ի՞նչ ես անում»: Իսկ նա ասաց. «Այսպէ՛ս պէտք է լինի»:

Եւ երբ այդ մարդը վերադարձաւ ու եկաւ Մուրիկ արքայի մօտ առանց նրա չօրը բերելու, նաեւ պատմեց արքային, թէ ինչ էր անում՝ նրա Հայրը: Եւ դրանից յետոյ արքան գլխի ընկաւ ու ասաց, թէ՛ «Իրանով իմ մեծամեծերի

\* Ձեռագրում սա գրուած է կարմրով՝ հէնց իբրեւ գլխագիր:

\*\* Բնագրում՝ Հրոմոյ՝ Ռ-Ր սխալագրութեամբ (նաեւ ստորեւ՝ Հոռոմոյ), որ սովորական է հեղինակի կամ գրչի համար:

\*\*\* Բնագրում այստեղ՝ Գասրէ՝ Բ-Գ սխալագրութեամբ, որ սովորական է հեղինակի կամ գրչի համար (նաեւ հակառակը՝ Գ-Բ):

\*\*\*\* Այստեղ բնագրում քաղաքանունը Կոստանտինուպոլիս ձեւով է, իսկ ստորեւ բազմիցս՝ Կոստանդինուպոլիս (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 3, 5-6, 15, 16):

\*\*\*\*\* Կրկնակի փակագծում դրուած՝ ըստ մտքի պակասող այս բառերն («առ Հայրն իւր») առաջարկել է լրացնել դեռեւս Մեսրոպ եպիսկոպոսը (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 3, տողատակ 7):

\*\*\*\*\* Բնագրում՝ գԴաւիդ՝ Թ-Դ սխալագրութեամբ, որ սովորական է հեղինակի կամ գրչի համար:

մասին է խրատ ստեղծին՝: Եւ ըսնեց Յունաց աշխարհի բոլոր մեծամեծե-  
րին, ոմանց ծովը նեաեց, ոմանց էլ՝ արգելափակեց արքորներում: Իսկ աւելի  
փոքր մարդկանց պատրիկութեան ու զօրավարութեան աստիճան [պատիւ]  
սուեց եւ ռամիկների ու զօրավարների զօրք ստեղծեց: Եւ նրա թագա-  
ւորութիւնը յոյժ Հասասաուն գարձաւ:

[5] <sup>32</sup> Եւ ամբողջ Հուսոնց երկիրը գրաւելով ու անցնելով Հարաւի կող-  
մերը՝ ըսնի կերպով նուաճեց Եգիպտոսը: Եւ գալով Երուսաղէմ ու շուրջա-  
նակի պարսպապատելով [այն]՝ նաեւ վերաշինեց եկեղեցիները, որ աւերել էր  
Հուսոնց անօրէն կայսր Վաղէսը: Ապա ձեռքը մեկնեց արեւելք ու գրաւեց  
Հայոց աշխարհը, Աղուանքը եւ [[Վիրքն ու Լազ[ի]կաց աշխարհը, որ է]] <sup>33</sup>  
Ափսապքը <sup>34</sup>: [Այսպէս] ըսնացաւ արեւելքի, արեւմուտքի ու Հարաւի վրայ:

Եւ Արեւելքի վրայ նշանակեց Հայաստանից Մախազ անունով մէկին, որ  
մի շար ու անօրէն մարդ էր: Սա շինեց ամբողջ <sup>35</sup> Ախուրեան \* գետի ափին եւ  
կոչեց Մախազի բերդ <sup>36</sup>: Եւ առՀասարակ խաղա[ղե]ցրեց \*\* ամբողջ երկիրը,  
որի առթիւ ոմանք առակարանելով ասում են. «Ի՞նչ է, Մուրիկի ժամանակն  
է, որ անհուգ նստել է» <sup>37</sup>:

[6] Եւ արեւելքի [Մուրիկը] Հուսոնց թագաւորութեանը քսանվեց տա-  
րի <sup>38</sup>: Եւ Հարկի տակ գնելով Պարսից Քասրէ արքային՝ նաեւ նրա քրոջը  
կնութեան առաւ ու բերեց նրան Կոստանդինուպոլիս: Եւ [նա] ծննդաբերեց  
երեք սրգի եւ մի գուսար:

Սրանից յետոյ <sup>\*\*\*</sup> [ասենք, որ] արքորանքի մէջ մի մարդ կար, Կարամալի  
[Մարայի] <sup>39</sup> Հանդէպ գտնուող մի կղզում: Սա գաղանի [մարդ] ուղարկեց  
Կոստանդինուպոլիս, միաբանեց պալատական մարդկանց, եւ սպանեցին  
ճաշի ժամին սեղան նստած Մուրիկ արքային: Եւ [մարդ] ուղարկեցին, Հա-

\* Մեր ձեռագրում՝ Խորիան: Իսկ այսպէս՝ «Արարատ»-ում է (տե՛ս Պատմութիւն  
Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 4, տողատակ 22):

\*\* Ձեռագրում՝ խաղացոյց փխ խաղաղացոյց (վերականգնումը կատարել է Մես-  
րոպ եպիսկոպոսը, տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 5, տողա-  
տակ 1):

\*\*\* Բնագրում՝ ետ այսորիկ՝ առանց ի-ի սխալագրութեամբ, որ սովորական է Հե-  
ղինակի կամ գրչի Համար (ի-ի բացթողում է նկատուում բոլոր զիրքերում):

նեցին Հերակլէսին ու նրան թագաւոր գարձին <sup>40</sup>: Սա ըսնեց սպանեց Մու-  
րիկի սրգիներին, իսկ Մուրիկի կինը վեր կացաւ գնաց Պարսից աշխարհը, իր  
Քասրէ [[ եղբօր մօտ եւ պատմեց այն աղետալից անցքերը, որ կատարուե-  
ցին Հուսոնցի կողմից <sup>41</sup>:

Իսկ Խոսրով [Քասրէ] արքան վրէժխնդիր եղաւ Մարիկի [Մուրիկի]  
արեան Համար եւ իր Խոսեան զօրավարին մեծ զօրքով ու փղերով ուղարկեց  
Յունաց աշխարհը [Բիւզանդիա] եւ աւերեց ամբողջ Հուսոնց երկիրը: [Նա]  
ջանաց մտնել նաեւ գերապանձ Կոստանդինուպոլիս քաղաքը, բայց չկարո-  
ղացաւ, որովհետեւ ծովն էր դիմացը: Սակայն Յունաց [երկրից] յետ գարձաւ  
Ասորիք՝ Համայ տունը [երկիրը] եւ Պաղեսաին, եւ մտնելով Երուսաղէմ  
սուրբ քաղաքը՝ աւերեց ու Հիմնայատակ կործանեց [այն], եպիսկոպոսներին  
ու քահանաներին սրի քաշեց եւ ամբողջ քաղաքը սրով ոչնչացրեց: Եւ [աւա-  
րի] առաւ տերունական խաչն ու եկեղեցիների միւս աստուածը՝ նկալ սրբու-  
թիւնները, նաեւ բազմաթուփ մարդկանց՝ մանուկների եւ կանանց,]] եւ  
սրախողխող արեց [ոմանց], իսկ շատ շատերին գերեզմարեց Պարսից աշ-  
խարհը:

Եւ յաջորդ տարին էլ գալով նոյնը կատարեց Յունաց աշխարհում եւ  
յետ գարձաւ: Նաեւ վեց տարի անց եկաւ ու նոյնն արեց. եւ Յունաց երկիրը  
գատարկեց մարդուց ու անասնից, որովհետեւ վերացան [չէին ճար-  
ուում] մարդկանց եւ անասունների ապրուստն [ու] կերը:

\* Քասրէ բառից յետոյ մեր ձեռագրում մօտ տասը տողի կորուստ կայ (մինչեւ  
ստորեւ՝ «եւ սրախողխող» բառերը): Բնագրի պակասը լրացուած է արդէն  
1921 թ. տպագրում՝ յղելով «Սոփերք, 2, 89-90 Պատմ. Ներս. եւ էջ 62»  
(տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 5-6, տողատակ 15): Յաջոր-  
դող 12 տողը թարգմանել ենք ըստ գրա: Ռուսերէնի թարգմանիչ Մ. Դարբի-  
նեան-Մելիքեանը բերում է նաեւ ՄՄ թիւ 8100 ձեռագրի Համապատասխան  
Հատուածը (թ. 225ա-բ), որտեղ արքայից արքայի մասին կայ նշում. «Սոս-  
րով արքայն Պարսից, որ մականունն Քասրէ կոչեն» (տե՛ս История Аноним-  
ного повествователя, էջ 211, ծնթ. 29):



[Գ.] ՅՈՒՆԱՅ ՀԵՐԱԿԼԵՍ ԹԱԳԱՌՈՐԻ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ\*

[7.] Ապա Յունաց Հերակլ<sup>\*\*</sup> արքան միաբանեց բոլոր Փրանկաց<sup>42</sup>, Յունաց, Մեծ Հայքի եւ Ափսաղաց երկրները, եւ ճանապարհ ընկնելով դէպի արեւելք՝ եկաւ Հասաւ Թէոդոս[սիո]պոլիս<sup>43</sup>, որ Կարին քաղաքն է: Եւ տեսնելով, որ քաղաքը Հիմքից բանդուած է, կամեցաւ [վերա]շինել այն:

Նա տարակուսանքի մէջ էր Քրիստոսի խաշի Համար, որովհետեւ չգիտէր, թէ որտեղ գտնի այն: Եւ նրան մօտեցաւ նախարարներից մի մարդ, որի անունն էր Կոստանդին, եւ ասաց. «Եթէ կամենում ես, արքա՛յ, ես կը տեղեկանամ կը գտնեմ Քրիստոսի խաշը»: Իսկ Հերակլ արքան ասում է. «Եթէ Հնարաւոր է, ջանի՛ր [անել], ինչ որ ասում ես»:

[8.] Եւ ապա այդ մարդը պատրաստեց ջորիներ, մեծ քանակութեամբ գանձեր ու շքեղ Հագուստներ, թանկագին քարեր<sup>\*\*\*</sup> եւ գնաց Հասաւ Պարսից աշխարհի Գանձակ Շահաստան քաղաքը<sup>44</sup>, որ Ոսկե քաղաք են անուանում, որը Թաւրեթն է<sup>45</sup>: Քաղաքացիները լսեցին եւ ասացին. «Բարի եղաւ մեզ Համար այս օրը, որովհետեւ ինչ որ մեր սրտերին ու աչքերին ցանկալի էր, այս Հոռոմայեցի<sup>\*\*\*\*</sup> [Հոռոմ] վաճառականի մօտ կայ»:

Լսեց նաեւ Քասրե արքան եւ կանչեց վաճառական մարդուն, Հարցրեց նրան ու ասաց. «Ո՞ր երկրից ես»: Իսկ նա ասաց. «Յունաց աշխարհից»: Եւ արքան Հարցրեց «Պիտանի վաճառելու [ապրանք] ունե՞ս»: Իսկ նա ասաց. «Այո՛, արքա՛յ, եւ շափազանց պիտանի. շքեղ Հագուստներ ունեմ ինձ մօտ, ոսկեղէն անօթներ եւ թանկագին քարեր»: Ու բերեց դրեց արքայի առջեւ: Եւ

\* Ձեռագրում սա գրուած է կարմրով՝ հէնց իբրեւ գլխագիր:

\*\* Ձեռագրում այստեղ՝ Հերակլ (հեղինակի կամ գրչի համար սովորական Բ-Ռ սխալագրութեամբ): Բայց վերնագրում Հերակլէս է, իսկ ստորեւ՝ Հերակլ եւ Հերակլէս:

\*\*\* Ձեռագիրն ունի միայն «հանդերձս պատուականս», իսկ «Արարատ»-ի (Ճառընտիրների եւ Ոսկեփորիկների) բնագիրը՝ «հանդերձս պայծառս եւ ահանս պատուականս» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 7, տողատակ 2): Թարգմանել ենք վերջիներ:

\*\*\*\* Ըստ բնագրի. «Արարատ»-ում՝ Հոռոմոց (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 7, տողատակ 7):

արքան Հաւանեց ու գնեց Հագուստներից, ոսկե անօթներից եւ թանկագին քարերից: Եւ տուեց իր գնածի արժէքը, որչափ որ [վաճառականն] ուզեց:

[9.] Եւ վաճառականի Համբար տարածուեց ամբողջ քաղաքում: Բոլորը սիրով գալիս էին վաճառականի մօտ, իսկ նա ջանում էւ Հնար էր փնտրում՝ գտնելու Քրիստոսի սուրբ նշանի տեղը, որովհետեւ այդ էր Պարսից մօտ գալու նրա նպատակը, որպէսզի գտնի, թէ ուր է թանկագին խաշափայտը:

Մի պատուարժան մարդ կար Քասրեի արքունիքում, որ թագաւորի բարեկամն էր: Սա եւս եկաւ Հոռոմայեցի վաճառականի մօտ ու շքեղ Հանդերձներ, թանկագին քարեր եւ ոսկե անօթներ գնեց նրանից: Նա [վաճառականը] ճանաչեց այդ մարդու բարեմտութիւնը ու եղաւ նրան սիրելի եւ բարեկամ: Եւ տուեց ոսկեթել Հագուստներ, ոսկեղէն անօթներ ու թանկագին քարեր, եւ նրանք դարձան միմեանց մտերիմ:

Այդ երեւելի մարդը գնում գալիս էր Հոռոմայեցի վաճառականի մօտ, եւ մի օր ասում է նրան. «Վաճառականի օրեր ես քեզ մօտ եմ գալիս, մի անգամ էլ դու եկ իմ տունը, որպէսզի Հատուցեմ քեզ քո մեծ ծախսերի դիմաց»: «Սիրով կը գամ»: Եւ մի օր նա ուղարկեց իր ծառաներին՝ վաճառականին իր տուն հրաւիրելու, ու [վաճառականը] եկաւ: Պատրաստեց նրա Համար շքեղ սեղան եւ ճաշ գանազան խորտիկներով<sup>46</sup>: Իսկ նա միայն Հաց էր վերցնում ուտում: Այդ պարսիկ մարդը Հարցրեց նրան. «Ինչո՞ւ չես ուտում»: Իսկ նա ասաց. «Վաճառք տարի է, որ իմ բերանը միս կամ որեւէ փափուկ կերակուր չի մտել»: Եւ այդ պարսիկ մարդը Հարցնում է. «Ինչո՞ւ եւ ի՞նչ պատճառով չես ուտում»: Հոռոմայեցի վաճառականն ասում է.

«Որովհետեւ ուխտ եմ արել, որ կ'երկրպագեմ Պարսից զօրքի կողմից Երուսաղէմ քաղաքից դերեվարուած սուրբ փայտին եւ ապա կը ճաշակեմ միս կամ այլ փափուկ կերակուր: Լսի՛ր ինձ, ինչ որ ասում եմ քեզ, [ա՛յ] թէ Հնարաւոր լինէր՝ փայտե խաշը քեզ մօտ բերէիր»: «Բայց որեւէ մէկի ձեռքը չի Հասնի այն տեղին, որտեղ գտնուում է ձեր խաշափայտը: Որովհետեւ դա մեր թագաւոր Քասրեի սենեակն է, [[ քանզի [այդ խաշափայտը] մեծ պատուով

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած յաջորդ 6-7 տողերի բնագիրը ձեռագրում բացակայում է՝ անկասկած, ընդօրինակող գրչի պարզ վրիպման հետեւանքով, որի շփոթութեան պատճառ է դարձել մայր օրինակում Քասրե

դրուած է Խոսրով [Քասրէ] արքայի սենեակում, եւ խոնկերով ու մոմերով խաչի սպասաւորութեան պաշտամունքը [ծառայութիւնն] Էն անում Երուսաղէմի եպիսկոպոս Չաքարիան եւ երկու այլ քաւաններ, որոնք խաչի Հեա եկան Երուսաղէմից: Եւ անգագար պաշտամունք Էն կատարում մեր արքայի Հրամանով: «Որովհետեւ քրիստոնեաների Աստուածն է», - ասում է Խոսրով արքան]: Բայց եթէ ցանկանում էս, քեզ կը տանեմ այն տան մօտ, որտեղ գտնուում է խաչանշանը»:

Իսկ նա [վաճառականը] շնորհակալ եղաւ նրան: Երկուսն էլ վեր կացան եկան Պարսից արքայի ապարանքի մօտ, եւ [պարսիկը] ցոյց տալով տունը՝ ասում է. «Այստեղ է ձեր խաչափայտը»: Եւ նա [վաճառականը] ծունկի իջներով երկրպագեց [[տուրք խաչին]]\* տան առջեւ: Ապա գնացին իրենց օթեւանները: Եւ նա [վաճառականը] շտապ կերպով [մարդ] ուղարկեց Հերակլէս արքայի մօտ:

[10] Իսկ Հերակլէս թագաւորը բանակ էր գրել Կարնոյ քաղաքում եւ սկսել էր այն պարսպի կառուցումը, որ քանդել էր Պարսից Խորիան<sup>47</sup> զօրավարը: Վաճառականի կողմից ուղարկուած մարդը Հասաւ Հերակլ արքայի մօտ, եւ նա միացրեց Հայոց, Վրաց եւ Աղուանից, Միջագետքի, Յունաց եւ Փրանկաց\*\* զօրքերն ու առաջ շարժուեց գնաց Վասպուրական<sup>48</sup>:

Լսելով այդ մասին՝ Սինեայ<sup>49</sup> տիկինը, որի անունը Բուրեղ էր, ընդառաջ եկաւ Հերակլ արքային եւ բերեց ոսկէ թանկարժէք իրեր [գանձեր], թանկագին Հագուստներ, բազմաթիւ ձիեր, ջորիներ\*\*\*, Հազար [Ռ] պատերազմական զրաւ, շորս Հարիւր [ԳՃ] ոսկեկու\*\*\*\* զենքեր եւ Հազար

(կամ Խոսրով) բառի կրկնուած լինելը (պակասող բնագիրը Ոսկեփորիկից լրացուած տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 9, տողատակ 6):

\* «Սուրբ խաչին» բառերը չկան ձեռագրում եւ լրացուած են Ոսկեփորիկից (տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 9, տողատակ 9):

\*\* Բնագրում՝ զՅոսանկաց, որը ձառընտիրներում եւ Ոսկեփորիկում այստեղ եւս չկայ («միարանեալ գումարեաց զամենայն զօրս իւր՝ զՅունաց եւ զՀռոմէացւոց, զՄիջագետաց եւ զՀայոց, զՎրաց եւ զԱղուանից»): Տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 9, տողատակ 17-18: Հմմտ. վերելում, ծնթ. 42:

\*\*\* Բնագրում այստեղ՝ զշորիս՝ խօսուածքային Զ-Չ սխալագրութեամբ. նոյնը շատ անգամ կայ եւ յետոյ, թէպէտ վերելում եւ ստորեւ ունենք նաեւ՝ ջորի:

\*\*\*\* Բնագրում՝ զէնս ոսկակուրս՝ Ռ-Ր սովորական սխալագրութեամբ:

[Ռ] սաղաւարտ: Իր Հեա բերեց նաեւ [[երեք Հազար]]\* սաղմիկ մարդկանց: Եւ նա գեղեցիկ ու չափազանց իմաստուն կին էր եւ Հաճութիւն պատճառեց Հերակլ արքային:

Հարժուեց եկաւ Հասաւ [Հերակլը] Պարսից աշխարհը, եւ նրա Հեա՝ տասը բիւր\*\* սաղմիկ այրեր: Քասրէ արքան լսեց Հոռոմոց արքայի գալու մասին եւ կազմեց իր զօրքն ու ելաւ նրա դէմ պատերազմի: Եւ բանակ դրեց Թարեթի\*\*\* գաշտում, իսկ Հոռոմոց զօրքերը յարձակուեցին նրա վրայ եւ բռնեցին Պարսից Քասրէ արքային ու շլթայեցին երկաթէ կապանքներով: Եւ գնացին այն քաղաքը, որտեղ նստում էր Քասրէն ու շրջապատեցին այն: Եւ երեք օրում գրաւեցին քաղաքն ու քանդեցին [նրա] ամրոցը [միջնաբերդը]\*\*\*\*: Եւ բացելով [նրա] գանձատունը՝ [Հերակլն] այնտեղ գտաւ Քրիստոսի փրկական խաչափայտն<sup>50</sup> ու մեծ ուրախութիւն ապրեց: Եւ բազում աւար առնելով՝ նաեւ գերեզարեց Պարսից սղջ երկիրն ու անապատ դարձրեց՝ [թափուր թաղնելով] մարդուց ու անասունից, եւ քչեց գերութիւն:

[[Եւ գտնելով Քրիստոսի փրկական խաչը՝ ամբողջ զօրքը Հաւաքուեց, երկրպագեց նրան: Իսկ թագաւորն ինքն էր խոնկը մատուցում ու օրհնում Ասածուն: Եւ մեծ ուրախութեամբ մեծ տօն[ախմբութիւն] կատարեցին այդ օրը, որ Սաւմի ամսի տասն [Ժ]<sup>51</sup> էր]]\*\*\*\*\*:

\* Այս թիւը տալիս է Ոսկեփորիկը՝ «այս պատերազմողս ԳՌ» փխն մեր ձեռագրի՝ «արս պատերազմի» (տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 10, տողատակ 1-3):

\*\* Այս թուի փոխարէն («բիւրս տասն [=100 Հազար] արանց պատերազմողաց»)՝ ձառընտիրներում (ըստ «Արարատ»-ի բնագրի) առկայ է «զաւրք Հեծելոցն՝ բիւրք ծ [=1 միլիոն]» (տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 10, տողատակ 6):

\*\*\* Բնագրում այստեղ՝ Թալիթայ (Հմմտ. վերելում, ծնթ. 44-45):

\*\*\*\* Մեր ձեռագրում եղակիով է. «քակեցին զամրոց»: Իսկ Ոսկեփորիկն ունի՝ զամուրսն, ուրեմն՝ «քանդեցին ամրութիւնները» (տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 10, տողատակ 11):

\*\*\*\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին 4 տողերի բնագիրը ձեռագրում բացակայում է՝ անկասկած, նոյն անփոյթ գրչի պարզ վրիպման Հեաեւանքով, որի շփոթութեան պատճառ է դարձել մայր օրինակում «ուրախ եղեւ յոյժ» եւ «Սաւմի ամսոյ Ժ» բառախմբերի վերջում ՈՅԺ տառաչարի կրկնուած լինելը: Պակասող բնագիրը Ոսկեփորիկից եւ «Արարատ»-ից (ըստ ձառընտիրների) լրացուած տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, էջ 10, տողատակ 18:

Եւ շարժուեց գնաց [Հերակլը], բանակ գրեց\* Չարեանդ<sup>52</sup> գաւառում:  
Եւ ազաշեց Քասրէն Հերակլ արքային, որպէսզի խաղաղութեան Համար  
իրեն արձակի կապանքներից:

Եւ այդտեղ գազար առան 30 [L] օր, ու [Հերակլը] շինել սուեց մի շատ  
փոքրիկ եկեղեցի: Եւ նրա մէջ խաչ կանգնեցրին, ու նրա վրայ [Հերակլը]  
գրեց պատերազմի բոլոր իրագործութիւններն ու տարեթիւր<sup>53</sup>:

Եւ Հուռմնց Հերակլ արքան ու Պարսից արքայ Քասրէն միարանու-  
թեան [Հաշտութեան] թուղթ Հրապարակեցին [բայ թուղթին]: Եւ այդտեղ  
սահման գրեցին, իսկ տեղն անուանակոչեցին Հրամանսարայ\*\* : Ապա Հե-  
րակլ արքան Հրաման սուեց իր զօրքերին, ու այդտեղ Հող կուտեցին, [[Իւրա-  
քանչիւր [պիտուոր] մի ձիառուարակ]]\*\*\* : Եւ բարձր Հողարբուր կառուցեցին,  
ու [Հերակլը] սրա վրայ [ազաս] արձակեց Պարսից արքային: [[Սակայն սա  
[Խոսրովը] նրա խօսքով շարժուեց, որի պատճառով Հերակլը գարձեալ  
բունեց նրան, սպանեց եւ վերջ գրեց Պարսից թագաւորութեանը: Ապա ինքը  
յետ գարձաւ՝ Հուռմ [գնալու]՝ իր իր առջեւից տանելով սուրբ խաչը]]\*\*\*\* :

[11.] Վերագործաւ [Հերակլը] Հայոց երկիրն ու եկաւ բանակ գրեց  
[մեր] երկրում, ձարմանացի\*\*\*\*\* գաշտում՝ Սանաարուկի քաղաքի մօտ, որ  
Հաւարշանն [է]<sup>54</sup>:

\* Բնագրում՝ բնակեցաւ (այդպէս՝ նաեւ յետոյ, որ չենք ծանօթագրում):

\*\* Ոսկեփորիկում այս անունը Հրամանս արարաք ձեւով է, իսկ Ճառնտիրնե-  
րում՝ Հրամանսարակ (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 11, տողա-  
տակ 6):

\*\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին բառերը ձեռագրում  
բացակայում են. լրացնում ենք Ոսկեփորիկից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ  
Բագրատունւոյ, էջ 11, տողատակ 7):

\*\*\*\* Կրկնակի փակագծերով վերջին երեք տողերը ձեռագրում կորսուած են.  
լրացնում ենք Ոսկեփորիկից եւ Ճառնտիրնեից: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ  
Բագրատունւոյ, էջ 11, տողատակ 8 (վրիպակով՝ 7): Կորուստի պատճառը,  
թերեւս, եղել է գրչի անուշադրութիւնը, որին շփոթեցրել է առաջին նախա-  
դասութեան դէպքում՝ նրանում եւ նախորդի վերջում կրկնուած Պարսից  
բառը («արձակեաց զարքայն Պարսից ... եբարձ զթագաւորութիւն Պարսից»,  
իսկ երկրորդի դէպքում՝ նրանում եւ յաջորդի սկզբում դարձաւ բառի կրկ-  
նուած լինելը («Եւ ինքն դարձաւ ի Հոռմս ... Իարձաւ յերկիրն Հայոց»):

\*\*\*\*\* ՄՄ թիւ 1775 ձեռագրում առկայ է՝ Գերատայ փխն. Մարմանացոյ, որը  
նոյնքան անհասկանալի է: Իսկ Ճառնտիրնեիցում («Արարատ»-ում) զբանց

Եւ Սիւնեաց տիկինն ընդառաջ եկաւ Հերակլ արքային ու բերեց աւելի  
շատ նուէրներ, քան առաջին անգամ: Եւ Հերակլ արքան ասում է. «Ո՛վ կին,  
դու աշագին շարշարուեցիր, ասա՛ ինձ, փոխարէնն ի՞նչ անեմ՝ քեզ Համար,  
ասա՛ ինձ»: Սիւնիքի տիկինն ասում է. «Ո՛վ արքայ, քեզինից ինձ ոչ մի բան  
պէտք չէ»: Հերակլ արքան նրան ասում է. «Որչա՛ փ՛ մեծ ես դու, որ քո շար-  
շարանքը ես տանեմ անձամբ: Խնդրի՛ր ինձնից երկիր կամ մեծատունիկ ա-  
մուսին, կը տամ՝ քեզ [[գաւառ, քաղաք]] եւ կամ մեծաքանակ ոսկու [[եւ ար-  
ծաթի]] գանձեր, [[ձիեր, ջորիներ]]\*\* »: Տիկինն ասում է. «Ինձ ոչինչ պէտք չէ  
քո ձեռքից, արքա՛յ, բայց եթէ կամենում ես ինձ պարգևներ տալ [ապա]  
նախ եւ առաջ պիտի քեզ ասեմ, թէ ում նմանեցրի ինձ կամ՝ քեզ»: Արքան ա-  
սում է. «Ասա՛\*\*\*, որ լսեմ»: Տիկինն ասում է. «Դու նման ես ճանապարհորդ  
մարդու, իսկ ես նման եմ՝ Հիւրընկալ [ասպնջական] օթեւանի: Ով գալիս է  
ճանապարհից, նա ընդառաջ գնալով ընդունում է նրան եւ նրա առջեւ սե-  
ղան է դնում ու իր ողջ կարողութեան շափով կերակրում՝ ճանապարհորդ  
մարդուն. իսկ սա իր բեռնարարձ ունեցուածքից է [մի բան] Հանում ու տալիս  
նրան, ով Հիւրընկալէ է: Արդ՝ տեր իմ՝ արքա՛յ, եթէ քո սնեցած պարգևներ-  
ից մի մասունք կը տաս՝ [տո՛ւր], իսկ եթէ ոչ՝ ուրիշ բան պէտք չէ»:

Արքան Հրաժարուելով ասում է. «Չեմ կարող տալ քեզ, ինչ որ խնդրում  
ես»: Եւ տիկինը վեր կացաւ\*\*\*\*, խոնարհուեց արքային ու առաջանալով  
գնաց իր ճանապարհը: Իսկ Հերակլ արքան ասաց. «Ի՞նչ անեմ Սիւնեաց  
բարեպաշտ տունի եւ Հաւատարիմ կնոջ Համար, քանզի նա բազմաշատ

փոխարէն գրուած է ուղղակի՝ «գաշտին Արտագու» (տե՛ս Պատմութիւն  
Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 11, տողատակ 10):

\* Բնագրի այս հարցականը, գուցէ, աւելորդ է. նախադասութեան միտքն է՝  
«դու անչափ մեծ ես, եւ քո շարշարանքը ես իմ անձով չեմ կարող կրել»:

\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած այս երեք խումբ բառերը ձեռա-  
գրում բացակայում են. լրացնում ենք Ճառնտիրնեից՝ ըստ «Արարատ»-  
ում հրատարակուած բնագրի (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ  
11, տողատակ 20):

\*\*\* Ոսկեփորիկն այստեղ ունի լրացում. «Ասա՛, տիկին, մա՛յր իմ» (տե՛ս Պատ-  
մութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 11, տողատակ 23):

\*\*\*\* Բնագրում՝ «Եւ արեւ տիկինն» («արեգակ», գուցէ, պայմանականօրէն՝ «գե-  
ղեցի՛կ»): Սակայն հրատարակիչն առաջարկում է՝ «չարեաւ» սրբագրումը  
(Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 12, տողատակ 9), որով եւ թարգ-  
մանում ենք՝ «վեր կացաւ»: Ճառնտիրնեից այստեղ լրացնում են (ըստ  
«Արարատ»-ում հրատարակուածի). «յաղաւթս եկաց առաջի սուրբ խաչին»:

ծախսեր արեց իմ առջեւ\*, բայց արտում ու դատարկ դարձաւ գնաց. շարիք գործեցի»:

[12] Եւ այնտեղ էր Յով/ւ/ւան Մա/ւ/ւրապոստոսի<sup>55</sup> [մի] իմաստասէր<sup>\*\*</sup> մարդ, որին արքան սիրում էր՝ նրա սուրբ լինելու համար: Յուզանն<sup>\*\*\*</sup> ասաց. «Տէր իմ արքայ, Հապա ինչո՞ւ այժմ՝ չկատարեցիր նրա խնդրանքը»: Իսկ Հերակլ արքան պատմէ. «Ինչպէ՞ս կը կարողանամ սուր մօտեցնել Քրիստոսի կենսաբեր խաչափայտին, երբ այնքան շարշարանքով կարողացայ Պարսից գերութիւնից ազատել այն»: Յուզանն ասում է. «Ո՞վ արքայ, լսի՞ր ինձ ինչ որ կ'ասեմ: Սուրբ գի՛ր խաչի պաշարանի մէջ եւ Սիւնեաց տիկնոջն ասա՛, թող նա աղօթք անի. եւ եթէ սուրբ նշանը կամենայ, Սուրբ Հոգին կը տայ նրան իր խնդրածը»:

Հերակլ արքան լսեց եւ [մարդ] ուղարկեց յետ դարձրեց Սիւնեաց տիկնոջն ու ասաց նրան. «Ո՞վ կին, դու մեծ Հոգս դարձար ինձ [Համար]: Բայց այժմ սուրբ կը գնենք խաչի պաշարանի մէջ, իսկ դու վերցրու քո եպիսկոպոսներին ու քաւանաներին եւ աղօթք արա՛. եւ եթէ քո Տէր Աստուծոն Հաճոյ թուայ, մասունք կը տայ քեզ իր խաչափայտից՝ ըստ [[քո]]<sup>\*\*\*\*</sup> Հաւատքի [չափի]»:

Եւ տիկինը խոնարհուեց արքային: Այդժամ Հրամայեց [Հերակլը] բերել խաչանշանը: Եւ բացելով թանկագին ակներով ընդերուզուած ոսկէ արկղը, որի մէջ գտնուում էր սուրբ [խաչա]փայտը, արքան սուրբ գրեց նրա մէջ եւ կնքեց այն իր մատանիով<sup>\*\*\*\*\*</sup>:

Եւ երբ արեգակը մայր մտաւ, սուրբ նշանի առջեւ եկան տասներկու եպիսկոպոսներ, Յով/ւ/ւան Մաւրապոստոսի ու բազմաթիւ քաւանաներ եւ ամբողջ գիշերը Հսկում կատարեցին մեծ շարշարանքով, [[աղաչանքներով,

\* Բնագրում «ի դրանն իմ»:

\*\* Բնագրում «փիլիսոփայ»:

\*\*\* Ձեռագրում այստեղ եւ ստորեւ՝ «Ոհան»:

\*\*\*\* Բո ղերանունն ունի միայն Ճառքնտիրներից «Արարատ»-ում հրատարակուած բնագիրը (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 13, տողատակ 3):

\*\*\*\*\* Ոսկեփորկի բնագրում՝ «ունական [°] մատանեաւ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 13, տողատակ 7):

սաղմոսներով եւ օրհնութեամբ]]<sup>\*</sup> մինչեւ առաւօա: Որից յետոյ Հերակլ թագաւորը [եկաւ], եւ բաց անելով խաչի պաշարանը՝ տեսաւ, որ խաչից երկու մասունքներ կարուեցին, ու ապշեց [զարմացաւ] կնոջ Հաւատքի վրայ: Եւ ասաց արքան. «Ո՞վ դու կին, մեծ է քո Հաւատքը, եւ երանի է սուրբ Գրիգոր [ուսաւորչի ժողովրդին [վիճակին]]»:

[13] Եւ տիկինն առաւ խաչանշանը, որ նրան շնորհուեց Աստուծոյ, ու առաջ ընկաւ գնալու իր տունը: Եւ երբ գնաց իր ճանապարհը, անցաւ նաեւ այն դաշտի միջով, որը Հացին<sup>56</sup> են կոչում:

Եւ երբ դեռ իր ճանապարհն էր գնում, խաչանշանը տանող ոսկեպատ կառքի ջորին յանկարծ նստեց, ու նրան շարժելու սրեւէ Հնար չեղաւ ո՛չ եպիսկոպոսներին եւ ո՛չ քաւանաներին: Եւ ո՛չ էլ տիկինը կարողացաւ տեղից շարժուել, երբ գիրկն առաւ ոսկէ արկղը [տիկնոնը], որի մէջ դրուած էր Քրիստոսի սուրբ խաչանշանը: [Նա] լաց եղաւ յորդաճոս արտասուքով եւ ասաց. «Ո՞վ Տէր իմ, Յիսուս Քրիստո՞ս, ինչո՞ւ գրկեցիր ինձ այն սիրելի [ցանկալի] գանձից, որն ինձ աւանդեցիր, քանի որ ես ցանկանում էի տանել սա իմ Հայրերի բնակված վայրը: Սակայն նոյնապէս Գու ես Տէրը, եւ այդ [է] քո պատգամը, թէ՛ «Ուրիշները թո՛ղ վաստակեն, իսկ այլոք ուտեն, եւ այլոք՝ բնակուեն»<sup>57</sup>:

Եւ ապա եկաւ մի միայնակեաց մարդ, որ բնակուում էր լեռան վրայ<sup>58</sup>. Եւ փառով ասաց տիկնոջը. «Ո՞վ բարեպաշտուճի տիկին, Աստուած Հրամայեց, [որ] այդ սուրբ խաչն այս տեղում<sup>59</sup> բնակութիւն Հաստատի»: Եւ տիկինն սկսեց ու վանք կառուցեց սուրբ [խաչա]նշանի Համար: Նաեւ գնեց Հացին կոչուող բերդ[աւան]ը եւ Ռունգն բերդն<sup>60</sup> ու [դրանք նուէր] տուեց սուրբ նշանի վանքին, իսկ ինքը գնաց իրենց երկիրը<sup>61</sup>: [[Եւ սա Համանեցին [կարգեցին], [որ] այն օրը, երբ ջորին սուրբ նշանի կամքով նստեց, մեծաւանդէս աօն կա-

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին բառերը («պաղատանաւք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ») չկան մեր ձեռագրում, եւ լրացուած են Ոսկեփորկից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 13, տողատակ 12): Դրանք յաջորդում են «բազում աշխատութեամբ» («մեծ շարշարանքով») բառերին, որոնցից վերջինի կրկնուած վերջաւորութիւնն էլ, Հաւանաբար, եղել է անուշադիր գրչի վրիպման պատճառը:

տարեն, եւ ամեն տարի նոյնն անեն՝ խոյեր ու զտարակներ մտրթելով [չորս մասուցելով] ի պատիւ սուրբ նշանի]]<sup>\*</sup> :

[14] Իսկ Հոռոմոց արքայ Հերակին<sup>62</sup> առնելով խաչանշանը՝ եկաւ Կարնոյ քաղաքը, եւ սուրբ խաչափայտը տալով իր Կոստանդին եւ Թէոփաս<sup>\*\*</sup> որդիներին՝ ասաց. «Դուք գնացէ՛ք [[երկու Հազար Հեծեալներով սուրբ]]<sup>\*\*\*</sup> քաղաք Երուսաղէմ՝ եւ սուրբ խաչը դրէ՛ք Գողգոթայում՝<sup>63</sup> այն տեղը, ուր խաչուեց Քրիստոսը, եւ ուխտ արէ՛ք Աստծուն ու փառաւորեցէ՛ք խաչանշանը»:

Եւ երբ նրանք գնացին ու մօտեցան Երուսաղէմ քաղաքին, լսեցին, թէ Երուսաղէմը գրաւուել է ապստամբ Մաւմէաի՝ Աբդուաւազմանի<sup>\*\*\*\*</sup> որդու<sup>64</sup> կողմից: Քանզի երբ Հերակը գնաց Պարսկաստան, վեր կացան իսրայէլացի Հրեաները՝ ծերեր եւ մեծամեծեր, վերցրին Մովսէսի Օրինաց գիրքն<sup>65</sup> ու շատ ուրիշ ընծաներ եւ գնացին Բաղտափ քաղաքն ու Հանդիպեցին Մաւմէաին եւ ասացին նրան. «Քս մասին լսեցինք, որ թագաւոր ես դարձել Բաբելոնացոց երկրի վրայ. եւ արդ՝ տեղեակ եղիր, որ դու Աբրահամից ծնուած Իսմայէլի<sup>66</sup> որդին ես, իսկ մենք Իսաակի որդիներն ենք (եւ Իսաակն ու Իսմայէլը Աբրահամից ծնուած միամօր եղբայրներ էին), արդ՝ դու պէտք է տիրանաս Երուսաղէմ մեծանուն քաղաքին, իսկ ինչո՞ւ պիտի օտարները ժառանգեն»: Եւ երբ Մաւմէաը լսեց երբայեցիների խօսքը, կանչեց իր Ֆաամա քրոջը եւ իր փեսայ Ալիին ու ասաց Ալիին. «Ա՛հա այսօր ճանաչեցինք մեր Հայր Աբրահամի ժառանգութիւնը. վե՛ր կաց, ա՛ն իմ քոյր Ֆաամային ու քս ողջ բանակը, իսկ

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին 4 տողերը ձեռագրում բացակայում են՝ անկասկած, ընդօրինակող գրչի վրիպման Հետեւանքով, որի շփոթութեան պատճառ է դարձել մայր օրինակում «սուրբ նշանի» բառերի կրկնուած լինելը: Պակասը՝ լրացուած «Արարատ»-ի 1888 թ. տարեգրքից (ուր այս հատուածով աւարտուած է Ճառընտիրներից հրատարակուած բնագիրը), տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 14, տողատակ 11 (վրիպակով՝ 10):

\*\* Ձեռագրում կայսերորդիների անուններն ունեն՝ Կոստրնդից եւ Թէոդաս ձեւերը:

\*\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած բառերը («ԲՆ Հեծելաւք ի սուրբ») բացակայում են մեր ձեռագրում, եւ լրացուած են Ոսկեփորիկից. տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 14, տողատակ 17 (վրիպակով՝ 16):

\*\*\*\* Ձեռագրում այստեղ՝ Ապտրափմանայ՝ Հեղինակի կամ գրչի համար սովորական Բ-Պ, Դ-Տ եւ Ռ-Բ սխալագրութիւններով:

եւ կ'առնեմ իմ զօրքը, կը գամ՝ քեզ Հեա եւ քս թագաւորութիւնը կը Հաստատեմ նրա [Երուսաղէմի] վրայ»:

[15] Եւ վեր կացան, պատերազմի բանակ կազմեցին ու եկան Երուսաղէմ, եւ մանելով [քաղաք] բանակեցին այնտեղ: Իսկ երբ Հերակը թագաւորի որդիները Հասան Ռամլայ<sup>67</sup> եւ լսեցին, որ Մաւմէաը զօրքերով Երուսաղէմում է<sup>68</sup>, խաչով Հանդերձ շուռ եկան փախան Անտիոք<sup>69</sup>: Եւ Մաւմէան ու Ալին լսեցին [դա], ու Հետապնդելով նրանց՝ փախստական դարձրին: Իսկ նրանք գիշեր ու ցերեկ գնացին, մինչեւ որ Հասան Կոստանդինուպոլիս<sup>\*</sup> ծովեկրը, եւ քաղաք մանելով [իրենց] ապաւնով զգացին:

Եւ արդ՝ ինչո՞ւ էին Կոստանդինն ու Թէոփասը Կոստանդինուպոլիս փախչում՝ խաչն էլ իրենց Հեա [վերցրած]: Որովհետեւ խաչն էր ուղղութիւն վերցրել՝ Կոստանդինուպոլիս գնալու, տեղի ամրութեան պատճառով:

Ապա Մաւմէաը յետ դարձաւ, կիլիկիացիներից առաւ Դարսիսը [Տարսոնը]<sup>70</sup> եւ Ատանան<sup>71</sup>, Մսիսը<sup>72</sup> եւ Ասիան<sup>73</sup>, Անտիոքը եւ Մելաենին<sup>74</sup>: Եւ ապա գնաց Եգիպտացոց երկիրը՝ Աղեքսանդրիա<sup>\*\*</sup> քաղաքը, եւ անուանեց այն [Եգիպտոսը] Մըսր<sup>75</sup>, որ թարգմանուած է «ապստամբների տեղ»: [[Գլուսեց Աքանգիարը<sup>76</sup> եւ Դամիաթը, Նարբուսը, Բերութը [Բէյրութը] եւ Լատիկը [Լատակիան], Տրապանիսը եւ Ղազէն [Գազան], Չարաքը եւ Հաւպաքը եւ Պաղեստինեան Հրեաստանի բոլոր քաղաքները]]<sup>\*\*\*</sup>: Եւ ապա բունատիրեց [ուղջ] արեւելքի վրայ ու ձեռք գցեց Պարսքը եւ Գունդքը [Գագաց աշխարհը]<sup>77</sup>, որ Խորասանն<sup>78</sup> է, եւ միաձեծան տիրեց ողջ երկրագունդն ու ամբողջ աշխարհը ենթարկեց իր Հրամաններին: Ուժով տիրացաւ [բունատիրեց] ամբողջ աշխարհին, եւ [այդ բանը] նրան յաջողուեց<sup>79</sup>:

\* Ձեռագրում այստեղ՝ «յեզը ծովուն Կոստանդինուպոլիս» է. յաջորդ պարբերութեան մէջ՝ Կոստանդինուպոլիս եւ Կոստանդինուպոլիս: Հմմտ. վերեւում, էջ 59-ի տողատակ 4:

\*\* Ձեռագրում այստեղ՝ Աղէկաստրիայ: Վերեւում կոչուած էր Սկանտարիայ (տե՛ս ծնթ. 20):

\*\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին երեք տողերը («էառ զԱքանգիար եւ զԴամիաթ, զՆարբուս եւ զԲերութ եւ զԼատիկն, զՏրապանիս եւ զՂազէն, զՉարաք եւ զՇաւպաք եւ զամենայն քաղաքս Պաղեստինեայ [յ] Հրեաստանի») կորսուած են մեր ձեռագրում. լրացրել ենք Ոսկեփորիկից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 16, տողատակ 9):

Եւ ապա վերագարձաւ [Մաճմէտը] Բաղտազ ու կանչեց երուսաղէմցիներին, եւ կարգաց շին գրքերը, սովորեց ամեն ինչ եւ առհասարակ տարածեց թլպատութիւնն ու Հաստատեց միաստուածութեան պաշտամունքը: Թողեց Նեստորի աղանդն ու նոր Հաւատք Հաստատեց եւ իրեն անուանեց Պարսից ազգի մարգարէ, ինչին խաբէութեամբ Հաւատացրեց բոլոր նրանց, սվքեր նրան Հաւատացին: Եւ [Հրմնա]գրեց իր ուսմունքն ու խաբէբայ օրէնքներն այդ գիււաւար Մաճմէտը: Նաեւ Համոզեց Պարսից ազգից մի մեծաբուստ մարգու, որի անունն Ապուրաքը էր, եւ Աւմարին [Օմարին], [որոնք] գարձան նրա քարոզիչներն ու Հռչակեցին նրան:

Եւ ապա միաբանեց [Մաճմէտը] Բաղտազի եւ Եփրատոսի ողջ երկիրն ու եկաւ Հասաւ Պարսից աշխարհի վրայ<sup>80</sup>. [Իր] բռի մէջ առաւ երկրի բոլոր մեծամեծերին ու բոլոր պատուաւորներին եւ ստիպեց, [որ] իրեն մարգարէ անուանեն [ճանաչեն]: Եւ եկաւ Հայոց աշխարհի վրայ ու ամբողջ Հայաստանը Հարկի տակ առաւ<sup>81</sup>. Իսկ Հայոց սպարապետն էր Մամիկոնեից աէր Վահանը: Եւ նշանակեց Հարկահաններ ու Հայոց ամբողջ երկիրը [տունը] տալիս էր Հազար [Ռ] դաճեկան, իսկ Վասպուրահանի երկիրը [տունը]՝ երկու Հազար [ԲՌ] դաճեկան<sup>82</sup>:

Եւ ապա Հարկատուութիւնը<sup>\*\*</sup> տարածուեց [տիրեց] բոլոր ազգերի վրայ, եւ [Մաճմէտը] վերագարձաւ Բաղտազ: Եւ ապրելով վաթսունութ [ԿԸ]<sup>83</sup> տարի՝ մեռաւ:

[16] Եւ ապա Մաճմէտից յետոյ թագաւորեց Իրտազ Ապուրաքը. եւ վարեց թագաւորութիւնը տասը [Ժ] տարի ու ինքն [էլ] մեռաւ: Եւ ապա թագաւորեց Ամրը: Եւ երբ Բաղտազում թագաւորեց Ամրը, մեռաւ Հոռոմոց թագաւոր Հերակին ու նրա փոխարէն թագաւոր գարձաւ Լեւոն<sup>\*\*\*</sup> կայսրը<sup>84</sup>:

Եւ Բաղտազի արքայ Ամրի զօրա[հրամանա]տարն էր Մաճմէտի որդի Աւմարը՝ մի գոռոզ եւ պատերազմատէր մարգ: Ամբողջ աշխարհը [երբ] սրա

\* Բնագրում հէնց Աւմար է (=Օմար իբն ալ-Խատտաբ խալիփայ՝ 634-644 թթ.):  
\*\* Բնագրում հարկաւորութիւն, որի համար Մեսրոպ եպիսկոպոսը ծանօթագրում է. «գուցէ հարկաւորութիւն» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 17, տողատակ 11):  
\*\*\* Բնագրում այստեղ՝ Լեւոն. ստորեւ նաեւ Լէվոն, Լէոն եւ Լեոն:

ձեռքով գրաւուեց<sup>\*</sup>, [նա] նաեւ մեծ զօրք կազմաւորեց ու գնաց Ճէնաց երկիրը<sup>85</sup>: Եւ Հասնելով՝ բանակեց Կուր կոչուող գետի ափին<sup>86</sup> ու [մարդ] ուղարկեց Ճէնաց արքայ Ճէնբակուրի մօտ՝ ասելով, թէ՛ «Տո՛ւր ինձ իմ Հարկը՝ երեսուն Հազար [ԱՌ] ծառաներ ու աղախիններ»:

Եւ ապա Ճէնբակուրը խորհուրդ անելով<sup>\*\*</sup> Հաւաքեց քաջ սազմիկներ, սրանց սպառազինեց զրահներով ու սաղաւարտներով, [ապա] պատրաստեց սայլեր, այդ սայլերը<sup>\*\*\*</sup> շուրջանակի պատեց կտորեղէնով եւ ներսում թաքրեց սազմիկ մարդկանց<sup>\*\*\*\*</sup>, իսկ սայլերն ուղարկեց գետեզր: Եւ [մարդ] ուղարկեց Մաճմէտի որդի Աւմարի մօտ ու ասաց. «Քո Հրամանով բերել եմ եօթանասուն Հազար ծառաներ ու աղախիններ<sup>87</sup>. արդ, անհրաժեշտ [Հարկաւոր] մարդկանց պատրաստի՛ր ու գետի այս կողմն անցկացրո՛ւ՝ ծառաներին ու աղախիններին վերցնելու Համար, քանզի շափազանց<sup>\*\*\*\*\*</sup> գեղեցիկ են»:

Երբ Մաճմէտի որդի Աւմարը լսեց Ճէնաց արքայի խօսքը, խաբուեց նրա խօսքերից եւ Հաւաքեց եօթանասուն Հազար [Ռ] սազմիկ մարդկանց, նաեւ պատրաստեց ու անցկացրեց գետի այն կողմը: Իսկ Ճէնացիք նաեւրը քաշեցին ցամաք, եւ այն մարդիկ, որ թաքնուած էին սայլերի մէջ, դուրս եկան ու անխնայ կոտորեցին այլազգիներին: Եւ Պարսից զօրավար Աւմարը՝ Մաճմէտի որդին, մեծ ամօթով վերագարձաւ Բաղտազ<sup>\*\*\*\*\*</sup>:

<sup>88</sup> Եւ սպասեց մինչեւ միւս տարին եւ անթիւ բազմութեամբ զօրքեր Հաւաքեց ու գարձեալ եկաւ Ճէնաց երկրի վրայ<sup>89</sup>: Եւ առհասարակ Հրի մասնեց

\* Բնագրում՝ «ի ձեռն նորա արարեալ», որ անշուշտ ուղղելի է՝ «...արեալ» («...գրաւուելով»): Գրչի վրիպումն, ամենայն հաւանականութեամբ, առաջ էր եկել նախորինակի ենթադրելի արեալ-ից, որն էլ հետեւանք էր հեղինակի համար սովորական Ռ-Ր սխալագրութեան:  
\*\* Բնագրում արեալ, որ անշուշտ ուղղելի է՝ «արարեալ» («անելով»):  
\*\*\* Ձեռագրում այստեղ եւ յաջորդ տողում՝ գալլսն, որ արդէն Մեսրոպ եպիսկոպոսն ուղղել է՝ գ[ա]լլսն (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 17, տողատակ 27, 29):  
\*\*\*\* Բնագրում՝ «զօրսն պատերազմի», որ, անկասկած, ուղղելի է՝ «զարսն պատերազմի» («ռազմիկներին»):  
\*\*\*\*\* Ձեռագրում՝ «կարի ուժ», որ արդէն Մեսրոպ եպիսկոպոսն ուղղել է՝ «կարի յոյժ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 18, տողատակ 4):  
\*\*\*\*\* Բնագրում այստեղ՝ Բաղտազ՝ Դ-Թ խօսուածքային սովորական սխալագրութեամբ (վարդ-վարթ եւն):

ամբողջ Հայոց<sup>90</sup> երկիրնու անցաւ գնաց Հազարաց [Խազարաց] երկիրը: Բայց ձէնբազուրն ընդառաջ ելաւ նրան ու բերեց նրա առջեւ [գրեց] բազմաքանակ գանձեր, ոսկեհուռ սարուածքով երեք Հարիւր Հազար [ԳձՈ] ազնուացեղ երիվարներ, գազանների թանկագին մորթիներ եւ բազում շողացող ակնաքարեր: Եւ [Աւամար] Համաձայնելով [Հաւանելով] յետ գնաց ու շմաւա Հազարաց<sup>91</sup> երկիրը:

[17.] Եւ շարժուեց գնաց Գարրանդի վրայ, որ կառուցել էր Մեծն Աւերսանդրոսը<sup>92</sup>: Եւ գրաւեց Գարբանդ<sup>\*</sup> քաղաքն ու պատերազմի ելնելով [շարունակելով] գրաւեց նաեւ Ալանայ Դրունքի<sup>93</sup> վրայ գտնուող ամրոցը: Եւ գրաւելով այն՝ տիրեց<sup>\*\*</sup> նրա վրայ [կառուցուած] անառիկ երկաթակապ դռանը: Եւ [ապա] Աւամար խորհրդակցում է Բաղադի արքայ Ամրի եղբայր Մալիմի<sup>94</sup> Հետ ու ասում: «Ջանա՛նք մտնել Ալանք ու գրաւենք այն»: Կանչեցին ամրոցի [Գռան] բնակիչներին եւ Հարցրին նրանց. «Կա՞ ձեզնից [մէկը], որ այս գոնով մտնել է Ալանայ երկիրը»: Եւ նրանցից մէկը պատասխան տալով ասում է. «Ես բազմաթիւ անգամ եմ մտնել Ալանայ աշխարհը»: Իսկ Աւաման ասում է. «Ի՞նչ աշխարհ է այնտեղ»: Եւ այդ մարդն ասում է. «Ամրոցը երկիրը բարիքներով լիքն [է]. այնտեղ կայ շատ ոսկի, շքեղ Հանդերձներ եւ ազնուացեղ երիվարներ, նաեւ՝ սողունների արիւնով մսուած պողպատեայ դէնքեր, շլթաշաւիւս գրաւներ եւ թանկագին ակնաքարեր»:

Եւ երբ Աւամար լսեց այս ամենը, որոշեց [յօժարեց] մտնել դռնով եւ բացելով [այն]՝ մտան եօթ [է] բիւր մարդ: Իսկ Ալանները լսեցին [դա], Հաւաքեցին [կազմեցին] իրենց զօրքը եւ գրաւեցին ճանապարհների կապաններն<sup>\*\*\*</sup> ու փակեցին նրանց մի նեղ տեղում: Եւ սկսեցին անխնայ կոտորել նրանց: Իսկ Պարսից զօրավարներ Աւաման ու Մալիմը ծանր Հարուածներ ստացան եւ ընկան [իրենց] ձիերից: Եւ երկու Հարիւր մարդկանցով գուրս

\* Բնագրում այստեղ, նախորդից ընդամենը մէկ տող յետոյ՝ «Տարբանդ» (տալիս ենք վերականգնումով):

\*\* Բնագրում «գիրեաց», որ ուղղելի է՝ «տիրեաց», ինչպէս կայ նաեւ ՄՄ ԹԻԼ 3777 ձեռագրում (տե՛ս История Анонимного повествователя, էջ 216, ծնթ. 63):

\*\*\* Բնագրում կապմին ճանապարհաց, որ պէտք է հասկանալ՝ կապ[ա]մին ճանապարհաց (առաջին բառի բարբառային յոգնակիտով եւ երկրորդում՝ վրիպուած պատուոյ նշանով): Ոսկեփորիկն այստեղ ունի՝ կիրճն ճանապարհին (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 19, տողատակ 15):

գալով Կովկասով<sup>\*</sup> մազապուրծ եղած փախան ու ընկան Գարրանդ<sup>\*\*</sup> քաղաքը: Աւա այսպէս Ալանայ զօրքը ոչնչացրեց [սատակեց] Տաճկաց զօրքերը, եւ ապա սաճիկները [արաբները] մեծ ամօթով վերագարձան<sup>95</sup>:

[18] Բաղադի Ամր<sup>\*\*\*</sup> արքայի Մալիմ եղբայրն ու իրենց Աւամար զօրավարը գարձեալ այլ զօրք ժողովեցին եւ ուղարկեցին Հոռոմոց աշխարհի վրայ: Եւ Ամրն ասում է Աւամարին. «Երկու անգամ Տաճկաց [արաբների] սուներ քանդեցիր, կործանեցիր եւ Հասուցեցիր սազմիկ մարդկանցով<sup>\*\*\*\*</sup>: Աւաման ասում է. «Լսի՛ր, Ամր արքայ, եթէ Հոռոմոց թագաւորին երկաթե կապանքներով չբերեմք առաջ, ինձ ծաղրուծանակի ենթարկի՛ր»: Եւ Ամր արքան ասում է. «Գնա՛, եւ թող Աստուած յաջողի»:

Եւ [Աւամար] շարժուեց գնաց Հոռոմոց աշխարհն ու գրաւեց ողջ երկիրը եւ եկաւ Հասաւ Պոնտոսի<sup>96</sup> ծովեզրն ու Հրի մասնեց ամրոցը երկիրը: Եւ իջաւ բանակեց Կաստանդինուպոլիս քաղաքի դիմաց, այն քաղաքում, որ կոչուում է Խրիւսոպոլիս<sup>97</sup>: Եւ նամակ [թուղթ] ուղարկեց այսպիսի [բովանդակութեամբ]. «Դ՛ւ, Լեւոն կա՛յր Հոռոմոց, չե՛ս լսել որ քո ողջ երկիրն աւերեցի, իսկ դու չկարողացար ինձ դիմադրել եւ այժմ դու լսի՛ր ինձ, աասը [ժ] օր [է պէտք], որ նաւեր պատրաստեմ եւ գամ Հասնեմք քո վրայ ու աւարի ենթարկեմք բնակութեան քաղաքը [աթուռանիստը], նաեւ քո եկեղեցին, որին դու Սուրբ Սոփի ես անուանում, դարձնեմ իմ զօրքերի Համար լուգարան [լողանալու տուն] <sup>\*\*\*\*\*</sup>, իսկ քո խաչափայտ անուանուածը, որին դու անամօթօրէն ընկել երկրպագում ես, կոտորեմք գլխին եւ քեզ երկաթե կապանքներով տանեմ իմ արքայ Ամրի առջեւ: Բայց դու յիսարուես, ես ոչ գանձի եմ

\* Բնագրում՝ Կովկարս, որ պարզ գրչական վրիպակ է: Ոսկեփորիկն ունի՝ Կովկաս (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 19, տողատակ 19):

\*\* Ձեռագրում այստեղ՝ Գարպ, Ոսկեփորիկում՝ Գարբանդ (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 19, տողատակ 20):

\*\*\* Բնագրում այստեղից սկսած աւելի յաճախ գրուած է Օմար (կամ Ամր) խալիփայի անուան Ամր տարբերակը:

\*\*\*\* Ձեռագրում՝ «առանց պատերազմողաց» (Հեղինակի կամ գրչի Համար սովորական Բ-Ռ սխալագրութեամբ)՝ անշուշտ ուղղելի՝ «առանց պատերազմողաց» («ազմիկներին»):

\*\*\*\*\* Բնագրում՝ «տուն լիւնալեաց». Ոսկեփորիկում՝ լրաւնալիս է, Ղեւոնդի մօտ՝ ի լուալիս (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 20, տողատակ 14):

Համաձայն [Համան] եւ ոչ էլ մի այլ բանի, այլ [միայն] այն եմ կատարելու, ինչ որ խոստացայ»:

Եւ երբ Հրովարտակը տարան Լեւոն արքային, նա կանչեց քաղաքի պատրիարքին, որի անունը Յովհաննէս\* էր՝ մի սուրբ, արդար ու Աստուծոյ Հանդէպ երկիւղ ունեցող մարդու, նաեւ իր բոլոր մեծամեծերին եւ Հրովարտակը կարգաւ առեց նրանց առջեւ: Ու ասաց նրանց. «Ի՞նչ պատասխան տամ»: Եւ ապա Յովհաննէս պատրիարքն սկսեց խօսել եւ ասաց.

«Լսի՛ր արքա՛յ, ինչ որ քեզ ասում եմ: այն խօսքերը, որ այս Հրովարտակում գրուած են, նման են Ասորեստանի արքայ Սենքերիմի\*\* ճառայ Ռափսակի<sup>98</sup> Հրովարտակին, որ ուղարկեց եւ նախատեց կենդանի Աստուծոն: Եւ Երուսաղէմի արքայ Եզեկիան ձեռքն առաւ Հրովարտակն ու մտաւ Աստուծոյ տաճարը, որ կառուցել էր Սողոմոն արքան, եւ փռեց Հրովարտակն Աստուծոյ առջեւ ու խօսեց այսպէս. «Տէ՛ր, խոնարհեցրո՛ւ քո ունկը եւ լսի՛ր, բա՛ց քո աչքերը, Տէ՛ր, եւ տե՛ս Ռափսակի պատգամները, որ ուղարկեց նրա տէր Սենքերիմը՝ կենդանի Աստուծոն նախատելու Համար»: Աստուած լսեց Երուսաղէմի արքայ Եզեկիայի աղօթքը, եւ այն գիշեր Աստուծոյ Հրեշտակն իջաւ ու Բաբելոնացոյ արքայ Սենքերիմի բանակից կոտորեց [սատակեց] Հարուր ու թսունհինգ Հազար [ՃՁԵՌ]<sup>99</sup> ուսուցիչ մարդկանց, եւ գոռուց Սենքերիմն ամօթաւար վերադարձաւ Դամասկոս: Բայց խիստ սպառնալով Եզեկիային՝ [Սենքերիմն] ասում է. «Եթէ իմ վերադարձին մի անգամ էլ դու ինձ տեսնես, պարան կը գցեմ՝ քո վիզը եւ կը տանեմ Բաբելոն\*\*\*»: Իսկ Եզեկիան՝ այդ արդար մարդը, պատասխան է տալիս Սենքերիմ արքայի պատգամներին, թէ՛ «Դու երեկ մեծաբանեցիր ու արհամարհեցիր կենդանի Աստուծոն եւ փոխարէնը ստացար [այն], որ առանց սրի ու աղէղի քո զօրքերն աւազարձան քո անթիւ գիակները: Արդ՝ լուռ մնա՛ եւ մի՛ յոխորտա ինձ վրայ, իմ Տէր Աստուածն ինձ կարող է քո ձեռքից փրկել»: Իսկ Սենքերիմը գնաց Դամասկոս, եւ մինչդեռ Ասորի<sup>100</sup> կուռքերին էր երկրպագում, իր երկու սրգիները՝

\* Ձեռագրում այստեղ՝ Ոհանէս, իսկ քիչ ստորեւ՝ Յոհանէս:

\*\* Բնագրում այստեղ՝ Սէնիքարիմ. ստորեւ՝ Սէնէքարիմ, Սէնիքերիմ:

\*\*\* Բնագրում այս քաղաքանունը գրուած է միայն Բաբելոն ձեռով՝ ի տարբերութիւն Բաբելացոց/Բաբելացոց եզրոյթի (տե՛ս վերեւում, ծնթ. 2). տալիս ենք վերականգնումով:

Ամաղէկն ու Սանասարը նրան սրով սպանեցին, իրենք [էլ] փախան գնացին իրենց աւագ եղբոր մօտ, որի անունն Ազուգան<sup>101</sup> էր:

Եւ արդ՝ տէր իմ արքա՛յ, ԱՀմասի Հրովարտակին այս պատասխանը սո՛ւր. «Եթէ դու ինձ կանչած լինէիր պատերազմի, ես պարտաւոր էի ելնել ու պատերազմել ինչպէս բոլոր թագաւորազգիները [կանէին], իսկ դու անպատուեցիր [արհամարհեցիր] կենդանի Աստուծոն, նրա սուրբ խաչանշանը եւ նրա անուամբ տաճարը: Բայց դու պատրաստ կա՛ց, եթէ յոխորտալով [գոռուցրոյնով]\* գալիս ես մեր Տէր Աստուծոյ վրայ, արդեօք կարո՞ւ էս ընդդէմ կանգնել նրա անյաղթելի զօրութեանը: Հերիք է քեզ [այն], որ Հրի մասնեցիր Հոռոմոց երկիրը: Յետ դարձի՛ր եւ գնա՛ դու քո ճանապարհով, [ու] չես ենթարկուի մեր Տէր Աստուծոյ փորձութեանը»:

[19] Կարգաց [ԱՀմասը] Հոռոմոց թագաւոր Լեւոնի նամակը [թուղթը] եւ դարձեալ այսպիսի պատասխան գրեց. «Հասկացայ քո անզօրութիւնը, դու չես կարող պատերազմել իմ զօրքերի դէմ: քանզի նրանք անհամար են՝ ինչպէս աւագը Ովկիանոս ծովի ափին: Եւ աւա ես գալիս եմ տեսնեմ, թէ կը յաղթի՞ ինձ քո Աստուածը, որին դու պաշտում ես»:

Իսկ Հոռոմոց արքայ Լեւոնը վեր կացաւ գաւոյթից, ընկաւ սուրբ խաչի առջեւ եւ ասաց. «Աղաչում եմ քեզ, աստուածազօր սուրբ փա՛յտ. ինչպէ՛ս Մովսէսը գոռուց փարաւոնին ընկղմեց ծովի խորքը, իսկ դու, [ս՛վ] սուրբ փայտ, աւելի զօրեղ ես, քան Մովսէսի գաւազանը, քանզի այն քո վաղագոյն օրինակն էր, իսկ դու [նաեւ] ներկուել [ես] Աստուծոյ գառան անարատ արեամբ, եւ քո վրայ է լոյս զէնքը [նրա], որի սուրբ արիւնով դու ներկուեցիր ու մեզ յաղթական զէնք աուիր ընդդէմ մեր նեղիշներին. եւ այժմ՝ Հասել ենք քո օգնութեան կարիքին: Լսի՛ր երկնքից Քո սրբութեամբ, [ս՛վ] Տէր Աստուած մեր, եւ ուղարկի՛ր Քո աներեւոյթ օգնութիւնը Քո սուրբ խաչանշանի միջոցով եւ յաղթի՛ր Քո Որդուց ապստամբածին, որ ամբաստանելով Հայոցեց Քո Որդու սուրբ խաչի փառքը եւ Քո անուան փառքի տաճարը, որտեղ պատարագով պաշտում է Քո [կողմից] օձեալ մեր Քրիստոս Աստուածը. եւ

\* Ձեռագրում զորալով փխն. գորալով (Գ-Դ յաճախադէպ գրչական վրիպակով եւ Հեղինակի կամ գրչի Համար սովորական՝ Ռ-Ր սխալագրութեամբ), որն այստեղ ունի՝ «յոխորտալով», «գոռուցրոյնով» իմաստը:



այժմ՝ Հասել ենք [Քր] օգնություն կարիքին. մի գուցե Հեթանոսները յոխորտալով ասեն, թե՛ «ո՛ր է նրանց Աստուածը»: Բայց Դու վրեժխնդիր եղի՛ր, Տէ՛ր\*, թող բորբոքուի\*\* Քո բարկությունը որպես Հուր»:

Եւ կանչեց Յովհաննէս պատրիարքին ու ասաց. «Կանչի՛ր ողջ եկեղեցական միաբանութիւնը Սուրբ Սոփիայ, եւ այս գիշերը Հսկում կատարեցէ՛ք, քանզի առաւօտեան թշնամիները գալու են մեր քաղաքի վրայ, որովհետեւ [արդէն] բազմաթիւ նաւեր են պատրաստել»: Եւ պատրիարքը գալով Սուրբ Սոփիայ՝ վառեց ջաշերն ու մամերը, եւ եկեղեցու ողջ միաբանութիւնը Հսկում կատարեց ամբողջ գիշերը մինչեւ առաւօտ:

Եղջիւրեայ փողերը Հնչեցրին անօրէնների բանակում, եւ սկսեցին յարձակուել քաղաքի վրայ:

Իսկ Լեւոն թագաւորը սուրբ խաչը գրած իր ուսին եկաւ ծովեզր: Ծովեզր եկաւ նաեւ Յովհաննէս Հայրապետը, իսկ նրա Հեա՝ նաեւ քաջանաները, սարկաւագները եւ եկեղեցու ամբողջ միաբանութիւնը: Եւ քաղաքի բազմութիւնը՝ ձերեր ու երեսնաներ, երիտասարդներ ու կոյսեր, ամեն մէկը խաչն իր ձեռքին բռնած՝ միաձայն աղաղակում էին եւ ասում. «Լսի՛ր մեզ, Տէ՛ր, լսի՛ր մեզ եւ ողորմեա՛»: Իսկ այլազգիների նաւերը գալիս էին, եւ երբ մօտեցան ծովեզրին մի նետաձգութեան շափով, թագաւորն առաւ սուրբ խաչը, ինչպէս որ բռնած էր ձեռքին, եւ երեք անգամ խփեց ջրին: Եւ Հանելով խաչը՝ բարձրացրեց [կանգնեցրեց] ընդդէմ նաւերի: Եւ սուրբ խաչի զօրութեամբ յանկարծակի սաստիկ Հողմ՝ բարձրացաւ ու սուրբ սասակութեամբ բխեց նաւերին ու ջրերին: Եւ ծովը փոթորկուեց, ու ալիքները մինչեւ երկինք էին բարձրանում՝ եւ այլազգիների նաւերը բերում կուտակում էին իրար վրայ ու զարկում քաղաքի պարիսպներին: Եւ նրանցից ոչ մի նաւ չմնաց, որ ջարդուփշուր չէղաւ: Եւ ապա քաղաքի բնակիչները դուրս ելան, առան [Հաւաքեցին] այլ-

\* Հրատարակիչն այստեղ ձեռագրի՝ Գախաճոտր Հատուածում շտապողաբար վրիպակ է դիտարկել եւ վերականգնումով է վերծանել՝ Գախաճոտ[տ] Տէր, այսինքն՝ «վրէժխնդիր Տէ՛ր» (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ 23): Սակայն պարզ է, որ ճիշտ վերծանութիւն պիտի Համարուի՝ Գախաճո՛, Տէ՛ր («վրէժխնդիր եղի՛ր, Տէ՛ր»):

\*\* Բնագրում՝ բորփոքեցի՝ Հեղինակի կամ գրչի Համար սովորական՝ Բ-Փ սխալագրութեամբ:

ազգիների ամբողջ ինչքը, զէնքերն ու Հանդերձները, իսկ նրանց սրակոտոր արին:

[20] Իսկ ԱՀմասն ու Մալիմը եւ մօտ [[յիսուն մարդ]]\* մնացին մի ջարդուած նաւի վրայ, որը նրանց տարաւ, դուրս բերեց մի անմարդաբնակ կղզի: Եւ նաւավարները եկան թագաւորին պատմեցին, թե՛ «այլազգիներից [ոմանք] մնացել են Խորատասօն [Խորատասան]»<sup>102</sup> կոչուող մի կղզում: Իսկ թագաւորն արգելեց նրանց ու ասաց. «Քսան [Ի] օր լուռ մնացէ՛ք եւ յետոյ գնացէք բերէ՛ք»: Եւ երբ նաւերն այնտեղ գնացին, գտան այնտեղ մօտ երեսուն [Ա] մարդու, որովհետեւ ծառաներից քսան [Ի] մարդու մտրթել կերել էին ու դրանով ապրել: Եւ ԱՀմասին ու Մալիմին քաղաք բերեցին, ու թագաւորն ասաց. «ԱՀմա՛ս, տեսնո՛ւմ ես զօրութիւնը Քրիստոսի խաչի եւ իմ սուրբ եկեղեցու, որոնց դու Հայհոյում էիր»: Եւ ԱՀմասն ասաց. «Ճանաչեցի ձեր Ասածոյ զօրութիւնը, քանզի այնչափ է, որ մարդկանցից ոչ ոք չի կարող ձեր խաչին ընդդէմ կանգնել: Արգ՛ էթէ կամենում ես, ազատ արձակի՛ր ինձ եւ Մալիմին, եւ մենք ուր որ գնանք, կը պատմենք Քրիստոսի խաչի անյաղթելի մարտերի եւ զօրութեան մասին»:

Եւ թագաւորը նրանց առաւ տարաւ մեծ եկեղեցին՝ Սուրբ Սոփիայ ու այնտեղ նրանց ցոյց տուեց Քրիստոսի պատուական խաչը, իսկ Մալիմն ու ԱՀմասն\*\* ընկան երկրպագեցին: Եւ Լեւոն արքան նրանց գանձեր ու Հանդերձներ, ձիեր ու ջորիներ տուեց, նաեւ նամակ [[թուղթ]]\*\*\* գրեց Բաղասագ՝ Պարսից Ամր արքային եւ ուղարկեց նրանց:

Նրանք գնացին Հասան Տաճկաց [արաբների] երկիրը: Քաղաքներից դուրս էին գալիս [մարդիկ] եւ Հայհոյում Մալիմին ու ԱՀմասին, մոխիր վերցրած ցանում էին նրանց դիմաց եւ ասում. «Ո՛վ ԱՀմաս եւ Մալի՛մ, տաճիկների բոլոր ընտանիքները [տները] անսղամարդ թողեցիք»: Եւ գնացին Հասան Բաղսագ քաղաքը: Իսկ Բաղսագի Ամր արքան ասաց. «Ի՛նչ արիր

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած երկու բառերը («արք Ծ») ձեռագրում վրիպուած են, բայց Ոսկեփորիկի բնագրից լրացուել են արդէն Մեսրոպ եպիսկոպոսի կողմից (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ 24, տողատակ 3):

\*\* Բնագրում վրիպմամբ՝ Մահմէտ փին, Ահմատ:

\*\*\* Ձեռագրում՝ թուխտ:

դու, Աճմա՛դ, եւ դո՛ւ, Մալի՛մ, ինչո՛ւ կորցրիք բոլոր սագմիկ մարդկանց»։ Աճմաան ասում է. «Որովհետեւ մեր պատերազմը մարմնի ու արեան դեմ՝ չէր, իսկ նրանց անսաճման զօրութիւնն ո՛վ կարող է պատմել՝ նրանց սուրբ խաչի զօրութիւնը»։ Եւ ապա Ամրի եղբայր Մալիմը երգուեց սուք չգցել [չէճծնել] ձիու վրայ մինչեւ իր մահուան օրը<sup>103</sup>։

[21.]<sup>104</sup> Իսկ մի այլ տարի Մաճմէտի սրբի Աճմաար մեծ զօրաժողով արեց եւ կամեցաւ յարձակուել Հայաստանի վրայ։ Եւ Հայոց նախարարներն այս լսելով ու երկուցի մատնուելով՝ աղաչեցին սուրբ Հայրապետ Սաճակին եւ ասացին. «Սուրբ աէ՛ր, Հասաւ Հայոց աշխարհի եւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի ճօտի [վիճակի] կորստեան [ժամը]։ Այժմ՝ խղճա՛ սուրբ եկեղեցիներին, վեր կաց Գնա՛ նրան ընդառաջ եւ տա՛ր Մաճմէտի՛ նրա ճօր ու նրանց օրինադրի գրութիւնը, գուցէ Տէր Աստուած տեսնի մեր մատանջութիւնը եւ քո շարշարանքի շնորհիւ մեզ ապաճով պաճի»։ Իսկ նա պատասխանելով ասաց. «Թեպէտ անկարող եմ եւ մարմնով տկարացած, բայց թէկուզ եւ մաճը վրայ Հասնի, իմ պարտքն է՝ Գնալը»<sup>105</sup>։

Եւ Համակարի տուճից [տանից] Համազասպին պատրաստեցին, տուեցին երկվարներ ու Հանդերձներ եւ ուղարկեցին Հայոց սուրբ Հայրապետ Սաճակի Հետ։ Եւ [երբ] առաջ Գնալով Հասան Խառան<sup>106</sup>, սուրբ Հայրապետ Սաճակը Հիւանգացաւ ու վերցրեց Գրեց իր վերջին [խօսքն]՝ այսպէս.

«Այս իմ՝ Հայոց Սաճակ Հայրապետի, ձեռքով [գրուած] նամակն [գիրն] է՝ ուղղուած Պարսից զօրավար Աճմասին։ Ես իմ ազգի կողմից ուղարկուեցի քեզ մօտ [ընդառաջ], բայց Նա, որ Հոգիների շտեմարանն է, ինձ կանչեց [ստիպեց] իր մօտ, եւ շճասցրի ժամանել՝ տեսնելու քո երեսը։ Բայց աճա ինձ մօտ է [ունենմ] քո Հայր ու ձեր օրինադիր Մաճմէտի ձեռքով [գրուած] գրութիւնը, [առ այն], որ իմ ազգը [ազգատուճմը] պարտաւոր է Հարկ տալ քեզ եւ Հաւատարմութեամբ ծառայել ու Հնազանդուել այնպէս, ինչպէս պատշաճ է տէրերին։ Իսկ քեզ վայել [արժանի] է ընդունել Հարկն ու Հնազանդութիւնը եւ շքարկանալ ու իմ ազգի [ազգատուճմը] տիրոջ շաւերել՝՝ որպէս քո թշ-

\* Ոսկեփորիկը մեր բնագրի այս՝ «աւիրել զճաշիւ ազգատուճմին իմոյ» Հատուածի փոխարէն ունի՝ «աւերել զաշխարհն մեր» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 26, տողատակ 16)։

նամինների [երկիր], որովհետեւ պատերազմով չեն քո դեմ կանգնած։ Քեզ պէտք է Հոգալ մեր երկրի մասին՝ ինչպէս քո երկրի։ Իսկ եթէ այլ ոք վեր կենայ իմ երկրի դեմ, նրանք [իմ երկրացիները] պիտի ձայն տան քեզ, [իսկ] դու օգնես նրանց եւ ազատես նրանց երկիրն իրենց նեղիչների ձեռքից, որպէսզի դու եւ քո զօրքը խաղաղութեամբ վայելէք [այն] Հարկն ու մաքսը, որ տալիս են քեզ, եւ յաղթող լինես քո թշնամիների դեմ։

Արդ՝ եթէ քո սիրտը քաղցրանայ եւ անես այն, ինչ քեզնից խնդրում եմ ես, Աստուած Հաստատուն կը պաճի քո թագաւարութեան գաճը եւ քո վրայ կ'իջնի օրհնութիւնը քո Հայր Իսմայէլի, որի մասին Աստուած ասաց, թէ՛ «Այս Իսմայէլը կը դառնայ մեծ ազգ, եւ նրա ձեռքը [կը լինի] իր թշնամիների վրայ որպէս խրատասու՛՞ գաւազան. սրա տղամարդիկ [կը լինեն] տէրեր, իսկ սրա կանայք՝ տիրուհիներ [տիկնայք], եւ կ'ուտես աշխարհի [ողջ] Հարստութիւնը»<sup>107</sup>։ Արդ՝ եթէ իմ խնդիրքը կատարես, նոյն օրհնութիւնը կը տարածուի նաեւ քեզ վրայ. իսկ եթէ ցասումսով գոռողանաս [յանդգնես] եւ արճամարճես իմ խօսքը, Տէր Աստուած կը փոխի քեզ Հետ միաբանուած քո սագմիկ մարդկանց միտքը [սիրտը], եւ շի յաջողութի քո ոտքերի ընթացքը. եւ Տէր Աստուածը նկուն կը դարձնի քեզ քո թշնամիների առջեւ, ու չես կարողանայ պատերազմել քո սագմիկ մարդկանց ձեռքերը կը թուլանան, եւ նրանց աղեղները կը փշրուեն. նրանց զէնքերը չեն կարողանայ խոցել քո թշնամիներին, եւ զօրքիդ երկվարները կը խրտչեն ու չեն կարողանայ ճանապարհներ անցնել՝ առնելու [այն] աւարը, որ դու ես ցանկանում։ Եւ [[արդ՝ այդ է քո պայմանը]]<sup>\*\*\*</sup>, դու ընտրի՛ր Գրանցից մէկը՝ որը որ կը Հաւանի քո սիրտը»։

Եւ այս գրելով՝ նա իր սուրբ Հոգին աւանդեց Ասածուն։ Իսկ Համազասպը, որ նրա Հետ էր, եւ նրա աշակերտները [Հեռուորդները]՝ սուրբ, մազա-

\* Բնագրում՝ մագարն, գրչի Համար սովորական Գ-Ք-Գ սխալագրութեամբ։  
\*\* Բնագրում՝ խոսասա, որը վրիպեալ անվաւեր բառ է. Ոսկեփորիկի մի քանի ձեռագրեր դրա փոխարէն ունեն խրատասու տարբերակը (Հմմտ. (История Анонимного повествователя, էջ 217, ծնթ. 74), որը եւ Հիմք ենք ընդունում։  
\*\*\* Կրկնակի փակագծերում թարգմանուած վերջին 5 բառերը (ըստ Ոսկեփորիկի՝ «արդ՝ այդ կայցէ պայման քո») մեր ձեռագրում ընդօրինակողի անփութութեան Հետեւանքով գրեթէ անճանաչելիօրէն աղճատուել են ու դարձել անիմաստ՝ «ապտկաց ամպոխանք» («ապտակների կուտակում»?!): Տես Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 27, տողատակ 17, 18; История Анонимного повествователя, էջ 217, ծնթ. 76։

զգեստ [խարազնազգեստ] ու խիստ ճգնակեաց [մարդիկ], նրա Համար սա-  
պան [գապազ] պատրաստեցին, եւ խնկեցին նրա մարմինն ու դրեցին սա-  
պանի մէջ:

[22] Վեցերորդ օրն<sup>108</sup> Աւամար մեծաթիւ զօրքով եկաւ ու մտաւ Խա-  
ւան: Իսկ Համազասպն ու նրա Հեաւորդներից [աշակերտներից] սմանք  
ընդառաջ գնացին Աւամարին: Եւ Աւամար տեսաւ նրանց ու տեղեկանալով  
իմացաւ Հայոց սուրբ Հայրապետ Սահակի մահը. եւ ասաց. «Եթէ կենդանի  
լինէր, նա էր պարտաւոր ինձ մօտ գալ, իսկ այժմ՝ իմ պարտքն է գնալ նրա  
մօտ»: Եւ գալով Ասածոյ սրբի գտնուած տեղն ու իջնելով կառքից<sup>\*\*</sup>, նստեց  
սապանի առջեւ ու Հրամայեց կարգաւ նամակը<sup>\*\*\*</sup>: Եւ երբ լսեց սրբի պա-  
տուէրը [Հրամանը], որ գրուած էր նամակում [թղթում], վեր կացաւ գնաց  
սապանի մօտ ու բռնեց Համբուրեց Հայրապետի աջը: Եւ սկսեց խօսել ինչ-  
պէս կենդանի [մարդու] Հետ ու ասաց. «Քո նամակից [Հրովարտակից] քո ի-  
մաստութիւնը ճանաչեցի, քանզի մարդու իմաստութիւնն իր գրուածքից  
[թղթից] ճանաչուած է: Բայց դու քո ազգի խնդրանքով եկար՝ իբրեւ քաջ Հո-  
վիւ, [ու դեռ] չվախեցար<sup>\*\*\*\*</sup> ընդդէմ իմ բարկացած [խրոխտացած] սր-  
տի<sup>\*\*\*\*\*</sup> գալ ուստի յիրաւի՝ եթէ [թէկուզ] մէկ բան քո խնդրածից սխալ ա-  
նեմ, թո՛ւ ինձ վրայ թափուի քո անեծքը, իսկ եթէ կատարեմ՝ քո պատուէրը  
[Հրամանը], թո՛ւ քո օրհնութիւնը Հաստատուի ինձ վրայ»:

Եւ Հրամայեց [Աւամարը] բերել սկեզօծ Հանդերձներ ու անուշաճուս  
իւղեր եւ խնկով օձեց սրբի մարմինը: Եւ պատրաստեց սկեզլէն կառքեր ու  
սպիտակ ջորիներ եւ Համազասպին կանչեց իր մօտ ու ասաց. «Տեսնո՞ւմ ես

\* Բնագրում՝ «ընդ առաջ Մահմէտին», որ, թերեւս՝ գրչի պարզ վրիպակն է, ուս-  
տի սրբագրել ենք՝ ըստ նախորդի եւ յաջորդի:

\*\* Ոսկեփորիկն ի կառացն-ի փոխարէն ունի՝ ի ձիոյն տարբերակը (տե՛ս Պատմութիւն  
Թիւրքի Օսմանի Բագրատունւոյ, էջ 28, տողատակ 6):

\*\*\* Բնագրում՝ զիրովարտակն, Ոսկեփորիկում՝ զնամակն (տե՛ս Պատմութիւն  
Թիւրքի Օսմանի Բագրատունւոյ, էջ 28, տողատակ 6):

\*\*\*\* Բնագրում՝ ոչ մախեցար:

\*\*\*\*\* Բնագրում՝ «ընդդէմ իմոյ [խրոխտացեալ սրտի իմոյ], որտեղ իմոյ բառը  
սխալմամբ կրկնուած է (Հմմտ. Պատմութիւն Թիւրքի Բագրատունւոյ, էջ 28):  
Մեարոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդ, էջ 30. «Ֆուլթացար գալ ընդ  
առաջ խրոխտացեալ սրտ իմոյ» (տողատակ 13. Ընդգծումը մերն է - Վ. Ա.):

զօրքերի այս բազմութիւնը. եթէ այս պատուական եւ սուրբ մարդը եկած  
չլինէր, մեծ կործանման էի ցանկանում՝ ենթարկել Հայոց երկիրը: Բայց այժմ,  
երբ լսեցի սրա նամակի խօսքերը, իմ սրտի ցասումը փոխուեց քաղցրութեան,  
եւ սրան Համարեցի սրպէս իմ Հայրն [ու] Ասածոյ սուրբը եւ Հաստատեցի իմ  
օրինատուի՝ եւ Հօր՝ Մահմէտի գրութիւնը [գիրը]: Եւ երբ տարուայ Հարկը  
վիջել [թողել] եմ՝ Հայաստանին՝ ի սէր [վասն] այս սուրբ Հայրապետի:  
Ասածոյ արդար ու սուրբ ծառան է [ր] սա»: Եւ խաղաղ[ութիւն] Հաստատեց  
[Աւամարն] ու վերագարձաւ Բազմադ քաղաքը<sup>109</sup>:

Եւ ապա մեռաւ Բարեւազոյ արքայ Ամին, ու թագաւորեց նրա եղբորոր-  
դի Ապու Ալին<sup>\*\*</sup>: Իսկ Աւաման այդ ժամանակ ձերայած էր [եւ] մեռաւ<sup>110</sup>:

[23] [[<sup>\*\*\*</sup> Մեռաւ նաեւ Յունաց Լեւոն արքան, թագաւորեց նրա որդի  
Կոստանդինը]]: [Այլ] շարժին Հայոց տիրեց Թեոդոս Ռըշտունին<sup>\*\*\*\*</sup> [Թեո-  
դորոս Ռշտունին] Մանաճեղի<sup>111</sup> սոճմից [տանից] եւ իշխեց Հայոց երկրում՝  
քառասունչինգ [106] տարի<sup>112</sup>: Սա իր Վարդ սրբունն ուղարկեց Հոռոմոյ  
երկիրը<sup>113</sup> եւ վերացրեց Հայերի կողմից Հոռոմոյ տրուող Հարկը: [Դրանից  
յետոյ Հարկը] սուկեցին Տաճկաց [արարներին], քանի որ Հզօրացաւ Պարսից  
երկիրը [տունը] եւ յաղթեց Բազմադի տանը, եւ Պարսից երկրում [տանը]

\* Բնագրում՝ «անօրինատվին իմոյ»՝ «մոլեռանդ գրչի յաւելուածով», ինչպէս  
արդարացիօրէն դիտարկել է դեռեւս Մեարոպ եպիսկոպոսը (Պատմութիւն  
Թիւրքի Օսմանի Բագրատունւոյ, էջ 29, տողատակ 2): Վերեւում Մահմէտը երկիցս  
կոչուած էր ոչ թէ օրինատու, այլ օրինադիր:

\*\* Ոսկեփորիկում՝ Աբու Հալիթ (Պատմութիւն Թիւրքի Բագրատունւոյ, էջ 29, տո-  
ղատակ 11): Հմմտ. նաեւ История Анонимного повествователя, էջ 217, ծնթ. 78:

\*\*\* Կրկնակի փակագծերում թարգմանուած այս տողը մեր ձեռագրում բացա-  
կալում է (ըստ ամենայնի ընդօրինակողի անփութութեան Հեաւեանքով) եւ  
վերականգնելի է Ոսկեփորիկից («Մեռաւ եւ Լեւոն արքայն Յունաց, թագա-  
ւորեաց որդի նորա Կոստանդին» (տե՛ս Պատմութիւն Թիւրքի Օսմանի Բագրատուն-  
ւոյ, էջ 27, տողատակ 17, 18): Ձեռագրում նախորդ նախադասութեան «...ձե-  
րացեալ մեռաւ» աւարտից յետոյ դրուած է վերջակէտ (այլուր՝ լոկ միջակէ-  
տեր են) եւ աւարտի ձգուած նշան (նաեւ 1 տող բաց է թողած), որը մեծ Հա-  
տուածաբաժանում է յուշում: Նոյնն է վերեւում [Բ] գլխագրից առաջ [իսկ  
[Գ]-ից առաջ միայն վերջակէտ է): Տե՛ս նաեւ ծնթ. 110:

\*\*\*\* Բնագրում այս նշանաւոր Հայոց իշխանի ե՛ւ անունը, ե՛ւ սոճմանունն ան-  
մենուր գրուած են այսպէս՝ Թեոդոս (միայն այստեղ՝ գրչի Համար սովորա-  
կան սխալագրութիւններով՝ Թեոյթոս) եւ Ռըշտունի, ուստի թարգմանու-  
թեան մէջ պահպանուած ենք: Ոսկեփորիկն այս կտորը տալիս է Համառօտ եւ  
տարբնթերցումներով. «Իսկ Թեոդորոսն Արծրունի՝ իշխանն Ընըշտունի՝ ամս  
նէ» (տե՛ս Պատմութիւն Թիւրքի Բագրատունւոյ, էջ 29, տողատակ 11):

Թագաւորեց Հուրմիզդպաքարն<sup>114</sup> ու զօրք Հաւաքեց [կազմեց] եւ յարձակուեց Վասպուրական երկրի վրայ: Եւ [նա] մեծ աւերանք Հասցրեց Ճուշին<sup>115</sup> եւ Գերամին<sup>116</sup>, իսկ Արտաշը<sup>117</sup>, Հայիւնն ու Կոզովիտն<sup>118</sup> առՀասարակ այրեց: Նաեւ գրաւեց Արծափքի<sup>119</sup> ամրոցը եւ այնտեղ գտնուած շատ կանանց գերեց: Բայց յետոյ Թէոդոս[րո]սը Հետապնդ ելավ նրանց՝ Հասարկաւորասի գետեզրին, նրանցից շատերին սպանեց, իսկ ուրիշներին փախուստի մատնեց: Եւ գրաւեց աւարը, որ նրանք թաւանել էին, իսկ գերիներէրի բազմութիւնը վերագարձրեց<sup>120</sup>:

[24] Բայց գարձեալ մի տարի ել յարձակուեցին Հայոց աշխարհի վրայ ու մեծ աւար թաւանեցին, եւ [Հայերը] չկարողացան յետ խլել: Եւ Պարսից ազգը Հզօրացաւ, ու Հայոց աշխարհին Հանգստութիւն չէր տալիս, իսկ Թէոդոս[րո]ս Ռըշտունին մատնուեց մտատանջութեան: Եւ ապա [նա] ծանր Հիւանդացաւ [ու մարդ] ուղարկեց կանչեց իր Վարդ որդուն: Որովհետեւ նրան Հոռոմնոց Կոստանդին<sup>\*</sup> արքան պատրիկ էր գարձրել ու պատիւներով աւելի էր մեծարում՝ նրան, քան իր ու Եգիպտացոց բոլոր մեծամեծերին, քանի որ այն ժամանակ Հոռոմնոց արքայ Կոստանդինը արիւում էր Եգիպտոսին, քանզի նա պարտութեան մատնեց Ալիի<sup>\*\*</sup> որդիներին, որ ծնուել էին Ֆատմայից՝ Ապուտայիպին ու սրա եղբայր Ափուանին, եւ գրաւեց Եգիպտոսը: Բայց Երուսաղէմը, որը վերաշինել էր Հոռոմնոց Մուրիկ արքան, [նա] չկարողացաւ գրաւել:

Եւ երբ Վարդ Պարսիկը եկաւ իր Հայր Թէոդոս[րո]սի մօտ, սա արդէն ուժասպառ էր եղել ցաւերից: Բայց սա ասաց. «Օրհնեա՛ւ [լինես], Վարդ որդեա՛կ, որ Հասարկ մ'վախճանի օրը»: Իսկ նա կանգնեց ու պատմեց այն բոլոր մեծարանքների մասին, որ [իրեն] արժանացրել էր Հոռոմնոց Կոստանդին արքան՝ Լեւանի որդին<sup>121</sup>: Եւ Թէոդոս[րո]սն ասում է. «Լսի՛ր, որդեակ Վա՛րդ, ես այն ճանապարհն եմ գնում, որ այլեւս չեմ վերագաւնայ, իսկ դու՛ ինչ որ քեզ կ'ասեմ, դու մի՛ արհամարիր: Խղի՛ր [կարիր] քո դաշինքը [ուխտը], որ սննես Հոռոմնոց Հետ, եւ քո դաշինքը [ուխտը] դի՛ր Պարսից արքայի

\* Բնագրում այստեղ եւ քիչ յետոյ՝ Կոստընդին. յաջորդ պարբերութեան մէջ՝ Կոստադին եւ միայն յետոյ, պարագրաֆ 25-ում՝ Կոստանդին:

\*\* Բնագրում այստեղ էլ՝ Ալէի:

Հետ, քանզի սրանք են քո դրացիները, եւ այն Հարկը, որ Հոռոմնոց երկրին [տանն] է սորուելու, սուր Պարսից երկրին [տանը], սրանց Հնազանդութի՛ր, եւ Հայոց աշխարհը կը շէնանայ»: Եւ երբ այս ասաց, Հոգին տուեց ու մեռաւ:

[25] Եւ ապա սրանից յետոյ պատերազմ ծագեց Պարսից երկրի [տան] եւ Հոռոմնոց երկրի [տան] միջեւ: Եւ Վարդ Պարսիկը [մարդ] ուղարկեց Պարսից արքայի մօտ ու դաշինք կնքեց [ուխտ դրեց] նրա Հետ. եւ ասաց. «Չօրք Հաւաքի՛ր [կազմի՛ր] եւ գնա՛ Հոռոմնոց երկիրը, իսկ ես նրանց կը յանձնեմ [կը տամ] քո ձեռքը, եւ դու նրանց կը ջարդես, ինչպես որ կը կամենաս»: Եւ միմեանց անսուտ [ճշմարիտ] երդում տուեցին:

Եւ ապա Պարսից Հուրմիզդ<sup>\*</sup> արքայի որդի ՍաՀակը Հաւաքեց մեծաքանակ զօրքն ու եկաւ Հասար Հոռոմնոց երկիրը: Եւ աւերեց Թէոդոս[րո]սի<sup>\*\*</sup> սը<sup>\*\*</sup>, որ Կարնոյ քաղաքն է, եւ Գերջանն<sup>122</sup> ու Եկեղեցը<sup>123</sup>, եւ եկաւ Հասար Կոլանիայ<sup>124</sup> ու բանակեց գետեզրին:

Եւ Վարդ Պարսիկը [մարդ] ուղարկեց Հուրմիզդ արքայի որդի ՍաՀակի մօտ՝ [ասելով]. «Ես կը գնամ՝ կը բերեմ Հոռոմնոց արքային եւ նրանց բանակ գնել կը տամ գետեզրին, ապա կամուրջ<sup>\*\*\*</sup> կապել կը տամ ու բոլոր սազմիկ մարդկանց կ'անցկացնեմ [գետի] այդ կողմը: Եւ կը խնդրեմ, [որ ինձ յանձնարարեն] պաշտպանել [պաշտել] կամրջի անցումը: Իսկ երբ անցնեն գետի այդ կողմը, փախէ՛ք նրանց առջեւից, եւ նրանք վստահացած կը գան ձեր Հետեւից, [այդժամ] դուք դարան [քիմի] դրէ՛ք եւ յետ գարձէ՛ք նրանց վրայ, իսկ ես կը կարեմ կամուրջի խելը [ծայրը]<sup>\*\*\*\*</sup>, եւ այդպէս կոտորէ՛ք նրանց»:

Եւ Վարդ Պարսիկը գնաց Հոռոմնոց արքայի մօտ ու ասաց. «Սա Գայլ<sup>\*\*\*\*\*</sup> գետի<sup>125</sup> ջրերն [են]. կամուրջ կապի՛ր վրան եւ սազմիկ մարդկանց

\* Ձեռագրում՝ Հուրմիզդ, իսկ մի քանի տող անց՝ Յուրմիզդ: Իմա՛ Որմիզդ (տե՛ս վերելում, ծնթ. 114):

\*\* Բնագրում՝ գԹ՛էոդոսյաւալիս: Հմմտ. վերելում, ծնթ. 43:

\*\*\* Բնագրում այստեղ եւ ստորեւ քանիցս՝ կարմունջ (միայն մէկ-երկու անգամ՝ կարմունջ):

\*\*\*\* Ձեռագրում՝ զխեւս, որն իբրեւ պարզ գրչական վրիպում ուղղելի է՝ զխերս:

\*\*\*\*\* Ձեռագրում՝ ալլ (փիս Գալլ), որի սրբագրումն առաջարկել է դեռեւս հրատարակիչը (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 31, տողատակ 22): Ընդ որում՝ Գալլ է նաեւ ՄՄ թիւ 1722, 1487, 8100 Ոսկեփորիկ գրչագրերում (տե՛ս История Анонимного повествователя, էջ 219, ծնթ. 95):

անցկացրո՞ւ [նրա] այն կողմը, իսկ քո ընտիր մարդկանց թո՛ղ, որ պաշտպանեն [պաշեն] կամուրջը. որպեսզի եթէ պարսիկները նրանց յաղթեն ու փախուստի մասնեն, նրանք կամուրջը պատրաստ գանեն եւ անցնեն գետի այս կողմը»: Եւ Կոստանդին արքան արեց այն ամենը, ինչ որ նրան ասաց Վարդ Պատրիկը: Եւ գետի այն կողմը մօտ երեք բիւր [երեսուն Հազար] մարդ անցկացրեց, իսկ Վարդ Պատրիկին ասաց, թէ՛ «Դու պաշտպանի՛ր այս կամուրջի խեղը»:

Եւ պարսկական զորքը փախաւ նրանց առջեւից: Բայց բազմաթիւ տեղերում Պարսից զորքերը գարան [քիմի] էին գրել եւ յետ գարձան Հոռոմնց զորքի վրայ ու Հարուածեցին նրանց: Իսկ նրանք փախուստի մասնուած դիմեցին գետի կամուրջը՝ գետանցելու Համար: Բայց Վարդը, որ կամուրջի պաշտպանն [պաշանորդն] էր, քաշեց ու տապալեց կամուրջը եւ ինքն անցաւ գետի պարսիկները: Եւ այդ օրը Հոռոմնց զորքից շատ-շատերը կոտորուեցին, իսկ Պարսից զորքերը զերադարձան մեծ յաղթութեամբ, եւ Վարդ Պատրիկն էլ՝ նրանց Հետ:

[26] Եւ գալով Վասպուրական աշխարհը՝ Վարդ Պատրիկը մտաւ իր արքունիքը, որ մօտ էր Ռըշտունեաց ծովին եւ կոչուում էր Մաշարեշայ<sup>126</sup>: Մի քանի օր [այդտեղ] մնալով՝ [նա] սարսափեցի երազ տեսաւ, որպէս թէ ինքն արեան ծովի մէջ էր, եւ իր սաքերից ծանր երկաթներ՝ էին կախուած, որ նրան գետի ներքեւ, անդունդ էին քաշում, եւ մօտ էր խեղդուելու [ընկղմուելու]: Եւ արթնանալով՝ զարհուրեց ու աճեղագոյն ճշաց, մինչեւ որ բոլոր պաշտպանները [գարգասցիք] զարհուրեցին, իսկ երբ առաւօտը բացուեց, կանչեց եպիսկոպոսին, որի անունը Գրիգորիոս էր: Եւ երբ [սա] եկաւ, Վարդն ընկաւ նրա առջեւը, արտասուեց ու ասաց.

«Տէ՛ր, իմ անձի կործանումն եմ տեսել քանզի գիտեմ, որ շատ անօրինութիւններ գործեցի եւ անչափ արիւն թափեցի Հոռոմնց տանից: Եւ արդ՝ իմ աչքերով երազում տեսայ՝ ծովը, որ մեզ մօտ [է], արեան ծով էր [գարձել], եւ ինձ նրա մէջ՝ երկաթէ կապանքներով կապուած իմ սաքերով, եւ մօտ էի

\* Ոսկեփորիկում կապար փխն. երկաթ (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 32, տողատակ 20):

խեղդուելու [ընկղմուելու] ու յանկարծ արթնացայ: Եւ աճաւասիկ սարսափաւար [զարհուրած] եմ ու չեմ յանդգնում՝ ննջել կամ աչքերս թարթելը»:

«Բայց դու, ս' Վարդ, բարի անունով պատերազմող [էիր], ինչո՞ւ Համար արեցիր այդ ծանր շարիքն ու նենգութիւնը, որ մարդկանցից ոչ ոք չէր արել: Եւ քի՛չ է թուում քեզ այդքան արիւնաճեղութիւնը, որ արեցիր առանց երկիւղի»:

[27] Եւ Վարդ Պատրիկն ասում է. «Ճշմարիտ էն քո խօսքերը, որովհետեւ ես [լաւ] գիտեմ իմ գործած անօրինութիւնները եւ մանաւանդ երազումս յայտնուածները, որ սարսափում ու դողում եմ: Բայց այժմ ս' ին է Հնարը՝ իմ [գործած] շարիքների ապաշխարութեան»: Եւ եպիսկոպոսն ասում է. «[Մարդ] ուղարկիր կանչի՛ր այն մենակեացին, որ բնակուում է Տորոս [Տարոս]<sup>127</sup> կոչուած լեռան վրայ»:

Եւ նա [մարդ] ուղարկեց ու կանչեց այն սուրբ մարդուն: Եւ ընդառաջ գնալով նրան՝ ընկաւ նրա սաքերն ու լաց եղաւ: Իսկ նա ասաց. «Մի՛ լար, Աստուած կարող է քեզ փրկել, իսկ դու կը վճարես պարտքդ: Քանզի Տէր Աստուած կամեցաւ իր ողորմութեամբ պաշտպանել [շաշեղ] քեզ, յայտապէս ցոյց տուեց քեզ քո գործած շարիքը [վնասը], քանի դեռ կենդանի ես, եւ քեզ սոսփորեց [բեւեռեց] իր երկիւղով: Չանք թափի՛ր եւ մի՛ յապաղիր ազատել քեզ այն բազում մարդկանց արեան մեղքից, որոնց կորսեան պատճառը դու եղար»:

Եւ Վարդ Պատրիկն ասաց մենակեացին. «Ասա՛ ինձ, [ս' Վ] սուրբ Աստուծոյ, ի՞նչ ճար կը լինի իմ անօրինութեանը: Կարո՞ղ եմ ես սիրով քաւել իմ յանցանքը»: Աստուծոյ մարդը պատասխանեց. «Ասում եմ քեզ, Պատրի՛կ, դու Հնար չունես այդ արիւնից ազատուելու այլ կերպ, քան թէ Քրիստոսի արեամբ: Մի գուցէ՛ նա կ'ազատի քեզ այդքան անասելի [անհնարին] այդ շարիքից»:

Եւ Պատրիկն ասում է երանելի մենակեացին, որի անունը Սիմէոն էր. «Ինձ ասա՛, [թէ Հէնց] այժմ ի՞նչ Հնար կայ՝ անելու այն, ինչ որ ասում ես»: Իսկ մենակեացն ասում է. «Ո՞ր Պատրիկ, մեր Վասպուրականի երկիրը, ինչպէս տեսնում ես, շէն է, դու էլ մեծաքանակ գանձեր ունես, շինի՛ր եկեղեցիներ, որքան որ կամենաս, որպէսզի քո մեղքերի թողութեան Համար պատա-

բազմատեղեան, եւ ապա կ'ազատուես թափածո՝ այդքան անմեղ մարդկանց արիւնից»։ Պատրիկն ասում է. «Եթէ դրանով կ'ազատուեմ [կ'ապրեմ], ուրեմն բազմաթիւ եկեղեցիներ կը շինեմ։ բայց ասա՛ ինձ, [ո՛վ] դու Աստուծոյ սուրբ, թէ ո՛ւմ անունով շինեմ իմ եկեղեցիները, որ [Հաստատա] շինելու եմ»։ Եւ նա ասում է. «Լսի՛ր, որդեա՛կ, աշխարհը փրկագործող առաջին արիւնը Քրիստոսինն էր, [որ] թափուեց մարդկային ցեղի Համար, իսկ նրանից յետոյ՝ Քրիստոսի նախասարկաւազ ու առաջին նաշատակ սուրբ Ստեփաննոսինը՝ նրա անունով Հաստատի՛ր եկեղեցիները ըստ բոլոր գաւառների, բերդերի եւ գիւղերի, որպէսզի անխափան լինի պատարագի յիշատակումը»։

Եւ Հաշուեց բերդերն ու գիւղերը Հազար [Ռ] շէն ու սկիզբ դրեց եկեղեցիների Հիմնարկերի։ Եւ ասաց երանելի մենակեացին. «Երանի թէ ունենայի սուրբ Ստեփաննոսի նշխարներից որեւէ մասունք եւ նրանով օրհնէի այն եկեղեցիները, որ ցանկանում եմ շինելը»։ Սիմէոն մենակեացն ասում է. «Ո՛վ Պատրիկ, դու եկեղեցիների շինութեան սկիզբը դի՛ր, իսկ ես վեր կենամ գնամ՝ Երուսաղէմ, մի գուցէ ողորմի առատապարգեւ Աստուած, եւ յաջողուի ու տայ սուրբ Ստեփաննոսի նշխարներից որեւէ մասունք»։

[28] Եւ նոյն պաշտոն մենակեաց Սիմէոնը վեր կացաւ, ճանապարհ ընկաւ ու գնաց Երուսաղէմ քաղաքը։ Եւ գնաց սուրբ Ստեփաննոսի վկայարանն ու սպասաւորեց այնտեղ երեք [Գ] տարի։ Եւ ապա մի մարդ [կար]՝ Աստուծոյ նախախնամութեամբ Քրիստոսի սուրբ նաշատակ Ստեփաննոսի նշխարների սպասաւորը, [[նախաՎկայ Ստեփաննոսը երազում յայտնուեց իր [այդ] սպասաւորին]]\*\* եւ ասաց. «Այդ մարդու շարչարանքի փոխարէն, որ ճգնում է, իմ ոսկորներից որեւէ մասունք աս՛ւր եւ ազատ թո՛ղ [արձակի՛ր] նրան, որպէսզի գնայ, որովհետեւ իմ անունով Հայոց աշխարհում բազմաթիւ եկեղեցիներ են շինուում»։ Եւ նա քնից վարթելով կանչեց երանելի մարդուն՝

\* Անձնանունն այստեղ եւ յետոյ քանիցս զրուած է մէկընդմէջ՝ Ստեփանոս եւ Ստեփաննոս։

\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին տողը ձեռագրում բացակայում է՝ անկասկած, զրչի վրիպման հետեւանքով, որի շփոթութեան պատճառ է դարձել մայր օրինակում «Ստեփաննոս» կամ «սպասաւոր» բառերի կրկնուած լինելը։ Պակասը՝ Ոսկեփորիկից տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 35, տողատակ 6։

Սիմէոնին, ու ասաց. «Ասա՛ ինձ, եղբա՛յր, որտեղի՞ց ես գու»։ Եւ նա ասում է. «Հայոց Հեռաւոր [օտար] աշխարհից [եմ]»։ Իսկ նա ասում է. «Ինձ ճշմարիտն ասա՛, Հոգո՛ւ Համար ես ճգնում, թէ՛ մի այլ ուխտի»։ Եւ նա ասում է. «Կանգնած աղօթք եմ անում իմ յանցանքների [թողութեան] Համար»։ Իսկ սուրբ նաշատակի եկեղեցագանն ասում է. «Մի՛ ստիր, եղբա՛յր, այս գիշեր Քրիստոսի սուրբ նաշատակն ինձ յայտնեց քո ճգնական շարչարանքների մասին։ Եւ Քրիստոսի սուրբ նաշատակը քո մասին ասաց, թէ այդ մարդուն, որ տառապում է, աս՛ւր իմ նշխարներից որեւէ մասունք, քանզի Հայոց աշխարհում իմ անունով բազմաթիւ եկեղեցիներ են շինուած»։ Մենակեացը վարմացած ասում է. «Ճիշտ ես, դրա Համար եմ շարչարուում»։ Եւ նա սուրբ նշխարներից մի մասունք տալով նրան՝ [[աջ ոքտի բութ մատը]]\*, արձակեց նրան ու [նամակով] գրեց Պատրիկին այն ամբողջ երազը, որ տեսել էր։

Իսկ երբ Աստուծոյ մարդը՝ Սիմէոնը, եկաւ, սուրբ նաշատակի նշխարն [Հեան] առած՝ օրհնեց բոլոր եկեղեցիները։ Եւ քառասուն [Ս] օր պահքի [մէջ] մնաց՝ ըստ տեսիլքի [պատգամի]<sup>128</sup>, ու բազմաթիւ եպիսկոպոսներ եւ քաջանանք չսկսեցին կատարեցին։ Մինչդեռ չսկսեցին անում, Պատրիկը տեսաւ միեւնոյն երազը, որպէս թէ [ինքն] ծով արեան մէջ էր, ինչպէս նախկինում՝ էր տեսել։ Տեսաւ նաեւ Հազար [Ռ] քաջանանքի՝ որքան որ եկեղեցիների քանակն էր, որոնք բունեցին նրա երկու ձեռքերը, [[բերեցին իր ապարանքը]]\*\*, եւ մենակեաց Սիմէոնը կարեց նրա ոտքերի շղթաներն ու նետեց [դրանք] ծովի խորքը։ [Եւ քաջանանքը] իբրեւ արծուի [նրան] թուցնելով Հասցրին [ապարանքի] դռան առջեւ եղած աղբիւրի մօտ ու վերցնելով ջուրը՝ լուացին մարմնի վրայի արիւնը եւ նրան սպիտակ Հանդերձներ Հագցրին ու փառքի պսակ դրեցին նրա գլխին։

Եւ գիշերուայ կեսին զարթնելով ու կանչելով Գրիգորիոս եպիսկոպոսին եւ երանելի մարդուն՝ Սիմէոնին, [Վարդ Պատրիկը] պատմեց նրանց՝ ինչ որ տեսել էր, իսկ նրանք գոհութիւն յայտնեցին մարդասէր Աստուծուն։ Եւ առաւ

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին բառերը ձեռագրում չկան։ Պակասը վերականգնելի է Ոսկեփորիկի զրչագրերից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 35, տողատակ 23)։

\*\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին բառերը («բերեցին յապարանս իւր») կորսուած են մեր ձեռագրում եւ վերականգնելի են Ոսկեփորիկից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 36, տողատակ 5)։

իր Հարստութիւնը [զանձերն] [ու] բաժանեց ազքասներին: Եւ որքան որ կենդանի էր, իր Հանգերձի տակից փոքրիկ մագեղէն [չոր] Հագաւ մինչեւ արմունկները, ու ոչ ոք չիմացաւ [զրա մասին] մինչեւ նրա մահուան օրը:

Հէնց նրա ժամանակներում [օրերում] յայտնուեց Վարագ լեռան սուրբ խաչը, եւ Հայոց թուականն էր [[Հարիւր երկուսը [ՃԲ]<sup>129</sup> եւ բարեպաշտ Վարդ Պատրիկը գնաց երկրպագելու Վարագայ սուրբ նշանին]]<sup>\*</sup>:

\* Կրկնակի փակագծերի մէջ թարգմանուած վերջին տողը պահպանուած է միայն Ոսեփորիկի բնագրում («ՃԲ. եւ բարեպաշտն Վարդ Պատրիկ գնաց յերկրպագութիւնն սուրբ նշանին Վարագայ»): զրա փոխարէն մեր ձեռագրում առկայ է միայն «ԲՃ» վրիպեալ տարբերիւր (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունի, էջ 36, տողատակ 20):

[Գ.<sup>130</sup>]

[1.] Եւ Պատրիկն ապրելով ուխտուն [2] տարի՝ վախճանուեց, ու մնաց նրա սրբի Մուշեղը. եւ [սա] նման չէր իր չօրը:

Ապա գժտութիւն ընկաւ Հայոց երկրում [տանը]: Քանզի չկամեցան Մանած[եղ]ի<sup>\*</sup> տունը [տան] տիրակալութիւնը եւ Հայոց աշխարհը բաժանեցին Բագրատունիների<sup>\*\*</sup> ու Արծրունիների միջեւ<sup>131</sup>: Եւ Հայոց աշխարհի [իրենց] բաժինը սաացան՝ Հիւսիսային կողմը՝ Բագրատունեաց տունը [տունը], որի [իշխանի] անունն էլ Բագրատ էր, [իսկ] Վասպուրականի կողմը՝ Արծրունեաց տունը [տունը]<sup>132</sup>:

[2.] Եւ [այս տունը] զլիսաւորները երկու [Բ] եղբայրներ էին՝ Գագիկն ու Սմայատը<sup>\*\*\*</sup>: Եւ Հաղբակի<sup>133</sup> գաւառը շէնացուեց [չինուեց] այս Գագիկի<sup>\*\*\*\*</sup> կողմից: Ու եղան [նրան] երեք [Գ] սրբիներ՝ մէկի անունը՝ Աշոտ, երկրորդինը՝ Գրիգոր, եւ միւսինը՝ Համա][ղատ: Եւ եղաւ մի սրբի, ու նրա անունը գրեցին Աշոտ<sup>134</sup>: Եւ Աշոտին եղան երկու [Բ] սրբիներ՝ Գագիկն ու ՍաՀակը. եւ ՍաՀակին սրբի չեղաւ: Իսկ [նա] իրեն կին էր աւել Սմայատունն՝ Աշոտ Բագրատունու դստերը:

[3.] Եւ Սմայատունին աղաչեց իր ամուսնուն՝ ՍաՀակին<sup>\*\*\*\*\*</sup>, ու ասաց. «Ուզում եմ; որ Հրաման տաս, սրպէսզի ուխտի գնամ Աշ[ատ]ոյ անապատ<sup>135</sup>

\* Տե՛ս վերեւում, ծնթ. 111:

\*\* Բնագիրն այստեղ եւ ստորեւ առաւել յաճախ տալիս է անձնանուան՝ «Բաքրատ» ձեւը, որն ընդգծուած բարբառային է:

\*\*\* Բնագրում այս անձնանունն ամենուր գրուած է Սմայատ (յաճախ՝ Սըմայատ) տարբերակով, այլ ոչ թէ աւելի սովորական՝ Սմբատ (նոյն կերպ է նաեւ յաջորդիւ Սմայատուհի-ն), ուստի թարգմանութեան մէջ պահուած ենք այն:

\*\*\*\* Բնագրում բարբառային-խօսուածքային պարզազրուութեամբ՝ «շինեաց Կագկայս այս»: Այս Կագիկ անուանատարբերակն, ըստ ամենայնի՝ հիմնականն է մեր բնագրի կա՛մ հեղինակի, կա՛մ զրէի համար: Երբեմն հանդիպում է նաեւ Կակիկ, եւ լոկ հազուադիւր դէպքերում՝ Գագիկ: Բայց հէնց վերջինը, որ աւելի սովորականն է մեր գրաւոր ականգոյթում, առկայ է նախորդ տողում, այսինքն ընդօրինակման առաջին դէպքում. դա թոյլ է տալիս ենթադրել հէնց նրա՛ հեղինակային լինելը եւ թարգմանութեան մէջ պահել այն:

\*\*\*\*\* Բնագրում այստեղ՝ զխախտակ:

եւ ազաշեմ անխոնջ [անդադար] Հայր եւ սուրբ [մարդ] Գրիգորիոսին, որ նա էլ ազաշի սուրբ նաւատակներին [վկաներին], որպէսզի Աստուած մեզ զաւակ տայ, իսկ մենք փոխարէնը նրան [զաւակին] տանք Տէր Աստուծոն»: Եւ Սաւակն ասում է. «Բարի է խօսքդ, որ ասացիր»:

[4] Եւ Սաւակն ու իր կին Սմայատուհին\* վեր կացան գնացին եւ սպիտակ եզներ ու սպիտակ գառներ տարան սուրբ եկեղեցիներին: Եւ Հայր Գրիգորին\*\* ասացին. «Գիշերը Հսկում կատարի՛ր սաղմոսերգերով ու աղօթքներով եւ խնդրի՛ր Աստուծոյ ու այդ սուրբ նաւատակից, որպէսզի ողորմայ [այցելի] ու արու զաւակ տայ մեզ, իսկ մենք փոխարէնը Տիրոջը կը տանք նրան [զաւակին] իր կեանքի ամբողջ ընթացքում [օրերում]»: Եւ աղօթեց Հայր Գրիգորն, ու [նաեւ] իր վանականները, քանի որ նա բազմաթիւ ճգնաւորներ ունէր՝ արդար մարդիկ:

[5] Ապա վերագարձան եկան իրենց արքունիքը: Եւ Աստուած ողորմաց [այցելեց] նրանց, որովհետեւ նրա կին Սմայատուհին յղիացաւ ու արու զաւակ ծննդաբերեց: Իսկ Հայրն ու մայրը սղային վերցրին տարան Աշատի\*\*\* վանքը՝ երանելի Գրիգորի մօտ: Եւ կնքեցին մանկանն ու նրան անուանակոչեցին սուրբ Գրիգորի անունով: Եւ մեծացրին [սնուցեցին] մանկանը, ու երբ ժամանակը եկաւ, տարան վանքը. եւ իրենց Հեա [վերցրին] բազմաքանակ ընծաներ, իսկ բոլոր կրօնաւորներին՝ զգեստներ ու Հողաթափիկներ:

[6] Եւ Սմայատուհի տիկինը սղային տուեց [մատուցեց] սուրբ Հայր Գրիգորիոսին ու ասաց. «Տէ՛ր, ընդունի՛ր այս մանկանն իմ գրկից՝ ինչպէս Հին Ժամա[նա]կներում [ընդունեցիր] Սամուէլին<sup>136</sup>. Տիրոջը փոխ եմ տալիս նրան իր կեանքի ամբողջ ընթացքում [օրերում]»: Իսկ նրա Հայրը՝ Սաւակը, մանկանն անուանակոչեց Գերէն, որ նշանակում է՝ «վանքի որդի»<sup>137</sup>:

[7.] Եւ ապա մանուկը մեծացաւ [աճեց] ու ուսում առաւ, եւ վանաւայրը նրան կրօնաւորի զգեստ [Հանդերձ] Հագրեց: Իսկ երբ սղան դարձաւ երե-

\* Բնագրում այստեղ՝ Սըմբատուհի, բայց վերելում եւ ստորել՝ Սմայատուհի:

\*\* Բնագրում (նաեւ ստորել)՝ Գրիգոր, թէպէտ վերելում քանիցս՝ Գրիգորիոս էր:

\*\*\* Բնագրում՝ Աշատայ. վերելում տեղանունը՝ Աշոյ ձեւով էր (տե՛ս ծնթ. 135):

սուն տարեկան եւ արդէն սովորել էր [եկեղեցական] ամբողջ ուղիղ կարգն ու գեղեցիկ ձայն ունէր, ապա Հայր Գրիգորը կամեցաւ նրան քաւանալովթեան կարգ տալ [ձեռնադրել]:

[8] Բայց վանքում կար մի գեղեցիկ աղջիկ՝ Հայր Գրիգորի քրոջ գուսարը, ու նրան [աղջկան] միանձնուհու [Հաւատաւորի] զգեստ էին Հագրել եւ մի օր [այնպէս] եղաւ, որ վանքի վերելում ոսպ էին քաղում ու մենակ էին պատանի [մանուկ] Գերէնն էր, եւ մէկ էլ միանձնուհի [Հաւատաւոր] աղջիկը, իսկ Գերէնը վաղուց [չատուց] ցանկանում էր աղջկան ու յանկարծակի բռնեց նրան եւ Հարկագրեց ու կատարեց իր կամքը:

[9] Եւ երբ վանաւայրն իմացաւ, [մարդ] ուղարկեց սղայի [մանկան] Հօր՝ Սաւակ իշխանի մօտ ու ասաց. «Տեսնո՞ւմ ես, ինչ արեց այս սղան [մանուկը], այլեւս չի կարող [սա] մնալ [ընկուել] վանքում, որովհետեւ եկեղեցիների գառները չեն կարող առիւծների կորիւնների Հանդուրժել, քանզի [սա] արատաւորեց [ապականեց] եկեղեցիների որոջին, որին բազում շարշարանքով մեծացրի [սնուցեցի]»:

[10] Եւ ապա վերցրեց սղային [մանկանը] իր Հայր Սաւակ իշխանը, իսկ Սինեայ իշխանի դստերը բերեց ու կնուիթեան տուեց սղային [մանկանը]: Եւ Գեր[էն]ին որդի եղաւ, ու [Գերէնը] նրան անուանեց Աշոտ: Եւ Աշոտն ունեցաւ երեք [Գ] որդի եւ անուանեց՝ աւագին՝ Գրիգոր Գերէն, միւսին՝ Գագիկ, իսկ երրորդին՝ Համազասպ\*\* : Եւ երեք [Գ] եղբայրները [իրար մէջ] բաժանեցին Վասպուրականի երկիրը. Վանը, որ Տոսբի<sup>138</sup> գաւառում [է], Գրիգոր Գեր[էն]ի բաժինը [դարձաւ], Ամուրն Կայանը<sup>139</sup> եւ Կոտորի ամրոցն<sup>140</sup> ու ձուաշի գաւառը՝ միւս եղբօր՝ Գագիկի [բաժինը], իսկ Հաղբակի գաւառը [տունը]՝ կրտսեր Համազասպի:

\* Բնագրում՝ զոր ոչն, որն արդէն Մեսրոպ եպիսկոպոսն ուղղել է՝ զորոջն (Հեղինակի կամ գրչի Համար սովորական՝ Զ-Չ սխալագրութեամբ. նշանակում է՝ «էգ գառ»). տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունցոյ, էջ 39, տողատակ 17:

\*\* Այս անունը, որ բնագրում նախորդիւ բազմիցս արձանագրուած էր իր սովորական ձեւով, այստեղ եւ ստորել Հանդէս է գալիս միմիայն՝ Համազասպ տարբերակով. սակայն այն ակնյայտօրէն բարբառային-խօսուածքային է:



[11] Առատաձեռն ու զուարթ մարդ էր [Գրիգոր Գերէնը], եւ աշխարհում նրա նման մէկ ուրիշ մարդ չկար՝ ոչ մեծերից ու ոչ էլ փոքրերից: Ու նա մի ծառայ սնէր Գնունիների սոսնից [տանից]՝ Գորգ Չափրան՝ անունով: Եւ նա [Գերէնը թեպէտ] արքունիք սնէր Վանում, բայց երբ գալիս էր ճաշի ժամը, իջնում էր Վանի Հրապարակը [մնտանը] ու այնտեղ էր սեղան նստում: Եւ ճանապարհորդներից եթէ մարդ էր անցնում, կանչել էր աւլիս ու նստեցնում, [Հեսն] ուտում էր ու խմում, նոյն կերպ եւ քաղաքացիներին՝ լաւին ու վատին: Ամէն ոք սովոր էր գալ եւ սեղան նստել, իսկ ուտելուն ու խմելուն չափ չկար:

[12] Եւ ապա սկսեց [Գրիգոր Գերէնը] չքաւորանալ: Այդ ժամանակ նրա եղբայրները ծաղրում էին իրեն, որովհետեւ սպառուեց [պակասեց] նրա ամբողջ սնեցուածքը, որ իր Հայրերն էին ամբարել, նաեւ [սպառուեցին] նրա երամակներն ու նախիրները: Ու ապա սկսեց իր սնեցած երկիրը վաճառել իր եղբայրներին. եւ առնում էր բերդերի գինն ու գիւղերի գանձերը եւ ստում էր ու խմում: Եւ չթողեց իր սովորական բնաւորութիւնը, մինչեւ որ եկաւ Հաստատուեց իր Վան կոչուող քաղաքում:

[13] Եւ ապա եկաւ նրա եղբայր Գագիկը եւ նրան սուեց գանձեր ու շքեղ Հանդերձներ, ձիեր ու ջորիներ եւ գնեց Վան քաղաքը: Եւ չթողեց [նրան] իր ապարանքներից ոչ մէկը, որ բնակուէր [նստէր] դրա մէջ, որպէսզի երբ լոյսը բացուէր, գային սովորական [այցելու]ները՝ փողՀարները եւ քնարաՀարներն ու տաւիղաՀարները, իսկ պարողները կաքաւէին նրա առջեւ: Եւ նա ձգտում [ցնորք] կամ Հոգս չունէր աւագութեան [իր սոսնում], ինչպէս որ [իր] Հայրերն էին, այլ միայն ուտում էր ու խմում:

[14] Եւ ապա քրեցին նրան իր ազատանու գնդերը, ու սմանք [կէսը] գնացին նրանից իր Գագիկ եղբոր մօտ, իսկ մնացածը [կէսը]՝ Համապասփ մօտ: Եւ ուր լսում էին [նրա մասին], ծաղրում էին նրան: Եւ նրա զօրքերից ու

\* Բնազրում այստեղ եւ յետոյ առաւելապէս՝ Չափրան: Սակայն ունենք նաեւ Չափրան տարբերակով (օր.՝ պարագրաֆ 15-ի 2-րդ նախադասութեան մէջ), որն աւելի յարիւր է գրութեան ժամանակին, ուստի թարգմանութեան մէջ դա ենք պահում:

ազատանուց ոչ ոք չմնաց նրա մօտ, բացի միայն իր ծառայ Չափրանից, որ Գնունեաց սոսնից [տանից] էր:

[15] Եւ աղքատացաւ Գերէնը, ու ոչինչ չմնաց նրան, բացի միայն երկու [Բ] ձիուց՝ մէկն՝ իրենը, եւ միւսը՝ նրա ծառայ Չափրանինը: Իսկ մի կիրակի օր Գերէնը Գորգ Չափրանին՝ ասում է. «Այսօր ոչինչ չունենք՝ վայելելու», [ու] Հարցնում է, թէ՛ «ի՞նչ անենք»: Եւ նա ասում է. «Այսօր ա՛ն իմ ձին, նաեւ իմ Հանդերձները եւ իմ զրաւն ու իմ սաղաւարտը. եւ վաճառի՛ր այսօր ու պակաս մի՛ թող քո սովորական սեղանը: Իսկ վազն Աստուած ինչ պատրաստի, այն կ'անենք»: Ու այն օրն էլ ճաշ[կերոյթ] պատրաստեցին ըստ իրենց սովորութեան եւ ուրախացան մինչեւ իրիկուն: Եւ ամէն մարդ գնաց իր տունն, ու մնացին միայն Գերէնը եւ նրա ծառայ Չափրանը, նաեւ՝ մի սպասաւոր [նուիրակ] ու մի մատու[ռ]ակ եւ ուրիշ՝ ոչ ոք:

[16] Եւ նստել էին Գերէնն ու նրա ծառայ Չափրանը եւ մտածում էին, թէ առաւօտեան կը վաճառենք Գերէնի ձին ու Հանդերձները եւ կը պատրաստենք վաղուայ ճաշ[կերոյթ]: Մինչ նրանք այդ էին խորհում, ճամփան մի մարդ էր գալիս. տեսաւ մոմերի լոյսը եւ եկաւ նստեց վրանի դռանը: Գերէնը կանչեց նրան ու ասաց. «Ո՞վ ես եւ ինչո՞ւ ես եկել»: Իսկ նա շէր կարողանում խօսել, որովհետեւ Տաճիկ [արաբ] ազգից էր:

[17] Եւ Չափրանը գնաց, բռնեց [նրան] ու բերեց վրանը՝ Գերէնի մօտ: Եւ Գերէնը նրա Հես խօսեց Տաճիկ լեզուով [արաբերէն], որովհետեւ սովորել էր Տաճիկ լեզուն, ու ասաց. «Որտեղի՞ց ես գալիս»: Իսկ նա ասաց. «Ասորիքից [Ասորեստանից] եմ գալիս, իսկ չեմ կարողանում խօսել որովհետեւ ինձ վիրաւորել են բազմաթիւ տեղերից. բայց եթէ Աստուծոյ բարեբախտութիւն [ճար] կայ [ինձ], գեղ դրէ՛ք վերքերիս»: Այդ ժամանակ Գերէնը բացեց նրա գլխի ու ձեռքի վերքերը [խոցուածքը] եւ գեղ դրեց վերքերին, քանի որ Հմուտ էր բժշկական արհեստների մէջ. եւ աւելի կամ պակաս Հարցումներ չարեց:

\* Բնազրում այստեղ (ինչպէս նաեւ յաջորդ պարբերութեան սկզբում)՝ Չափրան:

[18] Նրա առջեւ սեղան ու բաժակ դրեց [Դերէնը] եւ խիստ մեծարեց նրան՝ մինչեւ այդ մարդը զարմացաւ նրա բարեմասութեան վրայ. քանի որ Դերէնը բաժակը դրեց նրա ձեռքը, քնարն առաւ [իր] ձեռքը եւ ուրախացնում էր նրան: Եւ [մարդն] այնչա՛փ Հաւանեց [սիրեց] նրան, քանզի Դերէնը զուարթ ու սիրուն, բարեմիտ ու լաւատեսք մարդ էր:

[19] Եւ երբ լոյսը բացուեց, օտարազգի մարդը վեր կացաւ, ասաց. «Ո՛վ դու բարի մա՛րդ, այնքան բարեմիտ ես դու, որ մարդկանց մէջ քեզ նման ուրիշ մէկի չեմ տեսել. քանզի չհարցրեցիր ինձ, թէ՛ որտեղի՞ց ես գալիս, կամ ո՞ւր ես գնում»: Այդ ժամ օտարազգի մարդը [նաեւ] ասում է. «Ես Բաբելոնացոյ արքան եմ, բայց մեր Բաղտա֊ քաղաք արեւմուտքից այլազգիներ եկան, որ Արաբիկներ<sup>141</sup> են կոչուում, եւ ես ելայ նրանց դեմ պատերազմի: Իսկ իմ զօրքերը դաւաճանեցին [նենգեցին] ինձ ու խռովութիւն բարձրացրին, եւ ես այստեղ եկայ Հալաճական, որովհետեւ Հնար [ճար] չեղաւ մանեղ իմ Բաղտա֊ քաղաքը: Ես ուղղութիւն վերցրի՛ գնալու Խորասանի երկիրը, քանի որ իմ քոյրը կինն է Խորասանի թագաւոր Ապուհուրիշի, որ Գնդաց<sup>142</sup> աշխարհի արքան է: Բայց ճանապարհին իմ ծառաները քեցին ինձ, եւ ես ուղղութիւն վերցրի Դերէն իշխանի մօտ (ասում են, թէ նա է այս քաղաքի տէրը), որովհետեւ երբ ես իմ Բաղտա֊ քաղաքում էի, իմ առջեւ պատմում էին [գրոյց էին անում] այդ մարդու առատաձեռնութեան մասին: Եւ երբ իմ ծառաները քեցին ինձ, ա՛հ ես դիմելով՝ նրա մօտ եկայ. մի գուցէ ինձ ձի եւ մարդ տայ ու առաջնորդի ինձ արեւեք, որպէսզի գնամ իմ փեսայի մօտ եւ նրանից զօրք ու շատ գանձեր առնեմ եւ գնամ իմ թշնամիների դեմ պատերազմեմ ու ազատեմ իմ Բաղտա֊ քաղաքը: Աղաչում եմ քեզ, ո՛վ դու բարի մա՛րդ, տա՛ր ինձ Դերէնիկի՝ մօտ, որպէսզի [նա] Հոգայ իմ ճանապարհի [խնդիրը], իսկ քեզ Համար թող քո Աստուծոյ բարիքը լինի, որին պաշտում ես»:

[20] Դերէնը նայում էր Չափրանին ու ծիծաղում. իսկ օտարազգին տխրելով [տրամելով]՝ ասում է. «Մի՛ ծիծաղիր, աղաչում եմ քեզ, ինձ տա՛ր

\* Բնագրում այստեղ եւ ստորեւ, ամբողջ պարագրաֆում առաւելապէս՝ Բաղտատ (կամ Պաղտատ):

\*\* Բնագրում այստեղ՝ Դերեհիհն:

նրա մօտ»: Այդ ժամանակ Դերէնն ասում է. «Դերէնն այստեղ չէ, բայց ես կը պատրաստեմ [կը Հոգամ] քեզ, ուր որ կամենաս [գնալ]»: Իսկ նա ասում է. «Մի՛ սախր, ես լսել եմ, որ այստեղ է»: Եւ նա ասում է. «Այստեղ չէ»: Այդ ժամանակ բռնեց նրա ձեռքը, Համբուրեց այն ու ասաց. «Երբուի՛ր, որ Դերէնն այստեղ չէ»: Իսկ նա ասաց. «Ինչո՞ւ երգուեմ, ես եմ Դերէնը, որին դու որոնում ես»:

[21] Եւ նա զարմացաւ ու ասաց. «Հապա այս ինչպէ՞ս է, որ նստել ես քաղաքադռանը. փա՛կ է այս քաղաքը, [չէ՞ որ] քսնն է նաեւ այդ բարձր աշտարակը. ի՛նչ է [պատահել] քեզ, ասա՛ ինձ»: Եւ նա պատմեց նրան այն ամենն, ինչ որ արել էր: Եւ [օտարականը] զարմացաւ: Իսկ Դերէնն ասում է. «Ո՛վ Բաբելոնացոյ մեծ արքայ, երեկուայ օրը իմ ծառայի ձին վաճառեցինք ու վայելեցինք, իսկ այսօր իմն էինք ուզում վաճառել. բայց չիմա՛՝ վեր կա՛ց [արի՛], Հեծի՛ր իմ ձին եւ Հափի՛ր իմ Հագուստներն ու իմ թուրը վերցրո՛ւ քեզ Հեա»: Ապա կանչեց մի մարդու, որ գիտէր Պարսկաստան տանող ճանապարհն անցնելը, եւ տուեց նրա [մի քանի] դահեկան վարձն ու [օտարականին] նրա Հեա ուղարկեց մինչեւ Խորասան:

[22] Եւ երբ նա գնաց, Դերէնն ասաց Չափրանին. «Մենք չպէտք է մնանք այս քաղաքում, որովհետեւ մեզ կատակի են տալիս ու ծաղրում. վեր կա՛ց [արի՛], գնանք Ասորոց [Ասորեստանի] երկիրը, որ անձանօթ լինենք տեղ[ացիներ]ին, որպէսզի կարողանանք մէկնումէկին ծառայել ու ապրել»:

[23] Եւ նախ ելան ու գնացին Մօս[ու]լ<sup>143</sup> քաղաքը: Եւ [տեսան՝] երեք [Գ] մարդ նստել են քաղաքադռանը. սրանք Հարբաճ էին, բայց էլի խմում էին. եւ օրն իրիկուայ մօտ էր, իսկ Դերէնը յոգնել էր ճանապարհին. եկան ինքն ու Չափրանը եւ նստեցին նրանց մօտ: Նրանցից [նստածներից] մէկը Հարցրեց՝ ասելով. «Դուք որտեղի՞ց էք գալիս»: Եւ նրանք ասացին. «Հայոց Հեռաւոր աշխարհից, Վանից»: Ու երբ լսեցին [դա], Հարցրին. «Ինչպէ՛ս է այն բարեհամբաւ իշխանը, որին Դերէն են անուանում [ասում]»: Եւ նա ասում է. «Լաւ [է]»: Իսկ նրանք ստիպեցին սրանց երգում տալ եւ [մէկը] Հարցնում է. «Ասա՛, ճի՛շտ է, ինչ որ նրա մասին պատմում [ասում] են»: Եւ

Գերէնը Հարցնում է. «Ի՞նչ են պատմում [ասում]»: Իսկ Մօսուցի մարդիկ ասում են. «Մեր վաճառականները գալիս ու պատմում [ասում] են, թէ այն Գերէնն ունի սովորութիւն՝ վրանը խփել է այն ճանապարհի վրայ, որ քաղաքի մայրուղին [պողոսան] է, ու այնտեղ բացել է իր սեղանը օրն առաւօտից, եւ ամեն օր նստեցնում է բոլոր ճամփորդներին՝ լալին ու վառին, նաեւ քաղաքի բնակիչներին, եւ բազմաթիւ երգիչներ ու գուսաններ Հնչեցնում են իրենց երգերը [ձայները] մինչեւ երեկոյ, եւ [ուշ մի] մարդ Հսար [ճարակ] չունի իր տունը գնալ աւա այս է նրա սովորութիւնը»: [Գերէնն] ասում է. «Ճշմարիտ են այդ բաները, որ ասում են այն մարդու մասին»: Նրանք Հարցնում են. «Մի՞շտ է [դա] անում»: Եւ նա ասում է. «Այո՛, ճշմարիտ են նրանք, որ [դա] պատմել [ասել] են»: Նրանք զարմացան ու ասացին. «Ի՞նչպէ՛ս է կարողանում դա անել»: [Իսկ] Չափրանն ասաց. «Այս է Գերէնը»:

[24] Եւ նրան վերցրին տարան այն տունը, որտեղ նրանք ճաշելու էին այդ օրը: Իսկ դրանք քաղաքի պատուական ու յարգարժան [Հարկետոր] երեք [Գ] մարդիկ էին, եւ նրանց սովորութիւնն էր՝ մի օր երեքն [Գ] էլ [իրենցից] մէկի մօտ էին ճաշի լինում: Իսկ միւս օրը՝ մէկ այլի մօտ, ուտում ու խմում էին, իսկ [նա], որի տանը լինում էին, իր ունեցուածքից ըստ իր կարողութեան [ինչ-որ բան] էր տալիս նրանց [միւսներին]: Աւա այսպիսին էր նրանց ամենօրեայ [Հանապազօր] սովորութիւնը: Եւ երբ Գերէնին տարան նրանցից մէկի տունը, պատուով նստեցրին նրան՝ որպէս վայել էր, կերան ու խմեցին, իսկ տանտէրը բերեց Գերէնի առջեւ դրեց իր ինչքից՝ Հանդերձներ, սսկէ եւ արծաթէ թանկարժէք իրեր [գանձեր]. եւ առաւ կապեց ու մատանիով կնքեց դրանք՝ ասելով. «Թող մնայ քեզ մօտ, պա՛հի՛ր, մինչեւ որ եւ ես կը գամ՝ քեզ մօտ»: Եւ ապա միւս ընկերն էլ այդպէս արեց: Իսկ նա բոլոր այդ մարդկանց [տուած] իրերը Հաւաքեց [դրեց] իր մօտ, եւ ինքը ճամփայ ընկաւ գնաց Բաղտապ քաղաքը:

[25] Երբ Հասան Բաղտապ քաղաքին, մտան ներսը [եւ] գնացին քաղաքի Հրապարակը [մոյտանը]: Իսկ Բաղտապի արքան՝ [նա], որը Վան էր եկել եւ այնտեղից գնացել Խորասան, ու այնտեղից [էլ] բազմաթիւ զօրքեր ու մեծ գանձեր առնելով՝ եկել ջարդել էր իր թշնամիներին եւ տիրացել Բաղտապ

քաղաքին, Հէնց [նա] ձի էր Հեծել ու շրջում էր քաղաքի մոյտանում\* [Հրապարակում], իսկ ուրիշները պարում [խաղում] էին նրա առջեւ: Եւ արքան տեսնելով Գերէնին ու Չափրանին՝ ճանաչեց. կանչեց իր սպասաւորներից [ծառաններից] մէկին եւ ասաց. «Տեսնո՞ւմ ես այն երկու [Բ] մարդուն, գնա՛ վերցրո՛ւ նրանց եւ տա՛ր արքունի բազնիքը»: Իսկ ինքը գնաց իր ապարանքը եւ պատրաստութիւն աեսնել տուեց իր տանը, կանչեց իր մեծամեծերին ու զարդարեց իր ամենաբարձր գաճոյքը: Ապա Գերէնին շքեղ [պատուական] Հագուսաներ եւ սսկեհուս սարուածքով ձի ուղարկեց. նաեւ իր մեծամեծերից [ոմանց] ուղարկեց՝ Գերէնին Հրաւիրելու: Եւ երբ [նրան] բերին մոյցրին պալատը [արքունիք], նաեւ ինքը՝ արքան վեր կացաւ ընդառաջ [գնաց] նրան: Եւ Հասնելով՝ գիրկն առաւ ու Համբուրեց նրան, իսկ իր բոլոր մեծամեծերին ասաց. «Երկրպագէ՛ք սրան»: Ապա բռնեց նրա ձեռքից եւ բարձրացրեց ու նստեցրեց իր գաճոյքին, իսկ ինքը նստեց նրա առջեւում: Բայց ճանաչել չտուեց նրան, թէ ով է ինքը, եւ Գերէնը շճանաչեց նրան: Եւ ութ [Ը] օր այսպէս արեց, ու ամեն օր շքեղ Հագուսաններ, ձիեր ու ջորիներ, բազում թանկարժէք իրեր [գանձեր], մարգարիտներ ու թանկագին քարեր [ակներ] էր տալիս [Գերէնին]:

[26] Եւ երբ ութ [Ը] օրը լրացաւ, Հաւաքեց [ժողովեց] բոլոր քաղաքացիներին. եւ կանչեց առՀասարակ մեծամեծերից [սկսած] մինչեւ փոքրերին: Եւ երբ նստեցին [բազմեցին] արքունի տանը (կային նաեւ, որ սաքի վրայ էին մնացել), արքան վեր կացաւ, ձեռքն առաւ բաժակը եւ ասաց. «Լսեցէ՛ք, ս՛վ իմ Բաղտապ քաղաքի մարդի՛կ, իմ իշխաննե՛ր եւ իմ մեծամեծե՛ր, ես գիտեմ, որ զարմացած էք այս մարդու Համար, որ բազմել է իմ գաճի վրայ. ամեն մարդ [էլ] իր մտքում կը խորՀէր, թէ՛ ինչ վայել է այսպիսի մեծարանքի արժանացնել մի օտարական մարդու: Եւ ինքը Գերէնն էլ չափազանց զարմացել է, որովհետեւ նա էլ չի ճանաչել, թէ ով եմ ես»: Եւ երբ այս ասաց, Հարցրեց Գերէնին, թէ՛ «Ո՞վ եմ ես»: Գերէնն ասաց. «Դու Բաբելացոց արքան ես, բայց անսունգ չգիտեմ»: Իսկ արքան սաքի վրայ կանգնած էր նրա առջեւ ու թող չէր տալիս նրան սաքի ելնել: Եւ Բաբելացոց արքան ասում է. «Քեզ

\* Բնագրում այստեղ մէտան, իսկ վերելում քանիցս մոյտան էր:

Վարագում գանուող խաչով եմ երդուեցնում, չէ՛ս ճանաչել ինձ»։ Իսկ Դերենն ասում է. «Աստուած ու իմ սուրբ Նշանը՝ վկայ [գիտե՛], որ չեմ ճանաչել թէ ով ես դու»։ Արքան ասում է. «Դու Դերենն ես, որ Վանում էիր, իսկ սա քո սպասաւոր Չափրանն է»։ Դերենն ասում է. «Աղաչում եմ քեզ, արքայ՝, ասա՛, սրաե՞զ ես ինձ տեսեր»։ Արքան ասում է. «Ես նա եմ, որ եկայ քեզ մօտ քո վրանը, իսկ դու այնպէս ընդունեցիր ինձ, որ մարդկանցից ոչ մէկը չի կարող անել։ Իսկ Բաղտադի ամբողջ երկիրը [տանը] զարմացած է, եւ ասում են, թէ քո առջեւ [երեսին] մեծարանք եմ արել։ Բայց լսեցէ՛ք, իմ մեծամեծե՛ր եւ փոքրե՛ր, չեմ կարողանայ ես Հատուցել սրա այն երախտիքը, որ ինձ Համար արեց սա. եւ եթէ իմ արիւնն [էլ] չեղեմ ու մեռնեմ՝ սրա Համար, [դարձեալ] չեմ կարողանայ Հատուցել սրան»։ Եւ պատմեց այն ամենը, ինչ որ արել էր Դերենն, ու ասաց. «Եթէ սա շլինէր, կենդանի չէի մնայ [չէի ապրի] այն ժամանակ, բայց սա շնորհատու եղաւ ինձ, եւ սրա շնորհիւ ես տիրացայ Բաղտադի երկրին [տանը] եւ բոլոր բաբելացիներին։ Եւ ասում եմ քեզ, Դերեն, սա, [որ] Բաբելացոց երկիրն է, եւ այս Բաղտադ քաղաքը թող քո ծառայութեան տակ լինեն. եւ իմ ամբողջ Հարստութիւնը [գանձերը], իմ ձիերն ու ջորիները եւ իմ ուղտերի երամակները՝ թող լինեն քո ծառայութեան տակ»։

[27.] Եւ ապա արքան իր մեծամեծերին ու վաճառականներին ասում է. «Ամենքդ սրա Համար նուէրներ [տուրք] բերէ՛ք»։ Եւ բոլորն սկսեցին՝ իւրաքանչիւրն ըստ կարողութեան՝ բերել ոսկու եւ արծաթի գանձեր ու շքեղ [պատուական] Հագուստներ։ Թագաւորը եւս նրան տուեց շատ գանձեր, ազնուացեղ ձիեր ու բազմաթիւ ուղտեր։ Ապա մեծարեց նրան եւ ասաց. «Գնա՛ եւ գրաւի՛ր քո երկիրը. եւ իմ գաւառներից՝ որը որ քո սիրաը կը ցանկանայ, գրի՛ր ինձ, ու ես կը տամ քեզ»։ Եւ մեծ պատուով նրան ճանապարհ գրեց՝ նաեւ տալով նրան իր առջեւից գնացող սպասաւորներ [պաշտօնեաներ], որպէսզի վճարեն նրա ճանապարհի ծախսերը, մինչեւ որ գան Հասնեն Վասպուրահանի երկիրը։

\* Բնագրում այստեղ՝ արգայ՝ խօսուածքային Բ-Գ սխալագրութեամբ, որը կայ եւ յետոյ, թէպէտ վերեւում եւ ստորեւ աւելի շատ ունենք՝ արքայ։  
\*\* Բնագրում միասին՝ ուղտերամակը։

[28.] Եւ երբ Հասան Յարգուն<sup>144</sup>, որ Միջագետքում [է], Դերենի՞ եղբայրներն ամեն ինչ իմացան [լսեցին] նրա մեծարման մասին, որը նրան արել էր Բաբելացոց արքան, ու սաստիկ վախեցան։ Բայց պատրաստեցին [սարքաւորեցին] Շամիրայ [Շամիրամի]<sup>145</sup> ամրութիւնները՝ Վանը, եւ բոլոր բերդերն ու ամրոցները՝<sup>\*\*</sup> Եւ միաբանուեցին երկու եղբայրները՝ Գադիկն ու Համազասպը, եւ Հաւաքեցին [ժողովեցին] իրենց զօրքերն ու կամենում էին պատերազմել Դերենի դէմ։

[Իսկ Դերենն] ուղարկեց ու Հաւաքեց [ժողովեց] Ասորոց երկրի եւ Միջագետքի բոլոր զօրքերը՝ մօտ երեք Հարիւր Հազար մարդ [ԳՃՈ]։ Քանզի լսեց, թէ իր եղբայրներին օգնում են [այն] պարսիկները, որ բնակուում են Հերում<sup>146</sup>, Մարանդում<sup>147</sup> ու Սալամաստում<sup>148</sup>, ուր<sup>149</sup> եւ Հաւաքուեցին նրանք Գադիկի ու Համազասպի Հետ եւ եկան Հասան ու բանակեցին մի դաշտում, որ կոչում են Էգիս<sup>150</sup>։

[29.] Դերենը բազմաթիւ զօրքերով եկաւ Հասաւ Դատվանի դաշտը<sup>151</sup> ու կամեցաւ անցնել Թխաջուրը<sup>152</sup>։ Եւ ապա Գադիկն ու Համազասպը նրան ընդառաջ երեք [Գ] եպիսկոպոսների ուղարկեցին՝ աղաչելու նրան, որ այլեւայլ ազգերի զօրքերի բազմութիւնը չբերի Հայոց աշխարհի վրայ։ Եւ նրանք եկան աղաչեցին Դերենին, իսկ սա լսեց նրանց։ Ու երգում տալով՝ իր մօտ կանչեց իր եղբայրներին<sup>\*\*\*</sup>, եւ նրանք վստաւէրով՝ եկան Դերենի մօտ եւ տեսան, որ իրենց եղբայրը մեծարուած է բոլոր երկրների ու Բաբելացոց արքայի կողմից։

[30.] Եւ Դերենն ասում է իր եղբայրներին. «Կը նստէք ինձ մօտ, մինչեւ որ իմ ձեռքը կը յանձնէք բոլոր բերդերը՝ իմը եւ ձերը. իսկ յետոյ, եթէ Հաճելի լինի ինձ [իմ սրտին], կը տամ ձեզ, ինչ որ ես կը կամենամ իմ յօժար կամքով։ Իսկ եթէ ձեր մէջ նենգութիւն նկատեմ [գտնեմ], չէք կարողանայ ազատուել [ապրել] իմ ձեռքից»։ Եւ ինքն ուղարկեց իր Հնազանդ ծառայ Չափրանին՝

\* Ձեռագրում՝ Դերենն են, որին չկարողացանք որեւէ յատուկ իմաստ վերագրել։  
\*\* Բնագրում այստեղ՝ գամրոցաճիւն։  
\*\*\* Բնագրում աղաւաղուած ձեւով է՝ յգեղբայրն, եւ վերականգնելի է թւում՝ գեղբայրն։

[ասեղով]. «Գու գնա՛ ու տիրացի՛ր իմ բերդերին: Եւ Վանում՝ էլ նստեցրո՛ւ քո որդի Վարդեվանին՝ ու ինձ իմաց արա՛, եւ ապա ես յեա կ'ուղարկեմ՝ Ասորիքի զօրքերի բազմութիւնը»:

[31.] Եւ Չափրանը գնաց ու մտաւ Վան: Եւ գրաւեց բերդերն ու սուեց իր որդի Վարդեվանին: Նոյն կերպ գրաւեց նաեւ [Ս]եւանի բերդն<sup>153</sup> ու սուեց իր քրոջ որդուն, իսկ Նկան ամբողջ<sup>154</sup> [սուեց] իր Հօրեղիօսը, եւ Մարանդական<sup>155</sup> իր փեսային, Շիմաունի [ամբողջն]<sup>156</sup> ու Խոստորի ձորն Անձախում<sup>157</sup> սուեց իր գերուն: Եւ այս ամբողջն այսպէս արեց ու ապա [լուր] ուղարկեց իր աէր՝ Գերէնին:

[32.] Եւ սա ընտրեց քառասուն Հազար [Խ Ռ] նիզակաւոր [ուճաւոր՝ \*\*\*], իսկ մնացած զօրքերի ամբողջ բազմութեանը մեծարեց ու վերադարձեց Ասորոց [Ասորեստանի] երկիրը: Եւ եկաւ մտաւ Վան, ու ապա վերցնելով այն քաջ զօրքերը՝ յարձակուեց Պարսից զօրքի վրայ եւ մեծ քանակութեամբ [բազում] աւար գրաւեց ու վերադարձաւ Ճաշուկ<sup>158</sup>: Ապա եկաւ Ամասունի [տոհմից] մի մարդ (նրա անունը Սարի [էր]), որը ձախկի [Ճաշուկի]<sup>159</sup> բերդում էր. ելաւ ու ընդառաջ եկաւ եւ յանձնեց [սուեց] բերդը: Գերէնն ուրախացաւ ու նրան թանկարժէք իրեր [գանձ] եւ ձիեր, ջորիներ ու Հանդերձներ սուեց եւ շատ մեծարեց նրան: Իսկ ովքեր այլ բերդերում էին, երբ իմացան [լսեցին] այդ մասին, Հասան [արձակուեցին] Գերէնի մօտ եւ նրա առատաձեռնութեան ու զուարթամտութեան Համար բոլոր ամբողջները յանձնեցին [սուեցին] նրան եւ այլեւս չհնազանդուեցին Գագիկին ու Համազասպին: Եւ երբ գա իմացան [լսեցին] Գագիկն ու Համազասպը, քուեցին ու յուսաՀասուեցին [կործանուեցին] իրենց ներսում [սրտում] եւ ընդունեցին [Հաւանեցին] իրենց եղբօր [տիրակալութիւնը]:

\* Բնագրում այստեղ՝ զՎարդեվան, թէպէտ երեք տող յետոյ՝ Վարդան է:  
\*\* Ձեռագրում «առ այր իւր», որը հրատարակիչը վերծանելի է Համարել՝ պ[ա]-ր[ոն]: Բայց քանի որ վերջին բառը ուշ է մտել Հայերէն բառապաշարի մէջ (կիլիկեան շրջանում), ապա հնարաւոր է մտածել, որ դա մի գրչի վրիպման հետեւանք է, իսկ հեղինակային սկզբնօրինակում եղել է պարզապէս՝ ար (պատուոյ նշանի տակ), այսինքն՝ տ[է]ր:  
\*\*\* Բնագրում՝ ըղըմպատր:

[33.] Եւ Գերէնը միաճեծան տիրակալեց ամբողջ Վասպուրականի երկրին, իսկ իր եղբայրներին շտուեց [նոյնիսկ] այն, ինչ իրենց Հայրն էր բաժանել, եւ ոչ էլ՝ ուրիշ բերդերից կամ ամբողջներից, այլ սուեց [միայն] սակաւաթիւ [պակաս] գիւղեր Առճճաց [Արճուճքի]<sup>160</sup> գաւառում: Վեց գիւղ [բաժին] դարձան Գագիկին, իսկ Չէնն ու Սուրմը<sup>161</sup> եւ սակաւ [այլ] գիւղեր՝ Համազասպին: Եւ Գերէնն անշափ բարգաւաճեց [չէնացաւ]<sup>162</sup> ու ինքն [էլ] շէնացրեց, խաղաղացրեց Վասպուրականի աշխարհը: Եւ ամբողջ ժամանակ Բաբելացոց երկրից [տանից] բերում էին բազում ու անթիւր գանձեր, շքեղ [պատուական] Հագուստներ եւ ձիեր ու ջորիներ: Եւ Բաղտագի արքան շատ էր սիրում նրան, ուղարկում էր [գրանք] եւ ասում. «Մի՛ խնայիր իմ գանձերն ու զօրքերը, գրաւի՛ր [այն] երկրները՝, որ քո շուրջ են եւ յաղթի՛ր քո բոլոր թշնամիներին»:

[34.] Եւ նա գիմեց ու գնաց Չարեւանդ. եւ ամուր քաղաք շինեց, պարսպապատեց քաղաքն ու իր [Համար] բերդ դարձրեց [շինեց], որն անուանում [ասում] են Մողղքար<sup>163</sup>: Նաեւ Միջայ<sup>164</sup> ամբողջ [կառուցեց] եւ ամբողջ Աւարիդաշաի [Դաշտ Աւարին] գաւառը<sup>165</sup> կառուցապատեց [շինեց] մինչեւ Աղի ծովը<sup>166</sup>: Եւ զարկեց [Հարուածեց] Պարսից երկրին [տանը] ու Հերի գաշաի [սաՀամանա] գլխին շինեց Հողաբլուրը<sup>167</sup>:

[35.] Իսկ կին առաւ Գերէնը կուսպաշտ Բագրատի դուստր Սոփիին: Եւ Բագրատը Գերէնին Հրաւիրեց իր քաղաքն ու անշափ մեծարեց նրան, եւ ապա [Գերէնը] վերադարձաւ Վասպուրական: Եւ ունեցաւ նա երկու [Բ] որդի ու մի դուստր: Եւ դստերը [կնութեան] սուեց Բագրատունի Գրիգոր պատրիկին<sup>168</sup>: Իսկ նա գեղեցիկ կին էր, եւ սիրեց նրան իր ամուսին Բագրատունի Գրիգոր պատրիկը:

[36.] Այդ ժամանակ մեռաւ Բաղտագի Ալի արքան՝ նա, որ սիրում էր Գերէնին: Եւ նրա աթոռին նստեց մի պիղծ ու շար մարդ, որի անունն էր ՄաՀմէա: Սա բազմաքանակ զօրք պատրաստեց [սարքեց] ու եկաւ Հայոց

\* Ձեռագրում՝ գերկոյց, որ արդէն հրատարակիչն ուղղելի է Համարել՝ գերկոյց (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 39, տողատակ 13):

աշխարհի վրայ: Եկաւ Հասաւ Այրարատի\* նաՀանդը [գաւառը], եւ առաջին  
Հերթին գրաւեց Գվին քաղաքը, իսկ այնտեղից շրջուեց [դէպի] Վասպուրա-  
կանի կողմը:

[37.] Իսկ Դերէնը նրան ընդառաջ ուղարկեց սոկե ու արծաթէ թանկ-  
արժէք իրեր [գանձեր], ձիեր ու ջորիներ եւ սասց. «Մի՛ աւերիր իմ երկիրը»:  
Եւ նա չկամեցաւ լսել, այլ շատ անարժան խօսքերով անարգեց պատգամա-  
բերին [դեսպանին] եւ սասց. «Դու Բաղտադի անից շատ գանձ ես տարել:  
Աժժ՛ ես կամենում եմ՝ գալ նստել քո արքունի քաղաքում, որ Վան է կոչում,  
եւ կը Հանեմ քեզ քո Վասպուրական երկրից ու կը տամ գա Տաճատ Անձեա-  
ցուն<sup>169</sup>, որովհետեւ նա է սիրում ինձ»:

[38.] Եւ երբ Դերէնն այս լսեց, Հաւաքեց [ժողովեց] իր Հեծեւազօրը՝ մօտ  
երեք Հազար [ԳՌ.] ձիաւոր եւ երկու Հազար [ԲՌ.] Հետեւակ, ու գնաց նրան  
ընդառաջ Գառնի գաւառը<sup>170</sup>: Իսկ նա գալիս իջնում էր այն սարից, որ Ոս-  
կիգօտի են կոչում: Եւ Դերէնը կանգնելով նրա դէմ՝ Հարուածեց ու շփոթեց-  
րեց նրանց: Իսկ երբ ՄաՀմէտն իմացաւ, ամրապնդուեց ու ջանաց դիմա-  
դրել բայց չկարողացաւ: Վասպուրականցիները կոտորեցին Տաճկաց [ա-  
րաքների] զօրքերի բազմութիւնը, եւ [ՄաՀմէտը] փախստական [դարձած]  
գնաց ու ապաստանեց [ընկաւ] Բերկրի ամրոցում<sup>171</sup>, եւ Ապուր[Հարպը, որ  
Բերկրիի տէրն էր, ընդունեց նրան: Իսկ Դերէնը գրաւեց ՄաՀմէտի ձիերն ու  
զօրքի վինամթերքը, եւ նրանցից շատերին կոտորելով՝ մեծ յաղթութեամբ  
վերադարձաւ:

[39.] Եւ այսպէս երկար ժամանակ ապրելով՝ ծերացաւ [Դերէնը] ու իր  
Աշտ որդուն նստեցրեց [իրրեւ] Վասպուրականի տէր: Ապա Դերէնը մեռաւ,  
ու նրան տարան Թաղեցին Վարապում<sup>172</sup>: Եւ Աշտի օրօք Վասպուրական  
աշխարհի Համար շէնութիւն ու խաղաղութիւն եղաւ:

[40.] Իսկ Տաճատ Անձեացին քաջ ու անուանի մարդ էր, եւ Բաղտադի  
ՄաՀմէտ<sup>\*\*</sup> թագաւորը սիրում էր նրան: Եւ ՄաՀմէտն ոճներ երկու [Բ] որդի,

\* Բնագրում «ի գաւառն Այրարատոյ»:

\*\* Այստեղից բնագրի անուանաձեւը դառնում է՝ Մահմատ, որը չենք պահում:

բայց երբ նրա որդիները մեծացան, չէին սիրում իրար: Եւ ՄաՀմէտը կանչեց  
իր որդիներին ու սասց. «Ի՛մ որդիներ, կամենում եմ Հաշտութիւն Հաստատել  
ձեր միջեւ՝ Բաղտադ քաղաքը բաժանելով [այնպէս], որ դետի մի կողմը [դե-  
Հը]՝ մի որդու, իսկ մյուս կողմը՝ մէկէլ [մեկալ] որդուս [լինի]»: Այդ ժամա-  
նակ կրտսեր որդին ասում է, թէ՛ «Քո երկրից բաժին չեմ ուզում, բայց սուր  
ինձ գանձեր ու Հանդերձներ, ձիեր ու ջորիներ, ծառաներ ու աղախիններ, ո-  
րովհետեւ ցանկանում եմ [դուրս] ելնել եւ աշխարհ տեսնել»: Հայրն ասում է.  
«[Իմացած]՝ լինես, որդե՛կ, աւագները չպէտք է այնպէս անես, ինչպէս որ  
դու ես կամենում եւ մտքովդ անցկացնում»: Բայց նա չկամեցաւ անսալ իր  
Հօր ձայնին. եւ ապա առաւ գանձ, Հանդերձ, ձի ու ջորիներ, ծառաներ ու ա-  
ղախիններ, եւ ելաւ գնաց ու Հասաւ Անձաւ[աղ]եաց երկիրը<sup>173</sup>, այն տեղը, որ  
կոչում է ՀաՀաստան, եւ բանակեց այնտեղ ՀաՀաստանի դաշտում:

[41.] Եւ Տաճատին իմաց տուեցին ու սասցին. «Հատ զօրքեր են եկել  
ու բանակ դրել ՀաՀաստանում»: Եւ նա Հեծաւ ձին ու սահաւ մարդկանցով  
գնաց տեսնելու, թէ ովքեր են երեւացած Հեծեւազները: Իսկ արքայորդին իր  
երկվարը Հեծած՝ որս էր անում լեռան վրայ: Մի կողմում Հանդիպեցին մի-  
մեանց, եւ [երբ] արքայորդին ձիարձակ եղաւ<sup>\*\*</sup>, Տաճատի մարդկանցից մէկը  
Հարուածեց նրան նիզակի սուր ծայրով [խոցով] ու սպանեց նրան: Եւ դրա-  
նից յետոյ [միայն] Տաճատն իմացաւ, [որ] արքայորդին [է] սպանուել ու  
վախեցաւ: Բայց յետոյ վեր կացաւ առաւ այն գանձը, որ թողել էին. իսկ ար-  
քայորդու զօրքերը փախան եւ թողեցին ձիերը, ջորիներն ու նրա ամբողջ ու-  
նեցուածքը:

[42.] Եւ նա [Տաճատն] առաւ ամբողջ ունեցուածքն ու գնաց ամրացրեց  
իր բերդի ամրութիւնները: Եւ իր ծառաներին ու իր Հաւասարիմներին տե-  
ղաւորեց [դրեց] իր բոլոր բերդերում, իսկ ինքն [իրրեւ] փախստական գնաց  
Հոռոմնց երկիրը՝ Փոկաս<sup>174</sup> արքայի մօտ: Եւ [սա] ընդունեց [ճանաչեց]

\* Բնագրում բառ է պակասում («[...] լինիս»). ենթադրաբար վերականգնեցինք  
(ըստ մտքի)՝ «իմացած»:

\*\* Բնագրում՝ «ձի արկե[ալ]», որ, թերեւս, նշանակում է «ձին քշելիս», «ձիար-  
ձակ եղած [էր]»:

նրան, մեծարեց ու նշանակեց նրան կատարական [կուսակալ] Տարսի<sup>175</sup> Հան-  
դեպ: Իսկ երբ Բաղտադի արքան իմացաւ [լսեց] իր որդու մահուան մասին,  
որին սպանել էր Տաճատը, մեծ զօրք ուղարկեց եւ աւերեց ու Հրի մասնեց  
Անձաւացեաց երկիրը, սակայն ամրոցները չկարողացաւ գրաւել [յաղթել]:

[43] Եւ շատ սուգ արեցին [եղաւ] արքայորդու Համար [վրայ]: Իսկ  
[արքան] իր միւս որդուն կարգեց [գրեց] թագաւոր Բաբելացոց վրայ: Եւ ա-  
պա Հինգ [Ե] տարի յետոյ պատերազմ եղաւ Հուռոմոց ու Բաբելոնի արքայի  
միջեւ, եւ Հուռոմոց թագաւորը մեծ [բազում] զօրք Հաւաքեց ու յանձնեց Տա-  
ճատ Արծրունու<sup>\*\*</sup> [Անձեւացոյ] ձեռքն՝ ասելով. «Գնա՛ Բաբելացոց զօրքերի  
դէմ»: Եւ նա վերցրեց զօրքերի բազմութիւնն ու գնաց: Եւ միմեանց դէմդի-  
մաց [կանգնելով]՝ Հասան իրար վրայ ու պատերազմեցին Տարսի դաշտում:  
Եւ Հուռոմոց զօրքը յաղթեց Տաճկաց [արաբների] զօրքերին ու Հալաձեց  
նրանց, եւ Հետապնդեցին [ու] կոտորեցին փախչողներից շատերին:

[44] Եւ մինչդեռ Հետապնդում էին, ինքը՝ Տաճատը գտաւ թագաւորի  
որդուն, որովհետեւ նրա ձին յոգնել [գադարել] էր, իսկ նա իջել մենակ նս-  
տել [էր]: Տաճատը եկաւ գտաւ նրան մենակ ու Հարցրեց. «Ո՞վ ես գու»: Իսկ  
նա ասաց. «Ես արքան եմ այս զօրքերի, որոնց ջարդեցին Հուռոմները»: Եւ  
Տաճատն իջաւ ձիուց ու նրան Հուռոմի Հագուստ Հագրեց, եւ [իր Հեա] առ-  
նելով՝ բերեց իր տունը: Իսկ ինքը գնաց [Հուռոմոց] արքայի մօտ, եւ պա-  
տուով մեծարուելով Հուռոմոց արքայի կողմից՝ վերադարձաւ իր տունը: Ապա  
առնելով Բաբելացոց արքայորդուն եւ իր ընտանիքը՝ գնաց Անձաւացեաց<sup>\*\*\*</sup>  
երկիրը, աիրացաւ իր բերդերին, որովհետեւ գրանք դեռ պաշտպանում էին,  
իսկ ինքն առնելով Բաբելացոց արքայորդուն՝ գնաց Բաղտադ:

[45] Եւ իջեւան [ատել] վերցնելով՝ [Տաճատն] ամիրապետի որդուն  
թողեց [նստեցրեց] այնտեղ, իսկ ինքը գնաց արքունական պալատը [դուռը]

\* Բնագրում «գաշխարհն Անձաւացից»:

\*\* Այսպէս՝ բնագրում (Արծրունոյ). թերեւս՝ դա ոչ թէ ուշ շրջանի պատմական  
իրողութեան արձագանք է (Ժ դ. վերջում Արծրունի արքայի եղբայրն Անձե-  
ւացիքը հռչակեց առանձին թագաւորութիւն), այլ շարադրանքի բովում հե-  
ղինակի թոյլ տուած «տեխնիկական» վրիպում (Անձաւացոյ-ի փոխարէն):

\*\*\* Բնագրում՝ «յերկիրն Անձաւաց»:

ու գտաւ նրան, ով մուտքի [դռան] տերն [սենեկապետն] էր: Եւ Հարցնում է  
նրան. «Դ՞ո՞ւ ես այս դռան տերը [սենեկապետը]»: Իսկ նա պատասխանում  
է. «Այո՛, ես եմ»: Տաճատն ասում է. «Ես եկել եմ Հուռոմոց երկրից, որպէսզի  
ծառայեմ արքային»: Իսկ նա ասում է. «Հաս լաւ [բարի է], ես էլ քեզ կը  
նշանակեմ [կարգեմ] արքունական պալատում [դռանը]»:

[46] Ու սարաւ նրան արքայի մօտ: Ապա նա Հրամայեց նրան նստել:  
Իսկ արքան սեւ էր Հագած, եւ ոտքից գլուխ սեւ էր նա: Տաճատը Հարցրեց  
սենեկապետին [Հճեպին], եւ ասում է. «Ի՞նչ պատճառով է, որ արքադ սեւ է  
Հագել, մի՞թէ սգաւոր է»: Եւ նա ասում է. «Չգիտե՛ս, թէ ինչ դէպքեր են  
անցել [գլխով]»: Տաճատն ասում է. «Ես չգիտեմ»: Սենեկապետը [Հճեպը]  
ասում է. «Թագաւորը երկու [Բ] որդի ունէր, եւ կամեցաւ մեր արքան  
Բաղտադը բաժանել այդ երկու [Բ] որդիների միջեւ: Բայց կրտսեր որդին  
չկամեցաւ բաժին առնել այս քաղաքից, իսկ արքան կատարեց նրա կամքը,  
սուեց գանձեր, ծառաներ ու աղախիներ, ձիեր ու ջորիներ, եւ [որդին]  
գնաց Հայաստան՝ Անձեւացեաց՝ երկիրը: Բայց անօրէն Տաճատը վրայ  
Հասաւ ու սպանեց նրան, իսկ նրա գանձերն ու ամբողջ ունեցուածքը գրաւեց,  
եւ ինքը փախաւ ու գնաց Հուռոմոց երկիրը: Եւ էլ աւելի շար [բան] պատահեց  
արքային. [նրա] միւս որդին էլ որին իր փոխարէն տեր էր նշանակել  
Բաղտադին, [երբ] պատերազմ եղաւ մեր ու Հուռոմոց միջեւ եւ արքայորդին  
իր զօրքերի Հեա կուռի [պատերազմի] դուրս եկաւ, զօրքերը կոտորուեցին,  
իսկ նրան էլ սպանեցին ճակատամարտում [պատերազմում]»:

[47.] Ապա Տաճատն ասում է. «Դուք ի՞նչ գիտէք, թէ պատերազմում  
նրան սպանել են»: Իսկ սենեկապետը [Հճեպն] ասում է. «Փախստական  
մարդկանցից եկան [ասացին], թէ մենք տեսանք, որ նրան զարկեցին ու  
սպանեցին»: Եւ Տաճատն ասում է. «Լսի՛ր ինձ, ինչ որ քեզ կ'ասեմ, ես գի-  
տեմ, որ արքայորդուն չեն սպանել, քանի որ ես Հուռոմոց երկրից<sup>\*\*</sup> եմ գալիս:  
Ես այն օրը ճակատամարտում [պատերազմում] եղել եմ: Բացի այդ ես գի-  
տեմ, որ նա բռնուած [կալանած] է եւ նրան արգելքի [տակ] են պաշտում:

\* Բնագրում՝ Անցեւացաց:

\*\* Բնագրում՝ «ի Հոռոմ երկրէն»:

Բայց թող արքան ինձ [որեւէ] նշան առայ, ու ես կը գնամ, իրենից նշան կը բերեմ, որպէսզի Հաւատայ ինձ»:

[48] Եւ սենեկապետը [Հճեպն] անմիջապէս [շտապով] մտաւ ու պատմեց արքային այն ամենն, ինչ լսեց Տաճատից: Իսկ արքան կանչեց Տաճատին եւ արտասուեց ու Հեկեկայ, եւ լաց լինելով՝ Հարցրեց ու ասաց. «Ա՛յ բարի մարդ, մի՛ թէ ստոյգ են քո խօսքերը, որ ասել ես իմ սպասաւորին [ծառային]»: Եւ նա ասաց. «Հաւատա՛, արքա՛յ, որ ճշմարիտ են ու անսուտ»: Եւ արքան այդ օրը Հիւրասիրեց [սիրեց] Տաճատին: Բայց Տաճատը վեր կացաւ [ոտքի կանգնեց], մեծարեց արքային ու ասաց. «Հաց կե՛ր ու գինի խմի՛ր եւ ուրախացի՛ր. ես գնամ ու բերեմ քո որդու նշանը»: Իսկ արքան ասում է. «Ազաշում եմ քեզ, մի՛ թէ ճիշտ [չորդ] են քո խօսքերը, մի՛ խաբիր [ստիր], ահա իմ մեծամեծերի գանձերը քո առջեւ են, աս՛ւր ու ազատի՛ր իմ որդուն, եւ մի՛ խնայիր իմ ամբողջ Հարստութիւնը»: Եւ Տաճատը երգուեց նրան ու ասաց. «Հաւատա՛ ինձ, արքա՛յ, քո որդին կենդանի է, եւ ես գիտեմ ու իմ աչքերով եմ տեսել, որ կենդանի է»: Եւ արքան նրան Հաւատաց ու այդ օրը բաց շթուղեց նրան մինչեւ իրիկուն: Իսկ երբ իրիկուն եղաւ, Տաճատը կերաւ [ընթրեց] եւ դուրս ելաւ արքունիքից:

[49] Տաճատը կանչեց սենեկապետին [Հճեպին] ու ասաց նրան. «Ես Տաճատն եմ, եւ արքայորդուն [էլ ես] եմ պաշտում». ու նրան Հերթով [կարգով] պատմեց՝ ինչ որ արել էր: Եւ ասում է Տաճատը. «Գնամ բերեմ նրան, իսկ դու Հեռացրո՛ւ մտերը, որ թագաւորը մի՛ թէ մէջ տեսնի իր որդուն, իսկ ես իր որդու ձեռքը կը դնեմ թագաւորի ձեռքին»: Ու արեցին այնպէս, ինչպէս որ Տաճատն ասաց: Եւ Տաճատը գնաց իր իջեւան[ատեղ]ը, ուր թողել էր թագաւորի որդուն: Եւ պատմեց [ասաց] նրան այն ամենը, ինչ որ ասել էր նրա Հայրը, ու առնելով նրան՝ բերեց արքայի պալատը [դուռը]: Իսկ սենեկապետը [Հճեպը] գալով դուռն մօտ [ու] տեսնելով թագաւորի որդուն՝ ըն-

\* Բնագրում այստեղ՝ հջէպն (իսկ վերելում քանիցս՝ հճէպն կամ հճէպն ձեռով էր). արաբերէն հեջուր բառն է («թագաւորի սենեկապետ, արարողապետ»), որ կա մեր բարբառներում իբրեւ Հասարակ անուն, բայց նաեւ գրականութեան մէջ՝ իբրեւ անձնանուն (տե՛ս Լ. Անտոնան, Հայոց անձնանուններ ընդհանուր, Հտ. Գ, Եր., 1946, էջ 82-83):

կաւ [գետին ու] երկրպագեց նրան, եւ արքայի բոլոր սպասաւորները [ծառայողները] տեսան նրան ու զարմացան: [Ապա] սենեկապետը [Հճեպը] եկաւ, բերեց մտերը, բայց պաշէց Հեռում: Եւ Տաճատն արքայորդու ձեռքից բռնեց, ու ներս մտնելով (իսկ սենեակը [տունը] մու՛թն էր)՝ որդու ձեռքը տարաւ դրեց արքայի ձեռքին եւ ասաց. «Իմացի՛ր [լսի՛ր], արքա՛յ, ես Տաճատն եմ, իսկ սա քո որդի Մուսէն է, որ ասել են, թէ սպանուած է: Եւ արդ՝ երանի՛ քեզ, քանզի ահա քո որդին կենդանի է»: Իսկ արքան ասաց. «Լոյս բերէ՛ք, որ տեսնեմ»: Եւ բազմաթիւ մտեր բերեցին արքայի առջեւ, ու երբ տեսաւ իր որդուն, ճանաչեց եւ ընկաւ նրա գիրկն ու ուշաթափուեց [նուաղեց]: Բայց վարդաջուր առնելով՝ ցանեցին նրա երեսին, եւ նա բացեց աչքերն ու ուշքի եկաւ [զգաստացաւ]. եւ նայեց ու դարձեալ ուշաթափուեց [նուաղեց]: Բայց էլի ցանեցին՝ նրա երեսին, [ապա] տեսաւ Տաճատին ու կանչեց իր մօտ. եւ Համբուրեց նրան ու ասաց. «Օրհնեալ լինես դու քո Աստուծոյ կողմից, որին պաշտում ես»:

[50] Եւ Տաճատը պատմեց այն ամենն, ինչ որ արել էր: Իսկ արքան ասաց. «Այսօր ինձ առիր իմ որդուն, արդ՝ դա թող լինի քեզ որդի: Եւ ամբողջ Հայոց երկիրը թող Հարկատու լինի քեզ, քանի որ նրանց Հարկը մերն է: Եւ իմ ամբողջ զօրքը [թող լինի] քո ձեռքում, ու եթէ որեւէ մէկն ընդդիմանայ քեզ, վերցրո՛ւ իմ ամբողջ զօրքը եւ Հալաճի՛ր քո թշնամուն»: Եւ տալով նրան շատ գանձեր՝ ճանապարհ դրեց [արձակեց] իրեն:

[51] Եւ նա [Տաճատը] Հայոց աշխարհը գալով՝ թագաւորի սիգեղը [Հրամանագիրը] տանել տուեց Բագրատունեաց իշխան Աշոտին ու Սմկատ Տարօնեցուն եւ ամբողջ երկիրը Հարկի տակ դրեց: Եւ այս կերպ վեց [9] տարի նա եղաւ ամբողջ Հայոց աշխարհի Հարկաւուն<sup>176</sup>:

[52] Ապա եօթերորդ<sup>\*\*</sup> տարում Բաղտագ քաղաքից մի վաճառական մարդ, որի անունն ասում էին՝ Ապուսէթի որդի Սէթ, եկաւ Հասաւ Խու-

\* Ձեռագրում այստեղ՝ ձանեցիմ՝ Ծ-Ձ բարբառային սխալագրութեամբ, որ սովորական է գրչի համար:

\*\* Բնագրում՝ «ի Էն տարին»:



թա[Մնաց<sup>177</sup> երկիրը: Եւ նրանք [խուժեցինները] յարձակուեցին նրա վրայ ու սպանեցին նրան: Եւ խլեցին նրա Հարստութիւնը [գանձն] ու սպանեցին նրանցից շատերին, որից յետոյ ովքեր [կենդանի] էին մնացել [իրրեւ] փախստական գնացին Բաբելոնացոց արքայի մօտ:

[53] Եւ սա [մարդ] ուղարկեց Տաճատի մօտ ու ասաց. «Հաւաքի՛ր [ժողովի՛ր] Հայոց եւ Միջագետքի զօրքերն ու գնա՛ մինչեւ Խուժա[Մնի կողմերը]. եւ լուծի՛ր վրէժն իմ սպասաւոր [ծառայ] Սէթի, որին սպանեցին»:  
Իսկ նա [մարդ] ուղարկեց Վասպուրականի Աշոտ իշխանի, Բագրատունի Աշոտի ու Սմպատ Տարօնեցու մօտ, եւ միաբանեց Հայոց զօրքերն ու կամեցաւ գնալ անցնել Խուժ եւ Սասունը<sup>\*\*</sup>: Եւ Տաճկաց [արարական] զօրքերը որտեղից անցնում՝ այրում ու աւերում էին, կրակի էին տալիս Հայոց եկեղեցիները եւ սպանում քաճանաներին, գերում կանանց ու երեխաներին [որդիններին]:

[54] Իսկ երբ Աշոտ Բագրատունին տեսաւ դա, խօսեց [ասաց] Աշոտ Արծրունու<sup>\*\*\*</sup> եւ Սմպատ Տարօնեցու Հետ. ու ասում է նրանց. «Մեծ բարկութիւն [է բերելու այն, ինչ] որ գործում ենք. իսկ ի՞նչ անի Աստուած մեզ, քանի որ մենք խաչապաշտ ենք, բայց այլազգիների պէս ապականեցինք մեր Հայոց աշխարհը. եկեղեցիներն այրում ու աւերում են, իսկ քաճանաներին սրախողխող են անում: Աստուած չի Հաշտուի [չի Հաճենայ] սրա Հետ»:

[55] Եւ ապա զայրացան ու գիշերը գաղտնի սպանեցին Տաճատին: Եւ առաւօտեան վեր կենալով՝ Տաճատին գտան սպանուած: Նրա սպասաւորները [ծառաններն] ասացին, թէ Տաճատին նախանձից են սպանել: Եւ ապա չկարողացան գնալ Խուժայինաց<sup>\*\*\*\*</sup> երկիրն [ու] վերագարձան՝ ամեն ոք իր

\* Բնագրում՝ «ցվարս Խուժանի», ուր հրատարակիչը վերականգնելի է համարում (թէեւ՝ կասկածելով)՝ «ցվա[Մ]րս» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 56, տողատակ 9), այսինքն՝ «մինչեւ Խուժայինի վայրերը», «կողմերը»:

\*\* Բնագրում՝ «խաւթ եւ Սասունք», որ երկու դէպքում էլ կարող է պարզ գրչական վրիպում համարուել: Հմմտ. ստորեւ՝ պարագրաֆ 57-ում, եւ տե՛ս վերելում, ծնթ. 177:

\*\*\* Բնագրում՝ «ընդ Աշոտ Առծրունի»:

\*\*\*\* Բնագրում՝ Խուշայիճաց՝ գրչի համար սովորական Թ-Դ սխալագրութեամբ:

երկիրը: Իսկ Տաճկաց [արարների] զօրքերը գնացին Բաղսադ ու Մաճմէա թագաւորին պատմեցին Տաճատի մասին՝ ասելով, թէ նախանձելուց սպանեցին Տաճատին:

[56] Եւ նա [Մաճմէա] Հրամայեց բարձրաձայն կանչել Բաղսադ քաղաքում, թէ՛ «Այն մարդն, ով կը գնայ Հայոց աշխարհը, ես [նրան] զօրք ու շատ գանձեր կը տամ, եւ [թող] աւերի Հայաստանը [Հայքն] ու առնի Սէթի արեան վրէժը»: Եւ երբ այս բանը երեք [Գ]<sup>\*</sup> օր ձայնեցին Բաղսադում, չորրորդ [Գ] օրն առաջ եկաւ մի սպասաւոր [ծառայ], որի անունը Բուկայ<sup>178</sup> էր: Սա գերի էր ընկել Հաղբակ<sup>\*\*</sup> գաւառից՝ Մուժվանք կոչուող գիւղից, եւ երեցի որդի էր եղել: Կանգնեց արքայի պալատի առաջ ու ասաց. «Իմ ձեռքը ա՛ւր այդ [գործը]»: Ամիրապետը կանչեց նրան եւ Հարցրեց [ասաց]. «Ի՞նչ է քո անունը»: Իսկ նա պատասխանեց [ասաց]. «Բուկայ»: Եւ [ամիրապետն] անթիւ զօրք ու անշափ գանձեր Հաւաքեց [ժողովեց] եւ տուեց նրա ձեռքը:

[57.] Եւ [Բուկան] եկաւ Վասպուրականի աշխարհն ու Հրի մասնեց [Հրձիգ արեց] ամբողջ երկիրը: Բայց Աշոտ<sup>\*\*\*</sup> իշխանն առաւ իր ազատանիին եւ զօրքն ու իրենց կանանց, եւ մտան Նկանի ամրոցը: Իսկ Բուկան ելաւ շրջապատեց ու նստեց նրա շուրջը. եւ ճակատամարտ [պատերազմ] տուեց ամրոցի դէմ, բայց չկարողացաւ յաղթել: Ապա այդտեղ մեծաքանակ [բազում] զօրք թողեց, իսկ ինքն առաւ մնացեալ զօրքերն ու ասպատակ սփռեց Հայոց աշխարհում: Եւ ամբողջ երկիրը Հրի մասնեց [Հրձիգ արեց] ու ամեն ինչ երկրում աւերեց: Եւ ապա ելաւ Հասաւ Խու[թ]<sup>\*\*\*\*</sup> եւ Սասունք, բայց չկարողացաւ յաղթել նրանց: Իսկ նրանք բազում վնասներ Հասցրին Տաճկաց [արար-

\* Բնագրում՝ .Ձ. (փխն. .Գ.), եւ դա հաստատապէս ուղղելի է Գ-ի, քանի որ նրան յաջորդում է՝ .Դ.:

\*\* Բնագրում՝ Յաղբազ, որը, հաւանաբար, գրչական վրիպման արդիւնք է, քանի որ վերելում գաւառանունը երկիցս գրուած էր Հաղբակ ձեւով (տե՛ս պարագրաֆ [Դ], 2, 10 եւ ծնթ. 133):

\*\*\* Բնագրում՝ Աշաւտ:

\*\*\*\* Բնագրում՝ Խուվ, որ, անշուշտ, պիտի վերականգնել՝ Խուվ[թ] (ինչպէս արդէն արել է հրատարակիչը), ապա՝ Խու[թ]. Հմմտ. վերելում՝ պարագրաֆ 53-ում (Խաւթ), եւ տե՛ս ծնթ. 177:

ների] զօրքին եւ սպանեցին Տաճասի որդուն, որովհետեւ նա էր Բուկային առաջնորդողը:

[58] Բայց երեք [Գ] տարի անց ինքը՝ Բուկան յետ դարձաւ ու եկաւ Նկանի բերդի վրայ: Եւ գրաւեց այն ու գերի տարաւ Աշոտ Արծրունի իշխանին եւ նրա քրոջ որդուն՝ Իշխանակին, նաեւ նրա քառասուն [Խ] ազատներին ու նրա երկու [Բ] որդիներին, որոնց անուններն են՝ Համազասպ եւ Գերէն: Եւ տարաւ նրանց Սամուր<sup>179</sup> [Սամառայ] քաղաքն ու զնդան նետեց [գրեց]: Եւ [նրանք] այնտեղ մնացին տասնվեց [ժ-Չ] տարի:

[59] Իսկ գրանից յետոյ Տաճկաց աշխարհի վրայ յարձակուեցին Մաղրիպիկներն<sup>180</sup> ու աւարուեցին ամբողջ Տաճկաց աշխարհը: Եւ եկան Հասան Սամառայ քաղաքի դարբասներին [դռանը], ու ամիրան տարակուսանքի մէջ էր: Եւ ամիրայի մայրը բարձրացաւ քաղաքի պարսպի վրայ ու խօսեց թշնամու զօրապետի Հետ, թէ՛ «Բարեկացոց եւ Պարսից երկիրներն աւերեցիր ու եկել ես Հասել մեր քաղաքի դռները. [ի՞նչ է,] ի՞նչ էլ իմ տանից Հանել էք կամենում»: Բայց գրանից յետոյ Մաղրիպաց զօրքերն սկսեցին Հաշուել նրան: Այդ բանը լսեց Աշոտ իշխանը եւ [մարդ] ուղարկեց Սաքայ [Սալ[ի]ք] ամիրայի մօտ ու ասաց նրան, թէ՛ «Լսեցի քո թշնամիների խօսքերը եւ [իմացայ] քո երկրի աւերանքների մասին, եթէ իրաւունք [Հրամանք] տաս, ես ու իմ ազատները կը գնանք ու կը կուռենք [կը պատերազմենք] նրանց դէմ: Եւ Աստուծոյ վրայ յոյս ունենք, որ կը յաղթենք նրանց»:

[60] Իսկ սա [ամիրան] երբ լսեց նրա խօսքերը, ծաղրեց նրանց: Բայց յետոյ [այդ մասին] իմացաւ [լսեց] ամիրայի մայրը [եւ] գնաց իր որդու մօտ ու ասաց, թէ՛ «Ի՞նչ ո՛ւ չես Հանում ու բաց թողնում [արձակում] իրենց»: Եւ նա լսեց իր մօրն ու [մարդ] ուղարկեց բանտատուն, Հանել տուեց նրանց. եւ տանել [տուեց] բաղնիք ու Հանդերձներ տուեց նրանց: Իսկ երբ դուրս եկան բաղնիքից, նրանց ամիրայի առջեւ բերեցին, եւ [սա] Հրամայեց նրանց նստել:

[61] Եւ ամիրան Աշոտ իշխանին ասում է. «Լսել եմ, թէ դուք [լաւ] պատերազմող մարդիկ էք»: Իսկ Աշոտ իշխանն ասում է. «Ի՞նչ էի իմ երկրում, կարծեմ թէ՛ պատերազմող էի. ու Հերիք է թէ մտնէի [իմ] բերդամրոցը՝ կա՛մ

մեռնելու էի եւ կա՛մ ոչ ոք չէր կարողանալու ինձ բռնել»: Եւ ամիրան Հարցնում [ասում] է. «[Իսկ] այժմ՝ կամենո՞ւմ ես պատերազմի գնալ ընդդէմ իմ թշնամիներին»: Իշխանը պատասխանում [ասում] է. «Կը գնամ, ամիրայ՛ց»: Ամիրան ասում է. «Այս քաղաքում կանգնած իմ զօրքերը ե՛ւ պատերազմող են, ե՛ւ քաջ, բայց քեզ եմ կամենում առաջնորդ ու զօրազուլխ նշանակել նրանց»: Աշոտն ասում է. «Լսի՛ր ինձ, ամիրայ՛ց, ինչ որ կամենում եմ ասել. դու պատրաստի՛ր քո զօրքը, ես եւ իմ ազնուականներն [ազատներն] առջեւից կը գնանք. եթէ դուք տեսնէք, որ յաղթում ենք նրանց, դու Հրամայի՛ր քո զօրքերին ելնել [մարտի], իսկ եթէ նրանք մեզ յաղթեն, ով մեզնից [կենդանի] մնայ, կը փախչենք ու կ'ապաստանենք այս քաղաքում: Բայց մի՛ դարձրու ինձ քո զօրքերին [դէպի] շարիք առաջնորդող»: Եւ ամիրան ասում է. «Բարի են քո խօսքերը. դե՛հ, արի գնա՛ իմ գանձատունը, եւ ընտրէ՛ք քո ազնուականների [ազատների] Համար սրեր ու նիզակներ եւ դրաճներ ու սաղաւարտներ, որը որ քո սիրտը կ'ուզենայ. վերցրո՛ւ նաեւ ազնուացեղ ձիեր, որը որ կը Հաւանես [կը Հաճես], եւ վաՀաններ [ասպարներ], որը որ կը կամենաս»:

[62] Ու Աշոտը կատարեց այն, ինչ որ ասաց ամիրան: Եւ օրը կիրակի էր (իսկ Աշոտ իշխանը Վարազի սուրբ խաչից [մի] մասունք ունէր ու թաքցրել էր այն իր գլխի [մազերի] վրայ), եւ երբ ինքն ու իր ազատանին Հագան ու գինավառուեցին, [Աշոտը] շուռ եկաւ դէպի արեւեք եւ ծնրագրեց ու ասաց. «Տէր Աստուա՛ծ, օգնի՛ր ինձ, եւ [դո՛ւ], սուրբ խաչանշա՛ն, օգնի՛ր ինձ»: Եւ Հեծան ձիերն ու ելան քաղաքագունից: Եւ [Աշոտը] մարտականչ ուղղեց [կանչեց] զօրքերի վրայ [ու] Հալածեց նրանց բազմութիւնը. առիւծի նման էր գոչում Աշոտ իշխանը, իսկ Իշխանակը, կրկնելով նրա [մարտականչը], արծուի նման թեւից թեւ էր անցնում: Եւ ապա դուրս եկան քաղաքի զօրքերն ու գրաւեցին Մաղրիպների աւն ու աւարը, իսկ Աշոտը մեծ յաղթութեամբ քաղաք վերադարձաւ:

[63] Եւ ամիրան Հրամայեց բարձրացնել նրան վաՀանի [ասպարի] վրայ ու շրջեցնել նաեւ թանկարժէք իրեր [գանձեր] շաղ տալ նրա վրայ ու մեծ նուէրներ բերել նրա առջեւ: Եւ ամիրան ասում է Աշոտ իշխանին. «Դու քաջ մարդ ես ու անչափ բարութիւն գործեցիր իմ Հանդէպ. եւ քեզ արած իմ շա-

բիբլի [փոխարէն] դու քո անձը մաշու եմթարկեցիր ու ազատեցիր իմ երկիրն ու քաղաքները: Աժժժ կամենում եմ, որ ինձ մօտ մնաս պատուով ու յարգանքով: Իսկ քո որդուն՝ Գերէնին կ'ուղարկեմ [կ'արձակեմ] քո երկիրը եւ մեծաքանակ [բազում] գանձեր կը տամ: Դու այստեղ մնա՛, որովհետեւ ես գիտեմ, որ թշնամիներն էլի վերադառնալու են, իսկ եթէ խաղաղութիւն լինի, բայց կը թողնեմ [կ'արձակեմ] քեզ»: Աշոտ իշխանն ասում է ամիրային. «Գթա՛ ինձ եւ բա՛ց թող [արձակի՛ր] ինձ, իսկ քո Հրամանը երբ [էլ] ինձ Հասնի, ես կը դամ ու կը մեռնեմ՝ քո առջեւ»: Ամիրան ասում է. «Չեմ կամենում թողնել քեզ, քանի որ ես գիտեմ, որ առանց պատճառի նրանք մի այլ տարի կը գան: Լսի՛ր ինձ, քանի որ ես քեզ Համարում եմ որպէս ինձ Հայր»:

[64] Եւ յետոյ կանչեց Գերէնին ու տուեց նրան շատ գանձեր, ապա յանձնեց [տուեց] նրան բազմաթիւ շեքեր իւր եւ ուղարկեց նրան: Ու Գերէնը եկաւ մտաւ Վասպուրական եւ սկսեց շէնացնել երկիրը:

[65] Իսկ ութ [Ը] տարի անցնելուց յետոյ դարձեալ եկան անՀամար Մաղրիպիկները. եւ դարձեալ աւերեցին երկիրն ու եկան Հասան քաղաքագոհանը: Եւ ամիրան կանչեց Աշոտ իշխանին ու նրա ազատանուն եւ վինավառեց նրանց: Եւ ամիրան ասում է. «Իմացի՛ր [լսի՛ր], իշխան Աշո՛տ, եթէ այս անգամ [էլ] յաղթես, քեզ փառքով [մեծութեամբ] կ'ուղարկեմ քո երկիրը»: Ու երբ կամենում էին պատերազմի դուրս գալ, Աշոտն իր ազատանուն ասաց. «Եթէ Աստուած մեզ յաջողութիւն տայ ու յաղթենք թշնամիներին, թող այլեւս չվերադառնանք այս քաղաքը, այլ գնանք մեր երկիրը»:

[66] Եւ ապա դուրս ելան քաղաքագոհանից ու եկան Հասան այլազգիների բանակին եւ ճակատամարտեցին նրանց դէմ, իսկ ամիրայի զօրքերից շատ ուրիշները Հեա մնացին Աշոտից: Այդ ժամանակ Աշոտ իշխանը վերցրել էր իր ազնուականական գունդը եւ կանգնել քաղաքի զօրքերից մօտ երեք [Գ] նեաընկեց Հեաու: Այլազգիներից մի նիզակաւոր մարդ ելնում է եւ իշխան Աշոտին անունը տալով կանչում ու ասում. «Ես Ապուհալիթն եմ՝ Իսմայէլի որդին, քեզ գիտեմ, որ Վասպուրականի իշխան Աշոտն ես, դու [էիր, որ] նասորդ անգամ կոտորեցիր Մաղրիպաց անյաղթ զօրքին ու սպանեցիր իմ

եղբորը, եւ ես կամենում եմ, որ կա՛մ մեռնեմ, կա՛մ առնեմ իմ եղբոր արեան վրեժը»:

[67] Այդ ժամանակ Աշոտի քրոջ որդի Իշխան [ակ]ն\* ասում է Աշոտին. «Ինձ իրաւունք [Հրաման] տո՛ւր, որ ես գնամ նրա մօտ»: Բայց իշխանն ասում է. «Ո՛չ [մի՛], որդեա՛կ, որովհետեւ դու չես կարող նրա մօտ գնալ, քանի որ ես կանգնած եմ եւ տեսնում եմ. ես կը գնամ, իսկ դուք պատրաստ կացէ՛ք, եթէ նա ինձ յաղթի, դուք արագ Հասէ՛ք ինձ օգնութեան»:

Եւ այն մարդը մօտեցաւ իրենց: Ապա առաջ գնաց Աշոտ իշխանն ու բարձրաձայն կանչեց. «Օգնի՛ր ինձ, Վարագի սուրբ նշան՛ն, պատերազմի այս նշանաւոր [մեծ] օրը»: Եւ նա ազնուացեղ, թամբած ձի [էր նստած] ու ձեռքին նիզակ ունէր, եւ երբ իրար մօտ Հասան, այլազգի ազգովիկը ձգեց իր խի[շ]տը [նիզակն] ու զարկեց աջ կողմից Աշոտ իշխանի կողմն, բայց չկարողացաւ խրել նրա մարմինը, իսկ իշխան Աշոտը բռնեց քով զարկելով խշտին [նիզակին]՝ կտորեց այն եւ իր թուրն\*\* իջեցրեց [նրա] երիկամների\*\*\* վրայ, [ապա] զարկեց ձախ ուսի կողմից ու [նրա] գլուխն աջ ձեռքով գետին գցեց:

[68] Եւ երբ դա տեսան նրա [Աշոտի] թշնամիների զօրքերը, փախան նրանց առջեւից: Իսկ [նրանք] Հեաապնդելով մինչեւ արեւամուտ՝ անխնայ կոտորեցին այլազգիներին եւ իրենց [Համար] ձիեր բռնեցին, որը՝ երկու [Բ], իսկ որը՝ երեք [Գ] [Հատ]: Այդ ժամանակ Աշոտն ասում է. «Եկէ՛ք, որդիներ՛ր, յանուն մեր Վարագի սուրբ նշանի, եւ եթէ մեզ Հասնեն, կա՛մ կը մեռնենք, կա՛մ կը գնանք մեր երկիրը»: Եւ Հեաացան ամիրայի զօրքերից Աշոտ իշխանն իր ազատներով. ու բոլոր ողջ մնացածները գնացին, եւ ոչ ոք չՀամարակուեց նրանց Հեաեւից գնալ: Եւ նրանք երեք [Գ] օրում Հասան Վասպուրականի երկիրը:

\* Բնագրում իշխանը վերորդից, որն արդէն Հրատարակիչն ուղղելի է Համարել՝ իշխանակ քվերորդից (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 61, տողատակ 13):  
\*\* Բնագրում՝ զոտրն, որն արդէն Հրատարակիչն ուղղելի է Համարել՝ զոտրն (Թ-Դ խօսուածքային սխալագրութիւն, որ սովորական է Հեղինակի կամ գրչի Համար). տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 61, տողատակ 27:  
\*\*\* Բնագրում՝ «իր կամաց», որը պիտի վերականգնելի Համարել՝ «իր[ի]կամաց» (=«երիկամաց»):

[69] Իսկ ամիրայի զօրքերը գնացին ու պատմեցին, որ Աշոտն իր ազնուականներով Հեռացաւ: Եւ ամիրան ասաց. «Երեւի նա երկիրեց ինձնից, թէ կ'արգելէի նրան, բայց ես կամենում էի նրան մեծ պատուով իր երկիրն ուղարկել: Դեհ, թող Աստուած նրան բարով տանի իր երկիրը, ես նրա քաջութեան փոխարէն ըստ արժանւոյն կը Հատուցեմ»: Եւ պատրաստեց շատ թանկարժէք իրեր [գանձ], շքեղ [պատուական] Հանդերձներ, վեց ձիեր իրենց սարուածքով, իր ամեն տեսակ թանկագին [պատուական] ունեցուածքներով բարձուած ջորիներ, իսկ այն աւարից, որ գրաւեցին՝ ե՛ւ զրահներ, ե՛ւ սաղաւարտներ այլազգիների ամեն տեսակ զինամթերքից:

[70] Եւ գրեց այսպիսի նամակ [Հրովարտակ]. «Ո՛վ քաջ եւ անՀասանելի առի՛ւծ, Աշոտ իշխա՛ն, եւ ազատագո՛ւնդ, որ բիւրաւորներից է ընտրուած. ես կամենում էի քեզ մեծ պատուով, շատ բարիքներով ու մեծ ծանրութեամբ [ծանր մեծութեամբ] քո երկիրն ուղարկել եւ, դեհ, գնա՛ ու շէնացրո՛ւ [շինի՛ր] քո աւերուած երկիրը: ԱՀա տալիս եմ ձեզ այն բոլոր պիտանի բաներն ու Հարստութիւնը [գանձերը], որ թողեցիք գուք՝»: Եւ եկան Հայոց աշխարհը, բերեցին այն ամենն, ինչ որ ուղարկել էր ամիրան:

[71] Իսկ երբ Դերէնն իմացաւ [լսեց] իր Հօր գալու մասին, առաւ զօրքը՝ նրան ընդառաջ [գնալու]: Աշոտ իշխանին իմաց տուեցին, թէ քո որդին զօրքերով գալիս է քեզ ընդառաջ: Եւ երբ նա իմացաւ [գա], ձի պաՀանջեց [ուղեց] եւ զրահ ու սաղաւարտ: Իսկ միտները զարմացան եւ ասացին. «Իշխա՛ն, քո որդին է, ինչո՛ւ ես պատերազմական զէնքեր պաՀանջում»: Բայց նա ասաց. «Որդինե՛ր, մի՛ խաբուէք, փորձառութիւն [աւագութիւն] է, շեմ կարող այլեւս կապանքներով քշուել եւ բանա մանել: Այս քսան [ի] տարի է, որ նեղութեան ու արգելափակման մէջ եմ մնացել, եւ այլեւս չեմ կարող»:

[72] Դերէնին էլ պատմեցին այն, ինչ որ արեց նրա Հայրը, իսկ նա երկիրեց ու ամբողջ զօրքը յետ գարձրեց Խաղամակերդ [Հաղամակերա]<sup>181</sup> բերդը. եւ ինքը սակաւաթիւ մարդիկ առաւ, գնաց Աշոտ իշխանին՝ իր Հօրն

\* Բնագրում վերջին բառերն աղաւաղուած են եւ անՀասկանալի («որ եւ սնկիք դուք»): Ենթադրաբար ընկալել ենք՝ «որ եւս [ը]նկ[եց]իք դուք»:

ընդառաջ: Եւ քանի դեռ Հեռու էր, ձիուց իջաւ ու սաքով գնաց նրան [Աշոտին] ընդառաջ, մինչեւ Հասաւ սուրբ խաչին, որ կանգնեցրել էր Տիրոջ եղբայրը՝ սուրբ առաքեալ [Յ]ուդան: Իսկ երբ տեսաւ իր Հօրը, ծունկի իջաւ նրա առջեւ: Եւ Հայրն ասաց. «Մօտ արի՛ ինձ»: Ապա Համբուրեց նրան ու ասաց. «Հեծի՛ր [ձիդ], որդեակ Դերէ՛ն. ինչո՛ւ ես մտաՀոգ»: Եւ Դերէնն ասում է իր Հօրը. «Լսի՛ր, իշխա՛ն, զարմացած եմ, թէ երբ Դուք իմացաք [լսեցիք] իմ գալը Ձեզ մօտ, ձի պաՀանջեցիք ու զէնք, ի՞նչ էր [նշանակում] դա»: Իսկ իշխանն ասում է. «Փորձառութիւն [աւագութիւն] է, որդեա՛կ, պատրաստ լինելը»: Եւ եկան Խանդամաշէն [Հաղամակերա] քաղաքը:

[73] Ապա եկաւ այն մարդը, ում մօտ էին բոլոր պարգեւները, որ ուղարկել էր ամիրան՝ Սամառ[ալ]ի՝<sup>\*</sup> տիրակալը: Իշխանն ուրախացաւ ու մեծարեց նրանց: Եւ յետ գարձրեց նրանց ու ապա սկսեց շէնացնել [շինել] երկիրն ամիրայի օգնութեամբ, որովհետեւ Սամառ[ալ]ի տունը տիր[ակալ]եց ողջ Ասորպատականի [Մարայ], Պարսից եւ Բաբելոնացոց վրայ:

[74] Եւ Աշոտը բերեց Աշոտ Բագրատունու դստերը՝ Հրանուշին, իր որդի Դերէնին կնութեան: Իսկ նրա մէկ այլ որդին Հիւանդացաւ, Հինգ [Ե] տարի ապրեց ծանր Հիւանդութեամբ եւ մեռաւ: Իսկ Աշոտ իշխանն ապրեց եօթանասուն [Հ] տարի ու մեռաւ. եւ նրան տարան թաղեցին Վարագում<sup>182</sup>:

[75] Եւ սրանից յետոյ Դերէնը [վերա]շինեց իր ամբողջ երկիրը՝ Չարեհերդը<sup>183</sup> եւ ՃաՀուկը, Բունոյցորը<sup>184</sup> [եւ] Աննոսի<sup>185</sup> Եթը՝<sup>\*\*</sup> : Ուժով [բռնաբար] գրաւեց ու Հպատակեցրեց [յաղթեց] Պարսից աշխարհը եւ ամիրայի՝ Սամառ[ալ]ի տիրակալի վճռով [դատաստանով] գրաւեց Սալամաստը. ասում էր [Դերէնը]՝ «Քանզի իմ Հայրերը Հիմնադրեցին եւ պարսպեցին այն»:

[76] Եւ ապա նա ունեցաւ երեք [Գ] որդի՝ մէկի անունը՝ Աշոտ, մէկինը՝ Գորգէն<sup>\*\*\*</sup> եւ միւսինն էլ՝ Գագիկ: Իսկ նրա ցեղից [ազգից] մի մարդ կար՝

\* Բնագրում «տէրն Սամառոյ» (այդպէս նաեւ՝ պարագրաֆ 75-ում), իսկ երկու տող ներքեւ՝ «տունն Սամարու»: Հմմտ. նաեւ վերելում, ծնթ. 179:

\*\* Բնագրում՝ գելն Չառնոս, որ ուղղելի է Համարում՝ գելն գԱռնոս (Հմմտ. История Анонимного повествователя, էջ 225, ծնթ. 158):

\*\*\* Բագմիցս յիշուած այս անունը բնագրում միայն՝ ու-ով է (այլ ո՛չ ու-ով):

Համզէի որդին, որի անունն էր Ապուսրվան\*, եւ սա [մի] մեծատուճ ու առաջադիմած մարդ դարձաւ եւ [վերա]շինեց բազմաթիւ գիւղեր ու Հարստացաւ: Ապա սրա դստերը՝ Սեաային [Սեդային], Դերէնը կնութեան տուեց իր անդրանիկ որդի Աշոտին: Բայց այդ Դերէնը կնամու [կնկանասէր] էր:

[77.] Իսկ Հերուճ մի մարդ կար, որի անունը Ապուսր\*\* էր. եւ սա տիրել էր Հերին, Մարանդին ու Մազղազանին<sup>186</sup>: Եւ սա սիրում էր Դերէնին՝ իբրեւ տիրակալի [բռնակալութեան Համար]: Դերէնն էլ այս մարդուն մեծ եկամուտ [ծախս] էր [բաժին] Հանում, որովհետեւ [սա] մի չափազանց գեղեցիկ դուստր ունէր, իսկ Դերէնը սիր[աշարու]ել էր նրան: Եւ Դերէնը Համարձակ դարձաւ՝ գնալու Ապուսրի տունը. ու [այնտեղ] մնում էր շատ օրեր եւ ապա վերագաւնում իր երկիրը՝ Վասպուրական: Ապուսրին էլ իր Հեա բերում էր Վան եւ շատ օրեր ուրախութեան մէջ պաշտում, ապա բազմաթիւ նուէրներ էր տալիս ու վերագարձում Հեր: Եւ այսպէս էր վարում շատ երկար ժամանակ, իսկ իր կնոջը բաց էր թողել՝ չէր սիրում նրան:

[78.] Եւ Աշոտ Բագրատունին մեռաւ, ու Հայոց երկրում [տանը] թագաւոր դարձաւ Սմգատը՝ Աշոտի որդին, իսկ սա մի Հպարտ [գոռոց], պատերազմասէր եւ իմաստնաշատ [առատամիտ] մարդ էր: Եւ սրա թագաւորութեան ընթացքը [ճանապարհը] յաջող անցաւ: Իսկ նրան թագադրեց [թագ կապեց] (եւ շատ էր սիրում նրան) Հուռոմոց արքայ Ռոմանոսը<sup>187</sup>: Ու նա տիրեց ողջ Հայոց աշխարհին եւ իր ձեռքը վերցրեց Հայաստանն [Հայքն] ու [Տ]այքը<sup>188</sup>, Վիրքն ու Աղուանքը<sup>189</sup>, Վրաց դաշտն<sup>190</sup> ու Փարիսունքը<sup>191</sup>, Աշորնիքն<sup>192</sup> ու Արեւիքը<sup>193</sup>, Բաղքն<sup>194</sup> ու Պարտաւ<sup>195</sup> աւանը: Նա նաեւ գրաւեց [եւ] տիրեց Փայտակարանին<sup>196</sup>, որ Տփլիսին է, Վաղարշապատին ու Դվինին, Վայոյ ձորին<sup>197</sup> ու Նախջ[ել]անին<sup>198</sup>: Եւ առաւ Երնջակի ամրոցը<sup>199</sup>, Աղաշկերտն<sup>200</sup> ու Վաղարշաւանը<sup>201</sup>, որ Բասէնն է, Ապաշունիսը<sup>202</sup>, Հարքը<sup>203</sup>, Տարօնը<sup>204</sup>: Եւ նա շինեց Խլաթի<sup>205</sup> ամրոցը, կառուցապատեց [շինեց] նաեւ [նրա] գաւառն ու գրաւեց ամբողջ Առբերան<sup>206</sup> երկիրը<sup>207</sup>:

\* Բնագրում գրեթէ միշտ՝ այսպէս (այլ ոչ թէ ուրիշ աղբիւրների համար սովորական՝ Աբու Մրուան):

\*\* Բնագրում այստեղ՝ Ապուսար է, բայց յաջորդից սկսած՝ գերազանցապէս Ապուսր, որը եւ պահում ենք:

[79.] Եւ Ապուշեճը անունով մի Տաճիկ [արար] կար. [Սմգատը] սրան տուեց Բերկրիի բերդը: Եւ Արճեշ<sup>208</sup> քաղաքը տուեց մի Տաճիկի [արաբի], որ Դարբանդ քաղաքից էր եկել Սմգատ արքայի մօտ: Իսկ Ծաղկիոսն<sup>209</sup> գաւառը տուեց Ռաճայ անունով մի այլ Տաճիկի [արաբի]: Ապա [նա] մեծամտեց եւ ինքն [իրեն] անուանեց Սմգատ Տիեզերակալ:

[80.] Այդ ժամանակ նրա քոյր Հրանուշը Սմգատի իր եղբոր մօտ [մարդ] է ուղարկում՝ եւ ասում, թէ. «Իմ ամուսին Դերէնը թողել է ինձ ու Հերից այլազգի մի կնոջ է սիրում՝ Ապուսրի դստերը, եւ այնքան է լիտիացել ու փարել այլազգիին, որ ողջ տարին գնում, այնտեղ է մնում եւ Վասպուրականի երկրի [տան] ամբողջ բարիքն այնտեղ տանում ու նրանց է կերակուր դարձնում: Այնտեղ, այլազգի կնոջն է տանում՝ նաեւ Հանդերձներ, թանկարժէք իրեր [գանձեր], ձիեր ու ջորիներ: Եւ այնպիսի լրբութեամբ է սիրում նրան, որ մինչեւ իսկ զաւակներին բանի տեղ չի գնում ու անտես է անում: Բայց դ՛ու, իմ տիեզերակալ եղբայրը, որից սարսափում են աշխարհի բոլոր թագաւորները, իշխաններն ու մեծամեծերը, մի՛ թոյլ տուր, որ ինձ արձամարձի, քանզի քո քոյրն եմ եւ ուրիշ տեր ոչ ոք չունեմ»:

[81.] Եւ երբ Սմգատ թագաւորն այս լսեց, սաստիկ արտմեց: [Մարդ] ուղարկեց Դերէնի մօտ եւ ասաց. «Ինչո՞ւ ես այդ ապիրատութիւնն անում, որ վայել [պատե՛՛՛՛՛՛՛] չէ: Իմ քոյր Հրանուշը, որի գեղեցկութիւնը ոչ մի կին չունի, Համեստ է եւ գեղեցիկ, դու նրան թողնում ու գնում ես այլազգի [կնոջ] մօտ, մի՞ թէ Աստուց չես երկնչում: Եթէ պոռնկութեան Համար քեզ այլ կանայք են պետք՝ քո Վասպուրականի երկրում շատ կանայք կան: Այլեւ լսել եմ, թէ քո ազնուականների բոլոր կանանց արատաւորել [ապականել] ես. վախեցի՛ր Աստուց, քանզի քեզ բարի բան չի բերի այդ լուրը [ձայնը], որ քո մասին լսում եմ»:

[82.] Ապա երբ Դերէնը լսեց Սմգատի նամակի [ընթերցումը], ասաց այն մարդու միջոցով, որ պատգամաբերն [դեսպանն] էր. «Դու՞ շատ ես

\* Խօսքն ուղղուած է պատգամաբերի տիրոջը՝ Սմգատ արքային:

քմահաճել [անձնահաճել] քո մեծութեամբ, որ յաջողակ եղաւ: Դու ի՞նչ դարձար, որ այդ [բանն] ինձ ասես: Իմ օտան ու իմ կամքի տերը ես եմ, ինչ որ Հաւանում եմ, այն [էլ] անում եմ: Եթէ քեզ Հաճելի չէ՝ մարդ ուղարկի՛ր ու քո քրոջը տա՛ր, թէ չէ՝ ես կ' ուղարկեմ քեզ մօտ»:

[83] Եւ երբ Հայոց թագաւոր Սմպասն այս լսեց, Հրամայեց Հրովարտակ գրել [ուղարկել] Հեր Ապումնրի որդիներին (Իսկ նրանք չորս եղբայրներ էին). նրանց գրել սուեց շեռեւեալը.

«Սմպասից՝ Հայոց եւ Վրաց թագաւորից ու տիեզերակայից՝ Ապումնրի որդիներին, որ այժմ՝ ունէք Ջարեւանդ գաւառի տիրակալութիւնը եւ Հեր քաղաքաւանը՝ Պարսից [սաւմանա] գլուխը:

Լսել եմ, որ այդ Դերէնիկը, որ իմ փեսան է, ձեր Քուլինար քրոջն է սիրում: Չէ՛ք ամաչում, [որ] թող էք տալիս դա անել: Ամեն Հաւատի [ազգի] բամբասանքի առարկայ՝ դարձաք: Եթէ ձեր քոյրը նրա մօտ գերի է գարձել, դուք պէտք է ձեր ձայնը Խորասան<sup>210</sup> եւ ինձ Հասցնէիք [պցէիք] ու ձեր քրոջը գերութիւնից ազատէիք»:

[84] Իսկ նրանք իրեն պատասխան գրեցին, եւ ասում են. «Ո՛վ արքայից արքայ, մենք քո աւելի ենք երկնչում եւ չենք յանդգնում ձեռք տալ Դերէնին, քանզի գիտենք, որ քո փեսան է: Դեհ, եթէ մեզ վրայ չես բարկանայ, մենք թող չենք տայ նրան մեզ մօտ գալ [քանի որ] մենք էլ կամեցող [կամանձն] չենք մեզ մօտ նրա շարպատշաճ գործին»:

[85] Եւ երբ Սմպաս արքան լսեց նրանց նամակի [ընթերցումը], Հրամայեց գրել նրանց այսպէս.

«Հայոց եւ Վրաց եւ շատ երկրների [գաւառների] ինքնակալ թագաւոր Սմպասից՝ Ապումնրի Ալի եւ Մաւրա որդիներին.

Լսեցի ձեր Հրովարտակագրի [ընթերցումը], որտեղ գրել էիք, թէ երկնչում էք ինձնից եւ չէք յանդգնում Վասպուրականի Դերէն իշխանին վատութիւն անել: Արդ՝ ես երգուել եմ իմ Ասածով, որին պաշտում եմ, ինձնից մի՛

\* Բնագրում «ճառք էք»: «ճօղալ»՝ մեր խօսուածքում (Կոտայք) «բամբասել» է նշանակում:

վախենաք [անահ եղէ՛ք] դուք: Նախ եւ առաջ նրան յայտնեցէ՛ք [լուր ուղարկէ՛ք], թէ՛ այլեւս մի՛ գայ մեզ մօտ, իսկ եթէ նա յանդգնի գալ, ձայն մի՛ Հանէք [լուր կացէ՛ք], բայց երբ գայ, սպանեցէ՛ք նրան, եւ չէք մեղադրուի [անպարտ կը լինէք] նրա արեան Համար: Իսկ եթէ անտեսէք իմ Հրամանն ու նրան չսպանէք, վկայ է Աստուած. Հերը Հիմնայատակ կը քանդեմ եւ ձեզ [էլ] սրի կը քաշեմ»:

[86] Եւ երբ թագաւորի Հրաման [ագիր]ը տարան Ապումնրի որդիներին, նրանք էլ [մարդ] ուղարկեցին Դերէնի մօտ եւ ասացին, թէ՛ «Էլ մի գայ դու մեզ մօտ մեր քրոջ Համար, որովհետեւ շատերը կանգնել եւ ծիծաղում են մեզ [գրայ] ու Հայհոյում»: Բայց Դերէնը [լսկ] ծիծաղեց:

[87] Իսկ Ապումնրի<sup>211</sup> ասում է. «Լսի՛ր, իշխանաց իշխան, պէտք չէ այլեւս Հեր գնալ, որովհետեւ Ապումնրի որդիները շան բնաւորութիւն ունեն»: Բայց նա ասում է. «Լսի՛ր, Ապումնրի<sup>211</sup> նրանք իմ դեմ կանգնողը [դիմակայ] չեն, եւ եթէ կամենամ, [չէնց] այսօր կը քանդեմ Հերի պարիսպն ու երկիրն աւարի կը մատնեմ»:

[88] Աման օրերը [Դերէնն] իր Վասպուրական երկրում մնաց, բայց երբ աշնան օրերը եկան, յարմարեցրեց, ինչպէս որ իր սովորութիւնն էր՝ գնալու Հեր քաղաքը: Նրա բոլոր ազնուականներն էլ լսել էին այն [մասին], որ Սմպաս թագաւորը [նամակ] էր ուղարկել Ապումնրի որդիներին, բայց ոչ ոք չէր Համարձակում ասել Դերէնին, որովհետեւ խիստ ու բարկացկոտ մարդ էր: Եւ ապա Հրաման սուեց իր սպասաւորներին [ծառաներին], ու բարձեցին Հաց եւ գինի, գեր ու պարարտ [սոշոր անասուններ [խաշինք] եւ սլխարներ ու ամեն [տեսակ] բարիք, որ [կար] Վասպուրականի աշխարհում:

[89] Ոմն մէկին [էլ], որի անունը Մլեհ Ճախամանեցի էր, ուղարկեց՝ [ասելով]. «Ա՛ռ այս ամեն բարիքները, գնա՛ Հեր եւ ասա՛ Ապումնրի որդիներ Ալիին ու Մաւրաին, թէ կամենում եմ գալ ձմեռել ձեզ մօտ, որովհետեւ ձեր Մարանդի լեռներում եւ Մաւրազանի<sup>212</sup> գաշտերում շատ որս է լինում»: Իսկ ինքն անելով զօրքն ու իր ազատներին՝ գնաց Ճաւուկ գաւառը:

[90] Իսկ Դերէնը քէն [ոխ] էր պաշէլ Ապուսմբան Արծրունու դէմ, որն իր սրբի Աշոտի աներն էր: Եւ երբ Հասան ճաշուկ\* գաւառը, Աստեշատ գիւղը եւ օթեւանեցին այնտեղ, նոյն գիշեր [Դերէնը] Հրամայեց Իսկաւ<sup>213</sup> Արծրունուն ու նրա եղբայրներին, որոնց անուններն էին Կստուն\*\*, Վահան, Սարայ\*\*\* եւ Քուրթ ու ասաց. «Բռնեցէք Ապուսմբանին, կապեցէք երկաթե կապանքներով ու տարէք դրէք Ագարակի ամրոցում»<sup>214</sup>: Եւ նրանք բռնեցին Ապուսմբանին ու նրա ոտքերը երկաթե կապանքներ դրին եւ առան տարան Ագարակի բերդը:

[91] Իսկ Ապուսմբանը [մարդ] ուղարկեց իշխան Դերէնի մօտ եւ ասում է. «Որ ինձ կալանաւորեցիր՝ քո կամքն է, բայց լսի՛ր ինձ ու մի՛ գնայ Հեր քաղաքը: Վերագարձի՛ր եւ ախրի՛ր իմ առնը, որովհետեւ իմ գոյքի, խոշոր անասունների [խաշանց] ու ոչխարների, ձիերի ու ջորիների շատ Հարստութիւն կայ, շինի թէ իմ ծառաները կողոպտեն սունը: Եւ այդպէս՝ դու պէտք չես ունենայ՝ գնալու ուղիղ [դէմդիմաց] իժերի բոյն Հեր քաղաքը, քանզի այնտեղ շատ են արիւն Հեղեր»:

[92] Բայց երբ Դերէնը լսեց Ապուսմբանի պատգամը, անպատուեց [անարդեց] նրան ու նոյն ժամին շարժուեց ուղիղ դեպի Հեր: Եւ եկան Հասան Սալամաստ քաղաքը: Եպիսկոպոս Փոկասն իմացաւ [լսեց] ու եկաւ նրան ընդառաջ եւ տարաւ նրան իջեցրեց իր վանքը: Բայց այնտեղ մի օր մնաց [Դերէնը], իսկ առաւօտեան ելաւ գնաց ու Հասաւ այն գետի [ջրի] վտակին, որ վար է Հոսում [գալիս] Անձախի\*\*\*\* ձորից: Անտեղից [էլ] ելան ու գնացին Հերի գաշար:

\* Բնագրում այստեղ՝ «ի գաւառն Ճահկի»: Հմմտ. վերեւում, ծնթ. 159:  
 \*\* Բնագրի այս Կտուն-ի փոխարէն պարագրաֆ 107-ում՝ Կուան է. աւելի Հաւանական տարբերակը ճշտել Հնարաւոր է, ուստի երկուսն էլ թողնում ենք:  
 \*\*\* Բնագրում այստեղ՝ Սալայ, իսկ ստորեւ, պարագրաֆ 107-ում՝ Սարայ. Հաւանականը երկրորդ տարբերակն է, քանի որ այն արձանագրուած է նաև թովմա Արծրունու մօտ (գլ. Գ.իդ, էջ 238):  
 \*\*\*\* Բնագրում այստեղ՝ «ի Անձախիտ ձորոյն» (Հմմտ. վերեւում, պարագրաֆ 31, ծնթ. 157), որտեղ ըստ Հրատարակչի՝ «տ-ն դիմորոջ է» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 70, տողատակ 1), սակայն յաւելենք՝ լուկ իբրեւ շարադրանքի ոճական հնարք:

[93] Եւ նրա դէմ գուրս եկան Ապուսմբի սրդիները, նրանց Հեա էլ՝ բազմաքանակ] զօրք: Եւ Ալին իր Մաշմէտ եղբորն իմաց արեց [նշան տուեց] ու ասաց. «Եթէ իշխանի Հեա [մարդիկ] քիչ լինեն, ես ձախ բազուկս կը բարձրացնեմ՝ դեպի նրա զօրքը, դու նիզակով Հարուածի՛ր նրան, իսկ եթէ նրա Հեա շատ [մարդիկ] լինեն, ես աջ ձեռքս կը մեկնեմ ու կը Համբուրեմ նրան, դու լուռ մնա՛»:

[94] Եւ երբ Հասան ջրին, Ի[ա]լ[ա]ան\* ու նրա եղբայրները խօսեցին, եւ ասում են. «Իշխան Դերէն, լաւ չենք զգում մեզ՝ նրանց բանակը տեսնելով, որովհետեւ շատ [բազմ]ամբոխ են: Մեզ այսօր պէտք չէ գնալ նրանց մօտ, դարձի՛ր ու գնանք մեր Կոստրի<sup>215</sup> ամրոցը»: Բայց նա չկամեցաւ նրանց լսել, գուռաց [ձայնեց] ձիու վրայ եւ վազեցրեց այն վտակի միջով, ապա միւսով ու երրորդով, քանի որ երեք [Գ] ճիւղ [աչք] էին ելնում եւ Հոսում Հերի գիմացի\*\* գաշար: Իսկ նրա ազատագունդը կանգնեց, ու ոչ ոք չկամեցաւ ջուրն անցնել:

[95] Եւ երբ իշխանը Հասաւ գազանարարոյ ցեղի [ազգի] զօրագնդին, Ալին ընդառաջ եկաւ նրան ու ձախ ձեռքը [բազուկը] պցեց նրա վզով եւ Համբուրեց նրան: Այդ ժամանակ նրա եղբայր Մաշմէտը նիզակով Հարուածեց նրա կողին: Իսկ նա ձին քշելով կամեցաւ փախչել եւ ապաստանել իր ազատանիի մօտ, բայց այլազգիները Հետապնդելով շրջապատեցին նրան: Իսկ նա բարձր ձայնով կանչում էր իր ազատանուն. «Ո՛վ իմ սնուցած ազատե՛ր, այսօրուայ [Համար] եմ պաշէլ ձեզ»: Բայց նրանք [յեա] չդարձան նրա ձայնի վրայ, այլ շուռ եկան եւ գնացին ձախի [ձաշկի] բերդը Ապուսմբանի մօտ ու նրան Հանեցին կապանքներից. եւ կարգեցին նրան Վասպուրական երկրում իշխան ու իրենց տէր. եւ առան գնացին Վան, որ իրենց մայրաքաղաքն էր:

[96] Եւ այլազգիներն առան սպանուած Դերէնին ու տարան Հեր քաղաքը: Իսկ սրա[նց] քոյր Կուլինարը [Քուլինարը] նրա գիտիկը [մարմինը]

\* Հմմտ. վերեւում, պարագրաֆ 90-ում եւ ծնթ. 213:  
 \*\* Բնագրում՝ աճպետ, որ Հրատարակիչն ուղղել է «անտեպ = Հանդէպ» (այսինքն՝ «դիմաց»): տն՝ Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 70, տողատակ 17:

[փրկա]զնեց եւ ուղարկեց Հայոց աշխարհը: Եւ տարան թաղեցին նրան ձոր-  
պայ վանքում<sup>216</sup>, որը [որտեղ]՝ Սուրբ Խաչի նշանն էր:

[97.] Իսկ Ապուստոլանը եկաւ Շամիրայ [Շամիրամի]<sup>\*\*</sup> քաղաքը՝ Վան,  
ու բռնեց Դերէնի որդի Աշտին, որն իր փեսան էր: Եւ երկաթէ կապանքներ  
դրեց նրա սաքերն ու տանել տուեց Նկանի բերդը. եւ այնտեղ զնդանեց նրան  
ու պատուիրեց զգուշութեամբ Հսկել [պահել]: Իսկ երկու եղբայրներին՝ Գա-  
գիկին ու Գորգէնին իբրեւ պանդուխտների [պատանդների] պահում էր իր  
պալատում:

[98.] Սմգատ թագաւորն իմացաւ Դերէնի մահը, բայց չհոգաց [չարեց]  
ոչ իր քրոջ եւ ոչ նրա որդիների կարիքները, որովհետեւ Ապուստոլանին Հաւա-  
նում [սիրում] էր: Ապուստոլանն էլ պատրաստ էր ու ծառայում էր Սմգատ  
թագաւորին. եւ այսպէս էր ասում [պատուիրում] նրան, թէ՛ «Երբ [էլ ինձ] քո  
Հրամանը Հասնի, կը գամ քեզ ծառայելու եւ կը ծառայեմ քեզ՝ իբրեւ քո սպա-  
սաւորներից [ծառաններից] մէկը»: Եւ քսանվեց [ԻՉ] տարի [Ապուստոլանը]  
մնաց Վասպուրականի տէրը<sup>217</sup>:

[99.] Եւ ապա Տաճկաց [արարների] երկրից [տանից] մի մարդ կար, իր  
անունն է՝ Հապիպ, սա տիրեց Մօսուլին ու կամեցաւ պատերազմել Հայոց  
թագաւոր Սմգատի դէմ: Որովհետեւ Սմգատը Խլաթի աշխարհի [պաւա-  
ռի] մօտ էր<sup>\*\*\*</sup> ու իր Համար բերդ շինեց [այնտեղ] եւ կամեցաւ իր ձեռքը պահել  
Ասորոց Միջագետքը<sup>218</sup>:

[100.] Բայց Հապիպը, որ Մօսուլի տէրն էր՝ Սաքայի [Սալիբի] որ-  
դին, պատերազմ [ասէր] մի մարդ, զօրք կազմեց եւ այսպիսի Հրովարտակ  
գրեց Սմգատ թագաւորին<sup>219</sup>:

\* Բնագրում որ, որը Հրատարակիչը (գուցէ՛ շտապողաբար) ուղղելի է Համարել՝  
ուր (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ 71, տողատակ 9):

\*\* Տե՛ս վերեւում, պարագրաֆ 38, ծնթ. 145:

\*\*\* Բնագրում՝ «Սըմգատն էր առ աշխարհն Ղլաթայ», որտեղ Հրատարակիչը  
(թերեւս՝ շտապողաբար) ուղղելի է Համարել՝ «էառ [գ]աշխարհն» (տե՛ս Պատ-  
մութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ 72, տողատակ 1): Տեղանունն սովորա-  
կան՝ Ղլաթայ ձեւն արդէն ունենք վերեւում (պարագրաֆ 78-ում. տե՛ս նա-  
եւ ծնթ. 205), թէպէտ ստորեւ եւս աւելի յաճախ է Ղ-ով տարբերակը):

«Հապիպից՝ Սաքայի որդուց, Մօսուլի թագաւորից՝ Հայոց իշխան Սմ-  
գատին՝ Աշտի որդուն:

Դու յանդգնեցիր եւ ինքնագլուխ քեզ թագ կապեցիր, որովհետեւ աշ-  
խարհն անտղամարդ գտար: Ու [դա] քեզ յաջողուեց, եւ բռնութեամբ գրա-  
ւեցիր [առար] բոլոր կողմերը՝ արեւմուտքից [մինչեւ արեւելք]՝, մինչեւ Հա-  
սար Պարտաւ քաղաքաւանը<sup>220</sup>. նոյն կերպ [առար] նաեւ Նախջեւանն ու մեծ  
շահաստանը [մայրաքաղաքը]՝ Դվինը<sup>221</sup>: Դրանով էլ շահագեցար, դարձար  
[դէպի] Ասորոց կողմը [դէէը] եւ գրաւեցիր Արճեշը<sup>\*\*</sup>, Արձկէն<sup>222</sup> ու Մացկեր-  
տը<sup>223</sup> [Մանազկերտը]: Եւ դարձեալ յանդգնեցիր ու գրաւեցիր [առար]  
Խլաթի<sup>\*\*\*</sup> գաւառը: Եւ ահա՛ ձեռքդ պարզել [ձգել] ես ու կամենում եմ անց-  
նել Միջագետք՝ Բաբելացոց երկիրը: Բայց արդ՝ ես կամենում եմ քո դէմ  
պատերազմել եւ գալու եմ ու աւարի առնեմ քո ունեցուածքը եւ այն երկիրը,  
[որ] քո ձեռքի տակ է: Եթէ դու [էլ] կամենում ես՝ վստահեցրով քեզ վրայ, զօր-  
քդ Հաւաքի՛ր [Ժողովի՛ր] եւ ե՛կ ինձ ընդառաջ»:

[101.] Երբ Սմգատ թագաւորն այս լսեց, Հրաման արձակեց [Հանեց]  
ամբողջ Հայոց երկրին եւ Վրաց, Աղուանից<sup>\*\*\*\*</sup> ու Տայոց [երկրներին]: [Նաեւ  
լուր] ուղարկեց Վասպուրականի իշխան Ապուստոլանին՝ «Վ՛ն քո զօրքը եւ  
ե՛կ ինձ մօտ»: Բայց երբ Ապուստոլանը լսեց դա, չարացաւ, որովհետեւ նեն-  
գաւոր մարդ էր եւ ապստամբ: Առաւ նամակ [Հրովարտակ] գրեց<sup>\*\*\*\*\*</sup> Մօ-  
սուլի ամիրային, որովհետեւ սիրելի էին միմեանց եւ վաղուց երգուել էին, որ՝  
«եթէ պատերազմ սկսուի [Հասնի] քո եւ Սմգատի միջեւ, ոչ թէ նրան կ'օգ-  
նեմ, այլ քեզ»:

\* Այս երկու բառը՝ «[մինչեւ յարեւելս]», վերականգնում ենք՝ ըստ բովանդա-  
կութեան եւ իբրեւ գրչի պարզ վրիպում, որի պատճառը եղել է միմեանց բառի՝  
կրկնուած լինելը:

\*\* Բնագրում՝ գԱրճեշ, որը պարզ գրչական վրիպում է (պատճառը՝ բոլորազիր 2  
եւ լ տառերի նմանութիւնը):

\*\*\* Բնագրում՝ Ղլաթայ. տե՛ս վերեւում, էջ 124, տողատակ 3:

\*\*\*\* Բնագրում այստեղ՝ Աղուվանից, իսկ վերեւում (պարագրաֆ 78-ում)՝ գԱղ-  
վանք (տե՛ս նաեւ ծնթ. 189): Տալիս ենք վերականգնումով:

\*\*\*\*\* Բնագրում՝ «Առեալ գիր Հրովարտակ», որտեղ գիր-ն անսովոր, բայց մեր  
հեղինակի լեզուին բնորոշ՝ խոնարհուած բայական ձեւ է (անցեալ կատա-  
րեալով):



[102.] Եւ Հապիպը [լուր] ուղարկեց նրան՝ «Եթէ քո խօսքերը ճշմարիտ [զորդ] են, ա՛հա ժամը Հասել է. դու յապաղի՛ր մէկ օր, եւ ես կը Հասնեմ՝ Սմայատին, իսկ յետոյ կը տեսնես, թէ ինչ կ'անեմ՝ նրա զօրքին»: Իսկ Ապուսմրվանն ուղարկեց Արեղեան \* տուճից [տանից] մէկին՝ Կատենի սրբի Վասակին. երդում [երդմունք] արեց եւ տուեց՝ տանելու Հապիպին:

[103.] Եւ Սմայատն առաւ Հայոց զօրքն ու Հաւաքեց [ժողովեց] շատ [ուրիշ] զօրքեր եւ եկաւ Հասաւ Խլաթի \*\* երկիրն ու բանակ դրեց Մոսկի գաշտում<sup>224</sup>: Եւ կանգնել ու սպասում էր Ապուսմրվան իշխանին, իսկ նա ուշացնում էր գնալը, որովհետեւ դաւաճանել [նենգել] էր Սմայատին:

[104.] Եւ երբ Հապիպը իմացաւ Սմայատի մտադրութիւնն ու Մրվանի ուշանալը, ընտրեց իր զօրքից տասը Հազար [ժ-Ռ]՝ նիզակաւոր մարդու՝ քաջ կռուողներ, իսկ ինքը [մարդ] ուղարկեց Սմայատի մօտ, եւ Հաշտութիւն [խաղաղութիւն] առաջարկեց [պաշտօնեց]: Ու պատգամատարին [դեսպանին] պատուիրեց [ասաց]. «Սմայատին ասա՛, թէ՛ մեզ տո՛ւր Խլաթի բերդը, եւ Հաշտութիւն [խաղաղութիւն] Հաստատենք. բայց դու պա՛հի՛ր [յապաղել տո՛ւր] նրան [այնտեղ]»:

Եւ պատգամատարը [դեսպանը] գնաց ու Սմայատին պաճեց Մոսկի \*\*\* գաշտում: Իսկ գիշերը Հապիպը շտապ [զօրաշարժ] արեց եւ յարձակուեց Սմայատի զօրքի վրայ: Ու Հայոց զօրքերը յանկարծ գիշերով լսեցին ալլազ-գիների աղմուկը [ձայնը] եւ սարսափեցին ու մասնուեցին փախուստի: Իսկ նրանք Հետապնդելով՝ ծանր [մեծամեծ] Հարուածներով ջարդեցին Հայոց զօրքն այդ օրը եւ գրաւեցին Հայոց զօրքի ինչքը:

[105.] Եւ Սմայատն ամօթաճար Հեռացաւ Հապիպից: Ու ճանապարհ ընկան Թ-խաջրով<sup>225</sup>, եկան Հասան Խոզցի<sup>226</sup> ամրոցը, եւ մազապուրծ գալով Հասան Ռ-ըշտունեաց գաւառը<sup>227</sup>: Եւ ապա նրան [Սմայատին] ընդառաջ ե-

\* Բնագրում «ի տանէն զարեղենից», որ կարող էր լինել նաեւ՝ «Գարեղենից»:  
\*\* Բնագրում այստեղ (նաեւ յաջորդը պարագրաֆ 104-ում)՝ Ղալաթայ. տե՛ս վերեւում, էջ 124, տողատակ 3:  
\*\*\* Բնագրում այստեղ՝ Մոսկի, բայց պարագրաֆ 106-ում եւ 131-ում վերստին՝ Մոսկի (ինչպէս որ 103-ում էր):

կաւ Վասպուրակ[աց]ի իշխանը, ու երբ Հանդիպեցին իրար, Ապուսմրվանն ասում է. «Ի՞նչ է եղել թագաւո՛ւր, որ գալիս ես»: Սմայատն ասում է. «Քեզ կարօտել էի, որովհետեւ ուշացար ու շեկար, որ քեզ տեսնէի»: Իսկ Գապիկը մօտեցաւ \* Սմայատ թագաւորին եւ ասաց ու պատմեց Ապուսմրվանի բոլոր նենգ [նենգութեան] արաքների մասին՝ Հապիպի մօտ [մարդ] ուղարկելու եւ Վասակի գնալու [մասին]:

[106.] Եւ Սմայատը Գապիկին ասում է. «Եւ ի՞նչ՝ Վասակը դեռ չի՞ եկել»: Իսկ Գապիկն ասում է՝ «Դեռ չի եկել»: Եւ ապա Սմայատը Գերենիկի սրբի Գապիկին ասաց. «Լուռ մնա՛, [ա՛հա] Հասաւ ժամանակը, որ տիրանաս Վասպուրականի երկրին [աանը]՝ քո Հայրենիքին»: Ու յետոյ եկան Շամիրայ [Համիրամի] \*\* քաղաքը՝ Վան: Իսկ իշխան Մրվանը \*\*\* ճաշ[կերոյթ] պատրաստեց եւ Սմայատ թագաւորին ասաց. «Այսօր քեզ՝ արքայիդ Համար ճաշ եմ պատրաստել, կա՛յ [այստեղ], վաղը կը գնաս, ո՛վ թագաւոր»: Բայց Սմայատ թագաւորը իշխան Ապուսմրվանին ասաց. «Դու Մոսկի գաշտում ես ինձ ճաշ տուել, այնպէս որ մինչեւ Հայոց երկիրը [տունը] Հասնեմ՝ Համը [Համեղութիւնն] իմ ստամոքսից չի անցնի»: Ու չգնաց նրա ճաշին:

[107.] Եւ ճանապարհ ընկնելով՝ գնաց, իսկ իրրեւ ճանապարհ գնող նրա Հեռ գնաց նաեւ Վասպուրականի իշխանը: Նրան Սմայատն էր կանչել իրրեւ իր ծառաներից մէկի, իսկ [ինքը մարդ] էր ուղարկել այն մարդկանց մօտ, որ Հինգ [Ե] եղբայրներ էին Ամասունեաց տուճից [տանից] (ու նրանց անուններն էին՝ Կուան [Կտուն] \*\*\*\*, Վահան, Քուրթն, Սարայ \*\*\*\*\*, Ի[ա]-

\* Բնագրում «եւ մօտ եւ Կակիկ», որը հրատարակիչը շտապողաբար ուղղելի է Համարել՝ Խմուտ («մտաւ»). տե՛ս Պատմութիւն Օսպիտի Բագրատունայ, էջ 74, տողատակ 6: Սակայն այստեղ մօտ-ն անսովոր, բայց մեր Հեղինակի լեզուին բնորոշ խոնարհուած բայական ձեւ է (անցեալ կատարեալով)՝ «մօտեցաւ»:  
\*\* Տե՛ս վերեւում, պարագրաֆ 38, ծնթ. 145:  
\*\*\* Այսպէ՛ս բնագրում Ապուսմրվան-ի փոխարէն:  
\*\*\*\* Պարագրաֆ 90-ում Կտուն էր. եւ քանի որ Հաւաստի տարբերակը ճշտել Հնարաւոր չէ, թողել ենք երկուսն էլ:  
\*\*\*\*\* Պարագրաֆ 90-ում Սաւայ էր, որ սրբագրել ենք ըստ այս Հատուածի եւ Թովմայի: Պարագրաֆ 107-ում անունը գրուած է Սար եւ Սարի: Նախորդ երկու՝ Վահան եւ Քուրթն անուններն այդ պարագրաֆում նոյնն են:

զ[ա]տ<sup>\*</sup>՝ քաջ ու անուանի մարդիկ: Եւ իրենց ասել էին, թէ՛ «Հենց միւս օրը, առաւօտուայ լուսանալուն պէս նենգաւոր Ապուստոլոսն իմ առջեւ Հասցրէ՛ք ու իմ քրոջ որդի Գաբիկին Վասպուրականի երկրի [տան] տէրը դարձրէ՛ք [դրէ՛ք]: Ապա վերագարձան ու եկան [Ապուստոլոսն իսումբը] Վան քաղաք, իսկ Սմայատը շարունակեց [գնաց] իր ճանապարհը:

[108] Իսկ առաւօտեան լուսանալուն պէս, երկուշաբթի օրը Ամատունի Հինգ [Ե] եղբայրները եկան Ապուստոլոսն պալատը եւ ասացին. «Ո՛վ իշխան, ահա որսի օրուայ բազմաթիւ նապաստակներ են նստեցրել մեր ծառաները, վեր կա՛ց [արի՛] գնանք, որսանք»: Եւ նա ջորի Հեծաւ ու գնաց նրանց Հետ: Եւ Հասան Վարդաբոյն<sup>\*\*</sup> կոչուող այգիների եզերքը (իսկ նրանք իրենց Հագուստների տակից զրահ էին Հագել ու կամենում էին սպանել նրան), յանկարծակի մի ձիաւոր [կարիճ] Հասաւ, սրը մի փոքրիկ գրուծին [թուղթ] ունէր, Հասցրեց, սուեց իշխանին: Իսկ նա արգելակեց ջորու [ընթացքը] եւ կարգաց, ապա շուռ սուեց ջորին ու յետ դարձաւ, որ վերագառնար [գար] քաղաք:

[109] Բայց Ամատունի եղբայրները կանչում [ասում] են. «Տեսէ՛ք, գնաց»: Եւ ապա Սար[ա]յը գոչելով [ձայն տալով] ձիու վրայ՝ անցաւ նրա առջեւ, ու ձիու ընթանալուց փոշի բարձրացաւ: Իսկ իշխան Ապուստոլոսն սրանեղած ասաց. «Ի՛նչ շուն ու անամօթն ես դու». եւ ձեռքը դրեց երեսին, որովՀետեւ այդ պաշին [ժամին] սաստիկ Հողմ՛ ելաւ եւ փոշին բարձրացաւ ու կանգնեց [ծառայաւ]: Նոյն պաշին [ժամին] Սար[ա]յը<sup>\*\*\*</sup> շրջուեց նրա դէմ, քանի դեռ [նա] ձեռքը չէր իջեցրել [վերցրել] երեսից, թուրը պատեանից Հանեց [քաշեց] ու Հարուածեց աջ թեւին, իսկ գլուխը ձախ ձեռքով [Հրեց], գետին նետեց [ձգեց]: Ապա շրջապատեցին եւ նրա [Ապուստոլոսն] գլուխը կտրեցին ու սուին մի մարդու, որը տարաւ [դա] Սմայատ թագաւորի մօտ, երբ [նա] դեռ նա ճանապարհն էր գնում:

\* Բնագրում՝ Իզտն, ինչպէս որ պարագրաֆ 94-ում էր: Բայց Իւզաւտ անուանատարբերակի Հաւանականութեան մասին տե՛ս վերեւում, ծնթ. 213:  
\*\* Բնագրում՝ Վարդապոյն՝ Փ-Բ խօսուածքային սխալագրութեամբ, որ սովորական է Հեղինակի կամ գրչի Համար:  
\*\*\* Բնագրում այստեղ՝ Սարի. տե՛ս էջ 127-ի տողատակ 5:

[110] Եւ առան Գաբիկին՝ Գերենի որդուն, ու բերեցին մացրին Վան քաղաքը: Բայց բերդում մի մարդ կար, որը փակեց բերդի դուռը: Եւ Գաբիկին ասաց նրան՝ այն մարդուն, որ այդ բերդում էր (որի անունը Մլեհ էր եւ ազգական [ընտանի] էր նրան [Գաբիկին]). «Տեսնում ես այս շար մարդու մարմինը, դեհ լուռ Հնազանդուի՛ր, [թէ չէ] օրերս այսպէ՛ս կը մեծարեմքեզ»: Իսկ նա ասաց. «Ո՛վ Գաբիկ, դու չես մտնի այս ամրոցը»: Եւ Գաբիկը պաՀապաններ դրեց բերդի շուրջը, ապա երդում արեցին, ու այդ մարդը վար եկաւ եւ բերդը յանձնեց [տուեց] Գաբիկի ձեռքը: Իսկ այնտեղ շատ [բազում] գանձեր կային: Եւ Հայոց թուականը [երեք] Հարիւր վաթսուն երկուսն [Գ/ՃԿԲ<sup>\*</sup>] էր<sup>228</sup>: Բայց Գաբիկը տիրեց Վասպուրականին իրբեւ տեղապաՀ:

[111] Իսկ Պարսից երկրում թագաւորեց Ապուսայլէպի որդի Ալին՝ ամբարտաւան ու շնաբարոյ [մի] մարդ, եւ իր տիրապետութեան [ձեռքի] տակ նուաճեց [առաւ] բազմաթիւ երկրներ: Եւ նա մի սովորութիւն ունէր, որ երբ գալիս մտնում էր Պարսից սրեւէ մի քաղաք, նա կաւատ [քամոսկ] կանայք ունէր, որ սնից սուսն էին շրջում ու որտեղ որ գեղեցիկ կին էին տեսնում, նրա մասին յայտնում [պատմում] էին Ալի ամիրապետին, իսկ սա բերել էր տալիս եւ [այդպէս] շնանում [խառնակում] էր մեծամեծերի ու աղքատների բազում կանանց Հետ: Եւ այդ [կաւատ] կանայք դարձան նրա խորհրդատուներն, իսկ նա [այլեւս] Հնար [ճար] շունէր՝ իր մեծամեծերին կանչելու իր առջեւ:

[112] Եւ Պարսից ազգից կար մի մարդ՝ [մի] մեծ ամիրայ, իսկ նրա անունը Ապուսեճ<sup>\*\*</sup> էր, եւ նա տիրում էր [ունէր] Արդաւեստ [Արտաւեստ]<sup>229</sup> քաղաքին ու սրա շրջակայքին [տաՀմաններին]: Եւ [երբ] Ապուսեճ ամիրան մեռաւ, նա երկու [Բ] որդի ունէր՝ Ափշինն ու Ուսեփը<sup>\*\*\*</sup>, եւ սրանք աղքատա-

\* Մերոպ եպիսկոպոսի ծանօթագրմամբ (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 76, տողատակ 7, վրիպակով՝ Տ)՝ «ԹՎԿԱ. ԸԿԲ., անշուշտ պակասաւոր, աւելացրինք Գ. ուրեմն 913 թուին»:  
\*\* Բնագրում այստեղ եւ յաջորդը՝ Ապուսեճ, բայց յետոյ միայն՝ Ապուսեճ:  
\*\*\* Բնագրում այստեղ՝ Ուսեպ, ստորեւ քանիցս՝ Ուսեփ (եւ ո՛չ սպասելի՛ Ուսեփ), մէկընդմէջ՝ Ուսուփ, բայց յետոյ նաեւ՝ Յուսեփ, որը եւս պահում ենք:

ցած էին [ու] եկան Ալի\* ամիրապետի պալատը: Եւ նա կանչեց բանդարին<sup>230</sup> (որ սնուցուել [կարգացել] էր նրա պալատում)՝ Պարսից զօրքերի Հրամանաարին, ու ասաց. «Ա՛ն այս երկու [Բ] սղաներին [մանուկներին] եւ պաշի՛ր [Հովուի՛ր] նրանց, ինչպէս որ վայել [արժանի] է, ու խնամի՛ր [տե՛ս], որովհետեւ Ապուսէճի որդիներն են: Բանդարն առաւ նրանց ու յանձնեց խնամատարների [Հոգացողներին]. եւ ասաց. «Սրանք մեծն Ապուսէճի որդիներն են, առ ու խնամի՛ր [տե՛ս] որպէս ամիրայի որդիներին»: Եւ Ապուսէճի որդիներն Ալիի պալատում ապրեցին տասը [Ժ] տարի:

[113] Եւ ապա սրանից յետոյ Ալի ամիրապետը շրջապայեց Պարսից երկրում ու եկաւ Հասաւ Սրաւ<sup>231</sup> քաղաքը: Եւ եկան [նրա մօտ] Սրաւի ամիրայի կաւատ [քոմսակ] կանայք. իսկ նա [ամիրան] այդ նոյն տարին մեռել էր, բայց նա մի անշափ գեղեցիկ գուտար ունէր: Եւ այն կանանցից մէկը եկաւ ու բռնեց ամիրապետի ձեռքը. եւ ամիրապետը Հրամայեց [ասաց]. «Ասելիքդ ասա՛»: Իսկ նա սրան պատմեց այն կնոջ գեղեցկութեան մասին:

[114] Այդ ժամանակ ամիրապետը [մարդ] ուղարկեց ազնկայ մօր մօտ եւ ասաց. «Քո գոտերը տո՛ւր ինձ աղախին»: Նրա մայրը պատասխանեց ու ասաց. «Մեծ ամիրա՛յ, քո Հրամանը բարի [աղէկ] է, բայց ոչ թէ աղախին՝ մարդու եմ աղխոս, որովհետեւ [սա] գուտարն է Ապուսաւ Հրի՛»\*\* Սուրբի որդու. եւ թէ առնես [քեզ] կին, վերցրո՛ւ նաեւ իմ գանձերն ու իմ ամբողջ ժառանգութիւնը, որ ունեմ ինձ մօտ»: Իսկ երբ ամիրա[պետ]ն այս կնոջ բոլոր խօսքերը լսեց, սաստիկ [յոյժ] տրամեց եւ բարկացաւ նրա վրայ:

[115] Կանչեց նրան, ում յանձնարարել էր քաղաքը, եւ ասաց. «Տե՛ս, ինչ գումար [գանձ] էլ իմ զօրքերին [պաշէլու Համար] գրեմ, վերցրո՛ւ Ապուսաւ Հրի տանից. եւ տո՛ւր [այնքան], մինչեւ որ սպառուի նրա ամբողջ ինչքը»: Այս ասաց ու ելաւ գնաց Սրաւ քաղաքից եւ եկաւ Հասաւ Թաւրեթ շահասանը [մայրաքաղաքը]: Եւ սկսեց, ամեն անգամ [Հրաման] էր տալիս ու

\* Բնագրում այստեղ՝ Ալէ. Հրատարակչի ծանօթագրմամբ (Պատմութիւն Ծապիոյ Բագրատունոյ, էջ 76, տողատակ 24)՝ «Սեռական հոլով իբրեւ Ալեայ»:  
\*\* Բնագրում Ապուսայի (՝Աբու Տաֆիի):

գրում եւ իր զօրքերի ծախսերը Սրաւից՝ Ապուսաւ Հրի տանից էր առնում: մինչեւ որ սպառուեցին նրա բոլոր գանձերը:

[116] Եւ միւս տարի ամիրապետ Ալին դարձեալ եկաւ Սրաւ: Ապուսաւ Հրի կինն իմացաւ [լսեց] ու ընդառաջ գնաց նրան: Տեսաւ Ապուսէճի որդիներին՝ Ավշինին եւ Ուսեփին\*, կարեց նրա[նց] առջեւն ու ասաց Ուսեփին. «Ալի՛ր ինձ, Ապուսէճի որդի՛»: Եւ նա ձին կանգնեցրեց ու ասաց. «Ի՞նչ կայ, աիկի՛ն, կամ ո՞վ ես դու»: Եւ նա ասաց. «Ես Ապուսաւ Հրի կինն եմ». ու պատմեց նրան ամիրապետի բոլոր արածները: Իսկ Ուսեփն ասաց. «Բայց ի՞նչ ես կամենում, որ անեմ»: Եւ կինն ասում է. «Կամենում եմ, որ ամիրապետին ասես, որպէսզի իմ գոտերն առնի ու գնի [տայ] իր աղախինների տանը»: Եւ նա ասում է. «Ինչպէս դու կը Հրամայես [Հրամանքդ է], աիկի՛ն»:

[117.] Եւ Ալի ամիրապետը եկաւ ու մտաւ Սրաւ քաղաքը եւ նստեց արքունական ապարանքում: Իսկ նա [մի] սովորութիւն ունէր, որ երբ [մի աեզ] իջնում էր, գալիս էին նրա նախարարներն ու մեծամեծերը եւ կանգնում նրա առջեւ իրենց թրերով, մինչեւ թագաւորը բազմում էր գահաւորակին [բազմականին], ու յետոյ դուրս էին գալիս: Բոլոր իշխանները եկան, կանգնեցին նրա առջեւ՝ ըստ իրենց սովորութեան, եւ երբ ժամանակը եկաւ, բոլորը դուրս ելան: Բայց Ուսեփը չգնաց, այլ ստքի վրայ կանգնած էր նրա առջեւ՝ սպասելով Ապուսաւ Հրի կնոջ Համար խօսելու:

[118] Եւ ամիրապետը տեսաւ [Հայեց] ու գազազելով Հարցնում [ասում] է սենեկապետին [Հճեպին], թէ՛ «Ո՞վ է սա»: Իսկ սենեկապետը [Հճեպն] ասում է. «Մեծ ամիրա՛յ, Ձեր ծառան է»: Եւ ամիրապետն ասում է. «Անունով ասա՛, որովհետեւ չեմ ճանաչում»: Իսկ սենեկապետն ասում է. «Ուսեփը՝ Ապուսէճ ամիրայի որդին»: Եւ ամիրապետը Հարցնում է. «Իսկ ե՞րբ է գա եկել իմ պալատը եւ կամ ինչպէ՞ս է ապրում»: Եւ Յուսեփն [Ուսեփն]\*\* ասում է. «Մեծ ամիրա՛յ, այս արդէն տասը [Ժ] տարի է, որ քո պալատում եմ: Երբ ես ու իմ եղբայրը եկանք, ոչինչ չունէինք, բայց այժմ ամեն մէկս [Ա] Հազար [Ո.]

\* Բնագրում այստեղ՝ զՈւսուփն, որը եւս կարելի է համարել անուան շրջանառու գրելաձեւ:

\*\* Բնագրում այստեղից անուան գրելաձեւն առաւելապէս դառնում է՝ Յուսեփ:

մարդ ունենք քո պալատում»: Իսկ ամիրապետն ասում է. «Գո՛ւ եմ իմ Ասա-  
ծուց, որ անշափ [անշաք] մեծացրել է ինձ. [ա՛հա եւ] Ապուսէճի որդիներն են  
անծանօթ [լինելով] ինձ ծառայում [պաշտում]»: Ապա Յուսեփն ասաց.  
«Մեծ ամիրա՛յ, այն աղջիկը, որին դու պա՛հանջեցիր [խնդրեցիր] Ապուսա՛-  
ւրի կնոջից ու նա շտուեց իբրեւ [քեզ] աղախին, այլ տալիս էր կնութեան, ա՛հա  
եկել եւ աղաչում է քեզ ու ասում. «Թե՛ կուզես՝ ծախի՛ր, թէ՛ կուզես՝ պա՛հի՛ր  
քեզ աղախին»:

[119] Եւ ամիրապետն անշափ ուրախացաւ, [մարդ] ուղարկեց, բերել  
տուեց աղջկան ու սկսեց ուրախանալ [խնդալ]: Եւ Հրամայեց գրել ու Սրա-  
քաղաքը յանձնել [տալ] Ապուսէճի որդի [Յ]ուսեփին: Իսկ Ապուսա՛ւրի դս-  
տերն իր մօտ պա՛հեց Հինգ [Ե] օր: Ապա Հինգ [Ե] օրից յետոյ կանջեց Յուսե-  
փին եւ Ապուսա՛ւրի դստերը նրան տուեց, պսակեց [թագ կապեց] նրան ու  
մեծ Հանդիսաւորութեամբ [Հանդեսով] արեց նրա Հարսանիքը:

[120] Եւ օրեր անց նրա [Յուսեփի] կինն ասում է. «Յուսե՛փ, տեսա՞ր,  
թէ ինչ արեց Այի ամիրա[պետ]ն, առաւ իմ բազմաքանակ գանձերը, որ իմ  
Հայրն ինձ Համար էր պա՛հել, ինձ էլ բազում շարձարանքների ու անարգանք-  
ների Հասցրեց»: Եւ լաց եղաւ նրա առջեւ: Իսկ [Յ]ուսեփն ասաց իր կնոջը.  
«Մի՛ լար»: Երգուեց, թէ՛ «Ես կը Հատուցեմ [կը վճարեմ] նրան՝ ինչ որ նա  
քո նկատմամբ արեց»:

[121] Եւ այն տարին [այդպէս] մնացին, իսկ միւս տարի Այի ամիրա-  
պետը Ապուսէճի որդի Յուսեփին տուեց Արտաւետը. ու մի ուրիշ տարի էլ  
տուեց ՆորՀը: Եւ ապա քիչ [սակաւ] օրեր անց Յուսեփին տուեց Չարեւանդ  
գաւառը, իսկ յետոյ [Յուսեփը] երեսուն Հազար մարդուց զօրք կազմեց եւ ա-  
պա գրանից յետոյ դարձաւ ամիրայ:

Մի օր [այնպէս եղաւ], որ Այի ամիրապետն այժեամբերի որսի էր ելել:  
Եւ յանկարծակի Յուսեփի զօրքերը յարձակուեցին Այի ամիրապետի վրայ,  
բռնեցին ու կապեցին երկաթե կապանքներով եւ բանտ նետեցին: Եւ Ապու-  
սէճի որդիները գրաւեցին Պարսից երկիրը: Իսկ երբ Ային գեռ բանաւ էր,  
թունաւորեցին [գեղ տուեցին] նրան ու սպանեցին:

[122] Եւ Ապուսէճի որդին մի շար ու դաժան [խոտասիրա] մարդ էր եւ  
սանձութիւն արեց Հայոց աշխարհի նկատմամբ ու կամեցաւ Հարկ առնել  
Սմպատ թագաւորից: Իսկ Սմպատը չկամեցաւ տալ եւ ասաց նրան. «Դու  
աւելի լաւը չես, քան Ային, թէպէտ եւ նենգութեամբ սպանեցիր նրան, ու ես  
Հարկ չեմ տալ քեզ»: Եւ ապա Ապուսէճի որդին Հաւաքեց [Ժողովեց] Պարսից  
բոլոր զօրքերն ու եկաւ Հասաւ Հայոց աշխարհը: Իսկ Սմպատը Հաւաքեց  
[Ժողովեց] Հայոց զօրքը եւ գնաց նրա դէմ: ու ճակատամարտը տուեցին  
[դրեցին] Գնայ գաշտում<sup>232</sup>: Եւ մարտը [պատերազմը] երկար տեւեց [երկա-  
րեց], բայց Սմպատ թագաւորը յաղթեց Պարսից զօրքերին: Եւ նրանցից շա-  
տերին սպանեցին, ու մնացեալին էլ Հալածելով փախուստի մասնեցին: Եւ  
[այդպէս Սմպատը] Ապուսէճի որդուն մեծ ամօթով յետ դարձրեց Պարս-  
կաստան: Ու այդ ժամանակից ի վեր աւելի ու աւելի էր վերում Ապուսէճի  
որդի Յուսեփը:

[123] Այդ ժամանակ Սմպատը կամեցաւ խնամիութիւն Հաստատել  
Լազ[ի]կե[ա]յ<sup>\*</sup> թագաւորի Հետ, որ Ափսաղներն<sup>\*\*</sup> են: Եւ Ափսաղաց Դա-  
տոս արքայի<sup>233</sup> դստերը կին բերեց իր որդի Մուշեղին, ու դրանով նրանք  
բարեկամացան միմեանց Հետ: Եւ ապա Սմպատ թագաւորը մտադրուեց  
գրաւել Ափսաղաց այն գաւառ[ներ]ը, որ մօտ էին Շիրակի<sup>234</sup> գաւառին (որ  
սրանք են)՝ Կանգարքը<sup>235</sup>, Գոգշէնը<sup>236</sup>, Չայցեղը<sup>237</sup>, Կողը<sup>238</sup> եւ Արտաճան-  
քը<sup>239</sup>. [դա՛] որովհետեւ Սմպատը մեծ ձգտումներով [մեծա՛հար] ու յանդուգն  
[ամբարտաւան] մարդ էր, եւ նրա թագաւորութեան ժամանակը յաջող էր  
անցել:

[124] Այդ ժամանակ Ափսաղաց Դատոս<sup>\*\*\*</sup> թագաւորը [լուր] ուղար-  
կեց Հայոց թագաւոր Սմպատին. «Քեզ չեմ տալ իմ Հայրենի գաւառ[ներ]ը»:  
Բայց նա [Սմպատը] դադար չառաւ: Երբ նրան շլտեց, նա [Դատոսը] լուռ

\* Բնագրում Լակզեց, որի մէջ դրափոխութիւն ենթադրելով վերականգնելի  
ենք Համարում Լազկեց՝ դրա հիմքում ընկալելով Լազ[ի]կե[ա]յ: Հմմտ. վե-  
րեւում, Բ Հատուածի պարագրաֆ 5-ում (որտեղ ունէինք Լազկաց, այսինքն՝  
Լազ[ի]կաց) եւ ծնթ. 33:

\*\* Բնագրում Ափսաղք (Հմմտ. վերեւում, ծնթ. 34):

\*\*\* Այստեղ բնագրում Դոտուս, իսկ մի քանի տող վերեւ՝ Դատոս էր:

մնաց մինչեւ ձմեռն օրերը, ապա իր մօտ կանչեց իր փեսայ Մուշեղին ու  
զնգան գրեց: Եւ Մուշեղը [լուր] ուղարկեց իր Հայր Սմայատին՝ ասելով՝ թէ՛  
«Այն գաւառների Համար, որ խելէ ես Ափխազաց թագաւոր Գատուսի՝<sup>\*\*</sup> ձեռ-  
քից, աՀա, կապել է ինձ երկաթէ կապանքներով»:

[125] Իսկ երբ Սմայատն իմացաւ [լսեց] գա, զօրաժողով արեց եւ շատ  
ազգեր Հաւաքեց [ժողովեց] ու [պատերազմի] ելաւ Ափխազաց երկրի վրայ:  
Եւ ելաւ Հասաւ Նաւհանաց երկիրը՝<sup>240</sup> այն գիւղը, որ կոչուում է Գօրի<sup>241</sup> (իսկ  
այնտեղ նստած էր Ափխազաց թագաւորը, ու Մուշեղն էլ՝ իր Հեա): Եւ կարեց  
(Սմայատն) այն գետի ջուրը, որ շրջապատում էր բերդի շուրջը: Բայց քաղաք  
մանելու Հնար [ճար] չկար՝ սառույցի [պղտի] պատճառով, քանի որ [այն]  
կապել էր ամբողջ դաշտը:

[126] Սմայատը մտաւ Ափխազաց երկիրը եւ առՀասարակ աւարի են-  
թարկեց երկիրն ու եկաւ Հասաւ Արաւան գաւառը [աշխարհը]. իսկ նրա  
Հեա [այս] բազմամբոխ [զօրքն էր].

Արեւելից իշխան Սմայատը՝ բազմաքանակ [բազում] զօրքով, Փառխս[ո-  
ւ]ի<sup>\*\*\*</sup> իշխան Հմա[յ]ե[ա]կը՝ բազում Հեծեալներով, Աղձնե[ա]յ<sup>242</sup> իշխան  
Գրիգորը՝ բազմաքանակ զօրքով, Գորոզուի<sup>243</sup> իշխան Վասակը՝ բազում Հե-  
ծեալներով, Վայս[յ] ձորի իշխան Ապուշամբը՝ բազմաքանակ զօրքով, Տայոց  
իշխան Գուամբը՝ բազում Հեծեալներով, Ճոյբայ<sup>244</sup> իշխանը՝ բազմաքանակ  
զօրքով, Տարունոյ [Տարօնի] իշխան Գաբիկը՝ բազում Հեծեալներով, Վաս-  
պուրահանի իշխան Գորգէնը՝ բազմաքանակ զօրքով, Մոկաց իշխան Աշո-  
տը՝ բազում Հեծեալներով, Անձեւացե[ա]յ իշխան Համակարը՝ բազմաքա-  
նակ զօրքով, Կորգուաց<sup>245</sup> իշխանը՝ բազում Հեծեալներով, նաեւ Պարսից աշ-  
խարհից՝ բազմաթիւ ուրիշներ:

\* Բնագրում՝ «առ Հայրն իւր Սմայատայ, էթէ», որտեղ ընդգծուած տառերը քե-  
րականական սխալներ են, ուստի Հնարաւոր է դրանց փոխարէն վերականգ-  
նելի համարել՝ «Սմայատ, ասէ՛ թէ»:

\*\* Բնագրում այստեղ՝ Դոռոս:

\*\*\* Բնագրում՝ Փառխոյ, որ վերականգնելի է թուում ըստ երկրանունան սովորա-  
կան ձեւի՝ Փառխ[ոս]ոյ, հմմտ. վերելում՝ պարագրաֆ 78-ում, որտեղ առկայ  
է Փարխուրք անունանումը (նաեւ՝ ծնթ. 191):

[127.] Եւ [շրջա]պատել էին սառց[աջր]ի շուրջն, [ու] Հնար չկար  
նրա[նց]՝ Գօրի գիւղը գրաւելու: Սմայատ թագաւորը եւս տարակուսանքի  
մէջ էր: Բայց Վասպուրահանի իշխան Գորգէնը բացատրեց [ասաց] իր ա-  
զատանիին, [թէ] որն է Հնարը [ճարը], եւ ապա նրանք իրենց ձիերին նոր  
պայտերով [լուսնօք] պատրաստեցին [կազմեցին]. Հաւաքեց [յաջողացրեց]  
նաեւ քաջ մարդկանց՝ Գնունեաց սուզմից [ազգից], Քաջբերս[յ]նեաց սու-  
զմից, Գաբեղենից սուզմից, Ձիւնահան սուզմից, Գազրիկան՝<sup>\*\*</sup> սուզմից, Գն-  
թունե[ա]յ<sup>\*\*\*</sup> սուզմից:

[128] Եւ ինքը Գորգէնը՝ [մի] քաջ մարդ, առաւօտեան լուսանալուն  
[պէս] եկաւ (իսկ Սմայատը ախուր [տրտում] կանգնած էր նաեւ՝ երբ Գորգէ-  
նը եկաւ Սմայատի առջեւ). Գորգէնը Հարցրեց [ասաց]. «Ինչու ես ախուր  
կանգնել արքայ»: Իսկ Սմայատն ասաց. «Ապա ի՞նչ անենք, իմ որդի Գոր-  
գէն»: Եւ Գորգէնն ասաց. «Ինձ Հրաման տո՛ւր, ու ես քո որդուն կը բերեմ՝  
քեզ մօտ»: Բայց Սմայատ թագաւորը ծիծաղեց նրա խօսքի վրայ: Եւ Գորգէ-  
նն ասում է. «Մի՛ ծիծաղիր, թագաւո՛ր»: Իսկ Սմայատը Հարցնում [ասում] է.  
«Մի՛ թէ Հնար [ճար] է լինելու, [որ] թուշունի նման թուշէիր, որդի Գորգէն»:  
Եւ Գորգէնն ասում է. «Թագաւո՛ր, Հրաման տո՛ւր եւ ինքզ անՀոգ եղի՛ր»:

Իշխանները նայում էին ու Հարցնում. «Ի՞նչ է կամենում անել Վասպու-  
րահանի իշխանը»: Եւ ծիծաղում էին իրար Հեա ու կատակի տալիս նրան:  
Բայց թագաւորն ասաց. «Գնա՛, որդի Գորգէն»:

[129] Եւ Գորգէնը ելաւ գնաց ազատանիի մօտ ու յայտնեց [պատմեց]  
թագաւորի Հրամանի մասին: Եւ Վասպուրահանի քաջ երիտասարդները Հե-  
ծան, [Հեծաւ] եւ ինքը Գորգէն Արծրունին, ելան ու գնացին ցրտից պնդացած  
սառույցի վրայ: Եւ երբ մօտեցան գիւղին, Ափխազաց թագաւորի զօրքը ելաւ՝

\* Հրատարակիչը բնագրի այս հատուածը կէտադրելիս շփոթեցնող հարցական  
ու չափերտներ է դրել. «ասէ... Գորգէն ցաղատքն իւր՝ «զի՞նչ է ճառս» եւ ա-  
պա...»: Սակայն բովանդակութիւնն ամբողջապէս հասկանալի է դառնում  
գրանք հանելով եւ ճարս բառից յետոյ ստորակէտ աւելացնելով:

\*\* Ձեռագրում՝ Գաշրիկան, որ պարզ գրչական վրիպում է թուում բոլորագիր Գ  
եւ շ տառերի նմանութեան պատճառով:

\*\*\* Բնագրում՝ Գնդունեց, անշուշտ՝ սովորական Թ-Դ սխալագրութեամբ:

գրաւելու սառոյցի եզրը, ու [արդէն] նրանց [Հայերին] իրենց որսն էին Հա-  
մարում: Իսկ սրանք գալիս էին լուռ ու անձայն [լուռ ի լուռ], որովհետեւ  
Գորգէն իշխանը պատուիրել էր իր ազատանիին՝ ասելով, թէ՛ «Պատրաս-  
տուած գնացէ՛ք, բայց խաբեցէ՛ք Ափսազայ գօրքին ու մի կողմ՛ Հեռացէ՛ք»:  
Եւ [այդ կերպ] գնացին [Հասան] ցամաքին մօտ ու յանկարծակի ազազակե-  
ցին [ձայն տուեցին], իսկ ձայնի վրայ Ափսազայ գօրքերը փախուստի մատ-  
նուեցին սրանց առջեւ. եւ շրջապատելով [մէջ առնելով] նրանց՝ սրի քաշեցին  
[ու] սկսեցին կոտորել նրանց:

[130] Ափսազայ թագաւորը լսեց յանկարծակի [բարձրացած] աղմու-  
կը, ելաւ տանիքը, բարձր ձայնով ազազակեց ու Հարցրեց [ասաց]. «Ո՞վ ես.  
այդ քաջ արեան գործ է, տո՛ւր ինձ արիւնդ»: Եւ Գորգէնն ասաց. «Ես Վաս-  
պուրականի իշխանն եմ, իսկ դա որդին է իմ քեռու՝ Սմայատ թագաւորի»:  
Եւ բռնելով [առնելով] Ափսազայ թագաւորին ու Սմայատի՝ որդի Մուշե-  
ղին՝ բերեց Սմայատ թագաւորի առջեւ: Եւ [այդպէս] զարմացան բոլոր [իշ-  
խան]տոհմերը [ազգերը], որ Սմայատի Հետ էին: Իսկ Ափսազայ թագաւորը  
Համաձայնութեան եկաւ, տուեց Կանգարքը, Գոգչէնն՝ ու Կողը՝, եւ  
խաղաղութիւն Հաստատեցին [արեցին] իրար միջեւ:

[131] Եւ Սմայատ թագաւորը վերագործաւ ու եկաւ շահաստան [մայ-  
րաքաղաք] եւ ամեն մէկին ուղարկեց իր տունն ու երկիրը: Իսկ Գորգէն իշ-  
խանը, որ Արծրունեաց տոհմից [տանից] էր (եղբայրը Վասպուրականի իշ-  
խան Գազիկի), որ այնպիսի յայթույթիւն տարաւ, եկաւ իր ազատանիի մօտ  
եւ ասում է. «Տեսնո՞ւմ էք, ազատնե՛ր, թէ որչափ է Սմայատ թագաւորն ա-  
տում՝՝՝՝ ինձ ու իմ եղբայր Գազիկին: Դուք գիտէք, որ եթէ ես [կուուի] չէլ-

\* Միայն այստեղ եւ յաջորդ պարագրաֆի առաջին տողում գրուած է Սմբատ  
ձեռով (փխն. Սմպատ կամ Սրմպատ-ի):  
\*\* Այստեղ ձեռագրում՝ Գորջէն, որ պարզ վրիպում է թւում՝ պարագրաֆ 123-  
ում առկայ Գոգչէն-ի փոխարէն (տե՛ս նաեւ ծնթ. 236):  
\*\*\* Այստեղ ձեռագրում՝ զԿոզ, որ պարզ գրչական վրիպում է թւում. պարա-  
գրաֆ 123-ում սպորդել էր մէկ այլ վրիպակ՝ Կոչ (տե՛ս նաեւ ծնթ. 238):  
\*\*\*\* Բնագրում՝ անէ փխ ատէ (վերականգնումը՝ գեռեւս Մեսրոպ եպիսկոպոսի,  
տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 83, տողատակ 23):

նէի, [իր] որդին դեռ կապանքների մէջ կը լինէր Ափսազայ թագաւորի մօտ:  
Ահա բոլոր իշխաններին մեծարեց ու վերագործրեց իրենց երկիրը, բայց ինձ  
ամենեւին չմտաբերեց եւ իր ներսում ատում է»:  
Քաղաւածը [՝]՝՝՝, որ [մի]  
քաջ սղամարդ էր եւ բազում քաջ[ագործ]ութիւններ էր ցուցաբերել Վաս-  
պուրականի աշխարհում, նա եւս ասում է. «Ո՞վ իշխան Գորգէն, դրա վրայ  
ինչո՞ւ ես զարմանում: Ես տարիքս առած [բազում ժամանակաց] մարդ եմ  
[եւ] Հաւաստում [ասում] եմ քեզ, որ Սմայատը քեզ [լաւը] չի կամենում, մշտա-  
պէս չարն է խորհում Վասպուրականի երկրին [տանը]: Ինչո՞ւ չես յիշում այն,  
որ քո Հօրը՝ Գերէնին, սրախողխող անել տուեց Հերի գաշտում եւ անարժան  
Ապուրվանին Հրամայեց լինել Վասպուրականի իշխանը, իսկ [սա] Աշտին՝  
քո անդրանիկ եղբօրը, կապեց դաժան [չարաչար] կապանքերով, մինչեւ որ  
անխնայ [անգնայ] մաշը վրայ Հասաւ [նրան] Նկանի ամրոցում: Եւ երբ քո  
Հրանուշ մայրը՝ կանանց մէջ [ամենա]Համեստն ու իմաստունը, ելաւ գնաց  
Հայաստան [եւ] լայիս էր նրա առջեւ ու ասում, թէ՛ «Դու իմ եղբայրն ես, իսկ  
ես անտերի պէս [եմ] Վասպուրականի երկրում, եւ իմ որդիներն՝ սպանուած  
անարժան Մրվանի՝՝՝՝ ձեռքով», նա ծիծաղեց ու քո մայր Հրանուշին ասաց.  
«Մի՛ լար, թէկուզ [թող] մեռցնեն քո որդիներին, որովհետեւ լաւ է օձի ձա-  
գ[եր]ին սպանել, որպէսզի վիշապ չգառնան [չվիշապանան]»: Եւ [դու էլ] չես  
կարողանայ փրկուել [ապրել] նրա ձեռքից: Իսկ եթէ Մրվանը դաւաճանած  
[նենգած] չլինէր՝՝՝՝ նրան [ու] նրա գօրքերը տապալուած սփռուած չլինէին  
Խլաթի՝՝՝՝ երկրում՝՝՝՝ Մասիի գաշտում, որ դեռ մեռեցների ստորներն են  
վկայում, նա Ապուրվանին [էլ] սպանել չէր տալու: Եւ արդ՝ մի՛ Հաւատացէք  
Դուք Սմայատին, քանզի որքան նրա ձեռքը Հասնի՝ Չեր կարստեանը կը ձգ-  
տի [կը ջանայ]»:

\* Բնագիրն աւելի ճիշտ է ընկալւում, երբ Հրատարակչի առաջարկած կէտա-  
գրումը («...զմտաւ չէի: Եւ ասէ ընդ ինքն քաղվածն...»): տե՛ս Պատմութիւն  
Օսպիոյ Բագրատունոյ, էջ 83, տող 27-28) մի փոքր սրբագրում ենք, իսկ ա-  
ւէ-ի փոխարէն վերականգնում՝ ատէ, ինչպէս քիչ վերեւում էր («...զմտաւ  
չէի եւ ատէ ընդ ինքն»: Քաղվածն... եւ նայ ասէ...»):  
\*\* Այսպէ՛ս բնագրում՝ Ապուրվան-ի փոխարէն. նոյնը եւ՝ ստորեւ:  
\*\*\* Ձեռագրում՝ «որ էր նենգել», բայց դա վերականգնելի է՝ «ոչ [կամ՝ որ ոչ] էր  
նենգեալ»:  
\*\*\*\* Բնագրում այստեղ էլ՝ Ղլաթայ:

[132] Եւ ազատների բարբ Կնդերն սկսեցին ասել. «Վեր կա՛ց [արի՛], որ Կնանք, իշխա՛ն, նրանից ոչ մի բարի բան չսպասենք, եւ նա այնպիսի բան չի անի, որ դու ուրախանաս»: Բայց երբ իշխան Գորգէնը լսեց այս [ամենը], ելաւ ու Կնաց Սմգատ թագաւորի մօտ եւ ասում է. «Մնա՛ խաղաղութեամբ, թագաւո՛ր»: Իսկ Սմգատը ծիծաղելով ասում է. «Վասպուրականի թռ[վա]րիկ Հաւքի՛կ, մի՛ խռովիր: Քեզ եմ՝ տալու Մանգնաւանի՝<sup>247</sup> բերդը, կը տամ՝ նաեւ Գառնի՛ գաւառը»: Եւ երբ իշխան Գորգէնը լսեց այդ, բարկացաւ [չարացաւ] ու շրջուեց [ելաւ] Սմգատ թագաւորի երեսից եւ կամեցաւ շուտ դուրս ելնել:

[133] Եւ Սմգատին ասացին. «Գնաց Վասպուրականի իշխանը»: Իսկ Սմգատ թագաւորն ասում է. «Թող Կնայ ձագն օձ Գերէնի, որին ես սպանել ատեցի Ապուսմարի որդիների [ձեռքով]»: Եւ շկամեցաւ նրան յետ դարձնել ու բարի [ձեռով] ճանապարհ Կնել [ուղարկել]:

[134] Իսկ Գորգէնը Կնաց Հասաւ Վասպուրական աշխարհը՝ Շամիրայ [Շամիրամի]՝<sup>\*\*</sup> ոստանը, որ Վան է կոչւում: Եւ Հանդիպեց իր եղբայր Գափիկին ու պատմեց բոլոր պատերազմական գործ[ողութիւնն]երի մասին, նաեւ իր անարգանքի [նախատինքի], որ պատճառեց [արեց] Սմգատը:

Եւ երբ Գափիկը լսեց իր եղբոր խօսքերն, ասաց իր եղբորը. «Լուռ մնա՛. մեր պարսքն է՝ մեր Հայր Գերէնի արեան Հատուցումը [վճարն] աննել»: Բայց սրանից յետոյ Սմգատը սխալալաժ էր Գափիկի եւ Գորգէնի դէմ:

[135] Իսկ Աղոտի [Աղիովիտ]՝<sup>\*\*\*</sup> գաւառից, որ Բզնունեաց<sup>248</sup> ծովեզրին է, մի Պարսիկ մարդ կար Ամիւկի<sup>249</sup> բերդում (եւ նրանք տիրում էին Ամիւկի գաւառի սահմաններին մինչեւ Արեստի<sup>250</sup> գետը եւ Ամրեաքարը<sup>251</sup>). Ինքը եղբայրներ ուներ, իսկ նրանք Սմգատի մօտ էին ծառայութեան մէջ: Ու [այդ

\* Բնագրում՝ Գառնոյ: Հմմտ. պարագրաֆ 38-ում եւ ծնթ. 170:

\*\* Բնագրում՝ «յնտանն Շամիրայ», որ նշանակում է՝ «Շամիրամի քաղաքը» (տե՛ս վերելում, պարագրաֆ 28 եւ ծնթ. 145):

\*\*\* Բնագրում՝ Աշոտի (բողոքագիր ղ եւ շ նման տառերի շփոթութեամբ), որի փոխարէն, անշուշտ, վերականգնելի է՝ Աղ[ի]ո[վ]տի ամբողջականը:

պատճառով) Գափիկը [րաց] խօսելու Հնար [ճար] չունէր: Եւ նա [պարսիկը] [մի] քաջ մարդ էր Զանգեւան<sup>252</sup> տոհմից [տանից], իսկ նրա անունն էր Ապուսահր<sup>253</sup>: Եւ նա շրջակայքում րազմաթիւ ամրոցներ գրաւեց [...]

\* Այստեղ բնագիրն ընդհատուած է՝ ձեռագրի յաջորդ թերթի կամ, որ աւելի հաւանական է՝ թերթերի կորստի պատճառով: Թերթերի յետեւառաջութեան հետեւանքով՝ սա թ. 71բ-ն է, թէպէտ յաջորդող 14 թերթերը եւս պարունակում են մեր երկի նախորդող հատուածի բնագիրը (մինչեւ թ. 85բ): Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 77, տողատակ 5 եւ էջ 85, տող 11, 25:

## Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Մահմեդյան (Հայ պատմիչների մօտ նաեւ՝ Մահմատ, Մահմեդ) իսլամական կրօնի Հիմնադիր Մուհամմեդ մարգարէն է: Այստեղ ծաղրական դժերով է պատկերուած, բայց եղել է լաւ կազմակերպիչ, քաջ կռուող եւ խոշոր քարոզիչ: Մնուել է մօտ 570 թ. եւ մահացել 632-ին: [էջ 54]

<sup>2</sup> Բաբէլացիների (այստեղ ձեռագրում՝ Բաբիլացոց, ստորեւ հաւասարապէս՝ Բաբէլացոց եւ Բաբիլացոց) երկիր կամ աշխարհ անուան տակ պատմիչը նկատի ունի Միջագետքը եւ այնտեղ իրենց մայրաքաղաքները հաստատած Պարսկաստանի, ապա Արաբական տէրութիւնները, իսկ Յոյների երկիր (բնագրում՝ [Յ]ուսաց) անուան տակ՝ Հռոմէական կայսրութիւնը (իր օրերում՝ Բիւզանդիան): [էջ 54]

<sup>3</sup> Ըստ Ս. Գրքի՝ Թորգոմը եղել է Գամբրի որդին եւ Հայերի նախահայրը: Գամբրի որդիներն էին՝ Ասքանազը, Բիփաթը եւ Թորգոմը (ՄԱՆԳ, Ժ 3): Ուրեմն՝ «Թորգոմայ տուն» նշանակում է Հայաստան: [էջ 54]

<sup>4</sup> Տրդատ Գ Մեծ Արշակունին գահակալել սկսեց 287 կամ 298 թուականից: Այդ տարիներին քրիստոնէութիւնը բաւականաչափ տարածուած էր Հայաստանում եւ արդէն մուտք էր գործել նաեւ արքայի պալատը: Աւանդական թուագրմամբ՝ 301/302 թ. Տրդատը պատմական պահի թելադրանքով նոյնպէս մկրտուած է իրրեւ քրիստոնեայ, եւ քրիստոնէութիւնը Հայաստանում դառնում է պաշտօնական կրօն: Նրա առաջին քարոզիչն ու տարածողը Գրիգորն էր, որն իր մեծ առաքելութեան համար կոչուեց Լուսաւորիչ: Նորագոյն աղբիւրագիտական աշխատանքներում ցոյց է տրուում, որ Գրիգորի պաշտօնական ձեռնադրումը Կեսարիայում Ղեւոնդիոս արքեպիսկոպոսի կողմից տեղի է ունեցել 314 թ. աշնանը (Հ. Պ. ԱճԱՃԵԱՆ, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ - Ս. Ղազար, 1960, վերահրատ.՝ 1998), իսկ բուն Հայոց դարձը («Ելն Լուսաւորչի ի Վիրապէն»)՝ 311 թ. ամռանը (M.-L. Chaumont, *Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume*, Paris, 1969, էջ 159-161), այսինքն՝ Միլանի 313 թ. էքիկատով Հռոմէական կայսրութիւնում քրիստոնէութեան ընդունումից 2 տարի առաջ: Նոր կրօնին պետական ուժ ու հովանաւորութիւն տուած Տրդատ արքան վախճանուեց 330 թ.: Ըստ Խորենացու՝ նա այդ ժամանակ 90-ամեայ ծերունի էր եւ թագաւորել էր 56 տարի: [էջ 54]

<sup>5</sup> Տրդատ Մեծի որդի Խոսրով Բ Կոտակը թագաւորեց Հօր մահից յետոյ 9 տարի՝ 330-339 (Դ դարի Հայոց թագաւորների եւ կաթողիկոսների ճշգրտուած ժամանակագրութիւնը տե՛ս Հ. Պ. ԱճԱՃԵԱՆ, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 86-98): Խոսրովի անունն այսօր էլ ամենուրեք յիշատակոււմ է՝ շնորհիւ Դուին մայրաքաղաքի կառուցման եւ այն անտառների, որ նա իր անունով անկել տուեց Գառնիի ամրոցից մինչեւ Դուին եւ լցրեց որսի կենդանիներով: Այժմ այդ անտառները համարոււմ են ազգային արգելոց: [էջ 54]

<sup>6</sup> Խոսրով Կոտակի որդի Տիրան թագաւորը (339-350) Հռոմէասէր լինելու համար Սասանեանների կողմից զահագուրկ արուեց եւ կուրացուեց: [էջ 54]

<sup>7</sup> 350 թ. գահ բարձրացած Արշակ Բ Հայոց թագաւորը՝ կուրացուած Տիրանի որդին, բարեկամական քաղաքականութիւն էր վարում թէ՛ պարսիկների, թէ՛ Հռոմէացիների հետ: Նրա նպատակն էր Մեծ Հայքի պետական կառուցուածքի հզօրացումը, արքունական կենտրոնական իշխանութեան հեղինակութեան ապահովումը երկրի ողջ տարածքում, քաղաքական կառավարման մէջ այլ ուժերի յաւակնութիւնների կասեցումը: Նախարարների եւ հոգեւորականութեան յետադէմ հատուածը միասնական ճակատ կազմեց երկրի քաղաքական շահերն ամեն ինչից բարձր համարող թագաւորի դէմ: Նա 368 թ. հարկադրուած դնաց Պարսկաստան՝ իրեն յանձնելով Սասանեան արքայ Շապուհ Բ Երկարակեացի ներողամտութեանը: Սակայն վերջինս նրան բանտարկեց Անհուշ բերդում, որտեղ էլ 369 թ. Արշակն անձնասպան եղաւ: [էջ 54]

<sup>8</sup> Հայոց արքայ Պապը Արշակ Բ-ի եւ Փառանձեմ թագուհու որդին էր: Դեռեւս մանուկ՝ պատանդ տարուեց Հռոմ (364 թ.): Հօր բանտարկութիւնից յետոյ Հռոմէական զօրքով եկաւ Հայաստան, յաղթեց պարսիկներին ու նրանց դաշնակիցներին եւ 369 թ. նստեց Մեծ Հայքի թափուր գահին: Հետեւում էր Հօր քաղաքականութեանը՝ կամենալով բարեկամ լինել նաեւ պարսիկների հետ իրրեւ իր երկրի հարեւանների: Բայց 374 թ. Վաղէս կայսրը՝ խարդախ ու նենգ մի տիրակալ, դաւադրաբար սպանել տուեց նրան խնջոյքի պահին: [էջ 54]

<sup>9</sup> Ներսէս Ա (Մեծ) կաթողիկոսը Հայոց եկեղեցու գահն ստանձնեց 353 թ.: Նա գումարեց Աշտիշատի ժողովը (354 թ.), որը քննարկեց Հայ եկեղեցու բարենորոգման հարցերը: Ներսէսը Հիմնեց աղքատանոցներ, որբանոցներ, հիւրանոցներ, կուսանոցներ, վանքեր եւ բաց արեց դպրոց-



ներ յունարէն ու ասորերէն լեզուներով: Նա կամենում էր ուժեղացնել կրօնական իշխանութեան դերը Հասարակական կեանքում, սակայն Արշակ Բ թագաւորը հզօր դիմադրութիւն ցոյց տուեց դրան եւ անգամ հեռացրեց կաթողիկոսին իր աթոռից: Որոշակի դիմադրութեան արժանացաւ նա նաեւ Պապի ժամանակ: Վախճանուեց 373 թ.: [էջ 54]

<sup>10</sup> Այստեղ ակնարկուում է Հայ Արշակունիների Հարստութեան անկումը, որ տեղի ունեցաւ 428 թ.: 387 թ. Սասանեան Շապուհ Գ արքան եւ Թէոդոս Ա կայսրը համաձայնութեան եկան՝ Հայաստանը բաժանելու իրենց միջեւ: Կայսրութիւնը բաժին ստացաւ Բարձր Հայք, Ծոփք (Չորրորդ Հայք) նահանգները եւ Աղձնիքի մի մասը: Պարսկաստանին անցաւ Հայաստանի մեծ բաժինը (Այրարատ կենտրոնական նահանգով), որը երկրի տարածքի 4/5 մասն էր կազմում: Այնուհետեւ Հայաստանն ունեցաւ կիսանկախ թագաւորներ՝ Արշակ Գ-ն՝ կայսերական բաժնում, Խոսրով Գ-ն՝ պարսկական: Առաջինը կարճ ժամանակ անց մահացաւ, եւ Վէական մասում թագաւորութիւնը վերացաւ: Պարսկական մասում գահագուրկ արուած Խոսրովին յաջորդեց նրա եղբայր Վռամշապուհը, որ թագաւորեց շուրջ 25 տարի: Սրա մահուանից յետոյ Յազկերտ Ա արքան, որ «Մեղաւոր» տիտղոսն էր կրում, կրկին թագաւոր նշանակեց Խոսրովին, որը մահացաւ միայն մի քանի ամիս իշխելուց յետոյ: Այս անգամ Յազկերտը Հայաստանի թագաւոր նշանակեց իր աւագ որդի Շապուհին, որը տիրակալեց 5 տարի: Տիգրանում նրա սպանուելուց յետոյ Հայաստանում երկու տարի անիշխանութիւն տիրեց: 422 թ. թագաւոր հաստատուեց Վռամշապուհի որդի Արտաշէս Գ-ն, որին 6 տարի անց Պարսից Վռամ Ե Գոռ արքայից արքան գահընկէց արեց ու վերջնականապէս վերացրեց Հայոց Արշակունեաց թագաւորութիւնը: [էջ 54]

<sup>11</sup> Ըստ քրիստոնեական աւանդութեան՝ Նեոն այն հակաքրիստոսն է, որ գալու է՝ աշխարհին չարիքներ բերելու: Նրա ժամանակ մայրը մանուկին ուրանալու է: Իսկական Նեոն նա է, որը ուրանում է հօրը եւ որդուն, հէնց այդ է յատուկ Նեոնին (Ա Յովն. Բ 22): Աւանդաբար Նեոն բառը կապուում է քրիստոնեաների առաջին հալածիչ Ներոն կայսեր (54-68) անուան հետ, բայց նորերս ցոյց է արուած, որ այդ անունով է կոչուել փոքրասիական հնագոյն աստուածութիւններից մէկը: [էջ 54]

<sup>12</sup> Տաճկաց (տաճիկների)՝ իմա՝ «արաբների», թէեւ այդ անուան տակ Հայ հեղինակները նշում են նաեւ միւս մահմեդական ազգերին (Հմմտ. նաեւ R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 182, ծնթ. 9): [էջ 54]

<sup>13</sup> Մեսրոպ եպիսկոպոսի ուշադրաւ ամփոփմամբ (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ XVII)՝ արաբ խալիփաներից Պատմութեան մէջ «յիշատակուում են, սկսած Մահմեդից՝ ամս ԿԸ, Իրգատ Աբուպաքը՝ ամս Ժ, Ամր, Ապուալի, Մահմէտ, Սալքոյ, Հապիպ որդի Սալքայ, Ալի որդի Ապուսայլէպայ, որոնք յիշուում են երբեմն իբրեւ Բաղդասի, երբեմն իբրեւ Սամուրի, երբեմն իբրեւ Պարսկաստանի թագաւորներ»: [էջ 54]

<sup>14</sup> Մ. Դարբինեան-Մելիքեանը Ռուերան քաղաքը համադրում է Թեհրանի հետ (հին Ռագա-Ռէյից ոչ հեռու), որն իբրեւ գիւղ յիշուած է ԺԲ դ. (տե՛ս История Анонимного повествователя, էջ 206, ծնթ. 9): [էջ 55]

<sup>15</sup> Իրական Ֆատման (Ֆատիմա) Մուհամմեդի քոյրը չէր, այլ՝ դուստրը (Հմմտ. R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 183): [էջ 55]

<sup>16</sup> Այստեղ Ասորեստանաց երկրանունն ամենուրեք վերաբերում է Ասորիքին, ուստի յաջորդները միայն այդպէս ենք փոխադրում: [էջ 55]

<sup>17</sup> Խօսքը նեստորական վանական Սարգիս (Սերգիոս) Բհիրայի (Բահիրայ) մասին է, որին ուշ աւանդոյթը (Մովսէս Դասխուրանցի, Մխիթար Անեցի, Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի եւն) համարում է Մուհամմեդին առաջինը մարգարէ հռչակողը: Հմմտ. История Анонимного повествователя, էջ 206, ծնթ. 12: [էջ 55]

<sup>18</sup> Նեստորը Կոստանդնուպոլսի պատրիարքն է եղել: Նա այն կարծիքին էր, թէ Մարիամն Աստուածածինն չէ, քանի որ նրա ծնած որդին ոչ թէ Աստուած էր, այլ մարդ: Աստուած մարդուց չի ծնուում, նա Արարիչ է, եւ ո՛չ արարած, եւ Արարիչը չի կարող արարածից ծնուել. իսկ Քրիստոսը մարդ էր, բայց ունէր աստուածային բնաւորութիւն, նա ոչ թէ Աստուած-Քրիստոս էր, այլ մարդ-Քրիստոս. նրա մէջ անխառն կերպով կային երկու էութիւններ (բնութիւններ)՝ մէկը՝ մարդկային, միւսն՝ աստուածային: Նեստորի սխալը ցոյց է տուել Աղեքսանդրիայի Կիւրեղ արքեպիսկոպոսը, ըստ որի բանաձեւի՝ Քրիստոսի մէջ աստուածային եւ մարդկային էութիւններն անջատ չեն, այլ մէկ միասնութիւն են կազմում: 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովը լրջօրէն քննեց այդ խնդիրը եւ դատապարտեց Նեստորին ու մերժեց եկեղեցուց, սակայն նա հիմնադիրը եղաւ ազանդաւորական լուրջ ուղղութեան, որն ամենից մեծ տարածումը գտաւ Իրանում եւ Կենտրոնական Ասիայում: [էջ 55]

<sup>19</sup> Ձեռագրում՝ եղբորորդոյն իւրոյ: Բայց քանի որ ըստ բնագրի՝ Մահմէտը հարազատ եղբայր չունէր (այն էլ՝ այնքան տարիքով, որ դուստր

ուեննար), ապա պարզ է, որ առկայ է հեղինակի կամ գրչի վրիպումը, իսկ խօսքն իրականում մարգարէի հօրեղբորորդու մասին է: [էջ 56]

<sup>20</sup> Սկանտարիայ (Եգիպտոսում)՝ իմա՝ Սքանդարիա-Աղեքսանդրիա: [էջ 57]

<sup>21</sup> Աստուածաշնչեան աւանդութեամբ՝ Աբրահամը սերում է Նոյի որդի Սէմից եւ համարուում հրէաների ու արաբների նախնին: [էջ 57]

<sup>22</sup> Ըստ Աստուածաշնչի՝ Նոյ նահապետն իր տապանով բարձրացաւ Արարատ լեռան գագաթը եւ փրկուեց համաշխարհային ջրհեղեղից ու այդպէս դարձաւ մարդկութեան երկրորդ նահապետը: [էջ 57]

<sup>23</sup> Ըստ Աստուածաշնչի՝ մարդկութեան նախահայր Ադամին (անունը եբրայերէն «մարդ» է նշանակում) Աստուած ստեղծեց կաւից: [էջ 57]

<sup>24</sup> Քասրէ անուանածները (ձեռագրում միայն այստեղ՝ քասրէ) իրանական Խոսրով անուան՝ նաեւ արաբական հնչումն է: Սա Իրանի Սասանեան արքայ Խոսրով Բ Ապրուէզն է (590-628): Վերջինիս Շապուսպ մականունը (որը յիշեցնում է իրանական Ջամասպ անունը) այլուր վկայուած չէ: Մեսրոպ եպիսկոպոսի ուշագրաւ դիտարկմամբ (Պատմութիւն Շապուրի Բագրատունւոյ, էջ XVII)՝ Խոսրով անուան Քասրէ հին ձեւը հանդիպում է նաեւ «Քարթլիս ցխովրեբայի» ԺԲ դ. կատարուած հայերէն թարգմանութեան մէջ (տե՛ս Ջուանշեր, Համառօտ պատմութիւն Վրաց, Վենետիկ - Ս. Ղազար, 1884, էջ 95-96, հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Ա /Ե-ԺԲ դար/, Եր., 1934, էջ 162): [էջ 58]

<sup>25</sup> Պատմագիրներից ոմանք Մուհամմեդ մարգարէի քարոզչութեան սկիզբը եւ ելքը Մեքքայից դնում են Հայոց 65 թուականին, ոմանք՝ 62-ին, ուրիշները՝ 68-ին: Պատմական թուականն է 611/612-ը (այսինքն՝ Հայոց թուականութեան 60-ը) կամ 622-ը (Հայոց թուականութեան՝ 71-ը), մինչդեռ այստեղ 587 է ստացւում («եւ էր սկիզբն թվականին Հայոց ԼԶ»): Հմմտ. հրատարակչի ծանօթագրութիւնը. Պատմութիւն Շապուրի Բագրատունւոյ, էջ 2, սողատակ 8 եւ История Анонимного повествователя, էջ 207, ծնթ. 15: Գուցէ, պէտք է ենթադրել գրչական պարզ վրիպում՝ ԼԶ փխն. ԿԶ, կամ համարել, որ սա իրօք մի այլ՝ Մուհամմեդի պատանեկան շրջանի իրադարձութեան է վերաբերում: [էջ 58]

<sup>26</sup> Ըստ իրական պատմութեան՝ Բաղդադը կառուցուել եւ մայրաքաղաք է դարձել 762-766 թթ., 754-775 թթ. գահակալած Մանսուր խալի-

փայի կողմից (տե՛ս История Анонимного повествователя, էջ 207, ծնթ. 17), ուստի մեր երկի այս տեղեկութիւնը ուշ եւ զուտ աւանդավիպական ծագում ունի (հմմտ. Լ. Ն. Ալիմեան, Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը, էջ 216): [էջ 58]

<sup>27</sup> Վերջին բառերը ձեռագրում վնասուածքով են եւ հրատարակուել են՝ «ոչ էթող զպաշտօն[ն] մարգ[... ]թեան»: Եթէ ենթադրենք, որ վերջին բառը կարող էր լինել ոչ թէ «մարգ[արէութեան]», ինչպէս ընդունել է Մ. Դարբինեան-Մելիքեանը (տե՛ս История Анонимного повествователя, էջ 46-47), այլ, գուցէ՝ «մոգ[ութեան]», ապա պէտք է թարգմանել՝ «քանզի Ալին չէր հրաժարուում մոգութեան պաշտամունքից»: [էջ 58]

<sup>28</sup> Մ. Դարբինեան-Մելիքեանը նկատում է, որ «Հացունեաց խաչի պատմութեան» որոշ տարբերակներում Մահմէդի եւ Ալիի հակամարտութեան մասին այս հատուածը բացակայում է (տե՛ս История Анонимного повествователя, էջ 207, ծնթ. 15): Հնարաւոր է, որ մեր երկի այս տեղեկութիւնը վերյուշն է այն պատերազմի, որ տեղի ունեցաւ Ալի ուղղափառ խալիփայի (656-661) եւ նրան պարտութեան մատնած ու Օմայեան հարստութունը հիմնադրած Մուաւիայի (659/661-681) միջեւ: [էջ 58]

<sup>29</sup> Հոռոմոց (\*Հոռոմք-ի սեռական հոլովը) անուան տակ (բնագրում՝ «Պատմութիւն յաղագս Մուրիկայ թագաւորին Հոռոմոց») պատմիչը նկատի ունի (ինչպէս եւ Յունաց աշխարհ անուան դէպքում) Բիւզանդիան, որն իրենք՝ յոյները շարունակում էին կոչել «Հոռոմէական կայսրութիւն»: Պահպանում ենք նոյնութեամբ՝ շփոթութեան տեղիք չտալու համար «Հոռոմէացիք» («Հոռոմայեցիք») եզրոյթի հետ, որը պատմիչն օգտագործում է առանձին: [էջ 59]

<sup>30</sup> Բնագրում այստեղ եւ ստորեւ՝ Մորիկ: Բիւզանդական կայսր Մաւրիկիոսը մեր պատմութեան մէջ յայտնի է Մօրիկ կամ Մուրիկ անունով: Նա հասարակ ծագում ունեցող յունախօս հոռոմէացի էր Կապադովկիա նահանգի (Գամիրքի) Արաբիսոս քաղաքից (ներկայումս՝ Յարփուզ): 580 թ. նրա հրամանատարութեամբ բիւզանդական զօրքը Միջագետքում ջարդեց Պարսից բանակին եւ գրաւեց ողջ Միջագետքը: Յաղթանակով Կոստանդնուպոլիս մուտք գործած Մօրիկին մեծ շուքով դիմաւորեցին, իսկ Տիբերիոս կայսրը նրան կնութեան տուեց իր դուստրը: Կարճ ժամանակ անց Տիբերիոսը վախճանուեց, եւ կայսր դարձաւ Մօրիկը: Նա բիւզանդական կայսրերի մէջ ամենահայատեացն էր (Սերէոսի վկայու-

թեամբ՝ նա կամենում էր ամբողջ Հայ ազգը երկրից գաղթեցնել): Չնայած դրան՝ մեր պատմագրութեան մէջ կայ աւանդութիւն, որ իբր նա ծագումով Հայ է եղել: Այդ վարկածը բերուած է ներկայ երկում, Կիրակոս Գանձակեցու մօտ (որը գիտէր նաեւ կապաղովկիական ծագման տարբերակի մասին) եւ Ջաքարիա Սարկաւազի «Պատմագրութեան» մէջ: Կան նաեւ օտար աղբիւրներ, որ Մօրիկին ծագումով Հայ են համարում: Այդ առասպելն ստեղծուել է կայսեր մահից յետոյ: Նա սպանուեց 602 թ., իսկ ներկայ գիրքը գրուել է Ժ դարից ոչ վաղ (Գանձակեցին էլ ԺԳ դ. հեղինակ է): Այդ վարկածը, հաւանօրէն, բանաւոր պատումներից է գրաւոր կերպարանք ստացել:

Կիրակոս Գանձակեցու շարադրած աւանդագրոյցը բերում ենք թարգմանաբար (տե՛ս Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 46-47).

«Սրա [Մօրիկի] մասին, ասում են, թէ Հայաստանի Օշական գիւղից էր, իսկ ուրիշները [գտնում են], թէ Տարօնից էր: Աղքատութեան պատճառով գնաց Կոստանդնուպոլիս, եւ այնտեղ դիպուածով բախտը բերեց ու թագաւոր դարձաւ հետեւեալ հանգամանքներում:

Երբ Տիրերիոս կայսրը մեռաւ, մեծամեծերը միմեանց դէմ գրգռուեցին ու իրար չէին հնազանդուում: Նրանց միջեւ անասելի կռիւ տեղի ունեցաւ, որպէսզի ով յաղթի՝ նա թագաւորի: Իսկ պատրիարքը մէջտեղ ընկնելով համոզեց նրանց վիճակ դրել, ում ընկնի վիճակը՝ նա էլ ստանձնի թագաւորութիւնը, իսկ միւսները ենթարկուեն նրան: Եւ այս [հաստատեցին] երզումով ու ամենքի գրութիւններով: Վիճակն այսպիսին էր. լուսանալիս պէտք է բանային քաղաքի աւագ դարբասը եւ այն մարդուն, ով այնտեղ կը պատահէր, որքան էլ նա խիստ ստորիններից լինէր, բերէին արքայական պալատ, իսկ իշխանները նստելու էին միատեղ, եւ ում գլխին նա թագը դնէր, նա էլ պէտք է ստանձնէր թագաւորութիւնը: Բոլորը համաձայնուեցին եւ խռովութիւնից յետ կանգնեցին:

Եւ երբ եկաւ նշանակուած ժամը, բացեցին քաղաքի դարբասը, տեսան Մօրիկին դռան մօտ կանգնած, շալակը ինչ-որ ցողուն՝ վաճառելու եւ իր կարիքները հոգալու համար: Զօրականները յափշտակեցին նրան, տարան բաղնիք, լողացրին, հագցրին թանկագին հագուստներ եւ տարան պալատ:

Եւ երբ ասացին այն մասին, ինչի համար նա կանչուել էր, նա նրանցից պահանջեց գրութիւններն ու երզումները, որպէսզի թագից զուրկ մնացածներն իրեն չսպանեն: Իսկ նրանք սաստիկ երզուեցին նրան, որ անհոգ մնայ:

Բոլորը փուչ յոյսով բազմել էին, եւ ամեն ոք ինքն իրեն մտածում էր, թէ ինքը կը լինի: Գահը կանգնած էր, թագը՝ նրա վրայ [դրուած], եւ կօշիկներն էլ՝ կիպ նրա մօտ: Մօրիկն անցաւ մէջտեղը, ձեռքն առաւ թագը եւ սկսեց շրջել բազմածների մէջ: Երբ մօտեցաւ առաջինին, սա ուրախացաւ, բայց երկրորդը տխրեց, երբ թողեց նրան, դարձեալ տրտմութիւնը պատեց սրան, իսկ նրա ընկերն ուրախացաւ: Եւ այսպէս երբ կարգով երկու-երեք անգամ շրջեց, նրանց տխրեցրեց եւ ուրախացրեց: Անցաւ նա, նստեց գահին եւ թագը դրեց իր գլխին: Տեսնելով դա՛ ամենքն ապշեցին, բայց որովհետեւ նրան երզուել էին, թէ դու ում գլխին դնես, մենք նրան կը հնազանդուենք, թոյլ տուեցին: Պատրիարքը մօտեցաւ, կօշիկները հագցրեց նրա ոտքերը եւ երկրպագեց, նոյն կերպ բոլոր մեծամեծերը երկրպագեցին նրան եւ ասացին. «Կեցցէ՛ Մօրիկ արքան»...

Սրա մասին ասում են, թէ [մարդ] ուղարկեց իր հօր մօտ, որ [նա] թողնի պանդխտութիւնը եւ գայ վայելի նրա փառքը, իսկ եթէ ոչ՝ խրատ ուղարկի իրեն, որով կարողանայ թագաւորութիւնը կառավարել: Սպասուորները գնացին գտան նրան, երբ բանջարանոցն էր մշակում յայտնեցին նրան արքունական հրամանը: Նա պատասխանեց ու ասաց. «Ես վայել չեմ՝ թագաւորի հայր լինելու»: Եւ ինքն սկսեց այնտեղ բանջարանոցում եղած մեծ-մեծ կաղամբներն արմատախիլ անել, գլուխները կտրել ու հողով ծածկել, իսկ փոքրերը փայփայել ու խնամել: Մարդիկ տեսնելով դա՛ նրան ցնորուած համարեցին եւ թողեցին հեռացան: Իսկ թէ ինչ արեց նա, չհասկացան: Գալով թագաւորի մօտ՝ նրանք պատմեցին ամեն բան եւ այն յիմարութիւնը, որ հայրն արեց բանջարանոցում:

Իսկ Մօրիկը երբ լսեց, ծիծաղեց, բայց ոչինչ չյայտնեց: Եւ բռնելով մեծամեծերին, որոնց իր թագաւորութեան թշնամի կարծեց, բոլորին վերացրեց, որպէսզի իր թագաւորութեան դէմ դաւադիր չլինեն. իսկ փոքրերին նշանակեց նրանց փոխարէն»: Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Եր., 1982, էջ 47-49:

Բերում ենք նաեւ Ջաքարիա Սարկաւազի պատմածը (Պատմագրութիւն, հտ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 15): Յոյների Մօրիկ թագաւորն ազգով Հայ էր, Այրարատ գաւառից, Օշական գիւղից: Բախտը բերեց, թագաւորեց Կոստանդնուպոլսում քառասուներկու տարի: Սա իր հայրենի Հայաստան երկիրն ուղարկեց ազգով Հայ Մաղաս անունով մի մարդու, որպէսզի Հայաստանում իր անունով մի քաղաք շինի: Նա գնում Շիրակ գաւառում մի տեղ է գտնում Անիին մօտիկ, նրա հարաւային

կողմում՝ Ախուրեան գետի վրայ երկու լեռների միջև մի տափարակ տեղում, ուր երեք կողմից բարձր քարափներ են, իսկ արեւմտեան կողմը փոքր-ինչ հարթ, բայց զառիվայր, տեղին հաւանելով՝ պարսպեց եւ դուռ կախելով անուանեց Մաղասաբերդ (նաեւ՝ Մաղասայ բերդ): [էջ 59]

<sup>31</sup> Քասրէ անուան համար տե՛ս վերելում, ծնթ. 24: Այս դէպքում եւս պատմիչը նկատի ունի Սասանեան արքայ Խոսրով Բ Ապրուէզին: Նախադասութեան տեղեկութիւնն ամբողջապէս ժողովրդական աւանդավիպական է. Մաւրիկիոս կայսրն իրականում ամուսնացած էր Կոնստանտինայի հետ, որն իր նախորդի՝ Տիբերիոս Բ-ի դուստրն էր (հմմտ. История Анонимного повествователя, էջ 207, ծնթ. 19): [էջ 59]

<sup>32</sup> Այստեղից, ինչպէս նշում է հրատարակիչ Մ. Տէր-Մովսիսեանը, «ընդօրինակւած է Երզնկացու Ոսկեփորիկ ժողովածուներում եւ ճառընտիրներում: Ծառընտրից արտատպւած է Արարատ, 1888, էջ 399-401. «Պատմութիւն սուրբ խաջին որ Հացունեացն կոջի» (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 4, տողատակ 13): [էջ 60]

<sup>33</sup> «Լազ[ի]կաց» (այսինքն՝ Լազիկա-Կողքիս-Եգերք երկրի) վերականգնումը մերն է: Վերջին բառերը թարգմանել ենք ըստ «Ոսկեփորիկ» ժողովածոների բնագրի («Վրաց եւ զաշխարհն Լազ[ի]կաց, որ են Ափխազք»): Մեր ձեռագրում առկայ է միայն «եւ Ափխազաց», իսկ ծառընտիրների բնագիրն է (ըստ «Արարատ» ամսագրի հրատարակութեան). «Եգիպտոսի եւ Միջագետաց, Ասորոց եւ Հայոց, Վրաց եւ Ափխազաց» (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 4, տողատակ 19): Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի 1224 թ. հնագոյն ծառընտիրում այստեղ առկայ է. «եւ զԱղուանս եւ զաշխարհս Լակիզացոց, որ են Ափխազք», իսկ նոյն գրադարանի թիւ ԻԳ «Ոսկեփորիկում»՝ «զաշխարհն Լակիզացոց» է (տե՛ս Հ. Ղ. Տ[այեան], Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ եւ Ս. Ղազարու գրչագիրները, - «Բազմավէպ», 1922, էջ 69): [էջ 60]

<sup>34</sup> Ափխազքն այստեղ եւ հայ այլ պատմիչների մօտ Արեւմտեան Վրաստանն է (կոչուած նաեւ՝ Կողքիս, Լազիկա, Եգերք), որ ընդգրկում էր ոչ միայն մեզրէյներին, այլեւ բուն աբխազներին հիւսիս-արեւմուտքում եւ լազերին (կամ՝ ճաներ) հարաւ-արեւմուտքում: [էջ 60]

<sup>35</sup> «Արարատ»-ում հրատարակուած ճառընտիրների՝ մնացեալում մեր ձեռագրի հետ նոյնական բնագրում այս տեղում առկայ է Անի

բերդանունը. «չինեաց եւ զամուրն Անի առ ափն Ախուրեան գետոյ» (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 4, տողատակ 22): Նշելի է, որ Մօրիկ կայսրն իշխել է Ձ դ. վերջում եւ է դ. սկզբում, իսկ Անի ամրոցը գոյութիւն ունէր ոչ ուշ, քան Ե դարից, քանի որ յիշատակուած է Փարպեցու եւ Եղիշէի երկերում: Մախազը Հայաստանի բիւզանդական մասում իշխել է ընդամենը մէկ տարի (593-594), ուստի չէր կարող լինել ամրոցի կառուցողը: 961 թ. Անին դարձել է Բագրատունեաց Հայաստանի մայրաքաղաքը, իսկ 1045-ից մինչեւ ԺԴ դարը մնացել է երկրի տնտեսական ու մշակութային խոշոր կենտրոնը: Շէն ժամանակ ունեցել է մինչեւ 100 հազար բնակիչ, իսկ այժմ անմարդաբնակ աւերակ է: [էջ 60]

<sup>36</sup> Մախազի բերդը, որ կոչուում է նաեւ Մախասբերդ, Մաղասաբերդ, գտնւում է Ախուրեանի արեւմտեան ափին, Անի մայրաքաղաքից 3-4 կմ հեռու: Ըստ Ղ. Ալիշանի (Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ - Ս. Ղազար, 1881, էջ 124)՝ եղել է հաստակառոյց մի բերդ անդնդախոր ձորալանջի գլխին: Այժմ աւերակ է ու ամայի: Այս բերդը մանրամասն նկարագրել է նաեւ Զաքարիա Սարկաւազ Քանաքեռցին: Տե՛ս ծնթ. 30-ի վերջը: [էջ 60]

<sup>37</sup> Առաքել Դաւրիժեցին այս նոյն արտայայտութիւնն է բերում, երբ գառնեցիները Շահ Աբբասի հրոսակներին քարով, փայտով, սրով, բրով քշում են գիւղից ու անհոգ դառնում. «Եւ ինքեանք անդէն կացին անհոգ իբր ի ժամանակս Մօրիկայ եւ ոչ փախեան յայլ ուրեք» (Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Եր., 1990, էջ 83, հմմտ. էջ 507, ծնթ. 4, հմմտ. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ, Վաղարշապատ, 1896, գլ. Դ, էջ 47): Տե՛ս նաեւ Զաքարեայ Սարկաւազի, Պատմագրութիւն, հտ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 15: [էջ 60]

<sup>38</sup> «Ամս ԻԶ»: Սակայն Մօրիկ կայսրն իշխել է ոչ թէ 26 տարի, այլ 20 (582-602): [էջ 60]

<sup>39</sup> «Ոսկեփորիկ»-ում «որ հանդէպ Մառայ», ճառընտիրներում՝ (ըստ «Արարատ»-ի հրատարակութեան)՝ «որ հանդէպ է Կամառայ» (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 5, տողատակ 9): Ըստ Շապուհի առուներէն թարգմանչի ծանօթագրութեան՝ Կարամ տեղանունն աղաւաղուած է եւ առաջացել է «Կամարայ»-ից, որն էլ իր հերթին՝ «հանդէպ կայ Մառայ»-ից: Մեր Մատենադարանի այլ ձեռագրեր տալիս են Կամար, Մառայ, Մերայ, Մառալ ընթերցումները: Իսկ Մարա-ն բիւզանդա-

կան Հնագոյն վանք է, որ յիշատակուած է 536 թուականից: Տե՛ս *История Анонимного повествователя*, էջ 210, ծնթ. 27 (վերջինի համար յղելով R. Janin, *Constantinople byzantine, Développement urbain et répertoire topographique*, Paris, 1950, էջ 356-357): [էջ 60]

<sup>40</sup> Մօրիկի դէմ ապստամբութիւնը կազմակերպել էր Փոկաս զօրակաւը, որը 602 թ. տապալելով նրան՝ դարձաւ կայսր: 610 թ. վերջինիս տապալեց եւ կայսր դարձաւ Հերակլէսը (Հերակլը): [էջ 61]

<sup>41</sup> Իրականում Փոկասը Կոնստանտինա կայսրուհուն սպանել էր նրա ամուսնուց անմիջապէս յետոյ՝ 602 թ.: Ըստ Ֆիրդուսու «Շահնամէ»-ի՝ Խոսրով Ապրուէզն էր ամուսնացած Մօրիկի դուստր Մարիայի հետ (տե՛ս R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 186, ծնթ. 24) [էջ 61]

<sup>42</sup> Փրանկ բառը (մեր ձեռագրում այստեղ՝ Ֆրանկ, որը տալիս ենք սկզբնատառի վերականգնումով) նշանակում է «լատիններ» կամ «արեւմտեան եւրոպացիներ եւ, անկասկած, հետագայ ներմուծում է՝ կիլիկեան շրջանից ու խաչակրաց արշաւանքներից ոչ վաղ: Այն բացակայում է Ճառնտիրների եւ Ոսկեփորիկների աւելի ամբողջական՝ «Պատմութիւն սուրբ խաչին, որ Հացունեացն կոչի» բնագրում (առաջիններից «Արարատ»-ում 1888 թ. հրատարակուած տարբերակում առկայ է. «միաբանեաց զգաւրս աշխարհին Յունաց եւ Հայոց եւ Ափխազաց». էջ 399-401): Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 6, տողատակ 8: Բայց արդեօ՞ք հեղինակային բնագրում դրա փոխարէն չի եղել վրանգ (իմա՝ «վարեագ») բառը, որպիսի շփոթութիւն ունենք ուրիշ դէպքերում (տե՛ս Կ. Իզբաշեան, Արիստակէս Լաստիվերտցու «Պատմութեան» մէկ տարբերութեցուածքի մասին՝ վրանգք եւ ոչ փռանգք, - «Բանբեր Մատենագարանի», թիւ 4, 1958, էջ 77-82): [էջ 62]

<sup>43</sup> Բնագրում այստեղ եւ յետոյ (պարագրաֆ 25-ում)՝ Թէոդոյպաղիս: Թէոդոսիոսը (Արեւմտեան Եփրատի ափունքների մօտ, Կարնոյ դաշտում) հայկական Կարինն է (Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի կենտրոնը), ինչպէս նշում է նաեւ պատմիչը: Հետագայում կոչուել է Կալիկալա (<Կալոնոյ քաղաք) եւ Էրզրում (<\*Արգն-ոում): Ե գ. սկզբում Բիւզանդիայի Թէոդոսիոս Բ կայսրը վերաշինեց եւ կոչեց իր անունով: Ներկայումս Էրզրումը Թուրքիայի համանուն վիլայէթի կենտրոնն է: [էջ 62]

<sup>44</sup> Բնագրում՝ «ի քաղաքն Գանձակ եւ ի Շահաստանն», որից բուն աղբիւրում կարելի է ենթադրել «Գանձակ-ի Շահաստան»՝ իրանական

լեզուներին բնորոշ իդաֆետային ձեւը: Մեսրոպ Եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Այս Գանձակն է «Գանձակ Ատրպատականի», որ յաճախ յիշատակում է Փ. Բուզանդը («սահմանապահք թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի») էջ 141, տե՛ս նաեւ էջ 191, 202, 205, 241 եւն, ըստ Նոլդեկէի (Tabari, թ. 100) գտնուած էր Ուրմիա լճի հարաւ-արեւելքում, Մարաղայի եւ Ջենջանի միջում Թախթ-ի Սուլէյմանի աւերակների տեղում, որ Սասանեանների օրով կարեւոր կրօնական կենտրոն էր (Հմմտ. Н. Адонье, *Армения в эпоху Юстиниана*, СПб., 1908, էջ 226)»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 7, տողատակ 4(ա): Անտիկ հեղինակները քաղաքը կոչել են Գազակա: Եղել է Ատրպատականի մայրաքաղաքը (շահաստան = «թագաւորանիստ»): 622 թ. բիւզանդացիներն աւերեցին այն, բայց յետոյ արաբները վերաշինեցին: Վերջնականապէս աւերուեց մոնղոլական արշաւանքների ժամանակ (այժմ նրա տեղում գտնուած է Լեյլան գիւղը): Մեր պատմիչը, շատ ուրիշների նման, սխալմամբ նոյնացնում է Թաւրիզ-Դաւրէժ քաղաքի հետ (ձեռագրում՝ Թաւրէժ): Մեսրոպ Եպիսկոպոսը եւ Մ. Դարբինեան-Մելիքեանը նկատել են, որ այլ ձեռագրեր այս տեղն այլ կերպ են տալիս. «ի քաղաքին Գանձակ Շահաստան, ուր ոսկի քարն գործի» (փխն. «որ Ոսկէ քաղաքն կոչեն»), իսկ ըստ աղագ. ն. Մառի (*Ангиохос Стратигос, Пленение Иерусалима Персами во 614 г.*, СПб., 1909)՝ քարն պէտք է լինի կարն, այսինքն՝ «կար», «ասեղնագործութիւն». Թաւրիզը, որ նոյնացնում է Գանձակի հետ, յայտնի էր իր ոսկէթել ասեղնագործութեամբ: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 7, տողատակ 4(բ); *История Анонимного повествователя*, էջ 212, ծնթ. 34: [էջ 62]

<sup>45</sup> Այստեղ Ճառնտիրներում (ըստ «Արարատ»-ում հրատարակուած բնագրի) եւ Ոսկեփորիկում առկայ է յաւելում-լրացում. «եւ ստուգաբանի՝ Դա է վրէժ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 7, տողատակ 4(գ): [էջ 62]

<sup>46</sup> Այստեղ Ճառնտիրներում (ըստ «Արարատ»-ի) առկայ է յաւելում-լրացում. «եւ գինի անուշահամս» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 8, տողատակ 16: [էջ 63]

<sup>47</sup> Այս Խորիանը Խոսրով Ապրուէզի արքայի Խոռեան կամ Շահրվարզ զօրավարն է, որը 629 թ. սպանեց Արտաշիր Բ արքայից արքային եւ մի քանի ամսով տիրացաւ Պարսից գահին: Ըստ երեւոյթին՝ անուա-

նաճեւում առկայ է Ռ-Ր սխալագրութիւնը, որը սովորական է մեր հեղինակի կամ գրչի համար: [էջ 64]

<sup>48</sup> Այստեղ ձառընտիրներում (ըստ «Արարատ»-ում հրատարակուած բնագրի) առկայ է լրացում. «եհաս յերկիրն Նախճրւանայ»: Իսկ Ոսկեփորիկում վերջին մասն այլ կերպ է. «եւ գնացեալ եհաս ի յԱրտագ գաւառ»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 9, տողատակ 18(աբ): Մեծ Հայքի Վասպուրական նահանգի սահմանները կազմում էին՝ հիւսիսից Այրարատը, արեւմուտքից՝ Տուրուբերանը եւ Վանայ լիճը, հարաւից՝ Կործայքը, արեւելքից՝ Պարսկահայքը: Վասպուրականը 908 թուականից մինչեւ 1021 թ. անկախ թագաւորութիւն էր եւ ունէր մօտ մէկ միլիոն բնակչութիւն: Գլխաւոր քաղաքն էր Վանը: [էջ 64]

<sup>49</sup> Սիւնիք-Սիսականը Մեծ Հայքի խոշոր նահանգներից մէկն էր. արեւմուտքում սահմանագծում էր Այրարատ, հիւսիսում՝ Ուտիք, հարաւում՝ Վասպուրական եւ արեւելքում՝ Արցախ նահանգներով (հարաւում սահմանակից էր նաեւ Ատրպատական երկրին): Ունէր 12 գաւառ՝ Արեււիք (Մեղրի), Կոմսական (Ծաւ եւ Ողջի գետերի աւազանները), Զորք (Բաղաբերդ), Բաղք (Կապան), Ծղուկք կամ Սիւնիք (Սիսիան), Հաբանդ (Զագեճոր, որի մէջ էին Հալիճորը, Ծինուհայրը, Խոտը եւ այլն), Երնջակ (Գողթնից հիւսիս), Ծահուկ (Նախճաւանից հիւսիս), Աղահեջք (Քաշաթաղ), Վայոց ձոր (Արփայի վերին եւ միջին հովիտներում), Գեղարքունիք (Սեւանայ լճի աւազանի մեծ մասը), Սոթք (Վարդենիսի շրջան, ըստ Սեղբակ Բարխուդարեանի՝ նաեւ Տրտու գետի վերին հովիտը): [էջ 64]

<sup>50</sup> Խաչափայտը պարսիկները գերել էին 614 թ. Երուսաղէմի գրաւման ժամանակ: Այն վերադարձուեց (ազատագրուեց) ինքնակոչ արքայից արքայ Շահրվարզի կողմից 629 թ. Սեպտեմբերի 13-ին կամ 14-ին, որը եկեղեցիները նշում են որպէս Սուրբ Խաչի տօն: [էջ 65]

<sup>51</sup> Հայոց Սահմի (3-րդ) ամիսը 628-630 թթ. ընկնում էր Օգոստոսի 21-ից Սեպտեմբերի 19-ը, ուրեմն՝ նրա 10-րդ օրը՝ Օգոստոսի 30-ին էր: Ի տարբերութիւն Ոսկեփորիկում առկայ այս՝ «Սահմի ամսոյ Ժ» աւարտի՝ ձառընտիրներում ամսաթիւը տրուած է (ըստ «Արարատ»-ում հրատարակուածի) միայն՝ «Յունիս ամսոյ Ի» ձեւով (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 10, տողատակ 18): Դա կարելի էր նաեւ պարզ սխալ համարել, սակայն ուշագրաւ է թւում, որ Սահմի ամսի 10-ը Յունիսի 20-ին համապատասխանում է 912-915 թթ. քառամեակում (Սահմիի առաջին օրը՝ Յունիսի 11-ին. տե՛ս Հ. Ս. Բաղդաւաճ, Օրացոյցի պատմութիւն,

եր., 1970, էջ 344-345): Հասկանալի է, որ տուեալ բնագրի մայր տարբերակը գրուել է հէնց այդ քառամեակում եւ հեղինակն իրեն վերապահել է սկզբնաղբերի՝ Սահմիի 10-ի մօտ նշել ոչ թէ է դարի, այլ իր օրերի Յունեան համապատասխան ամսաթիւը (այդպիսի բան միջնադարեան մատենագիրների մօտ յաճախ է պատահում), ընդ որում հետագայում Ոսկեփորիկի կազմողը թողել է երկու ամսաթուերից միայն առաջինը, իսկ մայր ձառընտրի կազմողը՝ միայն երկրորդը: Այսքանի հիման վրայ արդեօ՞ք հնարաւոր է ենթադրել, որ մայր տարբերակի հեղինակն իրօք եղել է Շապուհ Բագրատունին, եւ նա իր երկը շարադրել է 912-915 թթ. միջակայքում: [էջ 65]

<sup>52</sup> Զարեանդը (նաեւ՝ Զարաւանդ, Զարուանդ) Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի ծայրագոյն հիւսիսում գտնուող գաւառներից մէկն էր, Արաքսի աջ (հարաւային) վտակ Կարմիր գետի (Կոտուր) ստորին հովտում: Հարաւից սահմանակցում էր Հեր գաւառին, իսկ արեւելքից՝ Ատրպատական աշխարհին: [էջ 66]

<sup>53</sup> Այստեղ ձառընտիրներում (ըստ «Արարատ»-ում հրատարակուած բնագրի) առկայ է յաւելում-լրացում. «զի էր թուական Հայոց ՅԲ [=853 թ.]» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 9, տողատակ 2): Այս թուականն ինչ-որ լուրջ թիւրիմացութեան արդիւնք է եւ որեւէ աղերս չունի իրական ժամանակի հետ (629 թ.): [էջ 66]

<sup>54</sup> Ծաւարշաւ կամ Ծաւարշակաւ գաւառ՝ Վասպուրականի Արտագ գաւառի հին անունն է, որ յիշատակում է Խորենացին (Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 157, 182): Գաւառը համապատասխանում է ներկայիս Մակուի շրջանին. Ամատունիների սեփականութիւնն էր: Այդտեղ էր հռչակաւոր Աւարայրի դաշտը, ուր 451 թ. տեղի ունեցաւ Պարսից դէմ Վարդանանց պատերազմի գլխաւոր ճակատամարտը: Բայց Ծարմաւազոյ կամ ՄՄ թիւ 1775 ձեռագրում դրա փոխարէն առկայ Գերատալ դաշտանուններն Արտագ գաւառում այլուստ յայտնի չեն: [էջ 66]

<sup>55</sup> Յովհան Մայրագոմեցին կամ Մայրավանեցին է դարի նշանաւոր եկեղեցական գործիչ էր եւ մատենագիր: Նա Հայոց եկեղեցու հաւատամքի անաղարտութեան պահպանման համար պայքարել է Եզր կաթողիկոսի դեմ եւ հալածուել նրա կողմից: [էջ 68]

<sup>56</sup> Ըստ է դարի «Աշխարհացոյց»-ի՝ Հացիւնը Արտագ գաւառի գիւղերից է (ներկայումս՝ Հայսուն): «Արարատ»-ում հրատարակուած ձառընտիրների բնագիրն այստեղ ունի՝ «ընդ դաշտն Հացունաց», սակայն,

ինչպէս նկատում է Մեսրոպ եպիսկոպոսը, «Թ. Արծրունի էջ 88 եւ նրանից Վարդան էջ 59 ունին «Հացուհի»։ Նաեւ Յ. կաթուղիկոս, էջ 68» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 13, տողատակ 21): [էջ 69]

<sup>57</sup> Հմմտ. Յովն. Դ 38 («Ես առաքեցի զքեզ Հնձել, զոր ո՛չ դուք վաստակեցէք, այլ վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէ՛ք»): [էջ 69]

<sup>58</sup> Ճառընտիրներից «Արարատ»-ում հրատարակուած բնագիրն այստեղ ունի յաւելում-լրացում. «լերինն Հացուհեաց»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 14, տողատակ 8 (վրիպակով՝ 7): [էջ 69]

<sup>59</sup> Ճառընտիրների բնագիրն այստեղ էլ յաւելում-լրացում ունի. «ի լերինն Հացուհեաց»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 14, տողատակ 9 (վրիպակով՝ 8): [էջ 69]

<sup>60</sup> Արտագ գաւառի այս բերդանունը Ղ. Ալիշանը բերում է «Ռունդն» ձևով եւ բացատրում նրա իմաստը՝ «սահմաններ» (Հայաստանում, հտ. Ա, Վենետիկ - Ս. Ղազար, 1901, էջ 29): Ճառընտիրներից «Արարատ»-ում հրատարակուած բնագիրն այստեղ ունի՝ «գնեաց գաւառն Հացուհեաց եւ զՌունդն արանին»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 14, տողատակ 11 (վրիպակով՝ 10): [էջ 69]

<sup>61</sup> Այստեղ Ոսկեփորիկն ունի յաւելում-լրացում. «ի գաւառն Սիւնեաց»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 14, տողատակ 13 (վրիպակով՝ 12): Դրանից յետոյ այդ ժողովածոյի բնագրում գլխագիր է դրուած՝ «Պատմութիւն սուրբ խաչափայտին Քրիստոսի, թէ որպէս տարաւ Հերակլ արքայ ի Թաւրիոյ ի Կոստանդնուպալիս» (տե՛ս յաջորդ տողատակը): [էջ 69]

<sup>62</sup> Ոսկեփորիկն այստեղ էլ ունի յաւելում-լրացում. «յետ տալոյ զսուրբ մասն կենսատու խաչին Բիւրեղ տիկնոջն»: Տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 14, տողատակ 14 (վրիպակով՝ 13): [էջ 70]

<sup>63</sup> Գողգոթան Երուսաղէմի մօտ գտնուող այն սարն է, որի վրայ հրէաները խաչ հանեցին Յիսուսին: Ի դէպ, այլ աղբիւրների համաձայն (օր.՝ Սեբէոսի)՝ Հերակլ կայսրն ինքն է խաչը տարել Երուսաղէմ: [էջ 70]

<sup>64</sup> Մեսրոպ եպիսկոպոսն իրաւացիօրէն ծանօթագրում է (ընդգծումները մերն են). «Վարդան (էջ 63). «Մահմաթ, որդի Արղլայ», Թ. Արծր. (Դ, էջ 99), «Մահմէտ, որդի Արղլայի» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 15, տողատակ 2): [էջ 70]

<sup>65</sup> Ըստ աւանդութեան՝ Աստուածաշնչի առաջին հինգ գրքերը (Մնունդք, Ելք, Ղեւտականք, Թիւք, Երկրորդ Օրէնք) գրել է հրէաների հռչակաւոր մարգարէ Մովսէսը, որը համարուած է նրանց հնագոյն Օրէնսդիրը (ծնուած Ք. ա. 1571 թ.) եւ առաջնորդը (Եգիպտոսից Իսրայէլ վերադառնալու ողջ ընթացքում): Ահա Աստուածաշնչի այդ հատուածն է ակնարկում պատմիչը: [էջ 70]

<sup>66</sup> Աստուածաշնչեան աւանդութեամբ՝ Իսմայէլը Աբրահամի եւ Հագար հարճի որդին էր: 17 տարեկանում նա արտաքսուած է տնից: Գնում է Եգիպտոս, ուր ամուսնանում է եւ ունենում 12 զաւակ, որոնք դարձան արաբների նախահայրերը: Իսկ Իսահակը Աբրահամի եւ Սառայի որդին էր. պատմիչի ասածը «միամօր» լինելու մասին ճիշտ չէ: [էջ 70]

<sup>67</sup> Հաւանօրէն Ռամալա քաղաքն է, որ Երուսաղէմի հիւսիսային կողմում է գտնուել, մօտ 10 կմ հեռաւորութեան վրայ, Սամարիայի ճանապարհին: [էջ 71]

<sup>68</sup> Մեսրոպ Տէր-Մովսիսեանի դիտարկմամբ՝ «Ղեւոնդը (գլ. Ա, էջ 4) յիշատակում է Հրէաների պատգամաւորութիւնը նման Շապուհին, միայն թէ Հերակլը արդէն կայսր չէ, այլ նրա որդի Կոստանդինը, որի զօրավարն է պարտութիւն կրում եւ Պաղեստինը թողնելով փախչում: Քրիստոսի խաչի մասին խօսք չկայ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ XXV): [էջ 71]

<sup>69</sup> Անտիոքը նշանաւոր քաղաք էր Ասորիքում դեռ մ. թ. ա Գ-Ա դդ.: Ասորիքը նուաճած Տիգրան Մեծն այն դարձրեց իր հարաւային աթոռանիստը: 1268 թ. եգիպտացի մամլիւկները գրաւեցին ու հիմնայտակ քանդեցին քաղաքը: Ձեռագրում այստեղ՝ Անդիոք է՝ հեղինակի կամ գրչի համար սովորական Տ-Դ (եւ հակառակը) սխալագրութեամբ: [էջ 71]

<sup>70</sup> Թարսիսը (ձեռագրում՝ Դարսիս, հաւանաբար՝ հեղինակի կամ գրչի համար սովորական Թ-Դ, Դ-Թ սխալագրութեամբ) Կիլիկիայի նշանաւոր քաղաքներից էր, որ յայտնի է նաեւ Տարսոն անունով: Գտնուած է Միջերկրական ծովափից մօտ 10 կմ հեռաւորութեան վրայ: Հարուստ է պտղատու այգիներով եւ բամբակի դաշտերով: Եղել է նաեւ Կիլիկիայի մայրաքաղաքը: Ստորեւ, Տաճատ Անձեւացու պատմութեան մէջ կոչուած է Տարս (տե՛ս [Դ], 42-43): [էջ 71]

<sup>71</sup> Ադանան (ձեռագրում՝ Ատանայ, հաւանաբար՝ հեղինակի կամ գրչի համար սովորական Դ-Տ սխալագրութեամբ) գտնուած է Կիլիկիայի դաշտա-

վայրում, Տարսոնից արեւելք, ծովափից մօտ 20 կմ հեռավորութեան վրայ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Ադանայում կար մօտ 13 հազար հայ բնակչութիւն: [էջ 71]

<sup>72</sup> Մսիսը Կիլիկիայի Մամեստիա քաղաքն է, Ադանայից հարաւ-արեւելք: [էջ 71]

<sup>73</sup> Ասիան կամ Այասը Կիլիկիայի ծովափնեայ քաղաքներից է, որ յայտնի էր նաեւ Եգիպտոս անունով: Գտնւում է Հայոց ծոցի հիւսիս-արեւմտեան ափին: Այասը ծաղկեց ԺԱ-ԺԴ դարերում Կիլիկիայի հայկական թագաւորութեան շրջանում: [էջ 71]

<sup>74</sup> Մելիտինէն (մեր բնագրում՝ Մելտննի) Փոքր Հայքի (Եփրատի ակփնեայ դաշտավայրում) ամենանշանաւոր քաղաքն է եղել: Գոյութիւն է ունեցել մինչեւ միջին դարերը: Նրա տեղում այդ ժամանակ կառուցուել է նոր քաղաք, որ կոչւում է Մալաթիա: «Ոսկեփորիկ»-ում այս նուաճուած քաղաքների թուարկումը հետեւեալ ձեւով է. «զՏարսոն քաղաք, զԱտրանայ եւ զՄամասիայ, որ է Մըսիս» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 16, տողատակ 5): [էջ 71]

<sup>75</sup> Այստեղ կարծես թէ Աղեքսանդրիա քաղաքն է կոչուած Մըսր: Երբեմն այս անունը տրուել է նաեւ Կահիրէին, բայց աւելի շատ՝ ողջ Եգիպտոսին: Այն առաջացել է Նոյի թոռ Մեսրայիմի անունից: Հրէաներն այժմ էլ Եգիպտոսը Մեսրայիմ են կոչում, իսկ արաբները՝ Մըսր: [էջ 71]

<sup>76</sup> Պաղեստինի այս Աքանդիար քաղաքը (Աղեքսանդրիա) չպէտք է շփոթել Եգիպտոսի համանուն քաղաքի հետ, որը նախորդ նախադասութեան մէջ կոչուած է Աղէկասնտրիայ: [էջ 71]

<sup>77</sup> Այս գոմնդս ձեւով (իսկ ստորեւ՝ [Դ.] բաժնի պարագրաֆ 19-ում՝ Գնդաց) մեր բնագրում, անկասկած, հանդէս է գալիս հայկական այլ աղբիւրներին եւս ծանօթ Գդաց (կամ Գթաց) աշխարհը (բառամիջի Ա-ն պիտի համարել պարզ աճական): Հայ հեղինակներն այդպէս էին կոչում ե՛ւ արեւելեան Եւրոպայի գոթերին, ե՛ւ Իրանի հիւսիս-արեւելքի (Խորասանի) ու Միջին Ասիայի քոչուորներին: Տե՛ս, օր.՝ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Սո. Կանայեանց, Տիգրիս, 1909, էջ 26 («39. Յաւուրս ժամանակացն այնոցիկ զաւրաժողով լինէր իշխանն Գթաց...»); էջ 28 («44. Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատգամս թագաւորին Գթաց...»); Մովսիսի Խորեանացոյ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յա-

րութիւնեան, Տիգրիս, 1913, Բ.Հ.թ, էջ 218 («Եւ ի պատերազմել Պորթոսայ ընդ Գութս...»); Գ.իթ, էջ 291 («յետ բարերախտագոյն պատերազմաւ Գթացն [ձձ. Գնդացն] յաղթութեամբ դարձի...»): [Տե՛ս նաեւ Զենոբ Գլակի (=Յովհան Մամիկոնեանի) մօտ («Մատենադիրք Հայոց», հտ. Ե, է դար, Անթիլիաս, 2005, էջ 1004). «Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա [իմա՛ Լուսաւորչի] գնաց ի կողմանս [ձձ. յաշխարհն] Գթաց եւ անդ թագաւորեաց, զոր յետոյ Տրդատ ըմբռնեաց» - Խմբ.] [էջ 71]

<sup>78</sup> Զեռագրում այստեղ՝ Խորոսան, բայց յետոյ քանիցս՝ Խորասան, որ կենտրոնական եւ արեւելեան Իրանն է: Բնագրի նախորդող երկրանուններն են՝ զՊարսս եւ զԳոմնդս: [էջ 71]

<sup>79</sup> Մեսրոպ եպիսկոպոսի ծանօթագրմամբ՝ այս արաբական նուաճումների պատմութիւնը «Ոսկեփորիկում աւելի ընդարձակ է, հինգ սիւնեակ, այստեղ ամփոփւած մի քանի նախադասութեան մէջ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 16, տողատակ 13): [էջ 71]

<sup>80</sup> Արաբները Պարսկաստանը նուաճեցին 642 թ. Դեմաւենդի յաղթական ճակատամարտից յետոյ: Բայց Սասանեան վերջին արքայից արքայ Յազկերտ Գ-ին նրանք հետապնդեցին եւս տասը տարի եւ սպանեցին Միջին Ասիայում՝ գտնելով նրան մի ջրաղացում թաքնուած: Այս արքայի ողբերգական վախճանին է նուիրուած Ֆիրդուսու «Շահնամէ»-ի վերջին գլուխը: [էջ 72]

<sup>81</sup> Արաբների առաջին արշաւանքը Հայաստան տեղի ունեցաւ 640 թ. աշնանը եւ ունէր ոչ թէ նուաճողական, այլ աւարառուական նպատակ: Նրանց հրամանատարն՝ ըստ մի աւանդութեան (Յովհան Մամիկոնեանի մօտ)՝ Մուհամմեդի քեռորդի Աբդուհամանն էր (բայց իրականում՝ Իյադ իբն Ղանմը). հայերը կարող էին ջարդել նրա 18 հազարանոց բանակը, բայց Անձեւացեաց Սահուռ իշխանը դաւաճանաբար անցաւ թշնամու կողմը. երկրի իշխան Տիրան Մամիկոնեանը յանդուզն յարձակումով կտրեց դաւաճանի գլուխը, բայց եւ ինքն սպանուեց, իսկ հայկական փոքրաթիւ զօրքը պարտուեց: Այս արշաւանքը Տարօն գաւառի վրայով հասել էր մինչեւ Խլաթ: Երկրորդ արշաւանքը յաջորդեց ուղիղ մէկ տարի անց. արաբները նոյն Զորապահակ լեռնանցքով անցան Տաւրոսը, գրաւեցին Վանայ լճի արեւմտեան շրջանները, ապա Կոգովիտով մտան Արարատեան դաշտ եւ 641 թ. Հոկտեմբերին գրաւեցին Դուինը: Այստեղ սարսափելի վայրագութիւններ կատարուեցին՝ կողոպուտ, կոտորած. շուրջ 35 հազար մարդ գերի տարուեցին: Արշաւանքները կրկնուեցին



նաեւ յաջորդ տարիներին, բայց արարները վերջնականորէն Հայաստանում հաստատուեցին լոկ 653 թ. (տե՛ս Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան, Հայաստանը VI-VIII դարերում, Եր., 1996, էջ 43-84): [Արաբական առաջին արշաւանքների մասին որոշ ճշգրտումներ տե՛ս Ա. Յակոբեան, Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին եւ Զուարթնոցի կառուցման ժամանակը, - «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հտ. XXIV, Եր., 2005, էջ 366-426 - Խմբ.] [էջ 72]

<sup>82</sup> Խալիփալուլթեանը Հայաստանից վճարուած հարկերի մասին տե՛ս յատկապէս՝ Ա. Ն. Տէր-Ղեւոնդեան, Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում, - ԼՀԳ, 1969, հ<sup>ր</sup> 2, էջ 52-60: [էջ 72]

<sup>83</sup> Հնարաւոր է մտածել, թէ այս թուականն առաջ է եկել պարզ գրչական վրիպակի հետեւանքով, իսկ հեղինակային սկզբնօրինակում եղել է ԿԲ փխն. ԿԸ (ձեռագրերում Բ եւ Ը տառերի շփոթը շատ յաճախ է պատահում): Մուհամմեդ մարգարէն ծնուած է համարուում 570 թ. եւ մահացել է 632 թ., այսինքն պարել է վաթսուներկու (ԿԲ) տարի: [էջ 72]

<sup>84</sup> Իրականում Հերակլին յաջորդել է նրա որդի Կոստանդին Գ-ն, ապա սրան շուտով թունաւորած իր խորթ եղբայր Հերակլէոնասը, որի փոխարէն էլ մի քանի ամիս անց՝ առաջինի որդի Կոստանդ (Կոստաս) Բ-ն (641-668): Իսկ Լեւոն Գ Իսաւրոսը կայսր դարձաւ 717-ին եւ իշխեց 24 տարի: Նոյն սխալ պատկերացմամբ՝ հեղինակը ստորեւ, պարագրաֆ 24-ում այս Լեւոնի որդի է կոչում Թէոդորոս Ռչտունու եւ Վարդ պատրիկի ժամանակակից Կոստանդինին, այսինքն՝ Կոստանդ Բ-ին: [էջ 72]

<sup>85</sup> Երկիրն ճէնաց անուան տակ այս դէպքում պէտք է հասկանալ ոչ թէ միջինասիական ինչ-որ տարածք, այլ հէնց Չինաստանը: [էջ 73]

<sup>86</sup> Ղեւոնդ պատմիչն այս անհասկանալի Կուրի փոխարէն տալիս է իրական՝ Բաւտիս գետանունը (Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 37): Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXV: [էջ 73]

<sup>87</sup> Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդը գրում է, որ Մահմետը պահանջեց ԼՍ աղջիկ եւ որ ձէնբակուրը սայլերի վրայ նստեցրեց ինձ ծպտեալ գինուորներ, Շապուհը ունի ԼՍ եւ երկու թուերի միացում. «զհրամանի [ուղղելի՛] ըստ հրամանի] քո բերեալ եմ ծառայս եւ աղախնեայս իբրեւ եօթանասուն հազար» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXVI եւ 17, տողատակ 2): [էջ 73]

<sup>88</sup> Մեսրոպ եպիսկոպոսի ծանօթագրմամբ՝ «Այստեղից սկսած դարձեալ կայ Ոսկեփորիկում» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 18, տողատակ 13): [էջ 73]

<sup>89</sup> Բովանդակութիւնից երեւում է, որ այստեղ պէտք է հասկանալ՝ «եկաւ ձէնաց երկրի վրայ [զԱալու]»: [էջ 73]

<sup>90</sup> Մեսրոպ եպիսկոպոսը Հայոց բառը շեղատառ է տալիս (այսինքն՝ համարում է վրիպեալ) եւ ծանօթագրում. «Հմմտ. Ղեւոնդ, էջ 40. յիշում է Հոնաց, որ եւ այստեղ հաւանական է, փոխ. Հայոցի» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 18, տողատակ 16): Սակայն, թերեւս, մեր պատմիչը կամեցել է նշել հէնց Հայաստանի աւերումը դէպի Խաղիրք գնացող արաբական զօրքի կողմից: [էջ 74]

<sup>91</sup> Բնագրում այս երկրորդ դէպքում՝ Հազարաց (իմա՛ Սազարաց, հեղինակի կամ գրչի համար սովորական՝ Խ-Հ սխալագրութեամբ): Մեսրոպ եպիսկոպոսն այս բառի մէջ շեղել, այսինքն՝ վրիպեալ է համարել երկրորդ Ա տառը, քանի որ հայ մատենագրութեան մէջ խաղարների համար սովորականը Սազարաց (<Սազիրք) անուանածն է (ինչպէս որ 5 տող վերեւում էր): Սակայն, թերեւս, չի կարելի բացառել, որ մեր պատմիչն իմացել է նրանց անուան նաեւ՝ Սազարք տարբերակը, որ տարածուած էր բիւզանդացիների մօտ (որոնցից էլ անցել է մերօրուայ գիտութեան մէջ): [էջ 74]

<sup>92</sup> Բնագրում այստեղ՝ Ալէքսանտրոս: Ըստ վաղ քրիստոնեական պատմական աւանդոյթի (որ հետագայում անցաւ արաբական գրականութեան մէջ)՝ Աղեքսանդր Մակեդոնացին Կասպիական դրունքում (հետագայում՝ Չող, Դերբենդ) երկաթէ դարպաս էր կառուցել՝ Աստուածաշնչում Գոգ եւ Մագոգ կոչուած (արաբական աւանդոյթում՝ Անուճ-Մանուճ) հիւսիսային բարբարոսական ցեղերի դէմ: Մի այլ տարբերակով, որին հետեւում է մեր պատմիչը (քիչ ստորեւ), երկաթէ դարպասը կառուցուած էր Դրունք Ալանաց-ում: [էջ 74]

<sup>93</sup> Դրունք Ալանաց-ը ներկայիս Դարիալի լեռնանցքն է Վրաստանի Հանրապետութիւնում, Կազբեկ լեռնազագաթից արեւելք, Արագւի եւ Թերեք գետերի ջրբաժան լեռնաթամբի վրայ: Այն հիւսիսկովկասեան քոչուոր բնակչութեան դէմ կարեւոր պաշտպանական սահմանագիծ է եղել հնուց ի վեր: Կոչուել է նաեւ Կովկասեան, երբեմն անգամ՝ Կասպիական դրունք: [էջ 74]

<sup>94</sup> Սա նշանաւոր Հաբիբ իբն Մասլամա գորավարն է: Դեռ Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդ, գլ. ԺԲ, էջ 40. Մալիմ է կոչուած Հոնների դէմ արշաւող գորավարին» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 19, տողատակ 1): Իսկ Ամր-ն այստեղ Օմար իբն Աբդ ալ-Ազիզ խալիփան է (717-720): [էջ 74]

<sup>95</sup> Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդը (գլ. ԺԲ, էջ 40-42) ունի նոյն պատմութիւնը այսպիսի տարբերութիւններով. Սուլէյմանն է իշխում արաբներին եւ նա է իւր գորավար Մալիմին ուղարկում Հոնների դէմ: Սա առնուած է Դարբանդ քաղաքը եւ պարիսպները քանդելիս աշտարակի հիմքի մէջ «գտին վէմ մի մեծ», վրան դրոշմաւած. «Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաք եւ զաշտարակս զայս»: Տարբերութիւններ կան նաեւ Ալաններից պարտութիւն կրելու պատմութեան մէջ» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXVI): [էջ 75]

<sup>96</sup> Բնագրում՝ Պոնդոս: Պոնտոսը (յունարէն՝ «ծով») Սեւ ծովն է, բայց այստեղ՝ Բոսփորի նեղուցով, որի ափին էր Կոստանդնուպոլիսը: [էջ 75]

<sup>97</sup> Խրիւսոպոլիսը (յունարէն՝ «Ոսկէ քաղաք», մեր բնագրում՝ Խոսոպոլիս) Կոստանդնուպոլիսի թաղամասերից մէկն էր, որ մեզ ծանօթ է Իսկիւտար անունով. այստեղ ծնուել է Պետրոս Դուրեանը: [էջ 75]

<sup>98</sup> Ռափսակը պաշտօնեաներից մէկն էր Ասորեստանի Սենեքերիմ արքայի, որը պաշարել էր Իւրայէլի քաղաքները՝ իր դէմ հրէաների Եզեկիա թագաւորի սկսած ապստամբութիւնից յետոյ: Տեսնելով, որ այլեւս չի կարող դիմադրել, Եզեկիան պատգամաւոր ուղարկեց Սենեքերիմի մօտ՝ յայտնելու իր հպատակութիւնը: Արքան ընդունեց նրա մատուցած նուէրները, բայց պաշարումը չհանեց, իսկ Ռափսակին ուղարկեց Եզեկիայի մօտ ամբարտաւան ու անարգ խօսքերով (տե՛ս Ես. 12): [էջ 76]

<sup>99</sup> Ոսկեփորիկում այս թուի փոխարէն՝ «ՃԹ եւ ԿԵԹ» է, այսինքն՝ 165 հազար (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 21, տողատակ 12): [էջ 76]

<sup>100</sup> Հմմտ. Դ Թագ. ԺԸ, ԺԹ: Ասրուք-ը Ասորեստանի տէրութեան մի անունն է, որն իր գլխաւոր քաղաքի անունով կոչուել է նաեւ Աշուր: Առաջաւոր Ասիայի այդ ստրկատիրական պետութիւնը սկզբում տարածւում էր Տիգրիսի միջին հոսանքի շրջաններում, բայց յետոյ ընդարձակուեց իբրեւ մեծ կայսրութիւն: Դ Թագ. ԺԹ 37-ում Ասրուք-ի փոխարէն նշուած է. «Իր ներաք աստոյ տանը»: [էջ 76]

<sup>101</sup> Դ Թագ. ԺԹ 37-ում Սենեքերիմի որդիների անուններն են՝ Ադրամելէք, Սարասար եւ Ասորդան: [էջ 77]

<sup>102</sup> Բնագրում՝ Խորտասաւն: Մ. Դարբինեան-Մելիքեանի ենթադրութեամբ՝ այս տեղանունը կարելի է համարել վրիպեալ եւ Ոսկեփորիկի մի քանի ձեռագրերի տարբերութեցման հիման վրայ վերականգնել՝ Հոովմէ-ացլոց (История Анонимного повествователя, էջ 217, ծնթ. 70): Սակայն դա քիչ հաւանական է թւում: [էջ 79]

<sup>103</sup> Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդը (գլ. Ի) ունի նոյն պատմութիւնը այսպիսի տարբերութիւններով. Արաբների պարտած գորքի թիւն էր Ծ ըիւր, խորտակուած նաւերի մի մասը փրկուած է յաշխարհն Թրակացոց. գորպպետն է միայն՝ Մալիմ եւ մի քանի աննշան մանրամասնութիւններ: Այդպիսի մի յարձակման մասին պատմում է Սեբէոսը (գլ. ԼԶ, էջ 144-146)... Ղեւոնդը եւ Շապուհը այդ պատմութեանը առասպելի կերպարանք են տւել» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXVI-XXVII): [էջ 80]

<sup>104</sup> Ոսկեփորիկն այստեղ տալիս է վերնագիր. «Պատմութիւն գալստեան Մուհամէտին ի Հայս եւ գնալ ընդդէմ նորա Սահակայ սուրբ եպիսկոպոսին. իշխանն Արծրունեաց Թէոդորոս Ըռշտունի» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 25, տողատակ 11): [էջ 80]

<sup>105</sup> 703 թ. Հայաստանում սկսուեցին արաբների դէմ ապստամբական հզոր շարժումներ: Հայոց սպարապետն էր Սմբատ Բիւրատեան Բագրատունին: Սա հրաւիրում է նախարարական խորհրդակցութիւն, որտեղ որոշուած է՝ արաբների ճնշումներից ու ծանր հարկապահանջութիւնից դրդուած՝ թողնել իրենց կալուածքներն ու սեփականութիւնը եւ անցնել Հայաստանի բիւզանդական մաս: Արաբները հետապնդում են փախչողներին, որոնք հարկադրուած՝ Երասխի ափին ճակատամարտ են տալիս եւ ջարդում արաբական 5 հազարանոց գորաբանակը: Այս յաղթութիւնից ոգեւորուած՝ Հայաստանի տարբեր վայրերում հայերը յարձակուեցին արաբների վրայ եւ կոտորեցին: Աբդ ալ-Մալիք խալիփան (685-705) մեծ պատժիչ բանակ է յանձնում Մուհամմեդ Բեն-Օբբայ անունով գորավարին եւ ուղարկում Հայաստան: Այդ լուրն առնելով՝ հայերը Դամասկոս են ուղարկում Սահակ Զորափորեցի կաթողիկոսին: Հասնելով Խառան՝ նա հիւանդանում է եւ, զգալով իր վերահաս վախճանը՝ թողիթ է գրում արաբ գորավարին ու աղերսում նրա գթասրտութիւնը: Տե՛ս նաեւ Մեսրոպ եպիսկոպոսի ծանօթագրութիւնը. «Հմմտ. Ղեւոնդ, գլ. Թ, էջ 28, 31.

«իշխանն Իսմայելի Աբդլ Մելիք... կոչէ առ ինքն զՄահմէտ զաւրաւարն... եւ առաքէ...»: Տես Կիր. Գանձ. էջ 60-61, Յովհ. կաթուղ. էջ 95-97, Ասողիկ, էջ 102, Վարդան, էջ 71» (Պատմութիւն Շապհոյ Բագրատունոյ, էջ 25, տողատակ 12): [Սահակ Զորափորեցու առաքելութեան հանդամանքների մասին վերջին անգամ տե՛ս Անանուհ, Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցոյ շինուածք՝ թուով եւ հիմնադրելով, Առաջաբանը եւ քննական բնագիրը Ա. Յակոբեանի, - «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԴ տարի, 2010, էջ 17-18 - Խմբ.] [էջ 80]

<sup>106</sup> Խառանը Միջագետքում Եղեսիայից (Ուռհա) հարաւ-արեւելք գտնուող հին քաղաք է, Եփրատի ձախ վտակ Խաբուրի վերնահովտում: Յոյներն ու հռոմէացիները կոչում էին Քառէս կամ Խառէս: Յաջորդ պարագրաֆի սկզբում, անկասկած, վրիպակով Արամ: [էջ 80]

<sup>107</sup> Հմմտ. ԾԱՆԳ. ԺԷ 20: [էջ 81]

<sup>108</sup> Բնագրում «Յաւուրն Զ-երրորդի»: Ոսկեփորիկն այլ կերպ է տալիս. «Յետ Ե աւուր» (տե՛ս Պատմութիւն Շապհոյ Բագրատունոյ, էջ 27, տողատակ 24): [էջ 82]

<sup>109</sup> Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդի մէջ այս պատմութիւնը դարձեալ նման է Շապուհին. տարբերութիւնն է. Աբդլմէլիքն է Մահմետին ուղարկում Հայաստանի դէմ, որին ընդառաջում է Սահակ կաթուղիկոսը, որը Խառան հասնելով մեռնում է, միայն չթաղւած գալիս է Մահմետը: Գնում է «առ մարմնոյ ննջեցելոյն, ետ նմա ողջոյն ըստ սովորութեան իւրեանց... եւ իբրեւ ընդ կենդանւոյ ումեք խաւսէր...»: Չունի Համազասպ անունը: Յովհաննէս կաթուղիկոսը նոյն պատմութեան մէջ մտցրել է առասպելական մի նորութիւն, որ յետոյ կրկնում են Ասողիկը, Կիրակոս Գանձակեցին եւ ուրիշներ, մինչդեռ Վարդան պատմիչը հետեւել է Ղեւոնդին: Ըստ Յ. Կ.-ի Սահակը տակաւին գտնուում էր Դամասկոսում, երբ լսում է Ոգբայ (եւ ոչ Մահմետ) զօրավարի արշաւանքի մասին. Խառանում մեռնում է, նախապէս թուղթ գրելով: Այդ լսելով Ոգբան, պատուիրում է նրան չթաղել եւ երբ ինքը գալիս է դիակին այցելութեան, «իբրեւ կենդանւոյ ողջունէր զնա ի լեզու իւր սալամալէք ասելով: Իսկ ապա Հոգւոյն ազդումն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբ էր խափանեալ, շարժեաց ընդդէմ ոստիկանին ի պատճառս աղերսանաց» (Յ. Կ. էջ 95-97)» (Պատմութիւն Շապհոյ Բագրատունոյ, էջ XXVII-XXVIII): [էջ 83]

<sup>110</sup> Մեսրոպ եպիսկոպոսը նշում է, որ՝ «Զեռագրում մի տող բաց է թողնւած, կա՛մ վերնագիր գրելու, - եւ այդ հաւանական է. չէ գրուած սկսւածքի Ա-ն՝ կարմրով գրելու, - կա՛մ բնագիրը թերի էր» (Պատմութիւն Շապհոյ Բագրատունոյ, էջ 29, տողատակ 10): Հմմտ. մեր էջ 83-ի տողատակ 3: [էջ 83]

<sup>111</sup> Ստորեւ բնագիրը տալիս է նաեւ այս անձնանուն՝ Մանան ձեւը (գլուխ [Դ], պարագրաֆ 1): Ռշտունեաց տոհմը կոչուել է նաեւ «տունն Մանանի» (Տրգատ Մեծի չորս զօրավարներից մէկի անունով), որն, ըստ ամենայնի՝ նոյնն է, ինչ որ մեր հեղինակի Մանանդ-ը: [էջ 83]

<sup>112</sup> Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունին (մեր բնագրում՝ Թէոդոս Ռշտունի) Սասանեանների կործանման պահին իր ձեռքն էր առել Հայաստանի ողջ իշխանութիւնը՝ միաւորելով նաեւ երկրի բիւզանդական հատուածը: Նա հմուտ ղեւանագէտ էր, տաղանդաւոր զօրավար եւ ձգտում էր վարել անկախ քաղաքականութիւն: 652 թ. Հայաստանի համար ձեռնուտ պայմանագիր կնքեց Ասորիքի արաբ կուսակալ Մուաւիայի հետ եւ պահպանեց Հայոց այրուծին: Ապա մեկնեց Դամասկոս, ուր ծանր հիւանդացաւ ու վախճանուեց (նրա դին տեղափոխուեց հայրենիք եւ թաղուեց Աղթամարի եկեղեցու բակում): 45 կամ 47 տարի իշխած լինելու մասին ասուածը չափազանցութիւն է: Համարում է, որ «Սասանայ ծռեւրում» Թէոդորոսն է հանդէս գալիս Քեռի Թորոսի կերպարով: [էջ 83]

<sup>113</sup> Մ. Դարբինեան-Մելիքեանի դիտարկմամբ՝ այստեղ կարելի է ձառընտիրների բնագրի հիման վրայ (ՄՄ ձեռ. թիւ 1487 եւ 8100) նկատել բնագրի հետեւեալ պակասը. «...եւ մեծարեալ զՎարդն առաւել քան զամենայն իմաստունն Յունաց»: ձառընտիրները նաեւ յաջորդող կտորն են այլ իմաստով տալիս. «իսկ Թէոդ[որ]ոս եբարձ զհարկատուութիւնն ի տանէ Տաճկաց եւ տայր ի տունն Յունաց» (տե՛ս История Анонимного повествователя, էջ 218, ծնթ. 82): [էջ 83]

<sup>114</sup> Այս Հուրմիզդ-պաքար անունը (բնագրում՝ Հուրմիզտպաքար) համարում է Որմիզդ արքայի անունն աղաւաղումը, բայց, դուցէ, այն վերագրելի է Ատրպատականի իշխաններին, որ արաբներից Սասանեանների կրած պարտութիւնների շրջանում մի պահ անկախացան: [էջ 84]

<sup>115</sup> Ծուաշը կամ Ծուաշ-ուտը Վասպուրականի հիւսիս-արեւելեան գաւառներից մէկն էր, որ գրաւում էր Կոտուր գետի՝ ներկայումս Աղջայ կոչուող ձախ (հիւսիսային) վտակի հովիտը: [էջ 84]

<sup>116</sup> Այլուր չլիշատակուած Գերամ անուան տակ, գուցէ, կարելի է ընկալել Խրամ աւանը, որի աւերակները գտնուած են Արաքսի աջ ափին, Կոտուրի գետաբերանի մօտ, Դարաշամբ գիւղից ոչ հեռու: [էջ 84]

<sup>117</sup> Արտաշ ձեւով վկայուած տեղանուան տակ, հաւանաբար, կարելի է ենթադրել կա՛մ Արտազ գաւառը, որ մտնում էր Վասպուրականի մէջ (37 գաւառներից՝ 15-րդը, Մակու բերդաքաղաքով, այստեղ էր գտնուում նաեւ Հացիւն գիւղը, տե՛ս ծան. 54), կա՛մ է դարի «Աշխարհացոյց»-ում նոյն նահանգի ծայր արեւելեան գաւառների շարքում, Պարսպատունիքի ու Արտաւանեանի միջեւ թուարկուած Արտաշէսեան գաւառը: [էջ 84]

<sup>118</sup> Կոզովիտը Այրարատ նահանգի 15-րդ գաւառն էր. նրա կենտրոնն էր Դարոյնք ամրոցը, որ այժմ կոչւում է Բայազետ: [էջ 84]

<sup>119</sup> Բնագրում «ղամուրն Արծափաց»: Արծափը (որ այստեղ հանդէս է գալիս Արծափք անուանաձեւով), Կոզովիտ գաւառի կենտրոնական բերդաւաններից մէկն էր: Նրա անկման պատմութիւնը եւ դրանից յետոյ արաբների հետապնդումն ու ջախջախումը Թէոդորոս Ռշտունու կողմից նկարագրուած են նաեւ Սեբէոսի եւ Ղեւոնդի մօտ: [էջ 84]

<sup>120</sup> Մեսրոպ եպիսկոպոսի դիտարկմամբ՝ «Ղեւոնդը (գլ. Գ, էջ 11-12) պատմում է տարբեր. Օթման եւ Օգբան են յարձակողները, որ հասնելով Վասպուրական, «առին զաւանս եւ զամրոցս որ միջեւ ի Նախջաւան քաղաք», ապա Տարօն, Կոզովիտ եւ Արծափաց ամրոցը: Թէոդորոս Ռշտունին Ռ մարդով յարձակում է, կոտորում մինչեւ ԳՌ մարդ: Սրան է հետեւել Ասողիկը (էջ 122)» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXVIII): [էջ 84]

<sup>121</sup> Իրականում այս Կոստանդինը (Կոստանդ Բ՝ 641-668) որդին էր Հերակլ կայսեր որդի Կոստանդին Գ-ի: Հմմտ. վերեւում, ծնթ. 83: [էջ 84]

<sup>122</sup> Դերջանը (ձեռագրում՝ Դերչան) Բարձր Հայքի գաւառներից էր: Այստեղ էր Բագառիճը՝ իր նշանաւոր հեթանոսական տաճարով: [էջ 85]

<sup>123</sup> Եկեղեցը կամ Եկեղիքը (բնագրում՝ զԵկեղեցի, իսկ լուսանցքում այլ ձեռագրերով աւելացրած՝ «որ է Երզնկա»): Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 31, տողատակ 10) Բարձր Հայք նահանգի գաւառներից էր: [էջ 85]

<sup>124</sup> Գուցէ, պարզապէս ուղղելի է՝ Կոլոնիա (փխն. Կոլանիա), որ Փոքր Հայքի քաղաքներից է, Սեբաստիայի ճանապարհին: [էջ 85]

<sup>125</sup> Գալլ անունով գետեր ու վտակներ կան Փոքր Հայքում, Բարձր Հայքում եւ Մոփքում: Այստեղ խօսքն առաջինի՝ Կոլոնիա քաղաքով հոսող Գալլի մասին է (ներկայումս՝ Կելկիթ): Այս Գալլ գետի փոխարէն Ղեւոնդը, Վարդան պատմիչը եւ ուրիշներ նշում են Եփրատը: [էջ 85]

<sup>126</sup> Թովմա Արծրունին գրում է. «Գագիկի իշխանական զօրավարութեան ժամանակ սկզբնաւորուեց իր ձեռակերտը. նա շինեց բարձր հողաբլուր Մահուաշտ գիւղում, գետի ափին արեւելեան կողմում, որ նայում է Ռշտունեաց ոստանին, որի տեղում նախապէս եղել է Հայկազն Վարդ պատրիկ Ռշտունու պարսպաւոր ապարանքը» (Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց, Ի լոյս էած Բ. Պլատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԻԹ, էջ 255): Ուրեմն, հաւանաբար, այս Մահարեշտ (<Մահարեշտ?) արքունիքը Մահուաշտ գիւղն է, որ գտնուել է Վասպուրական նահանգի Ռշտունեաց գաւառում (Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XXVIII եւ էջ 32, տողատակ 18): [էջ 86]

<sup>127</sup> Այստեղ Տաւրոս լեռը (բնագրում՝ Տորոս է, ինչպէս որ հանդիպում է եւ այլ աղբիւրներում), հաւանօրէն, Հայկական Տաւրոսի մի բազուկն է, որ անցնում է Վանայ լճի եւ Վասպուրական նահանգի հարաւում: Ոսկեփորիկի գրչագրերում Տաւրոսի փոխարէն նշուած է կոնկրետ լեռնազապաթ՝ «Արտաւս»-ը (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 33, տողատակ 20; История Анонимного повествователя, էջ 219, ծնթ. 99), որը յառնում է Վանայ լճի հարաւ-արեւելեան անկիւնից հարաւ՝ սահմանաբաժանելով Ռշտունիք եւ Բուժունիք գաւառները: [էջ 87]

<sup>128</sup> Բնագրում «վասն տեսեանն»: Բայց վերեւում Երուսաղէմի Ստեփաննոս Նախավկայի վանքի եկեղեցւոյ տեսիլքի նկարագրութեան մէջ նման պատգամի մասին ոչինչ չկայ: Դրա պատճառը բնագրի ինչ-որ պակասն է, բայց գուցէ եւ՝ իր աղբիւրի բովանդակութիւնը պարզապէս անուշադիր ձեւով համառօտած հեղինակի իսկ թերութիւնը: [էջ 89]

<sup>129</sup> Ըստ աւանդութեան՝ Վարազայ սուրբ խաչի յայտնութիւնն, իրօք, եղել է Վարդ պատրիկի իշխանութեան ժամանակ, բայց ոչ թէ 653 թուականին (Հայոց ձԲ), այլ՝ 664 (տե՛ս Լ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Մաս Ա, Վիեննա, 1940, էջ 281): Ոսկեփորիկում պահպանուած «եւ թվականն՝ ձԲ [102]»-ի փոխարէն մեր ձեռագրում առկայ է՝ «էր թվականն Հայոց Բձ [200]», այսինքն՝ 751 թ., որը պարզապէս ինչ-որ գրչի կողմից վրիպուած-դրափոխուած անհեթեթ տարեթիւ է: [էջ 90]

<sup>130</sup> Այս գլխահամարը խիստ պայմանական վերականգնում է մեր կողմից՝ լուկ աւանդական հատուածաբաժանումը պահպանելու նպատակով: «Հացունեաց խաչի պատմութեան» անուան տակ «Ոսկեկորիկ» ժողովածոյի մէջ ընդգրկուած կտորի աւարտից յետոյ այստեղից է բնագիրը պատրաստել եւ պայմանականօրէն հատուածաբաժանել Գ. Տէր-Մկրտչեանը (տե՛ս մեր առաջաբանում, էջ 52-53, նաեւ՝ էջ 83, տողատակի ծնթ. 3): Իսկ Մ. Դարբինեան-Մելիքեանը տեղին է համարել այստեղ գլխագրել «Մասն Բ» (История Анонимного повествователя, էջ 109. նոյնը՝ R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 202): [էջ 91]

<sup>131</sup> Բագրատունի Աշոտ Ա-ն գահ բարձրացաւ 885 թ. եւ իշխեց մինչեւ 890 թ.: Բագրատունեաց կենտրոնական թագաւորութիւնը վերջ գտաւ 1045 թ. Գագիկ Բ արքայի գահազրկումով (Բիւզանդիայի կողմից): Իսկ Գագիկ-Նաչիկ Արծրունին թագ ստացաւ 908 թ. (երբ Բագրատունի արքան Աշոտի որդի Սմբատ Ա-ն էր) եւ ստեղծեց Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը: Այն գոյատեւեց մինչեւ իր երկիրը Բիւզանդիային կտակած Սենեքերիմ արքայի տարագրութիւնը 1021 թ. (վերջինս Կապադովկիայի իր նոր տիրոյթում մահացաւ 1026 թ.): [էջ 91]

<sup>132</sup> Արծրունեաց առաջին թագաւոր Գագիկ-Նաչիկը տաղանդաւոր շինարար էր եւ իր երկիրը զարդարեց նորակառոյց պալատներով ու վանքերով, ջրանցքներով ու այգիներով: Իսկ նրա շինարարական փառքի պսակը կազմեցին 915 թ. կառուցուած Աղթամարի եկեղեցին նոյնանուն կղզում (որ արդիւնքն է Մանուէլ ճարտարագետի հանճարի ու կանգուն է մինչեւ այսօր) եւ արքայի մայրաքաղաք Ոստանը Ռշտունիք գաւառում (Վանայ լճի ափին, Արտոս լեռան ստորոտում): [էջ 91]

<sup>133</sup> Բնագրում այստեղ եւ ստորեւ, պարագրաֆ 10-ում՝ «գաւառն Հաղբակոյ» («տունն Հաղբակոյ»): Այս գաւառը, որի անուան աւելի սովորական ձեւն է՝ Աղբակ, Արծրունեաց տոհմի բնօրրանն էր եւ գտնուում էր Վասպուրականի արեւելքում, Մեծ Զաք գետի վերնահովտում: Նրա կենտրոնն էր Հաղամակերտ աւանը (ներկայիս՝ Բաշկալէն), որի մօտ է գտնուում Սուրբ Բարդուղիմէոս առաքեալի վանքը: Ստորեւ անունը գրուած է Յաղբագ ձեւով (տե՛ս պարագրաֆ 56): [էջ 91]

<sup>134</sup> Բնագրից չի հասկացւում, թէ ում որդին էր այս Աշոտը: Ռուսերէնի թարգմանիչ Մ. Դարբինեան-Մելիքեանը հարցականով ենթադրում է՝ «Համագասպի» (История Анонимного повествователя, էջ 108): Թերեւս,

այդ վարկածի օգտին է խօսում այն, որ յաջորդ նախադասութեան վերջում եւս հեղինակը տեղեկացնում է նախադասութեան սկզբում նշուած երկու եղբայրներից («Կագիկ եւ Սահակ») վերջինի սերունդի մասին. «ու Սահակայ ոչ լինէր գաւակ»: [էջ 91]

<sup>135</sup> Բնագրում՝ «յանապատին Աշոյ»: Այս տեղանունը, որ 15 տող ստորեւ յիշուած է՝ «ի վանքն Աշատայ» ձեւով, այլուստ անծանօթ է: Մեսրոպ եպիսկոպոսի կարծիքով՝ «թերեւս պիտի լինի Աշատոյ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 37, տողատակ 19): [էջ 91]

<sup>136</sup> Սամուէլը հին Հրէաստանի հռչակաւոր մարգարէներից էր, որ ծնուած օրից ձօնուած էր Աստուծոյ եւ յետոյ դարձաւ հրէաների դատաւոր: [էջ 92]

<sup>137</sup> Ն. Ակինեանի դիտարկմամբ («Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը», էջ 209, ծնթ. 2)՝ գրողի «հմտութիւնը այս լեզուին կը տեսնուի հետեւեալ ստուգաբանութեան մէջ. «Դերէն(իկ) որ կոչի որդի վանաց» (էջ 38), որ կը յենու ասորերէն... *dairia, dera* «վանք», «մենաստան» բառին վրայ, ուստի աւելի ճիշդ, քան Թովմա Արծրունոյ մօտեցումը՝ «Դերանիկ որ թարգմանի ուխտիք խնդրեալ ի Տեառնէ» (էջ 280)»: Թովմայի մօտաւոր զուգահեռին յղում է տալիս նաեւ Մեսրոպ եպիսկոպոսը (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 38, տողատակ 26): Հմտ *История Анонимного повествователя*, էջ 221, ծնթ. 107: [էջ 92]

<sup>138</sup> Տոսպը (բնագրում՝ Տոսք) Վասպուրական նահանգի 2-րդ գաւառն էր (ըստ «Աշխարհացոյց»-ի): Տոսպ է կոչուել նաեւ Վանայ լիճը (Տոսպայ ծով, անտիկ աղբիւրներում՝ Տոսպիտիս), իսկ Վան քաղաքը բիւսանական սեպագրով կոչուած էր՝ Տուշպա կամ Տուրուշպա: Յովհ. Կարազեոզեանի վարկածի համաձայն՝ տեղանունը վաղնջահայերէն ստուգաբանութիւն ունի՝ Տուտ ոշպայ = «Վիշապի դուռ» (տե՛ս Յ. Կարազեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հտ. I, գիրք 1. Սեպագիր տեղանուններ /Այրարատում եւ յարակից նահանգներում/, Եր., 1998, էջ 34): [էջ 93]

<sup>139</sup> «Ամուրն Կայան»-ը Թովմա Արծրունու կողմից յաճախ յիշատակուած Նկան ամրոցն է, որ գտնուում է Վասպուրական նահանգի Թոռնաւան գաւառում: [էջ 93]

<sup>140</sup> Բնագրում՝ «Տոտորայ ամրոցն», բայց ըստ Մեսրոպ եպիսկոպոսի՝ «թերեւս ուղղելի Կոտորայ ամրոցն» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատուն-

տյ, էջ 39, տողատակ 27): Այդ սրբագրումով՝ սա յայտնի Կոտոր ամբոցն է կամ Կոտորոց բերդը, որ գտնուում էր Վասպուրականի նահանգի Անձահիձոր (կամ Անձախիձոր) գաւառում: Այս գաւառով հոսող գետը եւս գոնէ վերջին դարերում կրել է Կոտուր անունը: [էջ 93]

<sup>141</sup> Բնագրում՝ Արապկեր, որ թւում է, թէ պէտք է ընկալել իբրեւ իկ իւրայատուկ վերջածանցով ցեղանուն (ի-ն՝ սղուած, գումարած՝ [ն]եր յոգնակիակերտը եւ հեղինակի կամ գրչի համար սովորական Բ-Պ սխալագրութեամբ), թէկուզեւ՝ այլուստ մեզ անծանօթ (հմմտ. R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 205, ծնթ. 133): Այդպէս ունենք, օր.՝ պարսիկ, դելմիկ, տաճիկ, հնդիկ, խուժիկ, ռուզիկ եւն: Յովհ. Կարապետեանի վարկածի համաձայն՝ նմանատիպ կազմութիւն է ունեցել նաեւ հայերիս՝ \*Ռայիկ ինքնանուանումը, որն, ի վերջոյ, վերածուել է մեր Հայկ նահապետի անուան (տե՛ս Յ. Կարապետեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հտ. I, գիրք 1, էջ 174): [էջ 96]

<sup>142</sup> «Գնդաց աշխարհին», որ պիտի ընկալել՝ Գդաց (տե՛ս ծնթ. 77, նաեւ R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 191, ծնթ. 49): [էջ 96]

<sup>143</sup> Մօսուլ քաղաքը (բնագրում այստեղ՝ Մօսլ, յետոյ՝ Մօսուլ, նաեւ՝ Մաւսուլ) կառուցուել էր վաղ միջնադարում, Ասորեստանի հինաւուրց մայրաքաղաք Նինուէի տեղում կամ նրա մօտերքում: [էջ 97]

<sup>144</sup> Բնագրում՝ «ի Յարզուն» է, որը, գուցէ, կարելի է ընկալել նաեւ՝ «ի Արզուն» (աւելորդ ի-ի սխալագրութեամբ), այդպիսով կապելով մեր Աղձնիք նահանգի Արզն (նաեւ՝ Արզան, Արզոն) քաղաքի հետ: Ներկայումս աւերուած քաղաքատեղիի մօտով հոսող գետը (Տիգրիսի ձախ վտակը) կոչւում է Խարզան կամ Հարզան (ռուսական քարտէզներում՝ Գարզան): [էջ 101]

<sup>145</sup> Բնագրում՝ «սարեցին զամուրսն Ծամիրա[յ]», որտեղ, անշուշտ (ըստ Խորենացու՝ Ա.ժգ), պէտք է ընկալել՝ Ծամիրա[մայ] (երկրորդ բառի յոգնակին կարող է գրչի վրիպում համարուել, իսկ գուցէ եւ՝ ոչ): Բայց յատկանշական է, որ Վանի համար նոյն ձեւը երիցս կիրառուում է նաեւ ստորեւ (պարագրաֆ 97, 106, 134)՝ «ի քաղաքն Ծամիրայ» եւ «յՈստանն Ծամիրայ»: Ուրեմն, գուցէ, Ծամիրայ տարբերակը անուանակոչման մի շրջանառու ձեւ է եղել, ուստի վերականգնում չենք տալիս: [էջ 101]

<sup>146</sup> Հերը Պարսկահայքի գաւառներից մէկն էր, որի կենտրոնը նոյնանուն Հեր քաղաքն էր (աւելի ուշ կոչուած նաեւ՝ Խոյ): [էջ 101]

<sup>147</sup> Մարանդը միջնադարում հայաշատ քաղաք էր Վասպուրականի եւ Պարսկահայքի սահմաններից մի փոքր արեւելք (Ատրպատականի հիւսիս-արեւմուտքում): Յենուելով «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան մի քանի ձեռագրերի տեղեկութեան վրայ՝ Ղ. Ալիշանը, Ս. Երեմեանը եւ ուրիշներ Մարանդը համարել են Վասպուրականի գաւառներից մէկը: [էջ 101]

<sup>148</sup> Ներկայիս Սալմաստ քաղաքը վաղ շրջանի աղբիւրներում կոչուել է Սաղամաս, իսկ մեր բնագրում հանդէս է գալիս Սալամաստ տարբերակով: Գտնուում էր Պարսկահայք նահանգի Զարեհաւան գաւառում: [էջ 101]

<sup>149</sup> Բնագրում՝ «ի Հեր եւ ի Մարանդ եւ ի Սալամաստ, ուր է եւ ժողովեցան...», որի է-ն հրատարակիչը համարել է աւելորդ (տե՛ս Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 47, տողատակ 18), եւ մենք էլ թարգմանեցինք առանց դրա՝ «...ուր եւ հաւաքուեցին...»: Սակայն գոնէ իբրեւ վարկած կարելի է նաեւ ենթադրել, որ հեղինակային սկզբնօրինակում եղել է ոչ թէ տեղի դերանուն ուր-ը (միեւնոյնն է՝ նրանից չի հասկացուում, թէ որտե՞ղ էին հաւաքուել «պարսիկ» դաշնակիցները՝ Հերո՞ւմ, Մարանդո՞ւմ, թէ՞ Սալամաստում), այլ հարեւան Ուրմի (վաղ շրջանում՝ Ուրմի) պարսկահայքեան քաղաքի (արդէն միջնադարում նաեւ՝ շրջակայ գաւառի) անուան յիշատակութիւնը, որն աղաւաղել էր գրիչներից մէկը՝ վրիպելով մ տառը: Ստացւում է՝ «...ի Սալամաստ Ուր(մ)է: Եւ ժողովեցան...», այսինքն՝ «...Մարանդում ու Ուր(մ)ի Սալամաստում: Եւ հաւաքուեցին...»: Այս վարկածի համաձայն սեռական հոլովով ընկալելի «Ուրմէ»-ի զուգահեռը կայ հէնց յաջորդ նախադասութեան սկզբում. «Դերէնն գայր հասանէր... ի դաշտն Դատվանէ»: [էջ 101]

<sup>150</sup> «Էգիսն»՝ այլուստ անծանօթ տեղանուն է, գուցէ եւ աղաւղուած կամ հնչիւնափոխուած: Այն գուցէ եւ կարելի է փնտրել նոյն Պարսկահայք նահանգում, ինչպէս ենթադրում է Մ. Դարբինեան-Մելիքեանը՝ համադրելով Էլի-Այլի գաւառանուն հետ (տե՛ս История Анонимного повествователя, էջ 221, ծնթ. 117): Թէպէտ աւելի հաւանական է, որ այդ դաշտը լինէր Վասպուրականի հարաւ-արեւմտեան կողմերում, որտեղից պէտք է երկիր մտնէր Միջագետքից եկող Դերէնի բանակը. քիչ անց հեղինակն ասում է, որ վերջինս կանգ առաւ Դատվանի դաշտում, այսինքն՝ հէնց այդ կողմի սահմանից մի փոքր արեւմուտք (Տուրուբերան նահանգի հարաւ-արեւելեան երկարք գաւառում): [էջ 101]

<sup>151</sup> Բնագրում՝ «ի դաշտն Դատվանէ»: Աւարտի է-ի համար տե՛ս վերևում, ծնթ. 149): Դատվանն այժմ էլ քաղաք է Վանայ լճի հարավ-արևմտեան ափին եւ ծառայում է իբրեւ նաւահանգիստ: [էջ 101]

<sup>152</sup> Այս Թխաշուր-ը նշուած է նաեւ պարագրաֆ 105-ում՝ Թխաշուր ձեւով: Դա, թերեւս, գետ էր (բայց գուցէ եւ՝ ծովածոց կամ ծանծաղուտ), որ յիշատակուած է միայն այս երկում եւ, հաւանաբար, գտնուել է Դատվանի դաշտում կամ նրա մօտերքում: [էջ 101]

<sup>153</sup> Ըստ Թովմա Արծրունու տեղեկութեան՝ Սեւանի բերդը գտնուում է Լմբափոր անունով գաւառում. վերջինս պէտք է որ լինէր Վասպուրականի մէջ: Լէօն եւ ուրիշներ այս ամրոցը տեղադրում են Վասպուրականի Թոռնաւան գաւառում: [էջ 102]

<sup>154</sup> Նկան բերդը Վասպուրականի Թոռնաւան գաւառի ամրոցներից էր, որը գտնուում էր Զագրոսի լեռնաշղթայի հիւսիսային բազուկների արեւելեան փեշերին: [էջ 102]

<sup>155</sup> Մարանդակայ ամրոցը, թերեւս, գտնուել է ձուաշ-ոտս գաւառի Մարակերտ աւանի մօտերքում: [էջ 102]

<sup>156</sup> Շիմաւոնի բերդը, հաւանօրէն, գտնուել է Անձահիձոր գաւառում (կամ նրա մօտակայքում), ինչպէս որ նշուում է յաջորդող Խոտորի ձոր (կամ՝ Կոտոր) բերդի համար: [էջ 102]

<sup>157</sup> Բնագրում՝ «եւ զԽոտորոյ ձորն յԱնձախի»: Հնարաւոր է, որ այս Խոտորոյ-ը վերականգնելի լինի՝ Կոտորոյ, այդ դէպքում «ձորն յԱնձախի»-ն էլ կարելի է ընկալել՝ «ի ձորն Անձախի»: Անձախիձորը կամ Անձահիձորը Վասպուրականի գաւառներից մէկն էր, որ գտնուում էր նահանգի արեւելեան սահմանագլխում, Աղբակ գաւառից հիւսիս եւ Հերից արեւմուտք, Կոտուր (կամ՝ Կարմիր) գետի միջին հովտում: [էջ 102]

<sup>158</sup> Ծահուկ (կամ՝ Զահուկ) գաւառը գտնուում էր Վասպուրականից հարաւ, նրան սահմանակից Կորճայք նահանգում, Մեծ Զաք գետի միջնահովտում, հետագայի Զուլամերկ քաղաքի շրջանում: [էջ 102]

<sup>159</sup> Բնագրում՝ «ի բերդն ճախկին», որը կարելի է ընկալել որպէս Ծախկի (Ծախ[ու]կի) բերդանունան փոփոխակ: Խ-ով ձեւը երկիրս հանդիպում է նաեւ ստորեւ, երբ խօսուում է բերդի մասին: Իսկ գաւառը մի քանի անգամ եւս յիշատակուում է Ծախուկ ձեւով (պարագրաֆ 90-ում՝ Ծախկի): [էջ 102]

<sup>160</sup> Այստեղ յիշուած Առճնաց գաւառանունան փոխարէն Թովմա Արծրունին մէկ անգամ յիշատակում է Առճուճք գիւղը, իսկ նրա երկի անունն շարունակողը՝ Արճուճք ամրոցը (Պատմութիւն տանն Արծրունեաց, 1887, գլ. Բ.գ, էջ 111 եւ գլ. Դ.դ, էջ 278. Հմմտ. Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 49, տողատակ 5): Վասպուրականում էր գտնուում, բայց ճշգրիտ տեղը յայտնի չէ, թէպէտ հնարաւոր է, որ անունը ինչ-որ չափով կապուած լինի Վանայ լճի հիւսիս-արեւելեան ափին գտնուած Արճէշ գիւղաքաղաքի անունան հետ (ըստ Թովմայի՝ «ի գեաւղն Առճուճս» ջախջախուած արար զօրապէտը «գնաց փախստական ընդ կողմն Բերկորոյ»): Վերջինիս շրջակայ երկու գաւառները՝ Աղիովիտը եւ Առբերանին հնուց ի վեր բնակութեան վայր էին դառնում գահը չժառանգած արքայազուներին համար: [էջ 103]

<sup>161</sup> Ձել եւ Սուրմ գիւղերն այլուր յիշուած չեն: Ըստ Մեսրոպ եպիսկոպոսի՝ այդ գիւղանունների կտորը «թուում է պակաս եւ խանդարուած» (Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 49, տողատակ 6): [էջ 103]

<sup>162</sup> Բնագրում աղաւաղուած է՝ «սէնացեալ անչափ», եւ Մեսրոպ եպիսկոպոսը համարում է դա՝ «կասկածելի, թերեւս պիտի լինի մեծացեալ» (Պատմութիւն Ծապիոյ Բագրատունւոյ, էջ 49, տողատակ 7): Սակայն թուում է, թէ հեղինակն այստեղ ցանկացել է ասել ոչ թէ՝ «մեծացաւ», «հզօրացաւ», այլ «բարգաւաճեց», «շէնացաւ» (շէնացեալ, որի սկզբնատառը շիթթել են գրիչները), ու յետոյ էլ աւելացրել է. «եւ ինքն [էլ] շէնացրեց... Վասպուրականը» («եւ ինքն շէնաց...»): [էջ 103]

<sup>163</sup> Մողոքար ամրոցը (գուցէ՝ Մողոքաքար<sup>o</sup>) այլուտ անծանօթ է, բայց հաւանական է, որ գտնուել է Զարեանդ գաւառում: [էջ 103]

<sup>164</sup> Այս Միջայ ամրոցը, հաւանօրէն, Հեր գաւառում էր, որը գտնուում էր Զարեանդ գաւառի եւ քիչ անց յիշատակուող Ուրմիոյ լճի միջեւ: Թէպէտ՝ ըստ է. գ. «Աշխարհացոյց»-ի՝ Միջայ անունով գաւառ կար Մոկք նահանգում: [էջ 103]

<sup>165</sup> Բնագրում՝ «եւ զամենայն գաւառն Դաշտայ Աւարիս շինեաց...», որտեղ կարելի է ընկալել կա՛մ այլուտ անծանօթ Աւարիդաշտ (գուցէ, վերականգնւմով անգամ՝ Դաշտավար<sup>o</sup>) գաւառանուն, կա՛մ (ենթադրելով շարագասութեան որոշ անհարթութիւն)՝ նոյնպէս անծանօթ Աւար գաւառի դաշտը: Սա, հաւանաբար, Պարսկահայք նահանգի գաւառակներից մէկն էր Ուրմիոյ լճի աւազանում: [էջ 103]

<sup>166</sup> Այս Աղի ծովն, ըստ ամենայն, Կապուտան կամ Ուրմիոյ լիճն է՝ Պարսկահայք նահանգից արեւմուտք (Հմմտ. Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 49, տողատակ 19; R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 209, ծնթ. 149), որն ամենամեծն է Հայկական լեռնաշխարհում։ Անշուշտ, շատ աղի լիճներու պատճառով է կոչուել այսպէս։ [էջ 103]

<sup>167</sup> Չգիտենք, թէ ինչ էր այս Հողարլուր-ը՝ բնակավայր, բերդամրոց, պարիսպ, թէ՛ մէկ այլ կառոյց։ Գտնուել է Հերի դաշտի սահմանագլխին, ուրեմն՝ Ուրմիոյ լճից հիւսիս։ Մի վարկածով (Ս. Երեմեան)՝ այստեղ է եղել բիսյանական Սարգուրի-խուրդա քաղաքը (տե՛ս *История Анонимного повествователя*, էջ 222, ծնթ. 129)։ [էջ 103]

<sup>168</sup> Յիշուած են Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին (826-851) եւ Տարօնի իշխան Բագրատունի Գրիգոր - Գրիգորիսը (թ. գ. վերջ)։ Հմմտ. *История Анонимного повествователя*, էջ 223, ծնթ. 131, 133; R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 209, ծնթ. 150-151։ [էջ 103]

<sup>169</sup> Բնագրում՝ Անցեալացոյ։ Անձեւացիքը Վասպուրականի 11-րդ գաւառն էր, որ ընկնում էր Տաւրոսի լեռնաշղթայից հարաւ, Արեւելեան Տիգրիսի (Ջերմ) ափունքների լեռնոտ շրջանում։ Անուան մի տարբերակն է Անձաւացիք, որն առկայ է հէնց քիչ ստորեւ։ [էջ 104]

<sup>170</sup> Բնագրում՝ Գառնոյ։ Գառնին կամ Դառնին Վասպուրականի 8-րդ գաւառն էր։ Տարածուած էր նահանգի հիւսիս-արեւմուտքում, Աբաղայի դաշտում՝ Թոնդրակ լեռան հարաւային ստորոտներին։ Իրենից հարաւ, Վանայ լճի հիւսիս-արեւելեան ափին ընկած Առբերանի գաւառի հետ միասին միջնադարում երբեմն կոչուել է նաեւ Քաջքերումիք։ [էջ 104]

<sup>171</sup> Բնագրում՝ «[յ]ամուր Բերկոյ»։ Բերկրի քաղաքը գտնուում էր Վասպուրական նահանգի Առբերանի գաւառում, որ տարածուած էր Վանայ լճի հիւսիս-արեւելեան ափերին։ [էջ 104]

<sup>172</sup> Բնագրում՝ Վարաք (այդպէս նաեւ մի քանի անգամ՝ ստորեւ, թէպէտ վերելում քանիցս գրուած է սովորական ձեւը՝ Վարագ)։ Վանից 5 կմ արեւելք խոյացող Վարագայ լեռան լանջին գտնուում էին Վարագայ նշանաւոր վանքերը (Վերին Վարագ, Ներքին Վարագ)՝ բաղկացած 12 եկեղեցիներից։ Ըստ աւանդութեան՝ առաջին եկեղեցիները կառուցել էր Գրիգոր Լուսաւորիչը. հետագայում շարունակել են ուրիշները։ Վարագը գործել է ողջ միջնադարում։ Մեծ եղեռնից յետոյ աւերակ է։ [էջ 104]

<sup>173</sup> Բնագրում՝ Անձաւաց. տե՛ս վերելում, ծնթ. 169։ [էջ 105]

<sup>174</sup> Բնագրում՝ Փօկաս։ Խոսվութեան արդիւնքում գազ բարձրացած բիւզանդական կայսր Փոկասն իշխել է 602-610 թթ.։ Սակայն Տաճատի՝ Բիւզանդիայում եղած տարիներին կայսրը Կոստանդին Ե Կոպրոնիմոսն էր՝ 741-775 թթ. (Հմմտ. *История Анонимного повествователя*, էջ 224, ծնթ. 140)։ [էջ 105]

<sup>175</sup> Բնագրում՝ «ընդդէմ Տարսոյ»։ Անշուշտ Տարսոն բերդաքաղաքն է, որ վերելում կոչուած էր Դարսիս (տե՛ս ծնթ. 70)։ [էջ 106]

<sup>176</sup> Մերոպ եպիսկոպոսի ծանօթագրմամբ՝ «Տաճատ Անձեւացու այս զրոյցը Հմմտ. Ղեւոնդ, գլ. Լէ, ԼԹ եւ ծանօթ. 46, 47» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 55, տողատակ 28)։ [էջ 109]

<sup>177</sup> Խուրջ Տուրուբերան նահանգի առաջին գաւառն էր, որ տարածուած էր Տաւրոսի լեռներից հարաւ, Աղձնիքի Սասուն գաւառից արեւելք։ Բնագրում այստեղ ունենք՝ Խութանաց (յաջորդ պարագրաֆում՝ Խութանի)։ Սակայն պարագրաֆ 55-ում առկայ է Խութայից հետաքրքիր ձեւը (անշուշտ ծագած՝ Խութայից-ից՝ գրչի համար սովորական Թ-Դ սխալագրութեամբ)։ Յայտնի է, որ միջնադարեան քերականական երկերում Խութի բարբառը կոչուել է Խութայիցն (տե՛ս Н. Адонц, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, էջ 187)։ Ուրեմն կարելի է մտածել, որ մեր դէպքում էլ հեղինակը նշել է հէնց այդ եզրոյթը, բայց գրիչներից մէկը նրա մէջ բաց է թողել ձայնաւորին յաջորդող Ն-ն (որը յաճախադէպ գրչական վրիպում է)։ Բոլոր դէպքերում՝ այդ Ն-ն վերականգնել ենք քառակուսի փակագծերում։ [էջ 110]

<sup>178</sup> Այս Բուկան (բնագրում՝ միշտ այսպէս) մեր պատմութեան մէջ այլուր յիշուած է Բուղայ կամ Բուխայ անունով։ Ըստ արաբ մատենագիրների՝ նա ծագումով թիւրք էր (այլ ոչ թէ՛ «քահանայի որդի... Աղբակ գաւառից», ինչպէս որ մեր հեղինակն է ասում) եւ արաբական բոլոր զօրավարների մէջ ամենից աւելի դաժանն ու արիւնախոնձը։ Հայաստան արշաւեց 852/853 թ. եւ 3 տարուայ նախճիրներից յետոյ բազմաթիւ դերիներ տանելով՝ վերագարձաւ Բաղդադ (Սամառա) 855 թ.։ [էջ 111]

<sup>179</sup> Այս Սամուր քաղաքանունը 5 տող ներքեւ նշուած է Սամառայ՝ իրական անուանաձեւով (նաեւ պարագրաֆ 75-ում, սեռականով՝ Սամառոյ), իսկ գրքի սկզբներում՝ Սումար եւ Սումիր (տե՛ս վերելում, էջ 56,



57): Անշուշտ, խօսքը միեւնոյն քաղաքի մասին է, որն իրականում Բաղդադի արքայական արուարձանն էր: [էջ 112]

<sup>180</sup> Արաբները (եւ նրանց հետեւելով՝ հայ հեղինակները) «Մաղրիպիկ» կամ «Մաղրիպ» էին անուանում Հիւսիսային Ափրիկէի (Մաղրիբի) բերբերական քոչուոր ցեղերին: Առաջին ձեւի վերջաւորութեան համար համտ. պարսիկ, տաճիկ, հնդիկ, խուժիկ, դելմիկ եւ այլն [էջ 112]:

<sup>181</sup> Վասպուրական նահանգի Աղբակ գաւառում Արծրունիների տնտեսական ու քաղաքական յայտնի կենտրոն Հաղամակերտն այստեղ անուանուած է Սադամակերդ բերդ, իսկ 10 տող ներքեւ՝ Սադամաշէմ քաղաք (թերեւ՝ առաջին Գ-ն զուտ խօսուածքային ածական է): Այժմ այդ քաղաքը կոչուում է՝ Բաշկալէ: [էջ 116]

<sup>182</sup> Ըստ Թովմա Արծրունու (էջ 244)՝ այս Աշոտ Արծրունին մահացել է 874 թ., եւ նրան թաղել են Աղբակի Օսի գիւղի Սուրբ Խաչ վանքում (համտ. История Анонимного повествователя, էջ 225, ծնթ. 156; R. W. Thomson, The Anonymous Story-teller, էջ 217, ծնթ. 192): [էջ 117]

<sup>183</sup> Բնագրում՝ ըԶարեհրերդն (համեմատելով յաջորդող ըԾափուկն-ի հետ՝ կարելի է վերծանել նաեւ՝ ըԶարեհրերդն?): Գուցէ, գտնուել է Պարսկահայքի Զարեհաւան քաղաքում (Սալմաստին մօտ) կամ նոյն քաղաքն է (այն այժմ կոչուում է Քեօհնաշափար՝ «Հին քաղաք»): [էջ 117]

<sup>184</sup> Բունոյցոր (կամ, գուցէ՝ Բունոյ ձոր<sup>6</sup>) ամրոցը, հաւանաբար, պէտք է գտնուէր Վասպուրականի հարաւային սահմանում, Առնոս լեռանից հարաւ-արեւելք եւ Ճահուկից արեւմուտք (համտ. История Анонимного повествователя, էջ 225, ծնթ. 157): Հնարաւոր է, որ այն Բունունիք գաւառում է եղել, Ջերմ (Արեւելեան Տիգրիս) գետից հարաւ: [էջ 117]

<sup>185</sup> Առնոս լեռը Տաւրոսի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներից է (3550 մ), որով բաժանուում են Վասպուրական նահանգի հարաւ-արեւմտեան Ռշտունիք (հիւսիսում) եւ Առնոյտն (հարաւում) գաւառները: [էջ 117]

<sup>186</sup> Բնագրում այստեղ՝ Մաղիազան է (որից փորձում են վերականգնել՝ Մաղիսազան), բայց պարագրաֆ 89-ում հէնց՝ Մաղիազան: Մերոպ Տէր-Մովսիսեանի ծանօթագրմամբ՝ «Թուում է ինձ նոյնը ինչ որ ուսաբարտէզների վրայ նշանակուում է "Маглазанъ" = Մահլազան անունով. Խոյից (Հերից) մօտ 15 վերստ հիւսիս արեւելք, դաշտում, Կոտորի գետի

ճիւղերի միջեւ» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 69, տողատակ 1): Տեղում այժմ էլ կայ գիւղ, որ կոչուում է Մաղիա: [էջ 118]

<sup>187</sup> Մեր բնագրի այս եզակի վկայութեան մասին Մերոպ Տէր-Մովսիսեանն ունի հետեւեալ ղիտարկումը. «Սմբատի յունաց կայսրից թագ ստանալը նորութիւն է եւ նոր ստեղծուած, որովհետեւ ներկայացնում է ժամանակագրական խոշոր տարբերութիւն: Աշոտ Բագրատունին վախճանուել է 889 թուին, հետեւեալ 890 թուին թագ է կապում նրա որդի Սմբատը եւ թագաւորում մինչեւ 914 կամ 915 թ.: 888-912 թուերին Բիւզանդիոնի գահի վրայ բազմել էին Բարսեղ կայսեր երկու որդիներ՝ Լեւոն եւ Ալէքսանդր, մինչդեռ Ռոմանոսը կայսր է դառնում 920-944 թ.: մի տարի առաջ՝ 919 թ. կայսերակից հրատարակելով Միրանաձին Կոստանդինի կողմից: Ժամանակագրական աչքի ընկնող խոշոր հեռաւորութիւնը կարելի է զանազան ձեւով բացատրել, կամ կայսրերի անուններն են շփոթել, կամ Սմբատի թագ ստանալու փաստն է մտացածին: Մենք համակիր ենք հաւանական համարել անունների շփոթութիւն: Թէեւ այդ դէպքում պիտի ընդունենք, որ Շապուհը իւր պատմութիւնը հասցրել է մինչեւ գոնէ 920 թիւը, երբ Ռոմանոսն արդէն կայսր էր եւ Շապուհը գիտէր այդ բանը» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ XXIII-XIV): Համտ. նաեւ վերեւում, մեր ներածութեան մէջ, էջ 38-39): [էջ 118]

<sup>188</sup> Բնագրում՝ գայք, որ Մերոպ եպիսկոպոսն ուղղել է՝ գՏայք (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունու, էջ 65, տողատակ 9). Համտ. պարագրաֆ 101-ում. «ընդ ամենայն աշխարհն Հայոց եւ Վրաց եւ Աղուվանից եւ Տայոց»: Տայքը Մեծ Հայքի 14-րդ նահանգն էր (ըստ «Աշխարհացոյց»-ի), որ հիւսիսից սահմանակից էր Գուգարք նահանգին (Դ դ. վերջից՝ Վիրքի կազմում), արեւելքից՝ Այրարատին, հարաւից՝ Բարձր Հայքին, արեւմուտքից՝ Եգերաց աշխարհի Խաղտիք երկրամասին: [էջ 118]

<sup>189</sup> Աղուանքը (բնագրում այստեղ՝ գԱղվանք, իսկ պարագրաֆ 101-ում՝ Աղուվանից) Հայաստանի հարեւան ու բախտակից երկիրն էր հիւսիս-արեւելքում (Կուր գետի եւ Կովկասեան լեռների միջեւ), որի հինաւուրց մայրաքաղաքն էր Կապադակը: Այստեղ Թ դ. վերջին թագաւորութիւնը վերականգնուել էր Համամ (նաեւ՝ Յովհաննէս) Բարեպաշտ Բագրատունու գլխաւորութեամբ եւ Շաքի մայրաքաղաքով: [էջ 118]

<sup>190</sup> Վրաց դաշտ էր կոչուում այն շրջանը, որի կենտրոնն էր Յուրտաւ քաղաքը. վերջինս երբեմն Գուգարքի բզեչխների կենտրոնատեղին էր Խրամի եւ Մաշաւերայ գետերի միախառնուելու վայրում: [էջ 118]

<sup>191</sup> Փարիսունքն, անկասկած, Քուստի-Փառնէսը կամ Փառիսոսն էր, որ Արցախ նահանգի 12-րդ, հիւսիս-արեւմտեան գաւառն էր՝ հզօրացած ժ. դ. սկզբում, Սահակ Սեւադայ Առանշահիկ իշխանի օրօք: Իշխանութեան (ժ դարի երկրորդ կէսից՝ թագաւորութեան) կենտրոնը նոյնանուն Փառիսոս քաղաքն էր, որի տեղում այժմեան գիւղը կոչուում է Ղալաքենդ: Ստորեւ, պարագրաֆ 126-ում նշուած է Փառիսոս ձեւով: [էջ 118]

<sup>192</sup> Այս Աշորնիքի (բնագրում՝ Աշորնիս) տեղը հնարաւոր չի եղել հաստատապէս պարզել: Արդեօ՞ք կարելի է ենթադրել նախորդ տեղանուն վերջին ք-ի օգնութեամբ (բնագրում՝ «ղփարիսունք և աշորնիս») «Քաշունիս» ձեւով վերականգնման հնարաւորութիւնը: Մետրոպ եպիսկոպոսն առանց բացատրութեան սրբագրելի ձեւ է ընդունում՝ զԱշորնիս (նոյնը նաեւ՝ История Анонимного повествователя, էջ 159): [էջ 118]

<sup>193</sup> Արեւիքը (բնագրում՝ զԱրեիս) Սիւնիքի 11-րդ գաւառն էր, որի տարածքը համապատասխանում է ներկայիս Մեղրի շրջանին: [էջ 118]

<sup>194</sup> Բաղքը (բնագրում՝ զԲաղս) Սիւնիքի 9-րդ գաւառն էր, որը մօտաւորապէս համընկնում էր ներկայիս Կապանի շրջանի տարածութեան արեւելեան մասին: Ժ. դ. վերջերին Սիւնիքը դարձաւ թագաւորութիւն և կոչուում էր նաեւ Կապանի կամ Բաղաց թագաւորութիւն: [էջ 118]

<sup>195</sup> Պարտաւ քաղաքը, որն այստեղ կոչուած է «աւան» (պարագրաֆ 100-ում այն յիշատակուած է «յաւանդ քաղաքաց» ձեւով, որ ընկալում ենք իբրեւ «քաղաքաւան»), Ուտիք նահանգի եւ ապա ողջ Աղուանից մարզպանութեան մայրաքաղաքն էր: Ուշ միջնադարում եւ այժմ կոչուում է Բարդա: [էջ 118]

<sup>196</sup> Փայտակարանը Մեծ Հայքի Համանուն նահանգի կենտրոնն էր: Նահանգը, որ կոչուում էր նաեւ՝ Կասպք, Կասպից ծովից տարածւում էր Կուրի եւ Երասխի հարաւային ափերով մինչեւ Ուտիքի եւ Արցախի դիմացի ափը: Փայտակարան քաղաքը յիշուած է լոկ վաղ միջնադարում եւ գտնւում էր Երասխի՝ առանձին դէպի ծով հոսող հին հունից հարաւ: Այլ ուշ երկերում Փայտակարանը երբեմն շփոթուել է Պարտաւ քաղաքի հետ, իսկ թո՛վմա Արծրունին (գլ. Գ.թ) եւ այստեղ մեր պատմիչն այն նոյնացրել են Տփիսիսի հետ (հմմտ. R. W. Thomson, *The Anonymous Storyteller*, էջ 218, ծնթ. 199): [էջ 118]

<sup>197</sup> Վայոց ձորը (մեր բնագրում երկիցս՝ Վայոյ ձոր) Սիւնիք նահանգի 3-րդ գաւառն էր: Այստեղ իշխող Սիւնեցի նախարարական տոհմի մի

նիւղը հզօրացաւ արաբական տիրապետութեան թուլացման պահին: Արաբները նրանց իշխանութիւնը կոչում էին՝ Վայգոր, բիւզանդացիները՝ Բայձոր: Իսկ աւատական մասնատուածութեան շրջանում գաւառի Եղեգիս աւանում հաստատուեց Սիւնեաց թագաւորութեան աթոռանիստերից մէկը: [էջ 118]

<sup>198</sup> Նախիջեւանը (ձեռագրում այստեղ՝ Նախջւան) վաղ բնագրերում հանդէս է գալիս՝ Նախճաւան կամ Նախճուան անուանաձեւերով, որոնց յարում է մեր երկում ստորեւ (պարագրաֆ 100) առկայ Նախջեւան՝ ըստ ամենայնի, հեղինակային տարբերակը: Է դարի «Աշխարհացոյց»-ի տեղեկութեամբ՝ դա Վասպուրական նահանգի 34-րդ գաւառն էր՝ նոյնանուն քաղաքով: Համապատասխանում է այժմեան Նախիջեւանի շրջանին: [էջ 118]

<sup>199</sup> Երնջակ ամրոցը (բնագրում՝ Երոնջակ) գտնւում էր Սիւնիքի նոյնանուն գաւառում, բարձրաբերձ ժայռի գագաթին, որն այժմ կոչուում են Ալիճջաղաղ: Լեռան տակ հոսում է Արաքսի Երնջակ վտակը: [էջ 118]

<sup>200</sup> Այս Աղաշկերտը հին Վաղարշակերտ քաղաքի հետագայ անուանաձեւն է, որն այսօր հնչում է՝ Աղաշկերտ: Գաւառը կոչուում էր Բագրեւանդ (Այրարատ նահանգի 6-րդ գաւառը): [էջ 118]

<sup>201</sup> Վաղարշաւան քաղաքը գտնւում էր Այրարատի Բասեն գաւառում, որը տարածւում էր Բագրեւանդից հիւսիս-արեւմուտք, Երասխի երկու ափերին: [էջ 118]

<sup>202</sup> Ապահունիքը Տուրուբերան նահանգի 14-րդ գաւառն էր, որ գտնւում էր Վանայ լճից հիւսիս-արեւմուտք եւ հասնում էր Արածանի գետին Մանաղկերտ քաղաքի շրջանում՝ հիւսիսից սահմանակցելով Բագրեւանդին: [էջ 118]

<sup>203</sup> Հարքը Տուրուբերանի 9-րդ գաւառն էր, որ համապատասխանում էր այժմեան Բուլանըխի շրջանին Արածանի հովտում՝ տարածուելով Ապահունիքից արեւմուտք: [էջ 118]

<sup>204</sup> Տարօնը Տուրուբերանի 3-րդ գաւառն էր. տարածւում էր Արածանի միջնահովտում, Տաւրոսի լեռներից հիւսիս: Կենտրոնը Մուշ քաղաքն է: [էջ 118]

<sup>205</sup> Բնագրում «զամրոցն Խլաթայ»: Խլաթ խոշոր քաղաքը գտնւում էր Տուրուբերան նահանգի Բզնունեաց գաւառում, Վանայ լճի արեւմտեան ափին: Ստորեւ յաճախ գրուած է նաեւ՝ Ղլաթայ: [էջ 118]

<sup>206</sup> Առբերան-Առբերանի գաւառը Վասպուրականի 7-րդ գաւառն էր՝ Վանայ լճի Հիւսիս-արեւելեան եզերքում: Այս գաւառում յայտնի էին Բերկրի քաղաքը եւ Առեստաւանը (Հմմտ. վերելում, ծնթ. 171): [էջ 118]

<sup>207</sup> Հետեւելով հրատարակչին (էջ 65)՝ թարգմանաբար դնում ենք Սմբատ Ա-ի տէրութեան ծաւալման մասին Դրասխանակերտոցու խօսքը. «Եւ այսպէս ձգուելով բազմապատկեց իր տէրութեան սահմանը Հիւսիս-արեւմուտքից մինչեւ Կարին քաղաքը եւ Կղարջքից էլ այն կողմ՝ քերելով [հպուելով] մինչեւ Մեծ [=Սեւ] ծովի ափը եւ մինչեւ Եգերացիների սահմաններն ու մինչեւ Կովկաս մեծ լեռան ստորոտը, [գրաւելով] Գուգարացիներին [=Կախէթ] եւ Ծանարներին՝ [ընդհուպ] մինչեւ Ալանաց դուռը, իրեն պահեց նաեւ նրանց դռան պահակակէտային ամրոցը [=Դարիալ], եւ այնտեղից [իջնելով] դէպի հարաւային կողմը՝ Կուր գետով մինչեւ Տիխիս քաղաքը, նաեւ՝ Ուտիք գաւառը [նահանգը] մինչեւ Հունարակերտ քաղաքը եւ մինչեւ Տուս [=Տաւուշ] ու Շամքոր»: Նրա տէրութեան սահմաններն աւելի ընդարձակ էին ըստ «Կոնդակ Ս. Աղբերկայ վանից Մշոյ» կոչուած բնագրի տուեալների (տե՛ս «Արարատ», 1905, էջ 551-559; Գ. Կար. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Հտ. Ա /Ե դարից մինչեւ ԺԸ դար/, Անթիլիաս, 1951, էջ 179-188): [էջ 118]

<sup>208</sup> Արճեշ քաղաքը Տուրուբերան նահանգի Աղիովիտ գաւառում էր, Վանայ լճի Հիւսիս-արեւմտեան ափին: [էջ 119]

<sup>209</sup> Այրարատ նահանգի Ծաղկոտն (բնագրում՝ Ծաղկիտուն) գաւառի խոշոր բնակավայրերն էին Զարեհաւանը եւ Շահապիվանը: Վարչակի հանքային աղբիւրների մօտ Արչակունիների ամառանոցն էր, ուր լինում էին Հայոց աշխարհաժողովները եւ Նաւասարդի տօները: [էջ 119]

<sup>210</sup> Երկրանուան համար տե՛ս վերելում, ծնթ. 78: [Երկու հասցէատիրոջ յիշատակող այս ուշագրաւ նշումը («պարտ է ձեզ ձայն ի Խորասան ընկենուլ եւ առ իս») աւելի շատ զուգորդում է Ժ գ. երկրորդ կէսի իրողոյթների հետ, երբ կենտրոնական Իրանում հզօրացած Բուվեյհյանների (Բուիդեան) իշխանապետութիւնն ստանձնել էր Խալիփայութեան փաստացի կառավարումը (945-ին Բաղդադին տիրելուց յետոյ), պայմանաւորուածութիւն կնքել Բիւզանդիայի հետ (981-ին) եւ լուրջ դերակատարում ունէր Այսրկովկասում: Օր.՝ ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ նրանց հետ էր կապուած Սիւնեաց արքայի թագադրումը («...ժանուցանեն մեծի սուլտանի՛ս Խորասանու, եւ հրաման առեալ ի նմանէ՛ թագ կապեն... Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»։ Պատմութիւն նահանգին Սիսական. Արա-

րեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքայիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, գլ. ԾԵ, էջ 300), իսկ ըստ Մովսէս Դասխուրանցու՝ Փառխոսինը («գվաղնջուց խափանեալ թագաւորութիւնն Տէր ամենակալ ի ձեռն նորա [ձեռ. a սորա, =Յովհաննէս-Սեմեքերիմի] նորոգեաց. զոր թագաւորն Պարսից մեծամեծ [ce յոյժ մեծամեծ, l շքով եւ մեծամեծ] զարդուք զարդարեաց զնա. տայ նմա եւ զթագ հաւր իւրոյ եւ զնորին երիվարն. ի նոյն ամի եւ որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ եւ ի գովեստ աստուածայաջող առն [bcel առնն] այնորիկ»։ տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983, գլ. Գ.իբ, էջ 341) - Խմբ.): [էջ 120]

<sup>211</sup> Այս Ապուսրիվանի մասին հեղինակը միայն քիչ ստորեւ է նշում (պարագրաֆ 90-ում), որ նա Արծրունի տոհմից էր: [էջ 121]

<sup>212</sup> Տեղանուան համար տե՛ս վերելում, ծնթ. 186: [էջ 121]

<sup>213</sup> Ստորեւ նոյն իշխանի անունը երկիցս գրուած է Իզուն ձեւով (պարագրաֆ 94 եւ 107): Ըստ Հր. Աճառեանի՝ իրանականից փոխառուած Յազդ անձնանունն է (Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, Հտ. Գ, Եր., 1946, էջ 481): Այդ դէպքում ակնառու է մեր հեղինակի կամ գրչի համար սովորական Տ-Դ սխալագրութիւնը: Սակայն իբրեւ հնարաւոր անուանատարբերակի տարրեր պահպանում ենք ե՛ւ Ի-ն, ե՛ւ տ-ն, ե՛ւ երկրորդ ա-ն: [էջ 122]

<sup>214</sup> Բնագրում այստեղ՝ «ի ամրոցին Ագարակայ», իսկ երկու տող ստորեւ՝ «ի բերդն Ագարագայ» (հեղինակի կամ գրչի համար սովորական Կ-Գ սխալագրութեամբ): Ագարակի բերդը, հաւանօրէն, ձահուկ գաւառի տարածքում էր (Հմմտ. վերելում, ծնթ. 158): [էջ 122]

<sup>215</sup> Բնագրում «ի Կոստրոն ամրոցն մեր»: Անձահիձոր գաւառի Կոստր ամրոցի մասին տե՛ս նաեւ վերելում, ծնթ. 140 եւ 157: [էջ 123]

<sup>216</sup> Ծրպայ Սուրբ Խաչ վանքը գտնուել է Աղբակ գաւառում, նրա Հաղամակերտ կենտրոնից ոչ հեռու: [էջ 124]

<sup>217</sup> Այս 26 տարուայ նշումը («ԻՁ.»), եթէ վստահենք նրա՝ հեղինակային լինելուն, այլ ոչ թէ համարենք գրչական ինչ-որ վրիպման արդիւնք, անշուշտ, ժամանակավրէպ է: Հմմտ. նաեւ հրատարակչի ծանօթագրութիւնը (որի առաջին դրոյթին, իհարկէ, դժուար է համաձայնել)՝ «Անհասկանալի է, Սմբատ, թէ՞ Ապուսրիվանը Վասպուրականին տիրե-

ցին ԻԶ տարի: Ձեռագրիս պատմածից՝ եւ ոչ մէկը, ուրեմն սխալ է ԻԶ» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ 71, տողատակ 26): [էջ 124]

<sup>218</sup> Բնագրում՝ «ի Միջագետս Ասորոց»: Սա Եփրատի եւ Տիգրիսի միջեւ ընկած Միջագետք երկրամասի վերին (Հիւսիսային) մասն է, որի կենտրոնն է եղել Ուռհա - Եդեսիա քաղաքը, աւելի ուշ՝ Ամիդը: [էջ 124]

<sup>219</sup> Սմբատ Ա-ի դէմ պատերազմած՝ Միջագետքի տիրակալն իրականում եղել է ոչ թէ Հաբիբ իբն Սալիբը, այլ Ահմէդ իբն Իսան: Մ. Դարբինեան-Մելիքեանի ենթադրութեամբ՝ պատմիչը վերջինիս շփոթել է արաբների 653-654 թթ. արշաւանքի զօրապետ Հաբիբ իբն Մասլամայի հետ (տե՛ս История Анонимного повествователя, էջ 24-25): [էջ 124]

<sup>220</sup> Բնագրում՝ «յաւանդ քաղաքաց». ոռւսերէն եւ անգլերէն թարգմանողներն ընկալել են «յաւագ քաղաքաց» (տե՛ս История Анонимного повествователя, էջ 170-171; R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 222, ծնթ. 223), բայց մենք ընկալում ենք՝ «քաղաքաւանդ» (իսկ դ որոշիչ յօդի իմաստն է՝ «որ հիմա քո ձեռքին է»): [էջ 125]

<sup>221</sup> Մատենագրութեան մէջ Դուինի անուան տարածուած գրելաձեւն է նաեւ՝ Դվիւն. այս հատուածում Թվիւն է՝ մեր հեղինակի կամ գրչի համար սովորական Դ-թ խօսուածքային սխալագրութեամբ: Քաղաքը հիմնադրուեց Հայոց Արշակունի արքայ Խոսրով Բ Կոտակի օրօք (330-339) եւ դարձաւ երկրի մայրաքաղաքը, ապա Սասանեան մարդպանանիստը (460-ական թթ.) եւ Խալիփայութեան Արմինիյա ոստիկանութեան կենտրոնը: Բագրատունեաց թագաւորները բազմիցս փորձեցին այն վերանուաճել արաբ ամիրաներից ու այնտեղ վերահաստատել Հայոց նոր պետութեան մայրաքաղաքը (Սմբատ Ա-ի նման ճիգերի մասին ակնարկում է մեր երկի այս հատուածը), մինչեւ որ, ի վերջոյ, 961 թ. այդպիսին հռչակուեց Անին: Դուինի աւերակները փոռուած են Արտաշատի շրջանի վերին Արտաշատ եւ Հնաբերդ գիւղերի միջեւ: [էջ 125]

<sup>222</sup> Արծկէ աւանը (բնագրում՝ Արձկէ) գտնուում էր Տուրուբերանի Բզնունիք գաւառում, Վանայ լճի Հիւսիս-արեւմտեան ափին: [էջ 125]

<sup>223</sup> Այստեղ Մացկերտ անուանաձեւով կոչուած է, անշուշտ, Հայոց Մանգկերտ քաղաքը (բիւզանդական աղբիւրներում՝ Մանցիկերտ), որը գտնուում էր Տուրուբերան նահանգի Ապահունիք գաւառում, Արածանիի ձախ ափին: [էջ 125]

<sup>224</sup> Մոսկի դաշտը, եթէ այդ անունն աղաւաղուած է, հաւանօրէն, գտնուել է Վանայ լճի արեւմտեան ափերին, Խլաթ քաղաքի շրջանում. ընդ որում այս աղբիւրից դուրս վկայուած է: Ստորեւ (յաջորդ պարագրաֆում) դաշտանունը գրուած է Մոսկի ձեւով: [էջ 126]

<sup>225</sup> Բնագրում՝ «ընդ Թխաշուրն»: Վերելում յիշուած էր իբրեւ Դատվանի մօտերքով հոսող գետ (տե՛ս ծնթ. 152): [էջ 126]

<sup>226</sup> Բնագրում՝ «ի յամրոցն Խողցայ»: Ռշտունեաց գաւառում գտնուած այս բերդն այլ աղբիւրներում կոչուած է Հողց: [էջ 126]

<sup>227</sup> Ռշտունիքը (այս երկում մշտապէս՝ Ռըշտունիք, իսկ այստեղ՝ Ը-որշտունիք) Վասպուրական նահանգի առաջին գաւառն էր եւ Ռշտունեաց իշխանատոհմի տիրոյթը: Երկար ձգուած էր Վանայ լճի հարաւային եւ հարաւ-արեւելեան ափերին: [էջ 126]

<sup>228</sup> Մեսրոպ եպիսկոպոսի ուշադրաւ դիտարկմամբ՝ «Ձեռագրի մէջ գտնում ենք միայն մի քանի տարեթիւ... Երկրորդ անգամ՝ «Եւ էր թուականն Հայոց ԳՃԿԲ. եւ տիրեաց Գագիկ տեղապահութեամբ Վասպուրականի»: Սա էր Սմբատ Բագրատունու քրոջ որդին: Մի քանի անգամ յիշատակուած են իշխողների տարիների քանակը. «Մոյրիկէս կալաւ զթագաւորութիւնն Հորոմոց ամս ԻԶ». «Եւ կացեալ Պատրիկն ամս Զ եւ վաղճանեցաւ». եւ այլն: Ակներեւ է, որ գրքի հեղինակը ամենեւին կարեւորութիւն չի տւել ժամանակագրական տւեալներին» (տե՛ս Պատմութիւն Օսպիոյ Բագրատունւոյ, էջ XVIII): Բոլոր դէպքերում պարզ է, որ այս 913 ([Գ]ՃԿԲ) թուականը չի կարող վերաբերուել Գագիկի իշխանութեան հաստատմանը, քանի որ նա թագաւոր հռչակուեց դեռ 908-ին: [էջ 129]

<sup>229</sup> Ներկայիս Արդեբիլ քաղաքը հայ մատենագրութեան մէջ կոչուում էր Արտաւէտ (երկի այս հատուածում՝ Արդաւէտ՝ գուցէ, հեղինակի կամ գրչի համար սովորական Տ-Դ սխալագրութեամբ, բայց պարագրաֆ 121-ում արդէն սովորական տ-ով): Որոշ ժամանակաշրջաններում եղել է Իրանի Ատրպատական երկրամասի վարչական կենտրոնը: [էջ 129]

<sup>230</sup> «Բանդար»՝ այստեղ, հաւանօրէն՝ զօրապետի կոչումն է. մի տող յետոյ՝ «տեսուչ զօրաց»: Հր. Աճառեանը կարծում էր՝ «մեծ», «նշանաւոր» (տե՛ս Հայերեն նոր բառեր Շապուհ Բագրատունւոյ պատմութեան մէջ, «Բազմավէպ», 1922, էջ 181-182), սակայն երեւի հետագայում կասկածել է եւ «Արմատական»-ում չի բերել: Հմմտ. նաեւ R. W. Thomson, *The Anonymous Story-teller*, էջ 224, ծնթ. 235: [էջ 130]

<sup>231</sup> Սրաւ քաղաքը (աւելի տարածուած անունաձեւերն են՝ Սերաւ, Սարաւ, Սարաք) գտնուում էր Իրանի Ատրպատական երկրամասի Հիւսիսում: [էջ 130]

<sup>232</sup> Գնայ դաշտը (Գին կամ Գուն արմատից) պէտք է տարածուած լինէր պատմական Արտաշատի արեւմտեան սահմաններից ոչ հեռու, այժմեան Խոր-Վիրապի բլրից արեւմուտք: Հմմտ. նաեւ История Анонимного повествователя, էջ 227, ծնթ. 183: [էջ 133]

<sup>233</sup> Դատուր Արեւմտեան Վրաստանի («Ափխազաց») թագաւոր Կոստանդինն է (894-929): Մ. Դարբինեան-Մելիքեանի ենթադրութեամբ՝ պատմիչի մօտ Դատուս անունն տակ հանդէս է գալիս 988 թ. Սմբատ Բ արքայի (977-990) եւ Դաւիթ կիրոպաղատի դէմ պատերազմած Թէոդոս Գ Ափխազաց թագաւորը (История Анонимного повествователя, էջ 25 եւ 228, ծնթ. 185, նոյնը տե՛ս R. W. Thomson, The Anonymous Story-teller, էջ 227, ծնթ. 242), սակայն դա խիստ թէական է թւում: [էջ 133]

<sup>234</sup> Շիրակը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Գ-րդ գաւառն էր, որ տարածուում էր Ախուրեան գետի երկու ափերին եւ որտեղ գտնուում էին Անի, Կարս, Երազգաւորս, Կումայրի նշանաւոր բնակավայրերը: [էջ 133]

<sup>235</sup> Կանգարքը Գուգարք նահանգի արեւմտեան հատուածի գաւառներից էր, որ յիշատակում են նաեւ Խորենացին, Փարպեցին, «Աշխարհացոյց»-ը եւ վրացական աղբիւրները: [էջ 133]

<sup>236</sup> Գոգչէնը «Աշխարհացոյց»-ում չյիշուած գաւառակ էր, որ տեղադրում է Կուրի աջ ափին, Թմուկ-Թմոզի ամրոցի դիմաց: Պարագրաֆ 130-ում գաւառանունը կրկնուած է վրիպեալ՝ Գոթշէն ձեւով: [էջ 133]

<sup>237</sup> Զայլցեղ, հաւանօրէն, այլուր չյիշատակուած գաւառակ էր, որ Գոգչէնի մօտերքը պէտք է լինէր: Ոմանք համարում են Ախալցխիսէ-Ախալցխայի հետ (վերականգնելով՝ զԱլլցեխ): [էջ 133]

<sup>238</sup> Զեռագրում այստեղ գրչական պարզ վրիպակով է՝ Կոչ (բոլորագիր ղ եւ չ տառերի նմանութեան պատճառով): Նոյն կարգի վրիպակով է նաեւ ստորեւ, պարագրաֆ 130-ում՝ զԿոզ: Կողք Տայքի Հիւսիս-արեւելեան գաւառն էր՝ Գուգարքի Արտաշան գաւառից հարաւ: «Աշխարհացոյց»-ը նշում էր, որ Կուրը սկիզբ է առնում Կող գաւառից: [էջ 133]

<sup>239</sup> Արտաշանք-Արղահանք Գուգարքի նահանգի արեւմտեան հատուածի գաւառներից էր՝ տարածուած Կուրի երկու ափերին: [էջ 133]

<sup>240</sup> Բնագրում այսպէս՝ Նախագաց կոչուած երկիրն այլուստ անծանօթ է. թերեւս, գործ ունենք աղաւաղուած անղանուան հետ (Հմմտ. R. W. Thomson, The Anonymous Story-teller, էջ 227, ծնթ. 243): [էջ 134]

<sup>241</sup> Բնագրում՝ Գաւրին: Երկիցս նշուած այս տեղանունը, գուցէ, կարելի է հետագայ գրչի յաւելում համարել, քանի որ ըստ Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» (Վաղարշապատ, 1896, էջ 356)՝ Գօրի քաղաքը Հինաւուրց Ուրիւս-ցիլիկից ոչ հեռու կառուցուել է միայն ժԲ դարում (Հմմտ. История Анонимного повествователя, էջ 29-30): [էջ 134]

<sup>242</sup> Աղձնիքը (այստեղ բնագրում՝ Աղձնեց) Մեծ Հայքի նահանգներից երրորդն էր եւ բշեշխական տիրոյթ. տարածուում էր Մոփքից արեւելք, Տաւրոսի լեռների եւ Տիգրիս գետի միջեւ: Այս ենթատեքստում խօսքը Տարօնի Բագրատունիների մասին է, որոնց տիրոյթների մէջ էր մտնում նաեւ Աղձնիքի լեռնային մասը (թէպէտ առանձին յիշուած է նաեւ Տարօնի Գագիկ իշխանը): Մանրամասն տե՛ս Գ. Գրիգորեան, Տարօնի Բագրատունիների Փէոդալական իշխանութիւնը IX-XI դարերում, Եր., 1983: [Հմմտ. նաեւ վերջին աշխատանքը. Ա. Եղիազարեան, Տարօնի Բագրատունիների իշխանութիւնը IX դարում եւ X դարի սկզբին, - Բե՛Հ. Հասարակական գիտութիւններ, 2009, հ<sup>ր</sup> 1, էջ 74-85 - Խմբ.] [էջ 134]

<sup>243</sup> Գորոզու կամ Գոռոզ (մեր բնագրում սեռական հոլովով՝ Գորոզ-վա[ւ]) ամրոցը գտնուում էր Արցախի Միւս Հաբանդ գաւառում, հետագայի Դիզակի մելիքութեան տարածքում, որտեղ յայտնի էր նաեւ Հինաւուրց հոգեւոր կենտրոն Ամարասը: Այս նոյն անունով կոչուած գաւառի եւ իշխանութեան (Ժ գ. վերջից՝ թագաւորութեան) միւս կենտրոնն էր Քթիչ անառիկ բերդը, որ գտնուում էր մելիքանիստ Տող աւանի թիկունքում յառնող լեռան գագաթին: Գորոզու բերդը փնտրում են սրանից արեւմուտք, այժմեան Տումի գիւղի շրջակայքում: [Գորոզուի իշխանութեան եւ թագաւորութեան մասին վերջին ուսումնասիրութիւնները տե՛ս Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիճակագրական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 61-63, 281-282; Արցախի Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում (աղբիւրագիտական դիտարկումներ), - «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԵ տարի, 2011; Ա. Եղիազարեան, Հայոց Սմբատ Ա թագաւորի ափխազական արշաւանքը, - ԼՀԳ, 2010, հ<sup>ր</sup> 1-2, էջ 122-126 - Խմբ.] [էջ 134]

<sup>244</sup> Առայժմ դժուար է ասել, թե Հայաստանի ո՛ր իշխանն է թաքնուած մեր բնագրի այս «Ճողբաց իշխանի» տակ (Հաւանաբար՝ էապէս աղաւաղուած): Կարծում ենք, որ անուան որոշ նմանութիւնը բուն-աղուանական ճիղբը ցեղագաւառին (Կուր գետից Հիւսիս, Շամախու շրջանում), չպէտք է շտապողական ենթադրութիւնների տեղիք տայ: [Նախորդ՝ «Տայոց իշխան Գոռամ»-ի համար հմտ. վերջին աշխատանքում Ա. Եղիազարեան, Տայքի իշխանութիւնը հայ Բագրատունիների տէրութեան համակարգում, - ՊԲՀ, 2008, հ<sup>ր</sup> 3, էջ 197-208 - Խմբ.] [էջ 134]

<sup>245</sup> Կորդուքը (այստեղ բնագրում՝ Կորդվաց) Մեծ Հայքի ամենահարուստին Կործայք նահանգի առաջին գաւառն էր (Մոկք նահանգից հարաւ): Երբեմն այդպէս էր կոչուում նաև ամբողջ Կործայքը: [էջ 134]

<sup>246</sup> Բնագրի այս «քաղվածն» բառն անհասկանալի է, գուցէ՝ աղաւաղուած. հրատարակիչը կարծում է, թէ կարելի է հասկանալ՝ «ներքինի», «կուրտ» կամ «յատուկ անուն» (Պատմութիւն Օսպիոյ Բագրատունոյ, էջ 83, տողատակ 28): Հմտ. նաև Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր Շապուհ Բագրատունու պատմութեան մէջ, - «Բազմավէպ», 1922, էջ 271; История Анонимного повествователя, էջ 229, ծնթ. 205; R. W. Thomson, The Anonymous Story-teller, էջ 228, ծնթ. 247: [էջ 137]

<sup>247</sup> Մանգաւաւան բերդանունը, եթէ այն աղաւաղման արդիւնք է, այլուստ ծանօթ է. ենթադրում է, թէ խօսքը Վասպուրականի մի ամբողջի մասին է: Արդեօ՞ք այստեղ կարելի է ենթադրել Թովմա Արծրունուն յայտնի՝ Անձեւացիք գաւառի Կանգաւար բերդանուն վերականգնման հնարաւորութիւնը: Հատուածի բովանդակութիւնից լոկ երեւում է, որ Մանգաւաւան ամբողջը կա՛մ յարմար, կա՛մ բաւարար չի եղել՝ աւելի մեծ ակնկալիքներ ունեցած Վասպուրականի իշխանի համար: [էջ 138]

<sup>248</sup> Բզնունեաց ծովը Վանայ լիճն է: Բզնունեաց գաւառը լճի արեւմտեան ափերին էր (Տուրուբերան նահանգի կազմի մէջ): [էջ 138]

<sup>249</sup> Ամիւկ կամ Ամիկի բերդը (բնագրում՝ Ամկոյ) գտնուում էր Վասպուրական նահանգի Առքերանի կոչուող գաւառում՝ Վանայ լճի Հիւսիս-արեւելեան ծայրամասում. դիմացը Լիւմ կղզին է, իսկ Ամիկի շրջանն այժմեան Թիմարն է: Նախորդ տողում նշուած Աղիովիտ գաւառը (Վանայ լճի Հիւսիսային ափերին. բնագրում վրիպակով՝ Աշոտի) արեւմուտքից յարում էր Առքերանին, սակայն ըստ «Աշխարհացոյց»-ի՝ մաս էր կազմում Տուրուբերան նահանգի: [էջ 138]

<sup>250</sup> Այս Արեստ գետը (բնագրում՝ «գետն Արեստոյ. յիշենք մեր հեղինակի կամ գրչի համար սովորական Ռ-Ր բարբառային սխալագրութիւնը) պէտք է Վանայ լիճը թափուէր նրա հիւսիս-արեւելեան ափերի վերջաւորութեան վրայ գտնուող Առեստաւան յայտնի բնակավայրի մօտերը: [էջ 139]

<sup>251</sup> Ամրեւաքար անունով բերդ այլ աղբիւրներից յայտնի չէ: Ըստ բնագրի՝ նրա տեղն աւելի հաւանական է ենթադրել Վանայ լճի Հիւսիս-արեւելեան ափերին: Մ. Դարբինեան-Մելիքեանի կարծիքով (որն ընդունում է Ռ. Թոմսոնը)՝ այդ անունն աղաւաղուած է եւ վերաբերուել է նոյն Ամիւկ բերդին, որը կարող էր կոչուած լինել նաև Ամիւկաքար (տե՛ս История Анонимного повествователя, էջ 229, ծնթ. 209; R. W. Thomson, The Anonymous Story-teller, էջ 229, ծնթ. 253): [էջ 139]

<sup>252</sup> Այս Ջանդեւաւան տունն այլ աղբիւրներից յայտնի չէ: Այս մահմեդական իշխանութեան (թերեւ՝ Ութմանիկների) անունը որոշ պատահական նմանութիւն ունի Դ դարի «Ջորանամակ»-ում եւ Ղազար Փարպեցու մօտ յիշատակուած Ջանդաղան հայկական իշխանատոհմի հետ, որը երկրի «Արեւելեան [սահմանա]դռան» պաշտպաններից էր (Վասպուրականի արեւմտեան հատուածի իշխանատոհմերը «Հարաւային [սահմանա]դռան» պաշտպանների թւում էին): [էջ 139]

<sup>253</sup> Այս բնագիրը, գուցէ, որոշակիօրէն աղաւաղուած է, որովհետեւ ըստ Թովմա Արծրունու անանուն շարունակողի վկայութեան՝ Վասպուրականի Գագիկ իշխանը (ապագայ թագաւորը) 906 թ. գրաւեց Ամիւկ ամրոցն Ութմանիկ ամիրաններից եւ այնտեղ թողեց Ապուսակր Վահուգեաց իշխանին, որն էլ շուտով «ղաւաճանաբար» յանձնեց այն Սմբատ արքային (գլ. Գ, էջ 280-282): [էջ 139]

# Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ճ Ն Ե Ր

## 1. Զեռագրական հատուած Ծափուի Բագրատունու «Պատմութիւն»-ից «Բազմավէպ»-ում

**Պատմական հասուածք՝ Հանեալի ձեռագրաց կարապետ  
վարդապետի Հաճնազարեանց, որք կարծին գու Հապհայ**\*

Յաւուրս թագաւորին Սմբատայ եկն Յուսուփ ոստիկան ի Հայս եւ միջ-  
նորդութեամբ քարտուղարի իւրոյ Ասորոյ լինի սէր ընդ Սմբատ եւ ընդ Յու-  
սուփ : Բագու՛մ ընծայս եւ թագս յղէ Սմբատայ եւ Հայրապետի Հայոց Յով-  
հաննիսի՛ պարգեւս առատս ըստ արժանւոյն, զոր առաւել <sup>\*\*\*</sup> ուրախացեալ  
արքայ ընդ այնքան ի վերայ իւր պարգեւացն:

Եւ եղեւ խաղաղութիւն աշխարհիս Հայոց եւ շինութիւն: Եւ Հանգուցեայր  
ի Հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմայարդ Հաստաճեղոյս, ձուլեալ  
Հրով <sup>\*\*\*\*</sup> ի մենաստանս եւ յաւանս եւ յագարակս, բայց առաւել եւս քան  
զորով՝ Հայկազանցն գորով <sup>\*\*\*\*\*</sup> իշխանն Գրիգոր եւ նորին եղբարք Սաճակ  
եւ Վասակ, որք Հայրենական սեփականութեամբ տիրէին գաւառացն, որք  
չըջապատեալ կան շուրջ զեզերք ծովակին Գեղամայ, վիճակին ցանկալի  
պտղաառածաղ արգասիք պարարտութեամբ:

Ի վերայ այսորիկ բարեբաստութեանց թագաւորն Հովմայեցոց Լեւոն,  
որպէս սիրելի որդւոյ առաքէ թագ եւ ընծայ թագաւորին մերոյ Սմբատայ:

\* Նիւթը պատրաստել եւ հրատարակել է Վենետիկի Մխիթարեան վարդապետ  
Հ. Ղ. Տայեանը «Բազմավէպ»-ում (1922, էջ 69-70՝ առաջաբան, էջ 70-73՝  
բնագիր): Զեռագրական այս հատուածը հանուած է Ս. Ղազարի վանքի մա-  
տենադարանի ԺԹ դարի մի գրչագրից (տե՛ս վերեւում, էջ 9-10): Որոշ չա-  
փով ուղղել ենք կէտադրութիւնը եւ անհրաժեշտ վերականգնումներ արել:

\*\* Բնագրում՝ Եուսուփ (վերականգնում):  
\*\*\* Գուցէ, կարելի է նաեւ վերականգնելի համարել՝ առեալ փիս առաւել:  
\*\*\*\* Յովհաննէս Դրասխանակերտցու մօտ՝ կրով (տե՛ս Թիֆլիս, 1912, էջ 199):  
\*\*\*\*\* Բնագրում՝ գրով, որ վերականգնում ենք՝ գրով (Հանելով յաջորդող բու-  
թը), թէպէտեւ Դրասխանակերտցու մօտ՝ գրովի է (Թիֆլիս, 1912, էջ 199):

Իսկ Յուսուփայ փոքր ինչ նեղսրտեալ ամիրապետ նորա գրէ Հրաման  
Ս)ը[մբատայ մարտնչել եւ կորուսանել զՅուսուփ <sup>\*</sup>, եւ զի ուխտ սիրոյ կայր  
ընդ Սմբատ եւ ընդ Յուսուփ՝ յայտնի որպէս Հակառակ ամիրապետի ելաներ  
զարաւար ի վերայ Յուսուփայ. բայց ի ծածուկ գրէր առ Յուսուփ յազնութիւն  
զալ նորա եւ ոչ ի պատերազմել: Իսկ Յուսուփ թէպէտ եւ Հաւատայր գրելոյն  
Սմբատայ, սակայն ի սագրելոյ սպրդով <sup>\*\*</sup> շարալեզուաց Հակամէտ ի շարն  
բերիւր, զի մի կործանեցէ զաշխարհ մեր:

Յետ այսորիկ Հաւանական միտս Յուսուփայ սաացեալ եւ ի Հարթայար-  
մար Հնագանդութիւն ամիրապետին բերեալ՝ զպետութիւն կալուածոց նորա  
դարձեալ առ նա նուաճել տային: Եւ դրդմամբ Յուսուփայ ամիրապետն եւ  
Յուսուփ սաստիկացուցանեն զսակ Հարկին տալ Սմբատայ ամիրապետին ի  
մերս աշխարհէ. իսկ արքայ Հնգորդեալ զերկիրն [մ]ի <sup>\*\*\*</sup> մասամբ զոստիկանն  
կուրացուցանէ եւ շորիւք՝ զպէտս զարացն եւ թագաւորութեանն լցուցանէ.  
Իսկ յաշտ նախարարացն յայտ իմն ծանր երեւէր: Ապա ոմն մի մեծ նախարա-  
րացն Հասան անուն յիւր կողմն դարձուցեալ իբրեւ արս Հնգեստասան, նաեւ  
ընդ թագաւորն Վրաց՝ սպանանել զթագաւորն Սմբատ: Իսկ իբրեւ առաքեն  
գաղտագողի սպանանել զՍմբատ՝ յայտնէին իբքն, եւ վաղվաղակի Ատրներ-  
սէճ եւ Հասան Հասանեն յԱնի, եւ զոր ինչ պաճեստի կայր արքայի՛ զամենայն  
յաւարի առեալ գնան: Եւ Սմբատ առեալ զզարս՝ դիմէ ի վերայ նոցա. եւ  
արքայ ոչ տայ թող մեղանչել ոմանց, այլ զՀակառակսն խնդրէ. զոր Ատրներ-  
սէճ իւրովի գայ առ արքայ, եւ զայլ եւս զյրաւարարսն կալեալ՝ զաշտ նոցա  
խաւարեցուցանէ եւ զորքի Ատրներսէճի պատանդ ընդ ինքն բերէ, եւ զԱտր-  
ներսէճ Հաշտ Համբուրի արձակէ: Եւ այսպէս աստուածական նախախնա-  
մութեամբ Հաստատէ զթագաւորութիւն իւր Սմբատ:

Այս Յուսուփ յետոյ կալու զՀայրապետն Յովհաննէս եւ եզ ի բանտի ի  
Դուին. թէպէտ էառ զսակ Հարկին 60.000 դեկան, բայց ոչ լիացաւ: Այս եղեւ  
յ358 [=909 թ.] թուին Հայոց: Այս ոստիկան Յուսուփ սպանանէ զթագաւորն  
Սմբատ եւ զայլ բագու՛մ իշխանս վասն Քրիստոսական Հաւատոյս:

\* Բնագրում՝ գուսուփ (վերականգնում):  
\*\* Բնագրում՝ սպրդոլ (վերականգնում):  
\*\*\* Վերականգնումը՝ հրատարակչի:

Գարձեալ ի Թուահանութեանս Հայոց 358 [=909 թ.], ի Թագաւորութեանն Սմբատայ եւ ի Հայրապետութեան Տեառն Յովհաննիսի, ոստիկանն Յուսուփ եկն ի Հայս. եւ վասն երկիրւոյ աւերման աշխարհիս Հայոց անձնատուր եղեն նմա իշխանքն Հայոց՝ մարզպանն Գուրգէն՝ եղբայր Գագկայ Թագաւորին, եւ Ուսփան՝ սպարապետն Հայոց Աշոտ՝ եղբայրորդի արքային Սմբատայ, եւ Գրիգոր\*\* : Իսկ Յուսուփն անրարի գրմանս սմանս գաղանի դեղաւք մաշացուցանէր, որպէս եւ զիշխանն Գրիգոր Հայկազնի դեղաւք լուծեալ ի կենաց, եւ զԱշոտ՝ քորորդին Սմբատայ Թագաւորին, եւ զքաջ մանուկն Մուշեղ՝ գորդի Թագաւորին, եւ զմանուկ իշխանն Սմբատ նոյն դեղաւք սպան. եւ զսիրուհիս եւ զկանայս նոցա կալեալ ածին ի սող եւ ի գերութիւն:

Իսկ եղբարքն Գրիգորի ՍաՀակ եւ Վասակ, յետ պաւաւաճ լինելոյ եղբար նոցա, զփոյթ պնդութեան յանձինս բարձրացուցեալ եւ փախս առեալ ի նեղչացն գոնէ Հնարս մարթացեն գտանել ամրանալ ի սեպհական ամրոց իւրեանց տերութեանն եւ ոչ փնալ ի գերութիւն յաշխարհ աւարաց, մինչեւ անցեէ բարկութիւն Տեառն: Եւ ապա նաւահառոց լեաք սրաւար Թիահար, իբրեւ ի տապանի ինչ, երթեալ զաւղեալ ամրանային ի Սեւան կղզին Հանդերձ քրիստոսակրան եւ ճգնաւոր մարքն իւրեանց եւ կանամբք եւ որդւովք եւ ազատագունդ բանական. վասն զի ջրաճեղեղ պիտորումս յորձանուտ իսմայէլական Հինից եւս քան զեւս սաստակացալ բախէր զաւազահիմն տուն բնակութեան մերոյ: Իսկ ապա ազդեալ այն կանանցախաւս դառնաճամբոյր Հափարացոյն Յուսփայ՝ զարս գումարէ ի վերայ նոցա: Իբրեւ Հասին յեղր ծովակին Սեւանայ, սուր թշնամոյն պատնէշ պաշարմամբ շուրջ գնդաւք պատեալ: Իսկ ապա ի մաի եդեալ ի միասին սիրելի եղբարցն, գուցէ քումն ինչ նոցա ի թշնամեացն լինիցի եւ ի ջրապատ անգնդոցն ոչ գտանիցի տեղի փախստեան եւ մասնեսցին ի ձեռս Հեթանոսական բռնագատացն եւ նոցա սղմուտ շարութեանն: Եւ այնուհետեւ զձեռս նաւաստեացն զարացուցեալ եւ նաւեալ չուեալ գնացեալ մարքն իւրեանց Հանդերձ եւ առ Հասարակ ընտա-

\* Գուցէ վերականգնելի է Սուփան (փին. Ուսփան)՝ ինչպէս որ պահպանուած է Յովհաննէս Դրասխանակերտցու մօտ (Թիֆլիս, 1912, էջ 214), եթէ, իհարկէ, Ուսփան-ը եւս, իբրեւ վարկած՝ չհամարենք չըջանառու անուանածեւ:

\*\* Այս անունը, թերեւս, կապուած է նախորդող «Ուսփան»-ի հետ (այլուր՝ Գրիգոր-Սուփան), բայց ընդմիջուած է Աշոտ սպարապետի մասին նշումով:

նեաւք եւ ալխիւ եւս, որչափ ձեռն բաւահանացաւ կրել՝ անկանէին Հապճեպիլ յամուր գաւառն Միափորոյ:

Իսկ զարապետն Իսմայէլեան մտեալ ի կղզի ամրոցին՝ զմնացեալ կապուտ աւարին ոչ սակաւ ինչ քան թէ բազումս ի դիպաւոյ թողոյր, եւ ինքն սսպատակ սփռեալ գիմէր կրթէր, անցանէր զՀեա նոցա. որոց ընդ կրունկն դարձեալ եւ ի դիմի Հարեալ թշնամեացն եւ բազում վիրաւորս ի նոցանէ խածատեալ եւ ճարակ սրոյ տուեալ ի փախուստ գնոսս դարձուցանէին. եւ ինքեանք չուեաք՝ երթեալ գնացեալ զաւղեալ դադարէին յանձաւախիտ ամրոցս մայրեացս Գարգմանայ եւ Արցախայ՝ ակնկալեալ այցելութեան Տեառն Աստուծոյ: Անդ Հանդեաւ ի Քրիստոս պարկեշտասուն եւ սրբափայլ կրանիւք մեծն ի ճգնաւորս՝ մայրն նոցա, որ էր քոյր արքային Սմբատայ. որ յետ ամաց դառնալոյ եւ տիրելոյ նոցա ի վերայ սեպհական եւ Հայրենի իշխանութեանն՝ տարեալ Հանգուցանէին զմարմինն նորա ի քնարանի իւրում, մերձ ի ձեռակերտ եկեղեցին իւր ի Հաղուագովի:

Չայս ապա տեսեալ եւ զմտաւ ածեալ թագաւորն Գագիկ Արծրունի Հանդերձ եղբարք իւրով Գուրգէնաւ, իբր թէ ի ձեռանէ նոցա եւ ի կարապետելոյ այս ամպրոպ շարութեան եւ ոճիրք դառնութեան զեղեալ շուրջ զեկեղեցեաւ Քրիստոսի, ապաշխարեցին յապաշխարութիւն մեծ եւ Հրաշացեաք յոստիկանէն գաղաւստի փախեան առ արքայն Սմբատ, որ զաւղեալ էր ի վայրս ձորոյն Երասխայ ի քարանձաւին Կապուտայ ամ մի խաղաղութեամբ:

Եւ յետոյ պաշարեալ զամուրն Իսմայէլեան զարուն: Իսկ զայն տեսեալ արքային Սմբատայ, որ բազում կոտորածք լինէին ի քրիստոնեայս, իբրեւ մաւտալուտ իմն ի դաճճաց խողխողեաք զմարդիկն՝ նպատակի Հանգոյն եդեալ էջ յամրոցէն, ուխտ երգման ընդ նմա եգեալ ոստիկանին, եւ ընկալաւ զՍմբատ սիրով՝ պարգեւեալ նմա բազում ընձայս: Եւ յետոյ ստեալ երգմանն՝ կապեաց եւ եդ ի բանտի ամ մի. եւ ապա բազում շարչարանս եւ անճարին նեղութիւնս ածէին ի վերայ նորա դաճիճքն, եւ զանձեռուցիկն թագաւորական առեալ ի նմանէ՝ կեղտաշորիւք մինչեւ ի սիրան ընտին: Եւ եղեգս ի ծածուկ անդամս վարէին. եւ ապա զգլուխն Հաստանէին եւ զմարմինն ի փայ-

\* Իմա՛ պատմական Ծաղուագայ (կամ՝ Ծողուագ, Ծողուագայ) աւանագիւղը Գեղարքունիք գաւառի Հարաւում (ներկայումս, չգիտես ինչու՝ Զորագիւղ):



տէ կախէին ի Գուին քաղաքի, որ թագաւորեաց ամս 22: Եւ մայր թագաւորին եւ որդի նորա իշխանն ի բանախ մեռան ի Գուին եւ թաղեցան ի գունն եկեղեցւոյն:

Իսկ միւս որդին Սմբատայ Աշոտ բազում ընթացութիւնս եւ քաջութիւնս ցուցանէր եւ պաշէր զբոլոր ամրոցս տէրութեան Հաւր իւրոյ ձեռնառութեամբ իշխանին Գորգունեայ\*, նաեւ թագաւորին Վրաց եւ թագաւորին Գագկայ Վանեցւոյ: Չոր լուաւ զքաջութենէ նորա թագաւորն Յունաց Կոստանդին գրով Հայրապետին Գեորգայ\*\* : Եւ առաքէ զոմն իշխան Թեոփորոս Վասիլիսկոս զկնի նորա. եւ գնացեալ ի Կոստանդինուպոլիս՝ գառնայ ի Հայս թագիւ եւ իշխանութեամբ եւ անթիւ ընծայիւք, որպէս որդի մարտիրոսի եւ սուրբ թագաւորի:

Իսկ յետ տիրելոյ աշխարհիս Հայոց Յուսփայ ժողովեցան առ նա իշխանքն Հայոց, եւ նա ընկալաւ զնոսա եւ շնորհեաց նոցա ընծայս, այլ եւ բազում՝ զգեստս եւ զարդս ոսկեճամուկս եւ ծիրանիս եւ երեւելի լակոնացի եւ բեճեզս նոցա մատուցանէր. եւ կամարս եւ մանեակս ոսկեղէնս եւ նժոյգս սրավարս ճոխապաճոյճս ի զէնս եւ ի զարդս եւ գիրկն զպարանոցաւ արկեալ եւ Հուպ ընդ Հուպ Համբոյր մերձեցուցեալ զնոսա, այսպէս շոգմոքեր շոգմութեամբ բանիւ Հնազանդիլ նորայն բանի: Իսկ նոցա ի բաց զինքեանս նմանէ շոպեալ ճողոպրէին եւ Հապճեպ սուեալ եւ դիմագրաւ դիմեալ առ ընկերս իւրեանց փութային. եւ ոչ Հաւանէին պաշտանի Մակուրան կուրանի գենիցն մաշադեղի, որ եւ ընկալան մարտիրոսութեամբ զպսակն կենաց ի Քրիստոս Աստուծոյ մերմէ:

Գարձեալ միւս անգամ սկսաւ անիծեալն տարապարտ սողիլ զեռալ սպրդել, զանձն ի ներքս արկանել ի Հոգեւոր ցանկապատ այգեստանի Տեառն զաւրութեանց, եւ Հուրն, որ երբեմն արձամարձեցաւ եւ զիջաւ\*\*\*, սկսաւ վերստին արծարծիլ եւ բոցակեղ Հրդեհս մեծամեծս գործել եւ դժբողք խար-

\* Այս Գորգունի (սեռ.՝ Գորգունեայ) անունն այլուստ անծանօթ է մեզ:

\*\* Այստեղ շփոթն ակնյայտ է. Գէորգ Գառնեցի կաթողիկոսը (877-897) ժամանակակիցն էր ոչ թէ Աշոտ Բ երկաթի, այլ նրա պապի՝ Աշոտ Ա-ի: Իսկ իրականում Կոստանդին կայսերը Յովհաննէս Դրասխանակերտցին է դիմել ընդարձակ նամակով, որը եւ բերում է իր երկում (Թիֆլիս, 1912, էջ 272-286):

\*\*\* Հաւանաբար, պէտք է վերականգնելի Համարել շիջալ փխ զիջալ:

դախ գտան քրիստոնէական Հաւատոյս, որ ի Քրիստոս, եւ յարուցեալ Հաւածանս ընդդէմ եկեղեցւոյ սրբոյ՝ արարին իբրեւ զխուղս մրգապաշտաց եւ իբրեւ զանտառս փայտից, եւ այրեցին զսրբութիւն Տեառն ի Հուր, զենին զենումն անարէնութեան եւ զուճեցին զզուճ պղծութեան ի յարկս արդարոց եւ արձամարձեցին զյուսացեալն յԱստուած:

Մրուան ոստիկան եկն յաշխարհս Հայոց եւ ընդ ամենայն ամրոցս մարտեղեալ եւ զորս գրաւեր յինքն՝ քանդէր: Իսկ Սեւան կղզին, որ ի ծովակին Գեղամայ, թէպէտ եւ յսկզբանն նուազի ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ՝ մի ամաց մասնեցաւ ի ձեռս նորա. եւ որ միանգամ բնակեալ էին յամրոցի անդ, գերի առեալ տանէր, եւ զկապուտ կողոպուտն յաւարի առեալ՝ սպառ սպուռ քանդէր եւ աւերէր զամրոցն:

Զկնի Մրուանայ Մաճմէտ, զկնի Մաճմէտի ոստիկան Աբալլա [Վ] եկն ի Հայս. եւ զկաթողիկոսն ԻսաՀակ կապեալ շղթայիւք՝ առաքէ ի Դամասկոս ընդ իշխանին Սմբատայ: Այս Աբալլա [Վ] սպան զԴաւիթ ի Դուին: Ապա Ոգորս՝\* մեծ ոստիկան, եւ ամիրապետ Ապալմէլիք՝ յ85 թուին Տաճկաց [= 704 թ.], եւ ապա Վլէթ՝ որդի նորա, եւ ապա՝ Օմար: ՎաՀան Գողթնացի աստ նաՀատակի յՕ մարայ ի Ռուկափ: ՍաՀակ կաթողիկոս կենդանի 27 ամ գերի գործի դնի Եղիս կաթողիկոս: Սա զՆերսէս՝ եպիսկոպոսն ԱղՎանից, եւ զտիկին աշխարհին մասնէ Օմարայ, զորս կապեալ տանին առ նա եւ սպանանեն զնոսա վասն Քաղկեդոնի վնեւոյն: Իսկ Հայրապետն Հակառակ Օմարայ Համբաւեալ՝ տայ սպանանել [կացեալ]\*\* շորքտասան ամ կաթողիկոս. եւ ապա՝ ՕՀան Օճնեցին, որ եւ գնաց առ Օմար:

Իսկ վերոյյասացեալն Աշոտ աւծանի թագաւոր ի Հայրապետէն Գեորգայ: Եւ Աշոտի [...որդի Շապուհ՝ սպարապետն Հայոց, կիսակտուր մեռանի... Եւ սորին] եղբայրն Սմբատ [կացուցանէ զԱշոտ որդի Շապուհ փոխանակ Հաւր իւրոյ, որ]\*\*\* սպարապետ Հայոց լեալ շինէ զեկեղեցին Բագարանու ի սկզ-

\* Այս Ոգորս-ի փոխարէն, անշուշտ, պէտք է վերականգնելի Համարել Ոգրալ՝ ինչպէս որ Դրասխանակերտցու մօտ է (Թիֆլիս, 1912, էջ 95-96) եւ այլուր:

\*\* Վերականգնումը՝ հրատարակչի:

\*\*\* Այս երկու ընդարձակ վերականգնումները պարտադիր է կատարել՝ ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու մօտ պահպանուած ամբողջական դրուագի բովանդակութեան (Թիֆլիս, 1912, էջ 194). նոյն կերպ եւ՝ յաջորդ եւր:

բան սպարապետութեան իւրոյ զպճնապայծառն, [եւ] շինէ գեկեղեցի ի քաղաքագեաւն Կողբ բազմաձախ ամրութեամբ եւ ստիպով: Եւ սահաւածաձանակ եղեալ մեռանի եւ միւս եղբայր արքայի [Սմբատայ]՝ Գաիթ:

Յաւուրս Սմբատայ լինի խաղաղութիւն աշխարհիս Հայոց. կաթողիկոս՝ Յովհաննէս: Եւ շինին բազում եկեղեցիք իշխանէն Գրիգորէ, ի ՍաՀակայ եւ ի Վասակայ՝ իշխողաց աշխարհին Հայոց: Լեւոն թագաւոր Յունաց յոյժ պատուէ զՍմբատ, նաեւ՝ իշխանն Տաճկաց՝ խալիփայ՝ Բաբէլնի:

Բայց շփոթ աղմկի ի մէջ թագաւորին Սմբատայ եւ ի մէջ թագաւորին Եգերացոց՝ վասն Կոստանդնի. եւ յետոյ միջնորդութեամբ [Ատր]նբսեհի իշխանին Հաշտին, յետ կալելոյ եւ կապելոյ զԿոստանդին առաքէ յաշխարհ իւր: Բայց թագաւորն Վրաց զշարեալ յաւետ վասն յարձակման Կոստանդնի:

Ասի յոմանց, թէ Հերակլ ոչ գնաց ի Պարս, այլ թագաւորեցոյց Պարսից զՍոուեամ, որ գնացեալ սպանանէ զթագաւորն Արտաշիր տղայ գորով՝ որդի Կաւատայ՝. եւ վաղվաղակի առաքէ զսաշն առ Հերակլ, եւ զարքն Պարսից սպանանեն զՍոուեամ:

Կաթողիկոս Եգր, որ գնաց առ Հերակլ Գրոց սպեա եւ ոչ տարաւ զՅովհաննէս<sup>\*\*\*</sup>, այլ զքեռորդին իւր, որ Հաւանեալ գրեցին խորամանկութեամբ Յունաց, թէ՛ Նզովեմբ զամենայն Հերձուածողսն<sup>\*\*\*\*</sup> բաց ի ժողովոյն Քաղկեդոնի: Եւ տան Եգրի զերրորդ բաժին քաղաքագիւղին Կողբայ եւ զաղաւանքն ամենայն, որ ասի յամյամէ երկոտասան Հազար դեկան էր: Սա Եգր շինէ զՀրաշագեղ եկեղեցին՝ կոչեցեալ Սուրբ Գայիանէ եւ զկաթողիկէն Էջմիածնի, որ յառաջ փայտաշէն էր:

[«Բազմավէպ», 1922, էջ 70-73]

\* Բնագրում՝ խալիֆայ (վերականգնում):

\*\* Բնագրում՝ Կապատայ (վերականգնում):

\*\*\* Բնագրում՝ զՅովհաննէս (վերականգնում). իմա՝ Մայրաքոմեցին:

\*\*\*\* Բնագրում՝ հերձուածողսն (վերականգնում):

## 2. «Բազմավէպ»-ի ձեռագրական հատուածի թարգմանութիւնը

Սմբատ թագաւորի օրերում Յուսուփ ոստիկանը Հայաստան [Հայք] եկաւ, եւ նրա ասորի քարտուղարի միջնորդութեամբ բարեկամութիւն [սէր] հաստատուեց Սմբատի եւ Յուսուփի միջեւ: [Յուսուփը] բազմաթիւ ընծաներ եւ թագեր ուղարկեց Սմբատին եւ Հայոց հայրապետ Յովհաննեսին, ըստ արժանւոյն՝ առատ պարգեւներ, եւ դրանք [ստանալով]՝ արքան էլ աւելի ուրախացաւ իր այնքան շատ պարգեւների վրայ:

Եւ խաղաղութիւն եղաւ Հայոց երկրին ու շինութիւն: Եւ աւազակային յարձակումներից հանգստացած՝ մենաստաններում, աւաններում ու ագարակներում կառուցեցին վիմաշէն, հրաձոյլ հաստ հեղոյսներով եկեղեցիներ: Բայց առաւել քան շատերը [զաւրեցին] Հայկազունի [Հայկազանց] ծագումով Գրիգոր իշխանը եւ նրա եղբայրներ Սահակն ու Վասակը, որոնք իբրեւ հայրենի սեփականութիւն տիրում էին այն գաւառներին, որ շուրջանակի [չըջա]պատում են Գեղամայ ծովակի եզերքները, [այդ] արգասաբեր պարարտութեամբ պտղաբեր ցանկալի տիրոջութիւններին [վիճակին]:

Այս բարեբախտութիւններին ի լրումն՝ Հռոմայեցոց թագաւոր Լեւոնը թագ եւ ընծայ է ուղարկում, ինչպէս սիրելի որդու՝ մեր Սմբատ թագաւորին:

Իսկ Յուսուփից փոքր ինչ նեղսրտելով՝ նրա ամիրապետը հրաման գրեց Սմբատին՝ կռուելու եւ ոչնչացնելու Յուսուփին: Բայց որովհետեւ բարեկամական [սիրոյ] դաշինք կար Սմբատի եւ Յուսուփի միջեւ, [Սմբատն] արտաքնապէս [յայտնի կերպով], զօրքով դուրս եկաւ Յուսուփի դէմ՝ որպէս ամիրապետի հակառակորդի, սակայն ծածուկ գրեց Յուսուփին, [թէ] օգնութեան է գալիս նրան, այլ ոչ թէ՛ պատերազմելու: Իսկ Յուսուփը թէպէտեւ հաւատաց Սմբատի գրածին, սակայն սողացող չարալեզուների բանսարկութեան պատճառով հակուեց դէպի չարը, որպէսզի մէկից կործանի մեր երկիրը:

Սրանից յետոյ ամիրապետն ընդունեց Յուսուփի համաձայնութիւնն ու անվերապահօրէն հնազանդութիւն ցուցաբերելը, [եւ] թո-

դեցին, [որ] նրա կալուածքների իշխանութիւնը դարձեալ ինքը նուաճի: Եւ Յուսուփի դրդումով ամիրապետն ու Յուսուփը խստացրին հարկերը, որ Սմբատը մեր երկրից տալիս էր ամիրապետին: Իսկ արքան երկիրը հնգից-մէկ հարկի տակ դրեց [հնգորդեց]. մի մասով պիտի ոստիկանի աչքերը կշտացնէին, իսկ չորս մասով՝ զօրքերի եւ թագաւորութեան կարիքները հոգային [լցնէին]: Իսկ [այս բանը] նախարարների աչքում բացայայտօրէն ծանր էր երեւում: Ապա մեծ նախարարներից Հասան անունով մէկն իրեն կողմնակից դարձրեց տասնհինգ մարդու, նաեւ՝ Վրաց թագաւորին, որպէսզի սպանեն Սմբատ թագաւորին: Բայց երբ մարդ ուղարկեցին՝ Սմբատին գաղտնի սպանելու, իրականութիւնը յայտնի դարձաւ, իսկ Ատրներսէհն ու Հասանը հապշտապ հասան Անի, եւ ինչ որ արքան պահեստած ունէր, ամենն աւարի ենթարկեցին ու գնացին: Եւ Սմբատն առաւ [իր] զօրքերն [ու] շարժուեց նրանց վրայ: Բայց արքան թոյլ չտուեց, որպէսզի ոմանք յանցանք գործեն, այլ [լուկ] պահանջեց հակառակորդներին [բերել]: Նրանցից Ատրներսէհն ինքը եկաւ արքայի մօտ, իսկ մնացեալ զանցարարներին էլ բռնելով՝ [արքան] կուրացրեց նրանց: Եւ Ատրներսէհի որդուն իր մօտ պատանգ բերեց, իսկ Ատրներսէհին հաշտութեան համբոյրով բաց թողեց [արձակեց]: Եւ այսպէս Ասածոյ նախախնամութեամբ Սմբատը հաստատեց իր թագաւորութիւնը:

Այս Յուսուփը յետոյ բռնեց Յովհաննէս կաթողիկոսին եւ Դուինում բանտ դրեց. չնայած 60,000 դեկան հարկն առաւ, բայց չգոհացաւ: Այս պատահեց Հայոց 358 թուականին [=909 թ.] (այս Յուսուփ ոստիկանն [է, որ] սպանեց Սմբատ թագաւորին եւ բազմաթիւ այլ իշխանների Քրիստոսի հաւատի համար):

Դարձեալ Հայոց 358 թուականին [=909 թ.], Սմբատի թագաւորութեան եւ տէր Յովհաննէսի [Դրասխանակերտցու] հայրապետութեան ժամանակ Յուսուփ ոստիկանը եկաւ Հայաստան [Հայք]: Եւ Հայոց աշխարհի աւերման երկիւղից անձնատուր եղան նրան Հայոց իշխանները՝ մարզպան Գուրգէնը՝ Գագիկ թագաւորի եղբայրը, եւ Ուսփանը [=Սուփանը], Հայոց սպարապետ Աշոտը՝ Սմբատ արքայի եղբորորդին, եւ Գրիգորը:

Իսկ չարաբարոյ Յուսուփը մէկ առ մէկ գաղտնի թոյնով [դեղերով] մեռցնում էր. ինչպէս որ Գրիգոր Հայկազունի իշխանին թոյնով

զրկեց կեանքից, նաեւ Սմբատ թագաւորի քրոջ որդի Աշոտին, քաջ Մուշեղ պատանուն [մանուկին]՝ թագաւորի որդուն, եւ պատանի [մանուկ] իշխան Սմբատին նոյն դեղերով սպանեց: Եւ տիրուհիներին ու նրանց կանանց բռնելով՝ սովի ու գերութեան մատնեցին:

Իսկ Գրիգորի եղբայրները՝ Սահակն ու Վասակը, իրենց եղբոր անմեղ վախճանից յետոյ շուտափոյթ յանձն առան փախչել նեղիչներից, որ գոնէ հնար գտնեն ամրանալու իրենց տիրոջթների սեփական ամրոցներում եւ գերութիւն չգնան օտար երկրներ, մինչեւ որ անցնի Տիրոջ բարկութիւնը: Եւ ապա սրբնթաց թիակներով նաւեր կառուցելով, ասես որպէս տապանում, գնացին, թաքնուեցին, ամրացան Սեւանայ կղզում իրենց քրիստոսակրօն ու ճգնակեաց մօր եւ կանանց, որդիների ու ազատագունդ բանակի հետ, որովհետեւ իսմայէլական [արաբական] աւազակների ջրահեղեղ յորձահոս պղտորութիւնն աւելի ու աւելի սաստկանալով՝ բխում էր մեր բնակութեան աւազակիմ տունը: Իսկ յետոյ երբ յայտնեցին այն կանացիախօս, դառնադաժան հագարացի Յուսուփին, [սա] զօրք գումարեց նրանց վրայ: Երբ հասան Սեւանայ ծովակի եզրը, թշնամու սուրը պատնեշանման պաշարումով շրջապատեց նրանց: Ապա սիրելի եղբայրները միասին մատնեցին, թէ գուցէ թշնամիներից կը քշուեն ու ջրապատ անդունդների հետեւանքով տեղ չի գտնուի փախչելու եւ կը մատնուեն հեթանոսական բռնադատիչների ձեռքն ու կ'ենթարկուեն նրանց կեղտոտ չարութեանը: Բայց այնուհետեւ նաւաստիներն [իրենց] ձեռքերի ուժն աւելացրին ու նաւել շարունակելով գնացին իրենց մօր հետ եւ առհասարակ ընտանիքներով ու ունեցուածքով, որքան որ կարողացան ձեռքով կրել, հապճեպ հասան Միափոր ամուր գաւառը:

Իսկ Իսմայէլեան [արաբական] զօրապետը մտնելով ամրոց կղզին՝ մնացած աւարի շատը պահեստաւորեց, իսկ ինքն ասպատակելով, հետապնդելով գնաց նրանց յետեւից. [բայց] նրանք յետ դառնալով դէմ առ դէմ հարուածեցին թշնամիներին, նրանցից շատ վիրաւորների խոցոտելով եւ սրահար անելով՝ փախուստի մատնեցին: Իսկ իրենք շարժուելով գնացին դադար առան, պահուեցին Գարդմանի ու Արցախի անտառների անձաւաշատ ամրոցներում՝ ակնկալելով Տէր Ասածոյ գթութիւնը: Այնտեղ վախճանուեց ի Քրիստոս պարկեշտասուն եւ սրբափայլ հաւատքով, ճգնաւորների մէջ մեծագոյնը՝ նրանց մայրը

[Մարիամը], որ քոյրն էր Սմբատ արքայի, որի մարմինը նրանց դարձից եւ իրենց սեփական հայրենի իշխանութեանը տիրելուց տարիներ յետոյ տարան ամփոփեցին իր հանգստարանում [քնարանում]՝ Շաղուազոմի [=Շաղուազի] իր ձեռակերտ եկեղեցու կողքին:

Ապա Գագիկ Արծրունի թագաւորն իր եղբայր Գուրգէնի հետ միասին այս բանը տեսնելով եւ մտածելով, որ իրենց ձեռքով ու իրենց առաջնորդելով այս դառնադէտ չար ամպրոպը լցուեց Քրիստոսի եկեղեցու շուրջը՝ զղջացին մեծ զղջումով, եւ սրբագործուելով՝ գաղտնի փախան ոստիկանից Սմբատ արքայի մօտ, որը մէկ տարի խաղաղութեամբ թաքնուած էր Երասխաձորի [ամուր] վայրերում, Կապոյտի քարանձաւում:

Բայց յետոյ Իսմայէլեան [արաբական] զօրքը պաշարեց ամրոցը: Իսկ Սմբատ արքան տեսնելով այն, որ շատ քրիստոնեաներ էին կոտորուում, շատ մօտիկ [տեղում] դահիճներից խողխողում էին մարդիկ, որոնց իբրեւ նշանակէտ [թիրախ] էին դնում, իջաւ ամրոցից: Ոստիկանը նրա հետ երդման ուխտ կապեց եւ Սմբատին սիրալիր ընդունեց՝ պարգեւելով նրան շատ ընծաներ: Բայց յետոյ դրժեց երդումը, նրան կապկպեց ու բանտ դրեց մէկ տարի: Ապա շատ չարչարեցին ու խոշտանգեցին նրան դահիճները: Թագաւորական թաշկինակը խլեցին նրանից, կեղտաշորերով մինչեւ սիրտը լցրին (նաեւ եղեգներ էին մտցնում ծածուկ տեղը): Եւ ապա գլխատեցին ու մարմինը փայտից կախեցին Դուին քաղաքում: Նա թագաւորեց 22 տարի: Իսկ թագաւորի մայրն ու նրա իշխան որդին Դուինի բանտում մեռան եւ թաղուեցին եկեղեցու դռանը:

Իսկ Սմբատի միւս որդին՝ Աշոտը շատ ճանապարհորդութիւններ կատարեց եւ բազմաթիւ քաջ[ագործ]ութիւններ ցոյց տուեց ու պահպանեց իր հօր տէրութեան բոլոր ամրոցները՝ Գորգունեայ [°] իշխանի, նաեւ Վրաց թագաւորի ու Գագիկ Վանեցի թագաւորի օգնութեամբ: Նրա քաջագործութեան մասին լսեց Յունաց Կոստանդին թագաւորը՝ Գէորգ հայրապետի նամակի շնորհիւ: Եւ մի իշխանի՝ Թէոդորոս Վասիլիսկոսին ուղարկեց նրա [Աշոտի] յետեւից: Ապա սաքնաց Կոստանդինուպոլիս եւ Հայաստան վերադարձաւ թագով, իշխանութեամբ եւ անթիւ ընծաներով՝ իբրեւ որդի նահատակի եւ սուրբ թագաւորի:

Իսկ Հայոց երկրին Յուսուփի տիրելուց յետոյ Հայոց իշխանները հաւաքուեցին նրա մօտ, եւ նա նրանց ընդունեց ու շնորհեց նրանց ընծաներ, այլեւ բազմաթիւ զգեստներ, ոսկեհուռ գարդեր, ծիրանիներ, նշանաւոր նրբահիւս կերպաս [լակոնացի] եւ բեհեզներ. նրանց մատուցեց նաեւ գօտիներ [կամարներ], ոսկեղէն մանեակներ, արշաւասոյր ու ճոխապաճոյճ նոյզներ՝ զէնքերով ու զարդերով, եւ նրանց պարանոցներին փաթաթուելով՝ սերտ մտերմութեամբ [համբոյրով] նրանց մօտեցրեց: Այսպէս շողորթութեամբ էր կեղծ ու պատիր խօսքով, որպէսզի հնազանդուեն նրա խօսքին: Իսկ նրանք [իշխանները] նրանից պսկուելով ճողոպրեցին, եւ շտապելով ուղիղ իրենց ընկերների մօտ փութացին ու չընդունեցին մակուրան կուրանի՝ կրօնի պաշտամունքի մահադեղը, որով եւ նահատակութեամբ [մարտիրոսութեամբ] մեր Քրիստոս Աստուծուց ընդունեցին կեանքի պսակը:

Դարձեալ միւս անգամ անիծուած տարապարտն սկսեց սողալ, դեռալ, սողոսկել, իրեն ներս գցել Տիրոջ զօրութիւնների այգեստանի հոգեւոր ցանկապատից, եւ կրակը, որ երբեմն անտես առնուեց ու հանգաւ, սկսեց վերստին բորբոքուել ու մեծ բոցակէզ հրդեհներ առաջացնել: Եւ խարդախ նենգողներ գտնուեցին Քրիստոսի նկատմամբ մեր ունեցած քրիստոնէական հաւատին: Ընդդէմ սուրբ եկեղեցու հալածանքներ յարուցեցին, եկեղեցիները մրգապահ մառանների փոխեցին եւ ցախի անտառների վերածեցին ու կրակի մէջ այրեցին Տիրոջ սրբութիւնները, անօրէն մորթումով մորթեցին եւ պիղծ զոհ զոհաբերեցին արդարների տաճարներում ու արհամարհեցին և. ու Աստուած յուսացածներին:

Մրուան ոստիկանը եկաւ Հայոց երկիրն ու բոլոր ամրոցների դէմ ճակատամարտ տուեց. եւ որը որ գրաւում՝ քանդում էր: Իսկ Սեւանայ կղզին, որ Գեղամայ ծովակի մէջ [է], թէպէտեւ սկզբի անգամ չընկաւ նրա ձեռքը, սակայն մի երկու տարի անց մատնուեց նրա ձեռքը: Եւ բոլորին, ովքեր բնակուում էին ամրոցում, գերեվարեց տարաւ, իսկ եղած-չեղածը թալանի, աւերի տալով՝ հիմնովին [սպառսպուռ] քանդեց ու աւերեց ամրոցը:

\* Ըստ Հր. Աճառեանի (Հայերէն արմատական բառարան, հտ. Գ, եր., 1977, էջ 233) «մակուրան» բառը «կուրան»-ի մ-ով աճած ձևն է:

Մրուանից յետոյ [եկաւ] Մահմէտը: Մահմէտից յետոյ Հայաստան [Հայք] եկաւ Աբալլայ ոստիկանը եւ Իսահակ կաթողիկոսին շղթայակապ ուղարկեց Դամասկոս՝ Սմբատ իշխանի հետ [միասին]: Այդ Աբալլան Դուինում սպանեց Դաւիթին: Ապա [եկան] Ոգորսը [=Ոգբան] մեծ ոստիկանը, եւ ամիրապետ Ապտլմէլիբը՝ Տաճկաց [Հիջրէի] 85 թուականին [=704 թ.], ապա Վլէթը՝ նրա որդին, եւ ապա Օմարը: Վահան Գողթնացին այս ժամանակ նահատակուեց Օմարի կողմից՝ Ռուկափում:

Սահակ կաթողիկոսը 27 տարի կենդանի գերի մնաց, [ապա] կաթողիկոս դրուեց Եդիան: Սա Օմարին մատնեց Աղուանքի ներսէս կապիկոսութիւն եւ երկրի իշխանուհուն [տիկնոջը], որոնց կապուած տարան նրա [Օմարի] մօտ ու սպանեցին նրանց՝ Քաղկեդոնին [կողմ] լինելու համար: Իսկ [Եդիա] հայրապետը Օմարի հակառակորդ համբաւուեց, [եւ սա] սպանել տուեց [նրան, որ եղաւ] կաթողիկոս 14 տարի: Եւ ապա [Յ]ո[ւ]հան՝ Օձնեցին [էր], որ եւս գնաց Օմարի մօտ:

Իսկ վերոյսացեալ Աշոտը թագաւոր օծուեց Գէորգ հայրապետի կողմից: Եւ Աշոտի [[...որդի Շապուհը՝ Հայոց սպարապետը, անժամանակ [կիսակատար] մահացաւ... Ու սրա]] եղբայր Սմբատ [[թագաւորը Շապուհի որդի Աշոտին կարգեց իր հօր փոխարէն, որը]]\*\* դառնալով Հայոց սպարապետը՝ իր սպարապետութեան սկզբում կառուցեց Բագարանի պճնաղարդ եկեղեցին. [նաեւ] Կողբ գիւղաքաղաքում մեծածախս ամրութեամբ ու շտապանքով եկեղեցի շինեց: Եւ կարճ ժամանակ [սակաւածամանակ] ապրելով՝ մեռաւ նաեւ [Սմբատ] արքայի միւս եղբայրը՝ Դաւիթը:

Սմբատի օրերում Հայաստանում խաղաղութիւն եղաւ. կաթողիկոսն [էր] Յովհաննէսը: Եւ բազմաթիւ եկեղեցիներ կառուցուեցին Գրիգոր իշխանի, Սահակի ու Վասակի՝ Հայոց աշխարհի իշխանաւորների կողմից: Յունաց թագաւոր Լեոնը մեծ պատիւների արժանացրեց Սմբատին, նոյն կերպ՝ Տաճկաց [արաբների] իշխանը՝ Բաբէլոնի խալիփան:

\* Բնագրում՝ Օհան:

\*\* Կրկնափակագծերում այս երկու ընդարձակ վերականգնումների համար տե՛ս վերելում, էջ 191, տողատակ 3:

Բայց հակամարտութիւն [եղաւ] Սմբատ թագաւորի եւ Եգերացուց թագաւորի միջեւ՝ Կոստանդինի պատճառով՝: Եւ այնուհետեւ [Ատր]ներսեհ իշխանի միջամտութեամբ հաշտուեցին. Կոստանդինին բռնելուց ու շղթայակապ անելուց յետոյ [Սմբատը նրան] իր երկիրն ուղարկեց: Բայց Վրաց թագաւորը [Ատրներսեհը] հաւիտենապէս քէնով լցուեց՝ Կոստանդինին բաց թողնելու [արձակելու] համար:

Ոմանք ասում են, թէ Հերակլը չգնաց Պարսկաստան, այլ Պարսից [երկրում] թագաւոր դարձրեց Խոռեամին, որը գնաց սպանեց Կաւատի որդի Արաաշիր թագաւորին, որ դեռ պատանի [մանուկ] էր, եւ խաչը շուտափոյթ ուղարկեց Հերակլին. իսկ Պարսից զօրքերը սպանեցին Խոռեամին:

Եզր կաթողիկոսը, որ գնաց Հերակլի մօտ, [Սուրբ] Գրքին անգէտ [էր], բայց չտարաւ Յովնանին [Յովհան Մայրապոմեցուն], այլ [հետը տարաւ] իր քրոջ որդուն, [եւ] համաձայնուելով Յունաց խորամանկութեանը՝ սրանք գրեցին, թէ՛ «Նգովում ենք բոլոր հերձուածողներին, բայց ո՛չ Քաղկեդոնի ժողովը»: Իսկ Եզրին տուեցին Կողբ գիւղաքաղաքի [հարկերի] երրորդ բաժինն ու ամբողջ աղահանքը, որն [ինչպէս] պատմում են, ամեն տարի տասներկու հազար դեկան էր [օգուտ բերում]: Այս Եզրը կառուցեց Սուրբ Գայիանէ կոչուած Հրաշագեղ եկեղեցին եւ Էջմիածնի կաթողիկէն, որը նախկինում [առաջ] փայտաշէն էր:

\* Բնագիրն այստեղ որոշ չափով շփոթուած է. իրականում այս Կոստանդինը Հէնց Եգերացուց (կամ որ նոյնն է՝ Ափխազաց) թագաւորն էր:

### 3. Սամուէլ Անեցու հրատարակութեանը յաւելուած ձեռագրական հատուածը\*

#### Ի Հասցոյ<sup>\*1</sup> պատմութենէ

Այլքանգի ստունկանեաց<sup>\*2</sup> նախաձայրն՝ յերկիր դարձաւ, ուստի առան. բայց այսպիսի ինչ<sup>\*3</sup> առ մեզ կարի<sup>\*4</sup> ողորմելի եւ արտասուեաց արժանի գործք, որք Հմուտք եւ տեղեակք<sup>\*5</sup> եմք յառաջագոյն խրատուցն եւ ոչ զգուշանամք: Եւ զայս ոչ զմեծ եւ զանտանելի ինչ զարինագրութեանցն ասեմ, որ<sup>\*6</sup> ըստ Աւետարանական Հրամանացն, այլ զփոքու եւ զսակաւ ժամանակեայ, որք ի սրբոց առաքելոցն աւանդեցաւ եւ ի<sup>\*7</sup> մեծ երջանիկ սինհոդոսական<sup>\*8</sup> ժողովոյն Նիկիայ սաւմանեցաւ եւ<sup>\*9</sup> տիեզերական ուղղափառ Հայրապետացն կանոնացն եղաւ Հաստատութեամբ յազազս սրբոց Քառասնորդացն պաշտոյ, զի ի գլուխ Հանելով Հաղորդք լինիցիմք շարշարանացն Քրիս-

\* Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 247-248: Նոյնը լոյս է տեսել «Բազմավէպ»-ում 1906 թ. (էջ 446-447)՝ Վենետիկի մի ձեռագրից (տե՛ս վերը, էջ 8-9): Աւարտական յիշատակարանը հրատարակել է նաեւ Գ. Զարպհանաբեանը (Հայկական Հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 505-506)՝ Երուսաղէմի թիւ 999 ձեռագրից. վերջինից երկու հատուած տե՛ս Ն. եպ. Պողարեան, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 617: Հմմտ. նաեւ ՄՄ ձեռ. թիւ 3076-ում (Ժէ դ., թ. 124բ-127ա) եւ ձեռ. թիւ 3078-ում (1589-1608 թթ., արտագրուած Կարկառում, թ. 15բ-17ա): [Համարակալուած աստղանիշերով յաւելում ենք ձեռքի տակ եղած տարբերակների ընթերցումները՝ հետեւեալ տառանիշերով. Սամուէլ Անեցու գրքի յաւելուածը՝ *A*, «Բազմավէպ»-ի հրատարակածը՝ *V*, Երուսաղէմի ձեռագրացուցակի երկու կտորները՝ *I*, ՄՄ ձեռ. թիւ 3078-ի բնագիրը՝ *K*, ՄՄ ձեռ. թիւ 3076-ինը՝ *M* - խմբ.]:

- \*1 *K* Ծապուհոյ (*AIMV*)
- \*2 *A* ստունկանեաց եւ, *V* ստունգանեաց *փխ* ստունկանեաց (*IKM*)
- \*3 *K* ինչ եւ (*AMV*)
- \*4 *MV* կրի (*AK*)
- \*5 *K* տեղեակ
- \*6 *K* չիք որ (*AMV*)
- \*7 *V* չիք ի (*AKM*)
- \*8 *V* չիք սինհոդոսական (*AKM*)
- \*9 *K* եւ ի (*AM*) / *V* Նիկեայ սահմանեցան *փխ* Նիկիայ սահմանեցաւ եւ (*AKM*)

տասի եւ նորին մեռելութեան<sup>\*1</sup> կցորդք եւ թաղման<sup>\*2</sup> Հաւասարեալք, եւ ընդ նմին կենսագործեալ Յարութեամբն՝ յաղագս չարութեան<sup>\*3</sup> մաքրելոյ եւ առ Հաւաստեայ կենացն ժառանգորդք<sup>\*4</sup> լինիցիմք:

Ուխտագրութք<sup>\*5</sup> լեալ ապականեմք զզարութիւն<sup>\*6</sup> պաշտոն, զկնի ոլովայնի մոլիմք՝ զամենայն շունչ զաւղական ազգին յաճախապէս<sup>\*7</sup> ճաշակելով, ըմպելով<sup>\*8</sup> եւ պէտպէս զեւնովք, որ<sup>\*9</sup> ի ծովէ արտաքս<sup>\*10</sup> խպսին, մինչեւ րազուժք զժայթքումն<sup>\*11</sup> Հանդերձ այլովք աղտելութեամբն<sup>\*12</sup> գործեն:

Իսկ այլք զՀինգ աւուրսն սրբութեամբ<sup>\*13</sup> անցուցեալ պատճառելով զվկայիցն<sup>\*14</sup> յիշատակս եւ զՅարութեան<sup>\*15</sup> պաշտան, Համարձակութեամբ Հաղորդին անխտիր յամենայն կերակուրս՝ բայց<sup>\*16</sup> ի մարմնական մսակերութեան<sup>\*17</sup>, արբելութեամբ շուայտեալք, պիղծ<sup>\*18</sup> երգովք եւ սատանայական յարինեալ ձայնիւք Հեթանոսաբար ապականեն զՀինգ աւուրց<sup>\*19</sup> զճգնութիւնսն<sup>\*20</sup>: Եւ այլք<sup>\*21</sup> ի ճոխագունիցն յամենայն<sup>\*22</sup> աւր իւղիւ եւ մեղու պա-

- \*1 *KM* մեռելութեան (*AV*)
- \*2 *KV* թաղման (*AM*)
- \*3 *K* չարութեան
- \*4 *MV* ժառանգորդ (*AK*)
- \*5 *KV* ուխտադրութ (*AM*)
- \*6 *V* զարութիւն
- \*7 *K* շնչական աճախապէս *փխ* շունչ ... յաճախապէս (*AMV*)
- \*8 *K* ըմպելովքն, *M* ըմպելովք *փխ* ըմպելով (*AV*)
- \*9 *K* որք (*AMV*)
- \*10 *K* յարտաքս, *V* արտաք *փխ* արտաքս (*AM*)
- \*11 *AM* զժայթքումն, *K* զժայթքելն *փխ* զժայթքումն (*V*)
- \*12 *M* աղտելութեան, *V* աղտելութեամբ *փխ* աղտելութեամբն (*AK*)
- \*13 *A* սրբութեան (*MV*) / *K* աւուրքն սրբութեամբ
- \*14 *K* վկայիցն (*AMV*)
- \*15 *K* զՅարութեանն, *V* Յարութեան *փխ* զՅարութեան (*AM*)
- \*16 *V* բաց (*AKM*)
- \*17 *K* մսակերութեանն, *V* մսակերութեանն *փխ* մսակերութեան (*AM*)
- \*18 *K* պեղծ
- \*19 *MV* աւուրցն (*AK*)
- \*20 *V* զճգնութիւնս
- \*21 *KM* այլ (*AV*)
- \*22 *V* ամենայն

բարեալք<sup>\*1</sup> զփափազ որկորութեան<sup>\*2</sup> անցուցանեն<sup>\*\*</sup> եւ երգովք<sup>\*3</sup> լիափ  
մովն. եւ այսպէս զփրկութիւն անձանց կորուսեալ<sup>\*4</sup> լուծանեն զկարգ գովե-  
լի՝ ընդդիմադրեալք<sup>\*5</sup> Հարցն աւանդութեան:

Այս ի պատմութենէ<sup>\*6</sup> ՀապՀոյ<sup>\*7</sup> Բագրատունոյ<sup>\*8</sup> է՝ որդոյ<sup>\*9</sup> Աշոտի ա-  
պուհիպատ<sup>\*10</sup> պատրիկի<sup>\*11</sup>, յանուն Դաւթի Բագրատունոյ<sup>\*12</sup> որդոյ<sup>\*13</sup> Աշո-  
տի<sup>\*14</sup> իշխանաց իշխանի<sup>\*15</sup>, զոր ի<sup>\*16</sup> ձեռն առեալ եւ ընկալեալ յաժտարու-  
թեամբ Հարս Դաւթի՝ առաջնորդի վանաց Սրբոյն Ստեփաննոսի<sup>\*17</sup> ի Բագ-  
րեանդ գաւառի<sup>\*\*\*</sup>, եւ յոյժ բերկրեալ յաղագս Հեսի գոլոյ<sup>\*18</sup> ի ստութեան<sup>\*19</sup>  
եւ լի<sup>\*20</sup> ճշմարտութեամբ<sup>\*21</sup> յաւել յինքենէ զճառս բանից աստուածայ-  
նոց<sup>\*\*\*\*</sup> :

<sup>\*1</sup> Վ պարարեալ  
<sup>\*2</sup> K որկորութեան, M որկորըստեան, V որկորստութեան *փխ* որկորութեան (A)  
<sup>\*\*</sup> Բնագրի անցուցանեն բառի փոխարէն, գուցէ, կարելի է վերականգնելի հա-  
մարել՝ լցուցանեն:  
<sup>\*3</sup> K երգիւք  
<sup>\*4</sup> K կորուսին (AMV)  
<sup>\*5</sup> A ընդդիմատրեալք (KMV)  
<sup>\*6</sup> K պատմութենէն, M պատմութեան *փխ* պատմութենէ (AIV)  
<sup>\*7</sup> I Ծապիո, K Ծապիոնոյ *փխ* Ծապիոյ (AMV)  
<sup>\*8</sup> I Բագրատունո, V Բագրատունոյ *փխ* Բագրատունոյ (AKM)  
<sup>\*9</sup> I որդո, V որդոյ *փխ* որդոյ (AKM)  
<sup>\*10</sup> V սեպուհի *փխ* ապուհիպատ (AIKM)  
<sup>\*11</sup> K պատրիկի, M պատրիկ *փխ* պատրիկի (AIV)  
<sup>\*12</sup> I Բագրատունո, V Բագրատունոյ *փխ* Բագրատունոյ (AKM)  
<sup>\*13</sup> I որդի, V որդոյ *փխ* որդոյ (AKM)  
<sup>\*14</sup> K Աշոտոյ (AIMV)  
<sup>\*15</sup> IK իշխան (AMV)  
<sup>\*16</sup> IKV չիք ի (AM)  
<sup>\*17</sup> IM Ստեփանոսի (AKV)  
<sup>\*\*\*</sup> Այս Դաւթի Բագրեանդեցին, թերեւս, ժ կամ ժԱ դարի մատենագիր է:  
<sup>\*18</sup> AM գալոյ, I գոլո *փխ* գոլոյ (KV)  
<sup>\*19</sup> IV ստութենէ (AMK)  
<sup>\*20</sup> IV զի *փխ* լի (AMK)  
<sup>\*21</sup> I ճշտութեամբ  
<sup>\*\*\*\*</sup> Այս վերջին յիշատակագրութիւնից երեւում է, որ նրան անմիջապէս յա-  
ջորդող երկու էջանոց ձեռագրական նիւթը («Հարցմունք երկուց փիլիսոփա-

յից ընդ միմեանս...» վերտառութեամբ) աւելի մեծ հաւանականութեամբ ոչ  
թէ «ապուհիպատ պատրիկ Աշոտի որդի Ծապուհ Բագրատունու Պատմու-  
թիւնից» է («Հեռի... ի ստութեան եւ լի ճշմարտութեամբ»), այլ այդ «Պատ-  
մութիւն»-ը «յաւազութեամբ... եւ յոյժ բերկրանքով» ընդունած Բագրե-  
անդ գաւառի Ս. Ստեփաննոս վանքի առաջնորդ Դաւթի վանահօր աւելաց-  
րած «ճառերից» («յաւել յինքենէ զճառս բանից աստուածայնոց»): Այդ  
պատճառով նշուած նիւթը (տե՛ս Սամուէլի քահանայի Սնեցոյ Հաւաք-  
մունք..., էջ 248-250) ստորեւ տալիս ենք լոկ իբրեւ յաւելուած, տողատա-  
կում եւ առանց թարգմանութեան (թէպէտ՝ կատարելով, ինչպէս եւ վերելի  
կտորում, տողատման, կէտադրման եւ ուղղագրութեան որոշ սրբագրումներ  
ու վերականգնումներ):

Հարցմունք երկուց փիլիսոփայից ընդ միմեանս վասն վեցարեայ արարչու-  
թեան եւ վասն պահոց:

Ընշտալի թոյի ինձ, յորժամ անկանին ի մէջ ճառ[ք] պահոց եւ աղաթից:  
Ջոր եւ Գիրք Սուրբ յայտ առնեն զգարութիւն պահոց, որպէս Մովսէս մարգա-  
րէն ի ձեռն սուրբ պահոցն ընկալաւ զտախտակսն երկնայինս եւ փառաւորեցաւ  
դէմք երեսաց իւրոց. եւ Եղիա ի ձեռն պահոց զմեռեալսն յարոյց եւ հրեղէն կա-  
ռար յերկինս վերացաւ. եւ ի Բաբելոնի երեք մանկունք զհրամանս թագաւորին  
արհամարհեցին եւ զհոյր հնոցի ի ցաղ փոխեցին. եւ մանուկն Դանիէլ ի ձեռն  
պահոց եւ աղաթից ընկալաւ զհոյր մարգարէութեան, զժերսն յանդիմանեաց եւ  
զԾուշան ասրեցոյց եւ զբերանս առիծոցն սանձեաց. եւ Նիմուէացիքն երեքա-  
րեայ պահաք եւ աղաթիք զբարկութիւն Աստուծոյ ցածուցին եւ զքաղաքս ա-  
մուր կանգնեցին ի կործանմանէն. այսպէս զարութիւնք ցուցան ի ձեռն պահոց  
[եւ] աղաթից: Եւ Քրիստոս ի զայտեան իւրում ի ձեռն պահոց եւ աղաթից խոս-  
տացաւ տալ զարքայութիւն երկնից: «Ապաշխարեցէ՛ք, ասէ, զի մերձեալ է զար-  
քայութիւն յերկնից», եւ թէ՛ «Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան,  
զի նոքա յագեցցին»: Եւ որք լուսն ձայնի Կենարարին, եւ բուն հարեալ զարքա-  
յութենէ երկնից՝ պահաք եւ աղաթիք կատարեցին զժամանակս իւրեանց: Եւ  
առաքեալ ասէ. «Օրջեցան յեաշկամաշկաք եւ մորթովք այժեանաք կարատեալք,  
նեղեալք, չարչարեալք, զոր ոչ արժէ աշխարհս»: Սոքա ամենեքեան վկայք ճշ-  
մարտութեան գտանին ի ձեռն պահոց եւ աղաթից, եւ ժառանգեցին զարքայու-  
թիւն երկնից:

Բայց զերկիրս Հայոց տեսանեմք ապստամբեալ ի պատուիրանացն Աստու-  
ծոյ, ո՛չ առաքելոց լսեն, եւ ո՛չ մարգարէից: Եւ ոչ ընդունին զքարոզութիւն սուրբ  
Աւետարանին եւ զաւուրս պահոց Քառասնորդացն ոչ պահեն սրբութեամբ, այլ ի  
շարաք եւ ի կիւրակէն անխտիր ճաշակէն զամենայն կերակուրս, որ ելանէ ի  
կենդանի անասնոց, իւր եւ պանիր եւ ձու: Եւ պատճառեալ ասեն, թէ՛ «Ջայս կա-  
նոնս եղ մեզ սուրբ Գրիգոր, եւ նա հրամայեաց մեզ ուտել զայսպիսի կերակու-  
րս»: Բայց ասա՛ ինձ, ո՛վ հայրապետ, արժա՞ն է զայսպիսի կերակուրս ուտել ի  
շարաք եւ ի կիրակէ սուրբ պահոց, թէ՞ ոչ:

Քահանան ասէ.

Յաւուրս սրբոյն Գրիգորի եղան կանոնք Նիկիայ՝ հրամանաւ բարեպաշտ  
թագաւորին Կոստանդիանոսի. եւ ժողովեցան յամենայն քրիստոնէութեան ՅԺԸ  
[318] եպիսկոպոսք, եւ ի Հայոց Մեծաց՝ Ռատակէս՝ որդի մեծի հայրապետին սր-  
բոյն Գրիգորի, եւ զրեցին կանոնս տիեզերականս, կանոնս՝ ի հաստատութիւն  
սուրբ եկեղեցոյս՝ մի հաւատք, մի մկրտութիւն, մի ճշմարտութիւն: Եւ եղին սահ-  
մանս ապաշխարութեան ամենայն յանցաւորաց յաղագս՝ սրբութեամբ պահել

4. Սամուէլ Անեցու հրատարակութեանը յաւելուած  
ձեռագրական հատուածի թարգմանութիւնը

Շապուհի Պատմութիւնից

Չնայած որ [Ադամ] նախահայրն էլ պատուիրանազանց եղաւ [ու] հող դարձաւ, որտեղից որ վերցուել էր, բայց մեզանում այսպիսի խիստ ողորմելի եւ արտասուքի արժանի արարքներ [կան], որ մենք հմուտ ու տեղեակ ենք վաղուցուայ խրատներին, սակայն չենք զգուշանում: Եւ սա ոչ միայն մեծ ու ծանր օրէնքների համար եմ ասում, որ դրուած են ըստ Աւետարանի պատուիրանների, այլեւ փոքր ու սակաւ ժամանակ առաջ [զրուածներէ], որոնք սուրբ առաքեալների կողմից աւանդուեցին եւ Նիկիայի մեծ [ու] երանաւէտ ընդհանրական [սիւնհոդոսական] ժողովի կողմից սահմանուեցին եւ տիեզերական ուղղափառ հայրապետների կանոններով հաստատօրէն դրուեցին քառասնօրեայ սուրբ պահքի համար, որպէսզի [այն] ամբողջութեամբ անցնելով դառնանք հաղորդակից Քրիստոսի չարչարանքներին եւ նրա մահուանը կցորդ ու թաղմանը հաւասարուած, եւ նրա հետ միասին Յարութեամբ կեանքի վերադառնալով՝ չարութիւնից մաքրուելու շնորհիւ նաեւ ճշմարիտ կեանքին ժառանգորդ լինենք:

[Այնինչ] ուխտադրուծ լինելով՝ փչացնում [ապականում] ենք պահքի զօրութիւնը, կատաղի վազում որովայնի յետեւից՝ յաճախակի ամեն անյայտ տեսակի շնչաւոր ճաշակելով եւ ըմպելով պէսպէս զեռուններով, որ ծովից դուրս են նետուած, մինչդեռ շատերն [իրենց] արտաթորումն այլ աղտեղութիւնների հետ միասին են կատարում:

Իսկ ոմանք ի պատճառ նահատակների յիշատակի եւ Յարութեան պաշտամունքի հինգ սուրբ օրերն անցկացնելուց [յետոյ] համարձակ կերպով ճաշակում են անխտիր բոլոր տեսակի կերակուրները՝ բացի կենդանական միս ուտելուց, զեխութեամբ շուայտանալով, պիղծ երգերով եւ սատանայի [կողմից] յօրինուած ձայներով [մեղեդիներով] հեթանոսաբար ապականում [փչացնում] են հինգ օրերի ճշնութիւնը: Իսկ հարուստներից ոմանք էլ ամեն օր իւզով ու մեղրով հագեցնալով՝ բաւարարում են [իրենց] որկորի ցանկութիւնը եւ լկախ երգերով

յաւորս Քառասնորդացն, առեալ զարիճակ Հին եւ Նոր Կտակարանաց, որպէս եւ Մովսէս՝ գլուխ մարգարէիցն, գրեաց արեւն, եթէ՝ զև [40] տիւ եւ զև [40] գիշեր ո՛չ եկեր: Եւ ի Նոր Կտակարանացն ինքն իսկ Քրիստոս կատարեաց զնոյն սահմանս պահոց, զև [40] տիւ եւ զև [40] գիշեր հաց ոչ եկեր եւ ջուր ոչ արք. «Ո՛չ եկի, ասէ, քակել զարեւն եւ զմարգարէս, այլ լնուլ»: Եւ յայս հայեցեալ մեծի ժողովոյն՝ կարգեցին ընդհանուր սրբութեամբ պահել զաւորս Քառասնորդացն, այլ մի՛ ինչ ճաշակել, բայց միայն հաց եւ աղ եւ ջուր:

Բայց Հոռոմք ոչ կացին ի պատուիրանի մեծի ժողովոյն. այլ հանապազորդ ի պահսն ճաշակեն ի ձէթ եւ ի գինի: Նոյնպէս եւ ազգս Հայոց բանիք պերճեալ՝ ասեն, թէ՛ «Վերագոյն ենք մեք ի կարգս ուղղութեան, քան զամենայն ազգս», բայց ի պահն՝ անժոյժք եւ վեհերոտք, յարբեցութիւնս եւ ի սեղանս՝ շատկերութեամբ յաճախք եւ յաւարամիտք, եւ պատուիրանաց Աստուծոյ՝ անհնազանդք, եւ զքարոզութիւն ուղղափառ վարդապետացն ոչ առնուն ի միտ: Եւ ի կանոն սուրբ ժողովոյն Նիկիայ ոչ դարձան, այլ ի շաբաթ եւ ի կիւրակէ սուրբ պահոցն անխտիր ճաշակեն զամենայն կերակուրս, որ ելանէ ի կենդանոյ անասնոց՝ իղ եւ պանիր եւ ձու, ըստ կարգաց հեթանոսաց, եւ ո՛չ պատուիրանաց Աստուծոյ: Բայց ասեմ քեզ. հետի եմ կանոնդ այդ, որ ուտել հրամայեմ՝ ի սուրբ ժողովոց Աստուծոյ:

Այլ յաշխարհիս Հայոց այր ոմն՝ անուն Գրիգորատուր, ի գաւառէ Անձախից ձորից, այր ուղղափառ հաւատովք եւ զարութեամբ արուեստիք, յաւորս նորա Հոռոմք տիրէին մեզ, եւ նա զբազում հերձուածողս ի Հոռոմոց դարձոյց եւ զՅովհաննու Մայրագոմեցոյն զաղանդն խափանեաց: Եւ [յ]ետ նորա ոմն յաշակերտաց նորա՝ անուն Յովհաննէս, նա գրեաց զկանոնդ զայդ. քանզի զարավարն Հոռոմոց հրաման ետ աշխարհիս Հայոց՝ յաւորս Քառասնորդացն զի ամենայն մարդիկ կերիցեն ձէթ եւ գինի եւ ձուկն, եւ գրեաց նա զկանոնդ զայդ ընդդէմ հերձուածոց նորա եւ [զ]գարավարն արգել յանիրաւութենէն: Բայց զորոմն տնկեաց յաշխարհիս Հայոց, վասն զի ազգս Հայոց յաւար եւ յորկորստութիւն եւ ախորժելով ընկալան զկանոնդ զայդ՝ թողեալ զկանոն սուրբ ժողովոյն Նիկիայ, եւ զքարոզութիւն ուղղափառ վարդապետացն ոչ առնուն ի միտ:



ցնորում. եւ այսպէս իրենց փրկութիւնը կորցնելով՝ կազմալուծում են գովելի կարգն [ու] հակադրում հայրերի աւանդոյթին:

Սա ապուհիպատ պատրիկ Աշոտի որդի Շապուհ Բագրատունու Պատմութիւնից է՝ իշխանաց իշխան Աշոտի որդի Դաւիթ Բագրատունուն ուղղուած, որն [իր] ձեռքը վերցրեց ու սիրայօժար ընդունեց Դաւիթ վանահայրը՝ Բագրեւանդ գաւառի Սուրբ Ստեփաննոս վանքի առաջնորդը, եւ անչափ ուրախանալով, քանի որ [այն] հետու էր ստաբանութիւնից ու լի էր ճշմարտութեամբ՝ իր կողմից յաւելեց աստուածային խոսքի ճառեր:

## 5. Յովհաննէս Դրասխանակերտցու քաղաքած հատուածները\*

[Ա.]

Բայց յետ վախճանելոյ Հայրապետին Յովարայ ՎՍողոմնն աւժեալ կացուցանեն յաթոս սրբութեանն: Սա էր ի քաղաքապուղէն Գառնոյ եւ ի մանկութենէ առեալ էր զլուծ կրանաւորութեան կարգի եւ բազում առաքինաջան երկոց զանձն առեալ ի մեծ ուխտին Մաքենոցաց. այլ եւ վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս եւ առաւել եւս Հմուտ լեալ փոստաղութեան կրթանաց: Եւ վասն զի ի ժամանակս Սողոմննի՝ Հարանց Հարս, յերկուս լինէր բաժանեալ ուխտն Մաքենոցաց, եւ Հայրն Հարանց Հասարակ բաժնիւ կրանաւորական դասուն երթեալ բնակէր ի Ջրեսկ, որ ի Շիրակ գաւառի, զհետ նորա եւ այս եւս Սողոմնն չուէր գնայր: Եւ անդ ի միայնակեցի կարգ ելեալ լինէր՝ ի խրճիթ բազում ճգնաց եւ աշխատութեանց զանձն առեալ:

Եւ մինչդեռ ի խրճիթ անտի արտաքս Հանեալ չուեալ ածէին յաթոս Հայրապետութեանն, Հարցաւ ապա յամանց ազատաց, թէ՛ «Վասն զի ծեր ես եւ յանճարին ճգնական վարուց յոյժ անաւազեալ ընդէ՛ր յաւժարեալ երթաս ի Հայրապետութիւն»: Առ որս պատասխանեալ նորա՝ ասէր. «Երթամ, զի գեղապաճոյճն նկարողաց սեւել զիս, ընդ այլ Հայրապետն տամ յորմ եկեղեցւոյն»: Եւ ըստ սմին այսմիկ գործն կատարէր: Չի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի եւ գնի ընդ Հարս իւր եւ կենդանագրի ի քաւարանի սրբում:

Ապա զինի սորա զԳեորգ ի գաւառէ Արագածոտան կացուցանեն ի Հայրապետութեան: Եւ վասն զի սպառսպուռ Հապարայիքն տիրեցին կալան զՀայաստանեայս, եւ մեծամեծք աշխարհիս նուազեցան, եւ մնացեալ զաւղեալ դադարեալ կային ընդ ծառայութեան նոցա\*\*:

\* Դրասխանակերտցին, ըստ ամենայնի, ընդարձակ քաղաածքներ է արել Շապուհ Բագրատունուց, բայց դրանցից ակնյայտ են մի քանիսը, որ ներկայացնում ենք եւ թարգմանում: Առաջինը համտ. Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 110-111:

\*\* Այստեղ Յովհաննէս Դրասխանակերտցին տալիս է հետեւեալ ծանօթութիւնը. «Սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զրոյցք

\* Ձեռագրական նիւթի շարունակութեան մասին տե՛ս նախորդ տողատակի ծանօթագրութիւնը:

[Բ.]

Վասն զի Հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ՝ Հետեւանս զյուրաց Շապուհայ Բագրատունւոյ եւ մերումն ժամանակի պատմագրի, որ յայտապատում՝ իսկ արարեալ է զյուրցս պայազատութեան որդւոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ, զիշխանական պատմութիւնն, եւ զթագաւորացն զՀանգամանացն զկարգս, եւ կամ զգարձ գերելոցն ի Բուխայէ զՀայաստանեայցս իշխանաց եւ նախարարաց՝ յիրաքանչիւրն սեպհական իշխանութիւնս ածեալ կացեալ Հաստատեալ, եւ թէ ոյք ի նոցանէ Հոյակապք եւ Հարուստք եւ ուժեղակք ընդդէմ Հակառակորդաց Հինից գտան, եւ կամ ոյք յուժեքէ եղեն Հարստաւարեալք, եւ կամ զվախճան նոցա յիրաքանչիւրումն տեղ:

Չի թէպէտ ստուգութիւն սաւմանական բանի բացատրութեան եւ զբուրովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական Հրահանգացն Համառօտաբար ընձեռել սակայն ըստ իւրումն ժամանակի ընտանի գորով նորա զրուցացն ամենայնի՝ գեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան:

Արդ, այսպէս եւս աստանար զբովանդակն ի նա թողացուցեալ եւ որ ինչ Հարկաւորաբար այժմ ինչ պիտոյ է ճառիս պատմութիւն, զայն եւեթ Համառաւտ քեզ ընձեռնութիւն առնելով փորձեցայց՝ սակաւօք իբր ներածութեան եղանակաւ. որպէս վերագոյն ասացաւ, ի մանկութենէ մինչեւ ցերեւոյթս երիտասարդութեանն զԱշոտոյ որդւոյ Սմբատայ սպարապետի, զզարութիւնս եւ զքաջութիւնս եւ զպատերազմունս եւ զՀրոսմունս յայլս եւ զայլոց եւս ի նա՝ բաւական բերցի քեզ առ ի Շապուհայ պատմեալքն:

Իսկ յորժամ փոխանակ Սմբատայ՝ Հար իւրոյ պայազատէ զսպարապետութիւն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զնա նախագունիցն վեհագոյն

իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապուհայ պատմագրէ»: Կէտադրութեան մէջ որոշ սրբագրումներ ենք կատարում:

\* Չնայած Դրասխանակերտցու վերջին խօսքից հասկացուած է, որ իր հերոսի մանկութեան, քաջագործութիւնների, յարձակումների, պատերազմների ու այլ սիրադործութիւնների մասին ասելիքը թողնում է Շապուհայի գրքին, դրանից յետոյ նա բերում է ստորեւ յաջորդող հատուածը (սրա լեզուն, ի դէպ, տարբերում է կաթողիկոս-պատմիչի ճոռոմաբան շարադրանքից):

ճանաչուր. վասն զի ընկալեալ զմեծարանս՝ ի բաց արհամարհէր զանարգանս եւ միշտ ի Հրահանգս բարոյ կրթութեան զինքն վարժէր եւ բարի ազգումն իւրոյ Հոգւոյն տայր՝ ընդ ամենեսեան կալեալ սերտ սեր. եւ ոչ ի Հակառակութիւնս ինչ կամ ի կուխ ընդ թշնամիսն մաքառեալ քան թէ բարեզգեաց բանիւք եւ բարի աւճանաւ ածեալ զնոսա յուղղութիւն եւ ի կամս իւր: Իսկ զպաճարանս մնտի շահուց վնաս իւր վարկեալ եւ առատաձեռն առ ամենեսեան գտեալ յինքն զբազմաց միտս յանգուցանէր սիրալիր սրտիւ, որպէս զի յայժմ սակի ամենեքեան իսկ նմա Հաճեալ Հաւանեալ էին: Եւ այսպէս ապա զկարգ սպարապետութեան քաղաքավարեալ՝ մինչեւ Համբաւ բարոյն ի դուռն արքունի Հասանէր: Ապա սասիկան ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի Արմանի անունիւր, ըստ Հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց գնա կացուցանէր՝ բազում զգեստիւք եւ արքունական պատուով ճոխացուցեալ ի նա Հաւատարով զսակս Հայոց եւ զամենայն բեկար արքունի:

Եւ այսպէս պատուականագոյն եւ առաջին նա գտեալ եղև քան զամենայն նախարարութիւնս Հայոց, եւ ամենեքեան դաշինս ընդ նմա գնէին՝ որպէս արդարեւ ընդ թագաւորական զարմի: Այլ եւ ի մտի ամենեցուն եղեալ, զի թէ դէպ ինչ պիտոյից գացի, նաեւ ի տոճմ իւր արժանի լիցին մատչել ի թագաւորութեան ցեղս՝ զնոսա որոշել յայլոց նախարարութեան ցեղից:

Բայց զայսու ժամանակաւ աւագին իմն շարժմանց եղելոց ի Գվին քաղաքի՝ բազում սասանութիւնս եւ փլզմունս տանց եւ պարսպաց եւ ապարանից լինէր, եւ առհասարակ քանդումն եւ դրոյումն առնոյր քաղաքն: Այլ եւ մաճ յուրից մարդկան ի վերայ Հասանէր. եւ այնպէս աւագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչեւ ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի Հրապարակս եւ ի փողոցս ելեալ Հաշեալ Հառաչէին: Իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմեռայնոյն առաւել բերէր զքրացումն Հեծութեան, զի յուրվք մնեալք եւ ծայրատեալք լինէին:

Իսկ սուրբ Հայրապետն Չաքարիա ուժգին աղաւթիւք եւ պաղատանաւք մշտնջենամուռնչ եւ աղերսալի աղաւթս առ բարեգութն Աստուած մատուցանէր եւ երկնային ազդեցութեամբն ի բաց բառնայր զաստուածաստս բարկութիւնն՝ անվնաս զեկեղեցի Քրիստոսի պաշտեալի բազմաբեր ցասմանէ վտանգին:

Բայց իշխանք եւ նախարարք, որք ըմբռնեալք գերեցան ի Բուխայե, զայսու ժամանակաւ մի ըստ միողէ ի կարգ անկեալ չուէին յաշխարհ տերութեան իւրեանց եւ ի սեպհականութիւնս եւ ի տունս. եւ ապա մերկացեալ յանձանց իւրեանց զակամայ ուսմունս պիղծ արիւնացն Մաւմէտի՝ զքրիստոսաւանդ արէնս Հայրենիս առհասարակ բարձրացուցեալ բերէին յանձինս իւրեանց՝ ոչ ի ծածուկ երկիւղիւ ինչ, այլ իրրեւ ի վերայ բարձր տանեաց քարոզէին զՔրիստոսի աստուածայաշատութիւնն: Ընդ որս Հաճեալ Տէրն՝ բնակեցոյց յուսով զնոսս, յորում եւ արհնութեամբ Տեառնն արհնեցան եւ նովիմբ գովեցան: Հերկեցին Հերկս եւ ո՛չ ի վերայ փշոց: Եւ ապա ձայն խրախճանաց ցնծացելոց ի յարկս նոցա վնէր, եւ ձայն Հարսին եւ փեսայի: Ծնան որդիս եւ արարին պտուղ եւ բնակեցան իւրաքանչիւրաք՝ ի ժառանգութեան իւրեանց: Եւ այց արար Տէր նոցա եւ աջողեաց ի բարութիւնս:

[Նոյն տեղում, էջ 132-135]

\* Ըստ բովանդակութեան՝ թերեւս, պէտք է վերականգնելի Համարել իւրաքանչիւր ոք փխ իւրաքանչիւրաք:

## 6. Յովհաննէս Դրասխանակերտցու քաղաքած հատուածների թարգմանութիւնը

[Ա.]

Իսկ Յովաբ Հայրապետի մահից յետոյ Սողոմոնին բերեցին դրին սուրբ աթոռին: Սա Գառնի գիւղաքաղաքից էր եւ մանկութիւնից հոգեւորականի ծանր լուծն էր վերցրել իր ուսերին ու իրեն շատ առաքինաջան գործերի էր նուիրել Մաքենոցաց [վանքի] մեծ միաբանութեան մէջ [ուխտում]: Նաեւ վարժուել էր փիլիսոփայական գիտութիւնների մէջ, առաւել եւս Հմտացել էր սաղմոսերգութիւն ուսանելիս: Իսկ քանզի Սողոմոնի՝ Հայրերի [միաբանների] հօր ժամանակներում Մաքենիսի միաբանութիւնը երկուսի բաժանուեց եւ Հայրերի Հայրը [Սողոմոնը] կրօնաւորական դասի կէս բաժնով զնաց բնակուեց Զրեսկում, որ Շիրակ գաւառում էր, նրա հետ նաեւ այս Սողոմոնը չուեց գնաց. եւ այնտեղ մենակեացի կարգ ընդունելով՝ խցում [խրճիթում] բազում ճգնութիւնների ու չարչարանքների էր նուիրուել:

Եւ քանի որ այդ խցից դուրս հանելով՝ տարան դրին Հայրապետական աթոռին, այդ պատճառով ազատներից ոմանք Հարցրին, թէ՛ «Որովհետեւ ծեր ես եւ ծանր ճգնական կեանքից չափազանց տկարացել ես, ինչո՞ւ ես համաձայնուել՝ ստանձնելու Հայրապետութիւնը»: Սրանց պատասխանելով՝ ասաց. «Գնում եմ, որպէսզի գեղապաճոյճ նկարողներն ինձ նկարեն, այլ Հայրապետների [նկարների] հետ փակցնեմ եկեղեցու պատին»: Եւ ըստ այս խօսքի էլ գործն աւարտուեց, որովհետեւ ոչ աւելի քան մէկ տարի ապրելով՝ մեռաւ եւ թաղուեց իր Հայրերի կողքին ու կենդանագրուեց սուրբ քաւարանում:

Ապա սրանից յետոյ կաթողիկոս կարգեցին Գէորգին՝ Արագածոտան գաւառից: Եւ որովհետեւ Հագարացիք ամբողջապէս [սպառսպուռ] տիրեցին [ու] նուաճեցին մեզ՝ Հայաստանցիներին, [այդ պատճառով] նաեւ մեր երկրի մեծամեծերը նուազեցին, իսկ միւսները թաքնուել մնացել էին նրանց ստրկական լծի տակ:

[Բնագրի՝ էջ 110-111. Հմմտ. նաեւ Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը... Գ. Բ. Թոմուցեանի, Եր., 1996, էջ 113-115]

[Բ.] Յարգարաց տոբոթման աստուծոյ համարն ընդ անոնցն

Քանի որ հաճելի համարեցի [նոյն] խօսքերը վերստին չկրկնել՝ մեր ժամանակի պատմագիր Շապուհ Բագրատունու զրոյցներին հետեւելով, որ արդէն քաջայայտնի է դարձրել զրուցապատումները Սմբատ սպարապետի որդի Աշոտի պայազատութեան, իշխանական [չրջանի] պատմութեան, թագաւորական կարգի [հասնելու] հանդամանքների մասին, եւ կամ Բուխայի [Բուղայի] կողմից գերուած Հայաստանցի իշխանների ու նախարարների վերադարձի [եւ] իւրաքանչիւրի՝ իր սեփական իշխանութիւնը տարուել հասցուելու [ու] հաստատուելու մասին, եւ [այն մասին], թէ նրանցից ովքեր Հոյակապ ու հարուստ եւ աւագակ հակառակորդների դէմ ուժեղագոյն գտնուեցին, եւ կամ [թէ] ովքեր ում կողմից հարստահարուեցին, եւ կամ նրանցից իւրաքանչիւրի վախճանի մասին իր տեղում:

Քանզի թէպէտ խօսքի սահմանուած ստոյգ աւանդումը եւ բոլոր փաստարկների առանձնացումը [Շապուհ Բագրատունին] չի կարողացել ըստ քերթողական հրահանգների հակիրճ [համառօտ] ներկայացնել, սակայն իր զրոյցներով, [որ] իր ժամանակի համար ամենքին հարագատ [ոճով] էին, գեղջկական խօսքով քեզ բաւականաչափ պատեհութիւններ է տալիս՝ տեղեակ լինելու:

Արդ, այսպէս՝ ամբողջականն այստեղ նրան թողնելով, ինչը որ այժմ պարտադիր պէտք է իմ պատմական շարադրանքի [ճառի] համար, ես միայն ա՛յն կը փորձեմ ասես կարճ ներածութեան եղանակով համառօտ քեզ ներկայացնել. [իսկ] ինչպէս աւելի վերելում ասուեց, մանկութիւնից մինչեւ երիտասարդութեան երեւալը՝ Սմբատ սպարապետի որդի Աշոտի ուժի, քաջագործութիւնների, [վարած] պատերազմների, այլեւայլ [հակառակորդների] վրայ յարձակումների եւ նրա վրայ ուրիշների [յարձակումների] մասին թող քեզ բաւական լինեն Շապուհի կողմից պատմուածները:

Իսկ երբ Սմբատի՝ իր հօր փոխարէն, [Աշոտը] ժառանգեց Հայոց սպարապետութեան [պաշտօնը], աւելի վեհ էր ճանաչուած, քան իրենից առաջ եղած գրեթէ բոլորը: Որովհետեւ ընդունելով մեծարանքներ՝ իրենից արհամարհում վանում էր [ուրիշին] անարգելն ու մշտապէս իրեն վարժում էր բարեկրթութեան կանոններով [հրահանգնե-

րով]: Եւ իր հոգու բարի ազդակներն էր տալիս՝ ամենքի հետ սերտ մտերմութիւն [սէր] պահելով, ու թշնամիների հետ ոչ թէ հակառակութեամբ եւ կռուով էր մաքառում, այլ բարեմիտ խօսքերով ու բարերարութեամբ նրանց ուղղութեան էր բերում եւ իր կամքին [ենթարկում]: Իսկ հարստութեան դատարկ ձգտումն իր համար վնասակար էր համարում, եւ ամենքի նկատմամբ առատաձեռն լինելով՝ բոլորի միտքը սիրալիր սրտով դէպի իրեն էր դարձնում, այնպէս որ այդ պատճառով ամենքն էլ նրան հաճում [ու] հաւանում էին: Եւ այդ կերպ էլ վարեց սպարապետութեան պաշտօնը, մինչեւ որ [իր] բարի համբաւն արքունիք հասաւ: Ապա [ամիրապետը] մի կուսակալ [ոստիկան] ուղարկեց Հայաստան, որի անունն Ալի Արմանի էր, [եւ սա] ամիրապետի հրամանով նրան Հայոց իշխանաց իշխան նշանակեց՝ բազմաթիւ զգեստներով ու արքունական պատուով ճոխացնելով [եւ] նրան վստահելով Հայաստանի տուրքերն ու ամբողջ արքունի հարկը:

Եւ այսպէս նա ամենապատուաւորն ու առաջինը դարձաւ Հայոց բոլոր նախարարների մէջ, ու ամենքը նրա հետ դաշինք էին կնքում իբրեւ արդարեւ թագաւորական շառաւիղի հետ: Այլեւ ամենքը մտածում էին, որ թէ դիպուածը բերի՝ նաեւ իր տոհմով արժանի լինեն մօտենալ թագաւորական ցեղերին՝ նրանց առանձնացնելով այլ նախարարական ցեղերից:

Բայց այս ժամանակ սարսափելի երկրաշարժ եղաւ ԴՊին քաղաքում, բազմաթիւ տներ, պարիսպներ ու ապարանքներ սասանուեցին ու փլուզուեցին, իսկ քաղաքն առհասարակ դղրդաց ու քանդուեց: Նաեւ բազմաթիւ մարդկանց մահը վրայ հասաւ, եւ այնքան ահագողու էր վտանգի տագնապը, որ ոչ ոք ծածկի տակ չէր մնում, այլ դուրս գալով հրապարակներն ու փողոցները՝ մղկտալով հառաչում էին: Իսկ ձմեռուայ ցրտաշունչ սառնամանիքն աւելի էր յուսահատ հեծեմանք բերում, որովհետեւ շատերը ցրտահարում ու կորցնում էին ծայրանդամները:

Իսկ Զաքարիա սուրբ հայրապետն ուժգին աղօթքներով ու պաղատանքներով մշտնջենահունչ եւ աղերսալի աղօթքներ էր մատուցում բարեգութ Աստուծոն եւ երկնային ազդեցութեամբ հեռացնում Աստուծոյ սաստող բարկութիւնը՝ անվնաս պահելով քրիստոնեայ ժողովրդին [Քրիստոսի եկեղեցուն] բազում վտանգներ բերող ցասումից:

Իսկ իշխաններն ու նախարարները, որ բռնուեցին [ու] գերեզմարուեցին Բուխայի կողմից, այս ժամանակ մի առ մի հետզհետե գալիս էին իրենց իշխանութեան երկրները եւ սեփական կալուածքներն ու տները: Եւ ապա իրենցից դեն նետելով [իրենց] կամքին հակառակ [ընդունած] Մահմէդի պիղծ կրօնի ուսմունքը՝ իրենց առհասարակ յետ էին բերում քրիստոսաւանդ հայրենի կրօնին՝ [այն կրկին] բարձրացնելով, [եւ] ո՛չ թէ ինչ-որ ծածուկ երկիւղով, այլ [այնպէս], ասես բարձր տանիքների վրայ քարոզում էին Քրիստոս Աստուծոյ պաշտամունքը: Այդ բանը հաճելի եղաւ Տիրոջը, [ու նա] նրանց կեանքը լցրեց յոյսով, որով եւ Տիրոջ օրհնութեամբ օրհնուեցին ու նրանով փառաբանուեցին: Հերկեր հերկեցին, ու ո՛չ փշերի վրայ: Եւ ապա նրանց տներում ցնծալի խրախճանքի ձայն էր հնչում, եւ [դա] ձայն [էր] հարսի ու փեսայի: Սերեցին որդիներ եւ բերք ու բարիք ստեղծեցին, եւ իւրաքանչիւրը բնակուեց իր սեփական կալուածքում: Տէրը ողորմաց [այցելեց] նրանց ու յաջողութիւն բերեց [իրենց] բարի արարքների մէջ:

[Բնագրի՝ էջ 132-135. Հմմտ. նաեւ Յովնանու կաթողիկոս Ռրասխանակերտցի, Հայոց պատմութիւն, էջ 135-137]

## 7. Ուխտանէս Եպիսկոպոսի քաղաքած հատուածը

**Յաղագս թագին երանելոյն Կոստանդիանոսի, թէ ուստի կամ սրպէս յաջողեալ եղև նմա ի Տեառնէ՝ [ի] Շաբ[ւ]ոյ սր[պ.]ոյ Աշոտոյ ապահի պատրիկի աստուծաւ Պատմութեան իւրոյ**

Կոստանդիանոս թագաւորէ ամս երեսուն երեք: Սա եղեալ ի կողմանս Բիւզանդացոց՝ շինեաց քաղաք եւ կոչեաց զանուն նորա Կոստանդնուպոլիս: Սա եւան ի Հռոմայ ընդ իւր մասն ի նշխարացն Պետրոսի եւ Պաղոսի ի Հաստատութիւն թագաւորանիստ քաղաքին իւրոյ, որ կան ի մեծ եկեղեցոջ, որ կոչի Սուրբ Առաքեալք: Վկայէ այսմիկ Գրիգոր Աստուածաբան. քանզի ասէ ի ճառին, որ ի գալ եպիսկոպոսացն ի Հրաժարական բանսն, թէ՛ Ուրախ լերո՛ւք, ո՛վ առաքեալքդ, գեղեցիկ փոխադրութիւն:

Արդ՝ քանզի ասի բան, եթէ ի ժամանակին, յորում երարձ Յովաբ զթագաւորութիւն յորդուցն Ամովսայ, առաքեալ զթագս զայս ի տանէ գանձուց նոցա՝ առն ի գլուխ Դաւթի արքայի, եւ ի նմանէ՛ Սողոմոնի, եւ ի Սողոմոնէ՛ Ռորովամ՝ եւ ապա՝ Աբիայ, եւ Ասափ, եւ Յովսափաթ, եւ ի նոցանէ՛ նոյնպէս ամենայն թագաւորքն Յուդայ, եւ Հուսի յետոյ՝ Սեղեկիայ, եւ Յոքնիայ, զոր գերեալ Նաբուգոդոնոսորայ, արքային Բաբելացոց, եւ զնոյն թագաւորեալ ի Բաբելոն եւ նովմբ պսակեալ ինքն եւ իւրքն ամենայն մինչյաւորս Կիրոսի արքային Պարսից, եւ ի նմանէ Հասանէր մինչեւ ի Դարեհ Պարսից արքայ, զոր սպան Աղեքսանդր Մակեդոնացի, եւ ի նմանէ յափշտակեալ թագս այս՝ մնայ մինչեւ ցԱնտիոքոս, զոր վանեալ մեծ քաջին Արշակայ Պաշուպի [= Պաշուպի]՝ առնու զթագն: Եւ այս լինի մինչեւ ցՇապուհ, որ անուանեցաւ արքայից արքայ, որ Հնազանդեցաւ սիրով մեծին Կոստանդիանոսի:

Արդ ցանկայր Կոստանդիանոս նախնական եւ մարգարեական պսակին լինել իւր աստուածաւանդ թագաւորութեանն: Չայսու ժամանակաւ առաքէ Շապուհ արքայից արքայ առ մեծն Կոստանդիանոս՝ աղաչել զնա խնդրել զգաճաւորութիւն եւ զսէր Հաստատութեան ի մէջ երկոցունց:

Իսկ նորա Հաւանեալ ըստ արինի քրիստոնէութեան կատարել վսնդիր-  
մն. բայց Հայցէ եւ նա ի Հապէոյ զպսակ թագին զի ըստ նմին արինակի  
տայցէ կազմել իւր եւ զնորայն ի նա դարձուցանել եւ այն լինէր յազազս փա-  
փագման անդրանիկ թագաւորին եւ մարգարէին Դաւթի: Եւ նորա առա-  
քեալ զինի արանց Հաւատարմաց, զոր տեսեալ մեծին Կոստանդիանոսի՝ ժո-  
ղովեալ զճարտարապետս արուեստին այնորիկ եւ Հրամայէ ձուլել ըստ նմին  
արինակի: Իսկ ի կատարումն եկեալ գործոյն՝ Հրամայէ ի վերայ դնել ի վե-  
րայ ոսկի սեղանոյն եւ Հայցէր Արարչէն, զի մնասցէ առ ինքն նախնական  
պսակն: Եւ կոչեցեալ առ ինքն զՀաւատարիմն Հապէոյ՝ Հրամայէ առնուլ  
յինքեանս զբերեալ թագն ի թագաւորէն իւրեանց: Իսկ նոցա կուրացեալ  
միտք եւ աչք յաստուածային իմն գոպցես տեսչութենէ՝ զառ ի Յունաց զձու-  
լեալն առեալ յինքեանս գնացին՝ թողլով անդրէն զտենչալի մեծին թագաւո-  
րին Կոստանդնայ: Չոր առեալ ի վերայ գլխոյ իւրոյ, որում սպասաւորէին  
Հրեշտակք: Եւ այսմ՝ զկայէ կանոնացն Նիկիայ, թէ՛ «այգոյն սպասաւորեն  
Հրեշտակք», որ մինչեւ ցայսար ժամանակի կայ ի թագաւորական պալա-  
տին: Չոր եւ յաւուրս Մեծի երկշաբաթոջն պսակին այսմ թագաւորք Հոսմո-  
ցն յետ Մեծի կիրակէին Պասեքին, յորժամ դառնան ի Հրաշալի եկեղեցոյն,  
յորում է տապան նորուն սրբոյ Կոստանդիանոսի [ի] բեմին, կայ Հանգիստ եւ  
այլոց ուղղափառ թագաւորացն: Նա եւ [ի] յատակս կայ Հանգիստ մեծի Հայ-  
րապետին Յովհաննու Ոսկեբերանին: Նոյնպէս եւ երկրորդ կիրակէն, որ կո-  
չի Նաւակատեաց, որ նովիմբ թագաւորն պսակին՝ դառնալով ի մեծ եկեղեց-  
ոյն, որ կոչի Սուրբ Մոգք:

Արդ՝ ասացաք զորպիսութիւն թագին ի Պատմութենէ Հապէոյ:

## 8. Ուխտանէսի հատուածի թարգմանութիւնը

**Երանելի Կոստանդիանոսի թագի մասին, թէ որտեղից կամ ինչպէս  
յաջողուեց նրան [ստանալ դա] Տիրոջից՝ ասուած ապահի պատրիկ  
Աշոտի որդի Շապուհի կողմից իր Պատմութեան մէջ՝**

Կոստանդիանոսը թագաւորում է երեսուններեք տարի: Սա լինելով  
Բիւզանդացւոց կողմերում՝ շինեց քաղաք եւ անուանեց այն Կոս-  
տանդնուպոլիս: Սա իր թագաւորանիստ քաղաքի [հիմքերը] հաս-  
տատուն [դարձնելու] համար իր հետ Հոռոմից բերեց Պետրոսի ու  
Պողոսի նշխարներից որոշ մասունքներ, որոնք գտնուում են Սուրբ  
առաքեալներ կոչուած մեծ եկեղեցում: Այս մասին վկայում է Գրիգոր  
Աստուածաբանը, քանզի եպիսկոպոսների գալու մասին [իր] ճառի  
մէջ, նրա աւարտական խօսքերում ասում է, թէ՛ «Ուրախ եղէ՛ք, ո՛վ  
առաքեալներ, գեղեցիկ փոխադրութիւն [է սա]»:

Արդ՝ նախքան [սա] պատմում է, թէ այն ժամանակ, երբ Յովաբը  
վերացրեց Ամոնի որդիների թագաւորութիւնը, այս թագը նրանց  
գանձատնից ուղարկելով՝ դրեց Դաւիթ արքայի գլուխը, եւ սրանից  
[թագն անցաւ] Սողոմոնին, եւ Սողոմոնից՝ Ռոբովամին, եւ ապա՝ Ա-  
բիային եւ Ասաբին եւ Յովսափաթին: Եւ սրանցից յետոյ [թագը  
կրեցին] Յուդայի բոլոր թագաւորները, եւ ամենից յետոյ՝ Սեղեկիան  
ու Յոքոնիան, որին գերեց բաբելոնացիների Նաբուգոդոնոսոր ար-  
քան եւ նոյն [թագով] թագաւորեց Բաբելոնում. նրանով պսակա-  
դրուեցին ինքը եւ իր բոլոր յաջորդները՝ մինչեւ Պարսից արքայ Կիւ-  
րոսի օրերը: Սրանից [թագն] անցաւ մինչեւ Պարսից արքայ Դարեհը,  
որին սպանեց Աղեքսանդր Մակեդոնացին եւ նրանից հափշտակեց  
այս թագը, [որը] մնաց մինչեւ Անտիոքոսը: Եւ սրան քչելով՝ քաջ  
Արշակ Մեծ Պահլաւն առաւ թագը: Եւ այս [այսպէս] եղաւ մինչեւ  
Շապուհը, որն անուանուեց արքայից արքայ [եւ] որը սիրով հնա-  
զանդուեց Մեծն Կոստանդիանոսին:

\* [Հմտ. Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմա-  
նութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի. խմբ.՝ Ալ. Յակո-  
բեան, Եր., 2006, էջ 104-106 - Խմբ.]

Արդ՝ Կոստանդինոսը ցանկանում էր, որ իր աստուածահաճոյ թագաւորութիւնը լինի նախնական եւ մարգարէական պսակով: Այս ժամանակ Շապուհ արքայից արքան [մարդ] է ուղարկում Կոստանդինոս Մեծի մօտ եւ աղաչում խնդրում [նրան] դաշինք ու սէր հաստատել միմեանց միջեւ: Իսկ նա ըստ քրիստոնեական սովորութեան համաձայնեց կատարել խնդրանքը: Բայց եւ ինքը խնդրեց Շապուհից թագապսակը, որպէսզի ըստ նոյն օրինակի պատրաստել տայ իր անունով, իսկ նրանը նորից վերադարձնի իրեն: Եւ դա անդրանիկ թագաւոր ու մարգարէ Դաւթի նկատմամբ փափագի պատճառով էր: Եւ նա [Շապուհը] թագն ուղարկեց վստահելի մարդկանց հետ, որը երբ տեսաւ Մեծն Կոստանդինոսը, հաւաքեց այն արուեստի վարպետներին ու հրամայեց [[թագ] ձուլել նոյն ձեւերով: Իսկ երբ գործն աւարտին հասաւ, [Կոստանդինոսը] հրամայեց դնել ոսկէ սեղանի վրայ եւ աղաչեց Արարչին, որպէսզի իր մօտ մնայ նախօրինակ պսակը: Եւ կանչելով իր մօտ Շապուհի հաւատարիմներին՝ հրամայեց յետ վերցնել իրենց թագաւորից բերուած թագը: Իսկ նրանց մտքերն ու աչքերը կարծես կուրացած ինչ-որ մի աստուածային կարգադրութիւնից [նախախնամութիւնից]՝ յոյների կողմից ձուլուածը վերցրին իրենց [ու] գնացին՝ այնտեղ թողնելով մեծ թագաւոր Կոստանդինոսի փափագածը:

Եւ նա [թագը] վերցրեց դրեց իր պատուական գլխին: Եւ դրան սպասաւորում էին հրեշտակները, եւ այդ բանը վկայում է Նիկիայի կանոնների գիրքը, թէ՛ «Առաւօտից առաւօտ սպասաւորում են հրեշտակները»: Եւ [թագը] մինչեւ այսօր գտնւում է արքայական պալատում: Եւ հռոմէացիների թագաւորները այդ [թագով] են պսակուում Մեծ երկուշաբթի օրը Պասեքի Մեծ կիրակիից յետոյ, երբ վերադառնում են [այն] հրաշալի եկեղեցուց, ուր բեմի տակ նոյն սուրբ Կոստանդինոսի տապանն է եւ այլ ուղղափառ թագաւորների [տապանները]: Նաեւ յատակի տակ գտնւում է մեծ հայրապետ Յովհան Ոսկեբերանի գերեզմանը: Նոյնպէս եւ երկրորդ կիրակիի [օրը], որը կոչւում է Նաւակատիքի [կիրակի], նոյն թագով են պսակուում՝ վերադառնալով [այն] մեծ եկեղեցուց, որ կոչւում է Սուրբ Մոգը:

Արդ՝ պատմեցինք թագի որպիսութիւնը՝ [առնելով] Շապուհի Պատմութիւնից:

## 9. Ստեփանոս Ասողիկի քաղաքած ճատուածները

[Ա.]\*

Իսկ ի ՄՀԸ [278] թուականին [=829 թ.] վախճանեցաւ Միքայէլ եւ թագաւորեաց Թեոփիլոս որդի նորա՝ ամս ԺԳ [13]: Ի սորա աւուրս եղեւ գալուստ Հուսոմիթերոյն [ձեռ.՝ Հուսոմիթ] ի գաւառն Բասեան. եւ զբազումս խոյսողեցին սրով՝ ի վերայ յարուցեալ գե[ւ]ղաքաղաքին Գոմաձորոյ: Իսկ Թեոփիլոս գնաց ի Խաղաիս եւ ել ի Յամաք կամուրջ եւ գերեաց զբազումս ի Հայոց Հանգերձ ընտանեալք իւրեանց: Եւ տուեալ զՀիւպատաւորութեան պատինն, այսինքն՝ ապուհիւպատ պատրկութիւն Աշտոյ՝ որդւոյ Հապհոյ, եւ թողու ի Սպեր գաւառի: Եւ ինքն առեալ Հարկս ի Թեոփուպալսեցեաց՝ դարձաւ անդրէն:

Եւ ապա եկեալ Հուսոմիթի արանցն ի Վանանդ ի գիւղն Կաճկաքար՝ կոտորեցան ի ձեռն Սաւակայ որդւոյ Իսմայիլի: Եւ ի նոյն ամի եմուս Թեո[փ]փիլոս Ասորիս եւ էաւ զքաղաքն Ուոպելի. եւ պատերազմեցաւ ընդ Տաճկաց Ալմուլատ եւ յաղթեաց: Սա ի խաղալն իւրում՝ յարեւելս կոյս ի սաւմանս Հայոց՝ առնու զԾմու բերդն Հայոց, զԱսաղին եւ զՄեծկերտ եւ զԱլբերդ՝ ի գաւառին Գեղամայ, եւ զՍողան, եւ զՉորրորդ Հայս անապատ առնէ ի մարդոյ եւ յանասնոյ:

Եւ յետ նորա թագաւորէ Միքայէլ որդի նորա՝ ամս ԻԳ [24]: Եւ նա զանխլաբար մեռանի ի Վաթէ, զոր ընդ իւր թագաւորեցուցեալն էր:

Եւ դարձեալ այլ թագաւորէ Վասիլ՝ ամս ԻԲ [22]: Սա շինեաց զմեծ եկեղեցին ի Կոստանդնուպալիս եւ զարդարեաց ի զարդ ոսկիապատ եւ Սուրբ

\* Ըստ Յ. Մարկուարտի (Հայ Բագրատունեաց ճիւղազրութիւնը, Վիեննա, 1913, էջ 133, ծնթ. 2)՝ Ասողիկի Բ.գ գլխի՝ էջ 144-145-ի հատուածը վերցուած է Շապուհ Բագրատունուց: Հեղինակը դա պատճառաբանում է հոռոմիդիերոյն խօսուածքային յոգնակիով հորովումով եւ այդ հատուածի տեղանունների կերպափոխութեամբ: Ստորեւ առաջինը ներկայացնում եւ թարգմանում ենք նշուած հատուածը՝ ըստ Ստեփանոսի Տարօնեցոց Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, գլ. Բ.գ, էջ 144-145: Հմմտ. նաեւ Ստեփանոս Ասողիկ Տարօնեցի, Տիեզերական պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Վարդանեանի, Եր., 2000:

Չարազարս անուանեաց: Չոս ասէն լեալ ի Տարանոյ գաւառէ՝ ի գեղջէն  
Թլայ: Եւ յաւուրս սորա պայծառանայ սուրբ պատրիարգարանն առասու-  
թեամբ եւ գպրութեամբ:

Յաւուրս սորա թագաւորէ Աշոտ՝ Հայոց Մեծաց:

[Բ.]\*

Էին ի սոցանէ [նաճատակներից] արք եաւթն, որոց գլխաւորին անուն  
Աստմ կոչուր, որ էր ի Աղբակ գաւառէ՝ յՈսիրան\*\* գեղջէ. եւ վասն զի յոյժ  
զուարթատեսակ եւ քաջք էին ի մարտս՝ զնոսս ոչ սպանին ընդ այլն, այլ  
ջանային դարձուցանել յուրացութիւն. եւ բազում գանձս ոսկոյ եւ արծաթոյ  
մատուցեալ խոստանային գիւղս եւ գերդաստանս յարքունուսս: Իսկ քաջ  
նաճատակքն առաւել պայծառանային ի Քրիստոս խոստովանութեամբ, վա-  
սն որոյ սաստկապէս զայրացեալ բռնաւորն՝ դառնապէս տանջանալ կա-  
տեր, զոր ս'չ լեզու բաւէ պատմել: Սակայն յոյսն աւետեաց եւ սերն Քրիստո-  
սի եւ ուրախութիւն վկայութեանն թեթեացուցանէին զանճարին վիշտսն.  
Ընդ որ զայրացեալ բռնաւորն՝ Հրամայեաց խաչել զնոսս: Իսկ սուրբն Աստմ  
պրկեալ ի խաչափայտին՝ քաջալերէր զընկերսն՝ ասելով. «Մի՛ զարճուրիք,  
եղբա՛ւք, զի թէպէս եւ շարշարիմք, Հազարգութիւն ունիմք ընդ Աստուծոյ  
կենդանոյ»: Եւ Հայեցեալ ընդ յերկինս՝ ասէ. «Գոհանամ զքէն, Քրիստո՛ս,  
յս՛յս իմ, զի ուխտաւոր գործ իմ՝ տանիս այտորիկ սրբոյն Գեորգայ՝ նսխազս  
եւ գառինս ի սմա զենուլ վասն փառաց քոց. արդ՝ զիս ինքն փոխանակ զոճի  
մատուցանեմ քեզ բոլորապատու. ընկա՛ւ Տէ՛ր, եւ խառնեա՛ զմեզ ի թիւս սր-  
բոց քոց»: Եւ այսպէս աղաւթեալ ամենայնի՝ աւանդեցին զՀոգիս իւրեանց եւ  
պսակեցան ի Քրիստոսէ յՅԲ [302] թուականին Հայոց [=853 թ.] աւելի քան  
զՃԾ [150] այր, որոց անուանքն գրեալ են ի գպրութեան կենաց: Եւ Հայրա-

\* Ասողիկն ուրիշ հատուածներ էլ ունի, որ, ըստ ամենայնի, գրեթէ բառացի  
վերցրել է Շապուհից: Ստորեւ բերուող ընդարձակ հատուածը համապատաս-  
խանում է Յովհաննէս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ի էջ 123-  
ի (Թիֆլիս, 1912) եւ դրա շարունակութեան հատուածին: Պարզ է, որ Դրաս-  
խանակերտցին չէր կարող աւելի ուշ գրած Ասողիկից վերցնել, իսկ նա էլ  
չէր կարող կաթողիկոս պատմիչի լեզուն մշակել: Դրասխանակերտցու բերա-  
ծը խրթին է դարձուած, իսկ Ասողիկը, թերեւս, բերել է նոյնութեամբ:

\*\* Դրասխանակերտցու բնաղբում յՈրսիրանս

պէսն Յովհաննէս սաճմանեաց տան զար յիշատակի նոցա տարեւորական  
պատուով՝ ի ԻԵ [25] Մեհեկանի ամսոյ ի փառս ամենակալին Աստուծոյ:

Եւ նոյնժամայն խաղայ [Բուղայ] ի վերայ Տփղեաց, եւ զՍաճակ՝ զորդին  
Իսմայիլի, ի փայտ Հանէ: Եւ անցեալ ի Պարտաւ՝ սրով կատարէ զՄոկաթլ  
Վանանդացի, որ վկայեաց բարի խոստովանութեամբ Հաւատովն՝ որ ի  
Քրիստոս:

[Ստեփանոսի Տարոնեցոց Ասողկան Պատմութիւն  
տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, Բ.բ, էջ 108-109. Հմմտ. Յովհաննոս  
կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, էջ 123-125]



## 10. Ասողիկի հատուածների թարգմանութիւնը

[Ա.]

Իսկ երկու հարիւր եօթանասուն թուականին [=821 թ.] վախճանուեց Միքայէլը, եւ թագաւորեց նրա Թեովփիլոս որդին՝ տասներեք տարի: Սրա օրերում հոռոմները [հոռոմդիները] եկան Բասեան գաւառը եւ շատերին սրախողխող արին՝ յարձակուելով Գոմաձոր գիւղաքաղաքի վրայ: Իսկ Թեովփիլոսը գնաց Խաղտիք եւ ելաւ [մինչեւ] Ցամաք կամուրջն ու հայերից շատերին իրենց ընտանիքներով հանդերձ գերեց: Բայց Շապուհի որդի Աշոտին հիւպատ]աւորութեան կոչում, այսինքն՝ ապհիւպատ պատրիկութիւն տուեց եւ թողեց [նրան] Սպեր գաւառում: Եւ ինքը հարկերն առնելով Թէոդո[սիո]պոլիսի բնակիչներէից՝ վերադարձաւ այնտեղից:

Եւ ապա հոռոմ [հոռոմդի] զօրքերը [այրերը] գալով Վանանդի Կաճկաքար գիւղը՝ կոտորուեցին Իսմայէլի որդի Սահակի ձեռքով: Բայց նոյն տարին Թեովփիլոսը մտաւ Ասորիք ու գրաւեց Ուռպիլի քաղաքը. եւ ճակատամարտեց [պատերազմեց] Տաճկաց [արաբների] դէմ Ալմուլատում [Աշմուշատում] ու յաղթեց: Սա դէպի արեւելք՝ Հայոց սահմանները շարժուելով՝ գրաւեց Հայաստանի Ծմու բերդը, Ասադին ու Մեծկերտը եւ Ալբերդը՝ Գեղամայ [=Գեղայ] գաւառում. եւ Խոզանն ու Չորրորդ Հայքը թափուր դարձրեց [անապատացրեց] մարդուց եւ անասուններից:

Իսկ նրանից յետոյ թագաւորեց նրա որդի Միքայէլը՝ քսանչորս տարի: Բայց նա գաղտնի մեռցուեց Վասիլի կողմից, որին [Միքայէլն] իր հետ թագաւորեցրել էր:

Եւ դրանից բացի էլ Վասիլը թագաւորեց քսաներկու տարի: Սա կառուցեց Կոստանդնուպոլիսի մեծ եկեղեցին եւ զարդարեց ոսկեպատ զարդերով ու անուանեց Սուրբ Զօրավարք: Ասում են, որ սա եղել է

\* [Բովանդակութիւնից պարզ է, որ այս Գեղամայ գաւառ անուան տակ Ասողիկը (կամ, գուցէ, նրա երկն ընդօրինակած մի վաղ գրիչ-խմբագիր) նկատի է ունեցել Մեծ Հայքի Ծոփք կամ Չորրորդ Հայք նահանգի Անգեղատուն գաւառը, որն ինչ-որ պատճառով վրիպուել է է դ. «Աշխարհացոյց»-ի մեզ հասած տարբերակների գաւառացանկում (թէպէտ Ե դարի պատմիչների մօտ այն նշուած է՝ հէնց իբրեւ այդ նահանգի գաւառներից մէկը) - Խմբ.]:

Տարօն գաւառից՝ Թիլ գիւղից: Եւ սրա օրերում բարգաւաճեց [պայծառացաւ] սուրբ պատրիարքարանն ունեցուածքով [առատութեամբ] եւ մատենագրութեամբ [գալրութեամբ]:

Սրա օրօք Աշոտը դարձաւ Մեծ Հայքի թագաւորը:

[Բնագրի՝ էջ 144-145]

[Բ.]

Սրանց [նահատակների] մէջ եօթ մարդ կար, որոնց գլխաւորի անունն Ասոմ էր, որ Աղբակ գաւառի Ո[ր]սիրան գիւղից էր. եւ քանի որ սրանք չափազանց վեհատեսք էին ու մարտերում քաջ, նրանց միւսների հետ չսպանեցին, այլ ջանում էին ուրացող դարձնել: Եւ սակու եւ արծաթի շատ գանձեր մատուցելով՝ խոստանում էին արքունիքից գիւղեր ու կալուածքներ [չնորհել]: Բայց քաջ նահատակներն էլ աւելի էին ամրապնդում [պայծառանում]՝ Քրիստոսին խոստովանելով: Այդ պատճառով բռնաւորը [Բուղան] սաստիկ գայրանալով՝ այնպէս էր դաժան տանջանքներով խոշտանգում, որ լեզուով հնարաւոր չէ պատմել: Սակայն աւետման յոյսը, Քրիստոսի սէրը եւ նահատակութեան ուրախութիւնը թեթեւացնում էին անտանելի վիշտը: Սրա վրայ գայրանալով՝ բռնաւորը հրամայեց խաչել նրանց: Իսկ սուրբ Ասոմը, խաչափայտին մեխուած, քաջալերում էր [իր] ընկերների՝ ասելով. «Մի՛ սարսափէք [զարհուրէք], եղբայրներ՛, քանի որ թէպէտ տանջում ենք, [բայց] հաղորդակցում ենք կենդանի Աստծոյ հետ»: Եւ նայելով դէպի երկինք՝ ասաց. «Գոհ եմ քեզնից, Քրիստոս, իմ յո՛յս, որովհետեւ սուրբ Գէորգի այս տօնին ուխտաւոր լինելով՝ ես այստեղ նոխպներ ու գառներ պիտի զոհէի քո փառքի համար: Արդ՝ զոհի փոխարէն հէնց ինքս ինձ եմ ամբողջապէս քեզ մատուցում: Ընդունի՛ր, Տէ՛ր, ու խառնի՛ր մեզ քո սրբերի թուին»: Եւ ամենքն այսպէս աղօթելով՝ իրենց հոգիներն աւանդեցին, ու Հայոց երեք հարիւր երկու թուականին [=853 թ.] Քրիստոսի կողմից նահատակի պսակ ստացան աւելի քան հարիւր յիսուն մարդ, որոնց անունները գրուած են [յաւերժական] կեանքի գրքում: Իսկ Յովհաննէս [Ովայեցի] հայրապետը տաւն սահմանեց՝ նրանց յիշատակի օրը տարիտարի պատուելու Մեհեկան ամսի 25-ին, ի փառս ամենակալ Աստծոյ:

Եւ նոյն ժամանակ շարժուեց դնաց [Բուղան] Տփղիս [քաղաքի] վրայ ու [այնտեղ] խաչ հանեց Իսմայէլի որդի Սահակին: Իսկ անցնելով Պարտաւ՝ սրով նահատակեց Մովսէսը Վանանդացուն, որը մարտիրոսացաւ Քրիստոսի հաւատքի բարի խոստովանութեամբ:

[Քննարկի՝ էջ 108-109]

## Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեղեան Մ., Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Ա (սկզբից մինչեւ X դար), Եր., 1944 (վերահրատ.՝ Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, Եր., 1968)

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909

Ալիշան Հ. Ղ., Հայապատում, հտ. Ա, Վենետիկ - Ս. Ղազար, 1901

Ալիշան Հ. Ղ., Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ - Ս. Ղազար, 1881

Ակիմեան Հ. Ն., Շապուհ Բագրատունի եւ իւր պատմութիւնը. - Մատենագրական հետազոտութիւններ, Քննութիւն եւ բնագիր, հտ. Ա, Վիեննա, 1922

Աճառեան Հ., Հայերէն արձատական բառարան, հտ. Գ, Եր., 1977, հտ. Դ, Եր., 1979

Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր Շապուհ Բագրատունու պատմութեան մէջ, - «Բաղամովէպ», 1922

Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Եր., 1946, հտ. Դ, Եր., 1948

Անանեան Հ. Պ., Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ - Ս. Ղազար, 1960 (վերահրատ.՝ 1998)

Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Եր., 1990

Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1896

Առաքելեան Ա., Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն, Եր., 1959

Ավդալբեգեան Թ., Կարծեցեալ Շապուհը (մի քանի խօսք «Պատմութիւն Շապուհ Բագրատունոյ» գրքոյկի հեղինակն որոշելու խնդրի շուրջը), - «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա եւ Բ, Վաղարշապատ, 1921-1922

Գալէմքեարեան Գ. Վ., Պատմութիւն Հայ լրագրութեան, հտ. Ա, Վիեննա, 1893

Գրիգորեան Գ., Տարօնի Բագրատունիների Ֆէսուլակիւն իշխանութիւնը IX-XI դարերում, Եր., 1983

Զարպիանայեան Հ. Գ., Պատմութիւն Հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), Վենետիկ - Ս. Ղազար, 1897

Չարարեայ Սարկաւազի Պատմագրութիւն, հտ. Ա-Բ, Վաղարշապատ, 1870

Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ի լոյս էած Բ. Պ[ատկանեան], Ս. Պետրբուրգ, 1887

Իզրաշեան Կ., Արիստակէս Լաստիվերտցու «Պատմութեան» մէկ տարւընթերցուածքի մասին՝ վրանգք եւ ոչ փոսակք, - «Բանբեր Մատենադարանի», թիւ 4, 1958, էջ 77-82

Լէօ, Հայոց պատմութիւն, հտ. Բ, Եր., 1967

Կանայեան Ս., Պատմութիւն Աստուածընկալ Ս. Նշանին Ս. Աղբերկու եւ Շապուհ Բագրատունի, - «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա եւ Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 137-140

Կարապետեան Յ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հտ. I, գիրք I. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում), Եր., 1998

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Եր., 1982

Կոնդակ Ս. Աղբերկայ վանից Մշոյ, - «Արարատ», 1905, էջ 551-559

Ղեոնդ, Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ա. Տէր-Ղեոնդեանի, Եր., 1982

Պատմութիւն Ղեոնդայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետրբուրգ, 1887

Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռ. թիւ 1775 (Ժէ դ.); ձեռ. թիւ 3076 (Ժէ դ.); ձեռ. թիւ 3078 (1589-1608 թթ.); ձեռ. թիւ 5974 (ԺԸ դ.)

Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983

Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913

Մսերեանց Մ., Շապուհ Պատմագիր, - «Ճոռքաղ», թիւ Գ, Մոսկուա, 1861-1862

Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912

Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցի Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թոսուցեանի, Եր., 1996

Յովհաննէան Հ. Ղ., Հեազգօտութիւն նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1887

Յովսէփեան Գ. Կաթ., Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951

Ոսկեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Մաս Ա, Վիեննա, 1940

Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871

Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ, Ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921

[Ջուանշեր], Համառօտ պատմութիւն Վրաց. Ընծայեալ Ջուանշերի պատմչի, Վենետիկ - Ս. Ղազար, 1884

Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Յառաջաբանով, Համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893

Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910

Ստեփանոս Ասողիկ Տարօնեցի, Տիեզերական պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Վարդանեանի, Եր., 2000

Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետրբուրգ, 1885

Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկովա, 1861

Տ[այեան] Հ. Ղ., Պատմութիւն Շապհոյ Բագրատունեոյ եւ Ս. Ղազարու գրչագիրները, - «Բազմավէպ», 1922, էջ 69-73

Տէր-Ղեոնդեան Ա. Ն., Հայաստանը VI-VIII դարերում, Եր., 1996

Տէր-Ղեոնդեան Ա. Ն., Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում, - ԼՀԳ, 1969, հ. 2, էջ 52-60

Քարամեանց Ն., «Հացունեաց խաչի պատմութեան» հեղինակը - «Արարատ», 1896, էջ 76

Քիպարեան Հ. Կ. Վ., Պատմութիւն Հայ Հին գրականութեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1992, էջ 289-292, 304-305

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915

История Анонимного повествователя. Псевдо-Шапук Багратуни. Пер. с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ер., 1971 (Հանդերձ զուգագիր Հայերէն բնագրով եւ տիտղոսա-

թերթով. Պատմություն Անանուն գրուցագրի. Կարծեցեալ Յապուհ Բագրատունի, Թարգմանութիւնը գրաբարից, առաջաբանն ու ծանօթագրութիւնները Մ. Հ. Դարբինեան-Մելիքեանի)

Мартъ Н., Антиохъ Стратигъ, Пленение Иерусалима Персами въ 614 г., С. Петербургу, 1909

Brosset M., *Collection d'historiens arméniens, t. I, S. Pétersbourg, 1874*

Chaumont M.-L., *Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume, Paris, 1969*

Janin R., *Constantinople byzantine, Développement urbain et répertoire topographique, Paris, 1950*

Somal P. S., *Quadro della storia letteraria di Armenia, Venezia - Lazzaro, 1829*

Thomson R. W., *The Anonymous Story-teller (Also Known as "Pseudo-Šarpuh")*, - *REArm.*, t. XXI, Paris, 1988-1989, էջ 171-232

\* [[ Անանուն, Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցոյ շինուածք՝ թուով եւ հիմնադրելով, Առաջաբանը եւ քննական բնագիրը Ա. Յակոբեանի, - «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԴ տարի, 2010, էջ 17-28

Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Խմբագիրներ՝ Անդր. Կարապետեան եւ Ալ. Յակոբեան, Եր., 2010

Եղիազարեան Ա., Տայքի իշխանութիւնը Հայ Բագրատունիների տէրութեան համակարգում, - ՊԲՀ, 2008, հր 3, էջ 197-208

Եղիազարեան Ա., Տարօնի Բագրատունիների իշխանութիւնը IX դարում եւ X դարի սկզբին, - ԲԵՀ. Հասարակական գիտութիւններ, 2009, հր 1, էջ 74-85

Եղիազարեան Ա., Հայոց Սմբատ Ա թագաւորի արտադրական արշաւանքը, - ԼՀԳ, 2010, հր 1-2, էջ 122-126

Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Մ. Հ. Դարբինեան-Մելիքեանի, Եր., 2006

Յակոբեան Ա., Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում (աղբիւրագիտական դիտարկումներ), - «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԵ տարի, 2011

\* [Կրկնակի փակագծերում աւելացրել ենք հեղինակի վախճանից յետոյ լոյս տեսած եւ մեզ ծանօթ գրականութիւնը - Խմբ.]

Յակոբեան Ա., Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին եւ Զուարթնոցի կառուցման ժամանակը, - «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Հտ. XXIV, Եր., 2005, էջ 366-426

Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009

Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի. Խմբ.՝ Ալ. Յակոբեան, Եր., 2006

«Մատենագիրք Հայոց», Հտ. Ե, է դար, Անթիլիաս, 2005

Юзбашян К. Н., Армянские рукописи в петербургских собраниях. Каталог. - Православный Палестинский сборник. Вып. 104 (41), СПб, 2005 ]]

ԱՆՈՒԱՆԱՅԱՆԿԵՐ

Ա Ն Չ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր, Տ Ո Հ Մ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

\* Աբաս թագ. 12
Աբգ ալ-Մելիք (Աբգի Մելիք, Ապոյմէ-
լիք) խալիփայ 161, 162, 191, 198
Աբղուհաման (Ապտուհաման), Մուհամ-
մեդի հայր 55, 56, 70
Աբղուհաման զօրավար 157
Աբեղեան Մանուկ 3, 23, 32, 33, 37, 156
Աբեղեանք տոհմ (Ջաբեղեանք) 126
Աբիա, Իսրայէլի թագ. 215, 217
Աբուբարք (Իբրադ Ապուբարք) 72
Աբու Հալիթ (=Ապու Ալի) 83
Աբու Մրուան 118 (տե՛ս Ապուսթոլան)
Աբու Տահիր (տե՛ս Ապուտահիր)
Աբտլայ ոստիկան 191, 198
Աբրահամ նահապետ 42, 45, 57, 70, 144,
155
Ագաթանգեղոս 6, 156
Ադամ 25, 26, 57, 144, 205
Ադոնց Նիկողայոս 151, 173
Աղբամալ 161 (հմմտ. Ամաղէկ)
Ազուգան (=Ասորդան), որդի Սենեքե-
րիմի 77
Ալէքսանդր կայսր 175
Ալէքսանդրոս Մեծ, Աղեքսանդր Մակե-
դոնացի 74, 159, 215, 217
Ալի, Ալէ խալիփայ, փեսայ Մահմէդի
56, 58, 70, 71, 84, 145
Ալի Արմանի ոստիկան 209, 213
Ալի իբն Օսման խալիփայ 145
Ալի խալիփայ, Հովանաւոր Դերէնի 29,
103
Ալի խալիփայ, որդի Ապուսայլէպի 129-
133, 143
Ալի, որդի Ապուսթոլայ 121, 123
Ալիշան Հ. Ղեւոնդ 10-12, 39, 44, 45,
149, 154, 168
Ակինեան Հ. Ներսէս 5, 6, 8-11, 15-17,
20, 22-24, 27, 32, 37-39, 43, 46, 145,
167

Ահմատ, որդի Մահմէտի 39, 72-75, 77,
79, 80, 82, 83
Ահմէդ իբն Իսայ ամիրայ 180
Աղեքսանդր (տե՛ս Ալէքսանդրոս)
Աճառեան Հրաչեայ 21, 22, 47-50, 108,
179, 182, 184
Ամաղէկ (Աղբամալ) 77, 161
Ամատունի տոհմ 102, 127, 128, 153
Ամովն 215, 217
Ամու (Ամր, Օմար) խալիփայ 39, 72, 74,
75, 79, 80, 83, 143, 160
Այտնեան Հ. Արսէն 46, 47, 51
Այրիվանեցի (տե՛ս Միթիար Այրիվա-
նեցի)
Այուբեան Հ. Յակոբ 11
Անանեան Հ. Պօղոս 140, 141
Անեցի (տե՛ս Միթիար Անեցի եւ Սա-
մուէլ Անեցի)
Անձեւացի տոհմ 172
Անտիոքոս արքայ 215, 217
Անտիոքոս Ստրատեգ 39, 151
Աշոտ Ա Բարեպաշտ արքայ 3, 4, 6, 10,
12-14, 16-21, 25, 31, 117, 118, 125,
166, 175, 190, 191, 198, 208, 212,
220, 223
Աշոտ Արծրունի, որդի Գագիկի 30, 32,
91
Աշոտ Արծրունի, որդի Դերէնի 18, 20,
28, 30, 35, 36, 92, 104, 110-117, 174
Աշոտ Արծրունի, որդի Դերէնի-Գրիգորի
29, 30, 49, 117, 118, 122, 124, 137,
188, 195
Աշոտ Արծրունի, որդի Համազասպի 32,
35, 91, 166
Աշոտ Բ Երկաթ թագ. 12, 190, 196
ԱշոտԲագրատունիապուհիւպատ պատ-
րիկ 5, 8, 13, 14, 202, 203, 206, 215,
217, 219, 222
Աշոտ Բագրատունի իշխանաց իշխան
8, 16, 202, 206
Աշոտ Բագրատունի սպարապետ (Բու-
նաւոր) 12, 188, 191, 194, 198
Աշոտ Մոկացի 134
Աշոտ Մսակեր Բագրատունի 13, 14, 35,
91, 109, 110
Ապու Ալի խալիփայ 83, 143

\* Ցանկում ներառուած չեն միայն Յա-
պոնի Բագրատունի եւ Անանու գրու-
ցագիր անունները, որոնք հանդի-
պում են գրեթէ ամեն էջում:

Ապուբարք (Իբրադ Ապուբարք) խալի-
փայ 72, 143
Ապուլը(հարպ, աէր Բերկրիկ 104
Ապուհուրիշ, թագ. Խորասանի 96
Ապուհեհր 118
Ապուսթոլ (Ապուսթոլ) 30, 118-121, 123,
138
Ապուսթոլան, Աբու Մրուան (Գագիկ Ա-
պուսթոլան) Արծրունի, որդի Համ-
գէի 21, 22, 31, 118, 121-128, 137,
179, 180
Ապուշամբ, Վայոց ձորի իշխան 134
Ապուսակը, Ջանգեւան տոհմից 139
Ապուսակը Վահուհի 185
Ապուսայլէպ, հայր Ալի խալիփայի 129,
143
Ապուսէթ, հայր Սէթի 109
Ապուսէն ամիրայ 129-133
Ապուսայլիպ, որդի Ալի խալիփայի 84
Ապուտահիր, որդի Սուսիթի 130-132
Ապուրհարպ (տե՛ս Ապուլը(հարպ))
Ապուլմէլիք (տե՛ս Աբգ ալ-Մելիք)
Ապտուհաման (տե՛ս Աբղուհաման, հայր
Մուհամմեդի)
Առանշահիկ տոհմ 176
Առաքել Դաւրիթեցի 149
Առաքելեան Վարդ 7, 10, 13, 32, 53,
82, 147, 179, 217
Ասափ, Իսրայէլի թագ. 215, 217
Ասողիկ (տե՛ս Ստեփանոս Տարօնացի
Ասողիկ)
Ասորդան (Ազուգան), որդի Սենեքերի-
մի 161
Ասքանազ 140
Ավրաբեգեան Թադեւոս 19, 21, 32
Ատոմ Աղբակեցի 18, 220, 222
Ատրնեբսէ, Աղուանից իշխան 19
Ատրնեբսէ (Ներսէս), Վրաց թագ., իշ-
խան 187, 190, 192, 194, 196, 199
Արիստակէս Լաստիվերտցի 150
Արծրունի տոհմ 20, 22, 23, 26, 28, 32,
37, 51, 83, 91, 106, 136, 161, 166,
170, 174, 179
Արշակ Բ թագ. 54, 141, 142
Արշակ Գ թագ. 142
Արշակ, Պարթեւ արքայ 215, 217
Արշակունի արքայատոհմ 140, 142, 178,
180
Արտաշէս Գ թագ. 142, 151
Արտաշիր Բ արքայից արքայ 151, 192,
199

Աւգերեան Հ. Մկրտիչ 9
Աւմար (տե՛ս Օմար խալիփայ)
Ափշին, որդի Ապուսէնի 129, 131
Ափուան, որդի Ալի խալիփայի 84
Բաբեկ 19
Բագրատ Բագրատունի իշխանաց իշ-
խան 172
Բագրատ (Բաքրատ) Բագրատունի ա-
ւագ 91
Բագրատ Կուսպաշտ 103
Բագրատունի տոհմ 16-17, 19, 20, 23-26,
28, 32, 37, 47, 51, 91, 109, 149, 166,
180, 183, 184, 219, 222
Բաղալեան Հայկ 152
Բարխուդարեան Սեդրակ 12, 152
Բարսեղ, Վասիլ Ա կայսր 175, 219, 222
Բիւրեղ տիկին Սիւնեաց 25, 36, 37, 64,
154
Բուզանդ (տե՛ս Փաւստոս Բուզանդ)
Բուկայ (Բուխայ, Բուղայ) 4, 16, 18-20,
30, 48, 111, 112, 173, 208, 210, 212,
214, 221, 224
Բուվեյհյաններ (Բուվեյներ) 178
Բրոսէ Մարի (M. Броссе) 9, 10, 43
Գաբեղեանք տոհմ (Ջաբեղեանք) 126,
135
Գագիկ Ապուսթոլան (տե՛ս Ապուսթոլան
Արծրունի)
Գագիկ Արծրունի 28, 32, 91
Գագիկ Բ արքայ 166
Գագիկ (Կագիկ) Արծրունի, որդի Աշո-
տի [ա] 32, 91, 167
Գագիկ (Կագիկ) Արծրունի, որդի Աշո-
տի [բ] 93, 94, 101-103
Գագիկ (Կագիկ, Գագիկ-Սաչիկ), որդի
Դերէնի 117, 124, 127-129, 136, 138,
139, 165, 166, 181, 185, 188-190,
194, 196
Գագիկ, Տարօնի իշխան 134, 183
Գագրիկան (Գազրիկան) տոհմ 135
Գալէմբարեան Հ. Գրիգորիս 10, 11
Գամբր 140
Գանձակեցի (տե՛ս Կիրակոս Գանձակե-
ցի)
Գասթէ (տե՛ս Խոսրով Ապուսէզ)
ս. Գէորգ 220, 222
Գէորգ Արագածոտնեցի կաթ. 4, 207,
211

Գէորգ Գառնեցի կաթ. 190, 191, 196, 198  
Գնթունի (Գրնթունի) տոհմ 135  
Գնունի տոհմ 28, 94, 95, 135  
Գոռամ, Տայքի իշխան 134, 184  
Գորգ 94, 95 (տե՛ս Զափրան)  
Գորգէն, Գուրգէն Արծրունի, որդի Դերէնի 21, 22, 31, 117, 124, 134-138, 188, 189, 194, 196  
Գորգունի (Գորգունեայ) իշխան 190, 196  
Գրիգոր, Աղձնեաց իշխան 134  
Գրիգոր Աստուածաբան 43, 215, 217  
Գրիգոր Բագրատունի պատրիկ 103  
Գրիգոր (Գրիգորիս) Բագրատունի, Տարօնի իշխան 172  
Գրիգոր-Դերէնիկ, որդի Աշոտի 16, 19, 28, 29, 34 (տե՛ս Դերէն-Գրիգոր)  
Գրիգոր Լուսաւորիչ 11, 24, 69, 80, 92, 140, 141, 157, 172, 203  
Գրիգոր Մամիկոնեան 19  
Գրիգոր, որդի Գագիկ Արծրունու 32, 91  
Գրիգոր, Սիւնիքի տէր 19, 186, 188, 192-195, 198  
Գրիգոր Սուփան (Սուփան, Ուսփան) 188, 194  
Գրիգոր վանահայր 34  
Գրիգորատուր Անձախիձորցի 204  
Գրիգորեան Գնեւ 183  
Գրիգորիս (Գրիգոր) Ռշտունիքի եպ. 86, 89, 92, 93  
Գրիգորիս Աղթամարցի 20  
Դանիէլ մարգարէ 203  
Դաւրիժեցի (տե՛ս Առաքել Դաւրիժեցի)  
Դասխուրանցի (տե՛ս Մովսէս Դասխուրանցի)  
Դատոս (Դոտոս) թագ. 22, 133, 134, 182  
Դարբինեան-Մէլիքեան Մարգարիտ 31, 39, 43, 45, 46, 52, 54, 58, 61, 74, 81, 83, 85, 117, 143-145, 148, 150, 151, 161, 163, 165-167, 169, 173, 174, 176, 180, 182, 183, 185  
Դարեհ արքայ 215, 217  
Դաւիթ Բագրատունի իշխան 8, 16, 202  
Դաւիթ Դենեցի 191, 198  
Դաւիթ, Իսրայէլի թագ. 6, 13, 215-217  
Դաւիթ կիւրոպաղատ 182  
Դաւիթ, Հայր Մօրիկի 59  
Դաւիթ մագիստրոս 179

Դաւիթ, որդի Աշոտ Ա-ի 192, 198  
Դաւիթ վանահայր 8, 202, 203, 206  
Դերէն-Գրիգոր (Գրիգոր-Դերէն), որդի Աշոտ Արծրունու 20, 21, 28, 29, 33-35, 93-104, 169, 170  
Դերէն (Գրիգոր-Դերէն, Դերէնիկ), փեսայ Աշոտ արքայի 19, 20, 21, 30, 36, 51, 112, 114, 116-124, 127, 129, 137, 138  
Դերէն, որդի Սահակի 21, 33, 34, 51, 92, 93, 167  
Դիոնիսիոս Թրակացի 173  
Դոն-Քիչոտ 34  
Դոտոս (տե՛ս Դատոս)  
Դրասխանակերտցի (տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի)

Եղեկիա արքայ 76, 160  
Եզր կաթ. 153, 192, 199  
Եղիա Արծրիցի կաթ. 191, 198  
Եղիա մարգարէ 203  
Եղիազարեան Արման 183, 184  
Եղիշէ 6, 7, 149  
Եսայի Աբուժուէ 19  
Եսայի մարգարէ 160  
Երեմեան Սուրէն 168, 172  
Երզնկացի (տե՛ս Մովսէս Երզնկացի) Եւա 25, 26  
Եւեղ 25 (տե՛ս Բիւրեղ)

Ջաբեղեանք (= Գաբեղեանք կամ Աբեղեանք) 126  
Ջանդաղան տոհմ 185  
Ջանդեան տոհմ 139, 185  
Ջարպէանայեան Հ. Գարեգին 8, 11, 200  
Ջափրան իշխան (Գորգ Զափրան, Զաֆրան, Զափրան) 28, 29, 34, 35, 94-102  
Ջաքարիա, Երուսաղէմի Հայրապետ 64  
Ջաքարիա Ջագեցի կաթ. 209, 213  
Ջաքարիա Քանաքեռցի 146, 147, 149  
Ջաքրան Սասանեան արքայադուստր 59  
Ջենոբ Գլակ 157

Ըռչտունի (տե՛ս Ռշտունի)

Էմին Մկրտիչ 6, 7

Թէոդոս կայսրորդի 70, 71  
Թէոդոս Ա կայսր 142

Թէոդոս Գ Ափխազաց թագ. 182  
Թէոդոսիոս Բ կայսր 150  
Թէոդ[որ]ոս Ռշտունի 27, 28, 42, 83, 84, 158, 163, 164  
Թէոդորոս Վասիլիսկոս 190, 196  
Թէոփիլոս (Թէոփիլոս) կայսր 14, 219, 222  
Թոմաս Ռորերտ 52, 142, 143, 150, 166, 168, 172, 174, 176, 180-185  
Թոսունեան Գ. Բ. 4, 211  
Թովմա Արծրունի 7, 15, 21, 23, 30, 37, 43, 122, 127, 154, 165, 167, 170, 171, 174, 176, 184, 185  
Թորգոմ 15, 24, 54, 140

Իազատ (Իզտ) Ամատունի (Արծրունի) 122, 123, 127, 128, 179  
Իբտաղ (տե՛ս Ապուբաքր)  
Իզա (տե՛ս Իազատ)  
Իյադ իբն Ղանմ 157  
Իշխանակ, քուերորդի Աշոտի 20, 112, 113, 115  
Իշխանիկ (տե՛ս Վասակ Իշխանիկ)  
Իսահակ Արծրունի 91 (տե՛ս Սահակ Արծրունի)  
Իսահակ կաթ. 191, 198 (տե՛ս Սահակ Զորափորեցի)  
Իսահակ, որդի Աբրահամի 70, 155  
Իսմայէլ, Հայր Սահակի 219, 222, 224  
Իսմայէլ, որդի Աբրահամի 45, 70, 81, 155, 189, 195, 196

Իւզբաշեան Կարէն (Юзбашян К. Н.) 9, 150

Լեւոն Գ Իսաւրացի կայսր (Լէւոն) 72, 75-79, 83, 158  
Լեւոն Զ Իմաստասէր կայսր 175, 186, 192, 193, 198  
Լէօ 31, 170

Խանլարեան Լենա 149  
Խոռեան, Խորեան, Խոռեամ 61, 64, 151, 192, 199  
Խոսրով Ապրուէզ արքայ (Գասրէ, Քասրէ Ճապասպ) 27, 58-66, 144, 148, 150, 151  
Խոսրով Բ Կոտակ թագ. 54, 141, 180  
Խոսրով Գ թագ. 142  
Խորենացի (տե՛ս Մովսէս Խորենացի)  
Խուզիմայ 14

Կաղանկատուացի (տե՛ս Մովսէս Դասխուրանցի)  
Կանայեան Ստեփան 20, 156  
Կատեն Աբեղեան 126  
Կարագեղեան Յովհաննէս 167, 168  
Կաւատ Բ արքայից արքայ 192, 199  
Կիրակոս Գանձակեցի 7, 143, 146, 147, 162  
Կիւրեղ Աղեքսանդրացի 143  
Կիւրոս արքայ 215, 217  
Կոզեռն (տե՛ս Յովհաննէս Կոզեռն)  
Կոնստանտինա կայսրուհի 148, 150  
Կոստանդ Բ (Կոստանդին, Կոստադին) կայսր 84, 86, 158, 164  
Կոստանդիանոս Մեծ կայսր 5, 6, 13, 203, 215-217  
Կոստանդին Ափխազաց թագ. 182, 192, 199  
Կոստանդին Գ կայսր 155, 158, 164  
Կոստանդին Ե կայսր, որդի Լեւոն Իսաւրացու 83, 84, 173  
Կոստանդին Զ կայսր 22, 38  
Կոստանդին Է Ծիրանածին կայսր 175, 190, 196  
Կոստանդին կայսրորդի 70, 71  
Կոստանդին նախարար 62  
Կուան (Կտուն) Ամատունի 122, 127  
Կուլինար (տե՛ս Քուլինար)  
Կրուժբախեր Կարլ 14  
Հաբիբ իբն Մասլամա 160, 180  
Հաբիբ իբն Սալիբ ամիրայ 180  
Հադար Հարճ 155  
Համազասպ (Համազասբ), որդի Աշոտ Բ Արծրունու 20, 93, 94, 101-103  
Համազասպ, Համակար տոհմից 80-82, 162  
Համազասպ, որդի Աշոտ Գ Արծրունու 112  
Համազասպ, որդի Գագիկ Արծրունու 32, 166  
Համակար Անձեւացի 134  
Համակար տոհմ 80  
Համամ-Յովհաննէս Բարեպաշտ Բագրատունի 175  
Հայկազունի, Հայկազանց, Հայկազնի տոհմ 165, 186, 188, 193, 194  
Հապիպ 21, 31, 124-127, 143  
Հապոզեան Հ. Մեսրոպ 13  
Հասան նախարար 187, 194

Հերակլ, Հերակլէս կայսր 7, 27, 36, 39, 61, 62, 64-72, 154, 155, 158, 164, 192, 199  
Հերակլէոնաս կայսր 158  
Հմայեակ, Փառխոսի իշխան 134  
Հուրմիզուպար (Հուրմիզդ-Պաքար, Հուրմիզտ, Յուրմիզդ, Որմիզդ) թագ. 42, 84, 85, 163  
Հրանուշ տիկին 21, 117, 119, 137  
  
Ջիւնական տոհմ 135  
  
Ղաղար (Ղազարիկ) Փարպեցի 6, 45, 46, 149, 182, 185  
Ղեւոնդ պատմիչ 6, 7, 15, 16, 22, 38, 39, 41-43, 50, 75, 82, 155, 158-161, 164, 165, 173  
Ղեւոնդիոս, Կեսարիայի արքեպ. 140  
  
Ճապասպ Բարէ (տե՛ս Խոսրով Ապրուէզ)  
Ճէնթակուր թագ. 40, 41, 73, 74, 158  
  
Մալիմ, եղբայր Ամր խալիփայի 74, 75, 79, 80 (տե՛ս Աաւա Մալիմ)  
Մախազ 60, 149  
Մահմէդ, Մահմէտ մարգարէ (տե՛ս Մուհամմեդ)  
Մահմէտ, Բաղտաղի խալիփայ 21, 29, 35, 43, 103-105, 111, 143  
Մահմէտ զօրավար 79, 82 (տե՛ս Ահմատ, որդի Մահմէտի)  
Մահմէտ, Հայր Ահմատի 39, 40, 41, 72, 73, 80, 83  
Մահմէտ ոստիկան 191, 198  
Մահմէտ, որդի Աբդլայի 154  
Մահմէտ, որդի Ապուստրի 121, 123  
Մաղաս 147  
Մամիկոնեան տոհմ 19  
Մայրագոմեցի (տե՛ս Յովհան Մայրագոմեցի)  
Մանած, Մանածեղ, Մանածիհր 83, 91, 163  
Մանուէլ ճարտարապետ 166  
Մանուր խալիփայ 144  
Մաշտոց 46  
Մառ Նիկողայոս 23, 39, 151  
Մատթէոս Ուռհայեցի 23, 26, 37, 183  
Մարգարեան Հայրապետ 7  
Մարիա, դուստր Մօրիկ կայսեր 150  
Մարիամ Աստուածածին 143

Մարիամ, Միւնեաց տիկին 12, 143, 188, 189, 196  
Մարկիանոս կայսր 160  
Մարկուարտ Յոզէֆ 13-15, 23, 37, 219  
Մարրիկիոս կայսր (տե՛ս Մօրիկ)  
Մէլիքսեթ-Բէկ Լեւոն 144  
Մէլիք-Օհանջանեան Կարո 7  
Մեսրայիմ, թոռ Նոյի 156  
Մեսրոպ եպիսկոպոս (տե՛ս Տէր-Մովսիսեան Մեսրոպ)  
Միքայէլ Բ կայսր 14, 219, 222  
Միքայէլ Գ կայսր 219, 222  
Մլեհ Ճարսամանեցի 121  
Մլեհ, Վանի բերդապահ 129  
Մխիթար Այրիվանեցի 7, 24  
Մխիթար Անեցի 7, 10, 143  
Մխիթարեաններ 9, 22, 23, 148, 186  
Մոկաթլ Վանանդացի 221, 224  
Մոյրիկէս 181 (տե՛ս Մօրիկ)  
Մովսէս Դասխուրանցի (Կաղանկատուացի) 7, 48, 143, 179  
Մովսէս Երզնկացի 44, 148  
Մովսէս Խորենացի 6, 140, 153, 156, 157, 168, 182  
Մովսէս մարգարէ 42, 70, 77, 154, 203, 204  
Մուաւիա խալիփայ 163  
Մուհամմեդ Բեն-Օքբայ, Մահմէտ զօրավար 161, 162  
Մուհամմեդ Բիլլահ խալիփայ 39  
Մուհամմեդ (Մահմէտ, Մուհամէտ, Մահմատ) մարգարէ 17, 22, 27, 48, 54-58, 70-72, 140, 143-145, 157, 158, 161, 210, 214  
Մուշեղ, որդի Սմբատ արքայի 133, 134, 136, 188, 195  
Մուշեղ, որդի Վարդ պատրիկի 91  
Մուսէ, որդի Մահմէտի 109  
Մուրիկ կայսր 58, 60, 61, 84, 145 (տե՛ս Մօրիկ)  
Մսերեանց Մսեր 5  
Մսլիմ (Մալիմ) զօրավար, եղբայր Ամր խալիփայի 160, 161 (հմմտ. Հաբիբ իբն Մասլամա)  
Մրուան ոստիկան 191, 197, 198  
Մրվան (տե՛ս Ապուստրվան)  
Մօրիկ (Մաւրիկիոս, Մուրիկ, Մոյրիկէս) կայսր 22, 25, 39, 44, 48, 58, 60, 61, 84, 145-150, 181  
  
Յազդ 179 (տե՛ս Իազատ)

Յազկերտ Ա Մեղաւոր արքայ 142  
Յազկերտ Գ արքայ 157  
Յակոբեան Ալեքսան 10, 13, 157, 158, 162, 179, 183, 184, 200, 217, 222, 228  
Յանին Ռ. 150  
Յարութիւնեան Աէթ 156  
Յեքոնիա 6  
Յիսուս Քրիստոս 24, 62, 63, 65, 68-70, 77, 79, 87-89, 143, 154, 155, 187, 188, 190, 191, 194-197, 201, 205, 209, 210, 214, 220, 221, 223, 224  
Յովաբ Դւնեցի կաթ. 207, 211  
Յովաբ Իսրայէլի սպարապետ 215, 217  
Յովհան Մամիկոնեան 32, 42, 46, 157  
Յովհան (Յոնան, Յովնան) Մայրագոմեցի 37, 68, 153, 192, 199, 204  
Յովհան Ոսկեբերան 216, 218  
Յովհան Օձնեցի կաթ. 191, 198  
Յովհաննէս աւետարանիչ 142, 154  
Յովհաննէս (Յեւանէս) Դրասխանակերտցի կաթ. 3-6, 10-13, 15-21, 23, 31, 37, 42, 48, 154, 162, 178, 186, 188, 190, 191, 194, 207, 208, 211, 214, 220, 221  
Յովհաննէս, Յովհան Մայրագոմեցու աշակերտ 204  
Յովհաննէս Ովայեցի կաթ. 221, 223  
Յովհաննէս պատրիարք 76, 78  
Յովհաննէս-Սենեքերիմ, Փառխոսիթագ. 179  
Յովհաննէս Տարօնեցի Կողեռն 23-26  
Յովնանեան Հ. Դեւոնդ 37  
Յովսափաթ, Իսրայէլի թագ. 215, 217  
Յովսէփեան Գարեգին կաթ. 178  
Յուզա առաքեալ (Ուզա) 117  
Յուսեփ, Յուսուփ (Ուսեփ, Ուսուփ, Եուսուփ), որդի Ապուստի 10, 12, 22, 129-133, 186-190, 193-195, 197  
Յուստինիանոս Ա կայսր 151  
Յոքոնիա, Իսրայէլի թագ. 215, 217  
Յոնան (տե՛ս Յովհան Մայրագոմեցի)  
  
Նաբուգոդոնոսոր 6, 215, 217  
Նեո 54, 142  
Նեստոր 55, 56, 72, 143  
Նեսրաբ 160  
Ներոն կայսր 142  
Ներսէ, Գարգմանի տէր 19  
Ներսէս Աղուանից կաթ. 191, 198  
Ներսէս Մեծ կաթ. 54, 61, 141

Նեօլեքէ Թէոդոր 151  
Նիկեփորոս Փոկաս 22, 38  
Նոյ 57, 144, 156  
  
Շահ Աբբաս արքայ 149  
Շահնազարեանց Կարապետ վրդ. 9, 10, 186  
Շահրվարազ 151, 152  
Շամիրամ 168  
Շապուհ Բ արքայից արքայ 141, 142, 215-217  
Շապուհ Բագրատունի, որդի Աշոտ Ա-ի 11, 12, 191, 198  
Շապուհ Բագրատունի, որդի Սմբատ պատրիկի 13, 15, 16, 219, 222  
Շապուհ Սասանեան, Հայոց թագ. 142  
Շերմազանեանց Գալուստ 10  
Շուշան Բաբելոնացի 203  
Շոմոն Մարի-Լուիզ 140  
  
Ոգբա, Ոգորս զօրավար, ոստիկան 162, 191, 198  
Ոսկեան Համազասպ 165  
Որմիզդ (Հուրմիզտ) Սասանեան թագ. 85  
Ութմանիկներ 185  
Ուխտանէս պատմիչ 5, 6, 9, 10, 13, 15, 215, 217  
Ուռհայեցի (տե՛ս Մատթէոս Ուռհայեցի)  
Ուսեփ, Ուսուփ, որդի Ապուստի 129, 131, 132, 187 (տե՛ս Յուսեփ)  
Ուսիփան 188, 194 (տե՛ս Գրիգոր Սուփան)  
  
Ջամէեան Հ. Միքայէլ 13, 14  
  
Պապ թագ. 54, 141, 142  
Պատկանեան Քերովէ 165  
Պատրիկ (տե՛ս Վարդ Պատրիկ)  
Պաւղոս (Պողոս) առաքեալ 215, 217  
Պետրոս առաքեալ 215, 217  
Պետրոս Գետադարձ կաթ. 24, 26  
Պետրոս Դուրեան 160  
Պողարեան Նորայր եպ. 8, 200  
Պրոբոս կայսր 157  
  
\* Շապուհ Բագրատունի պատմիչ անունը ցանկում ներառուած չէ:

Զալալեանց Սարգիս արքեպ. 10  
 Զամասպ 144  
 Զափր 7  
 Զուանչէր պատմիչ 144  
 Թաճայ տաճիկ 119  
 Թափսակ 76, 160  
 Թշտունի (Ըռշտունի, Ռրշտունի) տոհմ 20, 161, 163, 165, 181  
 Թոբովամ, Իսրայէլի թագ. 215, 217  
 Թոմանոս կայսր 22, 38, 118, 175  
 Թստակէս (Արիստակէս) կաթ. 203  
 Սալքայ, Սալիք ամիրայ 112, 124, 125, 143  
 Սահակ (Իսահակ) Չորափորեցի Հայրապետ (եպ.) 26, 42, 44, 80, 82, 161, 162, 191, 198  
 Սահակ, որդի Աշոտ Արծրունու 32, 91-93, 167  
 Սահակ, որդի Իսմայէլի 219, 221-223  
 Սահակ, որդի Հուրմիզդ արքայի 85  
 Սահակ Սեւաղայ Առանշահիկ 176  
 Սահակ, Սիւնեաց իշխան 186, 188, 192, 193, 195, 198  
 Սահլ, որդի Սմբատի 19  
 Սահուռ Անձեւացի 157  
 Սամուէլ Անեցի 6-8, 11, 200, 203, 205  
 Սամուէլ ծերունի 92, 167  
 Սանասար, որդի Սենեքերիմի 77  
 Սանատրուկ թագ. 66  
 Սառայ 155  
 Սասանեաններ 140-142, 144, 148, 151, 157, 163, 180  
 Սարայ, Սարի, Սափայ Ամատունի (Արծրունի) 102, 122, 127, 128  
 Սարասար 161  
 Սարգիս, Սերգիոս ԲՀիրայ (Բահիրայ) 55-57, 143  
 Սարգիս, որդի Հուրմիզդայ  
 Սեբէոս (Սեբիոս, Եսեբի, Իսիրիոս) 6, 7, 42, 145, 154, 161, 164  
 Սեղեկիա, Իսրայէլի թագ. 215, 217  
 Սենեքերիմ, Սենեքարիմ, Սենիքարիմ, Ասորեստանի արքայ 76, 160, 161  
 Սենեքերիմ, Վասպուրականի թագ. 166  
 Սետայ (Սեղայ) 118  
 Սերւանտէս 34  
 Սէթ, որդի Ապուսէթի 30, 109, 110-111  
 Սէմ 144

Սիմէոն մենակեաց 87, 89  
 Սիւնեցի, Սիւնեաց տոհմ 176  
 Սմբատ Ա (Սմպատ) 3, 6, 10, 12-14, 16-18, 20-23, 30, 31, 36, 38, 39, 118-121, 124-128, 133-138, 166, 175, 178, 180, 181, 185-187, 189-194, 196, 198, 199, 208  
 Սմբատ Բ Տիեզերակալ 182  
 Սմբատ Բիւրատեան, Հայոց իշխան 191, 198, 161  
 Սմբատ Խոստովանող, ստրատելատ 4, 10, 11, 14, 18, 19, 208, 212  
 Սմբատ, Հայր Սահլի 19  
 Սմբատ մանուկ 188, 195  
 Սմբատ պատրիկ 13, 14  
 Սմբատ, Սիւնիքի թագ. 179  
 Սմպատ, Արեւելից իշխան 134  
 Սմպատ (Սմբատ) Արծրունի 32  
 Սմպատ (Սմբատ) Տարօնեցի 30, 35, 109, 110  
 Սմպատուհի (Սմբատուհի) 32, 91, 92  
 Սողոմոն Գառնեցի կաթ. 4, 207, 211  
 Սողոմոն, Իսրայէլի թագ. 76, 215, 217  
 Սողոմոն վանահայր 207, 211  
 Սոմալ Հ. Սուքիաս (Somal P. S.) 9  
 Սոփի, դուստր Բագրատի 103  
 Սուլէյման խալիփայ 160  
 Սուլիբ, Հայր Ապուտահիրի 130  
 Սուփան (տե՛ս Գրիգոր Սուփան)  
 Ստեփանոս Ասողիկ 3, 6, 11, 13-15, 17, 23, 37, 42, 48, 162, 164, 219-222  
 Ստեփանոս Նախավկայ 88  
 Ստեփանոս Օրբէլեան 178, 179  
 Ստեփանոս Նահատակ (Թ դար) 18  
 Սքանդիար (տե՛ս Աղէքսանդր Մակեդոնացի)  
 Վահան Արծրունի (Ամատունի) 122, 127  
 Վահան Գողթնացի 191, 198  
 Վահան Մամիկոնեան (Ե դար) 45, 153  
 Վահան Մամիկոնեան (Է դար) 72  
 Վաղէս կայսր 60, 141  
 Վասակ Աբեղեան 126, 127  
 Վասակ, Գորոզուի իշխան 134  
 Վասակ Իշխանիկ, Վայոց ձորի տէր 19  
 Վասակ, Սիւնեաց իշխան 186, 188, 192, 193, 195, 198  
 Վասիլ (Բարսեղ) Ա կայսր 175, 219, 222

Վասիլիսկոս (տե՛ս Թէոդորոս Վասիլիսկոս)  
 Վարդ Պատրիկ 26, 28, 42, 83, 84, 86-91, 158, 163, 165, 181  
 Վարդան Արեւելիցի (Բարձրաբերդցի) 6, 11, 22, 143, 154, 162, 165  
 Վարդան Մամիկոնեան 153  
 Վարդանեան Վրէժ 219  
 Վարդեան, Վարդան, որդի Զափրանի 102  
 Վլէթի ստրիկան 191, 198  
 Վոսմ Ե Գոռ արքայ 142  
 Վոսմշապուհ թագ. 142  
 Վրաց Բագրատունիներ 11  
 ատ-Տաբարի 151  
 Տաճատ Անձեւացի (Արծրունի) 18, 21, 22, 29, 30, 35, 38, 42, 104-112, 156, 173  
 Տայեան Հ. Ղեւոնդ 9, 10, 148, 186  
 Տաշեան Յակոբոս 7  
 Տէր-Ղեւոնդեան Արամ 41, 158  
 Տէր-Միքելեան Արսէն 6, 8  
 Տէր-Մկրտչեան Գալուստ 4, 12, 18, 27, 53, 156, 166  
 Տէր-Մովսիսեան Մեարոպ եպ. 4, 7, 9, 12, 23, 27, 34, 43, 44, 53, 59, 60, 72, 73, 79, 82, 83, 93, 129, 136, 143, 144, 148, 151, 154, 155, 157-164, 167, 168, 171, 173, 175, 176, 179, 181  
 Տիբերիոս կայսր 145, 146, 148  
 Տիգրան Մեծ արքայ 155  
 Տիրան թագ. 54, 141  
 Տրդատ Մեծ 54, 140, 141, 163

Բիփաթ 140  
 Փաւստոս Բուզանդ 6, 32, 33, 46, 151  
 Փառանձեմ թագուհի 141  
 Փարպեցի (տե՛ս Ղազար Փարպեցի)  
 Փրիլպպէ, Սիւնեաց իշխան 19  
 Փոկաս Ա կայսր 22, 38, 150, 172  
 Փոկաս Բ կայսր (Նիկեփորոս Փոկաս) 22, 29, 38, 105  
 Փոկաս եպ. 122  
 Քաջբերունեաց տոհմ 135  
 Քասրէ Ճապասպ (տե՛ս Խոսրով Ապրուէզ)  
 Քարամեանց Ն. 23  
 Քեռի Թորոս 163  
 Քուլինար, Կուլինար 30, 120, 123  
 Քուրդիկ Մամիկոնեան 19  
 Քուրթ Ամատունի 122, 127  
 Օգրա զօրավար 42, 164  
 Օթման զօրավար 42, 164  
 Օհան Օձնեցի (տե՛ս Յովհան Օձնեցի) Օմայաններ 145  
 Օմար իբն Աբդ ալ-Ազիզ խալիփայ 160  
 Օմար իբն ալ-Պատտար խալիփայ 72  
 Օմար ստրիկան 191, 198  
 Օրբէլեան (տե՛ս Ստեփանոս Օրբէլեան)  
 Պատմա (Պաթմա) 55, 58, 70, 84  
 Պիրղուսի 150, 157



Տ Ե Վ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր, Յ Ե Վ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

Աբաղալի դաշտ 172
Ագարակի ամրոց 122, 179
Ադանայ (տե՛ս Ատանայ)
Ալանաց դուռն (տե՛ս Դարբիալ) 31, 74, 159, 178
Ալանք, Ալանաց երկիր, ալաններ 74, 75, 160
Ալաշկերտ, Վաղարշակերտ, Աղաշկերտ 118, 177
Ալբերդ 219, 222
Ալինջադաղ լեռ 177
Ալմուլատ (Ալմուլատ) քաղ. 219, 222
Ախալցխիս, Ախալցխայ 183 (հմմտ. Ջալցխալ)
Ախուրան գետ 60, 148, 149, 182
Աղաճեջք գաւ. 152
Աղաշկերտ 118 (տե՛ս Ալաշկերտ)
Աղբակ գաւառ 166, 170, 174, 179, 220, 222 (տե՛ս Անաեւ Հաղբակ)
Ս. Աղբերկայ վանք 20, 178
Աղէքսանդրիա Պաղեստինի 156 (տե՛ս Սքանդիար քաղ.)
Աղէքսանդրիա (Սկանտարիա՝ Եգիպտոսում) քաղ. 57, 71, 143, 144, 156,
Աղթամար 163, 166
Աղի ծով 103, 172 (տե՛ս Անաեւ Ուրմիոյ լիճ)
Աղիովիտ գաւ. (Աղոտի, Աշոտի գաւ.) 138, 171, 178, 184, 185
Աղձնիք նահ. (Աղձնեց) 134, 142, 173, 183
Աղոտի (Աշոտի) գաւ. (տե՛ս Աղիովիտ)
Աղորնիք (տե՛ս Աշորնիք)
Աղուանք, Աղուանից երկիր (Աղվանք, Աղուվանք, Բուն Աղուանք) 7, 19, 48, 60, 64, 118, 125, 148, 175, 176, 179, 184, 191, 198
Աղ-չայ գետ 163
Աճուճ-Մաճուճ ցեղեր 159
Ամարասի վանք 183
Ամիդ քաղ. 180
Ամիւկ (Ամկոյ) ամրոց 138, 185
Ամուրն Կայան 93, 167 (տե՛ս Նկան)
Ամրէտաքար բերդ (Ամիւկաքար) 138, 185
Այաս (տե՛ս Ասիա)
Այլի, էլի գաւ. 169
Այսրկովկաս 178

Այրարատի գաւ. (նահանգ) 21, 104, 142, 147, 152, 164, 167, 175, 177, 182
Անգեղտուն գաւ. (Գեղամայ-Գեղայ գաւառ) 219, 222
Անդիաւք (տե՛ս Անտիոք)
Անթիլիաս 157, 178
Անի քաղաք, ամրոց 22, 38, 59, 147-149, 180, 182, 187, 194
Անհուշ բերդ 141
Անձախ, Անձախիձոր, Անձախից ձոր, Անձախիձոր գաւ. 102, 122, 168, 170, 179, 204
Անձաւ[աց]եաց (Անձեւացիք) գաւ. 105-107, 134, 157, 172, 173, 184
Անտիոք (Անտիաւք, Անդիոք) 71, 155
Աշատայ վանք (Աշոյ անապատ) 33, 51, 91, 92, 167
Աշորնիք (Աղորնիք) 118, 176
Աշոտայ վանք 51 (տե՛ս Աշատայ)
Աշոտի գաւ. (տե՛ս Աղիովիտ) 138, 184
Աշուր քաղ. 160
Աշտիշատ 141
Ապահուանիք, Ապահուանի գաւ. 31, 118, 177, 180
Առաջաւոր Ասիա 160
Ս. Առաքելք եկ. 215, 217
Առբերան, Առբերանի գաւ. 118, 171, 172, 178, 185
Առեստաւան 178, 185 (հմմտ. Արեստ)
Առճնաց գաւ., ամրոց (Արճուճք) 103, 171
Առնոյտն գաւ. 175
Առնոս (Ջառնոս) լեռ 36, 174, 175
Առնոսի Ելք (ամրոց) 117
Ասաղի 219, 222
Ասիա (Այաս, Եգիպոս) 71, 156
Ասորեստան (Ասորք) 76, 160
Ասորիք (Ասորեստան, ասորիներ) 31, 40, 55-58, 61, 95, 97, 101, 102, 124, 125, 143, 148, 155, 163, 167, 180, 186, 193, 219, 222
Ասպահան 55
Աստէշատ գիւղ 122
Ասրուք 76, 160 (հմմտ. Ասորեստան)
Ատանայ (Ադանայ), Ատրանայ 71, 155, 156
Ատրպատական աշխարհ 22, 117, 151-153, 163, 169, 181, 182

Արարացիք, արարներ (տաճիկներ) 14, 16, 19, 26-30, 35, 42, 48, 50, 54, 75, 79, 83, 95, 104, 106, 110, 111, 119, 124, 140, 142-144, 151, 155, 157-161, 163, 164, 171, 174, 177, 180, 196, 198, 222
Արարիկներ, Արապկեր (արարներ) 96, 108, 168
Արաբիստ 145
Արագածոտն գաւ. 207
Արագւի գետ 159
Արածանի գետ 177, 180
Արան (տե՛ս Խառան)
Արարատ լեռ 144
Արարատեան դաշտ 157
Արդաւետ, Արդեբիլ 129, 181 (տե՛ս Արտաւետ)
Արեստ գետ 138, 185
Արեւելից երկիր, Արեւելք 60, 134
Արեւիք գաւ. 118, 152, 176
Արեւմտեան Եւրոպա 150
Արեւմտեան Վրաստան 148, 182
Արզն, Արզուն, Արզան, Արզոն 168 (տե՛ս Անաեւ Յարզուն)
Արծափք ամրոց 84, 164
Արծկէ, Արճկէ 125, 180
Արճեք քաղ. 119, 125, 171, 178
Արճուճք (տե՛ս Առճնաց գաւ.)
Արմինիյա ոստիկանութիւն 180
Արտազ գաւ. 152-154, 164
Արտաշանք, Արտաշան գաւ. 133, 134, 183
Արտաշ (Արտաշեսեան) գաւ. 84, 164,
Արտաշատ 180, 182
Արտաշատ Վերին գիւղ 180
Արտաւանեան գաւ. 164
Արտաւետ (Արդաւետ, Արդեբիլ) 129, 132, 181
Արտաւս, Արտոս լեռ 165, 166
Արցախ նահ. 152, 176, 177, 183, 184, 189, 195
Արփա գետ 152
Արփաուս գիւղ 152
Աւարայրի դաշտ 153
Աւարի դաշտ գաւ. (Դաշտ Աւարի) 103, 171
Ափխազք, Ափխազաց երկիր 22, 31, 60, 62, 133-137, 148, 150, 184, 199
Ափրիկէ 174

Բարէլացոց (Բարելացոց) երկիր, Բարէլուն 40, 54, 58, 70, 76, 83, 96-101, 103, 106, 110, 112, 117, 125, 140, 192, 198, 203, 215, 217
Բագարիճ 164
Բագարան 191, 198
Բագրեւանդ գաւ. 8, 177, 202, 203, 206
Բախտադի (Բաղտադի) երկիր 100
Բաղաբերդ 152
Բաղտադ, Բաղդադ, Բախտադ (Պախտադ) քաղ. 21, 22, 29, 30, 33, 35, 38, 43, 58, 70, 72-74, 79, 83, 96-100, 103-107, 109, 111, 143, 144, 174, 178
Բաղք գաւ. 118, 152, 176
Բայազէտ 164
Բայձոր (տե՛ս Վայոց ձոր)
Բաշկալէ 166, 174
Բասէն, Բասեան գաւ. 31, 118, 177, 219, 222
Բարդա 176 (տե՛ս Պարտաւ)
Ս. Բարդուղիմէոսի վանք 166
Բարձր Հայք նահ. 142, 150, 164, 165, 175
Բերկրի քաղ., ամրոց 104, 119, 171, 172, 178
Բերութ (Բեյրութ) 71
Բղնունեաց ծով 138, 185
Բղնունիք, Բղնունեաց գաւ. 35, 177, 180, 185
Բիւզանդիա, Բիւզանդացոց կողմանք, Բիւզանդական 6, 11, 14, 15, 22, 26-29, 35, 38, 61, 140, 145, 149-151, 158, 159, 161, 163, 166, 173, 175, 177, 178, 180, 215, 217
Բոսփորի նեղուց 160
Բուժունիք գաւ. 165, 174
Բուլանըխ 177
Բունոյցոր 36, 117, 174
Բոսիս (Բաւտիս) գետ 40, 158
Գազա (տե՛ս Ղազէ)
Գամիրք 145
Ս. Գայիանէ եկ. 192, 199
Գայլ գետ 85, 165
Գանձակ Շահաստան քաղ. (Գազակա) 62, 150, 151
Գառնի ամրոց, քաղաքագիւղ (Կոտայք գաւառում) 141, 149, 207, 211
Գառնի (Դառնի) գաւ. 104, 138, 172
Գարգման գաւ. 19, 189, 195
Գարգան 168 (տե՛ս Խարգան գետ)

Գաւրի (տե՛ս Գորի)  
Գղաց (Գուկոյք, Գնդաց, Գթաց) աշխարհ 71, 96, 156, 157, 168 (տե՛ս Անա գոթեր)  
Գեղամայ գաւառ (= Գեղայ - Անգեղ գաւ.) 219, 222  
Գեղամայ ծովակ 186, 191, 193, 197  
Գեղարքունիք գաւ. 11, 152, 189  
Գերամ (Խրամ) 84, 164  
Գերատայ դաշտ 66, 153  
Գնայ դաշտ (Գի՞ն, Գո՞ւն) 133, 182  
Գոպ եւ Մագոպ 159  
Գոպչէն (Գոթչէն) գաւ. 133, 136, 182, 183  
գոթեր, Գութք 156, 157 (տե՛ս Անա Գղաց)  
Գողգոթայ 70, 154  
Գողթն գաւ. 152  
Գոմաձոր գիւղաքաղաք 219, 222  
Գորոզու, Գուռզ 19, 134, 183, 184  
Գուգարացիք, Գուգարք (Կախէթ) 31, 178  
Գուգարք նահ. 175, 176, 182, 183  
Գութք (տե՛ս գոթեր)  
Գունդք (տե՛ս Գղաց)  
Գորի (Գաւրի) գիւղ 134, 135, 183

Դամասկոս 11, 40, 76, 161-163, 191, 198  
Դամիաթ 71  
Դաշտ Աւարի (տե՛ս Աւարի դաշտ)  
Դաւնի գաւ. (տե՛ս Գաւնի)  
Դավրէժ (տե՛ս Թավրէժ)  
Դատվան 101, 169, 170, 181  
Դարաշամբ 164  
Դարբանդ (Դարբանտ, Տարբանդ, Դերբենդ) 74, 75, 159, 160  
Դարիալ (տե՛ս Անա Ալանաց դուռն) 31, 159, 178  
Դարոյնք 164  
Դարսիս (Թարսիս) 71, 155, 173  
դեմիկներ 168, 174  
Դեմաւենդ 157  
Դեմետրի վանք 56  
Դերբենդ (տե՛ս Դարբանդ)  
Դերջան (Դերջան) 85, 164  
Դիզակ 183  
Դուին (Թվին, Դվին) 12, 21, 29, 104, 118, 125, 141, 157, 180, 187, 190, 194, 196, 198, 209, 213

Եբրայեցիք 70, 144  
Եգեթք, Եգերացիք 31, 148, 175, 178, 192, 199  
Եգիս (տե՛ս Ասիա)  
Եգիպտոս, Եգիպտացիք 56, 57, 60, 71, 72, 84, 148, 155, 156  
Եղեսիս, Ուռւայ 162, 180  
Եկեղեցաց գաւ. (Եկեղիք, Եկեղեցի) 85, 164  
Եղեգիս 177  
Երազգաւորս 182  
Երասիս գետ 42, 84, 153, 161, 164, 177  
Երասխաձոր գաւ. 189, 196  
Երեւան (Հերեւան) 6  
Երզնկայ 164  
Երիւարք գաւ. 169  
Երնջակ գաւ. 152  
Երնջակ գետ 177  
Երնջակ (Երնջակ) ամրոց 31, 118, 177  
Երուսաղէմ 8, 26, 39, 41, 60, 61, 63, 64, 70-72, 76, 84, 88, 151, 152, 154, 155, 162, 165, 200  
Եւրոպա 156  
Եփեսոս 143  
Եփրատ (Եփրատ) գետ 58, 150, 156, 162, 165, 180

Ջագրոսի լ-շղթայ 170  
Ջայլցեխ (տե՛ս Ջայլցեղ)  
Ջառնոս (տե՛ս Առնոս)  
Ջարեհաւան գաւ. 168, 174  
Ջարեհաւան քաղ. (Այրարատում) 178  
Ջարեհբերդ (Արեհբերդ) 36, 117, 174  
Ջարեհանդ (Ջարաւանդ, Ջարուանդ) գաւ. 29, 66, 103, 132, 153, 171  
Ջենջան 151  
Ջուարթնոց 158  
Ջրեսկ 207, 211  
Ս. Զօրավարք (Ջաւրավարս) եկ. 220, 222

էգիս դաշտ 101, 169  
էլի (Այլի) գաւ. 169  
Ս. Էջմիածին 5, 8, 12, 14, 21, 24, 26, 31, 39, 52, 192, 199  
էրզրում 150

Թախտ-ի Սուլէյման 151  
Թավրէժ, Թաւրիք (Դավրէժ) 62, 65, 130, 151, 154  
Թարսիս (Դարսիս, Տարսոն) 71, 155

Թեհրան 143  
Թերեք գետ 159  
Թէոդոսիոպոլիս (Թէոդոյպոլիս) քաղ., Թէոդուպաւսեցիք 62, 85, 150, 219, 222  
Թիլ գիւղ (Թլայ) 220, 223  
Թիմար 185  
Թիւրքեր 174  
Թիֆլիս 31, 179, 186, 190, 191, 207, 220 (տե՛ս Անա Տփլիս)  
Թխաջուր, Թխաջուր 101, 126, 170, 181  
Թմուկ, Թմուկի ամրոց 182  
Թոնզրակ լեռ 172  
Թոռուզ 31  
Թոռնաւան գաւ. 167, 170  
Թուրքիս 150  
Թվին (տե՛ս Դուին)  
Թրակացուց աշխարհ 161

Իսկիւտար (Խրիւսոպոլիս) 160  
Իսմայէլացիք (տե՛ս արաբներ)  
Իսմայէլի երկիր 40, 41, 162  
Իսրայէլ, Իսրայէլացիներ 6, 70, 155, 160  
Իրան 143, 144, 150, 156, 157, 178, 179, 181, 182

Լազեր (ճաներ) 148  
Լազիկա, Լազ[ի]կիք, (Լակզեց) 60, 133, 148  
Լատիկ (Լատակիս) 71  
լատիններ 150  
Լեյլան 151  
Լիմ կղ., անապատ 31, 185  
Լմբափոր գաւ. 170

Խաբուր 162  
Խաղամակերտ (Խանդամաշէն, Հաղամակերտ) 116, 117, 174  
խաղարներ 26, 159  
Խաղրաց երկիր (Հաղրաց, Խաղարաց, Խաղիրք) 26, 74, 159  
Խաղտիք 175, 219, 222  
Խանդամաշէն 117 (տե՛ս Խաղամակերտ)  
Ս. Խաչ վանք 174, 179  
Խառան (Արան), Խառէս 80, 82, 161, 162  
Խարզան, Գարզան, Հարզան գետ 168  
Խաւթ, Խութ 30  
Խլաթ, Ղլաթ 118, 124-126, 137, 157, 177, 181

Խոզան քաղ. 219, 222  
Խոզ, Հոզ ամրոց 126, 181  
Խոյ 175 (տե՛ս Անա Հեր)  
Խոտ 152  
Խոտորի (Խոտորոյ) ձոր 102, 170 (տե՛ս Կոտոր)  
Խորասան, Խորոսան 28, 40, 71, 96-98, 156, 157, 178  
Խորիեան գետ (տե՛ս Ախուրեան)  
Խոր Վիրապ վանք 182  
Խորտասաւն (Խորտասոն) կղզի 79, 161  
Խուլթայից (Խուլթանաց) երկիր, Խուլթայիք, Խուլթ (Խուլթ) 109-111, 173  
Խուլթիկներ 168, 174  
Խրամ աւան 164  
Խրամի գետ 176  
Խրիւսոպոլիս (Խոսոյպոլիս, Ոսկէ քաղաք) 75, 160

Մաղկիտոն, Մաղկոտն գաւ. 119, 178  
Մանարք 31, 178  
Մաւ գետ 152  
Մղուկք գաւ. 152  
Մմու բերդ 219, 222  
Մոփք նահ. 142, 165, 183, 222

Կազբեկ լեռ 159  
Կալիկալա 150  
Կախէթ 31, 178 (տե՛ս Անա Գուգարացիք)  
Կասիք 156  
Կաճկաքար գիւղ 219, 222  
Կայան Ամուր 93  
Կանգարք գաւ. 133, 136, 182  
Կանգաւար 184  
Կապադովկիս, Կապադովկացիք 145, 146, 152, 166  
Կապադակ 176  
Կապան 152, 176  
Կապուտայ (Կապոյտի) քարանձաւ 189, 196  
Կապուտան լիճ 172  
Կասպիական դրունք 159  
Կասպից ծով 177  
Կասպք (Փայտակարան) նահ. 177  
Կարամայ, Կամառայ (տե՛ս Մարայ)  
Կարին, Կարնոյ քաղաք 31, 62, 64, 70, 85, 150, 178  
Կարկառ 8, 200

Կարմիր գետ 153, 170  
 Կարնոյ դաշտ 150  
 Կարս 182  
 Կելկիթ 165  
 Կենտրոնական Ասիա 143  
 Կեսարիա 140  
 Կիլիկիա, կիլիկիացիներ 49, 71, 102, 150, 155, 156  
 Կղարջբ գաւ. 31, 178  
 Կոգովիտ գաւ. 84, 157, 164  
 Կոլոնիա (Կոլանիա) 85, 164, 165  
 Կոլ (Կոլ, Կոչ) գաւ. 133, 136, 183  
 Կողբ քաղաքագիւղ 192, 198, 199  
 Կողբիա 148  
 Կոստանդինուպոլիս (Կոստանտինուպոլիս, Կոստանդնուպոլիս) 15, 26, 42, 59-61, 71, 75, 143, 145-147, 150, 154, 160, 190, 196, 215, 217, 219, 222  
 Կովկաս լեռներ (Կովկարս) 31, 75, 176, 178  
 Կովկասեան (Կասպիական) դրունք 159  
 Կովսական գաւ. 152  
 Կոտոր (Խոտորոյ ձոր, Կոտորոց բերդ, Տոտոր) ամրոց 93, 102, 123, 167, 168, 170, 179  
 Կոտուր, Կոտոր գետ 153, 163, 164, 167, 168, 170, 175  
 Կորդուք գաւ. 134, 184  
 Կործայք նահ. 152, 170, 184  
 Կուժայրի 182  
 Կուր գետ 31, 73, 158, 176-178, 182-184  
  
 Հաբանդ գաւ. 152  
 Հաբանդ Միւս գաւ. 183  
 Հազարացիք (արարներ) 188, 207, 211  
 Հաղամակերտ 116, 117, 166, 174, 179, (տե՛ս Խաղամակերտ)  
 Հազրաց (տե՛ս Խազիրք)  
 Հալիձոր 152  
 Հաղբակ գաւ. (Յաղբագ, Աղբակ) 32, 93, 111, 166  
 Հայաստան, Հայք, Հայոց տուն 4, 14, 16, 18-20, 24, 26, 27, 29-32, 35, 36, 48, 54, 59, 60, 62, 64, 66, 72, 74, 80, 82-85, 88-90, 97, 101, 103, 107, 109-111, 116, 118, 120, 124-127, 133, 137, 140-144, 147-153, 156-159, 161, 163, 172, 174-176, 178, 180, 182-184-188, 190-194, 196-198, 203, 204, 207-209, 211-213, 219-222 (տե՛ս Ասիա Մեծ Հայք)  
 Հայիկներ (Հայեր) 168

Հայկական լեռնաշխարհ 167, 168, 172  
 Հայոց Արեւելից կողմանք 184  
 Հայոց ծոց 156  
 Հայտուն 153  
 Հարզան 168 (տե՛ս Խարզան գետ)  
 Հարք գաւ. 31, 118, 177  
 Հացիւն (Հացունեաց) բերդ, դաշտ, աւան 69, 84, 153, 154, 164  
 Հացունեաց խաչ 23, 25-27, 39, 44, 46, 48, 54, 145, 148, 150, 166  
 Հեր քաղ. (Խոյ) 30, 36, 101, 118-122, 168, 169, 175  
 Հերի գաւառ 29, 153, 168, 170, 171  
 Հերի դաշտ 103, 123, 137, 172  
 Հիւսիսային Կովկաս 159  
 Հնաբերդ 180  
 Հնդիկներ 168, 174  
 Հողաբլուր 103, 172  
 Հողց (տե՛ս Խողց)  
 Հոներ 42, 159, 160  
 Հոռոմներ, Հոռոմոց, Հոռոմդի 25, 59-62, 65, 66, 70, 72, 75, 77, 83-86, 105-107, 145, 181, 204, 219, 222  
 Հունարակերտ (Նունարակերտ) 178  
 Հոռոմայեցիք, Հոռոմէացիք, Հոռոմէական 59, 62-64, 140-142, 145, 186, 193, 216, 218  
 Հոռոմ 66, 107, 161, 162, 215, 217  
 Հրամանսարայ (Հրամանսարակ, Հրամանս արարաք) 66  
 Հրէացիք, Հրէաներ 41, 42, 70, 144, 154-156, 160, 167  
 Հրէաստան 71  
  
 Զայլցեղ, զԱյլցեղ (Ախալցխէ՞) 183  
 Զել 103, 171  
 Զորագիւղ 189  
 Զորագահակ լ-ա 157  
 Զորք գաւ. 152  
  
 Ս. Ղազարի վանք 9, 186  
 Ղազէ (Գազա) 71  
 Ղալաքենդ 176  
 Ղալթ, Ղալթ երկիր, բերդ (տե՛ս Խլաթ)  
  
 Ծախաման 120  
 Ծախի, Ծախուկ, Ծահուկ բերդ (Կործայքում) 36, 102, 117, 123, 170, 174, 179

Ծահուկ, Զահուկ գաւ. (Կործայքում) 102, 121, 122, 170, 174  
 Ծահուկ գաւ. (Միւնիքում) 152  
 Ծաներ 148  
 Ծարմանցի դաշտ 66, 153  
 Ծէնաց (Ծենաց) երկիր, Ծէնացիք 39, 40, 41, 73, 158, 159  
 Ծիղբ 134, 184  
 Ծողբ (՞) 134, 184  
 Ծուաչ գաւ., Ծուաչ-ոտտ 84, 93, 163, 170  
 Ծրպայ վանք 124, 179  
  
 Մալաթիա 156  
 Մախազի բերդ, Մաղասաբերդ 60, 148, 149  
 մակեդոնացիներ 40  
 Մակու 153, 164  
 Մակուրան կուրան 190, 197  
 Մահարեշա, Մահուաչ գիւղ 86, 165  
 Մահլա, Մահլազան, Маглазань 175  
 Մահլազան, Մախլազան, Մաղխազան 118, 121, 175  
 Մաղրիպիկք, Մաղրիք 30, 112-114, 174  
 Մամեստիա (տե՛ս Մախա)  
 մամլիւկներ 155  
 Մանազկերտ, Մացկերտ, Մանցիկերտ 125, 177, 180  
 Մանգնաւան բերդ 138, 184  
 Մաշաւերայ գետ 176  
 Մարակերտ 170  
 Մարաղայ 151  
 Մարայ, Մառայ (Կարամայ, Կամառայ) 60, 149  
 Մարանդ 101, 118, 121, 169  
 Մարանդակայ ամրոց 102, 170  
 Մարք, մարեր 117  
 Մացկերտ 125  
 Մաքենոցաց վանք 207, 211  
 մեգրէլներ 149  
 Մելտենի, Մելիտինէ 71, 156  
 Մեծ Զար 166, 170  
 Մեծ Հայք 62, 141, 150, 152, 153, 175, 177, 182-184, 203, 220, 222, 223  
 Մեծկերտ 219, 222  
 Մեղրի 152, 176  
 Մեքարյիմ (Եգիպտոս) 156  
 Մերձաւոր Արեւելք 158  
 Մեքքա 144  
 Միսփոր գաւ. 189, 195

Միւրան 140  
 Մինգրէլիա 31  
 Միջագետք 30, 31, 64, 101, 110, 124, 125, 140, 145, 148, 162, 169, 180  
 Միջայ ամրոց 103, 171  
 Միջերկրական ծով 155  
 Միջին Ասիա 156-158  
 Ս. Մոգք եկ. 216, 218  
 Մոկք նահ. 134, 171, 184  
 Մողոքար 103, 171  
 մոնղոլ-թաթարներ 22, 151  
 Մոսկի (Մուսկի) դաշտ 126, 127, 137, 181  
 Մուկուա 5  
 Մուլթիանք գիւղ 111  
 Մուշ քաղ. 177, 178  
 Մսիս (Մամեստիա) 71, 156  
 Մսր, Մսր 156  
 Մոսուլ, Մոսլ, Մաւսուլ քաղ. 21, 28, 29, 31, 97, 98, 124, 125, 168  
  
 Յաղբագ գաւ. (տե՛ս Աղբակ)  
 Յարզուն 101, 168 (տե՛ս Արզն)  
 Յարփուզ 145  
 Յոյնք, Յունաց 14, 39, 42, 45, 54, 60-62, 64, 83, 140, 145, 147, 150, 160-163, 175, 179, 190, 192, 196, 198, 199, 216, 218  
 Յուգա 215, 217  
  
 Նաբլուս 71  
 Նախիջեւան, Նախջաւան, Նախճաւան, Նախճուան գաւ., քաղ. 31, 118, 125, 152, 164, 177  
 Նախիջեւանի շրջան 177  
 Նաւահանաց աշխարհ 134, 183  
 Նիկիա 43, 200, 203-205, 216, 218  
 Նինուէացիք 203  
 Նկան ամրոց 30, 102, 111, 112, 124, 137, 167, 170  
 Նոր 132  
 Նոր Զուղայ 10  
 Նունարակերտ (տե՛ս Հունարակերտ)  
  
 Շահապիվան քաղ. 178  
 Շահաստանի դաշտ 105  
 Շաղուագ (Շաղուագայ), Շաղուագոմ, Շողուագ 189, 196  
 Շամախի քաղ. 184

Շամիրայ ամրոց (Շամիրամայ, Վան) 101, 168  
Շամիրայ ոստան (Շամիրամայ, Վան) 124, 127, 138  
Շամք, Շամայ տուն 61 (հմմտ. Ասորիք) Շամքոր 31, 178  
Շաւարչան (Շաւարչական) 66, 153  
Շաւպար (Շոպար) 71  
Շաքի քաղ. 176  
Շիմաւոնի ամրոց (ձո՞ր) 102, 170  
Շինուհայր 152  
Շիրակ գաւ. 14, 133, 147, 149, 182, 207, 211  
Շողուագ (տե՛ս Շաղուագ)  
  
Ողջի գետ 152  
Ոսկէ քաղաք 62, 151 (տե՛ս նաեւ Թաւ-  
րէժ)  
Ոսկէ քաղաք (տե՛ս Խրիւսոպոլիս)  
Ոսկի գոտի սար 104  
Որմի, Ուրմի քաղ., գաւ. 169  
Որսիրան, Որսիրանք գիւղ 220, 222  
Ուռւայ 162, 180 (տե՛ս նաեւ Եղեսիա)  
Ուռպելի քաղ. 219, 222  
Ուտի գաւ., Ուտիք նահանգ 31, 152, 176-178, 184  
Ուրմիոյ լիճ (Աղի ծով) 29, 103, 151, 171, 172  
Ուփլիս-ցիխէ 183  
  
Չինաստան 39, 158  
Չող 159 (տե՛ս նաեւ Դարբանդ)  
Չորրորդ Հայք նահ. 142, 219, 222  
  
Պահլաւ (Պահուաղ) 215, 217  
Պաղեստին 61, 71, 155  
Պաղտաղ (տե՛ս Բաղտաղ)  
Պարսկահայք 152, 153, 168, 169, 170-174  
Պարսպատունիք գաւ. 164  
Պարսք, Պարսից, Պարսկաստան 6, 23, 25, 27, 28, 36, 39, 40, 42, 49, 55-66, 68, 70-74, 79, 80, 83-86, 97, 102, 103, 112, 117, 120, 129, 130, 132-134, 138, 140-143, 146, 151, 152, 154, 157, 164, 168, 169, 174, 179, 192, 199, 215, 217  
Պարտաւ քաղաք (քաղաքական) 31, 118, 125, 176, 177, 221, 224  
Ս. Պետրբուրգ, Պետրոգրադ 9, 39, 151, 158, 165, 173, 219

Պոնտոս ծով 75, 160  
Ջահուկ (Ճահուկ) գաւ. (Սիւնիքում) 170  
Ջերմ գետ (Արեւելեան Տիգրիս) 172, 174  
Ջուլամերի քաղ. 170  
  
Ռամլայ (Ռամալա) 71, 155  
Ռէհ, Ռէյ, Ռագա 55, 143  
Ռըշտունեաց ծով 86  
Ռշտունեաց ոստան, գաւ. (Ռըշտունիք, Ընըշտունիք) 126, 165, 166, 175, 181  
Ռուերան 55, 143  
ռուզիկներ (ռուսներ) 168  
Ռուկափ 191, 198  
Ռուսգն բերդ 69, 154  
  
Սալամաստ, Սաղամաս (Սալամաստ) քաղ., գաւ. 36, 101, 117, 122, 169, 174  
Սամառայ, Սամուր, Սումարայ քաղաք 16, 56, 57, 112, 117, 143, 174  
Սամառու տուն (տե՛ս Արաբացիք)  
Սամարիա 155  
Սասունք, Սասունք գաւառ, Սասուն 110, 111, 163, 173  
Սարաւ, Սերաւ, Սարաբ (տե՛ս Սրաւ)  
Սարդուրի-խուրդա քաղ. 172  
Սերաստիա 164  
Սեւ ծով (Պոնտոս, Մեծ ծով) 31, 160, 178  
Սեւան ամրոց (Վասպուրականում) 102, 170  
Սեւան կղզի 188, 191, 195, 197  
Սեւանայ լիճ, ծովակ 152, 188, 195  
Սիսիան 152  
Սիւնիք, Սիւնեաց 19, 23, 31, 36, 37, 64, 67, 68, 93, 152, 154, 176-179  
Սկանտարիա քաղ. 156 (տե՛ս Աղէք-  
սանդրիա)  
Սոթք գաւ. 152  
Սումարայ 56 (տե՛ս Սամառա)  
Սուրմ 103, 171  
Ս. Սոփի (Սոփիայ) եկ. 75, 78, 79  
Սպեր գաւ. 14, 219, 222  
Ստեփաննոս Նախավկայի վանք (Երու-  
սաղէմում) 165  
Ս. Ստեփաննոսի վանք (Բագրեւանդ գա-  
ւառում) 8, 202, 203, 206

Սրաւ (Սարաւ Սերաւ, Սարաբ) քաղ. 130-132, 182  
Սքանդիար քաղ. (Աղէքսանդրիա Պա-  
ղեստինի) 156  
  
Վաղարշակերտ 177 (տե՛ս Ալաշկերտ)  
Վաղարշապատ 5, 12, 118, 147, 149, 183, 200  
Վաղարշաւան 31, 118, 177  
Վայոյ ձոր, Վայոց ձոր (Վայոցուր,  
Բայձոր) 19, 118, 134, 152, 177  
Վան 28, 29, 33, 44, 93, 94, 97, 98, 100-102, 104, 118, 123, 124, 127-129, 138, 152, 167, 168, 172, 190, 196 (տե՛ս նաեւ Շամիրայ ամրոց, ոս-  
տան)  
Վանայ լիճ 152, 157, 165, 166, 170, 171, 177, 178, 180, 181, 185  
Վանանդ 219, 221-223  
Վանեփան 11, 12  
Վասպուրական երկիր, տուն, նահանգ 16, 18, 20, 21, 23, 28, 29, 31, 33, 34, 37, 42, 43, 64, 72, 84, 86, 87, 91, 93, 100, 103, 104, 110, 111, 114, 115, 118-121, 123-125, 127-129, 134-138, 152, 153, 163-172, 174, 177, 178, 180, 181, 184, 185  
Վարազ լեռ 90, 172  
Վարագի Ս. Նշան 100, 104, 113, 115, 165, 172  
Վարդաբոյն (Վարդափոյն) այգիներ 128  
Վարդենիսի շրջան 152  
Վարչակի աղբիւրներ 178  
Վենեսիկ 9, 140, 144, 148, 149, 154, 186, 200  
Վիեննա 22, 165, 184, 219  
Վիշապի դուռ 167 (տե՛ս Վան)  
Վիրք, Վրաց, Վրացիք 60, 64, 118, 125, 144, 148, 175, 182, 187, 190, 194, 196  
Վռանգք, վրանգներ, վարեանգներ (Ֆրանկք, Փռանկք) 150  
Վրաստանի Հանրապետութիւն 159  
Վրաց դաշտ 118, 176  
  
Տաճիկք, Տաճկաց երկիր, տուն 54, 75, 79, 83, 95, 104, 106, 110, 111, 119, 124, 142, 163, 168, 174, 191, 192, 198, 219, 222  
Տայք (զայք) 118, 125, 134, 175, 183, 184  
Տարբանդ (տե՛ս Դարբանդ)  
Տարսի դաշտ 106  
Տարսոն քաղ. (Տարս) 71, 155, 156, 173

Տարօն, Տարուն, Տարաւն գաւ. 31, 118, 134, 146, 157, 164, 177, 183, 220, 223  
Տաւրոս լեռ 87, 157, 165, 172, 173, 175, 177, 183 (տե՛ս նաեւ Տորոս)  
Տիգրիս գետ 160, 168, 172, 174, 180, 183  
Տիգրոն 142  
Տող աւան 183  
Տոսպ, Տոսբ գաւ. 93, 167  
Տոսպայ ծով, Տոսպիտիս 167  
Տոտոր (տե՛ս Կոտոր)  
Տորոս (Տաւրոս) լեռ 87, 165  
Տումի գիւղ 184  
Տուշպա, Տուրուշպա, Տոււռ ոշպայ, Վի-  
շապի դուռ 167 (տե՛ս Վան)  
Տոււ, Տաւուշ գաւառ 31, 178  
Տուրուբերան նահ. 152, 169, 173, 177, 178, 180, 185  
Տրապաւլիս 71  
Տրտու գետ 152  
Տիխիս, Տիգրիս 118, 153, 156, 157, 177, 178, 221, 224 (տե՛ս նաեւ Թիֆլիս)  
  
Յամաք կամուրջ 219, 222  
Յուրտաւ քաղ. 176  
  
Փայտակարան (Տիխիս) 118, 177  
Փայտակարան քաղ., նահ. 177  
Փառխոս, Փառխունք, Փառխոյ երկիր 118, 134, 176, 179  
Փարիզ 150  
Փոքր Ասիա 14, 143  
Փոքր Հայք 156, 164, 165  
Փռանկք (Ֆրանկք, Վռանկք) 25, 27, 62, 64, 150  
  
Քաղկեդոն 191, 192, 198, 199  
Քաշաթաղ գաւ. 152  
Քաշունիք գաւ. 176  
Քառէս 162 (տե՛ս Խառան)  
Քաջբերունիք գաւ. 172  
Քարթլի, Քարթլինա 31  
Քեօհնաշահար 174  
Քթիշ 183  
Քուստի-Փառնէս (Փառխոս) գաւ. 176  
  
Օշական գիւղ 146, 147  
Օսի 174  
  
Ֆարաք 71  
Ֆրանկք 25, 27, 46 (տե՛ս Փռանկք)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շապուհ Բագրատունի եւ Անանուն Զրուցագիր (առաջաբան) .....3
Ա. Նեոի սպասաւոր Մազմէտի ծննդեան, խնամատարութեան պատմութիւնը եւ նրա իշխելը .....54
Բ. Պատմութիւն Հոռոմոց թագաւոր Մուրիկի մասին .....59
Գ. Յունաց Հերակլէս թագաւորի պատմութիւնը .....62
Դ. ....91
Ծանօթագրութիւններ .....140
Յաւելուածներ. 1. Զեռագրական հատուածներ Շապուհ Բագրատունու «Պատմութիւն»-ից «Բազմավէպ»-ում .....186
2. «Բազմավէպ»-ի հատուածների թարգմանութիւնը .....193
3. Սամուէլ Անեցու հրատարակութեանը յաւելուած ձեռագրական հատուածը .....200
4. Սամուէլ Անեցու հրատարակութեանը յաւելուած հատուածի թարգմանութիւնը .....205
5. Յովհաննէս Դրասխանակերտցու քաղաքրած հատուածները .....207
6. Յովհաննէս Դրասխանակերտցու քաղաքրած հատուածների թարգմանութիւնը.....211
7. Ուխտանէս Եպիսկոպոսի քաղաքրած հատուածը .....215
8. Ուխտանէսի քաղաքրած հատուածի թարգմանութիւնը .....217
9. Ստեփանոս Ասողիկի քաղաքրած հատուածը .....219
10. Ասողիկի քաղաքրած հատուածի թարգմանութիւնը .....222
Գրականութիւն .....225
Անուանացանկեր. 1. Անձնանուններ, տոհմանուններ .....230
2. Տեղանուններ, ցեղանուններ .....238
Բովանդակութիւն .....246

ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՅԱԳԻՐ
(ԿԱՐԾԵՅԵԱԼ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱՌԱՋԱԲԱՆԸ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
Խմբագիր՝ Ալ. Յակոբյան

Анонимный повествователь (Пс.-Шапух Багратуни)

История

Перевод, предисловие и примечания

Варага Аракеляна

Редактор - Ал. Акопян

The Anonymous Story-teller (Ps.-Shapuh Bagratuni)

History

Translated with Notes by Varag Araqelyan

Editor: Al. Hakobyan

In armenian

© "Viamir" publishing house, 2011

Yerevan

Հրատարակչական խմբագիր՝ Վիկտոր Միրումեան
Հրատարակչութեան տնօրէն՝ Արմինէ Միրումեան
Համակարգչային շարուածքը՝ Նուէր Աղաջանեանի
Համակարգչային ձեւաւորումը՝ Ստեփան Յակոբեանի
Սրբագրումը՝ Դաւիթ Կարապետեանի
Կազմի ձեւաւորումը՝ Տիգրան Սոսոյեանի

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊՈՒՄՆԵՐ

Էջ	տող	տպագրումը է	կարդալ
52	1 (ներքեւից)	t. XXI	NS, t. XXI
155	3 (ներքեւից)	[Դ], 42-43	[Դ], 42-43, ծնթ. 175
165	13 (ներքեւից)	Բուժունիք	Առնոյտան
172	1 (վերեւից)	ամենայն	ամենայնի
	15 (վերեւից)	150-151:	150-151: Ըստ Թովմայի (Բ.դ)՝ Բագարատի քոյրն էր ամուսնացած Վասպուրականի իշխան Աշոտի հետ
179	10 (ներքեւից)	ծնթ. 158	ծնթ. 159
222	3 (վերեւից)	Խոթանասուն թուականին [=821 թ.]	Խոթանասունութ թուականին [=829 թ.]
	4, 7, 15 (վեր.)	Թեոփիլոս	Թէոփիլոս
	15 (վերեւից)	Ուուպելի	Ուուպելի [=Չուրպատա°]
	19 (վերեւից)	Ասաղին ու Մեծկերտը եւ Ալբերգը	Ասաղին [=Պաղի°Ա] ու Մեծկերտը եւ Ալբերգը [=Ա°Ազղ]
	1 (ներքեւից)	մէկը):	մէկը): Միւս համադրումները տե՛ս J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, էջ 41-57; К. Н. Юзбашьян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, էջ 95
223	1 (ներքեւից)	25-ին	25-ին [=853 թ. Առնոյտանի 17-ից]
238բ	17 (ներքեւից)	Առնոյտան գաւ. 175	Առնոյտան գաւ. 165, 175
239բ	15 (ներքեւից)	Բուժունիք գաւ. 165, 174	Բուժունիք գաւ. 174

Ստորագրուած է տպագրութեան 19.12.2011 թ.:

Տպագրութիւնը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x100 1/16:

Ծաւալը՝ 15,5 հրատ. մամուլ:

Տպաքանակ՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

© «Վիամիր» հրատարակչութիւն, 2011  
Տպագրութիւնը՝ «ԱՆ-ԶՈՆ» տպագրատան



